

Հավելված
ՀՀ կառավարության 2008 թվականի
հոկտեմբերի 30-ի N 1207 - Ն որոշման

Կալուցի գարգացման ծրագիր

ք. Երևան
հոկտեմբեր, 2008 թ.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Շնորհակալագիր	13
Հապավումների ցանկ	14
ԱՀՌԾ-ի վերանայման մասնակցային գործընթացը.....	16
1. Աղքատության հաղթահարման ռազմավարական ծրագրի իրականացման հիմնական արդյունքները և ռազմավարական ծրագրի վերանայման անհրաժեշտությունը	25
1.1. ԱՀՌԾ-ի հիմնական նպատակային ցուցանիշները և ռազմավարական գերակայությունները	25
1.2. ԱՀՌԾ-ի իրականացման հիմնական արդյունքները 2003-2006 թթ.....	28
1.3. ԱՌՀԾ-ի վերանայման անհրաժեշտությունն ու Կայուն զարգացման ծրագրի հիմնական գերակայությունները	31
1.4. Կայուն զարգացման ծրագրի նպատակները և ռազմավարական գերակայությունները	33
2. Աղքատության և անհավասարության պատկերը Հայաստանում և ԱՀՌԾ-ի նպատակադրումները	39
2.1. Տնտեսական աճը և նյութական աղքատության պատկերը Հայաստանում 1999-2006 թթ.....	39
2.2. Նյութական աղքատության տարածքային պատկերը 1999 - 2006 թթ.....	48
2.3. Նյութական աղքատության պատկերը 1999-2006թթ.՝ ըստ գեոդերային, տարիքային և սոցիալական խմբերի	51
2.4. Գյուղական աղքատության կրճատման գործոնները և առանձնահատկությունները Հայաստանում 1999-2006թթ.....	55
2.5. Սոցիալական քաղաքականությունը և աղքատության կրճատումը Հայաստանում 1999-2006 թթ.....	57
2.6. Զբաղվածությունը և աղքատության կրճատումը Հայաստանում	63
2.7. Աղքատության այլընտրանքային գնահատականները.....	66
3. Նյութական աղքատության կրճատման ԿԶԾ-ի նպատակները.....	68
4. Մակրոտնտեսական շրջանակ	71
4.1. 2003-2007 թթ. մակրոտնտեսական հիմնական զարգացումները	71
4.1.1. Իրական հատված	71
4.1.2. Գներ	72
4.1.3. Արտաքին հատվածի զարգացումները	72
4.1.4. Պետական ֆինանսներ	73
4.2. 2008-2021 թթ. մակրոտնտեսական շրջանակի կանխատեսումներ	73
5. Տնտեսական զարգացման ռազմավարությունը	80
5.1. Կառավարության տնտեսական զարգացման քաղաքականության հիմնական գերակայությունները և տնտեսական բարեփոխումների գերակա ուղղությունները.....	80
5.2. Տնտեսական մրցակցության հավասար պայմանների ապահովումը.....	84
5.3. Գործարար միջավայրի բարելավումը	86
5.4. Ներդրումային միջավայրի բարելավումը և ներդրումների խրախուսումը	93
5.5. Տնտեսությունում կանխատեսվող կառուցվածքային տեղաշարժերի և երկրի մրցունակության աստիճանի անընդհատ աճի ապահովմանը ուղղված քաղաքականությունը	104
5.6. Դրամավարկային քաղաքականությունը և ֆինանսական միջնորդության խորացումը	108
5.7. Հարկային քաղաքականություն և վարչարարություն	121

5.8.	Երկրի ինստիտուցիոնալ արդիականացումը.....	122
6.	Զբաղվածություն, գործազրկություն, աշխատանքի արտադրողականություն, բնակչության եկամուտներ և աղքատության կրճատում	124
6.1.	Զբաղվածության և աղքատության փոխադարձ կապը.....	124
6.2.	Բնակչության տնտեսական ակտիվությունը	124
6.3.	Զբաղվածության ընդհանուր մակարդակը	126
6.4.	Գործազրկության մակարդակը և կառուցվածքը	127
6.5.	Գյուղատնտեսական զբաղվածություն	130
6.6.	Ոչ գյուղատնտեսական զբաղվածության իրավիճակը և հեռանկարը.....	130
6.7.	Ֆորմալ և ոչ ֆորմալ զբաղվածություն	132
6.8.	Աշխատանքի արտադրողականության աճը՝ որպես 2002-2006 թվականներին Հայաստանում տնտեսական աճի հիմնական շարժիչ ուժ	134
6.9.	Արտագաղթը և այն պայմանավորող գործոնները.....	135
6.10.	Աշխատաշուկայի ինստիտուտները և քաղաքականությունները.....	136
7.	Գյուղատնտեսությունը և գյուղական զարգացումը.....	141
8.	Ենթակառուցվածքների զարգացում	151
8.1.	Խմելու ջուր	151
8.2.	Ոռոգման ջուր	156
8.3.	Տրանսպորտ.....	157
8.4.	Էներգետիկա	159
9.	Տարածքային զարգացում.....	163
10.	Հանրային կառավարման և դատաիրավական համակարգի բարեփոխումներ.....	172
10.1.	Պետական կառավարման համակարգի բարեփոխումներ	172
10.1.1.	Պետական կառավարման համակարգի կառուցվածքային և գործառնության վերափոխումներ.....	174
10.1.2.	Քաղաքացիական ծառայության ներդրում և զարգացում	185
10.1.3.	Ֆինանսական կառավարման համակարգի բարեփոխումներ.....	188
10.1.4.	ՀՀ կառավարման համակարգի զարգացման նպատակային ցուցանիշները.....	191
10.2.	Դատաիրավական համակարգի բարեփոխումներ.....	192
10.2.1.	Դատաիրավական համակարգի ռազմավարական բարեփոխումների իրականացման հիմնական ուղղությունները.....	196
10.2.2.	Հասարակական կարգի պահպանման, հասարակական անվտանգության ապահովման և հանցավորության դեմ պայքարի արդյունավետության բարձրացում..	201
10.3.	Հակակոռուպցիոն քաղաքականություն.....	206
11.	Սոցիալական պաշտպանության համակարգը	210
11.1.	Սոցիալական աջակցության համակարգը.....	212
11.1.1.	Ընտանեկան նպաստներ	213
11.1.2.	Երեխայի ծննդյան միանվագ նպաստ.....	223
11.1.3.	Մինչև երկու տարեկան երեխայի խնամքի նպաստ.....	225
11.1.4.	Առաջին խմբի հաշմանդամ և «հաշմանդամ երեխա» խնամող ընտանիքի նպաստ	225
11.1.5.	Սոցիալական աջակցության այլ ծրագրեր	226
11.2.	Կենսաթոշակային համակարգ	228
12.	Մարդկային զարգացում և մարդկային աղքատության կրճատում	234
12.1.	Առողջապահություն.....	234
12.1.1.	Ընդհանուր ակնարկ՝ 2003-2006 թթ. զարգացումները և ներկա իրավիճակը..	234
12.1.2.	Առողջապահության ոլորտի գերակայությունները	239

12.1.3.	Առողջապահության ոլորտի պետական ծախսերի ծրագրումը.....	240
12.1.4.	Պետական քաղաքականության ներօլորտային առաջնահերթությունները առողջապահության բնագավառում.....	241
12.1.5.	Առանձին ծրագրային շեշտադրումներ	243
12.2.	Կրթություն.....	247
12.2.1.	Կրթական ծառայությունների մատչելիություն և աղքատություն. ընդհանուր ակնարկ	247
12.2.2.	Գերակայություններ, նպատակադրումներ և առաջնահերթություններ	255
12.2.3.	Կրթության ոլորտում պետական ծախսերի ծրագրային ցուցանիշները և սպասվող արդյունքները	257
12.3.	Աղքատության հաղթահարման մշակութային հայեցակետը.....	262
12.3.1.	Ընդհանուր ակնարկ	262
12.3.2.	Հիմնական խնդիրները.....	265
12.3.3.	Աղքատության հաղթահարման մշակութային հայեցակետի հիմնական ուղղությունները.....	265
12.3.4.	Մշակույթի ոլորտի ծրագրերի իրականացման ֆինանսական սպահովվածությունը 2008-2021թթ.....	271
12.4.	Երիտասարդությանը միտված պետական քաղաքականություն.....	273
12.4.1.	Իրավիճակի նկարագրություն.....	273
12.4.2.	Աղքատության հաղթահարման ռազմավարական ծրագրում երիտասարդական պետական քաղաքականության հիմնադրույթները և սկզբունքները.....	276
12.4.3.	Գործողությունների գերակայությունները.....	277
12.4.4.	Երիտասարդական պետական քաղաքականության հիմնական ուղղությունները.....	280
12.4.5.	Իրագործում, մոնիթորինգ, գնահատում և ֆինանսավորում.....	281
12.5.	Բնապահպանություն	282
12.6.	Քաղաքաշինություն.....	291
12.6.1.	Ընդհանուր ակնարկ	291
12.6.2.	Տարածական զարգացում և պլանավորում	292
12.6.3.	Կառույցների սեյսմակայունության և հուսալիության ապահովում	294
12.6.4.	Վտանգավոր արտածին երկրաբանական պրոցեսների ազդեցության նվազեցման խնդիրներ (սողանքային աղետի դեմ պայքար).....	295
12.6.5.	Բնակարանային պայմանների բարելավում.....	297
13.	Կայուն զարգացման ծրագրի բյուջետային շրջանակը	301
13.1.	2003-2007 թթ. հարկաբյուջետային հիմնական զարգացումները.....	301
13.2.	2008 - 2021 թթ. բյուջետային շրջանակի կանխատեսումներ	303
13.3.	ՀՀ պետական պարտքը.....	306
14.	Ծրագրի մոնիթորինգ, գնահատման համակարգ և վերանայում	310

Աղյուսակների ցանկ

Աղյուսակ 1.1. ԱՀՌԾ-ի իրականացման հիմնական արդյունքները 2006թ. դրությամբ.....	28
Աղյուսակ 1.2. Համախմբված բյուջեի ծախսերի հավելաճի բաշխումը 2003-2006 թթ.	30
Աղյուսակ 2.1. Տնտեսության զարգացման և աղքատության հիմնական ցուցանիշները ԱՀՌԾ-ի նպատակային ցուցանիշների համեմատ	39
Աղյուսակ 2.2. Աղքատ և շատ աղքատ բնակչության միջին ամսական եկամուտների դինամիկան Հայաստանում 1999-2005թթ. (ընթացիկ գներով, դրամ և տոկոսներով՝ ընդհանուրի նկատմամբ).....	45
Աղյուսակ 2.3. Աղքատ, շատ աղքատ և ոչ աղքատ բնակչության եկամուտների գումարային առաձգականությունը 1999-2005թթ. (ընթացիկ գներով)	46
Աղյուսակ 2.4. Ոչ աղքատ բնակչության միջին ամսական եկամուտների դինամիկան Հայաստանում 1999-2005թթ. (ընթացիկ գներով, դրամ և տոկոսներով՝ ընդհանուրի նկատմամբ).....	46
Աղյուսակ 2.5. Աղքատ և շատ աղքատ բնակչության քանակը 1999-2006թթ. և տնտեսական զարգացման դինամիկան 1999 - 2006 թթ.՝ ըստ մարզերի և գյուղ-քաղաք կտրվածքով	48
Աղյուսակ 2.6. Աղքատ և շատ աղքատ բնակչության քանակը 1999-2006թթ. և տնտեսական զարգացման դինամիկան 1999 - 2006 թթ.՝ ըստ մարզերի և գյուղ-քաղաք կտրվածքով	49
Աղյուսակ 2.7. Աղքատության կրճատման և տնտեսական աճի միջին տարածքային առաձգականությունները 1999 - 2005 թթ. (ընթացիկ գներով)	49
Աղյուսակ 2.8. Տնտեսական զարգացման և աղքատության տարածքային տարբերությունների դինամիկան 1999-2005թթ.....	50
Աղյուսակ 2.9. Աղքատության մակարդակների գենդերային և տարիքային տարբերությունների դինամիկան 1999-2006թթ.....	51
Աղյուսակ 2.10. Ընտանիքի չափից կախված աղքատության մակարդակի դինամիկան 1999-2006 թթ.	52
Աղյուսակ 2.11. Երեխաների և ծերերի քանակից կախված աղքատության մակարդակի դինամիկան 1999-2005թթ.	52
Աղյուսակ 2.12. Աղքատության մակարդակի դինամիկան՝ կախված տնտեսությունում զբաղվածությունից և կրթական մակարդակից (16 տարեկանից բարձր բնակչության համար) 1999-2006թթ.	53
Աղյուսակ 2.13. Բնակչության ամենաանապահով խմբերի աղքատության մակարդակի դինամիկան 1999-2006թթ.	54
Աղյուսակ 2.14. Գյուղական աղքատության կախվածությունը բնակավայրի՝ ծովի մակերևույթից ունեցած բարձրությունից (1999-2006 թթ.).....	55
Աղյուսակ 2.15. Գյուղական աղքատության կախվածությունը տնօրինվող հողակտորի չափից 1999-2006 թթ.	55
Աղյուսակ 2.16. Գյուղական տնտեսությունների պարտք վերցնելու հնարավորությունները և աղքատության մակարդակը 2002-2006թթ.	56
Աղյուսակ 2.17. Սոցիալական տրանսֆերտների ազդեցությունը աղքատության և ծայրահեղ աղքատության մակարդակների վրա 1999 - 2006թթ.....	57
Աղյուսակ 2.18. Սոցիալական տրանսֆերտների ազդեցությունը աղքատության և ծայրահեղ աղքատության մակարդակների վրա 2005թ.՝ տարածքային կտրվածքով	58
Աղյուսակ 2.19. Սոցիալական տրանսֆերտների բաշխումը բնակչության մեկ շնչի հաշվով՝ ըստ եկամտային դեցիլների 1999-2005թթ.	59

Աղյուսակ 2.20. Ընտանեկան նպաստների բաշխումը 2005թ.՝ ըստ սպառման ազդեցատի հիման վրա ձևավորված դեցիլային խմբերի	61
Աղյուսակ 2.21. Բնակչության զբաղվածությունը և տնտեսական աճով պայմանավորված եկամուտները մեկ զբաղվածի հաշվով 1999- 2004թթ.	64
Աղյուսակ 2.22. Բնակչության զբաղվածության և տնտեսական աճով պայմանավորված ամսական եկամուտների՝ մեկ զբաղվածի հաշվով 2004թ. (ինդեքս, 1999թ. = 100)	65
Աղյուսակ 2.23. Բնակչության զբաղվածությունը և գործազրկության մակարդակը 1999-2004թթ.	65
Աղյուսակ 2.24. Աղքատության այլընտրանքային գնահատականները 1999- 2005թթ.	67
Աղյուսակ 3.1. Աղքատության կրճատման հիմնական նպատակային ցուցանիշները	69
Աղյուսակ 3.2. Աղքատության կրճատման հիմնական նպատակային ցուցանիշները՝ ըստ բնակչության առանձին խմբերի	70
Աղյուսակ 4.1. ԿԶԾ-ի մակրոտնտեսական շրջանակը. հիմնական ցուցանիշների կանխատեսում	77
Աղյուսակ 4.2. Տնտեսության ոլորտների զարգացման հիմնական ցուցանիշների կանխատեսում	79
Աղյուսակ 5.1. ՎԶԵԲ անցումային կարգավիճակի գնահատականները 2001 և 2006թթ.	81
Աղյուսակ 5.2. ՎԶԵԲ «առաջին» և «երկրորդ» սերնդի բարեփոխումների իրականացման գնահատականները 2001 և 2006 թթ.	82
Աղյուսակ 5.3. «Առաջին» և «երկրորդ» սերնդի բարեփոխումների իրականացման հենանիշերը	84
Աղյուսակ 5.4. Հայաստանի գործարար միջավայրի որակի գնահատականների համեմատությունը այլ անցումային երկրների գործարար միջավայրի գնահատականների հետ 2006թ.	86
Աղյուսակ 5.5. Գործարար միջավայրի որակի հենանիշերը	87
Աղյուսակ 5.6. 2005թ. ներդրումային միջավայրի ամփոփ գնահատականները ԵԿԱ երկրների համար	94
Աղյուսակ 5.7. Ենթակառուցվածքի որակը, ձեռնարկությունների ֆինանսավորումը և աշխատանքի շուկան բնութագրող նպատակային ցուցանիշները 2005-2021թթ.	97
Աղյուսակ 5.8. Պետական կառավարման որակը, կոռուպցիայի հետ կապված իրավիճակը, դատական համակարգի որակը և հանցագործությունների ազդեցությունը բնութագրող նպատակային ցուցանիշները 2005-2021թթ.	100
Աղյուսակ 5.9. Նորարարությունը և տեխնոլոգիաները ու արտաքին առևտուրը բնութագրող նպատակային ցուցանիշները 2005-2021թթ. համար	102
Աղյուսակ 5.10. Ներդրումները 2005-2021թթ. (համապատասխան տարիների գներով)	103
Աղյուսակ 5.11. Տնտեսության կառուցվածքի կանխատեսումները՝ ըստ ոլորտների (տոկոս ՀՆԱ նկատմամբ)	105
Աղյուսակ 5.12. Տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացման հիմնական հենանիշները	107
Աղյուսակ 5.13. Զբոսաշրջության ոլորտի զարգացման հիմնական արդյունքային ցուցանիշները	108
Աղյուսակ 5.14. Հայաստանի արժույթային քաղաքականությունը բնութագրող հիմնական ցուցանիշների դինամիկան 2001-2007թթ.	109
Աղյուսակ 5.15. Համախառն միջազգային պահուստների և փողի զանգվածի կանխատեսումները 2010-2021թթ. (ընթացիկ գներով)	113

Աղյուսակ 5.16. Հայաստանի ֆինանսական համակարգի ակտիվները 2001-2007 թթ. (մլրդ դրամ՝ ընթացիկ գներով).....	114
Աղյուսակ 5.17. Վարկային ներդրումների կառուցվածքը 2001-2007 թթ., մլրդ դրամ	114
Աղյուսակ 5.18. Ներքին վարկավորում/ՀՆԱ հարաբերակցության փաստացի և հաշվարկային արժեքները 2001-2007 թթ.....	115
Աղյուսակ 5.19. Ներքին վարկավորում/ՀՆԱ հարաբերակցության կանխատեսվող հենանիշերը 2007-2021 թթ.	116
Աղյուսակ 5.20. Բանկային սպրեդի և բանկային կապիտալ/բանկային ակտիվներ հարաբերակցության փաստացի և հաշվարկային արժեքները 2001-2007 թթ.	118
Աղյուսակ 5.21. ՀՀ բանկային տոկոսադրույքների սպրեդի և բանկային կապիտալ/բանկային ակտիվներ հարաբերակցության կանխատեսվող հենանիշերը 2007-2021թթ. ..	118
Աղյուսակ 5.22. Արժեթղթերի շուկայի ծավալները (ընթացիկ գներով) և կապիտալացումը բնութագրող հենանիշերը 2010-2021թթ.....	120
Աղյուսակ 7.1. Գյուղատնտեսության զարգացման հիմնական ցուցանիշները 1996-2006թթ.	141
Աղյուսակ 7.2. Գյուղատնտեսական ապրանքների արտահանումը և ներմուծումը 1996-2006 թթ.	144
Աղյուսակ 7.3. Գյուղացիական տնտեսությունների գործունեությունը բնութագրող հիմնական ցուցանիշները 1996-2006թթ.....	145
Աղյուսակ 7.4. Գյուղատնտեսության զարգացման հիմնական ցուցանիշները 2006-2021թթ.	147
Աղյուսակ 7.5. Գյուղական զարգացման նպատակային ցուցանիշները 2005-2021թթ.....	149
Աղյուսակ 7.6. Գյուղական զարգացման նպատակային ցուցանիշները 2006-2021թթ. (2005 թ. =100)	150
Աղյուսակ 8.1. Հայաստան. խմելու ջրի մատչելիությունը տնային տնտեսությունների համար՝ 1998/99, 2004 և 2006 թթ. համեմատականը (տոկոս՝ բնակչության թվաքանակի նկատմամբ).....	152
Աղյուսակ 8.2. Խմելու ջրի համակարգի հիմնական նպատակային ցուցանիշները.....	156
Աղյուսակ 8.3. Ոռոգման համակարգի հիմնական նպատակային ցուցանիշները	157
Աղյուսակ 8.4. Տրանսպորտի համակարգի հիմնական նպատակային ցուցանիշները.....	158
Աղյուսակ 8.5. Էներգետիկայի համակարգի հիմնական նպատակային ցուցանիշները.....	162
Աղյուսակ 9.1. Համախառն ներքին արդյունքը Հայաստանում՝ տարածքային կտրվածքով, 1999-2006թթ. (մլրդ դրամ՝ ընթացիկ գներով).....	164
Աղյուսակ 9.2. Մեկ շնչի հաշվով ՀՆԱ-ն Երևանում, Հայաստանի մարզերում, գյուղական և քաղաքային բնակավայրերում 1999-2006թթ.	166
Աղյուսակ 9.3. Ներդրումների բաշխումը Հայաստանում 2001-2006թթ.՝ ըստ տարածքների	168
Աղյուսակ 9.4. Ծրագրվող տարածքային զարգացման (ՀՆԱ-ի աճի) միջին տարեկան տեմպերը 2008-2021 թթ.....	168
Աղյուսակ 9.5. ԿԶԾ-ի շրջանակներում ծրագրվող ներդրումների տարածքային բաշխումը	171
Աղյուսակ 9.6. Մեկ շնչի հաշվով ՀՆԱ-ի ցուցանիշները՝ տարածքային կտրվածքով	171
Աղյուսակ 10.1. ՀՀ կառավարման համակարգի ցուցանիշները (տոկոսային գնահատական, 0-100, 1998-2006թթ.)	173

Աղյուսակ 10.2. ԱՊՀ և Արևելյան Եվրոպայի երկրների կառավարման համակարգի ցուցանիշները 2007թ. (տոկոսային գնահատական, 0-100).....	174
Աղյուսակ 10.3. ԵՄ կողմից բենջմարկինգի ենթարկվող հանրային էլեկտրոնային ծառայությունները և դրանց ապահովումը ՀՀ-ում մինչև 2021 թվականը.....	180
Աղյուսակ 10.4. Պետական կառավարման համակարգի աշխատողների միջին ամսական աշխատավարձերը 2007-2021թթ. (հազ. դրամ)	187
Աղյուսակ 10.5. ՀՀ կառավարման համակարգի ծրագրվող ցուցանիշները (տոկոսային գնահատական, 0-100, 2006 - 2021թթ.)	191
Աղյուսակ 10.6. Պետական բյուջեում դատական համակարգի ընդհանուր ծախսերի տեսակարար կշիռը ՀՀ-ում և մի շարք այլ պետություններում (2002թ.)	197
Աղյուսակ 10.7. Մեկ շնչի հաշվով դատական համակարգի ծախսերը ՀՀ-ում, ԱՊՀ և Արևելյան Եվրոպայի մի շարք պետություններում (2004 թ.).....	197
Աղյուսակ 10.8. Գատախրավական համակարգի միջին ամսական աշխատավարձերը 2008-2021 թթ. (հազ. դրամ)	198
Աղյուսակ 10.9. Ոստիկանության ծառայողների միջին ամսական աշխատավարձերը ՀՀ-ում, Եվրոմիության և ԱՊՀ մի շարք պետություններում (2007թ.).....	205
Աղյուսակ 10.10. ՀՀ ոստիկանության ծառայողների միջին ամսական աշխատավարձերը 2008-2021 թթ.....	205
Աղյուսակ 11.1. Սոցիալական պաշտպանության համակարգի ֆինանսավորման հիմնական ցուցանիշների կանխատեսումները 2008-2021 թթ.....	211
Աղյուսակ 11.2. Սոցիալական աջակցության համակարգի ֆինանսավորման հիմնական ցուցանիշների կանխատեսումները 2008-2021թթ.	213
Աղյուսակ 11.3. ԸՆՀ-ում հաշվառված և նպաստառու ընտանիքների քանակի դինամիկան 1999-2007թթ.	214
Աղյուսակ 11.4. Ընտանեկան նպաստներին ուղղված պետական ծախսերի դինամիկան 2000-2007թթ.	215
Աղյուսակ 11.5. ԸՆՀ-ի ազդեցության գնահատականները.....	216
Աղյուսակ 11.6. Ընտանեկան նպաստ ստացող բնակչության բաշխումն ըստ նախանպաստային կենսամակարդակի խմբերի, %.....	216
Աղյուսակ 11.7. Նախանպաստային սպառման դեցիլներում ընտանեկան նպաստ ստացող բնակչությունն ու նպաստներին ուղղված գումարները.....	218
Աղյուսակ 11.8. Ընտանեկան նպաստներն ու աղքատությունը 2008-2021թթ.	220
Աղյուսակ 11.9. Նպաստառու ընտանիքի հաշվով միջին ամսական նպաստի մեծությունն ու ընտանեկան նպաստի մեծության հարաբերակցությունը միջին ընտանիքի հաշվով աղքատության շեմերի ու ՆՍՁ նկատմամբ 2008-2021թթ.....	220
Աղյուսակ 11.10. Ընտանեկան նպաստների հարաբերակցությունը նվազագույն և միջին աշխատավարձերի նկատմամբ 2008-2021թթ.....	221
Աղյուսակ 11.11. Երեխայի ծննդյան կապակցությամբ միանվագ նպաստ ստացած անձանց թիվը 2001-2007 թթ.	223
Աղյուսակ 11.12. Երեխայի ծննդյան կապակցությամբ տրվող միանվագ նպաստի չափի կանխատեսումները 2008-2021թթ.	224
Աղյուսակ 11.13. Մինչև երկու տարեկան երեխայի խնամքի նպաստառուների թիվը 1999-2006 թթ.	225
Աղյուսակ 11.14. Մինչև երկու տարեկան երեխայի խնամքի նպաստի կանխատեսումներ 2008-2021թթ.	225

Աղյուսակ 11.15. Առաջին խմբի հաշմանդամ և հաշմանդամ երեխա խնամող ընտանիքի նպաստի չափի կանխատեսումները 2010-2021թթ.....	226
Աղյուսակ 11.16. Կենսաթոշակառուների աղքատության մակարդակի ծրագրային ցուցանիշները, տոկոս.....	232
Աղյուսակ 12.1. Բնակչության առողջական վիճակի բնութագրիչներ՝ միջազգային համեմատական.....	234
Աղյուսակ 12.2. Առողջապահության բնագավառում համախմբված բյուջեի ծախսերի ծրագրային ցուցանիշները.....	241
Աղյուսակ 12.3. Մանկական և մայրական մահացության ցուցանիշների նպատակադրումը.....	244
Աղյուսակ 12.4. Կրթության ոլորտում պետական ծախսերի դինամիկան 2000-2006թթ., տոկոս՝ ՀՆԱ նկատմամբ.....	247
Աղյուսակ 12.5. Կրթության ոլորտում պետական ծախսերի կառուցվածքը 2000-2006թթ.....	248
Աղյուսակ 12.6. Մեկ աշակերտի և ուսանողի հաշվով տարեկան պետական կրթական ծախսերը 2000-2006թթ.....	250
Աղյուսակ 12.7. Համախմբված բյուջեի ծախսերի ծրագրային ցուցանիշները կրթության ոլորտում.....	257
Աղյուսակ 12.8. Կրթությանն ուղղվող ծախսերի ներդրության կառուցվածքը, տոկոս.....	258
Աղյուսակ 12.9. Տարրական, միջին ու ավագ դպրոցների մեկ աշակերտի հաշվով տարեկան պետական կրթական ծախսերը.....	258
Աղյուսակ 12.10. Մասնագիտական ծրագրերին ուղղվող պետական ծախսերի ներդրության կառուցվածքը, տոկոս.....	259
Աղյուսակ 12.11. Հանրակրթությանն ուղղվող պետական ծախսերի կառուցվածքը, տոկոս.....	259
Աղյուսակ 12.12. ՀՀ պետական բյուջեից մշակույթի ոլորտի հիմնական ուղղությունների ֆինանսավորումը 2006-2021թթ.....	272
Աղյուսակ 12.13. ԿԶԾ-ի շրջանակներում քաղաքաշինության բնագավառի պետական ֆինանսավորման կողմնորոշիչ գնահատականներ, 2009՝ 2012 թթ. (մլն դրամ).....	300
Աղյուսակ 13.1. Համախմբված բյուջեի շրջանակը 2002-2007 թթ.....	301
Աղյուսակ 13.2. ՀՀ 2003-2007 թթ. համախմբված բյուջեի ծախսերը գործառական դասակարգման խոշորացված խմբերով (տոկոս՝ ՀՆԱ նկատմամբ).....	303
Աղյուսակ 13.3. 2008-2021 թթ. համախմբված բյուջեի հիմնական ցուցանիշների կանխատեսումը.....	304
Աղյուսակ 13.4 Համախմբված բյուջեի ծախսերի բաշխումը՝ ըստ գործառական դասակարգման խոշորացված խմբերի.....	305
Աղյուսակ 13.5. 2008-2021 թթ. համախմբված բյուջեի պակասուրդի և դրա ֆինանսավորման կանխատեսումներ (տոկոս՝ ՀՆԱ նկատմամբ).....	306
Աղյուսակ 13.6. ՀՀ պետական պարտքը 2002-2007 թթ. (տոկոս՝ ՀՆԱ նկատմամբ).....	307
Աղյուսակ 13.7. Ներքին պետական պարտքի գծով գործառնությունները 2002-2006 թթ., մլն դրամ.....	307
Աղյուսակ 13.8. ՀՀ պետական պարտքը բնութագրող ցուցանիշների կանխատեսումներ....	308

Գծանկարների ցանկ

Գծանկար 1.1. Համախմբված բյուջեի սոցիալական ոլորտի ծախսերը 2003-2006թթ. (%՝ 2002թ. նկատմամբ, ձախ առանցք) և դրանց տեսակարար կշիռը ՀՆԱ և պետական ծախսերի նկատմամբ (% , աջ առանցք)	29
Գծանկար 2.1. Տնտեսական աճը և աղքատության կրճատումը Հայաստանում 1999-2005թթ., տոկոսային գումարային հավելված.....	41
Գծանկար 2.2. Տնտեսական աճը և աղքատության կրճատումը Երևանում 1999-2005թթ., տոկոսային գումարային հավելված.....	42
Գծանկար 2.3. Տնտեսական աճը և աղքատության կրճատումը այլ քաղաքներում 1999-2005թթ., տոկոսային գումարային հավելված.....	42
Գծանկար 2.4. Տնտեսական աճը և աղքատության կրճատումը գյուղական վայրերում 1999-2005թթ., տոկոսային գումարային հավելված.....	43
Գծանկար 2.5. Բնակչության եկամուտների դինամիկան Հայաստանում 1999-2005թթ. (տոկոսներով՝ 1999թ. նկատմամբ, ընթացիկ գներով).....	44
Գծանկար 2.6. Տնտեսական աճի և սոցիալական տրանսֆերտների ներդրումը աղքատության և ծայրահեղ աղքատության կրճատման մեջ 1999-2005թթ., %.....	58
Գծանկար 2.7. Ընտանեկան նպաստների բաշխումը աղքատ և ոչ աղքատ բնակչության միջև 2001-2005թթ., % (ըստ եկամտային դեցիլների).....	61
Գծանկար 2.8. Ընտանեկան նպաստների համակարգում գրանցված տնտեսությունների քանակը 2005թ.՝ ըստ աղքատության մակարդակի	62
Գծանկար 2.9. Ընտանեկան նպաստների համակարգում չընդգրկվելու հիմնական պատճառները՝ ըստ աղքատության մակարդակի.....	63
Գծանկար 2.10. Տնտեսական աճով պայմանավորված եկամուտների հարաբերությունը աղքատության գծին 1999 և 2004 թվականներին	66
Գծանկար 5.1. Ներդրումային միջավայրի որակի ընդհանուր համաթիվը 2005-2021թթ.	95
Գծանկար 5.2. Ենթակառուցվածքի որակի, ձեռնարկությունների ֆինանսավորման և աշխատանքի շուկայի համաթվերը 2005-2021 թթ.....	96
Գծանկար 5.3. Պետական կառավարման որակի և կոռուպցիայի ու դատական համակարգի և հանցագործությունների համաթվերը 2005-2021թթ.	98
Գծանկար 5.4. Նորարարության և տեխնոլոգիաների ու արտաքին առևտրի համաթվերը 2005-2021թթ.....	102
Գծանկար 6.1. Տնտեսական ակտիվության մակարդակը ըստ տարիքային խմբերի 2002 և 2006 թթ., տոկոս՝ համապատասխան խմբի բնակչության նկատմամբ	125
Գծանկար 6.2. Տնտեսապես ակտիվ բնակչության թվաքանակի կանխատեսումը հաստատուն (65 տոկոս) ակտիվության մակարդակի պայմաններում.....	126
Գծանկար 6.3. Բնակչության եկամուտների կառուցվածքը 1999-2006 թթ., տոկոս՝ ընդամենը եկամուտների նկատմամբ	127
Գծանկար 6.4. Գրանցված և իրական գործազրկության մակարդակների դինամիկան 2002-2006թթ., տոկոս՝ տնտեսապես ակտիվ բնակչության նկատմամբ	128
Գծանկար 6.5. Իրական գործազրկության մակարդակը՝ ըստ տարիքային խմբերի 2002-2006 թթ., տոկոս.....	129

Գծանկար 6.6. Ոչ գյուղատնտեսական զբաղվածության ճյուղային կառուցվածքի միտումները 2002-2006 թթ.	131
Գծանկար 6.7. Ոչ ֆորմալ զբաղվածության ցուցանիշներ (տոկոս՝ զբաղվածության կառուցվածքում)	132
Գծանկար 6.8. Մոցիալական ապահովագրության վճարներ կատարողների թվաքանակը՝ ֆորմալության աստիճանի ակնկալվող սցենարի դեպքում, 2002-2021թթ.	133
Գծանկար 6.9. Աշխատանքի արտադրողականությունը 2002-2006թթ., 2000 թ. համադրելի ԱՄՆ ԳՈՒՀ դոլար	134
Գծանկար 6.10. Աշխատանքի արտադրողականության ինդեքսը (2002 թ. =100).....	135
Գծանկար 6.11. Միգրացիայի հաշվեկշիռը Հայաստանում 2000-2006 թթ.....	135
Գծանկար 6.12. Աշխատանքի հարկումը Հայաստանում և ՏՀԶԿ անդամ երկրներում.....	137
Գծանկար 6.13. Ջրաղվածության կարծրության ինդեքսը Հայաստանում և Եվրոմիության անդամ մի շարք Արևելյան Եվրոպայի երկրներում, 2005թ.	138
Գծանկար 6.14. Նվազագույն աշխատավարձը 2002-2021 թթ.	139
Գծանկար 7.1. ՀՆԱ, գյուղատնտեսական և ոչ գյուղատնտեսական ոլորտների ա վելացված արժեքի շարժման ցուցանիշը 1996-2006 թթ. (ինդեքս, 1995=100).....	142
Գծանկար 8.1. Ջրամատակարարման տևողության դինամիկան 2004-2007 թթ.	152
Գծանկար 8.2. Ջրամատակարարման միջին օրական տևողությունը ՀՀ քաղաքներում 2007թ.	153
Գծանկար 8.3. Խմելու ջրի մատչելի և ծախսածածկող սակագների կանխատեսումը 2007-2021թթ.	154
Գծանկար 8.4. Երևան քաղաքում խմելու ջրի մատչելիության աստիճանի կանխատեսվող մակարդակները՝ ըստ միջին սպառման և սպառման 1-ին և 2-րդ դեցիլների	155
Գծանկար 9.1. Երևանի մասնաբաժինը Հայաստանի ՀՆԱ-ում 1999-2006 թթ. (տոկոս՝ ընդամենի նկատմամբ)	164
Գծանկար 9.2. Տնտեսական աճի միջին տարեկան տեմպերը Հայաստանում 1999-2006 թթ.՝ ըստ տարածքների	165
Գծանկար 9.3. Երևանի մասնաբաժինը հանրապետությունում ստեղծված ավելացված արժեքի կառուցվածքում 1999-2006 թթ., տոկոս	165
Գծանկար 11.1. Նախանպաստային «գուտ» աղքատության և ԸՆՀ ազդեցությամբ ձևավորված իրական աղքատության բնութագրիչները 2005թ. համար՝ Երևան, քաղաք, գյուղ կտրվածքով.....	214
Գծանկար 11.2. Աղքատության ընդհանուր շեմի ու ՆՍԶ-ի նկատմամբ աղքատ և նպաստառու բնակչությունը 2008-2021թթ.	219
Գծանկար 11.3. ԸՆՀ-ի ազդեցության գնահատականները աղքատության (ըստ աղքատության ընդհանուր շեմի) նվազեցման վրա 2005-2015թթ.	222
Գծանկար 11.4. Խնամառության ընդհանուր և արդյունավետ գործակիցների կանխատեսումը 2008-2050 թթ.	229
Գծանկար 11.5. Միջին ամսական ապահովագրական կենսաթոշակի համապատասխանության աստիճանի թիրախները (հարաբերությունը աղքատության գծին և ՆՍԶ-ին՝ աջ սանդակ, և միջին աշխատավարձին՝ ձախ սանդակ)	231
Գծանկար 11.6. Ապահովագրական կենսաթոշակների ֆիսկալ ցուցանիշների կանխատեսումները	232

Գծանկար 12.1. Երեխաների (մինչև 5 տարեկան) և մայրական մահացության 2006 թ. փաստացի ցուցանիշները և ԱՀՌԾ-ի նպատակադրումները	235
Գծանկար 12.2. Ամբուլատոր-պոլիկլինիկական և հիվանդանոցային բուժօգնության ծառայությունների օգտագործումը	235
Գծանկար 12.3. Առողջապահական հաստատություններ դիմելու հաճախականությունը՝ ըստ սպառման քվանտիլային խմբերի (տոկոս՝ խմբում առողջության հետ կապված խնդիրներ ունեցած բնակչության թվաքանակի նկատմամբ)	236
Գծանկար 12.4. Տարբեր կենսամակարդակի բնակչության խմբերի կողմից առողջապահական ծառայությունների օգտագործումը՝ ըստ ծառայություն մատուցողների (տոկոս).....	237
Գծանկար 12.5. Պետական բյուջեի փաստացի ծախսերը առողջապահության ոլորտում 2003-2006 թթ. և ԱՀՌԾ-ի նպատակադրումները	238
Գծանկար 12.6. Առողջապահության ոլորտում ծախսերը Հայաստանում և ԱՊՀ, ԵՄ և ՏՀԶԿ անդամ երկրներում 2004 թ. (տոկոս՝ ՀՆԱ նկատմամբ).....	239
Գծանկար 12.7. 3-29 տարեկանների ընդգրկվածությունը կրթահամակարգում՝ ըստ տարիքի, տոկոս	250
Գծանկար 12.8. Համախառն ընդգրկվածությունները կրթահամակարգի տարբեր օղակներում՝ ըստ սպառման քվանտիլների, %.....	252
Գծանկար 12.9. Երիտասարդական ծրագրերի ֆինանսավորումը ՀՀ պետական բյուջեից 2003- 2007 թթ., մլն դրամ.....	274
Գծանկար 12.10. Երիտասարդական ծրագրերի և միջոցառումների իրականացման դինամիկան 2003-2007 թթ.	275
Գծանկար 13.1. ՀՀ արտաքին պետական պարտքի ցուցանիշների դինամիկան 1999-2006 թթ.	309

Շնորհակալագիր

Հայաստանի Հանրապետության Կառավարությունը իր երախտագիտությունն է հայտնում բոլոր նրանց, ովքեր իրենց ներդրումն են ունեցել Աղքատության հաղթահարման ռազմավարական ծրագրի (ԱՀՌԾ) վերանայման և Կայուն զարգացման ծրագրի մշակման գործընթացում: Մասնավորապես, այդ շնորհակալությունն ուղղված է.

ԱՀՌԾ-ի համակարգման խորհրդի անդամներին՝ ՀՀ վարչապետ Տիգրան Սարգսյանի ղեկավարությամբ.

ԱՀՌԾ-ի աշխատանքների համակարգման աշխատանքային խմբի անդամներին՝ ՀՀ ֆինանսների նախարարի տեղակալ Սուրեն Կարայանի (խմբի ղեկավար) ղեկավարությամբ.

ԱՀՌԾ-ի վերանայման գործընթացում ընդգրկված պետական կառավարման մարմինների բոլոր ստորաբաժանումներին և դրանց մասնագետներին.

Համաշխարհային բանկին, Արժույթի միջազգային հիմնադրամին, ՄԱԿ-ի զարգացման ծրագրին, Միացյալ Թագավորության միջազգային զարգացման նախարարությանը, Նիդեռլանդների կառավարությանը, Գերմանիայի տեխնիկական համագործակցության ընկերությանը՝ ԱՀՌԾ-ի վերանայման գործընթացում տեխնիկական և ֆինանսական օժանդակություն ցուցաբերելու համար: Կառավարությունը երախտապարտ է նաև գործընթացին աջակցություն ցուցաբերած մյուս միջազգային կազմակերպություններին (Եվրոպական Միություն, Եվրոպական Խորհուրդ և ԱՄՆ ՄՁԳ) և տարբեր երկրների կառավարություններին, որոնք իրենց անձնակազմի և միջազգային փորձագետների մասնագիտական ունակությունների ներդրման միջոցով ներգրավվել են այդ գործընթացում և աջակցել ԱՀՌԾ-ի վերանայմանը.

Հասարակական կազմակերպությունների, մասնավոր հատվածը ներկայացնող կազմակերպությունների, տեղական ինքնակառավարման մարմինների, քաղաքական կուսակցությունների ներկայացուցիչներին և մասնագետներին, ՀՀ Ազգային ժողովի պատգամավորներին՝ ԱՀՌԾ-ի վերանայման տարբեր փուլերում ունեցած մասնակցության համար.

ՀՀ կառավարությունը իր առանձնահատուկ շնորհակալությունն է հայտնում ԱՀՌԾ-ի վերանայման և Կայուն զարգացման ծրագրի մշակման գործընթացում ներգրավված Հայաստանի տեղական փորձագետներին՝ բարձր մասնագիտական կարողությունների ներդրման համար, այդ թվում՝ փորձագետներ՝ «ԱՎԱԳ Սոլյուշնս» ՍՊԸ-ի ներկայացուցիչներ Վահրամ Ավանեսյանին, Սելիք Գասպարյանին, տնտեսագիտության թեկնածուներ Լևոն Բարխուդարյանին, Արմեն Եղիազարյանին և Նաիրուհի Ջրբաշյանին:

Հայաստանի Հանրապետության Կառավարություն

Հապավումների ցանկ

ԱԱՀ	ավելացված արժեքի հարկ
ԱԸՀ	աշխատուժի ընտրանքային հետազոտություն
ԱՀԿ	Առողջապահության համաշխարհային կազմակերպություն
ԱՀՌԾ	Աղքատության հաղթահարման ռազմավարական ծրագիր
ԱՄԿ	Աշխատանքի միջազգային կազմակերպություն
ԱՄՀ	Արժույթի միջազգային հիմնադրամ
ԱՄՆ	Ամերիկայի Միացյալ Նահանգներ
ԱՄՆ ՄԶԳ	Ամերիկայի Միացյալ Նահանգների միջազգային զարգացման գործակալություն
ԱՊՀ	Անկախ Պետությունների Համագործակցություն
ԲՈՒՀ	բարձրագույն ուսումնական հաստատություն
ԳՀՀ	Գործընկերության և համագործակցության համաձայնագիր
ԳՈՒՀ	գնողունակությամբ համարժեք
ԵԿԱ	Եվրոպա և Կենտրոնական Ասիա
ԵՀԲ	Եվրոպական հարևանության քաղաքականություն
ԵՄ	Եվրոպական Միություն
ԶԼՄ	զանգվածային լրատվության միջոց
ԶՆԱ	զուտ ներկա արժեք
ԸՆՀ	ընտանեկան նպաստների համակարգ
ԽՍՀՄ	Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունների Միություն
ԿԶԾ	Կայուն զարգացման ծրագիր
կկալ	կիլոկալորիա
կմ	կիլոմետր
հազ.	հազար
ՀԶՆ	Հազարամյակի զարգացման նպատակներ
ՀՀ	Հայաստանի Հանրապետություն
ՀՀ ԱԺ	Հայաստանի Հանրապետության Ազգային ժողով
ՀՀ ԱՄՀՆ	Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն
ՀՀ ԱՎԾ	Հայաստանի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայություն
ՀԲ	Համաշխարհային բանկ
ՀՀ ԿԲ	Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկ
ՀԿ	հասարակական կազմակերպություն
ՀՄԾ	«Հազարամյակի մարտահրավեր» ծրագիր
ՀՆԱ	համախառն ներքին արդյունք
ՁԻԱՀ	ձեռքբերովի իմունային անբավարարության համախտանիշ
ՄԱԶԾ	Միավորված ազգերի կազմակերպության զարգացման ծրագիր
ՄԱԿ	Միավորված ազգերի կազմակերպություն
ՄԶԾ	մարզային զարգացման ծրագիր
ՄԶՀ	մարդկային զարգացման համաթիվ

ՄԹ ՄՁՆ	Միացյալ Թագավորության միջազգային զարգացման նախարարություն
ՄԺԾԾ	միջին ժամկետ ծախսերի ծրագիր
ՄԻԱՎ	մարդու իմունային անբավարարության վիրուս
մլն	միլիոն
մլրդ	միլիարդ
ՆՍՁ	նվազագույն սպառողական զամբյուղ
ՊՖՎ	պետական ֆինանսների վիճակագրություն
ԶՕԸ	ջրօգտագործողների ընկերություն
ՍԳԻ	սպառողական գների ինդեքս
ՎԶԵԲ	Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկ
ՏԻՄ	տեղական ինքնակառավարման մարմին
ՏՀԶԿ	Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպություն
ՏՏԿԱՀ	տնային տնտեսությունների կենսամակարդակի ամբողջացված հետազոտություն
ՓՄՁ	փոքր և միջին ձեռնարկություններ
ՕՈԻՆ	օտարերկրյա ուղղակի ներդրումներ

ԱՀՌԾ-ի վերանայման մասնակցային գործընթացը

ԱՀՌԾ-ի իրականացման գործընթացում գործընկերության կայացում

1. ԱՀՌԾ-ի մշակման, իրականացման և մոնիթորինգի գործընթացում հանրային մասնակցության և գործընկերության ապահովման նպատակներն ու մեխանիզմները ԱՀՌԾ-ի հաստատումից հետո սահմանվել էին 2004 թվականի հոկտեմբերի 30-ին ստորագրված ԱՀՌԾ-ի իրականացման գործընկերային համաձայնագրով: Համաձայնագրով սահմանվել էին գործընկերության հիմնական նպատակները, կողմերի իրավունքները և պարտականությունները, ինչպես նաև համագործակցության ապահովման ինստիտուցիոնալ կառույցները՝ Համակարգող խորհուրդ, Աշխատանքային խումբ, Բաց ֆորում: Համաձայնագրի կողմերն են՝ ՀՀ Կառավարությունը, համայնքները, Հայ առաքելական եկեղեցին, արհմիությունները, Արդյունաբերողների և գործարարների միությունը և հասարակական կազմակերպությունների հինգ խմբեր: Համաձայնագիրը ստորագրվել էր եռամյա ժամկետի համար, և դրա գործողության ժամկետն ավարտվել է 2007 թվականին:

2. Համաձայնագրի կողմերի գնահատմամբ՝ վերջինիս գործողության անցած ժամանակահատվածում զգալի առաջընթաց է արձանագրվել ԱՀՌԾ-ի շրջանակներում միմյանց մոտեցումների առավել հստակ ընկալման և անգամ տեսակետների համաձայնեցման ուղղությամբ: ԱՀՌԾ-ի գործընթացի շրջանակներում արդյունավետ երկխոսություն է սկսվել հանրության տարբեր խմբեր ներկայացնող կողմերի միջև, և խորացել է Կառավարություն շահագրգիռ հանրություն վստահությունը:

3. Միևնույն ժամանակ, դեռևս առկա են գործընկերության հետագա զարգացման և դրա արդյունավետության բարձրացման մեծ հնարավորություններ: Այդ մասին են վկայում ինչպես աշխատանքային խմբում, այնպես էլ այս նպատակով կազմակերպված մի շարք քննարկումների ընթացքում առաջադրված հիմնահարցերը:

4. Մասնավորապես, 2007թ. հուլիսի 12-13-ը կայացած քննարկումների ժամանակ ամփոփվեցին Հայաստանի ԱՀՌԾ-ի շրջանակներում հանրային մասնակցության և գործընկերության փորձը, գործընթացում առկա խնդիրները: Հանդիպմանը քննարկվեցին մասնակցության տարբեր փուլերում (ծրագրերի մշակում, իրականացում և մոնիթորինգ) հանրության մասնակցության մեխանիզմների զարգացման հնարավորությունները: Ներկայացվեցին նաև անկախ փորձագետների կողմից այս խնդրով իրականացված ուսումնասիրության արդյունքները: Հանդիպմանը ակտիվ մասնակցություն ցուցաբերեցին նաև ՀՀ Ազգային ժողովի բոլոր կուսակցական խմբակցությունները:


5. Քննարկման արդյունքները հաշվի առնելով՝ ԱՀՌԾ-ի աշխատանքային խմբի 2007թ. սեպտեմբերի 14-ի նիստում քննարկվեցին սոցիալական գործընկերության զարգացման ուղղությամբ իրականացվելիք հետագա քայլերը և ձևավորվեց պատասխանատու փորձագիտական խումբ: Փորձագիտական խմբի աշխատանքների արդյունքներով ներկայացվել են ԱՀՌԾ-ի շրջանակներում սոցիալական գործընկերության զարգացման հայեցակարգը և Համաձայնագրի նախագիծը: Վերջիններս ևս ներկայացվել են լայն քննարկման, և համապատասխան փոփոխություններով Համաձայնագիրը արժանացել է ԱՀՌԾ-ի աշխատանքային խմբի և ԱՀՌԾ-ի համակարգող խորհրդի հավանությանը:

ԱՀՌԾ-ի վերանայման մասնակցային գործընթացի նկարագիրը և նպատակը

6. Համաձայն ՀՀ Կառավարության կողմից հաստատված «Աղքատության հաղթահարման ռազմավարական ծրագրի» (ԱՀՌԾ) (2003թ. օգոստոսի 8-ի թիվ 994-Ն որոշում)՝ ծրագիրը պետք է վերանայվի երկու տարին մեկ անգամ՝ հիմք ընդունելով ԱՀՌԾ-ի ցուցանիշների և միջոցառումների մոնիթորինգի ու գնահատման արդյունքները, ինչպես նաև հաշվի առնելով բոլոր շահագրգիռ կողմերի ներկայացրած՝ գործընթացի բարելավման վերաբերյալ առաջարկությունները:

7. ԱՀՌԾ-ի վերանայման գործընթացը սկսվել է 2006 թվականին, իսկ դրա կազմակերպման և իրականացման սկզբունքները հաստատվել են 2006 թ. մայիսի 19-ին՝ ԱՀՌԾ-ի համակարգող խորհրդի նիստում: Ըստ այդմ՝ ԱՀՌԾ-ի վերանայման մասնակցային գործընթացի հիմնական նպատակ էր սահմանվել հանրության իրական և նպատակային մասնակցության ապահովումը, որպեսզի հասարակության առաջարկությունները և մոտեցումները առավելագույնս արտացոլվեն ԱՀՌԾ-ի վերանայված տարբերակում:

8. ԱՀՌԾ-ի վերանայման մասնակցային գործընթացի ապահովման մեխանիզմները ներկայացված են հետևյալ սխեմատիկ պատկերում.



Ամրագրվել էին նաև մասնակցային գործընթացի կազմակերպմանը ներկայացվող հետևյալ հայեցակարգային մոտեցումները՝

- § ԱՀՌԾ-ի վերանայման գործընթացը պետք է խարսխվի «ներքևից-վերև» սկզբունքի վրա, այսինքն՝ վերանայման գործընթացը կսկսվի ներքևից՝ հասարակությունից, դեպի որոշում կայացնողները՝ Կառավարություն.
- § ԱՀՌԾ-ի վերանայման համար պատասխանատու կառույցները առավելագույնս պետք է աջակցեն մասնակցային գործընթացին՝ անհրաժեշտ միջավայր ապահովելով քաղաքացիական հասարակության և կառավարական մարմինների քննարկումների և բանակցային գործընթացների համար.
- § ԱՀՌԾ-ի վերանայման գործընթացում ուշադրության կենտրոնում պետք է դրվի ԱՀՌԾ-ի մոնիթորինգի և գնահատման համակարգի ինստիտուցիոնալացման հիմնախնդիրը՝ նկատի ունենալով կառավարական և ոչ կառավարական կառույցների կարողությունների հզորացումը:

9. Արդյունքում կարելի է արձանագրել, որ ԱՀՌԾ-ի վերանայման գործընթացը, որը տևեց շուրջ երկու տարի, իրականացվեց մասնակցային լայն գործընթացի ապահովման միջոցով: Այդ գործընթացին ակտիվ մասնակցություն են ունեցել Հայաստանի հանրության բոլոր շահագրգիռ կողմերը:

Սոցիոլոգիական հետազոտություն

10. Ելնելով այն հանգամանքից, որ մի քանի տարի է, ինչ Հայաստանում մշակվել և իրականացվում է Աղքատության հաղթահարման ռազմավարական ծրագիրը, որի մշակմանը, իրագործմանը և ընթացքի վերահսկմանը մասնակցել են բազմաթիվ հաստատություններ, կազմակերպություններ, անհատներ, և այսօր այդ ծրագիրը վերանայման և ճշգրտումների կարիք ունի, ԱՀՌԾ-ի վերանայման գերակայությունների որոշման համար իրականացվել է սոցիոլոգիական հետազոտություն: Սույն հետազոտության խնդիրն էր պարզել, թե որոնք են ԱՀՌԾ-ի վերանայման գերակայությունները՝ ըստ այն մշակող, իրականացնող և վերահսկող կողմերի: Հետազոտության օբյեկտը ԱՀՌԾ-ի մշակմանը, իրականացմանը և վերահսկմանը ակտիվ մասնակցած հաստատություններն ու կազմակերպություններն էին: Ուսումնասիրվող համախմբությունը նշված գործընթացների 207 ակտիվ մասնակիցներն էին:

11. Հետազոտության նպատակն էր ստանալ ԱՀՌԾ-ի վերանայման գերակայությունների դասակարգված շարքը: Այս առումով, համաձայն ստացված պատասխանների, առաջին տեղում է «Գործարար և ներդրումային միջավայրը», որին առաջնություն էին տվել հարցվողների ընդհանուր թվի շուրջ 18 տոկոսը: Երկրորդ տեղում են «Հանրային կառավարում» և «Առողջապահություն» ոլորտները՝ հարցվողների 15-ական տոկոսի կողմից դասվելով առաջին տեղում: Երրորդ և չորրորդ տեղերում համապատասխանաբար «Կենսաթոշակային ապահովություն» (14%) և «Կրթություն» (12%) ոլորտներն են:

Հանդիպումներ և քննարկումներ

12. ԱՀՌԾ-ի վերանայման հայեցակարգով նախատեսված քննարկումները կազմակերպվել են երկու մակարդակներում՝ հանրապետական և մարզային: Քննարկումների նյութ են հանդիսացել բանակցային կողմերի և ԱՀՌԾ-ի Բաց ֆորումի կողմից ԱՀՌԾ-ի վերանայման համար վեր հանված, այնուհետև ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարության ԱՀՌԾ-ի համակարգման և մոնիթորինգի բաժնի կողմից ամփոփված խնդիրների արդյունքները: Քննարկումները հիմնվել են նաև ԱՀՌԾ-ի վերանայման գերակայությունների որոշման համար իրականացված սոցիոլոգիական հետազոտության արդյունքների վրա:

13. Հանրապետական մակարդակում կազմակերպված քննարկումները եղել են երկու տեսակի՝ մասնագիտական և հանրային: Ընդհանուր առմամբ, այս մակարդակում կազմակերպվել է 20 քննարկում, որից 16-ը եղել է մասնագիտական, իսկ 4-ը՝ հանրային: Քննարկումները կազմակերպվել են Երևան, Ծաղկաձոր և Գիլիջան քաղաքներում:

§ Մասնագիտական քննարկումները անցկացվել են հետևյալ խորագրերով՝

Հիմնական ցուցանիշների նպատակադրումներ. մակրոտնտեսական, հարկաբյուջետային, եկամտային և մարդկային աղքատություն, ժողովրդագրական և տարածաշրջանային անհամամասնություններ,

ԱՀՌԾ-ի քաղաքականություններում գենդերային հավասարության մոտեցումների ընդգրկման հնարավորություններ,

Աղքատության գիծ. հաշվարկման և նպատակադրման հիմնախնդիրներ, անհավասարության հիմնախնդիրներ,

Հանրակրթության համակարգի արդյունավետության գնահատման որակական ցուցանիշների համակարգ,

Նախադպրոցական կրթական համակարգ,

Բուժօգնության երաշխավորված պետական պատվեր,

Ջրային ռեսուրսների արդյունավետ կառավարում (Սևանա լճի էկոլոգիական հավասարակշռության վերականգնում, հոսքաջրերի մաքրման խնդիրներ),

Հայաստանի անտառների ներկա իրավիճակը, ապօրինի անտառահատումների հիմնախնդիրը, լուծման ուղիները, բնապահպանական վճարների հասցեական օգտագործման հիմնախնդիրներ,

ՀՀ մեծ քաղաքների (Երևան) էկոլոգիական իրավիճակի բարեփոխման հիմնախնդիրներ,

Հանրային ծառայությունների մատչելիություն,

Ժողովրդագրական հիմնահարցերը ԱՀՌԾ-ի շրջանակներում,

Կենսաթոշակային համակարգի բարեփոխումներ,

Ջրաղվածության քաղաքականության արդյունավետության բարձրացում,

Ընտանեկան նպաստների համակարգի արդյունավետության բարձրացում,

Տարածքային համաչափ զարգացում և տեղական ինքնակառավարում,

Հանրային մասնակցության մեխանիզմների և գործընկերության զարգացում:

§ Հանրային քննարկումները ներառել են հետևյալ թեմաները.

Առողջապահության ծառայությունների որակի ապահովման և դեղերի տնտեսական մատչելիության հիմնախնդիրներ,

Դատաիրավական համակարգի բարեփոխումներ,

Հատուկ կարիքներով բնակչության խմբերի հիմնահարցերը ԱՀՌԾ-ի շրջանակներում,

Հանրային կառավարման բարեփոխումներ:

14. Մարզային մակարդակում կազմակերպված քննարկումները եղել են միայն հանրային ձևաչափով: Քննարկումները կազմակերպվել են հանրապետության բոլոր մարզերում՝ ըստ ժամանակացույցի, որոնց մասնակցել են շահագրգիռ բոլոր կողմերը:

15. Մարզային քննարկումների համար ընտրվել են այնպիսի թեմաներ, որոնք առավելապես բացահայտում են տեղերում սուր արտահայտված խնդիրները, այդ թվում՝ զբաղվածության, փոքր և միջին ձեռներեցության, կրթության և առողջապահական ծառայությունների զարգացման ծրագրերը: Հաշվի առնելով, որ Հայաստանի տարածքային զարգացումը որոշակի խնդիրներ է առաջացրել, և մարզերի զարգացումը չի հասնում Երևանի զարգացման գոնե կեսին, ԱՀՌԾ-ի վերանայման գործընթացի նպատակներից է նաև լուծել այս խնդիրը, մեղմել այդ տարբերությունը՝ ծրագրերն ուղղորդելով դեպի մարզերը:

16. Ընդհանուր առմամբ, մարզային մակարդակում կազմակերպվել է 18 քննարկում, որոնց մասնակցել են ավելի քան հազար մասնակիցներ:

17. **Գործարար միջավայր և փոքր ու միջին բիզնես** ոլորտի քննարկումները կազմակերպվել են բոլոր 10 մարզերում (Տավուշ, Կոտայք, Սյունիք, Վայոց ձոր, Շիրակ, Լոռի, Արմավիր, Արագածոտն, Արարատ, Գեղարքունիք)՝ հետևյալ խորագրերով.

§ «Գյուղում ոչ գյուղատնտեսական զբաղվածության հնարավորություններ, հիմնախնդիրներ. ֆինանսական ռեսուրսների մատչելիություն»,

§ «Փոքր և միջին բիզնեսի զարգացման խնդիրներ և հեռանկարներ»,

§ «Զբաղվածության ծրագրերի հասցեականություն և արդյունավետություն»:

18. **Առողջապահության** ոլորտի քննարկումները կազմակերպվել են Շիրակի, Սյունիքի և Տավուշի մարզերում՝ հետևյալ խորագրով՝

§ «Բժշկական ծառայությունների ֆիզիկական մատչելիության ապահովում»:

19. **Կրթության** ոլորտի քննարկումները կազմակերպվել են հանրապետության 5 մարզերում (Շիրակ, Տավուշ, Սյունիք, Գեղարքունիք, Լոռի)՝ հետևյալ խորագրով՝

§ «Դպրոցների կառավարման համակարգերի գործունեություն»:

20. Հանրապետական և մարզային քննարկումների ընթացքում հնչեցված առաջարկությունները ներկայացվել են ԱՀՌԾ-ի աշխատանքային խմբին և ԱՀՌԾ-ի վերանայման համար պատասխանատու փորձագետներին՝ ԱՀՌԾ-ի վերանայված տարբերակում արտացոլելու նպատակով:

Հանրային իրազեկում

21. ԱՀՌԾ-ի վերանայման գործընթացի հանրային իրազեկման 1-ին փուլի ընթացքում ՁԼՄ-ների հրապարակումներում տեղ են գտել մի շարք դիտարկումներ, դիտողություններ ու առաջարկություններ: Հանրապետական ՁԼՄ-ներում տպագրվել են ավելի քան 20 հոդվածներ, վերլուծություններ, հարցազրույցներ ԱՀՌԾ-ի վերանայման գործընթացի մասին, ԱՀՌԾ-ի աշխատանքային խմբի անդամների և փորձագետների մասնակցությամբ, այդ թվում՝ կազմակերպվել է ԱՀՌԾ-ի աշխատանքային խմբի ղեկավարի մասնակցությունը «Իրավունք» թերթի «ուղիղ հեռախոսակապին»:

22. Տպագրվել է «ԱՀՌԾ-ի վերանայման գործընթաց. արդյունքներ, ազդակներ, առաջընթացի միտումներ» գրքույկը, որտեղ ներկայացվել են ԱՀՌԾ-ի վերանայման մասնակցային գործընթացի հանրային իրազեկման ծրագրի շրջանակներում իրականացված քննարկումների վերաբերյալ մամուլում տեղ գտած հրապարակումները, վերլուծությունները, ինչպես նաև մասնագիտական և հանրային քննարկումների ընթացքում վեր հանված խնդիրները և առաջարկությունները: Տպագրվել է նաև «ԱՀՌԾ-ի վերանայման գործընթաց. արդյունքներ, ազդակներ, սկզբունքներ» հրապարակումը, որը տարածվել է 10 մարզային թերթերի միջոցով՝ որպես միջուկ-ներդիր:

23. ԱՀՌԾ-ի աշխատանքային խմբի և ԱՀՌԾ-ի փորձագետների մասնակցությամբ կազմակերպվել են հեռուստատեսային հաղորդումներ, այդ թվում՝ Հ1 («Ձեռագիր»), «Շանթ» («Հեռանկար»), Հ-2 («Լրաբեր») հեռուստաալիքներով, ինչպես նաև ծաղկածորյան սեմինարի աշխատանքների մասին ընդարձակ հաղորդում է հեռարձակել «Հրազդան» մարզային հեռուստաընկերությունը: Իրականացվել է «ԱՀՌԾ. ձեռքբերումներ, առաջընթացի միտումներ» հեռուստաֆիլմի նկարահանում, որը ցուցադրվել է մի շարք հեռուստաընկերությունների եթերով: Վերջինս տեղադրվել է նաև ԱՀՌԾ-ի էլեկտրոնային կայքում:

24. ԱՀՌԾ-ի վերանայման գործընթացի իրականացման վերաբերյալ ամբողջական տեղեկատվություն է տեղադրված _____ ինտերնետային կայքի «ԱՀՌԾ-ի վերանայում» բաժնում, որը պարբերաբար համալրվում է:

25. ԱՀՌԾ-ի էլեկտրոնային կայքի միջոցով իրականացվել է նաև ԱՀՌԾ-ի վերանայման մասնակցային գործընթացի սոցիոլոգիական ուսումնասիրություն, որի կազմակերպումը 2006 թ. իրականացրեց Տնտեսական բարեփոխումների վերլուծական-տեղեկատվական կենտրոնը: Սոցիոլոգիական հետազոտության նպատակն էր ուսումնասիրել բնակչության կարծիքը այնպիսի հարցերի առնչությամբ, ինչպիսիք են՝ ինչու՞ է վերանայվում երեք տարի առաջ՝ 2003թ. օգոստոսին հաստատված ԱՀՌԾ-ն, որո՞նք են վերանայման նախապայմաններն ու սկզբունքները, ինչպիսի՞ նպատակներ է դրել իր առջև Հայաստանի Հանրապետության Կառավարությունը, և վերանայման արդյունքում ի՞նչ կստանա հանրությունը, հատկապես որքանով կբարելավվի աղքատ և խոցելի բնակչության սոցիալական վիճակը, որո՞նք են նոր իրադրության մեջ աղքատության նվազեցման ազդակներն ու կողմնորոշիչները և նման մի շարք այլ հարցեր:

26. Իրականացված ուսումնասիրությանն արձագանքեցին մարզերի, համայնքների և մայրաքաղաքի սոցիալական տարբեր շերտերի 500 ներկայացուցիչներ, մասնավորապես, մասնագետներ, գիտնականներ, պետական ծառայողներ, թոշակառուներ, գործատուներ, գործազուրկներ:

«Աղքատների ձայնը»

27. ԱՀՌԾ-ի մասնակցային գործընթացի շրջանակներում իրականացվել են մի շարք հետազոտություններ, այդ թվում՝ «Աղքատների ձայնը» հետազոտությունը, որի նպատակն էր ապահովել մարդկանց մասնակցությունը ԱՀՌԾ-ի վերանայման գործընթացին: Մարդկանց կարծիքները ստանալու մեթոդաբանության հիմնաքարը այն էր, որ մարդիկ տվյալները ներկայացնում են իրենց իմացածի հիման վրա, իրենք են վերլուծում իրենց վիճակը, իրենք են մատնանշում իրենց հիմնախնդիրները, իրենք են գտնում իրենց հիմնախնդիրների լուծումները և իրենք են մշտադիտարկում ու գնահատում իրենց համար մշակված պետական քաղաքականությունը, ռազմավարությունները, պլանները և ծրագրերը: Իրականացված հետազոտության արդյունքում ստացվել են տարբեր ոլորտներում (կրթություն, առողջապահություն, գյուղատնտեսություն, սոցիալական ապահովություն) իրավիճակը բարելավելու վերաբերյալ առաջարկներ:

Մասնակցային գործընթացի երկրորդ փուլը և հիմնական արդյունքները

28. ԱՀՌԾ-ի վերանայված նախագիծը 2007 թվականի դեկտեմբերի 28-ին ԱՀՌԾ-ի համակարգող խորհրդին ներկայացվելուց և քննարկելուց հետո այն ներկայացվեց հանրության և բոլոր շահագրգիռ կողմերի քննարկմանը: Միևնույն ժամանակ իրականացվեց ԱՀՌԾ-ի վերանայված տարբերակի 700 օրինակ տպագրություն և այն 2008 թվականի հունվարի 13-ին կազմակերպված խորհրդաժողովին ներկայացվեց ավելի քան 200 մասնակիցներին և զանգվածային լրատվության միջոցներին:

29. ԱՀՌԾ-ի նախագծի հիմնական ուղղությունների և գերակայությունների ներկայացման և առաջարկությունների ներգրավման նպատակով տպագրվել են մի քանի հոդվածներ և հարցազրույցներ՝ ԱՀՌԾ-ի աշխատանքային խմբի ներկայացուցիչների մասնակցությամբ: Հեռուստատեսությամբ ևս կազմակերպվել են հարցազրույցներ և քննարկումներ: Առանձին ոլորտային քննարկումներ են կազմակերպվել նաև նախարարությունների և գերատեսչությունների մասնակցությամբ:

30. Միաժամանակ, ՀՀ մարզերում բնակչության և հասարակական կազմակերպությունների շրջանում ԱՀՌԾ-ի վերաբերյալ տեղեկատվության տրամադրման և քննարկումներ նախաձեռնելու նպատակով 2008 թ. հունվարի 15 ից ութ մարզերում իրականացվել են քննարկումներ և հանդիպումներ, որոնց մասնակցել են տարբեր

կազմակերպությունների 600 ներկայացուցիչներ: Այդ քննարկումներն առավել արդյունավետ կազմակերպելու համար մշակվել և տպագրվել է փաստաթղթի պարզեցված տարբերակը (700 օրինակ)¹:

31. ԱՀՌԾ-ի վերանայված նախագիծը նաև թարգմանվել և ներկայացվել է Հայաստանում գործող բոլոր միջազգային կազմակերպություններին: ԱՀՌԾ-ի վերանայված նախագիծը նաև տեղադրվել է ԱՀՌԾ-ի էլեկտրոնային կայքում՝ առավել մեծ հնարավորություն ընձեռելով բոլոր շահագրգիռ կողմերին ներկայացնել իրենց դիրքորոշումը նախագծի վերաբերյալ:

32. Արդյունքում, 2008 թ. մարտի դրությամբ, ԱՀՌԾ-ի վերանայված տարբերակի նախագծի վերաբերյալ գրավոր առաջարկություններ և դիտողություններ են ներկայացվել պետական կառավարման մարմինների (26), հասարակական հատվածի (14) և դոնոր հանրության կողմից (6):

33. Ներկայացված դիտողություններին համապատասխան՝ նախագծում իրականացվել են հետևյալ հիմնական փոփոխությունները՝

§ Ամբողջովին վերանայվել է մակրոտնտեսական և ֆիսկալ շրջանակը՝ հաշվի առնելով 2007 թ. արդյունքները, 2008 թ. ձևավորված միտումները և առկա մարտահրավերները, մասնավորապես, կանխատեսվող ավելի բարձր սպառողական գներն ու ՀՆԱ-ի դեֆլյատորը, իրական աճի՝ անփոփոխ պայմաններում՝ անվանական ՀՆԱ-ի ավելի բարձր մակարդակ, ենթադրվել է փոխարժեքի անփոփոխ մակարդակ՝ ծրագրային ամբողջ ժամանակահատվածի համար, վերանայվել է տնտեսության կառուցվածքը՝ ժամանակահատվածի վերջում նպատակադրելով արդյունաբերության և ծառայությունների ոլորտների ավելի մեծ մասնաբաժին՝ հիմնականում ի հաշիվ շինարարության նվազման:

§ Վերանայվել են ծրագրի հիմքում դրված ժողովրդագրական կանխատեսումները:

§ Փաստաթուղթը վերանայվել է՝ հաշվի առնելով 2006 թվականի տնային տնտեսությունների հետազոտության արդյունքները: Մակրոտնտեսական, հարկաբյուջետային և ժողովրդագրական կանխատեսումների փոփոխության հետևանքով վերանայվել են հետևյալ առանցքային ցուցանիշների կանխատեսումները՝ աղքատության շեմ, նվազագույն սպառողական զամբյուղի արժեքային գնահատական, միջին և նվազագույն աշխատավարձեր, կենսաթոշակների և նպաստների մակարդակներ:

§ Փոփոխություններ են տեղի ունեցել նախագծի առանձին ոլորտների և ենթաոլորտների զարգացմանը նվիրված հատվածներում, որոնցից հիմնականներն են՝

ա) փաստաթուղթը արտացոլում է ՀՀ Կառավարության մտադրությունները՝ երկարաժամկետ հեռանկարում տարածաշրջանում առաջատար դիրքերի հասնել գործարար միջավայրի, ֆինանսական, առողջապահական և կրթական ծառայությունների ոլորտներում:

¹ 2008 թ. սեպտեմբերի 16-26-ը ՀՀ ինը մարզերում քննարկումներ և ԱՀՌԾ-ի նախագծի ներկայացում է կազմակերպվել նաև ԱՀՌԾ-ի համակարգող խորհրդի կողմից 2008 թ. սեպտեմբերի 10-ի նիստում այն հավանության արժանացնելուց հետո:

բ) «Տնտեսական զարգացում» բաժնում ավելացվել են ենթաբաժիններ՝ նվիրված ֆինանսական համակարգի զարգացմանը, տնտեսության կառուցվածքային փոփոխություններին և երկրի ինստիտուցիոնալ արդիականացմանը, վերանայվել են գործարար միջավայրի բարելավման հենանիշերը.

գ) ավելացվել է տարածքային զարգացման բաժինը, պետական կառավարման և դատախարակական բարեփոխումների բաժնում ավելացվել են էլեկտրոնային կառավարմանը և հասարակական կարգի պահպանմանը նվիրված ենթաբաժիններ, խորացվել և ընդլայնվել են ենթակառուցվածքների զարգացմանը վերաբերող դրույթները՝ ներկայացնելով առանձին ենթաբաժիններով, կարևորվել և շեշտադրվել են երիտասարդությանը վերաբերող հարցերը՝ առանձին ենթաբաժնով, ավելացվել է քաղաքաշինության հիմնախնդիրներին նվիրված բաժին.

դ) սոցիալական պաշտպանության բաժնում՝ շեշտադրվել և դետալացվել են կուտակային կենսաթոշակային համակարգին անցման դրույթները, ավելացվել է հիմնական թոշակին վերաբերող թիրախ, առանձին դիտարկվել են ներկա կենսաթոշակային համակարգի բարեփոխումների ուղղությունները, ներկայացվել են հաշմանդամների հիմնախնդիրները և դրանց լուծման ուղղությունները:

§ Միաժամանակ, փաստաթղթի գրեթե բոլոր բաժիններում կատարվել են բովանդակային, ինչպես նաև տեխնիկական բազմաթիվ փոփոխություններ՝ հաշվի առնելով շահագրգիռ կողմերի հետ իրականացված քննարկումներն ու ներկայացված առաջարկությունները:

34. 2008 թ. ապրիլ ամսին վերոնշյալ լրամշակումներով ԱՀՌԾ-ի նախագիծը և ներկայացվել է բոլոր շահագրգիռ կողմերի քննարկմանը: Համատեղ արտագնա քննարկում է կազմակերպվել սույն թվականի մայիսին, որի ընթացքում ներկայացված դիտողությունների և առաջարկությունների հիման վրա լրամշակված տարբերակը սույն թվականի սեպտեմբերի 1-3-ը ԱՀՌԾ-ի աշխատանքային խմբի արտագնա նիստում քննարկվել և համապատասխան լրամշակումներով արժանացել է հավանության:

35. Ինչպես ԱՀՌԾ-ի մշակման մասնակցային գործընթացի առաջին փուլում, նախագծի քննարկման երկրորդ փուլում ևս հանրության տարբեր խմբերը ներկայացնող կողմերը և նրանց ներկայացուցիչները, այդ թվում՝ նաև կենտրոնական և տեղական իշխանության մարմինները, հասարակական կազմակերպությունների, արհմիությունների, բիզնես հանրության և դոնոր կազմակերպությունների ներկայացուցիչներն իրենց ակտիվ մասնակցությունն են բերել ԱՀՌԾ-ի մասնակցային գործընթացին և ԱՀՌԾ-ի քննարկումներին:

36. ԱՀՌԾ-ի համակարգող խորհրդի կողմից ԱՀՌԾ-ի վերանայված փաստաթուղթը քննարկվել և հավանության է արժանացել 2008 թ. սեպտեմբերի 10-ի նիստում, որին մասնակցում էին ԱՀՌԾ-ի համակարգող խորհրդի, ԱՀՌԾ-ի աշխատանքային խմբի և դոնոր կազմակերպությունների ներկայացուցիչներ: Միաժամանակ, նիստի ընթացքում որոշում է կայացվել փաստաթուղթը վերանվանել **Կայուն զարգացման ծրագիր**՝ հաշվի առնելով, որ այն բովանդակությամբ և կառուցվածքով որոշակիորեն տարբերվում է նախորդից, ունի ավելի լայն ընդգրկում և, ըստ էության, երկրի սոցալ-տնտեսական զարգացման ծրագիր է:

37. Ծրագրի վերանվանումը ենթադրում է նաև որոշակի փոփոխությունների և ճշգրտումների կատարում նաև ծրագրի մասնակցային կառավարման ինստիտուտներում և կառուցվածքներում: Այդուհանդերձ, այդ համակարգը, հիմնականում, առաջնորդվելու է

ԱՀՌԾ-ի իրականացման մասնակցային կառավարման համակարգի գործառնման սկզբունքներով՝ հիմքում ունենալով սոցիալական գործընկերության գաղափարա-խոսությունը:

38. Կայուն զարգացման ծրագրի (ԿԶԾ-ի) Սոցիալական գործընկերության նպատակն է լինելու հասարակական տարբեր ոլորտները, հանրային ինստիտուտները, սոցիալական խմբերը և խավերը ներկայացնող սուբյեկտների միջև շահերի ներդաշնակեցումը և ջանքերի համադրումը՝ ուղղված ծրագրի արդյունավետ իրականացմանը, մոնիթորինգին և գնահատմանը ու, անհրաժեշտության դեպքում, վերանայմանը: Այն նպատակադրում է՝

§ ապահովել աղքատության հաղթահարման ու զարգացման գործընթացով հետաքրքրված բոլոր կողմերի դիրքորոշումների ու շահերի ներկայացման և պաշտպանության հնարավորությունների ապահովումը,

§ նախադրյալներ ստեղծել ծրագրով նախանշված ուղղություններով քաղաքականությունների մշակմանը, որոշումների կայացմանը, իրականացմանը և մոնիթորինգին ու գնահատմանը հասարակության մասնակցության միջոցով ծրագրի իրականացման արդյունավետության բարձրացման համար,

§ ինչպես նաև աջակցել քաղաքացիական հասարակության կայացման համար բարենպաստ միջավայրի ձևավորմանը:

39. Ըստ Կայուն զարգացման ծրագրի Սոցիալական գործընկերության համաձայնագրի՝ ԿԶԾ-ի մասնակցային իրականացման կառավարման համակարգը բաղկացած կլինի երկու մակարդակից՝ Կայուն զարգացման ծրագրի իրականացման գործընթացը համակարգող խորհուրդ (ԿԶԾ-ի համակարգող խորհուրդ) և Կայուն զարգացման ծրագրի իրականացման ընթացիկ աշխատանքները համակարգող աշխատանքային խումբ (ԿԶԾ-ի աշխատանքային խումբ):

40. ԿԶԾ-ի մշակման, իրականացման, մոնիթորինգի և գնահատման գործընթացներում քաղաքացիական հասարակության, որպես հավասար գործընկեր կողմ, արդյունավետ մասնակցությունն ապահովելու նպատակով կձևավորվի ԿԶԾ-ի Սոցիալական գործընկերության ինստիտուտի կազմակերպական կառույց՝ Կայուն զարգացման ծրագրի քաղաքացիական հասարակության ցանց (ԿԶԾ-ի ՔՀՑ): Վերջինիս գործունեությունն ուղղված է կոնկրետ խնդիրների շուրջ շահագրգիռ դերակատարներին համախմբելու, ԿԶԾ-ի մասնակցային գործընթացի աշխատանքները կազմակերպելու, համակարգելու և նպատակաուղղելու աղքատության հաղթահարման հիմնախնդրի արդյունավետ լուծմանը:

41. Կայուն զարգացման ծրագրի քաղաքացիական հասարակության ցանցը համակարգ է, որը բաղկացած է լինելու բանակցային խմբերից, ԿԶԾ ՔՀՑ-ի քարտուղարությունից և ԿԶԾ ՔՀՑ-ի խորհրդից: ԿԶԾ-ի քաղաքացիական հասարակության ցանցի և դրա կառուցվածքային միավորների ձևավորման մեխանիզմները, լիազորությունների և պարտականությունների շրջանակները ներկայացված են Կայուն զարգացման ծրագրի Սոցիալական գործընկերության համաձայնագրում: ԿԶԾ-ի քաղաքացիական համագործակցության ցանցի ձևավորումը, ներառյալ՝ ցանցի կանոնադրության ու աշխատակարգի մշակումը և հաստատումը, կիրականացնեն Համաձայնագիրը ստորագրած ոչ կառավարական հատվածի կողմերը:

1. Աղքատության հաղթահարման ռազմավարական ծրագրի իրականացման հիմնական արդյունքները և ռազմավարական ծրագրի վերանայման անհրաժեշտությունը

1.1. ԱՀՌԾ-ի հիմնական նպատակային ցուցանիշները և ռազմավարական գերակայությունները

42. Աղքատության հաղթահարման ռազմավարական ծրագիրը (ԱՀՌԾ) ՀՀ Կառավարության կողմից հաստատվել է 2003 թ. օգոստոսին և ներառում է 2003-2015 թթ. ծրագրային ժամանակահատվածը: Այն, ըստ էության, ՀՀ անկախության ձեռքբերումից հետո ՀՀ սոցիալ-տնտեսական զարգացման առաջին երկարաժամկետ ռազմավարական ծրագիրն է:

43. Ծրագրի հիմնական նպատակը նյութական աղքատության նշանակալի կրճատումն էր: Ըստ ծրագրի՝ նախատեսվում էր աղքատության մակարդակը 2015 թ. հասցնել 19.7 տոկոսի, իսկ ծայրահեղ աղքատության մակարդակը՝ 4.1 տոկոսի՝ 2001 թ. համապատասխանաբար 50.9 տոկոս և 16 տոկոս² ցուցանիշների փոխարեն: Նյութական աղքատության կրճատման հետ մեկտեղ, աղքատության հաղթահարման ռազմավարական ծրագիրը նպատակ էր հետապնդում կրճատել նաև Հայաստանում շատ բարձր մակարդակի հասած եկամտային անհավասարությունը՝ 2001 թ. 53.5 տոկոսից մինչև 44.6 տոկոս՝ 2015 թ.:

44. Մարդկային աղքատության կրճատման առումով՝ ծրագրի նպատակներն էին. առկա մարդկային ներուժի պահպանումը և հետագա զարգացումը, մարդկային աղքատության դրսևորումների կրճատումը, բնակչության առողջության վիճակի, վերարտադրական ներուժի և կենսապայմանների բարելավումը, ներառյալ՝ ընդհանուր կրթության և առողջապահության ծառայությունների որակի և աղքատների համար մատչելիության մակարդակի բարձրացումը, մանկական և մայրական մահացության մակարդակների կրճատումը, խմելու ջրի և այլ առաջնային ծառայությունների որակի և մատչելիության բարելավումը:

45. ԱՀՌԾ-ի հիմնական նպատակների նման ընտրությունը պայմանավորված էր նյութական աղքատության լայնածավալ տարածվածությամբ, աղքատների՝ երկրի տնտեսական, սոցիալական և քաղաքական կյանքին անբավարար մասնակցությամբ, նրանց «ձայնագրկությամբ», ինչպես նաև այն հանգամանքով, որ բնակչության շուրջ կեսի աղքատ լինելու փաստը լուրջ վտանգ էր ներկայացնում հասարակության կայունության և հետագա տնտեսական ու սոցիալական զարգացման համար:

46. Մարդկային աղքատության կրճատման, իսկ ավելի լայն իմաստով՝ մարդկային անընդհատ զարգացման ապահովման ընտրությունը՝ որպես ԱՀՌԾ-ի երկրորդ հիմնական նպատակ, պայմանավորված էր հասարակության մեջ ձևավորված այն գիտակցությամբ, որ աղքատության հաղթահարումը ներառում է ոչ միայն աղքատ բնակչության տրամադրության տակ գտնվող նյութական ռեսուրսների ավելացումը, այլ նաև հիմնարար սոցիալական ծառայություններից և կենսապայմաններից օգտվելու, ինչպես նաև երկրի սոցիալական և քաղաքական կյանքին մասնակցելու նրանց հնարավորությունների էական մեծացումը: Բացի այդ, բարձրորակ մարդկային կապիտալի առկայությունը հանդիսանում է ժամանակակից տնտեսական զարգացման հիմնական նախապայմանը, և առանց դրա անհնար է երկարաժամկետ հեռանկարում ապահովել կայուն տնտեսական աճ:

² Ըստ ծրագրի մշակման ժամանակ օգտագործվող՝ աղքատության գնահատման մեթոդաբանության:

47. Նշված նպատակներին հասնելու համար աղքատության հաղթահարման ռազմավարությունը բաղկացած էր երեք հիմնական գերակա ուղղություններից. ա) կայուն արագ տեմպերով տնտեսական աճի ապահովումը, բ) ակտիվ և բնակչության խոցելի խմբերին (ներառյալ՝ աղքատներ և ծայրահեղ աղքատներ) ուղղված նպատակային սոցիալական ու եկամտային քաղաքականության իրականացումը, գ) երկրի կառավարման համակարգի արդիականացումը՝ ներառյալ պետական կառավարման արդյունավետության բարձրացումը և պետության տրամադրության տակ գտնվող ռեսուրսային փաթեթի ընդլայնման ապահովումը:

48. Կայուն և բարձր տեմպերով տնտեսական աճի ապահովումը, ինչպես նաև տնտեսական աճի՝ աղքատության հաղթահարմանը միտվածության պահպանումը և հետագա խորացումը հանդիսացավ ԱՀՌԾ-ի առաջնային գերակայությունը: Ելնելով այն բանից, որ նախատեսվում էր ԱՀՌԾ-ն լրացնել ՀՀ երկարաժամկետ կայուն զարգացման ռազմավարական ծրագրով, որն ավելի մանրամասն պետք է անդրադառնար կայուն տնտեսական աճի ապահովման համար անհրաժեշտ տնտեսական քաղաքականության մշակմանը և իրականացմանը, ԱՀՌԾ-ի տնտեսական աճի քաղաքականությունը հիմնականում միտված էր աղքատության կրճատմանը, աղքատ բնակչության՝ երկրի տնտեսական կյանքում ընդգրկվածության աստիճանի և աշխատանքից ստացվող եկամուտների ավելացման ապահովմանը: Այդ քաղաքականության իրականացումը պետք է հանդիսանար նյութական աղքատության հաղթահարման հիմնական գործոնը, որը և տեղի ունեցավ 2001-2006 թթ. ընթացքում:

49. Այդ առումով, կարող են առանձնացվել պետական քաղաքականության հետևյալ երկու ուղղությունները.

§ ինքնագրադավածության և փոքր գործարարության խրախուսումը՝ գործարար և ներդրումային միջավայրի անընդհատ բարելավման, ինչպես նաև փոխառու ֆինանսական ռեսուրսների մատչելիության աճի և արժեքի նվազեցման միջոցով մակրոտնտեսական կայունության և ազատական տնտեսական համակարգի պայմաններում.

§ պետական ներդրումային ռեսուրսների գերազանցապես ուղղումը տնտեսությունում ձևավորված այն ենթակառուցվածքային սահմանափակումների վերացմանը կամ մեղմմանը, որոնք միջին և երկարաժամկետ հեռանկարում կարող են արգելք հանդիսանալ աղքատության կրճատմանը միտված տնտեսական աճի կամ մարդկային զարգացման համար, մասնավորապես՝ գյուղական ճանապարհների շինարարությունը և բարեկարգումը, ոռոգման համակարգի արդիականացումը և արդյունավետության աճի ապահովումը, խմելու ջրի ոլորտում ծրագրերի իրականացումը, դպրոցների վերանորոգումը և արդիականացումը և այլն:

50. Նպատակային սոցիալական քաղաքականության իրականացումը նյութական աղքատության (հատկապես՝ ծայրահեղ աղքատության) և եկամտային անհավասարության կրճատման՝ ԱՀՌԾ-ի երկրորդ հիմնական ռազմավարական գերակայությունն էր, որը, լրացվելով համապատասխան եկամտային քաղաքականությամբ, նպատակաուղղված պետք է լիներ.

§ Սոցիալական աջակցության ոլորտում՝ ընտանեկան նպաստների հասցեականության աճի ապահովմանը և առավել աղքատ բնակչության՝ հնարավոր առավելագույն ներգրավմանը համակարգում: Ընտանեկան նպաստների չափերը նախատեսվում էր ավելացնել այն տրամաբանությամբ, որ հնարավոր լիներ գերազանցել պարենային աղքատության գիծը:

§ Սոցիալական ապահովագրության ոլորտում՝ արդյունավետության աճին, ապահովագրական բնույթ չկրող կենսաթոշակների վճարման տեղափոխմանը պետական բյուջե, կենսաթոշակների չափերի ավելացմանը՝ այն հաշվարկով, որ դրանք գերազանցեն ընդհանուր աղքատության գիծը, ինչպես նաև կենսաթոշակների տարբերակման աճին և աշխատանքային ստաժից ելնելով՝ կենսաթոշակային համակարգից ապահովագրական վճարների ծավալով պայմանավորված կենսաթոշակային համակարգին անցման համար նախադրյալների ստեղծմանը:

§ Եկամտային քաղաքականության ոլորտում՝ առաջնային եկամուտներին գերակայություն տալով, մասնավորապես՝ բյուջետային և սոցիալական ենթակառուցվածքների ոլորտի ցածր վճարվող աշխատողների աշխատավարձերի առաջանցիկ աճի ապահովմանը՝ այն հաշվարկով, որ դրանք առնվազն երկու անգամ գերազանցեն աղքատության ընդհանուր գծի մակարդակը, ինչպես նաև օրենքով սահմանված նվազագույն աշխատավարձի համապատասխանեցմանը աղքատության ընդհանուր գծին՝ նպատակ ունենալով լուծել աշխատող «աղքատների» սոցիալական հիմնահարցը և կրճատել եկամտային անհավասարությունը:

51. Մարդկային զարգացման ապահովման և մարդկային աղքատության կրճատման քաղաքականության հիմնական գերակայությունը հիմնարար սոցիալական ծառայությունների, մասնավորապես՝ կրթության և առողջապահության առաջանցիկ զարգացման ապահովումն է՝ դրանց արդյունավետության և մատչելիության բարձրացման միջոցով: Առաջադրված նպատակներին ԱՀՌԾ-ն նախատեսում էր հասնել այդ ոլորտներում բարեփոխումների խորացման միջոցով, իսկ գերակա ուղղություններ էին դիտվում ընդհանուր կրթությունն ու առաջնային բժշկական օգնությունը: Բարեփոխումներին զուգահեռ՝ պետք է ավելացվեին պետական ֆինանսավորման ծավալները, որը դիտվում էր սոցիալական ենթակառուցվածքների զարգացումը ապահովող հիմնական միջոց: Մասնավորապես, նախատեսվում էր կրթության բնագավառում պետական ծախսերը (ՀՆԱ-ի նկատմամբ) 2002 թ. համեմատ ավելացնել 1.7 տոկոսային կետով՝ 2015 թ. ապահովելով ՀՆԱ-ի նկատմամբ 4 տոկոս ցուցանիշ: Առողջապահության բնագավառում ծրագրվում էր 2015 թ. պետական ծախսերը հասցնել ՀՆԱ-ի նկատմամբ 2.5 տոկոսի՝ 2002 թ. 1.2 տոկոսի փոխարեն:

52. Աղքատության հաղթահարման ռազմավարական ծրագրի հաջորդ գերակայությունը պետական կառավարման ոլորտի արդյունավետության բարձրացումն էր կառավարման բոլոր մակարդակներում, այդ թվում՝ հակակոռուպցիոն ռազմավարության մշակումը և դրա հետևողական իրականացումը, որոշումների կայացման գործընթացներում հանրային մասնակցության աստիճանի մեծացումը՝ բնակչության իրազեկման և տեղեկացվածության աստիճանի ավելացման, սոցիալական գործընկերության, սոցիալական ներառվածության և սոցիալական մասնակցության զարգացման միջոցով:

53. ԱՀՌԾ-ն հատուկ կարևորություն է տալիս պետության ֆինանսական կարողությունների աճին՝ պայմանով, որ չխաթարվեն կայուն բարձր տեմպերով տնտեսական աճի հնարավորությունները: Այդ աճը հիմնականում նախատեսվում էր ապահովել հարկային մուտքերի (ՀՆԱ-ի 0.3-0.4 տոկոսի չափով տարեկան աճ) հաշվին, հիմնականում հարկային վարչարարության կատարելագործման և հարկային համակարգի պարզեցման միջոցով՝ համախմբված բյուջեի պակասուրդը պահելով անվտանգ սահմաններում:

1.2. ԱՀՌԾ-ի իրականացման հիմնական արդյունքները 2003-2006 թթ.

54. ԱՀՌԾ-ի իրականացման հիմնական արդյունքները ներկայացված են Աղյուսակ 1.1 ում³: Ինչպես երևում է աղյուսակից, նյութական աղքատության և անհավասարության փաստացի ցուցանիշները էականորեն ավելի ցածր են, քան նախատեսված էր ԱՀՌԾ-ում (առանձնապես նշանակալի էր ծայրահեղ աղքատության և եկամտային անհավասարության կրճատումը, ընդ որում, ծայրահեղ աղքատության 2005թ. փաստացի մակարդակը համապատասխանում է ԱՀՌԾ-ի նպատակային ցուցանիշին՝ 2014թ. համար, իսկ 2005թ. եկամտային անհավասարության Ջինիի գործակիցը ավելի ցածր էր, քան 2015թ. համար նախատեսված նպատակային ցուցանիշը):

55. Աղքատության և անհավասարության նմանօրինակ կրճատումը մեծ մասամբ պայմանավորված էր վերջին մի քանի տարիների արագ տնտեսական աճով, որի փաստացի տեմպերը 2003-2006թթ. երկուսից ավելի անգամ գերազանցել են ԱՀՌԾ-ի կանխատեսումները⁴: Արագ տնտեսական աճը միջին ամսական աշխատավարձի աննախադեպ աճի հիմնական պատճառն էր (2006թ. փաստացի միջին աշխատավարձը 68 տոկոսով ավելի բարձր էր, քան ԱՀՌԾ-ում կանխատեսվածը), որն իր հերթին աղքատության կրճատման հիմնական գործոնը հանդիսացավ:

Աղյուսակ 1.1. ԱՀՌԾ-ի իրականացման հիմնական արդյունքները 2006թ. դրությամբ

Ցուցանիշներ	2006			ԱՀՌԾ (տարի)
	ԱՀՌԾ	Փաստացի	Շեղումը	
Տնտեսական դիրքը և կենսամակարդակ				
ՀՆԱ, մլրդ դրամ	1918.4	2656.2	38.5	2010
ՀՆԱ, 1 շնչի հաշվով, հազ. դրամ	595.0	824.6	38.6	2010
ՀՆԱ, մլն ԱՄՆ դոլար	3239.4	6384.5	97.1	2015
ՀՆԱ, 1 շնչի հաշվով, ԱՄՆ դոլար	1004.8	1982.1	97.3	2015
Միջին ամսական աշխատավարձ, հազ. դրամ	38.3	64.3	68.0	2013
Միջին ամսական կենսաթոշակ, հազ. դրամ	10.1	11.5	13.4	2007
Միջին ամսական նպաստ, հազ. դրամ	4.4	3.8	-12.8	2005
Տնտեսական աճ (2003-2006), %, միջին տարեկան	6.2	12.9	106.7	
Սպառողական գների ինդեքսի փոփոխություն (2003-2006 թթ.՝ միջին տարեկան), %	3.0	3.8	2.6	
Փոխարժեք (1000 դրամ/1 ԱՄՆ դոլար)	1.7	2.4	42.3	
Աղքատություն և անհավասարություն				
Աղքատների թվաքանակը, %՝ բնակչության թվաքանակի նկատմամբ *	41.0	34.5	-15.8	2007
Ծայրահեղ աղքատների թվաքանակը, % *	14.2	5.5	-61.3	2014
Եկամուտների համակենտրոնացման Ջինիի գործակից,%*	0.491	0.359	-26.9	2015**
Մարդկային զարգացում				
Մանկական մահացության մակարդակը, 1000 կենդանածնի հաշվով	14.4	13.9	-3.5	2007
Մայրական մահացության մակարդակը, 100000 կենդանածնի հաշվով (եռամյա միջին)	22.0	24.0	8.9	2005
Համախմբված բյուջեի գործառնություններ				

³ Աղյուսակի վերջին սյունակը ցույց է տալիս այն տարին, որը, ըստ ԱՀՌԾ-ի կանխատեսումների, համապատասխանում է տվյալ ցուցանիշի 2006թ. փաստացի արժեքին: Աղքատության և անհավասարության զնահատականները ներկայացված են 2005թ. դրությամբ՝ համաձայն համապատասխան ՏՏԿԱՀ արդյունքների: Փաստացի և ԱՀՌԾ-ում կանխատեսվող ցուցանիշների արժեքների շեղումը հաշվարկվում է որպես փաստացի և հաշվարկային ցուցանիշների հարաբերություն՝ արտահայտված տոկոսներով: Դրական շեղումը նշանակում է, որ փաստացի ցուցանիշները կանխատեսվածներից ավելի բարձր են, իսկ բացասականը՝ որ ավելի ցածր են:


⁴ Երկնիշ տնտեսական աճ է արձանագրվել նաև 2007թ., երբ 2006 թ. համեմատ ՀՆԱ-ն իրական արտահայտությամբ աճել է 13.8 տոկոսով:

Ցուցանիշներ	2006			ԱՀՌԾ (տարի)
	ԱՀՌԾ	Փաստացի	Ընդունք	
Ընդամենը եկամուտներ և շնորհներ, մլրդ դրամ	422.9	540.3	27.8	2008
Ընդամենը եկամուտներ և շնորհներ, %՝ ՀՆԱ նկատմամբ	22	20.3	-7.7	
Ընդամենը ծախսեր, մլրդ դրամ	461.5	574.7	24.5	2008
Ընդամենը ծախսեր, %՝ ՀՆԱ նկատմամբ	24.1	21.6	-10.4	
Պակասորդ (ավելցուկ), %՝ ՀՆԱ նկատմամբ	-2.1	-1.3	-38.1	
Սոցիալական ոլորտի ծախսեր				
Ընդամենը, մլրդ դրամ	207.5	242.8	17.0	2008
%՝ ՀՆԱ նկատմամբ	10.8	9.1	-15.4	
<i>որից՝</i>				
Կրթություն և գիտություն, մլրդ դրամ	63.0	78.4	24.4	2008
%՝ ՀՆԱ նկատմամբ	3.3	3.0	-10.6	
Առողջապահություն, մլրդ դրամ	35.5	39.5	11.2	2007
%՝ ՀՆԱ նկատմամբ	1.9	1.5	-19.7	
Սոցիալական պաշտպանություն, մլրդ դրամ	109.0	124.9	14.6	2007
%՝ ՀՆԱ նկատմամբ	5.7	4.7	-17.3	

* Ներկայացված են 2005թ. ՏՏԿԱՀ-ի հիման վրա հին մեթոդաբանությամբ հաշվարկված աղքատության ու անհավասարության ցուցանիշները՝ ԱՀՌԾ-ի հետ համեմատելիություն ապահովելու համար:

** Ցուցանիշը գերազանցում է 2015թ. մակարդակը:

Գծանկար 1.1. Համախմբված բյուջեի սոցիալական ոլորտի ծախսերը 2003-2006թթ. (%՝ 2002թ. նկատմամբ, ծախ առանցք) և դրանց տեսակարար կշիռը ՀՆԱ-ի և պետական ծախսերի նկատմամբ (%՝ աջ առանցք)



56. Միևնույն ժամանակ 2003թ. մինչ այժմ տեղի ունեցող դրամի արժևորման արդյունքում, որը հիմնականում պայմանավորված է Հայաստանի համար արտաքին գործոնների ազդեցությամբ և չէր կարող կանխատեսվել ԱՀՌ-Ծ-ի շրջանակում, 2006թ. դոլարային արտահայտությամբ անվանական ՀՆԱ-ն և մեկ շնչի հաշվով ՀՆԱ-ն համարյա երկու անգամ ավելի բարձր են ԱՀՌ-Ծ-ում կանխատեսվածներից և համապատասխանում են 2015թ. նպատակային ցուցանիշներին:

57. Ինչպես ցույց է տալիս գծանկարը, 2003-2006թթ. պետության տրամադրության տակ գտնվող ֆինանսական ռեսուրսները աճել են ՀՆԱ-ից դանդաղ, և, արդյունքում, դրանց՝ ՀՆԱ-ի նկատմամբ առաջանցիկ աճ տեղի չի ունեցել⁵: Դա հիմնականում բացատրվում է ինչպես 2003-2006թթ. տնտեսական աճի ճյուղային կառուցվածքով⁶, այնպես էլ՝ հարկային և մաքսային վարչարարության՝ կանխատեսվածից ցածր արդյունավետությամբ, որը թույլ չտվեց անհրաժեշտ չափով ընդլայնել հարկային հենքը և կրճատել հարկային ռեզերվները:

58. Այնուամենայնիվ, ինչպես ցույց է տալիս Գծանկար 1.1-ը, սոցիալական ոլորտի ծախսերը, ինչպես նախատեսված էր ԱՀՌ-Ծ-ով, 2003-2006թթ. աճում էին ավելի արագ տեմպերով, քան համախմբված բյուջեի ընդհանուր ծախսերը և ՀՆԱ-ն, որի արդյունքում դրանց տեսակարար կշիռը ՀՆԱ-ում աճել էր 1.1 տոկոսային կետով, իսկ համախմբված բյուջեում՝ 7.6 տոկոսային կետով: Դա ամբողջությամբ համապատասխանում է ԱՀՌ-Ծ-ի նպատակադրմանը, համաձայն որի պետական ռեսուրսների հավելանք մեծ մասամբ պետք է հատկացվի սոցիալական ոլորտի զարգացմանը՝ նյութական աղքատության և եկամտային անհավասարության կրճատման, ինչպես նաև մարդկային զարգացման ապահովման նպատակով:

Աղյուսակ 1.2. Համախմբված բյուջեի ծախսերի հավելանքի բաշխումը 2003-2006 թթ.

Ցուցանիշներ	2003	2004	2005	2006	Գումարային հավելանք
	<i>մլրդ դրամ, ընթացիկ գներով</i>				
Ընդհանուր ծախսեր	52.5	30.9	95.3	78.3	257.0
Սոցիալական ոլորտ որից՝	21.9	29.8	39.9	41.0	132.6
Կրթություն և գիտություն	6.0	13.6	14.0	12.5	46.0
Առողջապահություն	3.6	5.1	6.4	8.4	23.5
Սոցիալական պաշտպանություն և ապահովագրություն	12.3	11.2	19.5	20.1	63.1
	<i>%՝ ընդհանուր ծախսերի հավելանքի նկատմամբ</i>				
Սոցիալական ոլորտ՝ ընդամենը	41.7	96.6	41.9	52.3	51.6
Կրթություն և գիտություն	11.3	43.9	14.7	15.9	17.9
Առողջապահություն	6.9	16.5	6.7	10.7	9.1
Սոցիալական պաշտպանություն և ապահովագրություն	23.4	36.2	20.4	25.7	24.5

59. Այսպիսով, պետք է նշել, որ ԱՀՌ-Ծ-ի նպատակային ցուցանիշների մեծ մասը 2003-2006թթ. կարելի է համարել գերակատարված, և գերակատարման աստիճանը տատանվում է

⁵ 2003-2006թթ. համախմբված բյուջեի համախառն եկամուտները և շնորհները աճել են (անվանական արտահայտությամբ) միջին տարեկան 15.3 տոկոսով, համախմբված բյուջեի ծախսերը՝ 16 տոկոսով, իսկ ՀՆԱ-ն՝ 18.2 տոկոսով:

⁶ 2003-2006թթ. տնտեսական աճի 40 - 75 տոկոսը ապահովվում էր շինարարության (միջին տարեկան աճի տեմպը՝ 31.1%), ինչպես նաև տրանսպորտի, կապի և առևտրի ոլորտների կողմից (միջին տարեկան աճի տեմպը՝ 13.6%), որոնց գումարային տեսակարար կշիռը ՀՆԱ-ում 2003թ. կազմել էր 32.5%, իսկ 2005թ.՝ 37%: Նշված ոլորտները դեռ բնութագրվում են ստվերայնության ավելի բարձր և, հետևաբար, հարկահավաքման ավելի ցածր մակարդակով:

1 - 10 տարի միջակայքում: Միևնույն ժամանակ, մի շարք ցուցանիշների գծով ԱՀՌԾ-ի նպատակադրումները չեն իրականացել: Մասնավորապես՝ պետական եկամուտների առաջանցիկ աճի հետ մեկտեղ, չհաջողվեց հասնել ԱՀՌԾ-ում նախատեսված հարաբերակցությանը միջին կենսաթոշակի և միջին աշխատավարձի միջև, որը 2006թ. կազմել էր 17.9%՝ կանխատեսված 26.3%-ի փոխարեն, ինչպես նաև մեկ շնչի հաշվով ընտանեկան նպաստների նախատեսված մեծությանը:

1.3. ԱՀՌԾ-ի վերանայման անհրաժեշտությունն ու Կայուն զարգացման ծրագրի հիմնական գերակայությունները

60. ԱՀՌԾ-ի իրականացման հիմնական արդյունքների վերը ներկայացված վերլուծությունը ակնհայտորեն վկայում է ծրագրի հիմնական նպատակների և ռազմավարական գերակայությունների ճիշտ ընտրության մասին, որը հատկապես վերաբերում է աղքատության հաղթահարմանը միտված կայուն տնտեսական աճի խրախուսմանը՝ որպես աղքատության հաղթահարման հիմնական գործոն, և սոցիալական ոլորտի խնդիրների լուծման համար պետական ռեսուրսների վերաբաշխմանը՝ որպես ծայրահեղ աղքատության վերացման և մարդկային զարգացման խրախուսման արդյունավետ գործիք:

61. Միևնույն ժամանակ, կանխատեսվածից մոտ երկու անգամ ավելի բարձր տնտեսական աճի տեմպերը 2003-2006 թթ., ինչպես նաև պետության ծախսային հնարավորությունների էական աճը բերել են նրան, որ միջնաժամկետ և երկարաժամկետ հեռանկարում ԱՀՌԾ-ի նպատակադրումները և հիմնական ցուցանիշների արժեքները նկատելիորեն կգերազանցվեն, ինչը կտրուկ իջեցնում է ԱՀՌԾ-ի իրատեսության աստիճանը և, որպես երկրի երկարաժամկետ զարգացումը պայմանավորող հիմնական ռազմավարական ծրագիր՝ հետագա օգտագործման հնարավորությունը:

62. ԱՀՌԾ-ի վերանայման և Կայուն զարգացման ծրագրի (ԿԶԾ) մշակման անհրաժեշտության մասին են վկայում նաև մի շարք այլ գործոններ, որոնք նույնպես սահմանափակում են ԱՀՌԾ-ի հետագա օգտագործման հնարավորությունները: Այդ գործոնները կարելի է բաժանել երկու խմբի՝ գործոններ, որոնք պայմանավորում են ԱՀՌԾ-ի արդիականացման, և գործոններ, որոնք պայմանավորում են ԱՀՌԾ-ում քննարկվող հարցերի, նպատակների և քաղաքականության գերակայությունների ընդլայնման կամ փոփոխման անհրաժեշտությունը:

63. Մասնավորապես՝ առաջին խմբի գործոնները հիմնականում պայմանավորված են.

§ 2004թ. սկսած՝ նյութական աղքատության չափման վերանայված մեթոդաբանությամբ և ծայրահեղ աղքատության և աղքատության բարձրացված շեմերով, որոնք 2003-2005թթ. աղքատության և ծայրահեղ աղքատության՝ ծրագրվածից ավելի արագ կրճատման հետ մեկտեղ, պայմանավորում են նյութական աղքատության հաղթահարման և ծայրահեղ աղքատության վերացման նոր, ավելի բարձր նպատակադրումների մշակման անհրաժեշտությունը:

§ Ծրագրվածից մոտ երկու անգամ ավելի բարձր տնտեսական աճով, ինչը մի կողմից ընդլայնել է պետության ֆինանսական հնարավորությունները, իսկ մյուս կողմից՝ բացահայտվել են տնտեսական զարգացման նոր մարտահրավերները, որոնք լուծելու համար անհրաժեշտ է ճշտել կամ վերանայել պետության քաղաքականության և ծախսային գերակայությունները:

64. Երկրորդ խմբին պատկանող գործոնները հիմնականում պայմանավորված են հետևյալ նոր հանգամանքներով՝

§ Ինչպես վկայում է Հայաստանի վերջին տարիների տնտեսական բարեփոխումների և տնտեսական քաղաքականության, ինչպես նաև անցումային երկրների փորձի վերլուծությունը, կայուն տնտեսական աճը երկարաժամկետ հեռանկարում, ինչպես նաև երկրի արդիականացման աստիճանը և ինստիտուցիոնալ կարողությունների աճը մեծապես պայմանավորված կլինեն, այսպես կոչված՝ «երկրորդ սերնդի» բարեփոխումների հաջող իրականացմամբ⁷: Այդ բարեփոխումների արագ և արդյունավետ իրականացումը միջնաժամկետ և երկարաժամկետ հեռանկարում, տնտեսական զարգացման՝ բնկաչության բարեկեցության աճի ուղղվածության պահպանման և խորացման հետ մեկտեղ, կհանդիսանա Կառավարության տնտեսական քաղաքականության հիմնական գերակայություններից մեկը: Այդ գերակայությունները անհրաժեշտ չափով ԱՀՌԾ-ում չեն արժարժվել, և երկրի զարգացման ռազմավարական ծրագրում դրանց ընդգրկումը պահանջում է տնտեսական քաղաքականության ոլորտի և նախատեսվող միջոցառումների էական ընդլայնում:

§ Կառավարությունը գտնում է, որ Կայուն զարգացման ծրագիրը պետք է հանդիսանա Հայաստանի երկարաժամկետ զարգացման հիմնական փաստաթուղթը և այլ ռազմավարական (մասնավորապես, ոլորտային զարգացման) ծրագրերի հենքը, ինչն իր հերթին նշանակում է՝ այդ փաստաթղթում մի շարք նոր ոլորտների, գերակայությունների և նպատակադրումների ընդգրկում, որոնք բացակայում էին ԱՀՌԾ-ում, մասնավորապես, տնտեսական մրցակցության՝ ըստ ամենայնի խրախուսումը և առկա մենաշնորհների սահմանափակումը և վերացումը, համաշխարհային տնտեսությունում երկրի ներգրավվածության աստիճանի աճը, արտահանման խրախուսումը, երկրի ինստիտուցիոնալ կարողությունների աճի ապահովումը, տնտեսության, հասարակական և կառավարման ինստիտուտների արդիականացումը, նոր, գիտելիքների վրա հիմնված տնտեսության հիմքերի ստեղծումն ու զարգացումը և այլն:

§ ԱՀՌԾ-ի իրականացման ընթացքում երկնիշ տնտեսական աճի, աղքատության և անհավասարության էական կրճատման հետ մեկտեղ՝ սկսեցին արագ խորանալ նախկինում թույլ արտահայտված տարածքային զարգացման անհամաչափությունները, որոնք արդեն հասել են վտանգավոր սահմանների: Տարածքային զարգացման համաշխարհային ժամանակակից փորձի ուսումնասիրությունը վկայում է այն մասին, որ տնտեսական զարգացումը համապատասխան տարածքային քաղաքականության բացակայության դեպքում, որպես կանոն, խորացնում է տարածքային անհամաչափությունները: Այդ առումով՝ Կայուն զարգացման ծրագրի շրջանակներում ակտիվ տարածքային քաղաքականության մշակումը և իրականացումը, որը նպատակաուղղված կլինի տարածքային զարգացման անհամաչափությունների մեղմմանը և հետ մնացող

⁷ Եթե «առաջին սերնդի» բարեփոխումները (մասնավորեցում, գների, արտաքին առևտրի և փոխանակման կուրսի ազատականացում) Հայաստանում կարելի է համարել հաջողությամբ իրականացված, և դրանց իրականացման մակարդակով Հայաստանը ներկայումս համեմատելի է ԵՄ-10 (ԵՄ նորանդամ) երկրների հետ, ապա «երկրորդ սերնդի» բարեփոխումներով (ձեռնարկությունների վերակառուցում, մրցակցության խրախուսման քաղաքականություն, ֆինանսական ոլորտի բարեփոխումներ, ենթակառուցվածքային ոլորտների բարեփոխումներ) Հայաստանը, ՎՁԵԲ 2006թ. գնահատականներով ներկայումս ոչ միայն էականորեն զիջում է ԵՄ-

տարածքների տնտեսական զարգացման արագացմանը, կիսանդամա
Կառավարության հիմնական ռազմավարական գերակայություններից մեկը:

§ Հայաստանի ներկայիս ժողովրդագրական իրավիճակը բնութագրվում է որպես, այսպես կոչված՝ «գրոյական» վերարտադրության իրավիճակ, որում, ըստ էության, չի ապահովվում բնակչության պարզ և ընդլայնված վերարտադրությունը, և որը երկարաժամկետ հեռանկարում բերելու է մի շարք սոցիալ-տնտեսական խնդիրների: Մասնավորապես, ծնելիության գումարային ցածր գործակցի պահպանման դեպքում⁸, արդեն առաջիկա տասնամյակներին կնկատվի բնակչության էական ծերացում⁹, աշխատուժի ծավալի կրճատում և բնակչության կազմում պոտենցիալ խնամքի կարիք ունեցող բնակչության (0-15 ու 60 և ավելի տարեկան) մասնաբաժնի ավելացում մինչև 40 տոկոս: Այդ պայմաններում Կառավարության հիմնական գերակայություններից մեկը պետք է դառնան ժողովրդագրական իրավիճակի բարելավմանն ուղղված միջոցառումները, մասնավորապես ծնելիության աճի և երիտասարդ ընտանիքների աջակցությանը ուղղված քաղաքականության մշակումը և իրականացումը, ինչը նույնպես ԱՀՌԾ-ում քննարկված չէր:

1.4. Կայուն զարգացման ծրագրի նպատակները և ռազմավարական գերակայությունները

65. ԱՀՌԾ-ի հաջող իրականացման արդյունքում էականորեն կրճատվեց աղքատության մակարդակը՝ 2005 թ. կազմելով 29.8 տոկոս, 2006 թ.՝ 26.5 տոկոս, իսկ ծայրահեղ աղքատությունը համապատասխանաբար կազմեց ընդամենը 4.6 և 4.1 տոկոս¹⁰: Չնայած ծայրահեղ աղքատությունը կարելի է համարել հիմնականում հաղթահարված, աղքատությունը դեռ ներկայացնում է լուրջ սոցիալական հիմնահարց, որը ի վիճակի է վտանգել երկրի սոցիալական կայունությունը և երկարաժամկետ հեռանկարում տնտեսական զարգացման արգելք հանդիսանալ: Այդ պատճառով բնակչության բարեկեցության աճը և աղքատության հաղթահարումը, ներառյալ ծայրահեղ աղքատության վերացումը, կշարունակի մնալ Կայուն զարգացման ծրագրի հիմնական նպատակներից մեկը:

66. ԿԶԾ-ն նախատեսում է նյութական աղքատության մակարդակը 2021թ. հասցնել 6.8 տոկոսի, այդպիսով հիմնականում հաղթահարելով այն, իսկ ծայրահեղ աղքատության մակարդակը՝ 1.2 տոկոսի՝ փաստորեն լուծելով հիմնախնդիրը: Ներկայումս աղքատության վերաբերյալ հայտնի տեղեկատվությունը և իրականացված վերլուծությունները թույլ են տալիս նախատեսել աղքատության հաղթահարման նպատակային ցուցանիշները նաև տարածքային կտրվածքով՝ առանձնացնելով Երևանը, հանրապետության այլ քաղաքները և գյուղական բնակավայրերը¹¹: Նշված առանձնացման հիմնական նպատակը ակտիվ տարածքային զարգացման քաղաքականության մշակման և իրականացման միջոցով աղքատության մակարդակների տարածքային տարբերությունները էլ ավելի կրճատելն է:

⁸ Ներկայումս այն 1.4 է, իսկ 2025-30 թթ., ըստ կանխատեսումների, այն կհասնի 1.6-ի: Պարզ վերարտադրություն ապահովելու համար ծնելիության գումարային գործակիցը պետք է լինի 2.1 և ավելի:

⁹ Ըստ ՄԱԿ-ի կանխատեսումների՝ 2007 թ. հաշվետվության, 2025 թ. Հայաստանում 60 և ավելի տարիք ունեցող բնակչության մասնաբաժինը բնակչության ընդհանուր թվաքանակում կկազմի 22.6 տոկոս՝ 2007 թ. 14.4 տոկոսի համեմատում: -145):

¹⁰ Հաշվարկված է աղքատության գնահատման նոր մեթոդաբանությամբ, որը սկսել է կիրառվել ՏՏԿԱՀ-ներում՝ 2004թ-ից:

¹¹ Նախատեսվում է աղքատության (ներառյալ՝ ծայրահեղ աղքատության) մակարդակները 2021թ. հասցնել Երևանում՝ 3.2 (0.4) տոկոսի, հանրապետության այլ քաղաքներում՝ 8.1 (1.5) տոկոսի և գյուղական վայրերում՝ 9.1 (1.6) տոկոսի (2005թ. համապատասխան ցուցանիշները կազմել էին՝ Երևանում՝ 23.9 և 3.6 տոկոս, հանրապետության այլ քաղաքներում՝ 37.8 և 7.2 տոկոս և գյուղական վայրերում՝ 28.3 և 3.2 տոկոս):

67. Երկրի տնտեսական զարգացման և պետության տրամադրության տակ գտնվող ֆինանսական ռեսուրսների աճի հետ մեկտեղ, ԿԶԾ-ն նախատեսում է ամենամուշը 2018թ. բարձրացնել աղքատության շեմը՝ հավասարեցնելով այն նվազագույն սպառողական զամբյուղին (ՆԱԶ)¹²: Համաձայն ծրագրի նպատակադրումների՝ ՆԱԶ-ի հիման վրա հաշվարկված աղքատության մակարդակը 2021թ. կկազմի 11.4 տոկոս, որից՝ ծայրահեղ աղքատության մակարդակը՝ 1.9 տոկոս:

68. Մարդկային աղքատության հաղթահարումը և մարդկային զարգացման ապահովումը կկազմեն ԿԶԾ-ի առանցքային նպատակների հաջորդ խումբը: Նախատեսվում է 3-4 տարիների ընթացքում միջին մարդկային զարգացման մակարդակ ունեցող երկրների խմբից¹³ տեղափոխվել բարձր մարդկային զարգացման մակարդակ ունեցող երկրների խումբ՝ հետագայում անընդհատ ավելացնելով մարդկային զարգացման համաթվի (ՄԶՀ) մեծությունը, այն հաշվարկով, որ 2021թ., սոցիալական ոլորտի առաջանցիկ զարգացումը ապահովող քաղաքականության միջոցով, այն գտնվի 0.86-0.87 միջակայքում:

69. Կայուն զարգացման ծրագրի հաջորդ նպատակը կլինի տնտեսական զարգացման ներկայիս խոր անհամաչափությունների հետագա աճի զսպումը՝ ետ ընկնող տարածքների արագացված զարգացումն ապահովող նպատակային տարածքային քաղաքականության մշակման և իրականացման միջոցով¹⁴:

70. Կայուն զարգացման ծրագրի հիմնական ռազմավարական և ծախսային գերակայությունները չեն փոխվելու՝ չնայած ԱՀՌԾ-ի համեմատ նախատեսվում է դրանց կողմից ծածկվող ոլորտների էական ընդլայնում: ԿԶԾ-ի ռազմավարությունը նույնպես բաղկացած կլինի երեք հիմնական գերակա ուղղություններից՝ կայուն արագ տեմպերով տնտեսական աճի ապահովումը, ակտիվ և բնակչության խոցելի խմբերին (ներառյալ աղքատներին) ուղղված նպատակային սոցիալական և եկամտային քաղաքականության իրականացումը և երկրի կառավարման համակարգի արդիականացումը՝ ներառյալ պետական կառավարման արդյունավետության բարձրացումը և պետության տրամադրության տակ գտնվող ռեսուրսային փաթեթի առաջանցիկ աճի ապահովումը: Միաժամանակ նշված գերակայությունների իրացման գործընթացը կզուգակցվի շրջակա միջավայրի պահպանության և բնական ռեսուրսների կայուն կառավարման խնդիրների լուծմամբ:

¹² 2006թ. աղքատության շեմը կազմել էր 21555 դրամ (ամսական կտրվածքով՝ մեկ մեծահասակի համար), իսկ համապատասխան ՆԱԶ-ը՝ 31961 դրամ (երրորդ եռամսյակի միջին), կամ աղքատության շեմի 148 տոկոսը: Աղքատության մակարդակը 2006թ., օգտագործելով ՆԱԶ-ն որպես աղքատության շեմ, կազմել էր 39.8 տոկոս, իսկ ծայրահեղ աղքատության մակարդակը՝ 6.2 տոկոս (օգտագործելով նվազագույն պարենային զամբյուղը՝ որպես ծայրահեղ աղքատության գիծ): Կայուն զարգացման ծրագրի սույն փաստաթղթում «նվազագույն սպառողական զամբյուղ» (հաշվարկվում է ՀՀ ԱՎԾ-ի կողմից՝ ըստ ՀՀ առողջապահության նախարարության կողմից մշակված սննդամթերքի կազմի, կառուցվածքի և էներգետիկայի) և «կենսաապահովման նվազագույն բյուջեի չափ/արժեք» արտահայտությունները փոխադարձորեն համարժեք են, նկատի ունենալով, որ կենսաապահովման նվազագույն բյուջեի չափը օրենսդրորեն քանակապես դեռևս սահմանված չէ: Հետագայում, վերջինիս քանակային ցուցանիշների սահմանումից հետո, փաստաթղթի «նվազագույն սպառողական զամբյուղ» արտահայտությունը, անհրաժեշտության դեպքում, պետք է նույնացվի «կենսաապահովման նվազագույն բյուջեի չափ/արժեք» արտահայտության հետ:

¹³ Ըստ ՄԱԶԾ (UNDP) մարդկային զարգացման համաթվի (ՄԶՀ)՝ Հայաստանը ներկայումս պատկանում է միջին մարդկային զարգացում ունեցող երկրների խմբին (2004թ. ՄԶՀ արժեքը Հայաստանի համար կազմել է 0.768): Բարձր մարդկային զարգացման խմբին են պատկանում այն երկրները, որոնց ՄԶՀ գտնվում է 0.8 1

¹⁴ Հաշվարկների համաձայն, Երևանի տեսակարար կշիռը Հայաստանի ՀՆԱ-ում 1999թ. 42.1 տոկոսից 2006թ. աճել է մինչև 57.2 տոկոս, կամ տարեկան 4.3 տոկոսով: ԿԶԾ-ի կանխատեսումներով՝ Երևանի տեսակարար կշիռը ՀՆԱ-ում կարունակի աճել, բայց շատ ավելի դանդաղ տեմպերով (տարեկան մոտ 0.5 տոկոսային կեսով)՝ հասնելով ՀՆԱ 63.2 տոկոսի, որից հետո կկայունանա և երկարաժամկետ հեռանկարում կսկսի նվազել:

71. Կայուն զարգացման ծրագրի հիմնական տարբերություններից մեկը ԱՀՌԾ-ից՝ տևական տնտեսական աճի ապահովման քաղաքականության միջոցառումների կտրուկ ընդլայնումն է, որը անհրաժեշտ է պետական քաղաքականության մեջ նոր ի հայտ եկած մարտահրավերները և հանգամանքները հաշվի առնելու համար:

72. ԱՀՌԾ-ի տնտեսական քաղաքականության այն հիմնական գերակայությունները, որոնք կապված էին տնտեսական աճի՝ աղքատության հաղթահարմանն ուղղվածությունը պահպանելու և զարգացնելու հետ, ներառյալ աղքատ բնակչության ներգրավումը երկրի տնտեսական կյանքի մեջ գործարար և ներդրումային միջավայրերի անընդհատ բարելավման, հայրենական և օտարերկրյա ներդրումների խրախուսման և փոքր ու միջին գործարարության առաջանցիկ զարգացման ապահովման միջոցով, ինչպես նաև պետական ներդրումային ռեսուրսների ուղղումը կուտակված ենթակառուցվածքային հիմնահարցերի լուծմանը, կշարունակեն գերակայություններ հանդիսանալ նաև ԿԶԾ-ի համար:

73. Միևնույն ժամանակ, ԿԶԾ-ի տնտեսական քաղաքականության գերակայությունների շարքը կդասվեն.

§ նպատակային տարածքային քաղաքականությունը՝ տնտեսական զարգացման տարածքային անհամաչափությունները մեղմելու նպատակով.

§ «երկրորդ սերնդի» բարեփոխումների ինտենսիֆիկացման քաղաքականությունը՝ երկրի արդիականացումը ապահովելու և զարգացած երկրների ստանդարտներին հնարավորինս մոտենալու նպատակով.

§ ազատ տնտեսական մրցակցության ապահովման և մենաշնորհների սահմանափակման քաղաքականությունը, որի հիմնական նպատակը կհանդիսանա տնտեսական գործունեության հավասար պայմանների ստեղծումը և պահպանումը բոլորի համար.

§ երկրի մրցունակության աճին ուղղված քաղաքականությունը, որի հիմնական հատկանիշներն են՝ արտադրողականության աճի ապահովման խրախուսումը, միավոր աշխատանքի արժեքի մրցունակ մակարդակների ապահովումը, նոր, բարձր ավելացված արժեք ձևավորող աշխատատեղերի ստեղծման խրախուսումը.

§ արտահանման խրախուսումը և երկրի՝ համաշխարհային տնտեսական համակարգի մեջ ներգրավվածության աստիճանի ավելացումը, ներառյալ՝ ԵՄ հետ ինտեգրման գործընթացների ինտենսիֆիկացումը ԵՀՔ շրջանակներում, ներառյալ ԵՄ հետ ազատ առևտրի ռեժիմի հաստատումը և վիզային ռեժիմի միակողմանի վերացումը.

§ երկրի տնտեսական ինստիտուտների և օրենսդրության ինտենսիվ համապատասխանեցումը ԵՄ պահանջներին և ստանդարտներին.

§ նոր, գիտելիքների վրա հիմնված՝ տնտեսության հիմնական տարրերի և ինստիտուտների ստեղծումը և զարգացումը:

74. Նպատակային սոցիալական քաղաքականությունը, ինչպես ԱՀՌԾ-ում, կշարունակի հանդիսանալ ԿԶԾ-ի երկրորդ ռազմավարական գերակայությունը, որը նպատակաուղղված կլինի.

§ Սոցիալական օժանդակության ոլորտում՝ ընտանեկան նպաստների չափերի և հասցեականության աճի ապահովմանը և աղքատ բնակչության՝ հնարավոր

առավելագույն ներգրավմանը համակարգի մեջ այն հաշվարկով, որ 2012թ. նպաստառու ընտանիքների թիվը հավասարվի աղքատ ընտանիքների թվին, իսկ 2021 թթ.՝ ՆԱԶ-ով հաշվարկված աղքատ ընտանիքների թվին: Ընտանեկան նպաստների չափերը նախատեսվում է ավելացնել այն հաշվարկով, որ մեկ շնչի հաշվով դրանք 2020-2021թ. կազմեն աղքատության շեմի շուրջ 70 տոկոսը¹⁵: Ընտանեկան նպաստների հասցեականության աստիճանը նախատեսվում է 2010թ. հասցնել 78 տոկոսի և 90 տոկոսի՝ սկսած 2015թ.¹⁶, և պահպանել այդ մակարդակը հետագայում:

§ Ընտանեկան նպաստների քաղաքականությունը, ի տարբերություն ԱՀՌԾ-ով ծրագրվածի, որը ուղղված էր ծայրահեղ աղքատության հաղթահարմանը, ծայրահեղ աղքատության մակարդակի կտրուկ անկման և պետության ֆինանսական հնարավորությունների էական ավելացման պայմաններում հիմնականում ուղղված կլինի տնտեսական կյանքում ինքնուրույն ներգրավվելու միջոցով սահմանափակ հնարավորություններ ունեցող խոցելի սոցիալական խմբերին աղքատությունից դուրս բերելուն:

§ Սոցիալական ապահովագրության ոլորտում ԿԶԾ-ի հիմնական ծախսային գերակայությունը կհանդիսանա կենսաթոշակների չափերի կտրուկ ավելացումը, այն հաշվարկով, որ միջին կենսաթոշակը 2012թ. հավասարվի նվազագույն սպառողական զամբյուղին, իսկ 2018 թ. կազմի ՆԱԶ-ի 150 տոկոսը՝ պահպանելով այդ հարաբերակցությունը ապագայում, ինչը հնարավորություններ կընձեռի գործող կենսաթոշակային համակարգը կուտակային կենսաթոշակային համակարգով լրացնելու համար:

75. Զբաղվածության ոլորտում պետական քաղաքականությունը ուղղված կլինի՝ աշխատուժի մրցունակության շարունակական բարձրացմանը, աշխատուժի առաջարկի և պահանջարկի անհամամասնությունների մեղմմանը, երիտասարդների, այդ թվում՝ գյուղական երիտասարդության զբաղվածության ապահովմանն աջակցելուն, աշխատաշուկայում անմրցունակ խմբերի, մասնավորապես հաշմանդամների զբաղվածության ապահովմանն ուղղված ծրագրերի ծավալների մեծացմանը, սոցիալական գործընկերության կայացմանը: Միևնույն ժամանակ, գործազրկության թիրախավորման համար հիմք են հանդիսանալու գործազրկության իրական մակարդակը բնութագրող ցուցանիշները, և այս առումով, մասնավորապես կարևորվելու են համապատասխան վիճակագրության որակի բարելավմանն ու վստահելիության աստիճանի բարձրացմանն ուղղված միջոցառումները:

76. Եկամտային քաղաքականության ոլորտում կշարունակվի առաջնային եկամտունեքին գերակայություն տալու՝ ԱՀՌԾ-ի քաղաքականությունը, մասնավորապես՝ բյուջետային և սոցիալական ենթակառուցվածքների ոլորտի աշխատողների աշխատավարձերի աճի ապահովումը այն հաշվարկով, որ դրանք, արդեն 2015թ. սկսած, առնվազն 1.4 անգամ գերազանցեն մեկ շնչի հաշվով ՀՆԱ ցուցանիշը, ինչպես նաև կիրականացվի նվազագույն աշխատավարձի այնպիսի սահմանում, որը աստիճանաբար աճող հնարավորություններ կընձեռի նվազագույն աշխատավարձ ստացող անձանց և նրանց ընտանիքների անդամներին դուրս գալու աղքատությունից՝ այդպիսով վերացնելով «աշխատող աղքատներ» երևույթը:

¹⁵ 2006 թ. միջին ընտանեկան նպաստը կազմել էր աղքատության շեմի 25.2 տոկոսը:

¹⁶ Հաշվարկված է որպես առաջին երեք եկամտային դեցիլներին պատկանող բնակչության կողմից ստացված ընտանեկան նպաստների տեսակարար կշիռը՝ ընտանեկան նպաստների ընդհանուր ծավալի մեջ: 2001թ. այն կազմել է 27 տոկոս, իսկ 2005թ.՝ 40.1 տոկոս:

77. Մարդկային զարգացման ապահովման քաղաքականության հիմնական գերակայությունը կշարունակի մնալ հիմնարար սոցիալական ծառայությունների, մասնավորապես՝ կրթության և առողջապահության առաջանցիկ զարգացման ապահովումը դրանց արդյունավետության և մատչելիության բարձրացման միջոցով: Այդ գերակայություններին ԿԶԾ-ն նախատեսում է հասնել այդ ոլորտների համալիր բարեփոխումների շարունակման միջոցով, որտեղ գերակա ուղղությունները կշարունակեն մնալ հանրակրթության ոլորտը և առաջնային բուժապասարկումը: Կավելացվեն պետական ֆինանսավորման ծավալները, որը դիտվում է սոցիալական ենթակառուցվածքների զարգացումը ապահովող հիմնական միջոց: Մասնավորապես՝ 2006 թ. համեմատ, կրթության բնագավառում պետական ծախսերը (ՀՆԱ նկատմամբ) նախատեսվում է ավելացնել 1.8 տոկոսային կետով՝ 2021թ. հասցնելով դրանք ՀՆԱ 4.5%-ի: Առողջապահության բնագավառում 2021թ. պետական ծախսերը նախատեսվում է հասցնել ՀՆԱ 3.5%-ի՝ 2006թ. ՀՆԱ 1.5%-ի փոխարեն:

78. ԿԶԾ-ի երրորդ հիմնական ռազմավարական գերակայությունը պետական կառավարման ոլորտի արդյունավետության բարձրացումն է կառավարման բոլոր մակարդակներում, այդ թվում՝ հակակոռուպցիոն ռազմավարության էական արդիականացումը¹⁷ և հետևողական իրականացումը, որոշումների կայացման գործընթացներում հանրային մասնակցության աստիճանի մեծացման և գենդերային հավասարության ապահովումը՝ բնակչության իրազեկման և տեղեկացվածության աստիճանի ավելացման, սոցիալական գործընկերության, կանանց և տղամարդկանց հավասար իրավունքների և հնարավորությունների ընձեռնման, սոցիալական ներառվածության և սոցիալական մասնակցության զարգացման ինչպես նաև էլեկտրոնային կառավարման (e-

79. Հաջորդ գերակայությունը կշարունակի մնալ պետության ֆինանսական կարողությունների աճը, որը հիմնականում նախատեսվում է ապահովել հարկային մուտքերի¹⁸ գումարային աճ ՀՆԱ-ի 8.2 տոկոսի չափով¹⁹, դրանք 2021թ. հասցնելով ՀՆԱ 25.6 տոկոսի, որը կպահանջի ապահովել հարկային մուտքերի միջին տարեկան աճ՝ ՀՆԱ նկատմամբ 0.3-0.4 տոկոսից ոչ պակաս: Հաշվի առնելով, որ ԿԶԾ-ն չի նախատեսում հարկային բեռի ավելացում և հարկային ու մաքսային ոլորտի բարեփոխումները հիմնականում ուղղված կլինեն հարկահավաքման գործընթացների և ընթացակարգերի պարզեցմանը և թափանցիկության ապահովմանը, ինչպես նաև այն, որ 2003-2006թթ. ընթացքում չհաջողվեց ապահովել հարկային մուտքերի՝ ԱՀՌԾ-ով սահմանած աճի տեմպերը, հարկային ու մաքսային վարչարարության կատարելագործումը և հարկային ու մաքսային մարմինների ինստիտուցիոնալ կարողությունների աճի ապահովումը կհանդիսանա պետական կառավարման հիմնական գերակայությունը:

80. Կայուն զարգացման ծրագիրը նախատեսում է համախմբված բյուջեի պակասուրդը պահել անվտանգ սահմաններում՝ ՀՆԱ-ի 2-2.5 տոկոսի շրջակայքում: Պետական ռեսուրսային փաթեթը²⁰ 2021թ. կկազմի ՀՆԱ-ի 29.2 տոկոսը և 2006թ. համեմատ կաճի 6.6 տոկոսային կետով: Համաձայն ԿԶԾ-ի հիմնական նպատակների, այդ աճը կուղղվի պետական ծախսերի մեջ սոցիալական ոլորտի ծախսերի ծավալների և տեսակարար կշիռների ավելացմանը: Պետական ծախսային քաղաքականության հիմնական գերակայությունը կլինի ծախսերի բաշխողական և տեխնիկական առավելագույն արդյունավետության ապահովումը: Դա կապահովվի ծրագրային բյուջետավորմանը

¹⁷ ՀՀ կառավարությունը նախատեսում է մշակել նոր հակակոռուպցիոն ռազմավարություն (տե՛ս ՀՀ Կառավարության ծրագիր, Երևան, ապրիլ 2008 թ.):

¹⁸ Ներառյալ պարտադիր սոցիալական ապահովության վճարները:

¹⁹ 2006թ. համեմատ:

²⁰ Համախմբված բյուջեի ծախսերը:

անցնելու նախապատրաստական աշխատանքների ավարտով և անցումով դրան 2012-2015թ. ընթացքում: 2018-2021թթ. ընթացքում անցում կկատարվի եռամյա բյուջետավորման սկզբունքին:

81. ԿԶԾ-ի գերակայությունների, հատկապես՝ տնտեսական քաղաքականության գերակայությունների և պետական միջամտության ոլորտների էական ընդլայնումը ԱՀՌԾ-ի համեմատ, ենթադրում է այդ գերակայությունների և ոլորտների միջև սահմանափակ ռեսուրսների ժամանակի մեջ արդյունավետ բաշխման գործիքների առկայությունը: Այդ գործիքները հիմնված կլինեն տրված քաղաքականության կամ ոլորտի առանձնահատկությունների վրա (ակնկալվող արդյունքներին հասնելու համար պահանջվող ժամանակը, միջոցառումների քանակը և բնույթը՝ միանգամյա, պարբերական կամ մշտական, հատկացվող ռեսուրսները և այլն) և իրենցից կներկայացնեն համապատասխան քաղաքականությանը կամ ոլորտին վերաբերող կառավարության միջոցառումների տարեկան ծրագրեր, որոնք նաև կպարունակեն ԿԶԾ-ի համապատասխան ցուցանիշները, որպես դրանց ելքային արդյունքներ նշված տարվա համար: Այդ միջոցառումների ծրագրերը ենթակա են մշակման և հաստատման ամեն տարի և հիմնված կլինեն նախորդ տարվա միջոցառումների ծրագրի արդյունքների վերանայման վրա:

82. Ծրագրի հիմնական առանձնահատկություններից մեկը կհանդիսանա երեք տիպի ցուցանիշների օգտագործումը՝ նպատակային ցուցանիշներ, հաշվարկային ցուցանիշներ և

կանխատեսումային և ինդիկատիվ բնույթ ունեն, ցույց են տալիս հավանական զարգացման ուղղությունները, և արդյունքները չեն օգտագործվելու ծրագրի կատարման ընթացքը գնահատելու համար: Ի տարբերություն դրանց, նպատակային ցուցանիշները և հենանիշերը ուղղակիորեն կապված են Կառավարության քաղաքականության հետ և հանդիսանում են դրա արդյունքների արտահայտությունը:

83. Հենանիշերը լայնորեն օգտագործվելու են ԿԶԾ-ի քաղաքականությունների արդյունքների պլանավորման ու գնահատման համար և հիմնականում կկառուցվեն միջազգայնորեն ընդունված գնահատման համակարգերի կիրառման միջոցով, ներառյալ Համաշխարհային բանկի կողմից մշակված՝ գործարար միջավայրի որակի, ներդրումային մթնոլորտի և կառավարման որակի ցուցանիշների, Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկի կողմից հրապարակվող՝ շուկայական տնտեսությանը անցման կարգավիճակի գնահատականները, կոռուպցիայի տարածման ցուցանիշները²¹, ՄԱԶԾ-ի մարդկային զարգացման համաթիվը և այլն:

21

2. Աղքատության և անհավասարության պատկերը Հայաստանում և ԱՀՌԾ-ի նպատակադրումները

2.1. Տնտեսական աճը և նյութական աղքատության պատկերը Հայաստանում 1999-2006 թթ.

84. 1998թ. սկսած՝ տարեկան կտրվածքով պարբերականորեն իրականացվող տնային տնտեսությունների կենսամակարդակի ամբողջական հետազոտությունների (SSԿԱՀ)²² արդյունքները ակնհայտորեն վկայում են աղքատ, ներառյալ՝ շատ աղքատ բնակչության թվաքանակի, ինչպես նաև անհավասարության՝ տարեցտարի նվազման մասին (տե՛ս Աղյուսակ 2.1):

Աղյուսակ 2.1. Տնտեսության զարգացման և աղքատության հիմնական ցուցանիշները ԱՀՌԾ-ի նպատակային ցուցանիշների համեմատ

Ցուցանիշներ	1999		2003		2004			2005			2006		
	Փաստ	Փաստ	ԱՀՌԾ	Փաստ/ ԱՀՌԾ, %	Փաստ	ԱՀՌԾ	Փաստ/ ԱՀՌԾ, %	Փաստ	ԱՀՌԾ	Փաստ/ ԱՀՌԾ, %	Փաստ	ԱՀՌԾ	Փաստ/ ԱՀՌԾ, %
ՀՆԱ՝ 1 շնչի հաշվով, հազ. դրամ	305.8	505.9	489	103.4	593.6	533	111.3	697.1	545.8	127.7	824.6	631.5	130.8
ՀՆԱ՝ 1 շնչի հաշվով, ԱՄՆ դոլար	571.4	874.1	780	112.0	1113	904	123.0	1523	921.6	165.2	1,982.1	1,061.0	186.8
Աղքատ բնակչության թվաքանակը, %՝ բնակչության թվաքանակի նկատմամբ*	55.1	42.9	46.2	92.8	39	43.7	89.2	34.5	41.0	84.2			
Այդ թվում՝ շատ աղքատ բնակչության թվաքանակը, %՝ բնակչության թվաքանակի նկատմամբ*	22.9	7.4	15.2	48.6	7.2	14.7	49.0	5.5	14.2	39.0			
Աղքատ բնակչության թվաքանակը, %՝ բնակչության թվաքանակի նկատմամբ**	56.1				34.6			29.8			26.5		
Այդ թվում՝ շատ աղքատ բնակչության թվաքանակը, %՝ բնակչության թվաքանակի նկատմամբ**	21				6.4			4.6			4.1		

²² 2001թ. սկսած՝ ամենամյա:

Ցուցանիշներ	1999	2003		2004			2005			2006			
	Փաստ	Փաստ	ԱՀՌԾ	Փաստ/ ԱՀՌԾ, %	Փաստ	ԱՀՌԾ	Փաստ/ ԱՀՌԾ, %	Փաստ	ԱՀՌԾ	Փաստ/ ԱՀՌԾ, %	Փաստ	ԱՀՌԾ	Փաստ/ ԱՀՌԾ, %
Եկամուտների համակենտրոնացման Ձիճի գործակիցը	0.57	0.434	0.51	85.10	0.395	0.498	79.3	0.359	0.497	72.2	0.369	0.483	76.4
20% ամենաաղքատ բնակչության եկամուտների հարաբերակցությունը 20% ամենահարուստ բնակչության եկամուտների նկատմամբ	3.6	7.5	6.9	108.7	10.6	7.4	127.0	9.5	7.3	139.9	7.6	8.4	90.4
Հուշագրային հոդված													
Բնակչության թվաքանակը տարեկերջին, մլն մարդ	3.227	3.212			3.216			3.219			3.223		


* Հաշվարկված է 1996-2003թթ. օգտագործվող մեթոդաբանությամբ՝ ըստ 1 շնչի հաշվով մեկ ամսում ընթացիկ սպառմանն ուղղված ծախսերի՝ ընդհանուր աղքատության գծի (աղքատների տեսակարար կշիռը բնակչության ընդհանուր թվաքանակի մեջ) և 2100 կիլոկալորիային համարժեք պարենի օրական սպառմամբ պայմանավորված պարենային աղքատության գծի (չստ աղքատների տեսակարար կշիռը բնակչության ընդհանուր թվաքանակի մեջ) հիման վրա: ԱՀՌԾ ում աղքատության կրճատման նպատակային ցուցանիշները հաշվարկելու համար օգտագործվել է այդ մեթոդաբանությունը:

** Հաշվարկված է 2004թ-ից կիրառվող նոր մեթոդաբանությամբ, ըստ որի՝ սպառման ագրեգատի մեջ պարենի, ոչ պարենային ապրանքների և ծառայությունների ընթացիկ սպառման հետ մեկտեղ, ներառված է նաև տնային տնտեսությունների կողմից օգտագործվող երկարատև օգտագործման ապրանքների հաշվարկային արժեքը: Կիրառվել է նաև մեկ չափահաս անձի սպառման համարժեքը՝ հաշվի առնելով չափահասների և երեխաների սպառման միջև առկա տարբերությունները: Բացի այդ, 2004թ. վերահաշվարկվել է պարենային աղքատության գիծը, որը ընդունվել է 2004թ. Հայաստանում գրանցված սննդի միջին 2 232 կկալ օրական կալորիականությանը հավասար, և որը կկիրառվի հետագա մի քանի տարիներին:

85. Ինչպես և նախատեսված էր ԱՀՌԾ-ով, աղքատության կրճատման հիմնական գործոն է շարունակել հանդիսանալ աղքատության հաղթահարմանը միտված տնտեսական աճը: Քանի որ 2003-2005թթ. տնտեսական աճի տեմպերը զգալիորեն ավելի բարձր էին, քան նախատեսված էր ԱՀՌԾ-ով (ՀՆԱ միջին տարեկան աճի տեմպերը այդ ժամանակահատվածում կազմել են 12.8%՝ նախատեսված 6.3%-ի փոխարեն), աղքատության կրճատման տեմպերը ԱՀՌԾ-ի նպատակային ցուցանիշներից ավելի բարձր էին: Գծանկար 2.1-ը ակնհայտորեն ցույց է տալիս տնտեսական աճի և աղքատության կրճատման²³ կապը:

²³ Որը աղյուսակում ցույց է տրված որպես ոչ աղքատ բնակչության տեսակարար կշիռը կուտակային ավելացում 1999թ. նկատմամբ: Տնտեսական աճը բնութագրվում է 1999-2005թթ. ՀՆԱ գումարային հավելանով:

Գծանկար 2.1. Տնտեսական աճը և աղքատության կրճատումը Հայաստանում 1999-2005թթ., տոկոսային գումարային հավելված



86. 1999-2005թթ. տնտեսական աճի և աղքատության կրճատման կապի քանակական վերլուծությունը ցույց է տալիս, որ այդ տարիներին յուրաքանչյուր մեկ տոկոս տնտեսական աճի արդյունքում տեղի է ունեցել ոչ աղքատ բնակչության տեսակարար կշռի աճ 0.547 տոկոսային կետով, ինչի արդյունքում աղքատության մակարդակը 55.1 տոկոսից կրճատվել է մինչև 34.5 տոկոս:


87. Աղքատության ամենամեծ կրճատումը տեղի է ունեցել Երևանում՝ 1999թ. 54.7 տոկոսից 2005 թ. նվազելով մինչև 27.3 տոկոս²⁴ (նոր մեթոդաբանությամբ՝ աղքատությունը Երևանում 2005թ. կազմել է 23.9 տոկոս, իսկ 2006թ-ին՝ 21.0 տոկոս՝ 1999թ. 58.4 տոկոսի փոխարեն):

88. Աղքատության նման կրճատումը պայմանավորված էր Երևանում տնտեսական աճի էականորեն ավելի արագ տեմպերով²⁵, քան Հայաստանի մարզերում: Միևնույն ժամանակ, տնտեսական աճի՝ աղքատության հաղթահարմանն ուղղվածության աստիճանը Երևանում հատկապես 2003-2005թթ. նկատելիորեն ավելի ցածր էր, քան միջինը Հայաստանում: Դա բխում է Երևանում 1999-2005թթ. տնտեսական աճի և աղքատության կրճատման կապի քանակական վերլուծությունից, համաձայն որի՝ այդ տարիներին յուրաքանչյուր մեկ տոկոս տնտեսական աճի արդյունքում տեղի է ունեցել ոչ աղքատ բնակչության տեսակարար կշռի աճ 0.431 տոկոսային կետով (0.547 տոկոսային կետ՝ Հայաստանում), որը պայմանավորված է տնտեսական աճի ոչ գծային բնույթով և Երևանում անհավասարության ավելի մեծ աստիճանով, քան գյուղական վայրերում և այլ քաղաքներում:

²⁴ Հին մեթոդաբանությամբ:


²⁵ Աղքատության տարածքային պատկերի վերլուծության և կանխատեսման, ինչպես նաև տնտեսական զարգացման տարածքային անհամաչափությունների վերլուծության և կանխատեսման նպատակներով «ԱՎԱԳ Սոլյուշն» ընկերության կողմից մշակվել և կիրառվել է տարածքային ՀՆԱ հաշվարկման մեթոդաբանությունը: Այդ հաշվարկները և կանխատեսումները ավելի մանրամասն լուսաբանվում են ԿԶԾ-ի տարածքային զարգացմանը վերաբերող բաժնում:

Գծանկար 2.2. Տնտեսական աճը և աղքատության կրճատումը Երևանում 1999-2005թթ., տոկոսային գումարային հավելված




89. Աղքատությունը կրճատվել է նաև Հայաստանի այլ քաղաքներում: Պետք է նշել, որ չնայած տնտեսական աճի տեմպերը այլ քաղաքներում էականորեն զիջում էին աճի տեմպերին Երևանում (1999-2005թթ. տնտեսական աճի միջին տարեկան տեմպը Երևանում կազմել է 16.4 տոկոս, այլ քաղաքներում՝ 7.7 տոկոս, գյուղական վայրերում՝ 5.2 տոկոս, Հայաստանի միջինը՝ 11.1 տոկոս), աճի՝ աղքատության հաղթահարման միտվածության աստիճանը այլ քաղաքներում երկու անգամ ավելի բարձր էր, քան Երևանում՝ կազմելով 0.906 տոկոսային կետ աղքատության կրճատում՝ 1 տոկոս տնտեսական աճի դեպքում, որը բացատրվում է այլ քաղաքներում աղքատության մեկնարկային ավելի բարձր և անհավասարության էականորեն ավելի ցածր մակարդակներով, քան Երևանում:

Գծանկար 2.3. Տնտեսական աճը և աղքատության կրճատումը այլ քաղաքներում 1999-2005թթ., տոկոսային գումարային հավելված



Գծանկար 2.4. Տնտեսական աճը և աղքատության կրճատումը գյուղական վայրերում 1999-2005թթ., տոկոսային գումարային հավելած




90. Աղքատության կրճատումը գյուղական վայրերում բացարձակ թվերով ամենափոքրն էր՝ Երևանի և այլ քաղաքների համեմատ, սակայն աճի՝ աղքատության հաղթահարման միտվածության աստիճանը 1999-2005թթ. գյուղում ավելի բարձր էր, քան Երևանում, բայց ավելի ցածր, քան այլ քաղաքներում՝ կազմելով 0.709 տոկոսային կետ՝ մեկ տոկոս տնտեսական աճի դեպքում, որը նույնպես բացատրվում է աղքատության մեկնարկային ավելի ցածր մակարդակներով և եկամուտների բաշխման անհավասարության աստիճանով:

91. Հայաստանի տնտեսական աճի ազդեցությունը աղքատության կրճատման վրա հիմնականում արտահայտվել է աղքատ բնակչության աշխատանքից (վարձու աշխատանքից, ինքնագրավածությունից և գյուղմթերքների վաճառքից) ստացված եկամուտների աճի միջոցով: Հաշվի առնելով, որ Հայաստանը ներկայումս արտաքին աշխարհի աշխատուժ արտահանող երկիր է, ինչպես նաև պայմանավորված նշանակալի սփյուռքի առկայությամբ, արտաքին աշխարհի ազդեցությունը աղքատության կրճատման վրա արտահայտվում է արտերկրից դրամական փոխանցումների դինամիկայով և դրանց բաշխվածությամբ բնակչության տարբեր եկամտային խմբերի միջև: Եվ, վերջապես, պետության սոցիալական քաղաքականության ազդեցությունը պայմանավորված է սոցիալական տրանսֆերտների՝ կենսաթոշակների և նպաստների (ներառյալ ընտանեկան նպաստները) աճով և դրանց բաշխվածությամբ բնակչության տարբեր եկամտային խմբերի միջև:

92. Ինչպես ցույց է տալիս Գծանկար 2.5-ը, դիտարկվող ժամանակահատվածում աղքատ և շատ աղքատ բնակչության աշխատանքային եկամուտները աճել են ավելի արագ, քան դրանց ընդհանուր դրամական եկամուտները, իսկ վերջիններս աճել են ավելի արագ, քան ընդհանուր բնակչության դրամական եկամուտները²⁶ անվանական արտահայտությամբ (352.6% և 630.8%՝ համեմատած 231.4% և 352.6% ընդհանուր եկամուտների ու 231.4% բնակչության միջին դրամական եկամուտների հետ):

²⁶ Հաշվի առնելով աստիճանաբար աճող շեղումը ՏՏԿԱՀ և եկամուտների վիճակագրության միջոցով հաշվարկված բնակչության ընդհանուր և աշխատանքային եկամուտների միջև (եթե 1999թ. եկամուտների վիճակագրությամբ հաշվարկված մեկ շնչի ընդհանուր եկամուտները կազմել են ՏՏԿԱՀ եկամուտների 148%-ը, իսկ աշխատանքային եկամուտները՝ 184.8 %-ը, ապա 2005թ. այդ շեղումը կազմել է համապատասխանաբար 234.8 և 182.1%), որպես միջին դրամական և աշխատանքային եկամուտ օգտագործվել են եկամուտների վիճակագրության թվերը:

Պժանկար 2.5. Բնակչության եկամուտների դինամիկան Հայաստանում 1999-2005թթ. (տոկոսներով՝ 1999թ. նկատմամբ, ընթացիկ գներով)



93. Այսպիսով՝ աղքատ²⁷ և շատ աղքատ²⁸ բնակչության մեկ շնչի հաշվով ընդհանուր և ներքին տնտեսական աճով պայմանավորված (աշխատանքային և գյուղմթերքների վաճառքից գոյացող) եկամուտները 1999-2005թթ. աճել են ավելի արագ, քան միջին դրամական եկամուտները, որը վկայում է այն մասին, որ տնտեսական աճի՝ աղքատության հաղթահարմանն ուղղվածությունը, որը առկա էր 1999-2001թթ., պահպանվել է նաև 2003-2005թթ., այսինքն՝ ԱՀՌԾ-ի գործողության ժամանակ:

94. 1999-2005թթ. աղքատ և շատ աղքատ բնակչության եկամուտների նկատելիորեն ավելի արագ աճը ոչ աղքատ բնակչության եկամուտների²⁹ համեմատ, վկայում է նաև եկամտային անհավասարության և ոչ աղքատների, աղքատների ու շատ աղքատների միջև եկամտային խզման կրճատման մասին³⁰: Մյուս կողմից, և՛ աղքատների ու շատ աղքատների, և՛ ոչ աղքատ բնակչության աշխատանքային եկամուտները աճել են ավելի արագ, քան ընդհանուր եկամուտները, որը և պայմանավորել է ընդհանուր բնակչության կախվածության նվազումը ինչպես սոցիալական և ոչ պաշտոնական տրանսֆերտներից, այնպես էլ այլ եկամուտներից:

²⁷ Աղքատ բնակչությունը ՏՏԿԱՀ առաջին 4 եկամտային դեցիլներին պատկանող բնակչությունն է (որը մոտավորապես համապատասխանում է հին մեթոդաբանությամբ հաշվարկված՝ 2005թ. աղքատության մակարդակին՝ բնակչության շուրջ 35 տոկոսը):

²⁸ Շատ աղքատ բնակչությունը ՏՏԿԱՀ առաջին եկամտային դեցիլին պատկանող բնակչությունն է (որը մոտավորապես համապատասխանում է հին մեթոդաբանությամբ հաշվարկված՝ 2005թ. աղքատության մակարդակին՝ բնակչության շուրջ 5.5 տոկոսը):

²⁹ Ոչ աղքատ է համարվում 5-10-րդ եկամտային դեցիլներին պատկանող բնակչությունը, որը մոտավորապես համապատասխանում է հին մեթոդաբանությամբ հաշվարկված՝ 2005թ. ոչ աղքատ բնակչության քանակին՝ կազմելով բնակչության շուրջ 65 տոկոսը:

³⁰ Այնուամենայնիվ, անհավասարության իրական կրճատումը տեղի է ունեցել ավելի փոքր չափերով, քան դա ցույց են տալիս ՏՏԿԱՀ-ների արդյունքները՝ ելնելով ՏՏԿԱՀ-ների և պաշտոնական վիճակագրության արձանագրած միջին դրամական եկամուտների միջև տարբերությունների շարունակական աճից՝ 1999թ. ՏՏԿԱՀ եկամուտները կազմել են պաշտոնականի 67.4%-ը, 2005թ.՝ 43.6%-ը, որը պայմանավորված է ՏՏԿԱՀ-ներում ապահովված բնակչության աստիճանական նվազող մասնակցությամբ:

Աղյուսակ 2.2. Աղքատ և շատ աղքատ բնակչության միջին ամսական եկամուտների դինամիկան Հայաստանում 1999-2005թթ. (ընթացիկ գներով, դրամ և տոկոսներով՝ ընդհանուրի նկատմամբ)

Ցուցանիշներ	2005				1999			
	Հայաստան	Երևան	Այլ քաղաքներ	Գյուղ	Հայաստան	Երևան	Այլ քաղաքներ	Գյուղ
Աղքատներ	<i>ընթացիկ գներով, դրամ</i>							
Ընդհանուր դրամական եկամուտ, այդ թվում՝	6542.5	9855.7	5894.7	4901.3	2270.4	3368.4	1908.1	1809.7
Աշխատանքային եկամուտներ	2881.3	6236.6	2620.5	1139.7	622.7	1281.2	406.7	345.5
Գյուղմթերքի վաճառքից եկամուտներ	466.0	1.1	102.5	1488.4	295.0	3.9	328.7	460.0
Սոցիալական տրանսֆերտներ	2096.0	2276.0	2074.2	1850.3	816.0	954.8	869.9	689.4
Մասնավոր տրանսֆերտներ	440.4	796.4	361.0	292.2	77.0	195.4	28.7	33.7
Այլ եկամուտներ	658.9	545.6	736.4	130.7	459.7	933.1	274.2	281.1
Շատ աղքատներ	<i>ընթացիկ գներով, դրամ</i>							
Ընդհանուր դրամական եկամուտ, այդ թվում՝	3241.8	5361.6	2526.4	2724.9	783.8	1286.1	542.9	624.5
Աշխատանքային եկամուտներ	683.7	1915.2	521.8	283.0	110.9	254.3	35.1	70.2
Գյուղմթերքի վաճառքից եկամուտներ	256.4	1.4	23.4	684.4	48.8	0.0	55.4	75.8
Սոցիալական տրանսֆերտներ	1519.0	2138.2	1268.7	1106.4	554.2	864.2	432.1	437.7
Մասնավոր տրանսֆերտներ	220.3	695.3	176.7	44.1	7.1	40.7	0.1	3.8
Այլ եկամուտներ	562.5	611.6	535.9	606.9	62.9	127.0	20.2	37.0
Աղքատներ	<i>տոկոս՝ ընդհանուր եկամուտների նկատմամբ</i>							
Աշխատանքային եկամուտներ	44.0	63.3	44.5	23.3	27.4	38.0	21.3	19.1
Գյուղմթերքի վաճառքից եկամուտներ	7.1	0.0	1.7	30.4	13.0	0.1	17.2	25.4
Սոցիալական տրանսֆերտներ	32.0	23.1	35.2	37.8	35.9	28.3	45.6	38.1
Մասնավոր տրանսֆերտներ	6.7	8.1	6.1	6.0	3.4	5.8	1.5	1.9
Այլ եկամուտներ	10.1	5.5	12.5	2.7	20.2	27.7	14.4	15.5
Շատ աղքատ	<i>տոկոս՝ ընդհանուր եկամուտների նկատմամբ</i>							
Աշխատանքային եկամուտներ	21.1	35.7	20.7	10.4	14.1	19.8	6.5	11.2
Գյուղմթերքի վաճառքից եկամուտներ	7.9	0.0	0.9	25.1	6.2	0.0	10.2	12.1
Սոցիալական տրանսֆերտներ	46.9	39.9	50.2	40.6	70.7	67.2	79.6	70.1
Մասնավոր տրանսֆերտներ	6.8	13.0	7.0	1.6	0.9	3.2	0.0	0.6
Այլ եկամուտներ	17.4	11.4	21.2	22.3	8.0	9.9	3.7	5.9

95. Այսպիսով՝ 1999-2005թթ. ընթացքում էականորեն ավելացել է տնտեսական աճի ուղղակի ազդեցությունը աղքատության կրճատման վրա՝ աղքատ և շատ աղքատ բնակչության տնտեսական գործունեության մեջ ներգրավվածության և աշխատանքային եկամուտների առաջանցիկ աճի շնորհիվ:

96. Աղյուսակ 2.3-ում ներկայացված են բնակչության եկամուտների միջին առաձգականությունները 1999-2005թթ. համար (ընդհանուր եկամուտների և տնտեսական աճով պայմանավորված՝ եկամուտների հավելաճի հարաբերությունը 1 շնչի հաշվով ՀՆԱ-ի հավելաճին, սոցիալական տրանսֆերտների հավելաճի հարաբերությունը համախմբված բյուջեի սոցիալական ապահովագրության և սոցիալական պաշտպանության ծախսերի հավելաճին և ոչ պաշտոնական տրանսֆերտների հավելաճի հարաբերությունը համաշխարհային տնտեսության հավելաճին³¹), որոնք ուղղակիորեն վկայում են աղքատ և հատկապես շատ

³¹ Չափվում է որպես միջին համաշխարհային 1 շնչին բաժին ընկնող ՀՆԱ-ի աճը 1999-2004թթ.:

աղքատ բնակչության բոլոր նշված եկամուտների առաջանցիկ աճի և տնտեսական աճի պտուղների՝ ի օգուտ աղքատների և շատ աղքատների վերաբաշխման, այսինքն՝ տնտեսական աճի և սոցիալական քաղաքականության՝ աղքատության հաղթահարմանն ուղղվածության մասին:

Աղյուսակ 2.3. Աղքատ, շատ աղքատ և ոչ աղքատ բնակչության եկամուտների գումարային առաձգականությունը 1999-2005թթ. (ընթացիկ գներով)

Ցուցանիշներ	1999-2005 թթ.			
	Հայաստան	Երևան	Այլ քաղաքներ	Գյուղ
Աղքատներ				
Ընդհանուր դրամական եկամուտներ	1.48	0.96	3.04	2.81
Տնտեսական աճով պայմանավորված	2.09	1.92	3.93	3.72
Սոցիալական քաղաքականությամբ պայմանավորված	2.09	1.85	1.85	2.25
Արտաքին տնտեսական աճով պայմանավորված	18.09	11.79	44.48	29.39
Շատ աղքատներ				
Ընդհանուր դրամական եկամուտներ	2.47	1.58	5.31	5.53
Տնտեսական աճով պայմանավորված	3.86	3.25	7.31	9.26
Սոցիալական քաղաքականությամբ պայմանավորված	2.32	1.97	2.58	2.04
Արտաքին տնտեսական աճով պայմանավորված	115.82	61.73	6773.4	41.07
Ոչ աղքատ բնակչություն				
Ընդհանուր դրամական եկամուտներ	0.27	0.30	0.51	0.06
Տնտեսական աճով պայմանավորված	0.62	1.15	1.51	-0.09
Սոցիալական քաղաքականությամբ պայմանավորված	2.75	1.61	1.98	4.53
Արտաքին տնտեսական աճով պայմանավորված	-0.35	-0.50	-1.4	1.47
Բնակչության դրամական եկամուտները	1.02	0.77	1.37	1.44
Հուշագրային հոդվածներ				
1 շնչի հաշվով ՀՆԱ աճ ընթացիկ գներով, %	226.8	301.1	168.7	160.8
Սոցիալական ծախսերի աճ, %	175.0			
Համաշխարհային տնտեսության աճ, %	126.1			
Բնակչության դրամական եկամուտների աճ, %	234.1			

97. Տնտեսական աճը և սոցիալական քաղաքականությունը աղքատության հաղթահարման ուղղվածություն ունեին և՛ Երևանում, և՛ այլ քաղաքներում, և՛ գյուղերում: Աղյուսակը նաև վկայում է, որ տնտեսական աճի՝ աղքատության հաղթահարմանն ուղղվածության աստիճանը ամենացածրն էր Երևանում և ամենաբարձրը՝ այլ քաղաքներում: Աղքատության ավելի արագ կրճատումը Երևանում, սոցիալական քաղաքականության մոտավորապես նույն աղքատության հաղթահարմանն ուղղվածության աստիճանի պայմաններում, պայմանավորված էր տնտեսական աճի համարյա երկու անգամ ավելի արագ տեմպերով: Ավելին, բնակչության դրամական միջին եկամուտների աճը Հայաստանում³² նկատելիորեն ավելի ցածր էր, քան աղքատ և հատկապես շատ աղքատ բնակչության եկամուտների աճը, որը վկայում է ոչ միայն աղքատության, այլ նաև անհավասարության իրական կրճատման մասին:

Աղյուսակ 2.4. Ոչ աղքատ բնակչության միջին ամսական եկամուտների դինամիկան Հայաստանում 1999-2005թթ. (ընթացիկ գներով, դրամ և տոկոսներով՝ ընդհանուրի նկատմամբ)

Ցուցանիշներ	2005	1999
-------------	------	------

³² Հաշվարկվում է պաշտոնական վիճակագրության տվյալների հիման վրա՝ ի տարբերություն աղքատ և շատ աղքատ բնակչության եկամուտների, որոնք հաշվարկված են ՏՏԿԱՀ-ների արդյունքներով:

	Հայաստան	Երևան	Այլ քաղաքներ	Գյուղ	Հայաստան	Երևան	Այլ քաղաքներ	Գյուղ
Ոչ աղքատ բնակչություն	<i>ընթացիկ գներով, դրամ</i>							
Ընդհանուր դրամական եկամուտներ	22707.7	27684.7	19810.6	18865.7	16957.1	17361.2	14685	18253.3
Աշխատանքային եկամուտներ	14769.8	21798.2	13008.6	7768.7	4880.0	6485.5	5687.8	3289.8
Գյուղմթերքի վաճառքից	2189.2	12.7	398.2	6218.7	4636.5	87.8	899.2	11529.5
Սոցիալական տրանսֆերտներ	2428.8	1752.0	2613.3	2697.4	792.6	793.9	1052.1	613.9
Մասնավոր տրանսֆերտներ	2533.5	3496.6	2667.4	1398.9	2784.3	4025.7	4201.1	1011.9
Այլ եկամուտներ	786.3	625.2	1123.3	782.0	3863.7	5968.3	2844.9	1808.3
	<i>տոկոս՝ ընդհանուրի նկատմամբ</i>							
Աշխատանքային եկամուտներ	65.0	78.7	65.7	41.2	28.8	37.4	38.7	18.0
Գյուղմթերքի վաճառքից եկամուտներ	9.6	0.0	2.0	33.0	27.3	0.5	6.1	63.2
Սոցիալական տրանսֆերտներ	10.7	6.3	13.2	14.3	4.7	4.6	7.2	3.4
Մասնավոր տրանսֆերտներ	11.2	12.6	13.5	7.4	16.4	23.2	28.6	5.5
Այլ եկամուտներ	3.5	2.3	5.7	4.1	22.8	34.4	19.4	9.9
Ոչ աղքատ և աղքատ բնակչության եկամուտների հարաբերություն	<i>տոկոս</i>							
Ընդհանուր դրամական եկամուտներ	347.1	280.9	336.1	384.9	746.9	515.4	769.6	1008.7
Աշխատանքային եկամուտներ	512.6	349.5	496.4	681.7	783.7	506.2	1398.5	952.2
Գյուղմթերքի վաճառքից եկամուտներ	469.7	1119.8	388.3	417.8	1571.6	2252.2	273.6	2506.7
Սոցիալական տրանսֆերտներ	115.9	77.0	126.0	145.8	97.1	83.1	120.9	89.1
Մասնավոր տրանսֆերտներ	575.3	439.0	738.8	478.7	3614.7	2060.1	14659	2999.7
Այլ եկամուտներ	119.3	114.6	152.5	598.2	840.5	639.6	1037.5	643.3
Ոչ աղքատ և շատ աղքատ բնակչության եկամուտների հարաբերություն	<i>տոկոս</i>							
Ընդհանուր դրամական եկամուտներ	700.5	516.3	784.1	692.3	2163.5	1349.9	2704.8	2923.0
Աշխատանքային եկամուտներ	2160.4	1138.2	2493.2	2744.8	4401.9	2550.5	16214	4686.9
Գյուղմթերքի վաճառքից եկամուտներ	853.9	935.0	1702.1	908.7	9506.8		1624.5	15220.5
Սոցիալական տրանսֆերտներ	159.9	81.9	206.0	243.8	143.0	91.9	243.5	140.2
Մասնավոր տրանսֆերտներ	1150.1	502.9	1509.4	3168.9	39438.1	9898.5	4201101	26839.8
Այլ եկամուտներ	139.8	102.2	209.6	128.9	6144.6	4698.0	14052.9	4883.3

98. Ինչ վերաբերում է ոչ աղքատ բնակչության եկամուտների աճին, ապա, ինչպես երևում է Աղյուսակ 2.4-ից, այն էականորեն զիջում է աղքատ և շատ աղքատ բնակչության եկամուտների աճին, իսկ ոչ պաշտոնական տրանսֆերտների ծավալը նույնիսկ կրճատվել էր Երևանում և այլ քաղաքներում: Ելնելով վերը նշված նկատառումներից՝ ՏՏԿԱՀ տվյալները ոչ աղքատ բնակչության եկամուտների մասին չի կարելի լիովին հավաստի համարել: Այնուամենայնիվ, աղյուսակում բերված տարբեր տվյալների համադրումը վկայում է, որ չնայած ոչ աղքատ բնակչության եկամուտները թերագնահատված են, աղքատ և շատ աղքատ բնակչության եկամուտները, ներառյալ աշխատանքային եկամուտները և ոչ պաշտոնական տրանսֆերտները, 1999-2005թթ. իրոք աճել են ավելի արագ, քան ոչ աղքատ բնակչության եկամուտները, որը ևս մեկ անգամ ապացուցում է տնտեսական աճի՝ աղքատության հաղթահարմանն ուղղվածության շարունակական բնույթը:

2.2. Նյութական աղքատության տարածքային պատկերը 1999 - 2006 թթ.

99. Չնայած աղքատության, ներառյալ՝ շատ աղքատների քանակի ամենուրեք արագ կրճատմանը, Հայաստանում դեռ պահպանվում են աղքատության մակարդակի էական տարբերություններ մարզային, ինչպես նաև գյուղի և քաղաքի կտրվածքով, որոնք մեծամասամբ պայմանավորված են տնտեսական զարգացման մակարդակների գոյություն ունեցող տարբերություններով, ինչպես նաև տարածքային ֆիզիկա-աշխարհագրական ու ենթակառուցվածքային զարգացման առանձնահատկություններով: 2005 և 2006թթ. ՏՏԿԱՀ տվյալների համաձայն, աղքատության մակարդակը բարձր է աղետի գոտու, հեռավոր, սահմանամերձ ու գյուղատնտեսության վարման համար առավել անբարենպաստ պայմաններ՝ հատկապես ոռոգվող գյուղատնտեսական նշանակության հողերի փոքր տեսակարար կշիռ ունեցող, ինչպես նաև առավելապես քաղաքային բնակչություն ունեցող մարզերում:

Աղյուսակ 2.5. Աղքատ և շատ աղքատ բնակչության քանակը 1999-2006թթ. և տնտեսական զարգացման դինամիկան 1999 - 2006 թթ.՝ ըստ մարզերի և գյուղ-քաղաք կտրվածքով *

Ցուցանիշներ	2006		2005			1999		
	Աղքատ, %	Շատ աղքատ, %	Աղքատ, %	Շատ աղքատ, %	ՀՆԱ մեկ շնչի հաշվով, հազ. դրամ	Աղքատ, %	Շատ աղքատ, %	ՀՆԱ մեկ շնչի հաշվով, հազ. դրամ
Հայաստան	26.5	4.1	29.8	4.6	697.1	56.1	21.0	307.3
Երևան	21.0	3.5	23.9	3.6	1134.1	58.4	24.8	376.7
Հայաստան (առանց Երևանի)	29.1	4.3	32.7	5.1	469.3	55.2	19.5	271.0
Արագածոտն	27.5	2.6	32.3	3.1	383.1	60.5	22.8	300.5
Արարատ	27.0	5.5	30.9	7.4	437.3	52.3	13.3	267.5
Արմավիր	30.8	3.4	31.6	3.8	439.3	41.7	10.2	350.9
Գեղարքունիք	29.8	2.6	36.8	2.9	417.0	49.9	11.3	244.4
Լոռի	27.0	5.5	28.8	5.8	389.1	62.6	30.0	219.3
Կոտայք	32.0	8.1	34.5	8.7	523.3	61.7	24.5	317.7
Շիրակ	37.3	3.7	42.5	4.3	321.0	75.8	33.0	226.6
Սյունիք	25.3	2.1	28.9	2.3	1128.5	53.1	18.7	299.5
Վայոց ձոր	11.4	1.3	19.2	1.8	616.2	34.7	12.9	276.3
Տավուշ	23.5	3.3	25.8	3.8	337.9	29.3	9.3	204.4
Այլ քաղաքներ	35.8	6.6	37.8	7.2	427.2	65.5	27.4	241.2
Գյուղական վայրեր	23.4	2.4	28.3	3.2	479.8	48.2	14.1	295.3

* Աղքատների և շատ աղքատների քանակը տրված է նոր մեթոդաբանությամբ:

100. Ելնելով մի շարք հանգամանքներից՝ մասնավորապես, 1999 թ. ՏՏԿԱՀ-ի ոչ ներկայացուցչական բնույթից, մարզային մակարդակով աղքատության գնահատման տեսակետից³³, քաղաքային բնակչության տարբեր տեսակարար կշիռներից, աղքատության և անհավասարության ելակետային (1999թ.) տարբեր մակարդակներից, մարզերում տնտեսական աճի ազդեցությունը աղքատության կրճատման վրա 1999 - 2006 թթ. անհավասարաչափ բնույթ է կրել:

101. Ինչպես երևում է Աղյուսակներ 2.5 և 2.6-ից, ամենուրեք տնտեսական աճը զուգակցվում էր աղքատների և շատ աղքատների քանակի կրճատմամբ, սակայն տարբեր

³³ Տե՛ս «Հայաստանի սոցիալական պատկերը և աղքատությունը. Վիճակագրական վերլուծական զեկույց», Երևան, ՀՀ ԱՎԾ, 2006 թ., էջ 27:

արագություններով: Աղքատության կրճատման ամենամեծ առաձգականությունը տնտեսական աճից գրանցվել է Արագածոտնի, Լոռու և Շիրակի մարզերում՝ հիմնականում աղքատության մեկնարկային շատ բարձր մակարդակների պատճառով: Երևանում, որտեղ աղքատության կրճատման ծավալները ամենաբարձրն էին Հայաստանում, տնտեսական աճի տեմպերը նույնպես ամենաբարձրն էին, իսկ առաձգականությունը համապատասխանում էր Հայաստանի միջինին:

Աղյուսակ 2.6. Աղքատ և շատ աղքատ բնակչության քանակը 1999-2006թթ. և տնտեսական զարգացման դինամիկան 1999 - 2006 թթ.՝ ըստ մարզերի և գյուղ-քաղաք կտրվածքով *

Ցուցանիշներ	2006		2005			1999		
	Աղքատ, %	Շատ աղքատ, %	Աղքատ, %	Շատ աղքատ, %	ՀՆԱ մեկ շնչի հաշվով, հազ. դրամ	Աղքատ, %	Շատ աղքատ, %	ՀՆԱ մեկ շնչի հաշվով, հազ. դրամ
Հայաստան	26.5	4.1	29.8	4.6	697.1	56.1	21.0	307.3
Երևան	21.0	3.5	23.9	3.6	1134.1	58.4	24.8	376.7
Հայաստան (առանց Երևանի)	29.1	4.3	32.7	5.1	469.3	55.2	19.5	271.0
Արագածոտն	27.5	2.6	32.3	3.1	383.1	60.5	22.8	300.5
Արարատ	27.0	5.5	30.9	7.4	437.3	52.3	13.3	267.5
Արմավիր	30.8	3.4	31.6	3.8	439.3	41.7	10.2	350.9
Գեղարքունիք	29.8	2.6	36.8	2.9	417.0	49.9	11.3	244.4
Լոռի	27.0	5.5	28.8	5.8	389.1	62.6	30.0	219.3
Կոտայք	32.0	8.1	34.5	8.7	523.3	61.7	24.5	317.7
Շիրակ	37.3	3.7	42.5	4.3	321.0	75.8	33.0	226.6
Սյունիք	25.3	2.1	28.9	2.3	1128.5	53.1	18.7	299.5
Վայոց ձոր	11.4	1.3	19.2	1.8	616.2	34.7	12.9	276.3
Տավուշ	23.5	3.3	25.8	3.8	337.9	29.3	9.3	204.4
Այլ քաղաքներ	35.8	6.6	37.8	7.2	427.2	65.5	27.4	241.2
Գյուղական վայրեր	23.4	2.4	28.3	3.2	479.8	48.2	14.1	295.3

* Աղքատների և շատ աղքատների քանակը տրված է նոր մեթոդաբանությամբ:

102. Երկու աղյուսակներում կապը տնտեսական աճի և աղքատության կրճատման միջև չի կրում գծային բնույթ. որքան բարձր է տնտեսական զարգացման տեմպը, այնքան, այլ հավասար պայմանների դեպքում, ցածր է համապատասխան առաձգականությունը: Դա նաև ապացուցվում է Աղյուսակ 2.8-ի տվյալներով, ըստ որի՝ Հայաստանում 1999-2005թթ. համատեղվել են երկու զուգահեռ ընթացող գործընթացներ՝ տնտեսական զարգացման մակարդակների տարածքային հարաճուն տարբերությունները համակցվում են աղքատության՝ ներառյալ ծայրահեղ աղքատության տարածքային տարբերությունների կրճատման հետ:

Աղյուսակ 2.7. Աղքատության կրճատման և տնտեսական աճի միջին տարածքային առաձգականությունները 1999 - 2005 թթ. (ընթացիկ գներով)

Ցուցանիշներ	ՀՆԱ հավելածի տեմպ	Աղքատության կրճատման տեմպ	Առաձգականությունը
Հայաստան	126.8	88.3	0.70
Երևան	201.1	144.4	0.72
Հայաստան (առանց Երևանի)	73.2	69.1	0.94

Արագածոտն	27.5	87.3	3.18
Արարատ	63.5	69.3	1.09
Արմավիր	25.2	32.0	1.27
Գեղարքունիք	70.6	35.6	0.50
Լոռի	77.4	117.4	1.52
Կոտայք	64.7	78.8	1.22
Շիրակ	41.6	78.4	1.88
Սյունիք	276.7	83.7	0.30
Վայոց ձոր	123.1	80.7	0.66
Տավուշ	65.3	13.6	0.21
Այլ քաղաքներ	77.1	73.3	0.95
Գյուղական վայրեր	62.5	70.3	1.13

Աղյուսակ 2.8. Տնտեսական զարգացման և աղքատության տարածքային տարբերությունների դինամիկան 1999-2005թթ.

Ցուցանիշներ	2005	2004	1999
ՀՆԱ՝ 1 շնչի հաշվով			
Միջինը, հազ. դրամ (ընթացիկ գներով)	697.1	593.6	305.8
Միջին քառակուսային շեղումը	314.8	223.5	59.0
Աղքատների թվաքանակը			
Միջինը, %՝ բնակչության թվաքանակի նկատմամբ	29.8	34.6	56.1
Միջին քառակուսային շեղումը	6.1	5.8	13.3
Շատ աղքատների թվաքանակը			
Միջինը, %՝ բնակչության թվաքանակի նկատմամբ	4.6	6.4	21.0
Միջին քառակուսային շեղումը	2.0	2.1	8.2

103. Աղյուսակ 2.8-ը ցույց է տալիս, որ այն դեպքում, երբ տնտեսական զարգացման մարզային տարբերությունները (որոնք չափվել են մեկ շնչին բաժին ընկնող ՀՆԱ-ի միջին քառակուսային շեղումով) բացարձակ արտահայտությամբ աճել են 1999-2005թթ. ընթացքում մոտ 5 անգամ, աղքատության և ծայրահեղ աղքատության մարզային տարբերությունները (բացարձակ արտահայտությամբ) համապատասխանաբար կրճատվել են մոտ 2 և 4 անգամ: Այսպիսով, Հայաստանում աստիճանաբար աճող տնտեսական զարգացման մարզային տարբերությունները որոշիչ ազդեցություն չեն ունեցել մարզային աղքատության և ծայրահեղ աղքատության մակարդակների կրճատման արագության և դրանց տարբերությունների նվազեցման վրա:

104. Դա կարելի է բացատրել տնտեսական աճի և աղքատության կրճատման միջև կապի ոչ գծային բնույթով, ինչպես նաև այն հանգամանքով, որ Հայաստանում աղքատության գնահատման համար կիրառվում է միասնական հաստատուն աղքատության գիծ, որը չի փոխվում տնտեսական զարգացմանը զուգընթաց, և ըստ մարզերի չի տարբերակվում: Քանի որ տնտեսական աճ 1999-2005թթ. առկա էր երկրի բոլոր մարզերում, և հաշվի առնելով նշված կապի բնույթը, կարելի է նշել, որ 1999թ. Հայաստանի միջինից բարձր աղքատության մակարդակ ունեցող մարզերում այն կրճատվել է հարաբերականորեն ավելի արագ (առաձգականության մակարդակը 1-ից բարձր), իսկ միջինից ցածր մակարդակ ունեցող մարզերում՝ ավելի դանդաղ (առաձգականության մակարդակը 1-ից ցածր), որը և հանգեցրել է աղքատության մակարդակների մոտեցմանը:

105. Համաձայն ԿՀԾ-ի կանխատեսումների՝ այդ երկու երևույթների համակցումը կշարունակվի նաև մոտակա 10-15 տարվա ընթացքում, և աղքատության մարզային մակարդակները ներկայիս աղքատության գծի օգտագործման դեպքում համարյա կհավասարվեն:

2.3. Նյութական աղքատության պատկերը 1999-2006թթ.՝ ըստ գեոդերային, տարիքային և սոցիալական խմբերի

106. Աղքատության պատկերի դինամիկան, բնակչության գեոդերային և տարիքային խմբերի կտրվածքով, 1999-2006թթ. էականորեն նման է աղքատության տարածքային պատկերի դինամիկային՝ աղքատների և շատ աղքատների քանակի արագ կրճատում Ադյուսակ 2.9-ում նշված խմբերում, ինչպես նաև աղքատության մակարդակների համահարթեցում, որը երևում է նաև միջին քառակուսային շեղումը բնութագրող ցուցանիշների կրճատումից: Աղքատության մակարդակների նման համահարթեցումը հիմնականում բացատրվում է հաստատուն աղքատության գծի կիրառմամբ: Ինչպես և մարզային աղքատության դեպքում, գեոդերային և տարիքային խմբերի աղքատության մակարդակների տարբերությունները հետագայում նույնպես համարյա կվերանան:

Ադյուսակ 2.9. Աղքատության մակարդակների գեոդերային և տարիքային տարբերությունների դինամիկան 1999-2006թթ.

Ցուցանիշներ	1999		2004		2005		2006		2006/1999*	
	Աղքատ	Շատ աղքատ	Աղքատ	Շատ աղքատ	Աղքատ	Շատ աղքատ	Աղքատ	Շատ աղքատ	Աղքատ	Շատ աղքատ
Կանայք	56.3	21.1	34.3	6.4	29.7	4.6	26.6	4.2	52.8	80.1
Տղամարդիկ	55.9	20.9	35.0	6.4	30.1	4.5	26.3	4.0	53.0	80.9
Երեխաներ										
0-5 տարեկան	63.3	24.1	41.9	8.0	34.9	5.1	35.3	5.6	44.7	77.2
6-14 տարեկան	51.6	17.1	36.6	7.2	32.0	5.3	26.5	4.3	48.6	74.9
15-17 տարեկան	52.9	18.4	35.7	6.4	31.2	4.7	27.8	4.8	47.4	73.9
Չափահասներ										
18-25 տարեկան	59.7	25.8	35.3	6.3	29.2	5.4	27.0	3.7	54.8	85.7
26-45 տարեկան	54.6	19.9	35.7	6.7	30.3	4.5	26.2	4.0	52.0	79.9
46-60 տարեկան	56.6	22	29.8	5.4	27.2	4.1	23.0	3.2	59.4	85.5
Տարեց բնակչություն	58.3	22.5	31.2	5.5	27.9	3.5	24.6	4.1	57.8	81.8
Միջինը Հայաստանում	56.1	21	34.6	6.4	29.8	4.6	26.5	4.1	52.8	80.5
Միջին քառակուսային շեղումը	3.5	2.7	3.4	0.8	2.3	0.6	3.3	0.7		

* Ցույց է տալիս աղքատների և շատ աղքատների քանակի կրճատման չափը (տոկոսներով) 1999թ. համապատասխան մակարդակի նկատմամբ:

107. Ադյուսակ 2.10-ը ներկայացնում է, որ պատկերը այլ է ընտանիքի չափից կախված աղքատության մակարդակների դեպքում: Աղքատության կրճատումը 1-ից 4 անդամ ունեցող տնային տնտեսություններում 1999-2006թթ. ընթացքում տեղի է ունեցել նկատելիորեն ավելի բարձր արագությամբ, քան միջինը Հայաստանում: Այսպես. 1 անդամից բաղկացած տնային տնտեսություններում աղքատության կրճատման տեմպը միջին հանրապետական տեմպից բարձր էր մոտ 1.3 անգամ, 2 անդամ ունեցող տնտեսություններում՝ մոտ 1.2 անգամ, 3 անդամ ունեցող տնտեսություններում՝ մոտ 1.3 անգամ, իսկ 4 անդամից բաղկացած տնտեսություններում՝ 1.1 անգամ: Մյուս կողմից, բազմանդամ (5 և ավելի) տնային տնտեսություններում աղքատության կրճատումը տեղի էր ունենում միջինից ավելի դանդաղ տեմպերով, որի արդյունքում աղքատության մակարդակի տարբերությունները փոքր և բազմանդամ տնային տնտեսություններում էականորեն ավելացել են: Այսպես. 2006թ. աղքատության ռիսկը 7 և ավելի անդամ ունեցող տնտեսություններում 2.5 անգամ ավելի բարձր էր 1 հոգուց բաղկացած տնտեսությունների, շուրջ 2 անգամ՝ 2 և 3 անդամից բաղկացած տնտեսությունների և 1.6 անգամ՝ 4 անդամից բաղկացած տնտեսությունների համեմատ: Համապատասխան ցուցանիշները 1999թ. համար եղել են՝ 1.46, 1.28, 1.3 և 1.27:

Աղյուսակ 2.10. Ընտանիքի չափից կախված աղքատության մակարդակի դինամիկան 1999-2006 թթ.

Ցուցանիշներ	1999		2004		2005		2006		2006/1999*	
	Աղքատ	Շատ աղքատ	Աղքատ	Շատ աղքատ	Աղքատ	Շատ աղքատ	Աղքատ	Շատ աղքատ	Աղքատ	Շատ աղքատ
Տնային տնտեսության անդամների թիվը										
1	43.7	6.8	13.2	1.6	15.7	1.9	14.1	4.1	67.7	39.7
2	49.8	16.5	20.3	3.9	18.7	2.1	18.5	2.6	62.9	84.2
3	49.0	14.8	25.3	3.8	18.9	3.2	17.1	2	65.1	86.5
4	50.1	17.0	28.5	5.3	25	4	22.1	2.7	55.9	84.1
5	54.1	17.7	36.3	5.2	34.8	4.7	29.9	3.6	44.7	79.7
6	63.1	26.3	39.7	7.7	34	6.1	32.1	5.2	49.1	80.2
7 և ավելի	63.8	29	52.8	11.9	46.8	7.2	36.1	7.9	43.4	72.8
Միջինը Հայաստանում	56.1	21.0	34.6	6.4	29.8	4.6	26.5	4.1	52.8	80.5
Միջին քառակուսային շեղումը	7.5	7.4	13.2	3.3	11.3	2.0	8.4	2.0		

* Ցույց է տալիս աղքատների և շատ աղքատների քանակի կրճատման չափը (տոկոսներով) 1999թ. համապատասխան մակարդակի նկատմամբ:

108. Մյուս կողմից, սոցիալական օժանդակության քաղաքականությունը բազմանդամ ընտանիքներին նպատակաուղղելու արդյունքում, շատ աղքատ բազմանդամ ընտանիքների քանակը կրճատվել է շուրջ 4 անգամ, որը համապատասխանում է ծայրահեղ աղքատության կրճատման միջին հանրապետական տեմպին:

109. Փոքր և բազմանդամ ընտանիքների աղքատության մակարդակների տարբերության նվազեցումը մոտակա 10-15 տարիների ընթացքում կպահանջի ընտանեկան նպաստների համակարգի նպատակայնության և դեպի բազմանդամ ընտանիքները ուղղվածության աստիճանի հետագա բարձրացում, ինչպես նաև ընտանիքի ամրապնդման քաղաքականության (որը ներկայումս բացակայում է) հիմնական տարրերի ներմուծում:

110. Ինչպես երևում է Աղյուսակ 2.11-ից, ընտանիքում երեխաների քանակից կախված աղքատության ռիսկի պատկերը 2004 և 2005թթ. տարբերվում էր 1999 թ. պատկերից. 1999թ. համակարգային աղքատության պայմաններում աղքատության մակարդակը մոտավորապես նույնն էր բոլոր տիպի ընտանիքներում, բացառությամբ կնոջ գլխավորած՝ երեխաներ ունեցող տնային տնտեսություններում, որոնց աղքատության ռիսկը առավելագույնն էր: 2004 և 2005թթ. աղքատության ռիսկի տարբերությունները այդ խմբերում էականորեն աճեցին՝ 2005թ. 4 և ավելի երեխա ունեցող ընտանիքների աղքատության ռիսկը մոտ 2 անգամ, 3 երեխա ունեցող ընտանիքներինը՝ մոտ 1.7 անգամ և կնոջ գլխավորած՝ երեխաներ ունեցող ընտանիքներինը՝ մոտ 1.8 անգամ ավելի էր, քան առանց երեխաների ընտանիքներինը՝ 1999թ. 1.04, 0.99 և 1.12 համապատասխան տարբերությունների համեմատ:

Աղյուսակ 2.11. Երեխաների և ծերերի քանակից կախված աղքատության մակարդակի դինամիկան 1999-2005թթ.*

Ցուցանիշներ	1999		2004		2005		2005/1999**	
	Աղքատ	Շատ աղքատ	Աղքատ	Շատ աղքատ	Աղքատ	Շատ աղքատ	Աղքատ	Շատ աղքատ
Երեխաների թվաքանակը								
Առանց երեխայի	54.2	20	24.0	4.0	22.2	2.9	59.0	85.5
Կին գլխավոր՝ առանց երեխայի	58.3	20.5	23.5	5.6	24.8	3.8	57.5	62.4

Կին գլխավոր՝ երեխաներով	63.2	21.6	41.3	8.3	40.3	6.5	36.2	69.9
1 երեխա	55.6	23.6	34.5	5.5	29.6	4.5	46.8	80.9
2 երեխա	56.9	20	36.2	7.4	32.1	5.4	43.6	73.0
3 երեխա	55.8	21.2	41.1	5.9	37.4	4.9	33.0	62.7
4 երեխա և ավելի	58.5	21.4	53.1	14.7	43.9	8.3	24.8	61.2
Ծերերի քվաքանակը								
Առանց ծերերի	52.9	18.2	33.3	6	27.6	4.7	47.8	74.2
1 ծեր	60.4	22.9	34.4	7	32.8	5.2	45.7	77.3
2 և ավելի ծեր	61	28.3	39.6	6.7	32.8	3.2	46.2	88.7
Միայնակ ծերեր	50.7	12.2	19	2.5	19.4	2	61.7	83.6
Միջինը Հայաստանում	56.1	21	34.6	6.4	29.8	4.6	46.9	78.1
Միջին քառակուսային շեղումը՝ երեխաների առկայություն	3.1	1.2	9.8	3.7	8.1	2.4		
Միջին քառակուսային շեղումը՝ ծերերի առկայություն	4.5	6.0	8.2	2.0	5.7	1.5		

* 2006թ. նույն վիճակագրությունը բերված չէ՝ համեմատելիությունն ապահովելու համար: Վերջինս ՀՀ ԱՎԾ կողմից հաշվարկվել է այլ մեթոդաբանությամբ:

** Ցույց է տալիս աղքատների և շատ աղքատների քանակի կրճատման չափը (տոկոսներով) 1999թ. համապատասխան մակարդակի նկատմամբ:

111. Ընտանիքում ծերերի քանակից կախված աղքատության ռիսկը էականորեն նվազել է 1999-2005թթ. ընթացքում, իսկ միայնակ ծերերից բաղկացած ընտանիքների աղքատության մակարդակը, կրճատվելով 2.6 անգամ, միջինից նկատելիորեն ավելի ցածր էր:

112. Ինչ վերաբերում է տնտեսությունում զբաղվածության կարգավիճակից կախված աղքատության ռիսկին (Աղյուսակ 2.12), ապա ամենամեծ ռիսկը գործազրկությունն է, որը 2006թ. միջինից բարձր էր 1.6 անգամ՝ 1999թ. 1.23-ի պարագայում: Կենսաթոշակառուների և այլ չզբաղվածների աղքատության մակարդակների արագ կրճատումը 1999-2006թթ. էականորեն կրճատել է բնակչության այդ խմբերի աղքատության ռիսկը, որը 2006թ. մի դեպքում համարյա չէր տարբերվում, իսկ մյուսում՝ նույնիսկ ցածր էր միջինից:

113. Կախված կրթական մակարդակից՝ 1999-2006թթ. ընթացքում շատ արագ կրճատվել են բարձրագույն (մոտ 3 անգամ) և միջին մասնագիտական (մոտ 2.5 անգամ) կրթություն ունեցող, ինչպես նաև տարրական կրթությամբ անձանց (մոտ 1.7 անգամ) աղքատության ռիսկը: Սակայն տարրական ու թերի միջնակարգ կրթություն ունեցող անձանց շրջանում այն միջինից 1.4 անգամ բարձր է:

Աղյուսակ 2.12. Աղքատության մակարդակի դինամիկան՝ կախված տնտեսությունում զբաղվածությունից և կրթական մակարդակից (16 տարեկանից բարձր բնակչության համար) 1999-2006թթ.

Ցուցանիշներ	1999		2004		2005		2006		2006/1999*	
	Աղքատ	Շատ աղքատ	Աղքատ	Շատ աղքատ	Աղքատ	Շատ աղքատ	Աղքատ	Շատ աղքատ	Աղքատ	Շատ աղքատ
<i>Զբաղվածության կարգավիճակը</i>										
Վարձու աշխատող	48.7	15.0	27.5	4.4	22.7	3.0	21.3	2.2	56.3	85.3
Ինքնազբաղված	48.6	13.4	31.0	4.3	27.3	3.2	23.9	2.8	50.8	79.1
Գործազուրկ	69.5	35.1	45.9	11.4	46.9	10.0	41.2	8.7	40.7	75.2
Կենսաթոշակառու	64.0	25.4	33.2	6.2	30.0	3.9	26.5	4.6	58.6	81.9
Ուսանողներ	49.1	15.1	22.8	3.1	14.8	2.1	14.8	3.0	69.9	80.1
Այլ չզբաղվածներ	60.3	27.4	40.6	8.2	29.9	4.7	26.1	3.4	56.7	87.6
<i>Կրթական մակարդակը</i>										

Տարրական և ցածր	62.3	23.7	37.4	7.2	29.9	4.6	37.3	8.6	40.1	63.7
Թերի միջնակարգ	63.3	27.8	42.6	8.7	37.0	6.7	36.4	8.3	42.5	70.1
Միջնակարգ ընդհանուր	58.9	24.0	38.2	7.2	34.4	5.3	29.9	4.4	49.2	81.7
Միջին մասնագիտական	55.6	19.4	31.9	5.6	26.1	3.8	22.3	2.4	59.9	87.6
Բարձրագույն	44.9	13.4	19.5	2.6	15.4	1.9	14.3	1.9	68.2	85.8
Միջինը Հայաստանում (16+ բնակչություն)	56.5	21.7	33.5	6.1	28.9	3.8	25.6	4.1	53.1	81.1
Միջին քառակուսային շեղումը՝ գրադավածու- թյան կարգավիճակ	9.1	8.8	8.5	3.1	10.6	2.8	8.7	2.4		
Միջին քառակուսային շեղումը՝ կրթական մակարդակ	7.4	5.5	8.9	2.3	8.5	1.8	9.8	3.2		

* Ֆույց է տալիս աղքատների և շատ աղքատների քանակի կրճատման չափը (տոկոսներով) 1999թ. համապատասխան մակարդակի նկատմամբ:

Աղյուսակ 2.13. Բնակչության ամենաանապահով խմբերի աղքատության մակարդակի դինամիկան 1999-2006թթ.

Ֆույցանիշներ	1999		2005		2006	
	Աղքատ	Շատ աղքատ	Աղքատ	Շատ աղքատ	Աղքատ	Շատ աղքատ
	<i>տոկոս</i>					
7 և ավելի անդամներից բաղկացած ընտանիքներ	63.8	29.0	46.8	7.2	36.1	7.9
Կին գլխավոր՝ երեխաներով	63.2	21.6	40.3	6.5	32.4	4.0
3 երեխա ունեցող ընտանիքներ	55.8	21.2	37.4	4.9	32.1	6.5
4 երեխա ունեցող ընտանիքներ	58.5	21.4	43.9	8.3	30.2	7.2
Գործազուրկներ*	69.5	35.1	46.9	10.0	41.2	8.7
Թերի միջնակարգ կրթությամբ անձինք *	63.3	27.8	37.0	6.7	36.4	8.3
	<i>տոկոս՝ միջին աղքատության մակարդակի նկատմամբ</i>					
7 և ավելի անդամներից բաղկացած ընտանիքներ	113.7	138.1	157.0	156.5	136.2	192.7
Կին գլխավոր՝ երեխաներով	112.7	102.9	135.2	141.3	122.3	97.6
3 երեխա ունեցող ընտանիքներ	99.5	101.0	125.5	106.5	121.1	158.5
4 երեխա ունեցող ընտանիքներ	104.3	101.9	147.3	180.4	114.0	175.6
Գործազուրկներ *	123.2	161.8	162.3	227.3	155.5	212.2
Թերի միջնակարգ կրթությամբ անձինք *	112.2	128.1	128.0	152.3	137.4	202.4

* Աղքատության մակարդակը հաշվարկվաշ է 16 տարեկանից բարձր բնակչության համար:

114. Այսպիսով, ըստ բնակչության խմբերի աղքատության պատկերի դինամիկայի վերլուծությունը 1999-2006թթ. տվյալներով թույլ է տալիս բացահայտել աղքատության ռիսկին ամենից ավելի ենթակա խմբերը³⁴: Աղյուսակ 2.13-ը, որտեղ ներկայացված են այդ խմբերի աղքատության և ծայրահեղ աղքատության մեջ հայտնվելու ռիսկերի գնահատականները, ցույց է տալիս, որ այդ խմբերը ամենաքիչն են օգտվել երկրում տեղի ունեցող տնտեսական աճի պտուղներից, սոցիալական քաղաքականության արդյունքները այդ խմբերի համար եղել են նվազ արդյունավետ, քան այլ խմբերում, որի հետևանքով աղքատության կրճատումն այդ խմբերում նկատելիորեն ավելի դանդաղ է տեղի ունեցել, և աղքատության մակարդակների տարբերությունը այդ և վերը նշած բնակչության այլ խմբերի միջև 1999-2006թթ. ընթացքում էականորեն աճել է:

³⁴ Դրանց են պատկանում բնակչության այն խմբերը, որոնք աղքատության ռիսկը գերազանցում են միջինը 25 և ավելի տոկոսով:

2.4. Գյուղական աղքատության կրճատման գործոնները և առանձնահատկությունները Հայաստանում 1999-2006թթ.

115. Վերջին տարիներին երկրում գրանցված կայուն տնտեսական աճն իր ազդեցությունն է թողել նաև գյուղական բնակչության կենսամակարդակի բարելավման վրա: Գյուղական աղքատության մակարդակների տարբերությունները պայմանավորող հիմնական գործոններից մեկը գյուղատնտեսության պայմաններն են, որոնք լավ մոտարկվում են բնակավայրի՝ ծովի մակերևույթից ունեցած բարձրությամբ³⁵:

116. Չնայած 1999-2006թթ. ընդհանուր պատկերը չի փոխվել՝ աղքատության մակարդակը աճում է բարձրության հետ մեկտեղ, սակայն ինչպես երևում է Աղյուսակ 2.14-ից, աղքատության մակարդակները 2006թ. էականորեն մոտեցել են իրար, որի մասին վկայում է միջին քառակուսային շեղման ցուցանիշի կտրուկ կրճատումը:

Աղյուսակ 2.14. Գյուղական աղքատության կախվածությունը բնակավայրի՝ ծովի մակերևույթից ունեցած բարձրությունից (1999-2006 թթ.)

Ցուցանիշներ	2006		2005		1999	
	Աղքատ	Շատ աղքատ	Աղքատ	Շատ աղքատ	Աղքատ	Շատ աղքատ
Բարձրությունը 1300 մետրից պակաս	22.1	2.6	26.9	4.3	39.9	8.4
1300 - 1700 մետր	19.0	2.9	26.7	4.2	55	21.9
1700 մետրից ավելի	21.6	1.7	30.3	1.3	53.7	16.3
Ընդամենը	21.0	2.4	28.3	3.2	48.2	14.1
Միջին քառակուսային շեղումը	1.66	0.62	2.02	1.70	8.37	6.78

117. Դա հիմնականում պայմանավորված է այն հանգամանքով, որ գյուղական վայրերում տնտեսական աճի պտուղներից օգտվել են առավելապես ավելի աղքատները, որը աշխարհագրական տեղանքի տեսակետից համապատասխանում է 1300-1700 մ և 1700 մ ավելի բարձրության վրա գտնվող գյուղական բնակավայրերին:

118. Ինչպես և աղքատության տարածքային անհամասնությունների կրճատման դեպքում, դա պայմանավորված է տնտեսական աճի և աղքատության կրճատման կապի ոչ գծային բնույթով, աղքատության գծի հաստատուն լինելով, ինչպես նաև աղքատության մեկնարկային մակարդակների տարբերությամբ:

Աղյուսակ 2.15. Գյուղական աղքատության կախվածությունը տնօրինվող հողակտորի չափից 1999-2006 թթ.

Ցուցանիշներ	2006		2005		1999		2006/1999	
	Աղքատ	Շատ աղքատ	Աղքատ	Շատ աղքատ	Աղքատ	Շատ աղքատ	Աղքատ	Շատ աղքատ
Չունի հողակտոր	41.9	4.8	33.0	11.2	65.4	39.1	1.6	8.1
Մինչև 0.2 հեկտար	24.9	3.7	35.0	6.0	55.7	23.3	2.2	6.3
0.2 - 0.5 հեկտար	18.4	1.5	28.3	1.5	51.2	11.9	2.8	7.9
0.5 - 1 հեկտար	22.7	2.4	26.1	3.7	55.1	15.5	2.4	6.5
1 հեկտար և ավելի	24.4	2.2	26.7	1.7	39.6	10.4	1.6	4.7

³⁵ Այդ ցուցանիշով լավ մոտարկվում են գյուղատնտեսական արտադրության հիմնական երկու դեռերմինատները՝ հողի որակով պայմանավորված արտադրողականությունը և սպառման հիմնական շուկաներից հեռավորությամբ և դրանց հասանելիությամբ պայմանավորված ապրանքայնության աստիճանը:

Ընդամենը	23.4	2.4	28.3	3.2	48.2	14.1	2.1	5.9
Միջին քառակուսային շեղումը	9.0	1.3	4.0	4.0	9.3	11.8		

119. Նույնաման գարգացումներ են տեղի ունեցել գյուղական աղքատության մակարդակների տարբերությունը պայմանավորող մի այլ կարևոր գործոնի՝ գյուղական տնտեսության տնօրինվող հողակտորի չափի՝ աղքատության վրա ունեցած ազդեցության հետ, որը, ինչպես վկայում են տվյալները, էականորեն կրճատվել է: Բացի վերը նշված գործոններից, այստեղ դերակատարում ունի նաև 1999-2006թթ. տեղի ունեցած ոչ գյուղատնտեսական գործունեության հնարավորությունների ընդլայնումը գյուղական վայրերում³⁶:

120. 2002-2006թթ. ընթացքում, ինչպես երևում է Աղյուսակ 2.16-ից, որոշակիորեն ավելացել են գյուղացիական տնտեսությունների ֆորմալ վարկավորման հնարավորությունները, մնալով, սակայն, դեռ շատ սահմանափակ և, միևնույն ժամանակ, կրճատվել է այն տնտեսությունների քանակը, որոնք պարտքեր են վերցրել ոչ ֆորմալ աղբյուրներից: Այսպես, բանկային կամ այլ ֆորմալ վարկ վերցրած տնտեսությունների քանակը 2006թ., 2002թ. համեմատ, աճել է 2.9 անգամ (ոչ աղքատ տնտեսություններում՝ 4.2 անգամ, աղքատ տնտեսություններում՝ մոտ 5.4 անգամ):

121. Այսպիսով, գյուղական աղքատության առանձնահատկությունների վերլուծությունը ցույց է տալիս, որ հաստատուն աղքատության գծի և աղքատության հաղթահարմանը միտված տնտեսական աճի պայմաններում, աղքատության մակարդակի տարբերությունները, որոնք պայմանավորված են գյուղական առանձնահատկություններով, 1999-2006թթ. ընթացքում արագ կրճատվում են, ծայրահեղ աղքատության խնդիրը գյուղում կարելի է համարել հիմնականում լուծված, և աղքատության կրճատման թիրախները գյուղական վայրերում միջնա- և երկարաժամկետ հեռանկարում էականորեն չեն տարբերվի քաղաքային վայրերի համապատասխան թիրախներից:

Աղյուսակ 2.16. Գյուղական տնտեսությունների պարտք վերցնելու հնարավորությունները և աղքատության մակարդակը 2002-2006թթ.

Ցուցանիշներ	2006	2005	2004	2003	2002
	<i>տոկոս (եթե այլ նշում չկա)</i>				
Ոչ աղքատներ					
Չեն վերցրել պարտք	91.1	92.8	89.5	97.8	96.3
Վերցրել են պարտք, այդ թվում՝	8.9	7.2	10.5	2.2	3.7
Ֆորմալ աղբյուրներից (բանկ, միկրովարկեր, միջազգային ծրագրեր)	5.9	4.8	6.8	1.2	1.4
Ոչ ֆորմալ աղբյուրներից (ծնողներ, ընկերներ, բարեկամներ, այլ աղբյուրներ)	3.0	2.4	3.7	1.0	2.3
Աղքատներ					
Չեն վերցրել պարտք	93.2	91.8	92.2	98.4	97.5
Վերցրել են պարտք, այդ թվում՝	6.8	8.2	7.8	1.6	2.5
Ֆորմալ աղբյուրներից (բանկ, միկրովարկեր, միջազգային ծրագրեր)	2.8	2.8	3.6	0.4	0.5
Ոչ ֆորմալ աղբյուրներից (ծնողներ, ընկերներ, բարեկամներ, այլ աղբյուրներ)	4.0	5.4	4.2	1.2	1.9
Շատ աղքատ					
Չեն վերցրել պարտք	95.3	97.3	92.3	99.76	99.44
Վերցրել են պարտք, այդ թվում՝	4.7	2.7	7.7	0.24	0.56

³⁶ Համաձայն «Ավագ Սոլյուշն» ընկերության գնահատումների՝ ոչ գյուղատնտեսական գործունեության տեսակարար կշիռը գյուղական վայրերի ավելացված արժեքում 2005թ. կազմել է 32.5%՝ 1999թ. 27.6%-ի պարագայում՝ բացարձակ մեծությամբ ավելանալով 1.86 անգամ, այն դեպքում, երբ գյուղատնտեսության ավելացված արժեքը նույն ժամանակահատվածում աճել է 1.58 անգամ:

Ֆորմալ աղբյուրներից (բանկ, միկրովարկեր, միջազգային ծրագրեր)	2.61	0	3.85	0.07	0.06
Ոչ ֆորմալ աղբյուրներից (ծնողներ, ընկերներ, բարեկամներ, այլ աղբյուրներ)	2.08	2.7	3.85	0.17	0.5
Ընդամենը					
Չեն վերցրել պարտք	90.30	92.43	90.02	96	93.3
Վերցրել են պարտք, այդ թվում`	9.70	7.57	9.98	4	6.7
Ֆորմալ աղբյուրներից (բանկ, միկրովարկեր, միջազգային ծրագրեր)	5.83	4.24	5.96	1.6	2.0
Ոչ ֆորմալ աղբյուրներից (ծնողներ, ընկերներ, բարեկամներ, այլ աղբյուրներ)	3.87	3.33	4.02	2.4	4.7
Բանկային վարկի միջին չափը, հազ. դրամ					
		786.3	426.6	1,507.8	1,163.3
Գյուղական վարկավորման ծավալները, մլն դրամ					
		11,304	8,611	8,152	7,787
Գյուղացիական տնտեսությունների քանակը, հազար					
		339.2	338.5	337.9	334.7
Ֆորմալ աղբյուրներից վարկ ստացածների քանակը, հազար					
		14.4	20.2	5.4	6.7

2.5. Սոցիալական քաղաքականությունը և աղքատության կրճատումը Հայաստանում 1999-2006 թթ.

122. Սոցիալական քաղաքականության ամենամեծ և ամենակարևոր բաղադրիչներն են բնակչության սոցիալական տրանսֆերտները, որոնք իրականացվում են կենսաթոշակների և նպաստների տեսքով: Նպաստների ամենամեծ բաղադրիչը 1999թ. գործող ընտանեկան նպաստների համակարգն է, որի շրջանակներում աղքատության ընտանեկան նպաստներ են հատկացվում կարիքավոր ընտանիքներին: Այդուհանդերձ 2.17-ից և Գ-ծանկար 2.6-ից նկատելի է, որ սոցիալական տրանսֆերտների ազդեցությունը զգալիորեն ավելի բարձր է ծայրահեղ աղքատության կրճատման գործում, որտեղ դրանց նպաստումը 1999-2005թթ. ծայրահեղ աղքատության կրճատման միջին տարեկան տեմպին կազմել է 34.8%` տնտեսական աճի 65.2% ցուցանիշի պարագայում: Ինչ վերաբերում է ընդհանուր աղքատության կրճատման տեմպին, ապա սոցիալական տրանսֆերտների մասնաբաժինը կազմել է ընդամենը 13.4% (որից կենսաթոշակային տրանսֆերտներինը` 10.8 և սոցիալական օժանդակությանը, ներառյալ աղքատության ընտանեկան նպաստները` 2.6 տոկոս)` տնտեսական աճի 86.6 տոկոս ներդրման պարագայում: Նշված տարբերությունը բացատրվում է շատ աղքատների նկատելիորեն ավելի ցածր մասնակցությամբ տնտեսական կյանքին, որը սահմանափակում է նրանց աշխատանքային և այլ ոչ տրանսֆերտային եկամուտներ ստանալու հնարավորությունը, ինչպես նաև այն հանգամանքով, որ ընտանեկան նպաստների համակարգը մինչև հիմա ուղղված էր մարդկանց ծայրահեղ աղքատության վիճակից հանելուն, և նպաստների ներկայիս չափերը, որպես կանոն, թույլ չեն տալիս նպաստառուների մի ստվար հատվածին հաղթահարելու ընդհանուր աղքատության գիծը:


Այդուհանդերձ 2.17. Սոցիալական տրանսֆերտների ազդեցությունը աղքատության և ծայրահեղ աղքատության մակարդակների վրա 1999 - 2006թթ.

Ցուցանիշներ	1999	2004	2005	2006	2006/1999*
Աղքատներ					
Աղքատության հետտրանսֆերային մակարդակը, %	56.1	34.6	29.8	26.5	10.2
Աղքատության մակարդակը` առանց սոցիալական տրանսֆերտների	69.1	44.8	39.8	32.8	10.1
Աղքատության մակարդակը` առանց կենսաթոշակային վճարումների	64.2	42.7	38.1	31.0	9.9
Աղքատության մակարդակը` առանց սոցիալական աջակցության	59	37.2	31.9	28.0	10.1
Շատ աղքատներ					

Աղքատության հետտրանսֆերային մակարդակը, %	21.0	6.4	4.6	4.1	20.8
Աղքատության մակարդակը՝ առանց սոցիալական տրանսֆերտների	38.2	15.4	13.6	12.1	15.1
Աղքատության մակարդակը՝ առանց կենսաթոշակային վճարումների	31.0	12.3	10.6	8.2	17.3
Աղքատության մակարդակը՝ առանց սոցիալական աջակցության	28.2	8.7	7.4	7.2	17.7

*Աղքատության կրճատման միջին տարեկան տեմպը (տոկոս):

Գծանկար 2.6. Տնտեսական աճի և սոցիալական տրանսֆերտների ներդրումը աղքատության և ծայրահեղ աղքատության կրճատման մեջ 1999-2005թթ., %



123. Ինչ վերաբերում է սոցիալական տրանսֆերտների՝ աղքատության կրճատման վրա ունեցած ազդեցությանը ըստ տարածքային կտրվածքի, ապա դրանց գնահատականները 2005թ. համար (Աղյուսակ 2.18) ցույց են տալիս, որ ազդեցության տարածքային պատկերը աղքատ բնակչության համար, ըստ էության, նույնն է, ինչը վկայում է այն մասին, որ ներկայիս սոցիալական քաղաքականությունը աղքատության կրճատման առումով բավական արդյունավետ է և, աղքատության արագ կրճատման պայմաններում, դրա հետագա տարբերակումը ըստ տարածքների նպատակահարմար չէ:

Աղյուսակ 2.18. Սոցիալական տրանսֆերտների ազդեցությունը աղքատության և ծայրահեղ աղքատության մակարդակների վրա 2005թ.՝ տարածքային կտրվածքով

Ցուցանիշներ	Հայաստան	Երևան	Այլ քաղաքներ	Գյուղ
Աղքատության մակարդակը				
<i>տոկոս</i>				
Ընդամենը	29.8	23.9	37.8	28.3
Առանց նպաստների	31.9	25.0	40.4	30.2
Առանց կենսաթոշակային տրանսֆերտների	38.1	30.6	46.0	38.1
Առանց սոցիալական տրանսֆերտների	39.8	31.7	48.6	40.0
Ծայրահեղ աղքատության մակարդակը				
<i>տոկոս</i>				
Ընդամենը	4.6	3.6	7.2	3.2
Առանց նպաստների	7.4	5.2	12.9	5.5
Առանց կենսաթոշակային տրանսֆերտների	10.6	8.4	15.8	8.4
Առանց սոցիալական տրանսֆերտների	13.6	10.0	21.5	10.7
Աղքատության մակարդակը				
<i>%՝ աղքատության մակարդակի նկատմամբ</i>				
Ընդամենը	100	100	100	100
Առանց նպաստների	107.0	104.6	106.9	106.7

Առանց կենսաթոշակային տրանսֆերտների	127.9	128.0	121.7	134.6
Առանց սոցիալական տրանսֆերտների	133.6	132.6	128.6	141.3
Ծայրահեղ աղքատության մակարդակը	%՝ ծայրահեղ աղքատության մակարդակի նկատմամբ			
Ընդամենը	100	100	100	100
Առանց նպաստների	160.9	144.4	179.2	171.9
Առանց կենսաթոշակային տրանսֆերտների	230.4	233.3	219.4	262.5
Առանց սոցիալական տրանսֆերտների	295.7	277.8	298.6	334.4

124. Այնուամենայնիվ, աղյուսակի տվյալները վկայում են, որ չնայած և՛ Երևանում, և՛ այլ քաղաքներում սոցիալական տրանսֆերտների դադարեցումը կհանգեցնի շատ աղքատների քանակի շեշտակի աճի, գյուղում այդ աճը շատ ավելի բարձր կլինի: Այսպիսով, ընդհանուր առմամբ, Հայաստանում և գյուղ-քաղաք կտրվածքով, 1999-2005թթ. սոցիալական տրանսֆերտները էականորեն նպաստել են ծայրահեղ աղքատության կրճատմանը, իսկ աղքատության կրճատման գործում այդ նպաստը ավելի համեստ էր: Ծայրահեղ աղքատությունը, շարունակվող շատ արագ կրճատման պայմաններում, միջնաժամկետ հեռանկարում այլևս կդադարի լուրջ սոցիալական հիմնահարց հանդիսանալ, և սոցիալական տրանսֆերտների հիմնական ուղղությունը կտեղափոխվի ընդհանուր աղքատության կրճատմանը:

125. Սոցիալական օժանդակության քաղաքականության արդյունավետությունը ուղղակիորեն պայմանավորված է դրա նպատակայնության աստիճանով, որը, ինչպես վկայում են Աղյուսակ 2.19-ի տվյալները, էականորեն աճել է 1999-2005թթ.: Այսպես՝ բնակչության ամենաաղքատ 10 տոկոսին ուղղված նպաստների ծավալը ավելացել է 5.66 անգամ, աղքատ բնակչությանը (եկամտային 2-4-րդ դեցիլները) ուղղված նպաստների ծավալը՝ 2.23 անգամ, իսկ ոչ աղքատներին (եկամտային 5-10-րդ դեցիլները)՝ 1.77 անգամ: Ավելին, 2005թ., 2001թ. համեմատ, ոչ աղքատ բնակչությանը հատկացված ընտանեկան նպաստների ծավալները կրճատվել են 31.1 տոկոսով: Այդ առումով, Հայաստանի ընտանեկան նպաստների համակարգը գնահատվում է որպես բավականին արդյունավետ: Ինչպես ցույց է տալիս Աղյուսակ 2.19-ը և Գծանկար 2.7-ը, 2001-2005թթ. ընթացքում շատ աղքատ և աղքատ բնակչության (եկամտային առաջին 4 դեցիլները) տեսակարար կշիռը ընտանեկան նպաստների համակարգում ավելացել է 35.6 տոկոսից մինչև 54.4 տոկոս, այսինքն՝ նպատակայնության աստիճանը աճել³⁷ է մոտ 1.5 անգամ: Այնուամենայնիվ, ընտանեկան նպաստների 45.6%-ը 2005թ. ուղղվել էր բնակչության ոչ աղքատ մասին:

Աղյուսակ 2.19. Սոցիալական տրանսֆերտների բաշխումը բնակչության մեկ շնչի հաշվով՝ ըստ եկամտային դեցիլների 1999-2005թթ.*

Ցուցանիշներ	1999	2001	2005			
			Հայաստան	Երևան	Այլ քաղաքներ	Գյուղ
<i>ընթացիկ գներով, դրամ (ամսական)</i>						
Շատ աղքատներ (1-ին եկամտային դեցիլ)						
Ընդամենը	554.2	853.0	1519.0	2138.2	1268.7	1106.4
Կենսաթոշակներ	471.7	580.1	1051.6	1408.6	886.6	888.1
Նպաստներ	82.5	272.9	467.3	729.5	382.1	218.4
որից՝ ընտանեկան նպաստներ		251.1	389.7	538.1	314.2	175.1
Աղքատներ (2-4-րդ եկամտային դեցիլներ)						

³⁷ Այստեղ ընտանեկան նպաստների համակարգի արդյունավետությունը գնահատված է ՏՏԿԱՀ-ի եկամտային բախշման տվյալների (ընթացիկ դրամական եկամուտների) հիման վրա ձևավորված դեցիլներով: Սպառման ազդեցությունների հիման վրա ձևավորված դեցիլային խմբերով հաշվարկված նպաստների բաշխման գնահատականները (տվյալները և վերլուծությունը բերված են փաստաթղթի՝ սոցիալական պաշտպանությանը վերաբերող բաժնում) տարբերվում են եկամուտների բաշխման հիման վրա կատարված գնահատականներից, սակայն արդյունավետության փոփոխման և՛ ընդհանուր, և՛ տարածքային ուղղությունները երկու դեպքերում էլ համընկնում են:


Ընդամենը	903.2	1635.6	2288.3	2321.9	2342.7	2098.2
Կենսաթոշակներ	612.8	1242.6	1638.9	1986.1	1474.7	1440.3
Նպաստներ	290.5	393.0	649.4	335.8	868.0	658.0
որից՝ ընտանեկան նպաստներ		356.8	567.8	254.6	772.2	536.8
Ոչ աղքատներ (5-10-րդ եկամտային դեցիլներ)						
Ընդամենը	792.6	1783.0	2321.5	1752.0	2613.3	2697.4
Կենսաթոշակներ	604.5	1344.4	1987.2	1600.6	2068.2	2280.7
Նպաստներ	188.1	438.6	334.4	151.4	545.1	416.8
որից՝ ընտանեկան նպաստներ		404.5	278.5	119.6	455.3	363.7
Միջին						
Ընդամենը	801.9	1645.8	2231.3	1961.6	2397.6	2358.6
Կենսաթոշակներ	593.7	1237.4	1789.1	1697.1	1772.0	1889.3
Նպաստներ	208.2	408.3	442.2	264.5	625.6	469.3
որից՝ ընտանեկան նպաստներ		374.9	376.4	201.9	536.2	396.8
		<i>տոկոս՝ միջինի նկատմամբ</i>				
Շատ աղքատներ (1-ին եկամտային դեցիլ)						
Ընդամենը	69.1	51.8	68.1	109.0	52.9	46.9
Կենսաթոշակներ	79.4	46.9	58.8	83.0	50.0	47.0
Նպաստներ	39.6	66.8	105.7	275.8	61.1	46.5
որից՝ ընտանեկան նպաստներ		67.0	66.7	266.5	58.6	44.1
Աղքատ (2-4-րդ եկամտային դեցիլներ)						
Ընդամենը	112.6	99.4	102.6	118.4	97.7	89.0
Կենսաթոշակներ	103.2	100.4	91.6	117.0	83.2	76.2
Նպաստներ	139.5	96.2	146.9	127.0	138.7	140.2
որից՝ ընտանեկան նպաստներ		95.2	150.8	126.1	144.0	135.3
Ոչ աղքատներ (5-10-րդ եկամտային դեցիլներ)						
Ընդամենը	98.8	108.3	104.0	89.3	109.0	114.4
Կենսաթոշակներ	101.8	108.6	111.1	94.3	116.7	120.7
Նպաստներ	90.3	107.4	75.6	57.2	87.1	88.8
որից՝ ընտանեկան նպաստներ		107.9	74.0	59.2	84.9	91.7

* Հաշվարկված է ըստ ՏՏԿԱՀ դրամական եկամուտների տվյալների հիման վրա ձևավորված դեցիլների:

126. 2005թ. ընտանեկան նպաստների նպատակայնության, հետևաբար՝ նաև արդյունավետության մակարդակը³⁸ ամենաբարձրն էր Երևանում, որտեղ վերին 6 դեցիլների տեսակարար կշիռը 2005թ. կազմել էր 35.3 տոկոս (Հայաստանի միջինը՝ 45.9 տոկոս), իսկ այլ քաղաքներում և գյուղական վայրերում համակարգի նպատակայնության աստիճանը զգալիորեն ավելի ցածր էր, քան Երևանում:

³⁸ ՏՏԿԱՀ-ի եկամտային տվյալների հիման վրա ձևավորված դեցիլները:

Գծանկար 2.7. Ընտանեկան նպաստների բաշխումը աղքատ և ոչ աղքատ բնակչության միջև 2001-2005թթ., % (ըստ եկամտային դեցիլների)



127. Աղյուսակ 2.20-ում ներկայացված է աղքատության ընտանեկան նպաստների բաշխումը՝ ըստ սպառման ագրեգատի հիման վրա ձևավորված բնակչության դեցիլային խմբերի: Այստեղ ընտանեկան նպաստների նպատակայնության աստիճանը (ուղղվածությունը դեպի աղքատ և շատ աղքատ բնակչությունը) նկատելիորեն ավելի բարձր է, քան նախորդ դեպքում, հատկապես շատ աղքատ բնակչության համար, սակայն հիմնական օրինաչափությունները նույնն են՝ նպաստային համակարգը ամենաարդյունավետն էր Երևանում, որտեղ շատ աղքատ բնակչությունը ստացել էր ընդհանուր նպաստների գումարի 41.7%-ը՝ գյուղական վայրերի 30.9%-ի և այլ քաղաքների 31.4%-ի պարագայում, իսկ ոչ աղքատ բնակչությունը ստացել էր ընդհանուր նպաստների գումարի 22.9%-ը՝ գյուղական վայրերի 38.3%-ի և այլ քաղաքների 31.3%-ի պարագայում, այսինքն՝ ընդգրկման և չընդգրկման սխալները Երևանում ամենափոքրն էին, իսկ գյուղական վայրերում՝ ամենամեծը:

128. Նպաստային համակարգի նպատակայնության աստիճանը, հաշվարկված համակարգում գրանցված լինելու փաստից (ըստ գործող կարգի՝ ընտանեկան նպաստներ ստանալու իրավունք ունեն միայն նպաստների համակարգում գրանցված տնային տնտեսությունները, ընդ որում՝ գրանցումը կամավոր է), շատ աղքատ (մինչև նպաստների ստացումը) ընտանիքների համար 2005թ. տվյալներով կազմել է 91.6%, աղքատ ընտանիքների համար՝ 79.9%, իսկ ոչ աղքատ ընտանիքների համար՝ 67.2%: Ընդ որում, նպաստների համակարգում 2005թ. դրությամբ գրանցված են եղել շատ աղքատ ընտանիքների 60.7%-ը, աղքատ ընտանիքների 39.1%-ը և ոչ աղքատ ընտանիքների 18.8%-ը (Գծանկար 2.8):


Աղյուսակ 2.20. Ընտանեկան նպաստների բաշխումը 2005թ.՝ ըստ սպառման ագրեգատի հիման վրա ձևավորված դեցիլային խմբերի *

Ցուցանիշներ	Նպաստ ստացողները՝ դեցիլի բնակչության նկատմամբ, %	Նպաստ ստացողների ընդհանուր քանակի նկատմամբ, %	Նպաստի գումարային չափը, մլն դրամ	% ընդհանուրի նկատմամբ
Հայաստան				


Շատ աղքատ (1-ին դեցիլ)	42.0	31.7	490.5	33.0
Աղքատ (2-4-րդ եկամտային դեցիլներ)	16.5	36.2	511.1	34.4
Ոչ աղքատ (5-10-րդ եկամտային դեցիլներ)	7.3	32.1	484.1	32.6
Երևան				
Շատ աղքատ (1-ին դեցիլ)	26.3	36.6	107.4	41.7
Աղքատ (2-4-րդ եկամտային դեցիլներ)	16.2	40.2	90.9	35.3
Ոչ աղքատ (5-10-րդ եկամտային դեցիլներ)	2.8	23.2	59.0	22.9
Այլ քաղաքներ				
Շատ աղքատ (1-ին դեցիլ)	55.5	30.4	203.7	31.4
Աղքատ (2-4-րդ եկամտային դեցիլներ)	17.4	38.1	241.2	37.2
Ոչ աղքատ (5-10-րդ եկամտային դեցիլներ)	9.6	31.5	203.0	31.3
Գյուղական բնակավայրեր				
Շատ աղքատ (1-ին դեցիլ)	44.5	29.8	179.4	30.9
Աղքատ (2-4-րդ եկամտային դեցիլներ)	16.2	32.5	178.9	30.8
Ոչ աղքատ (5-10-րդ եկամտային դեցիլներ)	9.4	37.7	222.2	38.3

* Բնակչությունը նախ դասակարգվում է ըստ չափահասի համարժեքությամբ սպառողական ազրեգատի չափերի, ապա վերցնում են համապատասխան եկամուտները:

Գծանկար 2.8. Ընտանեկան նպաստների համակարգում գրանցված տնտեսությունների քանակը 2005թ.՝ ըստ աղքատության մակարդակի



Գծանկար 2.9. Ընտանեկան նպաստների համակարգում չընդգրկվելու հիմնական պատճառները՝ ըստ աղքատության մակարդակի



129. Ասվածից բխում է երկու հիմնական խնդիր՝ ընտանեկան նպաստների համակարգի հետագա զարգացման համար.

- § նպատակային անցումը ծայրաստիճան աղքատ բնակչությունից աղքատ բնակչությանը՝ որպես նպաստային համակարգի հիմնական թիրախի և
- § համակարգի նպատակայնության աստիճանի բարձրացումը սոցիալական ծառայությունների արդյունավետության աճի և չգրանցված աղքատ և շատ աղքատ ընտանիքները համակարգում ներգրավելու միջոցով:

2.6. Զբաղվածությունը և աղքատության կրճատումը Հայաստանում

130. Աշխատանքից ստացվող եկամուտը տնային տնտեսությունների կենսամակարդակը և աղքատության կրճատումը պայմանավորող որոշիչ գործոն է: Այդ գործոնի ազդեցությունը արտահայտվում է ինչպես բնակչության զբաղվածության մակարդակի, այնպես էլ մեկ զբաղված անձի եկամուտների աճով: Հայաստանում 1999-2004թթ.³⁹ տնտեսական աճի արդյունքում, համաձայն համապատասխան ՏՏԿԱՀ տվյալների, աղքատության կրճատմանը նպաստել են երկու գործոնները:

131. Ինչպես վկայում են Աղյուսակ 2.21-ի ցուցանիշները, ի տարբերություն պաշտոնական վիճակագրության տվյալների,⁴⁰ այդ ժամանակահատվածում զբաղվածների թվաքանակը Հայաստանում աճել է 117.8 հազարով կամ 13.4%-ով: Զբաղվածության աճ գրանցվել է հանրապետության քաղաքներում՝ Երևանում՝ 30.9%, այլ քաղաքներում՝ 52.1%, իսկ գյուղական վայրերում զբաղվածությունը կրճատվել է 21.7 տոկոսով: Ինչպես ցույց են տալիս Աղյուսակներ 2.20-ը և 2.21-ը, զբաղվածությունը աճել է աղքատների և ոչ աղքատների

³⁹ 2004թ. ընտրված է վերլուծության համար, քանի որ 2005թ. ՏՏԿԱՀ-ում զբաղվածությանը վերաբերող հարցադրումներ չէին նախատեսված:

⁴⁰ Պաշտոնական վիճակագրության տվյալներով՝ զբաղվածությունը 1999-2004թթ. կրճատվել է 216.8 հազարով կամ 16.7%-ով: Տվյալների տարբերությունը բացատրվում է հաշվարկման տարբեր մեթոդաբանություններով: Սակայն պետք է նշել, որ զբաղվածության գնահատականների տարբերությունը պաշտոնական և ՏՏԿԱՀ տվյալների միջև կրճատվել է. պաշտոնական գնահատականը 1999թ. համար կազմել է 1298.2 և 2004թ. համար՝ 1081.7 հազ. մարդ, իսկ ըստ ՏՏԿԱՀ-ի տվյալների, համապատասխանաբար՝ 882 հազ. և 999.8 հազ. մարդ:

(բացառությամբ գյուղական վայրերի) եկամտային խմբերում և կրճատվել է շատ աղքատ բնակչության շրջանում (բացառությամբ գյուղական վայրերի): Գյուղում, ելնելով Հայաստանում գյուղատնտեսական գործունեության առանձնահատկություններից (գյուղական տնտեսությունների փոքր չափեր, սեփական արտադրանքի սպառման բարձր և ապրանքայնության ցածր մակարդակ, աշխատանքների իրականացումը հիմնականում սեփական ուժերով և այլն), զբաղվածության աստիճանը էականորեն կախված չէ աղքատության մակարդակից: Քաղաքներում առկա է էական բացասական կապ՝ աղքատության և զբաղվածության մակարդակի միջև. աղքատ բնակչության զբաղվածության աստիճանը նկատելիորեն ավելի ցածր է, քան ոչ աղքատներինը: Չնայած աղքատ բնակչության զբաղվածության աճին, 1999-2004թթ. ոչ աղքատ բնակչության զբաղվածությունը աճել է ավելի արագ, և զբաղվածության մակարդակների խզումը աղքատ և ոչ աղքատ բնակչության միջև ավելացել է, իսկ շատ աղքատ բնակչության զբաղվածության աստիճանը նվազել է և՛ Երևանում, և՛ այլ քաղաքներում:

Աղյուսակ 2.21. Բնակչության զբաղվածությունը և տնտեսական աճով պայմանավորված եկամուտները մեկ զբաղվածի հաշվով 1999- 2004թթ. *

Ցուցանիշներ	1999				2004			
	Հայաստան	Երևան	Այլ քաղաքներ	Գյուղ	Հայաստան	Երևան	Այլ քաղաքներ	Գյուղ
<i>Չափահաս բնակչության զբաղվածությունը, տոկոս ընդհանուրի նկատմամբ</i>								
Շատ աղքատ (1-ին դեցիլ)	45.5	18.3	23.7	64.3	42.8	10.5	22.4	61.8
Աղքատ (2-4-րդ դեցիլ)	40.8	19.5	26.3	64.3	44.5	21.0	29.5	64.9
Ոչ աղքատ (5-10-րդ դեցիլ)	45.7	29.7	26.3	71.6	50.9	41.3	45.7	69.6
Ընդամենը	44.3	27.8	28.9	68.2	48.2	32.2	38.5	67.4
<i>Տնտեսական աճով պայմանավորված ամսական եկամուտները (աշխատանքային և գյուղմթերքի վաճառքից) մեկ աշխատողի հաշվով, դրամ</i>								
Շատ աղքատ (1-ին դեցիլ)	565.3	2,234.1	463.6	259.7	1,843.5	21,963.7	3,468.4	984.9
Աղքատ (2-4-րդ դեցիլ)	3,623.0	13,461.6	7,525.0	2,233.5	10,865.6	53,504.5	16,210.9	4,567.8
Ոչ աղքատ (5-10-րդ դեցիլ)	33,533.3	35,610.9	35,765.7	30,661.9	44,815.9	63,436.1	37,610.2	24,853.0
Ընդամենը	21,263.4	25,628.4	24,003.2	19,093.1	30,333.6	59,144.1	30,354.5	14,942.4
<i>Զբաղվածների քանակը, հազ. մարդ</i>								
Շատ աղքատ (1-ին դեցիլ)	90.7	12.6	14.3	63.9	88.9	7.5	13.9	67.5
Աղքատ (2-4-րդ դեցիլ)	244.2	40.1	47.5	156.5	277.3	44.9	54.9	177.4
Ոչ աղքատ (5-10-րդ դեցիլ)	547.1	122.3	95.1	329.6	633.6	176.5	169.9	287.2
Ընդամենը	882.0	175.0	157.0	550.1	999.8	229.0	238.7	532.1

* 16-63 տարեկան բնակչության համար:

132. Զբաղվածության աճի պատճառով կրճատվել է մաս գործազրկության մակարդակը և՛ Երևանում, և՛ այլ քաղաքներում, ինչպես մաս կրճատվել է խզումը ՏՏԿԱՀ տվյալների հիման վրա հաշվարկված և պաշտոնապես գրանցված գործազրկության մակարդակի միջև (Աղյուսակ 2.23): Ելնելով գյուղական վայրերի առանձնահատկություններից՝ գործազրկության մակարդակը այնտեղ ամենացածրն է:

133. Նոր աշխատատեղերի ստեղծման և զբաղվածության աճի հետ մեկտեղ, արագ աճել են զբաղվածների աշխատանքային եկամուտները, ընդ որում՝ աղքատներինը և շատ աղքատներինը՝ նկատելիորեն ավելի արագ: Այդ առումով էական է աշխատող աղքատների քանակի կրճատումը, որը տեղի է ունեցել Երևանում և, ավելի պակաս չափով, հանրապետության այլ քաղաքներում: Գյուղում⁴¹, ելնելով դրամական հարաբերությունների ավելի

⁴¹ ՏՏԿԱՀ տվյալների հիման վրա հաշվարկված՝ գյուղական ոչ աղքատ բնակչության եկամուտների կրճատումը չի համապատասխանում պաշտոնական վիճակագրության տվյալներին և պայմանավորված է ամենաբարձր՝ 9-րդ և 10-րդ դեցիլներում գյուղմթերքի վաճառքից եկամտի կտրուկ կրճատմամբ 1999թ. նկատմամբ, որը, ամենայն հավանականությամբ, չի համապատասխանում իրականությանը և պայմանավորված է ընտրանքի ձևավորման առանձնահատկություններով:

քիչ տարածված լինելուց, աշխատողների դրամական եկամուտները աճել են ավելի դանդաղ, քան քաղաքային վայրերում:

Աղյուսակ 2.22. Բնակչության զբաղվածության և տնտեսական աճով պայմանավորված ամսական եկամուտների՝ մեկ զբաղվածի հաշվով 2004թ. (ինդեքս, 1999թ. = 100)

Ցուցանիշներ	Հայաստան	Երևան	Այլ քաղաքներ	Գյուղ
Շատ աղքատ (1-ին դեցիլ)	98.0	59.7	97.4	105.6
Աղքատ (2-4-րդ դեցիլ)	113.6	112.1	115.5	113.3
Ոչ աղքատ (5-10-րդ դեցիլ)	115.8	144.3	178.5	87.1
Ընդամենը	113.4	130.9	152.1	96.7
	<i>Տնտեսական աճով պայմանավորված եկամուտները (աշխատանքային և գյուղմթերքի վաճառքից) մեկ աշխատողի հաշվով</i>			
Շատ աղքատ (1-ին դեցիլ)	326.1	983.1	748.1	379.3
Աղքատ (2-4-րդ դեցիլ)	299.9	397.5	215.4	204.5
Ոչ աղքատ (5-10-րդ դեցիլ)	133.6	178.1	105.2	81.1
Ընդամենը	142.7	230.8	126.5	78.3

Աղյուսակ 2.23. Բնակչության զբաղվածությունը և գործազրկության մակարդակը 1999- 2004թթ.

Ցուցանիշներ	1999				2004			
	Հայաստան	Երևան	Այլ քաղաքներ	Գյուղ	Հայաստան	Երևան	Այլ քաղաքներ	Գյուղ
	<i>Տնտեսապես ակտիվ բնակչությունը, %՝ բնակչության նկատմամբ</i>							
Ընդամենը	63.0	55.0	57.6	72.7	61.4	52.9	53.8	72.0
	<i>Զբաղված բնակչությունը, %՝ տնտեսապես ակտիվ բնակչության նկատմամբ</i>							
Շատ աղքատ (1-ին դեցիլ)	45.5	18.3	23.7	64.3	42.8	10.5	22.4	61.8
Աղքատ (2-4-րդ դեցիլ)	40.8	19.5	26.3	64.3	44.5	21.0	29.5	64.9
Ոչ աղքատ (5-10-րդ դեցիլ)	45.7	29.7	26.3	71.6	50.9	41.3	45.7	69.6
Ընդամենը	44.3	27.8	28.9	68.2	48.2	32.2	38.5	67.4
	<i>Գործազրկության մակարդակը ըստ ՏՏԿԱՀ, %՝ տնտեսապես ակտիվ բնակչության նկատմամբ</i>							
Շատ աղքատ (1-ին դեցիլ)	17.5	36.7	33.9	8.4	18.6	42.3	31.4	10.2
Աղքատ (2-4-րդ դեցիլ)	22.2	35.5	31.3	8.4	16.9	31.8	24.3	7.1
Ոչ աղքատ (5-10-րդ դեցիլ)	17.3	25.3	31.3	1.1	10.5	11.6	8.1	2.4
Ընդամենը	18.7	27.2	28.7	4.5	13.2	20.7	15.3	4.6
	<i>Պաշտոնապես գրանցված գործազուրկների քանակը, %՝ տնտեսապես ակտիվ բնակչության նկատմամբ</i>							
	11.2	11.0	31.9	1.6	9.6	8.7	24.0	1.3


134. Գծանկար 2.10-ը վկայում է աշխատանքի գնի էական բարձրացման մասին: 2004թ. դրությամբ «աշխատող աղքատների» խնդիրը Երևանում կարելի է համարել լուծված: Այսպես, շատ աղքատ խմբին պատկանող մեկ աշխատողի եկամուտը կազմել էր աղքատության գծի 113 տոկոսը՝ 1999թ. 13 տոկոսի փոխարեն: Ինչ վերաբերում է աղքատների խմբին պատկանող աշխատողի եկամտին, ապա այն կազմել է աղքատության գծի 276 տոկոսը՝ 1999թ. 76 տոկոսի փոխարեն:

135. Այլ քաղաքներում, չնայած մեկ աշխատողի եկամուտների առաջանցիկ աճին, դրանք առ խմբին պատկանող աշխատողի եկամուտը 2004թ. կազմել էր աղքատության գծի 84 տոկոսը կամ մոտ 2 անգամ ավելի, քան 1999թ.: Դրանով է նաև բացատրվում գրանցված գործազուրկների բարձր տոկոսը Հայաստանի այլ քաղաքներում՝ համեմատած Երևանի հետ:

136. Աղյուսակ 2.21-ը ևս մեկ անգամ գալիս է ապացուցելու, որ տնտեսական կյանքը ավելի ու ավելի է կենտրոնանում մայրաքաղաքում: Այսպես, 1999թ. աշխատողների եկամուտների տարբերությունը Երևանի և Հայաստանի այլ քաղաքների միջև կազմել էր ընդամենը 6.8%,

իսկ 2004թ.՝ արդեն մոտ 2 անգամ, որը համապատասխանում է Երևանի և այլ քաղաքների 1 շնչին բաժին ընկնող ՀՆԱ-ի հարաբերակցությանը, որը կազմել էր մոտ 250 տոկոս:

Գծանկար 2.10. Տնտեսական աճով պայմանավորված եկամուտների հարաբերությունը աղքատության գծին 1999 և 2004 թվականներին



137. Այսպիսով՝ զբաղվածության և աղքատության կապը Հայաստանում, որը 1999թ. մոտավորապես նույն բնույթը ուներ Երևանում, այլ քաղաքներում և գյուղական վայրերում, ներկայումս էականորեն տարբերվում է: Երևանում, որտեղ հիմնականում լուծված է գրկությունն է, որի մակարդակը շատ աղքատ բնակչության համար մոտ 3.6, իսկ աղքատ բնակչության համար մոտ 2.7 անգամ ավելի էր, քան ոչ աղքատների համար, և տնտեսական քաղաքականությունը պետք է ուղղված լինի նոր աշխատատեղերի ստեղծմանը, առավել նպաստավոր պայմանների ապահովմանը:

138. Ինչ վերաբերում է հանրապետության այլ քաղաքներին, ապա գործազրկությունը՝ որպես աղքատության հիմնական պատճառ, դեռ ուղեկցվում է ցածր աշխատանքային եկամուտներով, հետևաբար՝ տնտեսական քաղաքականությունը պետք է ուղղված լինի ոչ միայն աշխատատեղերի, այլ նաև բարձր ավելացված արժեք արտադրող աշխատատեղերի ստեղծման խրախուսմանը:

139. Գյուղական վայրերում հիմնական խնդիր է մնում արտադրության ապրանքայնության աստիճանի և ոչ գյուղատնտեսական զբաղվածության հնարավորությունների բարձրացումը, հետևաբար՝ տնտեսական քաղաքականությունը պետք է ուղղված լինի այդ խնդիրների լուծմանը:

2.7. Աղքատության այլընտրանքային գնահատականները

140. Աղյուսակ 2.24-ում ներկայացված են աղքատության այլընտրանքային գնահատականները 1999-2005թթ. համար: 6 տարվա ընթացքում Հայաստանում վերացել է զարգացող երկրներում միջազգային համեմատությունների համար օգտագործվող՝ օրական մեկ և 2,15 միջազգային դոլարով չափվող⁴² աղքատությունը, իսկ Արևելյան Եվրոպայի և

⁴² Օրական մեկ միջազգային դոլարին հավասար աղքատության գիծը օգտագործվում է Համաշխարհային բանկի և Հազարամյակի զարգացման նպատակների կողմից՝ Աֆրիկայի և Հարավային Ասիայի զարգացող երկրների աղքատության մակարդակը գնահատելու նպատակով, իսկ օրական 2.15 միջազգային դոլար

ԱՊՀ եկամտային ցածր միջին խմբին պատկանող երկրների համար որպես անապահովության վերին սահման համարվող՝ օրական 4.30 միջազգային դոլարով չափվող աղքատությունը Հայաստանում կրճատվել է համարյա չորս անգամ և 2005թ. դրությամբ ավելի ցածր է, քան ազգային աղքատության գծով չափվող աղքատությունը:

Աղյուսակ 2.24. Աղքատության այլընտրանքային գնահատականները 1999- 2005թթ.

Ցուցանիշներ	1999*	2001*	2004	2005
	<i>տոկոս՝ բնակչության թվաքանակի նկատմամբ</i>			
Օրական 1 միջազգային դոլարից պակաս	7.54	3.4	0.1	0.0
Օրական 2.15 միջազգային դոլարից պակաս	43.5	36.1	1.8	0.8
Օրական 4.30 միջազգային դոլարից պակաս	86.2	81.8	34.4	23.2
Օրական 11 միջազգային դոլարից պակաս				85.6
Նվազագույն պարենային զամբյուղից պակաս				7.2
Նվազագույն սպառողական զամբյուղից պակաս				41.2
<i>Հուշագրային հոդվածներ</i>				
1 միջազգային դոլարի գնողունակությունը	3.26	3.38	3.61	3.08
Ազգային պարենային աղքատության գիծը միջազգային դոլարներով, օրը՝ 1 շնչի հաշվով	2.27	2.27	2.81	2.98
Ազգային աղքատության գիծը միջազգային դոլարներով, օրը՝ 1 շնչին	3.58	3.58	4.36	4.56
Նվազագույն սպառողական պարենային զամբյուղ, դրամ՝ ամիսը				18,309
Նվազագույն սպառողական զամբյուղ, դրամ՝ ամիսը				29,843

* 1999 և 2001թթ. համար՝ 2 և 4 միջազգային դոլար:

141. Չարգացած երկրներում աղքատության մակարդակների համեմատության համար օգտագործվող՝ օրական 11 միջազգային դոլար աղքատության գծի՝ Հայաստանի պայմանների համար կիրառման դեպքում (2005թ. դրամական համարժեքով այն կազմել է ամսական 48 972 դրամ՝ մեկ շնչին) աղքատության մակարդակը կկազմեր 85.6 տոկոս:

142. Ծայրահեղ աղքատության մակարդակը, այն դեպքում, երբ որպես պարենային աղքատության գիծ օգտագործվում է նվազագույն պարենային զամբյուղը⁴³, 2005թ. կազմել էր 7.2%, իսկ աղքատության մակարդակը՝ նվազագույն սպառողական զամբյուղը որպես ընդհանուր աղքատության գիծ⁴⁴ օգտագործելու դեպքում՝ 41.2%, որը համապատասխանում է 2003թ. աղքատության մակարդակին:

143. Աղքատության (ներառյալ ծայրահեղ աղքատության) մակարդակի արագ կրճատումը, որը, համաձայն ԿԶԾ-ի կանխատեսումների, կշարունակվի նաև միջնաժամկետ հեռանկարում, հնարավորություններ կընձեռի օգտագործելու նվազագույն պարենային և նվազագույն սպառողական զամբյուղները՝ որպես ծայրահեղ և ընդհանուր աղքատության գծեր, արդեն ԿԶԾ-ի գործողության ժամկետում:

աղքատության գիծը օգտագործվում է ԱՊՀ երկրներում ծայրահեղ աղքատության մակարդակը գնահատելու համար:

⁴³ Հաշվարկվում է ՀՀ ԱՎԾ-ի կողմից՝ ըստ ՀՀ առողջապահության նախարարության կողմից մշակված սննդամթերքի կազմի, կառուցվածքի և էներգետիկայի (2,412 կկալ՝ օրական), որը 2005թ. կազմել է ամսական 17870 դրամ՝ մեկ շնչին:

⁴⁴ ՀՀ ԱՎԾ-ի կողմից հաշվարկված (ըստ ՀՀ առողջապահության նախարարության կողմից մշակված սննդամթերքի կազմի, կառուցվածքի և էներգետիկայի) նվազագույն սպառողական զամբյուղը 2005թ. կազմել է ամսական 29843 դրամ՝ մեկ շնչին:

3. Նյութական աղքատության կրճատման ԿԶԾ-ի նպատակները

144. Ծրագրի մակրոտնտեսական շրջանակին համապատասխան՝ բարձր ու շարունակական տնտեսական աճի և սոցիալական քաղաքականությանը ուղղված պետական միջոցների առաջանցիկ աճի և դրա նպատակայնության բարձրացմանը ուղղված միջոցառումների իրականացման շնորհիվ նախատեսվում է աղքատ բնակչության քանակը համապատասխանաբար կրճատել մինչև 14.0%՝ 2012թ., 10.1%՝ 2015թ. և 6.8%՝ 2021թ.՝ 2006թ. 26.0%-ի փոխարեն: Աղքատությունը էականորեն կկրճատվի Հայաստանի բոլոր մարզերում՝ ինչպես քաղաքներում, այնպես էլ գյուղական վայրերում:

145. Այսպես, Երևանում աղքատ բնակչության քանակը համապատասխանաբար կկազմի 8.7%՝ 2012թ., 5.4%՝ 2015թ. և 3.2%՝ 2021թ.՝ 2006թ. 19.6%-ի փոխարեն, և աղքատությունը⁴⁵ կդադարի լուրջ սոցիալական հիմնահարց հանդիսանալ արդեն 2015 թվականից: Աղքատության նմանօրինակ կրճատումը Երևանում պայմանավորված է հիմնականում տնտեսական աճի կանխատեսվող ավելի բարձր տեմպերով, քան հանրապետության այլ քաղաքներում և գյուղական վայրերում, որը, իր հերթին, պայմանավորված է այն հանգամանքով, որ տնտեսության ամենաարագ աճող ճյուղերը հիմնականում կենտրոնացված են Երևանում, ինչպես նաև սոցիալական օժանդակության հատկացման ներկայիս նպատակայնության ավելի բարձր աստիճանով, որը կպահպանվի նաև ԿԶԾ-ի գործողության ժամանակ:

146. Հանրապետության այլ քաղաքներում աղքատ բնակչության քանակը համապատասխանաբար կկազմի 18.5%՝ 2012թ., 13.1%՝ 2015թ. և 8.4%՝ 2021թ.՝ 2006թ. 34%-ի փոխարեն, կամ կկրճատվի ավելի քան հինգ անգամ: Նմանօրինակ կրճատումը կպահանջի տնտեսական աճի տեմպերի նկատելի արագացում, որին կնպաստեն տարածքային զարգացման անհավասարաչափությունները մեղմելուն ուղղված՝ ծրագրով նախատեսված միջոցառումները:

147. Ինչ վերաբերում է գյուղական աղքատությանը, ապա աղքատ բնակչության քանակը համապատասխանաբար կկազմի 14.9%՝ 2012թ., 11.6%՝ 2015թ. և 9.1%՝ 2021թ.՝ 2005թ. 26.6%-ի փոխարեն: Գյուղական աղքատության ավելի դանդաղ կրճատումը, Երևանի և հանրապետության այլ քաղաքների համեմատ, պայմանավորված կլինի գյուղական վայրերում հիմնական գյուղատնտեսական ոլորտի աճի կանխատեսվող ավելի դանդաղ տեմպերով:

148. Ծայրահեղ աղքատությունը, ըստ էության, կվերանա մինչև 2015թ., երբ, ԿԶԾ-ի կանխատեսումներով, միջինը կկազմի 1.6%, որից՝ Երևանում՝ 0.8%, հանրապետության այլ քաղաքներում՝ 2.2%, իսկ գյուղական վայրերում՝ 1.8%՝ 2006թ. միջին 4.2%-ի, Երևանի՝ 2.7%-ի, հանրապետության այլ քաղաքների՝ 6.4%-ի և գյուղական վայրերի 3.0%-ի փոխարեն:

149. Աղքատության նմանօրինակ կրճատման հիմնական գործոններ կհանդիսանան աղքատ բնակչության աշխատանքային եկամուտների առաջանցիկ աճը և զբաղվածության մակարդակի ավելացումը, ինչպես նաև կենսաթոշակների առաջանցիկ աճը և նպաստային համակարգի նպատակայնության ավելացումը:

150. Աղքատության կանխատեսվող արագ կրճատմանը զուգընթաց, ԿԶԾ-ն նախատեսում է 2018 թվականից անցում կատարել նվազագույն սպառողական զամբյուղին՝ որպես աղքատության նոր շեմի և նվազագույն պարենային զամբյուղին՝ որպես ծայրահեղ աղքատության նոր շեմի:

⁴⁵ Ներկայիս աղքատության գծով չափվող:

151. Աղքատության կրճատման հետ կապված հիմնական ցուցանիշները ներկայացված են Աղյուսակ 3.1-ում:

Աղյուսակ 3.1. Աղքատության կրճատման հիմնական նպատակային ցուցանիշները

Ցուցանիշներ	2006	2012	2015	2018	2021
Հայաստան					
Աղքատներ, % բնակչության թվից	26.0%	14.0%	10.1%	8.4%	6.8%
Աղքատներ, թվաքանակ, հազ. մարդ	839	459	335	283	230
Ծայրահեղ աղքատներ, % բնակչության թվից	4.2%	2.1%	1.6%	1.4%	1.2%
Ծայրահեղ աղքատներ, հազ. մարդ	134	69	53	47	41
Աղքատության շեմ, ամսական, դրամ	21 555	28707	31366	34280	37455
Ծայրահեղ աղքատության շեմ, ամսական, դրամ	14300	19045	20809	22742	24848
Երևան					
Աղքատներ, % բնակչության թվից	19.6%	8.7%	5.4%	4.3%	3.2 %
Աղքատներ, թվաքանակ, հազ. մարդ	216	98	62	50	37
Ծայրահեղ աղքատներ, % բնակչության թվից	2.7%	1.1%	0.8%	0.6%	0.4%
Ծայրահեղ աղքատներ, հազ. մարդ	30	12	9	7	5
Այլ քաղաքներ					
Աղքատներ, % բնակչության թվից	34.0%	18.5%	13.1%	10.6%	8.1%
Աղքատներ, թվաքանակ, հազ. մարդ	327	182	131	107	82
Ծայրահեղ աղքատներ, % բնակչության թվից	6.4%	2.9%	2.2%	1.9%	1.5%
Ծայրահեղ աղքատներ, հազ. մարդ	62	29	22	19	15
Գյուղ					
Աղքատներ, % բնակչության թվից	26.6%	14.9%	11.6%	10.3%	9.1%
Աղքատներ, թվաքանակ, հազ. մարդ	309	177	139	126	111
Ծայրահեղ աղքատներ, % բնակչության թվից	3.0%	2.3%	1.8%	1.7%	1.6%
Ծայրահեղ աղքատներ, հազ. մարդ	35	27	22	21	19
Աղքատությունը՝ հաշվարկված ՆԱԶ-ով					
Աղքատներ, % բնակչության թվից	39.8%	24.8%	19.3%	15.3%	11.4%
Աղքատներ, թվաքանակ, հազ. մարդ	1283	812	640	515	385
Նվազագույն սպառողական զամբյուղ, ամսական, դրամ*	31 961	42 566	46 509	50 829	55 537

* Երրորդ եռամսյակի միջին գներով:

152. Ինչ վերաբերում է բնակչության առանձին խմբերի աղքատության մակարդակին, ԿԶԾ-ի նպատակադրումները բերված են Աղյուսակ 3.2-ում: Ինչպես ցույց է տալիս Աղյուսակ 3.2-ը, աղքատության մակարդակները հիմնովին կրճատվում են բնակչության բոլոր նշված խմբերի համար: Աղյուսակը վկայում է նաև ԿԶԾ-ում ընդունված կենսաթոշակների առաջանցիկ աճի ապահովման պետական քաղաքականության էական ազդեցության մասին կենսաթոշակառուների և հաշմանդամների աղքատության մակարդակների արագ կրճատման վրա:

153. Այդ քաղաքականության ամենացայտուն արտահայտությունը աղքատության ըստ ամենայնի վերացումն է միայնակ թոշակառուների սոցիալական խմբում՝ սկսած 2015թ., որը հիմնականում պայմանավորված կլինի կենսաթոշակների առաջանցիկ աճով, ինչպես նաև հիմնական թոշակի չափը աղքատության շեմին համապատասխանեցնելու քաղաքականությամբ: Այդ աճը նաև պայմանավորում է աղքատության մակարդակի՝ միջին հանրապետականից ավելի արագ կրճատումը կենսաթոշակ ստացող բոլոր սոցիալական խմբերի համար՝ ներառյալ հաշմանդամներն և մանկուց հաշմանդամները:⁴⁶

154. Ինչ վերաբերում է երեխաներին, ապա նրանց աղքատության մակարդակի կրճատումը պայմանավորված կլինի ինչպես տնտեսական աճով, որի հիմնական ազդեցությունը կարտահայտվի վարձու աշխատողների եկամուտների աճի մեջ, որոնք արդեն

⁴⁶ Վերջինների համար աղքատության մակարդակը 2021թ. կկրճատվի մոտ 12 անգամ, 2006թ. 48.3 տոկոսից մինչև 3.9 տոկոս՝ 2021թ.:

իսկ հանդիսանում են տնային տնտեսությունների եկամուտների հիմնական աղբյուրը⁴⁷, այնպես էլ սոցիալական օժանդակության քաղաքականությամբ, որտեղ ընտանեկան նպաստներ ստացող հիմնական նպատակային խումբը կշարունակեն մնալ երեխաներ ունեցող աղքատ տնային տնտեսությունները:

Աղյուսակ 3.2. Աղքատության կրճատման հիմնական նպատակային ցուցանիշները՝ ըստ բնակչության առանձին խմբերի

Ցուցանիշներ	2005		2006		2012		2015		2021	
	Փաստ.				ԿԶԾ-ի կանխատեսումներ					
	Աղքատ	Շատ աղքատ	Աղքատ	Շատ աղքատ	Աղքատ	Շատ աղքատ	Աղքատ	Շատ աղքատ	Աղքատ	Շատ աղքատ
5-16 տարեկան երեխաներ	33.1	5.2	26.5	4.3	12.6	1.8	8.7	1.4	6.8	1.1
Սինչև 5 տարեկան երեխաներ	34.9	5.1	35.3	5.6	12.9	1.9	9.6	1.4	6.7	1.2
Կենսաթոշակառուներ	30.0	3.9	26.5	4.6	5.8	0.6	3.2	0.3	1.0	0.1
Միայնակ կենսաթոշակառուներ	20.0	0.0	19.2	0.0	8.0	0.0	0.0	0.0	0.0	0.0
75 և ավելի տարիք ունեցող անձինք	30.5	5.2	29.5	4.9	3.6	0.4	2.9	0.2	0.5	0.1
1-ն կարգի հաշմանդամներ	27.3	1.9	27.2	1.5	9.0	1.6	6.5	1.0	2.2	0.6
2-րդ կարգի հաշմանդամներ	33.1	4.2	31.6	4.1	10.4	1.1	6.0	0.6	2.6	0.5
3-րդ կարգի հաշմանդամներ	36.2	7.7	35.8	7.9	12.8	2.0	8.2	1.4	4.2	0.8
Մանկուց հաշմանդամներ	51.9	10.6	48.3	11.2	13.7	1.7	7.8	0.6	3.9	0.5
Վարձու աշխատողներ	22.7	3.0	21.3	2.2	3.6	0.3	2.4	0.2	1.5	0.1
Ինքնազբաղվածներ	27.3	3.2	23.9	2.8	14.1	2.1	11.2	1.7	7.5	1.4

⁴⁷ 2005թ. ՏՏԿԱՀ տվյալներով՝ վարձու աշխատանքից ստացված եկամուտները կազմել են տնային տնտեսությունների ընդհանուր դրամական եկամուտների շուրջ 53 տոկոսը: ԿԶԾ-ի կանխատեսումներով ենթադրվում է, որ վարձու աշխատանքից եկամտի տեսակարար կշիռը ընդհանուր դրամական եկամուտների մեջ 2008-2021թթ. կպահպանվի 52-53 տոկոսի շրջակայքում:

4. Մակրոտնտեսական շրջանակ

4.1. 2003-2007 թթ. մակրոտնտեսական հիմնական զարգացումները

155. Մակրոտնտեսական ցուցանիշների փաստացի շարժընթացը, մասնավորապես՝ տնտեսական աճի տեմպերը, որոշակիորեն շեղվել են ԱՀՌԾ-ի մակրոտնտեսական ցուցանիշների նախատեսված սցենարից, սակայն, ընդհանուր առմամբ, ԱՀՌԾ-ով նախանշված միտումները համընկել են:

4.1.1. Իրական հատված

156. 2003-2007 թթ. ՀՀ-ում արձանագրվել է միջինում տարեկան 13.1 տոկոս տնտեսական աճ՝ ԱՀՌԾ-ով նախատեսված 6.2 տոկոսի փոխարեն: Ընդ որում, տնտեսական աճի՝ ծրագրվածից ավելի բարձր տեմպին մասնակցել են տնտեսության գրեթե բոլոր հիմնական ճյուղերը: Միաժամանակ նշենք, որ ՀՆԱ-ի կառուցվածքում զգալիորեն մեծացել է տնտեսության ոչ արտահանելի հատվածի դերը, այսինքն՝ շարունակվել են պահանջարկի աճով պայմանավորված տնտեսական աճի դրսևորումները:

157. Այսպես, **շինարարության** ճյուղում 2003-2007թթ. աճը միջին տարեկան կտրվածքով կազմել է 28.5 տոկոս՝ ծրագրված 9.9 տոկոսի փոխարեն, որի արդյունքում ճյուղի տեսակարար կշիռը ՀՆԱ-ում մեծացել է 2007 թ., նախատեսված 15.7 տոկոսի փոխարեն, կազմել է 24.7 տոկոս: Ըստ տարիների՝ շինարարության ճյուղի աճի տեմպերը կազմել են. 2003 թ.՝ 45.5 տոկոս, 2004 թ.՝ 15.3 տոկոս, 2005թ.՝ 27.9 տոկոս, 2006 թ.՝ 37.7 տոկոս և 2007 թ.՝ 18.6 տոկոս: Շինարարության աննախադեպ աճը պայմանավորվել է հիմնականում մասնավոր ներդրումների, այդ թվում՝ հատկապես բնակարանային շինարարության ծավալների աճով: Վերջինիս հիմնական պատճառը եղել է արտերկրից դրամական փոխանցումների և, զուգահեռաբար, բնակչության խնայողությունների՝ նախորդ տարիների համեմատ ավելի բարձր տեմպով աճը:

158. Եկամուտների աճով է պայմանավորվել նաև **ծառայությունների** նկատմամբ բարձր պահանջարկը: 2003-2007թթ. ծառայության ոլորտի միջին աճի տեմպը կազմել է 13.5 տոկոս՝ նախատեսված 7 տոկոսի փոխարեն, որի արդյունքում ճյուղի տեսակարար կշիռը ՀՆԱ-ում 2007 թ. կազմել է 33.2 տոկոս:

159. Ծրագրվածից ավելի ցածր աճ է արձանագրվել **արդյունաբերության** ճյուղում: Այս ճյուղի աճը, 2002-2003 թթ. սկսած, հիմնականում պայմանավորվել է մետաղի հումքի արդյունահանման և մետաղի վերամշակման ծավալների աճով: Ընդհանուր առմամբ, ճյուղի միջին աճը 2003-2007 թթ. կազմել է 4.6 տոկոս՝ նախատեսված 6.6 տոկոսի փոխարեն: Սա մեծամասամբ պայմանավորված է 2006 թվականին արդյունաբերության ճյուղի անկմամբ (2005 թ. նկատմամբ՝ 2.5 տոկոսով), ինչի հիմնական պատճառ կարելի է համարել քիմիական արդյունաբերության, ադամանդագործության և ծխախոտի արտադրության ծավալների կրճատումը 2006 թվականին: Ըստ տարիների՝ արդյունաբերության աճի տեմպերը կազմել են. 2003 թ.՝ 15.6 տոկոս, 2004 թ.՝ 2.2 տոկոս և 2005 թ.՝ 5.6 տոկոս: 2007թ-ին արդյունաբերության ճյուղի աճի տեմպը կազմել է 3.1%: Արդյունաբերության ճյուղում կատարվել են նաև խոշորածավալ օտարերկրյա ներդրումներ, ինչը մի կողմից նպաստել է ներդրումների ընդհանուր մակարդակի մեծացմանը, մյուս կողմից՝ ճյուղում աճի տեմպերի ապահովմանը:

160. **Գյուղատնտեսության** աճը հիմնականում պայմանավորվել է բարենպաստ բնակլիմայական պայմաններով և ցանքատարածությունների ավելացմամբ: 2003-2007 թթ. ճյուղի միջին տարեկան աճը կազմել է 8.0 տոկոս՝ ծրագրված 2.4 տոկոսի փոխարեն: Ընդ

որում, հիմնական շեղումը ծրագրվածից արձանագրվել է 2004-2005 թթ., երբ փաստացի աճը համապատասխանաբար կազմել է 14.2 և 11.2 տոկոս:

161. Այդուհանդերձ, վերոնշյալ զարգացումների ներքո շինարարության ճյուղի առաջանցիկ աճը և ծառայությունների ճյուղի մեկնարկային բարձր մասնաբաժինը ՀՆԱ-ում հանգեցրել են ՀՆԱ-ում արդյունաբերության և գյուղատնտեսության ճյուղերի տեսակարար կշիռների նվազմանը:

162. 2003-2007 թթ. տեղաշարժեր են արձանագրվել նաև տնտեսության **սպառման և խնայողությունների** հարաբերակցություններում: Տնտեսական բարձր աճով և արտերկրից ստացվող դրամական փոխանցումների խոշորածավալ հոսքերով պայմանավորված՝ ազգային խնայողությունները ավելացել են, որոնց զգալի մասը, հիմնականում, շրջանցելով ֆինանսական հատվածը, վերածվել է ներդրումների: Այս պարագայում աճել է հատկապես մասնավոր ներդրումների ծավալը, այդ թվում՝ բնակարանային շինարարության ոլորտում կատարվող: Այսպես, 2007 թ. ներդրումների տեսակարար կշիռը ՀՆԱ-ում մոտ 16.3 տոկոսային կետով ավելի բարձր է եղել կանխատեսվածից՝ կազմելով 37.3 տոկոս, իսկ ազգային խնայողությունների տեսակարար կշիռը, ըստ գնահատումների, կազմել է 32 տոկոս՝ գերազանցելով կանխատեսված մակարդակը մոտ 16 տոկոսային կետով⁴⁸:

163. Տնտեսության զարգացման նշված միտումներով պայմանավորված՝ 2003-2007 թթ. էական աճ է արձանագրվել նաև մեկ շնչին բաժին ընկնող ՀՆԱ-ի գծով: Այսպես, 2007 թ. մեկ շնչին բաժին ընկնող ՀՆԱ-ն դոլարային արտահայտությամբ կազմել է 2,853 ԱՄՆ դոլար՝ 2002 թ. 740 ԱՄՆ դոլարի փոխարեն:

4.1.2. Գներ

Սպառողական գների աճը 2003-2007 թթ. կազմել է միջինում տարեկան 4.4 տոկոս՝ ծրագրված տարեկան 3 տոկոսի փոխարեն⁴⁹: Ընդ որում, շեղման հիմնական պատճառը 2003թ. արձանագրված գնաճի բարձր մակարդակն է եղել (8.6 տոկոս): Վերջինս էլ իր հերթին պայմանավորված է եղել համաշխարհային շուկայում ցորենի միջազգային գների 30 տոկոսից ավել աճի արդյունքում սպառողական ապրանքների զամբյուղի մեկ ապրանքախմբի՝ հացամթերքների գների աննախադեպ բարձր աճով: Հատկանշական էր նաև 2007 թվականը, երբ համաշխարհային ապրանքային և ֆինանսական շուկաներում տեղի ունեցան անկանխատեսելի փոփոխություններ (անշարժ գույքի շուկաների անկում, ԱՄՆ դոլարի դիրքերի թուլացում, պարենային և հումքային ապրանքների գների էական աճ և այլն), որոնք էլ հիմնականում պայմանավորեցին գնաճային դրսևորումները Հայաստանում: 2007 թվականին 2006 թվականի դեկտեմբերի նկատմամբ գրանցվել է 6.6 տոկոս գնաճ, որի 5.2 տոկոսային կետը պայմանավորված է եղել պարենային ապրանքների համաշխարհային գների աննախադեպ աճի հետևանքով ներքին շուկայում պարենային ապրանքների գնաճով:

4.1.3. Արտաքին հատվածի զարգացումները

164. 2004-2007 թթ. տնտեսության արտաքին հատվածին բնորոշ է եղել ՀՀ առևտրային և ընթացիկ հաշվի հաշվեկշիռների (և դոլարային արտահայտությամբ անվանական արժեքի և որպես կշիռ ՀՆԱ-ում) վատթարացման միտումը: Դա պայմանավորված է եղել արտահանման ծավալների աճի նկատմամբ ներմուծման ծավալների առաջանցիկ աճով: Միևնույն ժամանակ ներմուծման բարձր աճի պատճառը, տնտեսությունում եկամուտների աճի և 2003 թ. երրորդ եռամսյակից սկսած, անվանական փոխարժեքի արժևորման

⁴⁸ Ազգային խնայողությունները հաշվարկված են, որպես համախառն ազգային տնօրինվող եկամտի (ՀԱՏԵ) և վերջնական սպառման տարբերություն

⁴⁹ 2007 թվականին, ՀՀ կենտրոնական բանկը վերանայել է գնաճի նպատակադրումը՝ այն սահմանելով 4% (+/-1.5%)՝ սկզբնական 3% (+/-1.5%)-ի փոխարեն:

հետևանքով ներմուծման նկատմամբ աճող պահանջարկն է եղել: Ընդ որում ներմուծման նկատմամբ պահանջարկի աճ դրսևորվել է ինչպես սպառողական այնպես էլ ներդրումային ապրանքների նկատմամբ՝ կապված նաև տնտեսությունում տեղի ունեցող կառուցվածքային տեղաշարժերի հետ: Վերոնշյալ զարգացումների արդյունքում առևտրային հաշվեկշռի բացասական մնացորդի ազդեցությունն ընթացիկ հաշվի պակասորդի վրա որոշ չափով մեղմվել են եկամուտների և տրանսֆերտների՝ կանխատեսվածից ավելի բարձր աճով (2004-2007 թթ. միջին տարեկան փաստացի աճը կազմել է 40.7 տոկոս): Արդյունքում, ընթացիկ հաշվի բացասական հաշվեկշռը 2004 թվականի 0.55 տոկոսից 2007 թվականին հասել է 6.4 տոկոսի: Այնուամենայնիվ այդ ժամանակահատվածում ցուցանիշի միջին արժեքը կազմել է 2.5 տոկոս՝ չգերազանցելով ծրագրված 5.4 տոկոս միջին ցուցանիշը:

4.1.4. Պետական ֆինանսներ

165. 2003-2007 թթ. համախմբված բյուջեի ցուցանիշները բացարձակ արտահայտությամբ զգալիորեն աճել են, սակայն զիջել են ՀՆԱ աճի տեմպերին: 2003-2007 թթ., միջին հաշվով, ՀՆԱ նկատմամբ համախմբված բյուջեի եկամուտները և ծախսերը փոքր են եղել ինչպես 2002 թ. փաստացի, այնպես էլ 2003-2007 թթ. ծրագրային ցուցանիշներից: Մասնավորապես, 2003-2007 թթ. փաստացի եկամուտներ/ՀՆԱ միջին հարաբերակցությունը, 2002 թ. համապատասխան ցուցանիշից պակաս է եղել 1.6 տոկոսային կետով, իսկ փաստացի ծախսեր/ՀՆԱ միջին հարաբերակցությունը կրճատվել է շուրջ 1 տոկոսային կետով՝ կազմելով համապատասխանաբար 20.8 և 22.3 տոկոս՝ կանխատեսված 22.2 և 24.4 տոկոսի փոխարեն: Ինչպես նախորդ տարիներին, այս տարիներին ևս բյուջեի եկամուտների գերակշիռ մասը ապահովվել է հարկային եկամուտների հաշվին: Ծախսերի կառուցվածքում տեղի ունեցած հիմնական փոփոխություններից, մասնավորապես, կարելի է նշել սոցիալական հատվածի ծախսերի կշռի ավելացումը:

166. ՀՆԱ-ի բարձր աճը չի ուղեկցվել **հարկային եկամուտների** նմանատիպ աճով: Հարկեր/ՀՆԱ հարաբերակցությունը 2003-2007 թթ. միջինում կազմել է 17.8 տոկոս՝ 2002 թ. ցուցանիշի համեմատ մնալով գրեթե անփոփոխ և 1.5 տոկոսային կետով զիջելով՝ այդ ժամանակահատվածի համար ԱՀՌԾ-ով ծրագրված ցուցանիշին: Դա հիմնականում պայմանավորված է եղել փաստացի ՀՆԱ-ի՝ ծրագրայինի համեմատ կրկնակի բարձր աճով, որին հարկման կարողությունները անմիջապես ադապտացվել չէին կարող, բացի այդ, տնտեսական աճի զգալի մասը պայմանավորվել է շինարարության ճյուղի աճով, որի մի մասը հարկումից ազատված է, իսկ մնացած մասը՝ հարկային վարչարարության տեսանկյունից՝ դժվար հարկելի: Այս պարագայում, հարկային եկամուտների ավելացման կարևոր աղբյուրներից մեկը միջնաժամկետ հեռանկարում ՀՀ Կառավարության կողմից դիտվելու է հարկային վարչարարության շարունակական բարելավումը:

167. Պետական ֆինանսների ոլորտում 2003-2007 թթ. զարգացումների արդյունքում **բյուջեի պակասորդ/ՀՆԱ** հարաբերակցությունը 2007 թ. կազմել է շուրջ 1.5 տոկոս, իսկ 2003-2007 թթ. տատանվել է 1.3-1.8 տոկոս միջակայքում:

4.2. 2008-2021 թթ. մակրոտնտեսական շրջանակի կանխատեսումներ

168. Կայուն զարգացման ծրագրի մակրոտնտեսական շրջանակի կանխատեսումների ժամանակ հաշվի են առնվել ՀՀ Կառավարության կողմից որդեգրած բարեփոխումների՝ այդ թվում նաև կենսաթոշակային բարեփոխումների ուղղություններն ու նպատակակետերը: Միևնույն ժամանակ վերոնշյալ ծրագրերում, ինչպես նաև 2009-2011 թվականների ՄԺԾԾ-ում տեղ գտած մակրոտնտեսական կանխատեսումների ցուցանիշների և այլ նպատակային ցուցիչների շրջանակները միասնականացվել են:

169. Աղքատության հաղթահարման և եկամուտների վերաբաշխման հնարավորությունների ընդլայնման հիմնական նախադրյալը շարունակելու է մնալ

երկարաժամկետ կայուն տնտեսական աճի ապահովումը: Տնտեսական աճը, մի կողմից, միջնորդավորված զբաղվածության ընդլայնմամբ, հանգեցնելու է աշխատանքային եկամուտների ավելացմանը և, մյուս կողմից, նպաստելով պետական բյուջեի եկամտային հենքի ավելացմանը, ընդարձակելու է պետության կողմից վարվող՝ եկամուտների վերաբաշխման քաղաքականության հնարավորությունները:

170. Հաշվի առնելով ՀՀ տնտեսության նախորդ տարիների զարգացումները, դրանք պայմանավորող գործոնների վարքագիծը, ինչպես նաև տնտեսության ինստիտուցիոնալ հենքի ուժեղացմանն ուղղված բարեփոխումների ընթացքը՝ կանխատեսվում է, որ առաջիկա տասնչորս տարիների ընթացքում ՀՀ տնտեսությունը կշարունակի զարգանալ կայուն տեմպերով՝ միջինում տարեկան ապահովելով մոտ 7 տոկոս աճ:

171. 1994 թվականից սկսած, մինչ այժմ, ՀՀ տնտեսությունն անընդհատ աճել է՝ միջին տարեկան կտրվածքով ապահովելով գրեթե 9.7 տոկոս աճի ցուցանիշ: Ընդ որում, վերջին հինգ տարիներին տնտեսության աճն արագացել և կազմել է տարեկան միջին 13.1 տոկոս: Չնայած այն հանգամանքին, որ 2008-2012 թթ. ՀՆԱ աճը փոքր-ինչ կզիջի վերջին հինգ տարիների միջին ցուցանիշին, այդուհանդերձ, դեռևս կրնորոշվի բավականին բարձր ցուցանիշներով: Նշված զարգացումների համատեքստում 2007 թ. ՀՆԱ իրական մակարդակը 1994 թվականի համեմատ եռապատկվել է՝ գերազանցելով 1990 թվականի մակարդակը մոտ 55 տոկոսով: Միևնույն ժամանակ, անվանական ՀՆԱ-ի միջին տարեկան 10.8 տոկոս աճի արդյունքում, 2021 թվականին, 2007 թ. համեմատ, բնակչության մեկ շնչի հաշվով ՀՆԱ-ն գրեթե կքառապատկվի:

172. Հիմնական մակրոտնտեսական ցուցանիշների գծով կանխատեսվում են հետևյալ զարգացումները (տե՛ս Աղյուսակ 4.1).

Իրական հատված: ՀՆԱ-ն կանխատեսվող ժամանակահատվածում ունենալու է աճի միտում, որի տեմպերը՝ մինչև 2011 թվականը, 2007 թ. համեմատ, թեև նվազելու են, սակայն մնալու են բարձր՝ կազմելով միջինում տարեկան 9 տոկոս: 2012-2021 թթ. տնտեսական աճի տեմպերը հարաբերականորեն կայունանալու են 6 տոկոսի շրջակայքում: Այս զարգացումները տեղի են ունենալու ներկայումս ձևավորված իրական ՀՆԱ աճի բավականին բարձր մակարդակի և ՀՆԱ ճյուղային կառուցվածքում կանխատեսվող հետևյալ փոփոխությունների արդյունքում. մինչև 2011 թվականը ՀՆԱ ճյուղային կառուցվածքում, աճող պահանջարկի գործոններով պայմանավորված, շարունակելու է առաջնորդող դեր ունենալ և տնտեսական աճի շարժիչ ուժը լինել տնտեսության ոչ արտահանելի հատվածը, մասնավորապես՝ կապիտալ շինարարության և ծառայությունների ոլորտները: 2012 թվականից սկսած՝ տնտեսության զարգացման շարժիչ ուժն աստիճանաբար կտեղափոխվի կապիտալ և գիտական ներուժի մեծացման հենքի վրա գործող ճյուղեր: Այլ խոսքով՝ տնտեսական աճը առաջիկա 5-6 տարիների ընթացքում լինելու է պահանջարկի աճով պայմանավորված, իսկ դրանից հետո աստիճանաբար առաջատար են լինելու բարձր արտադրողականություն ունեցող ոլորտները⁵⁰:

⁵⁰ Համաշխարհային տնտեսությունում երկրների զարգացման փորձը ցույց է տալիս, որ երկրների տնտեսություններն իրենց զարգացման գործընթացում երնթարկվում են մի քանի վերափոխումների (տրանսֆորմացիաների): Առաջինը ներմուծման փոխարինիչների արտադրության զարգացումն է, այնուհետև արտահանման աճն է՝ ի հաշիվ աշխատատար ճյուղերի (մրցակցային ցածր աշխատավարձերի), հետագայում անցումն է աշխատատար ճյուղերից դեպի կապիտալատար ճյուղերի և տնտեսության վերափոխման վերջին փուլը դա կապիտալատար ճյուղերից դեպի բարձր տեխնոլոգիաների կամ ասում են գիտատար ճյուղերի հենքի վրա տնտեսության զարգացումն է: ԿԶԾ-ի հիմքում մակրոկանխատեսումների ժամանակ հենց այդ սցենարն էլ դրված է՝ այն է անցում աշխատատար ճյուղերից դեպի կապիտալատար և ապա գիտատար ճյուղերի վրա հիմնված տնտեսության:

Սպառողական զննորդ՝ հաշվի առնելով վերջին ժամանակների համաշխարհային շուկաների զարգացումները (անշարժ գույքի շուկաների անկում, ԱՄՆ դոլարի դիրքերի շարունակական թուլացում, հումքային և պարենային ապրանքների գների աննախադեպ աճ, երկրներում առաջարկի գործոնով պայմանավորված գնաճի տեմպերի արագացում, գլոբալ տնտեսության աճի տեմպերի դանդաղում և այլն), ինչպես նաև նշված զարգացումներով պայմանավորված ՀՀ տնտեսությունում գնաճի ցուցանիշի բարձրացումը, առաջիկա տարիների համար կանխատեսվել է, որ գնաճը կգերազանցի ՀՀ ԿԲ նպատակային 4+/-1.5 տոկոս թիրախը: Այնուամենայնիվ, քանի որ գնաճի նման վարքագիծը հիմնականում առաջարկի գործոններով է պայմանավորված (ներմուծված ապրանքների գների աճով) և ժամանակի ընթացքում այն չեզոքանալու է ուստի գնաճի երկարաժամկետ նպատակադրումը կազմելու է միջին հաշվով տարեկան 3+/-1.5 տոկոս⁵¹: Դրան նպաստելու է ՀՀ ԿԲ գնաճի նպատակադրման ռազմավարությունը, ինչը գնաճի կառավարման գործընթացում, նախորդ ռազմավարության համեմատ, ավելի ճկուն է, ինչպես նաև հարկաբյուջետային և դրամավարկային քաղաքականությունների արդյունավետ կոորդինացումը: 2011 թվականից ՀՆԱ-ի դեֆլյատորը ծրագրավորվում է ՍԳԻ-ից փոքր-ինչ բարձր, ինչը արտացոլելու է ՀՀ տնտեսության ցածր ավելացված արժեքից բարձր ավելացված արժեքի (ավելի թանկարժեք ապրանքների) արտադրության անցման գործընթացը:

ՀՆԱ-ի ծախսային կառուցվածքում ներդրումների մասնաբաժինը առաջիկա տասնչորս տարիների ընթացքում կմնա բարձր մակարդակի վրա՝ 29-37 տոկոս: Միաժամանակ կանխատեսվում է, որ առաջիկա մի քանի տարիներին, ներդրումների կառուցվածքում գերակշռելու է ոչ արտադրական նշանակության կապիտալ շինարարությունը (հատկապես բնակարանների և շենքերի շինարարությունը)՝ արտացոլելով վերը նշված ՀՆԱ ճյուղային զարգացումների միտումը: Նշված իրավիճակում ներդրումները ՀՆԱ-ում կմնան խիստ բարձր մակարդակի վրա՝ 2008-2012թթ-ին միջինում ՀՆԱ 37.8%-ը: Այնուամենայնիվ սկսած 2010թ-ից ներդրումների կշիռը ՀՆԱ-ում կսկսի նվազել և 2021թ-ին կհասնի 29.1%՝ նախանշելով ավելի արդյունավետ և արտադրողական ներդրումների օգտագործումը: Հեռանկարում, ներդրումների նման վարքագիծը կարտացոլի վերջիններիս կառուցվածքում փոփոխությունները. կառուցվածքում աստիճանաբար կսկսեն գերակշռել արտադրական նշանակության կապիտալ ներդրումները (անցում կկատարվի ոչ արտադրողական կապիտալ ներդրումներից դեպի արտադրողական կապիտալ ներդրումներ): Միևնույն ժամանակ պետության մասնակցությունը կապիտալ շինարարությանը հետզհետե կնվազի՝ այնուհանդերձ մնալով բավականին բարձր մակարդակի վրա:

Դրամավարկային հատվածի ցուցանիշների կանխատեսման հիմնական ուղեցիղը եղել է միջնաժամկետում գնաճը մինչև 3+/-1.5 տոկոս նպատակային միջակայքում պահպանելու, ինչպես նաև տնտեսության մյուս հատվածների կանխատեսումներից բխող՝ փողի նկատմամբ պահանջարկի բավարարման անհրաժեշտությունը: Այս պայմաններում, նախատեսվել է ֆինանսական միջնորդության մակարդակի աճ, որը հանգեցնելու է փողի շրջապտույտի արագության անկմանը և մոնետիզացիայի մակարդակի մեծացմանը: Ընդ որում, սպասվում է, որ ներկայումս դրսևորվող տնտեսության դրամայնացման երևույթի շարունակականության, դրամային շուկաներում դրամային գործիքների

⁵¹ Նշված իրավիճակին էապես նպաստելու են զսպված դրամավարկային և հարկաբյուջետային քաղաքականությունները, որոնք առաջարկի գնաճով պայմանավորված գնաճային սպասումները չեն սնի լրացուցիչ պահանջարկի աճով:

բազմազանության աճի, ինչպես նաև կենսաթոշակային նոր համակարգի ներդրման պարագայում դրամային ավանդները առաջանցիկ աճ կունենա արտարժույթային ավանդների նկատմամբ: Մյուս կողմից բանկային տեխնոլոգիաների զարգացման և տնտեսության ֆորմալ գործարքների աճին զուգահեռ կանխիկ փողի նկատմամբ պահանջարկի համեմատ առաջանցիկ աճ կունենա անկանխիկ փողի նկատմամբ պահանջարկը: Արդյունքում կանխիկի կշիռը փողի զանգվածում աստիճանաբար կնվազի հոգուտ անկանխիկ փողի. Կանխիկ փողի կշիռը փողի զանգվածում 2021թ-ին կկազմի 17%: Միևնույն ժամանակ տնտեսության փողայնացման ցուցանիշը 2021 թ. կհասնի մինչև 52.8 տոկոսի:

Արտաքին հատվածի զարգացումները կրելու են հիմնականում ներքին տնտեսության զարգացումների և կառուցվածքային տեղաշարժերի, ինչպես նաև միջազգային տնտեսությանը ՀՀ տնտեսության ինտեգրման գործընթացի ազդեցությունը: Այս համատեքստում կանխատեսվում է, որ երկրի արտաքին բացվածությունը՝ հաշվարկված որպես ՀՆԱ-ում ապրանքների և ծառայությունների շրջանառության (արտահանման և ներմուծման հանրագումար) հարաբերակցություն, կանխատեսվող ժամանակահատվածի ընթացքում ունենալու է աճի միտում՝ 2007 թ. 58.3 տոկոսից 2021 թ. հասնելով մինչև 101 տոկոսի՝ ինչը նախանշելու է համաշխարհային տնտեսությանը ՀՀ տնտեսության ինտեգրման գործընթացը: Միևնույն ժամանակ, առաջիկա տարիներին ապրանքների և ծառայությունների հաշվեկշռի բացասական մնացորդը ՀՆԱ նկատմամբ մինչև 2009 թվականը, 2007 թ. համեմատ, կխորանա (մոտ 5 տոկոսային կետով) և կկազմի մոտ 25 տոկոս: Այս զարգացումները կկրեն համաշխարհային շուկայում հումքային և պարենային ապրանքների գների աճի միտումները, ինչպես նաև բնակչության եկամուտների աճի արդյունքում ներմուծվող սպառողական և ներդրումային ապրանքների նկատմամբ պահանջարկի բարձր աճի ազդեցությունը: 2012-2021 թթ. ընկած ժամանակահատվածում նշված ցուցանիշը տարեցտարի կբարելավվի (2021 թ. կազմելով շուրջ 13.5 տոկոս)՝ արտացոլելով տնտեսության ավելի արտադրողական ճյուղերի, հետևաբար՝ նաև մրցունակ ապրանքների և ծառայությունների արտահանման աճի բարձր տեմպերի ազդեցությունը: Կանխատեսվում է, որ ընթացիկ հաշվի պակասուրդ/ՀՆԱ հարաբերակցությունը կունենա գրեթե նույն վարքագիծը, որը բնորոշ է լինելու ապրանքների և ծառայությունների հաշվեկշռի ցուցանիշին: Այն է՝ մինչև 2009 թ., 2007 թ. համեմատ, ընթացիկ հաշվեկշիռը փոքր-ինչ կվատթարանա՝ 2009 թ. կազմելով ՀՆԱ 9.6 տոկոսը, այնուհետև, հաշվեկշիռը կայունորեն կբարելավվի և 2021 թ. կկազմի ՀՆԱ 4.4 տոկոսը:

ուղղվածություն: Միաժամանակ նշենք, որ կանխատեսվող ողջ ժամանակահատվածում ՀՆԱ-ի կառուցվածքը ենթարկվելու է էական փոփոխությունների: Այսպես, 2008-2011 թթ. շարունակվելու է ՀՀ տնտեսության ներկայիս զարգացումներին բնորոշ պահանջարկի աճով պայմանավորված ՀՆԱ աճի դրսևորումը: Այս պարագայում տնտեսության ճյուղային կառուցվածքում շարունակվելու են առաջնորդող տեղ զբաղեցնել շինարարության և ծառայությունների ոլորտները, որոնց առաջարկի աճը հիմնականում արձագանքում է տնտեսությունում ձևավորվող պահանջարկին, իսկ վերջիններիս արտադրողականության աճը երկարաժամկետ հեռանկարում սահմանափակ է⁵³:

174. 2011-2021 թթ. նշված միտումները որոշակիորեն փոխվելու են, ինչը պայմանավորվելու է մի շարք կառուցվածքային գործոններով: Նախ, շինարարության ոլորտների աճի բարձր տեմպերը զսպվելու են՝ այդ ոլորտում արտադրողականության աճի պոտենցիալի սահմանափակ լինելու հանգամանքով: Երկրորդ, այդ ոլորտների աճը հանգեցնելու է ՀՀ-ում աշխատավարձերի մակարդակի բարձրացման, որի պարագայում կարելի է ակնկալել սեզոնային աշխատանքի մեկնած ՀՀ քաղաքացիների վերադարձ հանրապետություն, ինչն իր հերթին ազդելու է արտերկրից եկող տրանսֆերտների ծավալների վրա (նշենք, որ ՀՀ դրամական փոխանցումներ կատարող անձանց 30.6 տոկոսը սեզոնային աշխատողներն են⁵⁴): Մյուս կողմից, նախորդ տարիներին կատարված արտադրական նշանակության կապիտալ ներդրումները աստիճանաբար հետ կբերեն կատարված ծախսերը՝ արտադրողականության աճի միջոցով, որի արդյունքում աստիճանաբար կարագանա տնտեսության, մասնավորապես՝ արդյունաբերության, ինչպես նաև այլ կապիտալատար ճյուղերի զարգացումը: Դրա հետ մեկտեղ, կատարված արդյունաբերությանը սպասարկող ծառայությունների նկատմամբ պահանջարկի աճի, ինչպես նաև, տնտեսության զարգացմանը զուգահեռ, վերջինիս կառուցվածքի բարդացման հետ, ծառայությունների ավելացված արժեքի աճի բարձր տեմպերը կպահպանվեն: Վերը նշվածի ներքո կանխատեսվում են հետևյալ զարգացումները.

2008-2011 թթ. **արդյունաբերությունում** ստեղծված ավելացված արժեքի աճի միջին տեմպը կզիջի ՀՆԱ աճի տեմպերին և կլինի բավականին ցածր՝ տարեկան 6.9 տոկոս: Արդյունքում, այդ ժամանակահատվածում ճյուղի ավելացված արժեքի կշիռը ՀՆԱ-ում միջին հաշվով կպահպանվի՝ 13.5 տոկոսի սահմաններում: Այնուհետև, 2011-2021 թթ. այս ոլորտի աճը կսկսի արագանալ և հեռանկարում կգերազանցի ՀՆԱ միջին տարեկան աճը: Այս միտումները կդրսևորվեն ճյուղում կատարվող ներդրումների արդյունքում՝ արտադրողականության աճի տեմպերի արագացման զուգակցումով: Վերջինիս միջին ցուցանիշը առաջանցիկ կլինի տնտեսության մյուս ճյուղերի արտադրողականությունների փոփոխության միջին ցուցանիշներից և կկազմի շուրջ 10.4 տոկոս:

Հաշվի առնելով **գյուղատնտեսության** յուրահատկությունները՝ կանխատեսվող ողջ ժամանակահատվածում գյուղատնտեսության աճի բարձր տեմպեր չեն ակնկալվում՝ 2008-2021 թթ. ոլորտի ավելացված արժեքը կաճի տարեկան 3.3 տոկոս միջին տեմպով:

2008-2011 թթ. **շինարարությունում** ստեղծված ավելացված արժեքի միջին տարեկան աճը կկազմի մոտ 11.0 տոկոս, իսկ ոլորտի մասնաբաժինը ՀՆԱ-ում կտատանվի ՀՆԱ-ի շուրջ 27 տոկոսի շրջակայքում: 2011 թվականից մինչև 2015թ.

⁵³ Այս մասին են վկայում նաև ռեգրեսիոն վերլուծության արդյունքում ստացված գնահատականները, ըստ որի՝ շինարարության և ծառայությունների ոլորտները մեծամասամբ պայմանավորվում են արտերկրից դրամական փոխանցումների ծավալներով (մասնավոր տրանսֆերտներով):

⁵⁴ Աղբյուրը՝ ՀՀ ԿԲ վիճակագրության վարչության «2005 թ. ՀՀ տնային տնտեսությունների կողմից արտերկրներից ստացված դրամական փոխանցումների իրական ծավալների գնահատմանն ուղղված հարցման արդյունքների ամփոփում և վերլուծություն»:

կղանդաղեն՝ միջինը կազմելով 2.8 տոկոս, իսկ սկսած 2015 թվականից՝ ճյուղի աճը կլինի գրեթե զրոյական, և ճյուղի կշիռը ՀՆԱ-ում 2021 թ. կկազմի մոտ 16 տոկոս:

2008-2021 թթ. **ծառայությունների** ոլորտի ավելացված արժեքը շարունակելու է աճել բարձր տեմպերով՝ միջին հաշվով տարեկան գրեթե 9 տոկոսով: Արդյունքում, այս ոլորտի մասնաբաժինը ՀՆԱ-ում 2021 թվականին, 2008 թվականի համեմատ, կավելանա շուրջ 12 տոկոսային կետով՝ կազմելով 43.9 տոկոս:

Տնտեսական աճի տեմպերի մասն բարձր ցուցանիշների պահպանումը, բնականաբար, չի կարող իներցիոն բնույթ ունենալ: Դա, անհրաժեշտաբար, պայմանավորված է լինելու նաև տնտեսության ինստիտուցիոնալ հենքի ամրապնդմանն ուղղված մի շարք կառուցվածքային միջոցառումների իրականացմամբ, ինչպիսիք են, մասնավորապես՝ գործարարության միջավայրի բարելավումը, ներդրումային քաղաքականության արդյունավետության բարձրացումը, արտահանման ճյուղերում արտադրողականությանը, հետևաբար և մրցունակության բարձրացմանը նպաստող գործողությունները, ինչպես նաև կրթության և գիտության ներուժի մեծացմանն ուղղված՝ այդ ոլորտի ինստիտուտների զարգացումը: Ծրագրի մակրոտնտեսական շրջանակով նախատեսվող զարգացումները ըստ **տնտեսության հիմնական ոլորտների**, ներկայացվում են Աղյուսակ 4.2-ում:

Աղյուսակ 4.2. Տնտեսության ոլորտների զարգացման հիմնական ցուցանիշների կանխատեսում

Ցուցանիշներ	2007	2008	2009	2010	2011	2015	2018	2021
	Փաստ	Կանխատեսում						
ՀՆԱ ճյուղային կառուցվածք	<i>ընթացիկ գներով, մլրդ դրամ</i>							
Արդյունաբերություն	471.9	504.6	556.2	625.9	719.3	1284.0	1888.1	2578.0
Գյուղատնտեսություն	568.5	603.1	648.5	697.5	750.0	981.4	1171.8	1378.9
Շինարարություն	777.5	987.5	1161.2	1322.4	1460.6	1799.9	1970.5	2153.2
Ծառայություններ	1015.4	1169.8	1321.2	1505.8	1725.1	2884.5	4128.6	5756.3
Զուտ անուղղակի հարկեր	315.4	406.9	482.2	551.6	625.7	888.0	1069.4	1248.1
ՀՆԱ	3148.7	3671.7	4169.3	4703.2	5280.7	7837.7	10228.4	13114.6
ՀՆԱ ճյուղային կառուցվածքը	<i>տոկոս՝ ՀՆԱ նկատմամբ</i>							
Արդյունաբերություն	15.0	13.7	13.3	13.3	13.6	16.4	18.5	19.7
Գյուղատնտեսություն	18.1	16.4	15.6	14.8	14.2	12.5	11.5	10.5
Շինարարություն	24.7	26.9	27.9	28.1	27.7	23.0	19.3	16.4
Ծառայություններ	32.2	31.9	31.7	32.0	32.7	36.8	40.4	43.9
Զուտ անուղղակի հարկեր	10.0	11.1	11.6	11.7	11.8	11.3	10.5	9.5
ՀՆԱ	100.0	100.0	100.0	100.0	100.0	100.0	100.0	100.0
Աճը՝ ըստ հիմնական ճյուղերի	<i>փոփոխությունը նախորդ տարվա նկատմամբ, տոկոս</i>							
Արդյունաբերություն	3.1	3.0	6.0	8.2	10.5	12.0	8.2	7.0
Գյուղատնտեսություն	10.2	4.0	4.4	4.1	4.0	3.0	3.0	2.5
Շինարարություն	18.6	16.3	12.0	9.5	6.2	1.0	0.0	0.0
Ծառայություններ	13.4	9.0	8.6	9.4	9.6	8.6	8.8	7.5
Զուտ անուղղակի հարկեր	32.1	23.0	15.5	10.0	10.0	6.0	4.0	3.0
ՀՆԱ	13.8	10.4	9.2	8.5	8.0	6.3	5.7	5.1

5. Տնտեսական զարգացման ռազմավարությունը

5.1. Կառավարության տնտեսական զարգացման քաղաքականության հիմնական գերակայությունները և տնտեսական քարտեզագրման գերակա ուղղությունները

175. Կայուն և բարձր տեմպերով տնտեսական զարգացման շարունակությունը 2008-2021թթ.⁵⁵ ընթացքում՝ դրա որակի անընդհատ բարձրացմամբ, հանդիսանում է Կառավարության տնտեսական քաղաքականության հիմնական նպատակը: Այդ նպատակին հասնելու համար Կառավարությունը կշարունակի և կխորացնի տնտեսության ազատականացումը՝ միևնույն ժամանակ պահպանելով ձեռք բերած մակրոտնտեսական կայունությունը:

176. 2008-2021թթ. բարձր տեմպերով տնտեսական աճն ապահովելու և դրա որակը անընդհատ բարձրացնելու նպատակին հասնելու համար Կառավարության տնտեսական քաղաքականության հիմնական գերակայությունները կլինեն.

- § Տնտեսական գործունեության ազատության և տնտեսական մրցակցության հավասար պայմանների ապահովումը բոլորի համար՝ համապատասխան հակամենաշնորհային և մրցակցության խրախուսման քաղաքականության, ինչպես նաև երկրի ինստիտուցիոնալ արդիականացմանը ուղղված քաղաքականության իրականացման միջոցով:
- § Տնտեսության մասնավոր հատվածի առաջանցիկ զարգացման ապահովումը՝ ձեռնարկատիրական միջավայրի որակի անընդհատ բարելավմանը և ՓՄՁ, հատկապես անապահով խավի ինքնազբաղվածության միջոց հանդիսացող գերփոքր և փոքր գործարարության առաջանցիկ զարգացմանը ուղղված քաղաքականության միջոցով:
- § Ներքին և արտաքին ներդրումների ծավալների առաջանցիկ աճի և կառուցվածքի բազմազանեցման խրախուսումը՝ ներդրումային միջավայրի որակի անընդհատ բարելավմանը ուղղված քաղաքականության միջոցով:
- § Ներքին և արտաքին խնայողությունների տնտեսական զարգացման նպատակների համար օգտագործման արդյունավետության և փոխառու միջոցների հասանելիության աճի խրախուսումը՝ տնտեսության ֆինանսական (ներառյալ բանկային) հատվածի առաջանցիկ զարգացմանը ուղղված քաղաքականության միջոցով:
- § Հայաստանի միջազգային մրցունակության մակարդակի անընդհատ բարձրացման ապահովումը՝ աշխատանքի արտադրողականության առաջանցիկ աճի և միավոր աշխատանքի կայուն ցածր արժեքի պահպանման խրախուսման միջոցով:
- § Համաշխարհային տնտեսությանը Հայաստանի ինտեգրման աստիճանի անընդհատ ավելացումը՝ արտահանման խրախուսմանը, արտաքին առևտրի պայմանների դյուրինացմանը և տրանսպորտային ծախսերի նվազեցմանը ուղղված տնտեսական քաղաքականության իրականացման միջոցով:

⁵⁵ ԿԶԾ-ի կանխատեսումներով՝ 2008-2021 թթ. նախատեսվում է ապահովել միջին տարեկան 6.9% տնտեսական աճ, որից 2008-2015թթ. տնտեսական աճի միջին տարեկան տեմպը պետք է կազմի 7.9%, իսկ 2016-2021թթ.՝ 5.6%:

§ Տնտեսական զարգացման որակի բարելավումը՝ «գիտելիքների» տնտեսության հիմնական կառույցների ներդրումը ապահովող քաղաքականության միջոցով, որը ուղղված կլինի տեղեկատվական և հեռահաղորդակցության տեխնոլոգիաների, գիտության և հետազոտությունների, ինչպես նաև մասնագիտական կրթության ոլորտների առաջանցիկ աճի խրախուսմանը և ապահովմանը:

177. Նշված գերակայությունների իրականացման համար կենսական նշանակություն ունի տնտեսական և հասարակական ինստիտուտների որակի և հնարավորությունների անընդհատ աճը, դրանց արդիականացումը և համապատասխանեցումը զարգացած երկրների ստանդարտներին և պահանջներին կամ այլ բառերով՝ երկրի ինստիտուցիոնալ արդիականացման անընդհատ գործընթացի ապահովումը: Այդ գործընթացի հիմքը 2008-2021թթ. կհանդիսանա Հայաստանի օրենսդրության, ինչպես նաև տնտեսական և հասարակական ինստիտուտների քայլ այլ քայլ համապատասխանեցումը ԵՄ պահանջներին և ստանդարտներին ԵՀԶ⁵⁶ շրջանակներում, որը նույնպես հանդիսանում է Կառավարության տնտեսական քաղաքականության հիմնական գերակայություններից մեկը 2008-2021թթ. համար:

Աղյուսակ 5.1. ՎՋԵԲ անցումային կարգավիճակի գնահատականները 2001 և 2006թթ.

Ցուցանիշներ	2001					2006				
	Հայաստան	ԱՊՀ	Եվրոպա	Միջինը	Առավելագույնը	Հայաստան	ԱՊՀ	Եվրոպա	Միջինը	Առավելագույնը
Մասնավորեցում	3.00	2.47	3.10	2.84	4.00	3.67	2.61	3.50	3.14	4.00
«Փոքր» մասնավորեցում	3.67	3.39	3.87	3.67	4.33	4.00	3.58	4.02	3.84	4.33
Ձեռնարկությունների վերակառուցում	2.00	1.78	2.46	2.16	3.33	2.33	1.83	2.92	2.45	3.67
Գների ազատականացում	4.33	3.70	4.17	3.98	4.33	4.33	3.72	4.23	4.02	4.33
Առևտրի և արտարժույթի փոխանակման ազատականացում	4.00	3.14	4.02	3.65	4.33	4.33	3.39	4.16	3.85	4.33
Մրցակցության քաղաքականություն	2.00	1.92	2.27	2.11	3.00	2.33	1.92	2.58	2.30	3.67
Բանկային բարեփոխումներ	2.33	1.83	2.92	2.45	4.00	2.67	2.31	3.38	2.91	4.00
Արժեթղթերի շուկա և ոչ բանկային ֆինանսական հաստատություններ	2.00	1.78	2.27	2.06	3.67	2.00	2.31	2.73	2.38	4.00
Ենթակառուցվածքային ընդհանուր բարեփոխումներ	2.33	1.78	2.65	2.28	3.67	2.33	1.94	2.85	2.46	3.67
Հեռահաղորդակցություն	2.33	2.14	3.10	2.68	4.00	2.67	2.42	3.35	2.94	4.33
Երկաթգիծ	2.00	1.92	2.73	2.37	4.00	2.00	2.00	2.94	2.52	4.33
Էներգետիկա	3.33	2.17	2.81	2.56	4.00	3.33	2.44	3.19	2.88	4.00
Ճանապարհային տնտեսություն	2.33	1.67	2.48	2.14	3.33	2.33	1.69	2.60	2.22	4.00
Ջուր և ջրահեռացում	2.00	1.53	2.87	2.29	4.00	2.00	1.67	3.00	2.41	4.00
Բարեփոխումների ընդհանուր համաթիվ	2.69	2.23	2.98	2.66	3.86	2.88	2.42	3.25	2.88	4.05

⁵⁶ Եվրոպական հարևանության քաղաքականություն, որի մեջ Հայաստանը, Հարավային Կովկասի այլ հանրապետությունների հետ միասին, ընդգրկվել է 2004թ. հունիսից: Հայաստանի համար ԵՀԶ շրջանակում գործողությունների ծրագիրը 2007-2012թթ. համար հաստատվել է 2006թ. նոյեմբերին, իսկ ԵՄ ինտեգրմանն ուղղված ԳՀՀ իրականացման 2006-2009 թթ. Ազգային ծրագիրը՝ 2006թ. մայիսին:

Աղյուսակ 5.2. ՎՋԵԲ «առաջին» և «երկրորդ» սերնդի բարեփոխումների իրականացման գնահատականները 2001 և 2006 թթ.

Երկրներ	Ընդհանուր			Առաջին սերնդի բարեփոխումներ			Երկրորդ սերնդի բարեփոխումներ		
	2001	2006	2006-2001	2001	2006	2006-2001	2001	2006	2006-2001
Հունգարիա	3.81	3.90	0.10	4.25	4.25	0.00	3.63	3.77	0.13
Էստոնիա	3.67	3.81	0.14	4.25	4.25	0.00	3.43	3.63	0.20
Չեխիայի Հանրապետություն	3.50	3.71	0.21	4.25	4.25	0.00	3.20	3.50	0.30
Լեհաստան	3.62	3.67	0.05	4.08	4.08	0.00	3.43	3.50	0.07
Սլովակիայի Հանրապետություն	3.12	3.57	0.45	4.17	4.25	0.08	2.70	3.30	0.60
Լատվիա	3.19	3.43	0.24	4.00	4.17	0.17	2.87	3.13	0.27
Լիտվա	3.19	3.43	0.24	4.00	4.25	0.25	2.87	3.10	0.23
Բուլղարիա	3.12	3.38	0.26	4.00	4.17	0.17	2.77	3.07	0.30
Խորվաթիա	3.09	3.36	0.26	3.92	4.00	0.08	2.77	3.10	0.34
Ռումինիա	3.12	3.33	0.21	3.92	4.00	0.09	2.80	3.07	0.27
Սլովենիա	3.24	3.26	0.02	3.92	3.92	0.00	2.97	3.00	0.03
Ռուսաստանի Դաշնություն	2.57	2.90	0.33	3.50	3.58	0.08	2.20	2.63	0.43
ՆՀՀ Մակեդոնիա	2.62	2.90	0.29	3.75	4.00	0.25	2.17	2.47	0.30
Ղազախստան	2.67	2.88	0.22	3.58	3.67	0.09	2.30	2.57	0.27
Հայաստան	2.69	2.88	0.19	3.75	4.08	0.33	2.27	2.40	0.13
Վրաստան	2.78	2.86	0.07	4.00	4.08	0.08	2.30	2.37	0.07
Ուկրաինա	2.50	2.74	0.24	3.33	3.67	0.34	2.17	2.37	0.20
Մոլդովա	2.64	2.71	0.07	3.67	3.75	0.08	2.23	2.30	0.07
Ալբանիա	2.55	2.69	0.14	3.92	3.92	0.00	2.00	2.20	0.20
Սոնդոլիա	2.43	2.67	0.24	3.58	3.92	0.33	1.97	2.17	0.20
Բոսնիա և Հերցեգովինա	2.21	2.57	0.36	3.00	3.34	0.34	1.90	2.27	0.37
Սերբիա	1.91	2.55	0.64	2.67	3.42	0.75	1.60	2.20	0.60
Դրոգստան	2.33	2.52	0.19	3.92	4.08	0.17	1.70	1.90	0.20
Ադրբեջան	2.24	2.43	0.19	3.17	3.42	0.25	1.87	2.03	0.17
Սոնտենեգրո	1.74	2.38	0.64	2.59	3.42	0.83	1.40	1.97	0.57
Ուզբեկստան	1.98	2.07	0.09	2.50	2.67	0.17	1.77	1.84	0.07
Տաջիկստան	1.83	2.05	0.21	3.25	3.33	0.08	1.27	1.53	0.27
Բելառուս	1.57	1.67	0.10	1.92	2.08	0.17	1.43	1.50	0.07
Թուրքմենստան	1.19	1.19	0.00	1.67	1.67	0.00	1.00	1.00	0.00
ԱՊՀ միջինը	2.23	2.39	0.16	3.17	3.33	0.15	1.85	2.02	0.17
Եվրոպական երկրների միջինը	2.98	3.25	0.27	3.79	3.98	0.19	2.66	2.95	0.29
Անցումային երկրների միջինը	2.66	2.88	0.22	3.53	3.71	0.18	2.31	2.55	0.24

178. Հայաստանի 1994-2007թթ. և հատկապես 2001-2007թթ.⁵⁷ արագ աճի հիմնական գրավականներից մեկը, այսպես կոչված՝ «առաջին սերնդի» բարեփոխումների հաջող իրականացումն է⁵⁸: Ինչպես ցույց են տալիս Աղյուսակ 5.1-ի տվյալները, Հայաստանը,

⁵⁷ 1994-2006 թթ. անընդհատ տնտեսական աճի արդյունքում ՀՆԱ-ն 2006թ. կազմել է 1990 թ. մակարդակի 136.6%-ը՝ 1993թ. 46.8%-ի փոխարեն, այսինքն՝ 13 տարվա ընթացքում աճել է մոտ 2.9 անգամ: Ընդ որում, 1994-2006թթ. միջին տարեկան տնտեսական աճը կազմել է 8.5%, որից 1994-2000թթ.՝ 5.4%, իսկ 2001-2006թթ.՝ 12.3%, որը ապահովել է ՀՆԱ կրկնապատկումը 6 տարվա ընթացքում:

⁵⁸ Ըստ ԵԶՎԲ՝ «առաջին սերնդի» բարեփոխումների քվին են դասվում մասնավորեցումը և «փոքր» սեփականաշնորհումը, որոնք անցումային երկրներում հանդիսացել են տնտեսության մասնավոր հատվածի ձևավորման հիմնական աղբյուրը, գների և արտաքին առևտրի ու փոխանակման կուրսի ազատականացումը,

համաձայն ՎՁԵԲ բարեփոխումների իրականացման գնահատականների, և՛ 2001 թ., և՛ 2006 թ. համապատասխանել էր գնահատվող 29 անցումային երկրների միջինին:

179. Միևնույն ժամանակ, տարածությունը⁵⁹ Հայաստանի և Եվրոպական երկրների միջև 2006թ., 2001թ. համեմատ, աճել է՝ 0.29-ից մինչև 0.37: Դա բացատրվում է քննարկվող ժամանակաշրջանում, այսպես կոչված՝ «երկրորդ սերնդի»⁶⁰ բարեփոխումների ավելի դանդաղ ընթացքով, քան եվրոպական անցումային և ԱՊՀ մի շարք երկրներում:

180. Աղյուսակ 5.2-ի տվյալները վկայում են, որ չնայած «առաջին սերնդի» բարեփոխումների առումով Հայաստանը 2006թ. համեմատելի էր ԵՄ-10⁶¹ երկրների միջինի հետ, առաջին տեղերում էր ԱՊՀ-ում և գերազանցում էր միջին եվրոպական մակարդակը (բոլոր եվրոպական անցումային երկրները) 0.10 կետով, «երկրորդ սերնդի» բարեփոխումները 2001-2006թթ. իրականացվում էին ոչ միայն ավելի դանդաղ, քան եվրոպական երկրներում, այլ նաև ԱՊՀ մի շարք երկրներում, որի արդյունքում այդ ոլորտում Հայաստանը ներկայումս զիջում է ոչ միայն ԵՄ-10 բոլոր երկրներին, այլ նաև Ռուսաստանի Դաշնությանը և Դազախստանին⁶²:

181. «Երկրորդ սերնդի» բարեփոխումների՝ նախատեսվածից ավելի դանդաղ իրականացման մասին է վկայում նաև ԱՀՌԾ-ի 2006թ. համար նախատեսված տնտեսական բարեփոխումների մի շարք հենանիշերին չհասնելը⁶³: Մասնավորապես, ԱՀՌԾ-ն նախատեսում էր 2006թ. համար հետևյալ հենանիշերը՝ ձեռնարկությունների վերակառուցում՝ 3 (փաստացին՝ 2.33), մրցակցության քաղաքականություն՝ 2.4 (փաստացին՝ 2.33), բանկային բարեփոխումներ՝ 3 (փաստացին՝ 2.67), ֆինանսական շուկայի և ոչ բանկային ֆինանսական հաստատությունների բարեփոխումներ՝ 2.5 (փաստացին՝ 2.0) և ենթակառուցվածքների բարեփոխումներ՝ 3 (փաստացին՝ 2.33):

182. Կառավարությունը գիտակցում է, որ երկրի զարգացման ներկայիս փուլում կայուն տնտեսական աճի ապահովումը երկարաժամկետ հեռանկարում և երկրի շարունակական ինստիտուցիոնալ արդիականացումը մեծապես կախված կլինեն «երկրորդ սերնդի» բարեփոխումների նշանակալից արագացումից և հաջող ներդրումից, որոնց իրականացման հաշվին Կառավարությունը համապատասխանաբար նախատեսում է 2010թ. գերազանցել եվրոպական անցումային երկրների 2006թ. միջին մակարդակը, 2015թ.՝ գերազանցել Լեհաստանի ներկայիս մակարդակը, իսկ 2021թ.՝ Հունգարիայի ներկայիս մակարդակը (Աղյուսակ 5.3):

2006):

⁵⁹ Չափվում է որպես բարեփոխումների ընդհանուր համաթվի (աղյուսակում բերված ոլորտների գնահատականների միջին թվաբանականի) տարբերությունը:

⁶⁰ Ըստ ՎՁԵԲ-ի՝ «երկրորդ սերնդի» բարեփոխումների շարքն են դասվում՝ ձեռնարկությունների վերակառուցումը, մրցակցության խրախուսման քաղաքականությունը, ֆինանսական ոլորտի (ներառյալ՝ բանկային) բարեփոխումները, ենթակառուցվածքային ոլորտների բարեփոխումները (ներառյալ՝ հեռահաղորդակցությունը, երկաթգիծը, էներգետիկան, ճանապարհային և ջրային տնտեսությունները):

⁶¹ ԵՄ նորանդամ անցումային երկրները:

⁶² Միևնույն ժամանակ, Կառավարությունը կարծում է, որ Հայաստանի «երկրորդ սերնդի», մասնավորապես՝ էներգետիկայի և ջրային տնտեսության բարեփոխումների ՎՁԵԲ գնահատականները հատկապես 2006թ. համար ավելի ցածր են, քան պետք է լինեին, հաշվի առած լայնածավալ բարեփոխումները էներգետիկայի և ոռոգման ոլորտներում, որոնք տեղի են ունեցել 2001-2006թթ. ընթացքում: Չնայած դրան, Կառավարությունը ԿՁԾ-ի իրականացման ընթացքում օգտագործելու է ՎՁԵԲ բարեփոխումների գնահատման մեթոդաբանությունը՝ համապատասխան գնահատականներ հաշվարկելու համար, որոնք կհանդիսանան ԿՁԾ-ի տնտեսական քաղաքականության գերակայությունների իրականացման հիմնական հենանիշերը:

⁶³ Տե՛ս Աղբատության հաղթահարման ռազմավարական ծրագիր, Երևան, 2003 թ., Աղյուսակ 6.8:

Աղյուսակ 5.3. «Առաջին» և «երկրորդ» սերնդի բարեփոխումների իրականացման հենանիշերը

Ցուցանիշներ	2006	2010	2015	2021
Մասնավորեցում	3.67	4.00	4.00	4.00
«Փոքր» մասնավորեցում	4.00	4.33	4.33	4.33
Չեռնարկությունների վերակառուցում	2.33	3.00	3.67	4.00
Գների ազատականացում	4.33	4.33	4.33	4.33
Առևտրի և տարադրամի փոխանակման ազատականացում	4.33	4.33	4.33	4.33
Մրցակցության բաղաբաղանություն	2.33	2.67	3.00	3.67
Բանկային բարեփոխումներ	2.67	3.00	3.67	4.00
Արժեթղթերի շուկա և ոչ բանկային ֆինանսական հաստատություններ	2.00	2.67	3.33	4.00
Ենթակառուցվածքային ընդհանուր բարեփոխումներ	2.33	2.67	3.33	4.00
Հեռահաղորդակցություն	2.67	3.00	3.67	4.33
Երկաթգիծ	2.00	2.67	3.33	4.00
Էներգետիկա	3.33	3.67	4.00	4.33
Մասնապարհային տնտեսություն	2.33	2.67	3.33	4.00
Ջուր և ջրահեռացում	2.00	2.67	3.33	4.00
Բարեփոխումների ընդհանուր համաթիվ	2.88	3.26	3.69	4.09

5.2. Տնտեսական մրցակցության հավասար պայմանների ապահովումը

183. Հայաստանի տնտեսության հետազոտությունները⁶⁴ վկայում են, որ միջին և երկարա-ժամկետ հեռանկարում ազատ մրցակցության պաշտպանության ներկայիս անկատար և թույլ համակարգը կարող է դառնալ երկրի կայուն զարգացման և աղքատության հաղթահարմանը միտված տնտեսական աճի հիմնական արգելքներից մեկը: Տնտեսական մրցակցության հավասար պայմանների ապահովումը և պահպանումը զարգացած երկրների ստանդարտներին համապատասխան, ինչպես վկայում է միջազգային (մասնավորապես՝ ԵՄ-10 երկրների) փորձը, բարդ, բազմատարր և երկարաժամկետ գործընթաց է և պայմանավորված կլինի մի շարք ոլորտներում իրականացվող «երկրորդ» սերնդի բարեփոխումների ընթացքով:

184. Այդ բարեփոխումները կվերաբերեն նախ և առաջ՝ ուղղակիորեն մենաշնորհների կարգավորման և մրցակցության պահպանման ոլորտին, որտեղ Կառավարությունը նախատեսում է՝

- § համապատասխանեցնել մրցակցության մասին օրենքը ԵՄ ստանդարտներին, մասնավորապես՝ հստակեցնելով միաձուլումներին և ձեռքբերումներին, ինչպես նաև փոխկապված սեփականությամբ ֆինանսական խմբերին վերաբերող դրույթները.
- § Էականորեն ուժեղացնել Տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողովի (ՏՄՊՊՀ) ինստիտուցիոնալ կարողությունները և հնարավորությունները, մասնավորապես՝ ապրանքային շուկաների հետազոտության, գերակա դիրքի որոշման, մրցակցությունը սահմանափակող միաձուլումների և ձեռքբերումների բացահայտման գործում.
- § Էականորեն հեշտացնել, արագացնել և հստակեցնել ՏՄՊՊՀ կողմից հարուցվող գործերի դատական ընթացքը:

185. Մրցակցության խրախուսման և հավասար պայմանների ապահովման գործում Էական է տնտեսության մի շարք՝ ներկայումս այս կամ այն աստիճանի մենաշնորհային ոլորտներում նոր մասնակիցների անարգելք մուտքի հնարավորության ապահովումը: Դրան

⁶⁴

կնպաստեն համապատասխան բարեփոխումները, որոնք ուղղված կլինեն ինչպես երկրի ընդհանուր ինստիտուցիոնալ արդիականացմանը, այնպես էլ տնտեսության առանձին ոլորտներում մուտքի արգելքների վերացմանը և ազատ մրցակցության վերականգնմանը:

186. Բարեփոխումների առաջին խմբին են պատկանում՝

§ պետական կառավարման որակի բարձրացումը, ներառյալ՝ կառավարման գործունեության թափանցիկության աստիճանի ավելացումը և վարչական ընթացակարգերի պարզեցումը, որի արդյունքը պետք է լինի այն բնութագրող ցուցանիշների քայլ առ քայլ բարելավումը՝ համաձայն ԿԶԾ-ի համապատասխան հենանիշերի⁶⁵.

§ գործարար և ներդրումային միջավայրի անընդհատ բարելավումը⁶⁶.

§ ստվերային տնտեսության աստիճանական կրճատումը, որը հնարավոր կդառնա մի շարք բարեփոխումների արդյունքում, ներառյալ՝ ՓՄՁ զարգացմանը, ֆինանսական միջնորդության խորացմանը և փոխառու միջոցների արժեքի կրճատմանը, ժամանակակից կորպորատիվ կառավարման ստանդարտների ներդրմանը, ինչպես նաև գործարքների օրենսդրական կարգավորման հստակեցմանը և պարզեցմանը ուղղված քաղաքականության:

187. Բարեփոխումների երկրորդ խումբը ուղղված է տնտեսության այն ոլորտներին, որտեղ տարբեր պատճառներով նոր մասնակիցների մուտքը ներկայումս սահմանափակված է, և նպատակ ունի էականորեն խրախուսելու մրցակցությունը՝ մուտքի սահմանափակումները այդ ոլորտներում վերացնելու և ազատ շուկա ձևավորելու միջոցով: Այդ բարեփոխումները նույնպես բաժանվում են երկու խմբի՝

§ մենաշնորհների էական սահմանափակումը և ազատ մրցակցության ներդրումը պետության կողմից կարգավորվող արտադրական ենթակառուցվածքի ոլորտներում, ներառյալ՝ հեռահաղորդակցությունը, էներգետիկան, երկաթգիծը և ավիացիան,

§ մուտքի սահմանափակումների վերացումը և ազատ շուկայի ձևավորումը պետության կողմից չկարգավորվող առանձին ապրանքների ներմուծման և մեծածախ առևտրի ոլորտներում, որոնք ներկայումս վերահսկվում են մեկ կամ մի

⁶⁵ Պետական կառավարման որակի բարեփոխումների ընթացքի գնահատման համար ԿԶԾ-ում կօգտագործվեն Համաշխարհային բանկի կողմից մշակված

կառավարման որակը բնութագրող քանակական գնահատականները աշխարհի մոտ 200 երկրների համար: Մրցակցության խրախուսման և հակամրցակցային վարվելակերպի սահմանափակման համար որոշիչ նշանակություն ունեն 3 ցուցանիշներ՝ քաղաքական կայունությունը, կառավարման արդյունավետությունը և կարգավորման որակը:

⁶⁶ Գործարար միջավայրի բարելավմանը ուղղված քաղաքականության ընթացքի գնահատման համար ԿԶԾ-ում որպես համապատասխան հենանիշեր կօգտագործվեն Համաշխարհային բանկի կողմից մշակված և

կարգավորման որակը և գործարարների՝ դրանց հետ կապված որոշ գործարքային ծախսերը բնութագրող քանակական ցուցանիշները: Գործարար միջավայրը բնութագրող ցուցանիշները արտահայտում են գործարարության, ներառյալ՝ համապատասխան շուկաներ մուտք գործելու, ֆորմալ (օրենսդրորեն սահմանվող) մեխանիզմների և գործարքային ծախսերի համեմատական բարենպաստության աստիճանը: Ի տարբերություն դրանց, երկրի ներդրումային միջավայրը բնութագրող ցուցանիշները, որոնք զարգացող և անցումային երկրների համար համատեղ մշակվում և հրապարակվում են Համաշխարհային բանկի և ՎՋԵԲ կողմից (BEEPS հետազոտությունները), արտահայտում են ուսումնասիրվող ձեռնարկությունների ընդհանրացված տեսակետները տվյալ երկրում ներդրումներ իրականացնելու հիմնական արգելքների (քաղաքական, օրենսդրության, պետական կառավարման, ներառյալ՝ հարկային և մաքսային ռեժիմները և վարչարարությունը, ենթակառուցվածքային և այլն), ինչպես նաև տարբեր ոլորտներում ձեռնարկությունների գործունեության պայմանների վերաբերյալ:

քանի փոխկապված ընկերությունների կողմից (մասնավորապես՝ բենզինի, ավիացիոն վառելիքի, շաքարի, ցորենի ներմուծման և մեծածախ առևտրի ոլորտներում),⁶⁷ հիմնականում հարկային և մաքսային վարչարարության կատարելագործման, տարբեր տեսակի պետական կառույցների հովանավորչական վարվելակերպի սահմանափակման և վերացման, տվյալ ոլորտներում վերագրային հայտնի ընկերությունների մուտքի խրախուսման և ՏՄՊՊՀ ինստիտուցիոնալ կարողությունների ուժեղացման միջոցով:

5.3. Գործարար միջավայրի բարելավումը

188. Վերջին մի քանի տարվա ընթացքում Հայաստանում ձևավորվել է բավականին բարենպաստ գործարար միջավայր: Ինչպես վկայում են Աղյուսակ 5.4-ի տվյալները, Հայաստանը 2006թ. դրությամբ գործարարության միջավայրի ընդհանուր որակով գրավում էր աշխարհում 39-րդ տեղը, ԵԿԱ անցումային երկրների մեջ՝ 6-րդ տեղը, իսկ սեփականության իրավունքների գրանցման հեշտության առումով առաջինն էր ԵԿԱ երկրների մեջ և երկրորդը՝ աշխարհում:

Աղյուսակ 5.4. Հայաստանի գործարար միջավայրի որակի գնահատականների համեմատությունը այլ անցումային երկրների գործարար միջավայրի գնահատականների հետ 2006թ.

Երկրներ	Ընդհանուր	1	2	3	4	5	6	7	8	9	10
Էստոնիա	17	20	14	156	21	48	33	31	7	29	50
Վրաստան	18	10	11	4	11	48	33	102	64	42	105
Լատվիա	22	30	82	96	85	13	51	20	19	3	64
Լիտվա	26	57	57	124	4	36	83	71	23	18	31
Սլովակիայի Հանրապետություն	32	72	50	75	5	7	98	122	90	50	36
Հայաստան	39	47	73	48	2	36	83	143	118	64	42
Հունգարիա	45	67	87	81	96	26	107	127	45	12	53
Բուլղարիա	46	100	103	57	62	13	33	88	89	90	72
Ռումինիա	48	26	90	145	123	13	33	134	38	37	81
Մոնղոլիա	52	62	43	64	18	68	19	90	168	27	115
Սլովենիա	55	120	62	166	99	68	19	63	69	79	34
Չեխիայի Հանրապետություն	56	91	83	55	54	26	83	113	30	97	108
Ղազախստան	71	57	173	22	72	48	51	44	178	28	100
Լեհաստան	74	129	156	78	81	68	33	125	40	68	88
ՆՀՀ Մակեդոնիա	75	21	76	128	91	48	83	104	72	84	127
Մոնտենեգրո	81	98	113	98	103	84	19	129	113	131	41
Սերբիա	86	90	149	110	115	13	64	121	58	101	103
Մոլդովա	92	81	153	93	46	97	98	111	122	17	82
Ղրղզստան	94	49	152	74	16	68	33	152	177	32	128
Ադրբեջան	96	64	159	80	56	26	107	141	173	30	75
Խորվաթիա	97	93	162	139	99	48	122	43	96	45	78
Բոսնիա և Հերցեգովինա	105	150	150	114	144	13	83	142	53	126	61
Ռուսաստանի Դաշնություն	106	50	177	101	45	156	83	130	155	19	80
Բելառուս	110	119	94	43	94	115	98	178	137	16	69
Ալբանիա	136	123	168	109	82	48	165	118	70	74	178
Ուզբեկստան	138	54	145	67	119	170	107	159	165	48	119
Ուկրաինա	139	109	174	102	138	68	141	177	120	46	140
Տաջիկստան	153	161	166	125	43	135	176	155	176	23	99
Հայաստանի տեղը	6	6	7	4	1	10	12	23	18	19	5

67

Համապատասխան թվերը բնութագրում են գործարար միջավայրի համեմատական որակը (երկրի տեղը հետազոտված 178 երկրների մեջ) հետևյալ ոլորտներում՝ 1 - նոր ձեռնարկությունների (ընկերությունների) ստեղծումը, 2 - լիցենզավորման գործընթացները, 3 - զբաղվածության կարգավորումը, 4 - սեփականության իրավունքի գրանցումը, 5 - վարկեր ստանալը, 6 - ներդրողների պաշտպանությունը, 7 - հարկեր վճարելը, 8 - միջազգային առևտրի գործառնությունները, 9 - պայմանագրերի կիրարկումը և 10 - ձեռնարկության լուծարումը:

189. Միևնույն ժամանակ, երկու կարևորագույն ոլորտներում, որոնք բնութագրում են արտաքին առևտրի իրականացման և հատկապես հարկերի վճարման հեշտության աստիճանը, գործարար միջավայրը չի կարելի համարել բարենպաստ: Այդ ցուցանիշներով Հայաստանը ԵԿԱ 28 հետազոտված երկրների մեջ գրավել է համապատասխանաբար 18-րդ և 23-րդ տեղը, որը նաև վկայում է մաքսային և հարկային վարչարարության ներկայիս անբավարար վիճակի մասին: Վիճակը բարվոք չի կարելի համարել նաև պայմանագրերի կիրարկման ոլորտում, որտեղ Հայաստանը 19-րդ տեղում է:

190. Կառավարությունը, գիտակցելով գործարար միջավայրի որակի նշանակությունը տնտեսության մասնավոր հատվածի կայուն զարգացման, ներդրումների ներգրավման և սովերային տնտեսության աստիճանական կրճատման գործում,⁶⁸ նախատեսում է ծրագրի գործունեության ժամկետում, հատկապես՝ 2008-2010թթ., էականորեն արագացնել գործարար միջավայրի բարեփոխումները, այն հաշվարկով, որ 2010թ. Հայաստանը մտնի ամենանպաստավոր գործարար միջավայր ունեցող 10 երկրների շարքը՝ հետագայում պահպանելով և ամրապնդելով իր դիրքերը լավագույն տասնյակում:

191. Աղյուսակ 5.5-ում ներկայացված են գործարարության միջավայրի բարելավման 2008-2021թթ. համար ԿՁԾ-բոլոր ցուցանիշների գծով: Հենանիշերը կառուցվել են հաշվի առնելով Հայաստանի ներկա իրավիճակը, ինչպես նաև ԵԿԱ և ՏՀԶԿ այն երկրների փորձը, որոնք 2006թ. գրավել են առաջատար դիրքեր գործարար միջավայրը բնութագրող առանձին ոլորտներում⁶⁹:

Աղյուսակ 5.5. Գործարար միջավայրի որակի հենանիշերը

Ցուցանիշներ	2006	2010	2015	2021
Ընդհանուր տեղը**	39	9	3	3
Նոր ձեռնարկությունների ստեղծումը, տեղը	47	3	3	2
Ընթացակարգերի քանակը	9	2	2	2
Տևողությունը, օր	18	3	3	3
Արժեքը, %՝ մեկ շնչի հաշվով ՀՆԱ նկատմամբ	4.8	2	2	2
Կանոնադրական կապիտալ, %՝ մեկ շնչի հաշվով ՀՆԱ նկատմամբ	3.1	0	0	0
Շինարարության թույլտվության տրամադրման գործառնություններ, տեղը	73	7	8	7
Ընթացակարգերի քանակը	19	9	9	9
Տևողությունը, օր	116	110	105	100

68

գործարարության պետական կարգավորումների հստակեցման և պարզեցման շնորհիվ էականորեն կրճատում է տնտեսության ֆորմալ հատվածում գտնվելու գործարքային ծախսերը: Միաժամանակ, վարկեր ստանալու, սեփականատերերին պաշտպանելու և պայմանագրերը կիրարկելու հեշտ և արդյունավետ մեխանիզմների առկայությունը նկատելիորեն ավելացնում է ֆորմալ հատվածում գտնվելու գրավչության աստիճանը, որը և տնտեսության սովերայնության աստիճանի նվազեցման հիմնական նախապայմաններից մեկն է:

⁶⁹ Օգտագործվել են՝ ԵԿԱ երկրներից՝ Վրաստանի, Սլովակիայի, Մոնղոլիայի, Լատվիայի, Էստոնիայի, իսկ ՏՀԶԿ երկրներից՝ Ավստրալիայի, Նոր Զելանդիայի, ԱՄՆ, Միացյալ Թագավորության, Դանիայի, Լյուքսեմբուրգի և Ճապոնիայի փորձը:

Ցուցանիշներ	2006	2010	2015	2021
Արժեքը, %՝ մեկ շնչի հաշվով ՀՆԱ նկատմամբ	411.3	30	25	25
Զբաղվածության կարգավորումը, տեղը	48	7	4	4
Աշխատանքի ընդունելու ինդեքս	33.33	0	0	0
Աշխատանքի ժամերի կոշտության ինդեքս	40	20	0	0
Աշխատանքից ազատելու բարդության ինդեքս	20	0	0	0
Զբաղվածության կոշտության ինդեքս	31	0	0	0
Աշխատանքից ազատելու արժեքը (աշխատավարձ, շաբաթ)	13	4,3	4	4
Սեփականության գրանցումը, տեղը	2	2	2	2
Ընթացակարգերի քանակը	3	2	2	2
Տևողությունը, օր	4	2	2	2
Արժեքը, սեփականության նկատմամբ, %	0.4	0.3	0.3	0.3
Վարկեր ստանալը, տեղը	36	13	3	3
Վարկային տեղեկատվության ինդեքս	5	7	7	7
Իրավական իրավունքների ինդեքս	5	6	9	9
Վարկային ռեզիստրների ծածկույթը, չափահաս բնակչության մասնաբաժինը՝ %)	16.3	25	35	45
Ներդրողների պաշտպանությունը, տեղը	83	12	9	9
Բացահայտման ինդեքս	5	8	9	9
Տնօրենի պատասխանատվության ինդեքս	2	6	8	8
Բաժնետերերի կողմից հարուցված դատական գործերի ինդեքս	8	8	8	8
Ներդրողների պաշտպանության ինդեքս	5	7	8.33	8.33
Հարկերի վճարումը, տեղը	143	80	70	50
Վճարումների քանակը	50	29	25	20
Ծախսվող ժամանակը, ժամ	1120	300	200	150
Արժեքը, %՝ մեկ շնչի հաշվով ՀՆԱ նկատմամբ	65.1	36,6	30,0	25
Միջազգային առևտուրը, տեղը	118	21	16	15
Արտահանում, փաստաթղթերի քանակը*	7	3	3	3
Արտահանման համար պահանջվող ժամանակը, օր	30	5	5	5
Արտահանման արժեքը, ԱՄՆ դոլար՝ մեկ կոնտեյնրների համար	1165	1165	1000	1000
Ներմուծում, փաստաթղթերի քանակը*	8	3	3	3
Ներմուծման համար պահանջվող ժամանակը, օր	24	5	5	5
Ներմուծման արժեքը, ԱՄՆ դոլար՝ մեկ կոնտեյնրների համար	1335	1335	1200	1200
Պայմանագրերի կիրարկումը, տեղը	64	24	9	8
Ընթացակարգերի քանակը	50	36	27	25
Տևողությունը, օր	285	285	195	170
Արժեքը, %՝ պահանջից	19	19	19	19
Չեղմարկությունների լուծարում, տեղը	42	41	37	31
Արժեքը, %՝ մեկ շնչի հաշվով ՀՆԱ նկատմամբ	4	3	3	3
Ժամանակը, տարի	1.9	1.6	1.5	1.4
Վերականգնման դրույքը, %	42	42	45	50

* Արտահանման և ներմուծման փաստաթղթերի քանակի 2006 թ. ցուցանիշներում, ըստ մեթոդաբանության, մտցված են 2-ակյան փաստաթուղթ, որոնք Վրաստանի մաքսավորները պահանջում են վրացական նավահանգստում, այսինքն՝ ՀՀ մաքսավորների կողմից արտահանման և ներմուծման համար պահանջվող փաստաթղթերը իրականում համապատասխանաբար 5 և 6 են:

** Հայաստանի համեմատական դիրքերը ինչպես գործարար միջավայրի ընդհանուր որակի, այնպես էլ առանձին ոլր

_____):

192. Բարեփոխումների շրջանակը, որոնք 2008-2021թթ. ընթացքում պետք է նպաստեն գործարար միջավայրի որակի էական բարելավմանը, վերաբերում է տնտեսության պետական կարգավորման մի շարք ոլորտներին՝ ներառելով օրենսդրական, ընթացակարգային, վարչարարական, ինչպես նաև պետության և գործարար աշխարհի փոխգործակցության մեխանիզմների փոփոխությունը: Այդ բարեփոխումները հիմնականում ուղղված կլինեն՝

§ ընթացակարգերի կրճատմանը և պարզեցմանը,

- § դրանց իրականացման համար պահանջվող ժամանակի և ֆինանսական ռեսուրսների քանակի (գործարարական ծախսերի) կրճատմանը,
- § գործարարության միջավայրի որակի աճին և ստվերայինության կրճատմանը խոչընդոտող օրենսդրական դրույթների վերացմանը,
- § պետական պաշտոնյաների և գործարարների անմիջական շփման նվազեցմանը՝

Բարեփոխումների բաշխումը ժամանակի մեջ հաշվի է առնում համապատասխան ոլորտների բարեփոխման դժվարության, ինչպես նաև ներկայիս իրավիճակի բարենպաստության աստիճանը գործարարության համար:

193. 2006թ. դրությամբ նոր ձեռնարկություն (սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն) գրանցելու համար Հայաստանում պահանջվել է 9 ընթացակարգ, այն տևել է 18 օր, գրանցման արժեքը կազմել է 38.5 հազար դրամ կամ մեկ շնչին բաժին ընկնող ՀՆԱ-ի 4.8%-ը, նվազագույն կանոնադրական կապիտալի չափը՝ 25 հազար դրամ կամ մեկ շնչին բաժին ընկնող ՀՆԱ-ի 3.1%-ը⁷⁰: 2008-2010թթ. բարեփոխումները այս ոլորտում ուղղված կլինեն՝

- § նվազագույն կանոնադրական կապիտալի ընդհանուր պահանջի վերացմանը⁷¹,
- § կնիք ունենալու պարտադիր պահանջի աստիճանաբար վերացմանը՝ մինչև 2012 թ. ամբողջությամբ վերացնելով այդ պահանջը,
- § պետական գրանցման, հարկատուի հաշվառման համար ստանալու և վիճակագրական ծառայությունում գրանցվելու ընթացակարգերի միացմանը (ՀՀ արդարադատության նախարարության իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալությունը կիրականացնի «մեկ կանգառ» կետի դերը գրանցման գործընթացներում),
- § - ի լրացման, պետական գրանցման և հարկատուի հաշվառման համար ստանալու տեխնիկական հնարավորությունների ստեղծմանը և քայլ առ քայլ կիրարկմանը՝ սկսած Երևան քաղաքից:

194. 2006թ. դրությամբ շինարարության թույլտվության տրամադրման գործընթացը (Երևան քաղաքում արտադրական պահեստ կառուցելու օրինակով) բաղկացած է եղել 19 ընթացակարգերից, տևել է միջինը 116 օր և արժեցել է 3.3 մլն դրամ կամ մեկ շնչի հաշվով ՀՆԱ՝ 411%-ը⁷²: Բարեփոխումները այս ոլորտում ուղղված կլինեն շինարարության

⁷⁰ Աշխարհում 2006թ. առաջին տեղը գրավող Ավստրալիայում և 10 տեղը գրավող Վրաստանում (լավագույնը ԵԿԱ երկրներում) պատկերը համապատասխանաբար հետևյալն է՝ ընթացակարգերի քանակը՝ 2 և 5, տևողությունը՝ 2 և 11 օր, արժեքը՝ ՀՆԱ մեկ շնչին՝ 1 և 10%, նվազագույն կանոնադրական կապիտալի պահանջը՝ 0 տոկոս երկու երկրում (2006թ. աշխարհի 76 երկրներում նվազագույն կանոնադրական կապիտալի առկայությունը գրանցման ժամանակ պարտադիր չէր): Հայաստանի վերաբերյալ 2006թ. տվյալները նշված և

⁷¹ Նվազագույն կանոնադրական կապիտալի պահանջը կպաշտպանվի պետության կողմից հատուկ կարգավորման ենթակա ոլորտներում (ֆինանսական հատված, արտադրական ենթակառուցվածքներ և օրենքով սահմանված այլ դեպքերում):

⁷² Աշխարհում 2006թ. երկրորդ տեղը գրավող Նոր Զելանդիայում (լավագույնը OECD երկրներում) և 10 տեղը գրավող Վրաստանում (լավագույնը ԵԿԱ երկրներում) պատկերը համապատասխանաբար հետևյալն է՝ ընթացակարգերի քանակը՝ 7 և 12, տևողությունը՝ 65 և 113 օր, արժեքը՝ ՀՆԱ մեկ շնչի հաշվով՝ 25 և 29%:

36-րդ տեղը՝ ամբողջ գործընթացի մոտ 8 անգամ պակաս արժեքով, քան 2006 թ.:

թույլտվության տրամադրման արժեքի և ընթացակարգերի քանակի կրճատմանը: 2010 թ. սկսած՝ նախատեսվում է ունենալ 9 ընթացակարգ՝ ներկայիս 19-ի փոխարեն, մասնավորապես՝ բոլոր շինանարարական թույլտվությունները կենտրոնացնելով մեկ մարմնում և կրճատելով թույլտվությունների տրամադրման ընդհանուր ժամկետը 6 օրով:

195. Նոր Աշխատանքային օրենսգրքի կիրարկումը էականորեն հստակեցրեց աշխատանքային հարաբերությունների կարգավորումը⁷³: Սակայն հաշվի առնելով տնտեսության ֆորմալ հատվածում աշխատատեղերի էական ավելացման անհրաժեշտությունը, որը հանդիսանում է Կառավարության տնտեսական քաղաքականության գերակայություններից մեկը, օրենսգրքի մի շարք չափազանց կոշտ դրույթներ ենթակա են փոփոխման՝ աշխատանքի շուկան առավելագույնս ազատականացնելու և աշխատատեղերը տնտեսության ստվերային հատվածից ֆորմալ հատված տեղափոխելը խրախուսելու համար⁷⁴: Մասնավորապես՝ մինչև 2010թ. նախատեսվում է.

- § Աշխատանքային պայմանագրերի կնքման և ժամկետային սահմանափակումների պարտադիր պահանջի վերացում և իրավաբանական անձանց կողմից աշխատանքային հարաբերությունների կանոնակարգերի ինստիտուտի հստակեցում.
- § Աշխատանքից ազատման պարտադիր նախազգուշացման համար սահմանված ժամկետի և փոխհատուցման գումարի չափի կրճատում.
- § Աշխատանքային ժամերի սահմանափակումների կամ արտաժամյա աշխատանքի վարձատրության չափի նվազեցում.
- § Գիշերային աշխատանքի և շաբաթ ու կիրակի օրերը աշխատելու նկատմամբ սահմանափակումների վերացում,

196. Սեփականության իրավունքի գրանցման դյուրինության աստիճանով Հայաստանը 2006թ. զբաղեցնում էր աշխարհում 2-րդ տեղը՝ Նոր Զելանդիայից հետո⁷⁵: Այդ ոլորտում Կառավարությունը չի նախատեսում ընթացակարգերի քանակի, ժամանակի և գրանցման հարաբերական արժեքի ավելացում:

197. Վարկեր ստանալու հեշտության ոլորտում⁷⁶ Հայաստանը 2006թ. զբաղեցնում էր բավականին բարձր՝ 36-րդ տեղը: Բարեփոխումները այդ ոլորտում պետք է նպաստեն մասնավոր վարկային ռեզիստրների հետագա զարգացմանը և տեղեկատվության ընդլայնմանը: Սնանկությանը, գրավադրմանը և ընկերությունների լուծարմանը վերաբերող

⁷³ Աշխարհում 2006թ. երրորդ տեղը գրավող ԱՄՆ-ում (լավագույնը ՏՀԶԿ անդամ երկրներում) և չորրորդ տեղը գրավող Վրաստանում (լավագույնը ԵԿԱ երկրներում) Աղյուսակ 5.5-ի առաջին 4 ինդեքսների արժեքը գրոյական էր, իսկ աշխատանքից ազատելու արժեքը համապատասխանաբար կազմել էր 0 և 4 շաբաթ

⁷⁴

արանությամբ՝ աշխատանքի ընդունելու ինդեքսի աճը 2004թ. 0-ից մինչև 33.33՝ 2006թ.) հիմնական պատճառը հանդիսացավ այս ոլորտում Հայաստանի հարաբերական դիրքի վատթարացման համար՝ 2004թ. 22-րդ տեղից 48-րդ տեղը՝ 2006թ.:

⁷⁵ 2006թ. Նոր Զելանդիայում սեփականության իրավունքի գրանցումը ներառել է 2 ընթացակարգ, տևել է 2 օր և կազմել է գրանցվող սեփականության արժեքի 0.1%-ը:

⁷⁶ Տվյալ ոլորտը վերաբերում է ոչ թե օգտագործվող վարկային ռեսուրսների ընդհանուր ծավալին և մատչելիությանը, որոնցով Հայաստանը զբաղեցնում է աշխարհում վերջին տեղերից մեկը (2006թ. տնտեսությանը տրամադրված վարկերի ծավալը կազմել է ՀՆԱ ընդամենը 9.17%-ը), այլ բնութագրում է գրավառուների և գրավատուների իրավական պաշտպանվածության և վարկառուների վերաբերյալ տեղեկատվության ծավալի և տարածման աստիճանը:

օրենսդրության փոփոխությունները ուղղված կլինեն որպես գրավ ծառայող գույքի կազմի և գրավառուների իրավունքների ընդլայնմանը⁷⁷: Մասնավորապես՝ նախատեսվում է.

§ մինչև 2010թ. ընդլայնել մասնավոր վարկային ռեզիստրների կողմից տրամադրվող տեղեկատվության կազմը՝ ներառելով առևտրային և ոչ բանկային ֆինանսական կազմակերպությունների կողմից տրամադրվող վարկերի, ծառայություններ մատուցող ընկերություններին վճարների մասին տեղեկատվությունը,

§ մինչև 2010թ. ստեղծել գրավադրված շարժական գույքի միասնական ռեզիստր և հասանելի դարձնել այնտեղ պարունակվող տեղեկատվությունը բոլոր բանկերի և վարկային կազմակերպությունների համար:

198. Ներդրողների պաշտպանության համեմատականորեն թույլ մակարդակը Հայաստանում⁷⁸ հանդիսանում է փոքրամասնության պորտֆելային ներդրումների (ներառյալ օտարերկրյա ներդրումները), ինչպես նաև կորպորատիվ կառավարման ներկայիս շատ ցածր մակարդակը պայմանավորող հիմնական գործոններից մեկը: Բացի այդ, ներդրողների պաշտպանության անբավարար մակարդակը նպաստում է սեփականության կենտրոնացմանը և արգելակում է արժեթղթերի շուկայի զարգացումը: ԿԶԾում նախատեսվող տնտեսական աճի բարձր տեմպերի ապահովման համար տեղական և օտարերկրյա ներդրումների (ներառյալ պորտֆելային ներդրումները) խրախուսումը և դրանց ծավալների առաջանցիկ աճը հանդիսանում է Կառավարության տնտեսական քաղաքականության հիմնական գերակայություններից մեկը: Այդ առումով՝ Կառավարությունը կարևորում է ներդրողների պաշտպանության աստիճանի էական ավելացումը մոտակա մի քանի տարիների ընթացքում:

199. Մասնավորապես, մինչև 2010թ. կվերափոխվի ընկերություններին վերաբերող օրենսդրությունը, որտեղ կխստացվեն շահերի հնարավոր բախում հանդիսացող գործարքների պարտադիր բացահայտման պայմանները և կավելացվի ընկերության տնօրենի՝ սեփականատերերի նկատմամբ պատասխանատվության աստիճանը շահերի բախում պարունակող գործարքների կնքման դեպքում: Այդ փոփոխությունները՝ դրանց արդյունավետ կիրարկման մեխանիզմների ներդրման հետ մեկտեղ, հնարավորություն կտան բարձրացնելու ներդրողների պաշտպանության ինդեքսի արժեքը ներկայիս 5-ից մինչև 7.33՝ 2010թ.:

200. Հայաստանի գործարար միջավայրի ամենամեծ թուլությունը հարկերի վճարման գործարքային ծախսերի չափազանց բարձր մակարդակն է⁷⁹: Հայաստանի տնտեսության

⁷⁷ Աշխարհում 2006թ. առաջին տեղը գրավող Միացյալ Թագավորությունում և 12-րդ տեղը գրավող Մլովակիայում (լավագույնը ԵԿԱ երկրներում) պատկերը համապատասխանաբար հետևյալն է՝ վարկային տեղեկատվության ինդեքսը՝ 6 և 4, իրավական իրավունքների ինդեքսը՝ 10 և 9, վարկային ռեզիստրների ծածկույթը՝ չափափաս

16.3%:

⁷⁸ Այս ոլորտը բնութագրում է փոքրամասնություն կազմող սեփականատերերի (ներդրողների)՝ ընկերության ղեկավարության կողմից իրականացվող գործարքների վրա իրավական ներազդելու իրավունքների մակարդակը: Աշխարհում 2006թ. առաջին տեղը գրավող Նոր Զելանդիայում և 19-րդ տեղը գրավող Մոնղոլիայում (լավագույնը ԵԿԱ երկրներում) պատկերը համապատասխանաբար հետևյալն է՝ բացահայտման ինդեքսը՝ 10 և 5, տնօրենի պատասխանատվության ինդեքսը՝ 9 և 8, բաժնետերերի կողմից հարուցվող դատական գործերի ինդեքսը՝ 10 և 6, ներդրողների պաշտպանության ընդհանուր ինդեքսը (նախորդ երեքի միջին

Հայաստանում 2006թ. համապատասխան ցուցանիշների արժեքը կազմել էր 5, 2, 8 և 5, և նա զբաղեցրել է 83-րդ տեղը աշխարհում և 12-րդը՝ ԵԿԱ երկրների մեջ:

⁷⁹ 2006թ. Հայաստանը հարկերի վճարման հեշտության աստիճանով գրավել է 143-րդ տեղը և եղել է 23-րդը ԵԿԱ 28 երկրների մեջ: Տարեկան կտրվածքով՝ հարկերը վճարվում են միջին ընկերության կողմից 50 անգամ և դրա համար պահանջվել է 1120 ժամ կամ 140 մարդ/օր, և հարկերի վճարման արժեքը կազմել է մեկ շնչի հաշվով

վերջին հետազոտությունները վկայում են, որ հարկերի վճարման բարդության ներկայիս աստիճանը և հարկային վարչարարության ցածր որակը հանդիսանում են տնտեսության ստվերայնության բարձր և, հետևաբար, հարկահավաքման՝ հնարավորից նկատելիորեն ավելի ցածր մակարդակը պայմանավորող հիմնական գործոններից մեկը⁸⁰:

201. ԿԶԾ-ի գործողության ընթացքում հարկերի վճարումը հեշտացնելու համար, հարկային համակարգի բարեփոխումները նպատակաուղղված կլինեն հարկերի վճարման հաճախականության և դրա վրա ծախսվող ժամանակի կրճատմանը: Մասնավորապես նախատեսվում է աստիճանաբար հրաժարվել ԱԱՀ, շահութահարկի և եկամտահարկի ամսական վճարումներից (կանխավճարներից) և անցնել հարկերի վճարման եռամսյակային սկզբունքին: Բացի այդ, նախատեսվում է տեխնիկական պայմանների պատրաստ լինելուն

սկզբունքին:

202. Հայաստանի նման փոքր և բաց տնտեսության համար, աշխարհագրական անբարենպաստ դիրքի և դրանով պայմանավորված օբյեկտիվորեն բարձր տրանսպորտային ծախսերի (բացակայում է ուղղակի ելքը դեպի ծով և չորս ցամաքային սահմաններից երկուսը փակ են արտաքին առևտրի համար, երկիրը հեռու է գտնվում հիմնական միջազգային շուկաներից) բացասական ազդեցությունը հնարավորինս նվազեցնելու համար հիմնարար նշանակություն ունի արտաքին առևտրի առավելագույն ազատականացումը և արգելքների (ներառյալ՝ տեխնիկական) հնարավորինս վերացումը: Սակայն արտաքին առևտրի իրականացման հեշտության աստիճանով, նույնիսկ հաշվի առնելով երկրի անբարենպաստ աշխարհագրական դիրքը և փակ սահմանները Թուրքիայի և Ադրբեջանի հետ, Հայաստանը էականորեն հետ է ԵԿԱ այլ երկրներից⁸¹:

203. Բարեփոխումները այդ ոլորտում ուղղված կլինեն արտահանման և ներմուծման համար պահանջվող փաստաթղթերի քանակի կրճատմանը, դրանց պատրաստման և ստանալու ժամանակի կրճատմանը և մոտակա նավահանգստից ցամաքային տրանսպորտային ծախսերի կրճատմանը, այն հաշվարկով, որ 2010 թ. դրությամբ արտահանման և ներմուծման համար կպահանջվի երեք փաստաթուղթ:

204. Արտահանման և ներմուծման համար պահանջվող ժամկետի և արժեքի կրճատումը պայմանավորված կլինի նաև Հայկական երկաթգծի բարեփոխումներով, տեխնիկական արդիականացմամբ, բեռների տեղափոխման մեջ երկաթուղային տրանսպորտի տեսակարար կշռի էական ավելացմամբ:

205. Պայմանագրերի կիրարկման ոլորտում Հայաստանը 2006թ. գրավում էր 64-րդ տեղը և 19-րդն էր ԵԿԱ 28 երկրների մեջ: Բարեփոխումները այդ ոլորտում կկենտրոնանան երկու

ՀՆԱ 65.1%-ը: 2006թ. աշխարհում վեցերորդ տեղը գրավող Իռլանդիայում (լավագույնը ՏՀԶԿ երկրներում) և 20-րդ տեղը գրավող Լատվիայում (լավագույնը ԵԿԱ երկրներում) հարկերը վճարվել են տարեկան 9 և 7 անգամ, դրա համար պահանջվել է 76 և 219 ժամ, իսկ հարկերի վճարման արժեքը կազմել է մեկ շնչի հաշվով ՀՆԱ-ի 3.6

ստուգումների հետ կապված՝ ընկերությունների ժամանակի և ֆինանսական ծախսերը հաշվի չեն առնված:

80

⁸¹ Այդ ոլորտում 2006թ. Հայաստանը գրավում էր 118-րդ տեղը, իսկ ԵԿԱ երկրների մեջ՝ 18-րդն էր: Էստոնիայի (լավագույնը ԵԿԱ երկրներում) և Դանիայի (լավագույնը ՏՀԶԿ երկրներում) համեմատ, Հայաստանում 2006թ. արտահանման համար պահանջվում էր 7 փաստաթուղթ (Էստոնիայում՝ 3, Դանիայում՝ 4), պահանջվող ժամկետը կազմել էր 30 օր (Էստոնիայում և Դանիայում՝ 5 օր), իսկ մեկ ստանդարտ կոնտեյների արտահանման արժեքը կազմել էր 1165 ԱՄՆ դոլար (Էստոնիայում՝ 675 ԱՄՆ դոլար, Դանիայում՝ 540 ԱՄՆ դոլար): Ներմուծման ժամանակ պահանջվում է 8 փաստաթուղթ (Էստոնիայում՝ 4, Դանիայում՝ 3), այն տևում է 24 օր (Էստոնիայում և Դանիայում՝ 5 օր) և արժի մեկ ստանդարտ կոնտեյների համար 1335 ԱՄՆ դոլար (Էստոնիայում՝ 675 ԱՄՆ դոլար, Դանիայում՝ 540 ԱՄՆ դոլար):

ուղղությունների վրա՝ օրենսդրական բարեփոխումներ, որոնց արդյունքում կկրճատվեն դատարանում պայմանագրի կիրարկման հետ կապված ընթացակարգերի քանակը և ժամկետները, և դատական բարեփոխումներ, որոնք տվյալ դեպքում ուղղված կլինեն քաղաքացիական գործերի քննարկման արդյունավետության բարձրացմանը, որը նույնպես հնարավորություն կտա կրճատելու պայմանագրերի կիրարկման հետ կապված ժամկետները:

206. Ձեռնարկությունների լուծարման ոլորտում Հայաստանը 2006թ. գրավում էր 42-րդ տեղը և 5-րդն էր ԵԿԱ 28 երկրների մեջ: Բարեփոխումները այդ ոլորտում կկենտրոնանան երկու ուղղությունների վրա՝ օրենսդրական և դատական բարեփոխումներ, որոնք ուղղված կլինեն ընթացակարգերի պարզեցմանը և պարտատերերի իրավունքների ավելացմանը սնանկացման ընթացակարգերում, որի արդյունքում հնարավորություններ կստեղծվեն ընդհանուր ժամկետների կրճատման և վերականգնման դրույթի բարձրացման համար, և լուծարային կառավարիչների որակավորման և պատասխանատվության բարձրացմանը, որոնք կնպաստեն վերականգնման դրույթի աճին:

5.4. Ներդրումային միջավայրի բարելավումը և ներդրումների խրախուսումը

207. Ինչպես արդեն նշվել էր, երկրի ներդրումային միջավայրը բնութագրող ցուցանիշները (BEEPS⁸²) արտահայտում են տվյալ երկրի գործարար շրջանակների ընդհանրացված տեսակետները երկրում գործարարության և ներդրումների հիմնական արգելքների, ինչպես նաև տնտեսության մի շարք ոլորտներում ձեռնարկությունների գործունեության պայմանների վերաբերյալ: Ներդրումային միջավայրի որակը բնութագրող ցուցանիշները կարող են օգտակար տեղեկատվություն պարունակել ինչպես օրենսդրական կարգավորումների՝ իրական կյանքում կիրարկման վերաբերյալ, այնպես էլ տեղեկացնել երկրում գործարար և ներդրումային ակտիվության տարբեր խոչընդոտների մասին:

208. Ի տարբերություն գործարար միջավայրի, որտեղ Հայաստանը 2006թ. ԵԿԱ 28 երկրների մեջ 6-րդն էր, ներդրումային միջավայրի որակի ընդհանուր համաթվի մեծությամբ Հայաստանը 2005թ. ԵԿԱ 26 երկրների մեջ գրավել էր ընդամենը 18-րդ տեղը⁸³: Հայաստանի ներդրումային միջավայրի հիմնական առանձնահատկություններից են դրա բարենպաստության կտրուկ տարբերությունները՝ կախված ձեռնարկության չափից. այն ամենաանբարենպաստն է փոքր ձեռնարկությունների և ամենաբարենպաստը՝ մեծ ձեռնարկությունների համար: Այսպես, եթե այդ ձեռնարկությունները դիտարկենք առանձին, ապա մեծ ձեռնարկությունների համար գործարար միջավայրի որակով Հայաստանը ԵԿԱ երկրների մեջ կգբաղեցներ 6-րդ տեղը, միջին չափի ձեռնարկությունների համար՝ 9-րդ տեղը, իսկ փոքր ձեռնարկությունների համար՝ 21-րդ տեղը (տե՛ս Աղյուսակ 5.6):

⁸² BEEPS

իրավիճակը բնութագրող՝ Համաշխարհային բանկի և ՎԶԵԲ կողմից ԵԿԱ 26 երկրների ներդրումային

⁸³ Ներդրումային միջավայրի որակի ամփոփ համաթիվը հաշվարկվել է մեր կողմից որպես բաղկացուցիչ 7 ոլորտը (ենթակառուցվածքների վիճակը, ձեռնարկությունների ֆինանսավորումը, աշխատանքային շուկան, կոռուպցիան և պետական կարգավորման որակը, դատական համակարգը և հանցագործությունները, տեղեկատվությունը և տեխնոլոգիաները, արտաքին առևտուրը) բնութագրող համաթվերի գումար: Վերջիններս հաշվարկվել են որպես այդ ոլորտները բնութագրող ցուցանիշների արժեքների գումար: Ցուցանիշների արժեքները հաշվարկվել են որպես ԵԿԱ երկրների միջինի և տվյալ ցուցանիշի տարբերությունը՝ հարաբերած ԵԿԱ երկրների միջինին: Համաթվի բացասական արժեքը նշանակում է, որ այն ԵԿԱ երկրների միջինից ցածր է, իսկ դրականը՝ որ բարձր է (միջին արժեքները հավասար են զրոյի):

Աղյուսակ 5.6. 2005թ. ներդրումային միջավայրի ամփոփ գնահատականները ԵԿԱ երկրների համար

Երկրներ	Համաթիվը, 2005 թ.	Մեկ շնչի հաշվով ՀՆԱ, ԱՄՆ դոլար (2004 թ.)
Սլովենիա	19.02	14810
Սլովակիա	16.12	6480
Էստոնիա	15.63	7010
Խորվաթիա	14.66	6590
Բելառուս	13.33	2120
Հայաստան. մեծ ձեռնարկություններ	10.16	
Լատվիա	9.63	5460
Հունգարիա	8.44	8270
Լիտվա	8.33	5740
Հայաստան. միջին չափի ձեռնարկություններ	5.04	
Բոսնիա և Հերցեգովինա	3.70	2040
Ուգրեկստան	2.69	460
Լեհաստան	2.26	6090
Չեխիայի Հանրապետություն	1.57	9150
Ռումինիա	1.21	2920
Ղազախստան	0.92	2260
Մոլդովա	-0.48	710
Ռուսաստանի Դաշնություն	-1.01	3410
Բուլղարիա	-1.72	2740
Հայաստան. քնդհանուր	-2.41	1120
ՆՀՀ Մակեդոնիա	-2.71	2350
Ադրբեջան	-3.25	950
Հայաստան. փոքր ձեռնարկություններ	-5.17	
Ուկրաինա	-5.52	1260
Տաջիկստան	-7.41	280
Սերբիա	-11.60	2620
Ղրղզստան	-13.06	400
Վրաստան	-13.62	1040
Ալբանիա	-58.6	2080

209. Նշված իրավիճակի և գործարար ու ներդրումային միջավայրի որակի այդչափ մեծ տարբերությունները, ներառյալ գործունեության տարբեր պայմանների առկայությունը փոքր, միջին և մեծ բիզնեսի համար, հիմնականում բացատրվում են հետևյալ գործոններով՝


§ գործարար միջավայրը կարգավորող բավականաչափ առաջավոր օրենսդրության իրական կիրառման հիմնախնդիրներով, որը հիմնականում պայմանավորված է պետական կառավարման և դատական համակարգի ցածր արդյունավետությամբ, կոռուպցիայի և հովանավորչության բարձր աստիճանով, մենաշնորհների սահմանափակման և մրցակցության պաշտպանության արդյունավետ համակարգի բացակայությամբ, հարկային և մաքսային վարչարարության ցածր մակարդակով⁸⁴,

§ գործարար և ներդրումային ակտիվությունը՝ սպասարկող ֆիզիկական միջավայրի պայմաններով, մասնավորապես՝ ֆինանսական միջնորդության, տեղեկատվական և ենթակառուցվածքային համակարգերի կողմից տրամադրվող ծառայությունների մակարդակով և արտաքին աշխարհի դուրս գալու գոյություն ունեցող պայմաններով:

⁸⁴ Նույնանման խնդիրներ գոյություն ունեն նաև հարևան Վրաստանում, որը 2005թ. գործարար միջավայրի որակով ԵԿԱ 28 երկրների մեջ գրավում էր 6-րդ տեղը, իսկ ներդրումային միջավայրի որակով՝ ԵԿԱ 26 երկրներից նախավերջին տեղում էր:

210. Կառավարությունը, գիտակցելով ներդրումային միջավայրի որակի բարձրացման խնդրի կարևորությունը տնտեսության մասնավոր հատվածի զարգացման և ներդրումների առաջանցիկ աճի համար, որոնք պետք է հանդիսանան ԿԶԾ-ի շրջանակներում նախատեսվող բարձր տեմպերով տնտեսական աճի ապահովման հիմնական նախադրյալները, նախատեսում է 2010թ. դրությամբ մոտեցնել ներդրումային միջավայրի ընդհանուր համաթվի արժեքը Լիտվայի 2005թ. ցուցանիշին, 2010թ. գերազանցել Լատվիայի 2005թ. մակարդակը, իսկ 2021թ.՝ Սլովենիայի 2005թ. մակարդակը (Գծանկար 5.1)⁸⁵, միևնույն ժամանակ էականորեն մոտեցնելով իրար գործունեության պայմանները փոքր, միջին և մեծ ձեռնարկությունների համար:

Գծանկար 5.1. Ներդրումային միջավայրի որակի ընդհանուր համաթիվը 2005-2021թթ.



211. Այդ նպատակների իրականացմանն ուղղված ընդհանուր քաղաքականությունը կպարունակի փոխկապված ոլորտների լայն շրջանակ՝ ներառյալ հետևյալ հիմնական բաղադրիչները.

- § հակամենաշնորհային և մրցակցության պաշտպանության արդյունավետ համակարգի ձևավորումը,
- § գործարար միջավայրի բարելավումը և համապատասխան հենանիշերին հասնելը,
- § պետական կառավարման որակի անընդհատ բարելավումը և համապատասխան հենանիշերին հասնելը,
- § հակակոռուպցիոն ծրագրի արդյունավետ իրականացումը և դատական համակարգի արդյունավետության աճի ապահովումը,
- § ֆինանսական միջնորդության աստիճանի հետագա խորացումը և ծառայությունների ծավալի առաջանցիկ աճի ապահովումը,
- § առևտրի հետագա ազատականացումը և առևտրի տեխնիկական արգելքների վերացումը,

⁸⁵ Հենանիշերը հաշվարկված են՝ ելնելով ԿԶԾ-ի շրջանակներում նախատեսված տնտեսական աճի տեմպերից և մեկ շնչի հաշվով ՀՆԱ կանխատեսվող ցուցանիշից և հաշվի առնելով գործարար միջավայրի որակի հենանիշերը:

§ ենթակառուցվածքների որակի բարելավումը, ենթակառուցվածքների դիտարկումը՝ որպես պետական ներդրումային ծրագրերի գերակա ուղղություններ, ավիացիայի և երկաթգծի բարեփոխումները և ազատականացումը:


212. Ներդրումային միջավայրի բաղկացուցիչ ոլորտների համար ԿԶԾ-ի նպատակային հենանիշերը ներկայացված են ստորև և հաշվարկված են՝ ելնելով 2005թ. իրավիճակից և հաշվի են առնում համապատասխան ոլորտներում նախատեսված բարեփոխումների ժամանակային բաշխումը: Ենթակառուցվածքի, ձեռնարկությունների ֆինանսավորման և աշխատանքի շուկային վերաբերող հենանիշերը ներկայացված են Գ-ծանկար 5.2-ում, իսկ համապատասխան նպատակային ցուցանիշները՝ Աղյուսակ 5.7-ում:

213. Ենթակառուցվածքային ոլորտում, որի որակի ընդհանուր համաթվով Հայաստանը 2005թ. ԵԿԱ 26 երկրներից 7-րդն էր, ներդրումների իրականացման հիմնական արգելք են հանդիսանում տրանսպորտային ծախսերը (23-րդ տեղը ԵԿԱ երկրների մեջ): Առանց տրանսպորտային ծախսերը հաշվի առնելու, Հայաստանը ենթակառուցվածքային ծառայությունների որակով զբաղեցնում էր ԵԿԱ երկրների մեջ չորրորդ տեղը: Ծրագիրը ենթակառուցվածքներում նախատեսում է.

§ երկաթգծի և ավիացիայի բարեփոխումների, համապատասխան ներդրումների իրականացման արդյունքում էականորեն նվազեցնել տրանսպորտային ծախսերը. տրանսպորտային ծախսերը զարգացման ու ներդրումների հիմնական արգելք համարող ընկերությունների քանակը ներկայիս 9.2 տոկոսից հասցնել մինչև 4 տոկոսի՝ 2021թ.,

§ Էներգետիկայի, ջրամատակարարման և հեռահաղորդակցությունների ոլորտների բարեփոխումների իրականացման արդյունքում քայլ առ քայլ կրճատել Էներգամատակարարման և ջրամատակարարման խափանումների քանակը, ինչպես նաև բարելավել տրամադրվող ծառայությունների որակը:

Գ-ծանկար 5.2. Ենթակառուցվածքի որակի, ձեռնարկությունների ֆինանսավորման և աշխատանքի շուկայի համաթվերը 2005-2021 թթ.



214. Ձեռնարկությունների ֆինանսավորման ոլորտում, որտեղ Հայաստանը 2005թ. 20-րդն էր ԵԿԱ 26 երկրների մեջ, հիմնական խնդիրները կապված են ֆինանսավորման ցածր մատչելիության, ֆինանսավորման և գրավի բարձր արժեքի, ինչպես նաև

ձեռնարկությունների ֆինանսավորման աղբյուրների կառուցվածքի հետ, որտեղ չափազանց բարձր են ոչ ֆորմալ աղբյուրներից և ցածր են ոչ բանկային աղբյուրներից ֆինանսավորման ծավալները:

215. Նշված խնդիրների լուծման համար ԿԶԾ-ի հիմնական գերակայությունը կհանդիսանա ֆինանսական միջնորդության խորացմանը ուղղված քաղաքականության իրականացումը, ներառյալ՝ գրավադրման պարզեցմանը ուղղված օրենսդրական փոփոխությունները, որոնց արդյունքում նախատեսվում է 2015-2021թթ. ընթացքում ավարտել ֆինանսական միջնորդության ժամանակակից և արդյունավետ համակարգի ձևավորումը և 2021թ. Հայաստանը դուրս բերել ներկայիս Խորվաթիայի մակարդակին (առաջինը՝ 2005թ. դրությամբ):


216. Աշխատանքի շուկայի առումով՝ գործատուների տեսակետից վիճակը կարելի է համարել հարաբերականորեն բարվոք՝ հաշվի առնելով Հայաստանում գոյություն ունեցող զբաղվածության հիմնահարցը (7-րդ տեղը ԵԿԱ 26 երկրների մեջ): Այս ոլորտում հիմնական խնդիրը ձեռնարկությունների՝ աշխատուժի որակը ապահովելու նպատակով կատարած ներդրումների ցածր մակարդակն է (21-րդ տեղը՝ վերապատրաստում իրականացնող ընկերությունների քանակով և 19-րդ տեղը՝ վերապատրաստված որակյալ աշխատուժի մասնաբաժնի ցուցանիշով): Այդ առումով՝ աշխատանքի շուկայում իրականացվող քաղաքականությունը, աշխատանքային կարգավորումները ազատականացնելու հետ մեկտեղ, ուղղված կլինի ձեռնարկությունների՝ աշխատուժի որակը բարձրացնելու նպատակով ներդրումների խրախուսումը ապահովելուն:

Աղյուսակ 5.7. Ենթակառուցվածքի որակը, ձեռնարկությունների ֆինանսավորումը և աշխատանքի շուկան բնութագրող նպատակային ցուցանիշները 2005-2021թթ.

Ցուցանիշներ	2005		2010		2015		2021	
	Արժեքը	Տեղը	Արժեքը	Տեղը	Արժեքը	Տեղը	Արժեքը	Տեղը
Ենթակառուցվածքի որակը բնութագրող ցուցանիշներ								
Տրանսպորտային ծախսերը որպես զարգացման հիմնական արգելք (ընկերությունները, %)	9.2	23	8	22	6	21	4	13
Էներգամատակարարումը որպես զարգացման հիմնական արգելք (ընկերությունները, %)	3.2	8	2.9	7	2	2	1.5	1
Էներգամատակարարման խափանումները (օր՝ տարվա ընթացքում)	1.4	11	1.2	7	1	7	0.9	7
Կորուստները էներգամատակարարման խափանումների պատճառով (% իրացման ծավալներից)	2.5	13	2	9	1.5	6	1.3	3
Ջրամատակարարման խափանումները (օր՝ տարվա ընթացքում)	1	15	0.8	14	0.7	14	0.5	14
Էլեկտրացանցին միանալու տևողությունը (օր՝ տարվա ընթացքում)	2.7	3	2.5	3	2.4	3	2.3	2
Հեռախոսային ցանցին միանալու տևողությունը (օր՝ տարվա ընթացքում)	6.5	6	6	6	5	5	4	3
Ձեռնարկությունների ֆինանսավորումը բնութագրող ցուցանիշներ								
Ֆինանսավորումը որպես զարգացման հիմնական արգելք (ընկերությունները, %)	18.1	17	16	13	12	12	6	4

Ցուցանիշներ	2005		2010		2015		2021	
	Արժեքը	Տեղը	Արժեքը	Տեղը	Արժեքը	Տեղը	Արժեքը	Տեղը
Ֆինանսավորման արժեքը որպես զարգացման հիմնական արգելք (ընկերությունները, %)	22.6	14	20	14	15	10	10	8
Ներքին աղբյուրներից ֆինանսավորվող ներդրումները, %	64.2	8	62.2	7	60	6	55	4
Բանկերի կողմից ֆինանսավորվող ներդրումները, %	19.5	4	22.7	4	25	3	28	1
Այլ ֆորմալ աղբյուրներից ֆինանսավորվող ներդրումները, %	7.1	19	9.7	16	10	16	14	11
Ոչ ֆորմալ աղբյուրներից ֆինանսավորվող ներդրումները, %	9.2	26	5.3	22	5	19	3	14
Գրավադրման արժեքը (%՝ վարկի գումարից)	177.7	19	170	17	150	15	130	4
Աշխատանքի շուկան բնութագրող ցուցանիշներ								
Աշխատանքային օրենսդրությունը որպես զարգացման հիմնական արգելք (ընկերությունները, %)	2.9	7	2.9	7	2.9	7	2.9	7
Որակյալ աշխատուժի բացակայությունը որպես զարգացման հիմնական արգելք (ընկերությունները, %)	2.3	2	2.3	2	2.3	2	2.3	2
Ընկերությունները, որոնք իրականացնում են աշխատուժի վերապատրաստում (ընկերությունները, %)	64.8	21	70	19	85	12	90	8
Վերապատրաստված որակյալ աշխատուժը, %	16.5	19	20	16	30	8	45	4
Որակյալ աշխատուժը, %՝ ընդհանուր աշխատուժից	43.2	17	46	11	48	9	48	9
Ցածրորակ աշխատուժը, %՝ ընդհանուր աշխատուժից	9.1	10	8	6	10	15	10	15

Գծանկար 5.3. Պետական կառավարման որակի և կոռուպցիայի ու դատական համակարգի և հանցագործությունների համաթվերը 2005-2021թթ.



217. Պետական կառավարման որակը և կոռուպցիայի տարածումը բնութագրող ոլորտում իրավիճակը երկրի հետագա կայուն զարգացումը վտանգող հիմնական գործոններից են: Հայաստանում շատ բարձր է ընկերությունների կողմից ոչ պաշտոնական վճարումների տոկոսը տարբեր պետական կառուցվածքներին (20-րդ տեղը, իսկ հարկային տեսուչներին վճարումներով՝ 25-րդ տեղը ԵԿԱ 26 երկրների մեջ):

218. Այդ և Ադյուսակ 5.8-ում ներկայացված այլ հիմնահարցերի լուծումը կիրականացվի ԿԶԾ-ի պետական քաղաքականության հիմնական գերակայություններից մեկը հանդիսացող՝ պետական կառավարման որակի և արդյունավետության անընդհատ բարձրացմանը ուղղված քաղաքականության, ինչպես նաև 2003թ. ընդունված՝ Հակակոռուպցիոն ռազմավարության հետևողական իրագործման շրջանակներում: Ադյուսակ 5.8-ում, ինչպես նաև այս բաժնի այլ ադյուսակներում բերված նպատակային ցուցանիշների ապահովման աստիճանը կբնութագրի համապատասխան պետական քաղաքականության իրականացման արդյունավետության մակարդակը:

Աղյուսակ 5.8. Պետական կառավարման որակը, կոռուպցիայի հետ կապված իրավիճակը, դատական համակարգի որակը և հանցագործությունների ազդեցությունը բնութագրող նպատակային ցուցանիշները 2005-2021թթ.

Ցուցանիշներ	2005		2010		2015		2021	
	Արժեքը	Տեղը	Արժեքը	Տեղը	Արժեքը	Տեղը	Արժեքը	Տեղը
Պետական կառավարման որակը և կոռուպցիան բնութագրող ցուցանիշներ								
Կոռուպցիան որպես զարգացման հիմնական արգելք (ընկերությունները, %)	19.8	17	15	11	12	9	8	5
Ոչ պաշտոնական վճարումները (%՝ իրացման ծավալներից)	1.2	20	1	15	1	15	0.7	8
Հարկային տեսչներին ոչ պաշտոնական վճարումներ կատարող ընկերությունները, %	39.9	25	35	23	25	18	15	7
Գործունեության արտոնագրեր ստանալու համար ոչ պաշտոնական վճարումներ տրամադրող ընկերությունները, %	15.1	17	12	13	8	8	6	5
Ներմուծման արտոնագրեր ստանալու համար ոչ պաշտոնական վճարումներ տրամադրող ընկերությունները, %	23	24	20	23	15	20	10	15
Ընկերության ղեկավարության պետական կարգավորումների վրա ծախսվող ժամանակը (օր՝ տարվա ընթացքում)	4.2	11	4	8	3.5	6	3	3
Հարկային մարմինների հետ շփման վրա ծախսվող ժամանակը (օր՝ տարվա ընթացքում)	2.6	13	2.4	12	2.2	10	2	10
Դատական համակարգը և հանցագործությունների ազդեցությունը բնութագրող ցուցանիշներ								
Դատական համակարգը և վեճերի լուծումը որպես զարգացման հիմնական արգելք (ընկերությունները, %)	12	12	11	11	10	11	9	11
Հանցագործությունները, գողությունը և կարգուկանոնի բացակայությունը որպես զարգացման հիմնական արգելք (ընկերությունները, %)	2.3	4	2.2	3	1.9	2	1.8	2
Ընկերությունները, որոնք ունեն չվճարված փոխադարձ պարտավորություններ մատակարարների/ գնորդների/սպառողների հետ, %	18.8	25	25	24	30	24	35	20
Ընկերությունները, որոնք լուծում են վեճերը դատական համակարգի միջոցով, %	7.6	26	15	24	20	24	30	19
Ընկերությունները, որոնք վստահում են դատական համակարգին պայմանագրերը լուծելու գործում, %	52.5	11	56.5	10	60	10	65	5
Անվտանգության պաշտպանման արժեքը (%՝ իրացման ծավալներից)	0.7	18	0.6	13	0.5	11	0.4	9
Կորուստներ հանցագործությունների պատճառով (%՝ իրացման ծավալներից)	0	1	0	1	0	1	0	1

219. Իրավիճակը համեմատաբար ավելի բարվոք է դատական համակարգի որակը բնութագրող ոլորտում (10-րդ տեղը ԵԿԱ 26 երկրների մեջ): Հիմնահարցերը այս ոլորտում երկուսն են՝

§ չնայած գործարարների վստահության աստիճանը դատական համակարգի հանդեպ պայմանագրերի լուծման գործում բավականաչափ բարձր է (52.5%, 11-րդ տեղը ԵԿԱ 26 երկրների մեջ), սակայն ընկերությունների քանակը, որոնք լուծում են վեճերը դատական համակարգի օգնությամբ, ամենացածրն է ԵԿԱ երկրների մեջ (7.6%⁸⁶ . այդ ցուցանիշով 2005թ. առաջին տեղում է Խորվաթիան՝ 61.8%):

§ դատական համակարգի այսչափ թույլ օգտագործման հիմնական պատճառները դուրս են դատական համակարգից և հիմնականում պայմանավորված են ընկերությունների չլուծված փոխադարձ պարտավորությունների շատ ցածր մակարդակով⁸⁷:

220. Այսպիսով, տնտեսական կյանքին դատական համակարգի նկատելիորեն ավելի բարձր մասնակցության աստիճանն ապահովելը հանդիսանում է այս ոլորտում քաղաքականության հիմնական գերակայությունը և կլուծվի ինչպես դատական համակարգի ընդհանուր բարեփոխումների, այնպես էլ գործարար միջավայրի որակի բարելավմանը ուղղված քաղաքականության շրջանակներում: Դրանք ուղղված կլինեն ինչպես դատական համակարգի նկատմամբ վստահության, այնպես էլ գործարար աշխարհի փոխադարձ վստահության մակարդակների աճը ապահովելուն, որը ոչ պաշտոնական պայմանագրերի քանակը կրճատելու հիմնական պայմանն է:


221. Ձեռնարկություններում նորարարության և տեխնոլոգիաների ոլորտի հիմնախնդիրների հիմնական պատճառը գործարարության և սպառողների/մատակարարների հետ արդյունավետ կապն ապահովող ժամանակակից ինտերնետային միջոցների (էլեկտրոնային փոստ և ինտերնետային կայքեր) համեմատաբար թույլ տարածվածությունն է: Դա բացատրվում է ինչպես վերը նշված պաշտոնական պայմանագրերի անբավարար քանակությամբ (տնտեսության ստվերայնության բարձր աստիճանով), այնպես էլ ինտերնետի հարաբերականորեն ցածր տարածման աստիճանով, որը, իր հերթին, պայմանավորված է հեռահաղորդակցությունների ոլորտում մրցակցության ներկայումս գոյություն ունեցող սահմանափակումներով և դրանից բխող հետևանքներով՝ ծառայության բարձր արժեք, կապի ցածր արագություն և համեմատական ցածր մատչելիություն:

222. Այսպիսով, նորարարությունների և տեխնոլոգիաների ոլորտում քաղաքականությունը ուղղված կլինի նորարարություն իրականացնող ընկերությունների արդյունավետ խրախուսման մեխանիզմների մշակմանը և գործարկմանը, հեռահաղորդակցության ոլորտում արդյունավետ մրցակցության համար գոյություն ունեցող խոչընդոտների վերացմանն ու տնտեսության ստվերայնության աստիճանի նվազեցմանը և կիրականացվի գիտելիքի վրա հիմնված տնտեսության հիմնական կառույցների ստեղծման և արդյունավետ գործարկման շրջանակներում:

⁸⁶ Հատկանշական է, որ մեծ ընկերությունները ընդհանրապես չեն դիմում դատական համակարգ՝ վեճերը լուծելու համար, փոքր ձեռնարկություններից դիմում են 5,6%-ը, իսկ միջին չափի ձեռնարկություններից՝ 20%-ը, ինչը ևս մեկ անգամ վկայում է ներդրումային միջավայրի տարբեր որակի մասին՝ կախված ձեռնարկության չափերից:

⁸⁷ 2005թ. ընկերությունների ընդամենը 18.8%-ը ունեին չվճարված պարտավորություններ՝ նախավերջին տեղը ԵԿԱ երկրների մեջ (որից՝ փոքր ընկերությունները՝ 19.5%, միջին չափի ընկերությունները՝ 20% և մեծ ընկերությունները՝ 8.3%), Խորվաթիայի ցուցանիշն է 72% և Լիտվայինը՝ 88.3%:

Գծանկար 5.4. Նորարարության և տեխնոլոգիաների ու արտաքին առևտրի համաթվերը 2005-2021թթ.



Աղյուսակ 5.9. Նորարարությունը և տեխնոլոգիաները ու արտաքին առևտուրը բնութագրող նպատակային ցուցանիշները 2005-2021թթ. համար

Ցուցանիշներ	2005		2010		2015		2021	
	Արժեքը	Տեղը	Արժեքը	Տեղը	Արժեքը	Տեղը	Արժեքը	Տեղը
Նորարարությունը և տեխնոլոգիաների բնութագրող ցուցանիշներ								
Նորարարություններ իրականացնող ընկերությունները, %	71.8	11	80	3	80	3	80	3
Հետազոտությունների և զարգացման վրա իրականացվող ծախսերը (%՝ իրացման ծավալներից)	0.3	6	0.4	4	0.45	4	0.5	3
Մատակարարների/գնորդների/սպառողների հետ փոխհարաբերություններում էլեկտրոնային փոստ օգտագործող ընկերությունները, %	45.6	22	70	11	75	8	85	7
Մատակարարների/վաճառողների/սպառողների հետ փոխհարաբերություններում էլեկտրոնային փոստ օգտագործող ընկերությունները, %	26.2	24	55	17	65	15	75	8
Արտաքին առևտուրը բնութագրող ցուցանիշներ								
Արտաքին առևտրի կարգավորումը և մաքսային վարչարարությունը որպես զարգացման հիմնական արգելք (ընկերությունները, %)	28.3	25	10	9	9	9	6	6
Մաքսային մարմիններում ներմուծված չափաքանակի մաքսային ձևակերպման համար անհրաժեշտ ժամանակը, օր	4	17	3	11	2.8	9	2.5	7
Մաքսային մարմիններում արտահանվող չափաքանակի մաքսային ձևակերպման համար անհրաժեշտ ժամանակը, օր	4.7	22	3	15	2.8	13	2.5	11
Ներմուծման թույլտվություններ ստանալու համար ոչ պաշտոնական վճարումներ կատարող ընկերությունները, %	23	24	10.2	16	9.9	15	8.2	10

223. Արտաքին առևտրի ոլորտում վիճակը խիստ անբավարար է (նախավերջին տեղը ԵԿԱ երկրների շարքում՝ 2005 թ.): Դրա հիմնական պատճառը, արտաքին առևտրի բավականին ազատական ռեժիմների առկայության և առևտրի քանակական սահմանափակումների, ըստ էության, բացակայության պայմաններում, մաքսային վարչարարության ներկայիս ցածր և հովանավորչության բարձր մակարդակներն են⁸⁸: Հաշվի առնելով արտաքին առևտրի և հատկապես արտահանման խրախուսման կարևորությունը երկրի կայուն բարձր տեմպերով զարգացման համար՝ մաքսային վարչարարության կտրուկ բարելավումը, արտաքին առևտրի հետագա ազատականացմանը և տրանսպորտային ծախսերի կրճատմանը ուղղված քաղաքականության շրջանակներում, հանդիսանում է պետական տնտեսական քաղաքականության հիմնական գերակայություններից մեկը:

224. Վերը նշված բարեփոխումները նպատակաուղղված կլինեն Ադյուսակ 5.10-ում նախատեսվող ներդրումների ծավալներին հասնելուն, որոնք, իրենց հերթին, անհրաժեշտ են ԿԶԾ-ով կանխատեսվող ՀՆԱ ծավալները ապահովելու համար: Ադյուսակ 5.10-ը վկայում է, որ ԿԶԾ-ի գործունեության ժամանակ անհրաժեշտ է պահպանել կուտակման բարձր ծավալները, որոնք, կախված տնտեսական աճի նախատեսված տեմպերից, կտատանվեն ՀՆԱ 28-37 տոկոս միջակայքում: Պետական ներդրումների մակարդակը կլինի բավականին կայուն՝ ՀՆԱ նկատմամբ 4.6-5 տոկոս միջակայքում:

225. Նախատեսվում է օտարերկրյա ուղղակի ներդրումների (ՕՈՒՆ) ծավալների էական աճ՝ դրանց կուտակված ծավալը 2007-2021թթ. ընթացքում նախատեսվում է ավելացնել մոտ 13 անգամ, որը ենթադրում է ՕՈՒՆ-ի խրախուսմանը ուղղված քաղաքականության իրականացում, որտեղ որոշիչ պետք է լինի վերազգային ընկերությունների ակտիվ ներգրավումը՝ դառնալով երկրի տեխնոլոգիական արդիականացման և գիտելիքի ներմուծման հիմնական գործիքներից մեկը:

Ադյուսակ 5.10. Ներդրումները 2005-2021թթ. (համապատասխան տարիների գներով)

Ցուցանիշներ	2005	2006	2010	2015	2021
Ընդամենը ներդրումներ, մլրդ դրամ	683	954	1762	2653	3772
որից՝ պետական	101	116	234	361	603
մասնավոր	583	838	1529	2292	3169
Ուղղակի օտարերկրյա ներդրումներ, մլն ԱՄՆ դոլար	287.0	467.4	958,6	1468	2132
Կուտակված օտարերկրյա ներդրումներ, մլն ԱՄՆ դոլար	1298.3	1774.4	5050	11362	22458
	<i>տոկոս՝ ՀՆԱ նկատմամբ</i>				
Ընդամենը ներդրումներ	30,5	35.4	37.5	33,9	28.8
որից՝ պետական	4,5	4.4	5.0	4.6	4,6
մասնավոր	26.0	31,0	32,5	29,3	24.2
Ուղղակի օտարերկրյա ներդրումներ	4,8	7.0	6,2	5,7	5,0
Տեղական ներդրումներ	21,2	23,0	26.3	23.6	19,2
Կուտակված օտարերկրյա ներդրումներ	26.5	27.8	32,8	44,3	52,3

⁸⁸ 2005թ. մաքսային վարչարարությունը որպես զարգացման և ներդրումների հիմնական արգելք են համարել փոքր ձեռնարկությունների 36.2%-ը, միջին չափի ձեռնարկությունների 25%-ը և խոշոր ձեռնարկությունների 5.3%-ը: Փոքր ձեռնարկությունների համար արտաքին առևտրի համաթվի մեծությամբ Հայաստանը ԵԿԱ երկրների մեջ 2005թ. գրավել էր վերջին տեղը, միջին չափի ձեռնարկությունների համար՝ 23-րդ տեղը և խոշոր ձեռնարկությունների համար՝ 16-րդ տեղը:

5.5. Տնտեսությունում կանխատեսվող կառուցվածքային տեղաշարժերի և երկրի մրցունակության աստիճանի անընդհատ աճի ապահովմանը ուղղված քաղաքականությունը

226. 2003-2007 թթ. ԱՀՌԾ-ի կանխատեսվածից մոտ երկու անգամ ավելի բարձր տնտեսական աճի պայմաններում տեղի ունեցավ տնտեսական աճի բնույթի գնալով խորացող փոփոխություն՝ ներմուծման փոխարինման և արտահանման առաջանցիկ աճի վրա հիմնված տնտեսական աճը, որը գերակայում էր 2000-2003 թթ. սկսեց փոխարինվել

ուժը հանդիսացան շինարարությունը և ծառայությունները, միևնույն ժամանակ էականորեն պակասեց արդյունաբերության և արտահանման ավանդը տնտեսական աճին:

227. Արդյունաբերության աճի միջին տարեկան տեմպը 2003-2007թթ. կազմել է 5.6 տոկոս, իսկ 2006 թ. սկսած տեղի է ունեցել արդյունաբերության աճի տեմպերի զգալի անկում (2003-2005 թթ.՝ միջին տարեկան 8.3 տոկոս՝ 2006-2007 թթ. 1.4 տոկոսի համեմատ)⁸⁹: Դրա հիմնական պատճառը 2000-2004 թթ. արդյունաբերական զարգացման հիմնական շարժիչ ուժ հանդիսացած աշխատուժի ցածր արժեքի ժամանակավոր մրցակցային առավելության գնալով կորուստն է: Աշխատուժի արագ թանկացումը կարող է բացատրվել 2003 թվականից տեղի ունեցող հայկական դրամի արժեքավորմամբ⁹⁰, որի արդյունքում աշխատուժի արժեքը ընթացիկ դոլարային արտահայտությամբ 2001-2007թթ. ընթացքում աճել է 5.3 անգամ (անվանական դրամական արտահայտությամբ՝ 2.83 անգամի համեմատ). 2007 թ. միջին ամսական աշխատավարձը կազմել է 286 ԱՄՆ դոլար՝ 2001 թ. 53.6 ԱՄՆ դոլարի համեմատ:

228. Կապված տնտեսական աճի բնույթի փոփոխության և արդյունաբերական զարգացման տեմպերի կտրուկ անկման հետ, երկրի արտաքին տնտեսական հարաբերությունները 2003-2007 թթ. բնութագրվել են առևտրային և ընթացիկ հաշվի գնալով վատթարացմամբ՝ արտահանման ստագնացիայի և ներմուծման արագ աճի պայմաններում: Արտահանում/ՀՆԱ հարաբերակցությունը 2007թ. կազմել է 12.5%, որը մոտ երկու անգամ ավելի ցածր է, քան 2003թ., իսկ դրամով արտահայտված արտահանման ծավալները մնացել են գրեթե անփոփոխ⁹¹:

229. Մյուս կողմից, 2004թ. սկսած, ներմուծման միջին տարեկան աճի տեմպերը մոտ երկու անգամ ավելի բարձր էին, քան արտահանման աճի տեմպերը, որի արդյունքում առևտրային հաշվեկշիռի պակասուրդը 2003 թ. 594 մլն ԱՄՆ դոլարից ավելացել է մինչև 2124 մլն ԱՄՆ դոլար՝ 2007թ.⁹²: Միևնույն ժամանակ, արտահանման ստագնացիայի, ինչպես նաև տնտեսական աճի ներկայիս բնույթի պատճառով Հայաստանի տնտեսության համաշխարհային տնտեսական համակարգի մեջ ինտեգրման աստիճանը⁹³ էականորեն նվազել է (2003 թ. ՀՆԱ 70 տոկոսից մինչև 48 տոկոս՝ 2007թ.): Դրա պատճառները նույնն են ինչ արդյունաբերության դեպքում՝ պահանջարկի վրա հիմնված տնտեսական աճը, որը

⁸⁹ Այդ միտումը շարունակվում է նաև 2008 թ.: 2008 թ. առաջին կեսի տվյալներով գրանցվել է արդյունաբերական արտադրանքի ծավալների 0.2 տոկոսի անկում՝ նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ:

⁹⁰ Անվանական փոխարժեքը 2008թ. ապրիլին կազմել է 309 դրամ՝ մեկ ամերիկյան դոլարի դիմաց՝ 2003 թ. 578.8 դրամ՝ մեկ դոլարի դիմաց ցուցանիշի համեմատ:

⁹¹ 2003թ. ապրանքային արտահանման ծավալները կազմել են 396.8 մլրդ դրամ՝ 2007 թ. 394.2 մլրդ դրամ ցուցանիշի համեմատ: Այդ միտումը շարունակվում է նաև 2008թ.: 2008թ. առաջին կիսամյակի տվյալներով գրանցվել է ապրանքային արտահանման ծավալների 0.8% անկում՝ նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ, իսկ ներմուծումը նույն ժամանակահատվածում աճել է 40.3 տոկոսով:

⁹² Ակնհայտ է, որ ներմուծման ծավալների նմանօրինակ արագ աճը էական աստիճանով պայմանավորված է նաև վերջին մի քանի տարիների ընթացքում տեղի ունեցած հումքավառելիքային և սննդամթերքի միջազգային գների աճով:

⁹³ Արտաքին ապրանքաշրջանառություն/ՀՆԱ հարաբերակցություն:

մեծամասամբ ֆինանսավորվում է դրսից, և որը դրամի արժեքավորման ու հումքի և սննդամթերքի գների աճի պայմաններում հանգեցրել է ներմուծման առաջանցիկ աճին, և ընդհակառակը՝ էժան աշխատուժի վրա հիմնված արտահանման ստագնացիայի: Անընդհատ աճող առևտրային հաշվեկշռի և ընթացիկ հաշվի պակասուրդների ֆինանսավորումը ապահովվել է⁹⁴ դրսից ստացվող ֆինանսական միջոցներով (ներառյալ՝ ոչ ֆորմալ մասնավոր տրանսֆերտները): Այսպիսով, 2003-2007 թթ, էականորեն աճել է երկրի կախվածությունը արտաքին ֆինանսավորումից: Եթե 2003-2007 թթ, այդ ֆինանսավորման ծավալները, ապահովելով նշված պակասուրդների ֆինանսավորումը, նաև հնարավորություն էին ստեղծում պետական համախառն արժույթային պաշարների էական աճի համար, ապա 2008 թ. առաջին կիսամյակի տվյալներով արտարժույթի բավականին կայուն փոխարժեքի պայմաններում, արժույթային պաշարների ավելացում տեղի չի ունեցել, որը վկայում է, այն մասին, որ պահանջարկի վրա հիմնված տնտեսական աճի արտաքին ֆինանսավորման պահանջները սկսել են աճել ավելի արագ, քան այդ ֆինանսավորման ծավալները և պահանջարկի վրա հիմնված տնտեսական աճի շարունակությունը էական ռիսկեր է պարունակում միջին և երկարաժամկետ հեռանկարում:

230. Այդ առումով, Կայուն զարգացման ծրագիրը, ելնելով ներկայիս տնտեսական զարգացման միտումներից, նախատեսում է, որ 2009-2011 թթ. տնտեսական աճը հիմնականում կուղղորդվի պահանջարկով և տնտեսության ոչ արտահանող հատվածների, հատկապես՝ շինարարության և ծառայությունների ոլորտների զարգացումը կլինի տնտեսական աճի հիմնական շարժիչ ուժը: Այդուհանդերձ, սկսած 2012 թ., կսկսվի անցում կատարվել արտադրական ներդրումների և գիտելիքի վրա հիմնված տնտեսությանը, որպես տնտեսական աճի հիմնական աղբյուրի, որը ենթադրում է տնտեսությունում խորը կառուցվածքային տեղաշարժերի իրականացում, ինչպես նաև այդ տեղաշարժերը ապահովող համապատասխան տնտեսական քաղաքականության մշակումը և արդյունավետ ներդրումը:

Աղյուսակ 5.11. Տնտեսության կառուցվածքի կանխատեսումները՝ ըստ ոլորտների (տոկոս ՀՆԱ նկատմամբ)

	2003	2007	2010	2012	2015	2018	2021
Արդյունաբերություն	19.3	15.0	13.3	14.1	16.4	18.5	19.7
Գյուղատնտեսություն	21.5	18.1	14.8	13.8	12.5	11.5	10.5
Շինարարություն	15.7	24.7	28.1	26.7	23.0	19.3	16.4
Ծառայություններ	34.4	32.2	32.0	33.6	36.8	40.4	43.9
Ջուտ անուղղակի հարկեր	9.1	10.0	11.7	11.8	11.3	10.5	9.5
Արտահանում	24.8	13.0	10.6	12.6	16.9	21.8	25.8
Ներմուծում	-40.3	-30.4	-33.4	-35.4	-37.9	-40.5	-42.2
Արտաքին առևտուր	65.1	43.4	44.0	48.0	54.8	62.2	68.0

231. 2012 թ. սկսած՝ նախատեսվում է տնտեսական աճը հիմնականում ապահովել արդյունաբերության և ծառայությունների ոլորտի առաջանցիկ զարգացման հաշվին, նախատեսելով շինարարության և գյուղատնտեսության տեսակարար կշիռների էական իջեցում (տե՛ս Աղյուսակ 5.11): Նշված կառուցվածքային փոփոխությունների իրականացման համար անհրաժեշտ կլինի ներդրումների վերաուղղումը արդյունաբերության և ծառայությունների ոլորտներ, ինչպես նաև արտահանման ծավալների ընդլայնմանը: Այդ արդյունքին հասնելուն ուղղված կլինի երկրի ամբողջ տնտեսական քաղաքականությունը, ինչպես ընդհանուր՝ գործարար և ներդրումային միջավայրի բարելավմանը, մրցակցության խրախուսմանը, ֆինանսական միջնորդության խորացմանը, ՓՄՁ զարգացմանը, երկրի ինստիտուցիոնալ արդիականացմանը ուղղված և այլ ընդհանուր բնույթի

⁹⁴ Ընթացիկ հաշվի պակասուրդը աճել է՝ 2003 թ. ՀՆԱ 0.55 տոկոսից մինչև 6.3%՝ 2007 թ.:

քաղաքականությունները, այնպես էլ մասնագիտացված ոլորտային քաղաքականությունները, ներառյալ՝ արդյունաբերական և ծառայությունների ոլորտների զարգացմանն ու արտահանման խթանմանն ուղղված քաղաքականությունն ու միջոցառումները:

232. Մինչ այժմ համալիր բնույթ կրող ոլորտային տնտեսական քաղաքականություններ Հայաստանում չեն մշակվել: Այդուհանդերձ, ելնելով նախատեսվող կառուցվածքային փոփոխությունների իրականացման հույժ կարևորությունից երկարաժամկետ հեռանկարում կայուն տնտեսական աճ ապահովելու գործում կառավարությունը 2008-2009թթ. ընթացքում կմշակի և կսկսի իրականացնել արդյունաբերական քաղաքականության, ծառայությունների ոլորտի զարգացման և արտահանման խրախուսման երկարաժամկետ համալիր ծրագրերը:

233. Արդյունաբերական քաղաքականության երկարաժամկետ ծրագիրը ուղղված կլինի երկարաժամկետ հեռանկարում միջազգայնորեն մրցունակ ժամանակակից արդյունաբերական համալիրի կառուցմանը և պետք է պարունակի հետևյալ տարրերը՝ մասնավորապես՝

§ ժամանակակից տեխնոլոգիական համալիրների ներմուծման խրախուսման գործող մեխանիզմներ.

§ ժամանակակից գիտատարր տեխնոլոգիաներին տիրապետող վերազգային ընկերությունների Հայաստան մուտք գործելու խրախուսումը՝ ներառյալ անհրաժեշտ ենթակառուցվածքի ստեղծումը պետական միջոցների կամ պետական-մասնավոր համագործակցության հաշվին.

§ համապատասխան բարձրորակ մասնագետների (ներառյալ՝ ժամանակակից ճարտարագիտական մասնագիտությունների) նախապատրաստման և վերապատրաստման գործում համակարգի ստեղծումը.

§ ժամանակակից տեխնոլոգիաները սպասարկող և դրանց արդիականացման ներուժ ունեցող մասնագիտական կառույցների համակարգերի ձևավորման խրախուսումը.

§ Հայաստանում գոյություն և զարգացման ներուժ ունեցող արտադրական համալիրների բացահայտման գործիքները, դրանց արդիականացման և ուժեղացման խրախուսումը, դրանց հիման վրա ինտեգրացված տարածքային քլաստերների (ներառյալ՝ համապատասխան հետազոտություններով զբաղվող կազմակերպությունները) ստեղծման խրախուսումը, այդ թվում՝ պետական-մասնավոր համագործակցության միջոցով.

§ Սփյուռքի արտադրական և տեխնոլոգիական հնարավորությունների օգտագործումը՝ ներդրումներ ներգրավելու և ժամանակակից արտադրություններ ստեղծելու գործում (ներառյալ՝ համահայկական տեղեկատվական բազմաբնույթ պորտալների ստեղծումը և դրանց հետագա կատարելագործումը՝ Հայաստանի ներդրումային ծրագրերին սփյուռքահայերի ներգրավման նպատակով).

§ երկարաժամկետ հեռանկարում ժամանակակից տեխնոլոգիաների ստեղծման համակարգի ձևավորման գործիքներ և մեխանիզմներ:

234. Միջնաժամկետ հեռանկարում, 2012թ. սկսած, հիմնական ներդրումը տնտեսական աճին բերելու է ծառայությունների ոլորտը, որի տեսակարար կշիռը ՀՆԱ-ում 2021թ. հասնելու է շուրջ 44 տոկոսի՝ 2007 թ. 32.2 տոկոսի համեմատ: Ընդ որում, հիմնական աճը տեղի է ունենալու 2012-2021 թթ., մասնավորապես տեղեկատվական տեխնոլոգիաների, ֆինանսական միջոցառության, կրթական, գիտական և առողջապահական

ծառայությունների, ինչպես նաև ներգնա և արտագնա տուրիզմի առաջանցիկ զարգացման հաշվին:

235. Տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացումը անհրաժեշտ և հիմնական պայմանն է գիտելիքի վրա հիմնված տնտեսության և դրա բաղկացուցիչ մասն հանդիսացող «Էլեկտրոնային Հայաստան» համակարգի (էլ. կառավարում, էլ. գործարարություն, էլ. կրթություն և այլ էլեկտրոնային համակարգեր) ստեղծման համար, ինչպես գիտելիքի և տեղեկատվության տարածման և իրացման, այնպես էլ նոր գիտելիքի ստեղծման գործում: Այդ առումով Կառավարության քաղաքականության կենտրոնում կլինեն հասարակության կոմպյուտերիզացումը և ինտերնետի լայնածավալ օգտագործման, որակի բարձրացման և հասարակության լայն խավերի համար հասանելիության հարցերը:

Աղյուսակ 5.12. Տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացման հիմնական հեռանկիչները

	2006	2010	2015	2018	2021
Տնային համակարգիչների տեսակարար կշիռը, %	10	25	40	50	75
Կրթական համակարգի կոմպյուտերիզացման աստիճանը, %	10	30	50	90	100
Տնային տնտեսությունների կողմից ինտերնետի օգտագործումը	5	25	40	50	75
Պետական կառավարման համակարգի կոմպյուտերիզացման և ինտերնետի օգտագործման աստիճանը	10	50	90	95	100
E-կառավարման գործող ինտերնետային էջերի առկայությունը պետական և տեղական կառավարման մարմիններում		50	100	100	100

236. Զբոսաշրջության բնագավառի պետական քաղաքականության հիմնական նպատակն է մեծացնել զբոսաշրջության նեղրումը ազգային եկամտի ավելացման, համաչափ տարածքային զարգացման, բնակչության կենսամակարդակի բարձրացման և աղքատության կրճատման գործընթացում՝ պայմանավորված զբոսաշրջային այցելությունների քանակի աճով, զբոսաշրջությունից ստացված եկամուտների ավելացմամբ և նոր աշխատատեղերի ստեղծմամբ:

237. Կարևոր խնդիրներից է լինելու զբոսաշրջության զարգացումը մարզերում, ինչը կնպաստի Երևան քաղաքի և երկրի այլ տարածաշրջանների միջև զարգացման մեծ տարբերությունների մեղմմանը: Տարածքային զարգացման առումով հատուկ կարևորվում է, մասնավորապես, Գյումրու և Վանաձորի օդանավակայանների վերակառուցումը:

238. Ծրագրային ժամանակահատվածում քայլեր են ձեռնարկվելու զբոսաշրջության, Հայաստանի համար հեռանկարային, հետևյալ ձևերի զարգացման ուղղությամբ.

- § Բուժիչ-
- § Լեռնադահուկային զբոսաշրջություն,
- § Ադամանդագործային և ոսկերչական կենտրոն՝ ոսկու բորսա,
- § Շրջագայություն խաղողի այգիներով, կոնյակի և գինու գործարաններով՝ ներկայացնելով խմիչքի արտադրության ամբողջ ցիկլը:

239. Զբոսաշրջության ոլորտի զարգացման հիմնական արդյունքային ցուցանիշները ներկայացվում են ստորև բերվող աղյուսակում:

Աղյուսակ 5.13. Ջրոսաշրջության ոլորտի զարգացման հիմնական արդյունքային ցուցանիշները

Ցուցանիշ	2006	2010	2020
Միջազգային զբոսաշրջիկների քանակը, հազ. մարդ	510.2	600.0	1,500
Ջրոսաշրջության ոլորտում զբաղվածների տեսակարար կշիռը ընդհանուր զբաղվածության մեջ, %	1.7	1.8	1.9
Ջրոսաշրջիկների կատարած ծախսերը, մլն դոլար	440	480	1,350
Ներքին զբոսաշրջային այցելությունների թիվը, հազ. մարդ	369	500	1,000

240. Կառավարությունը երկարաժամկետ հեռանկարում նախատեսում է Հայաստանը դարձնել ֆինանսական, բժշկական և մասնագիտական կրթության ծառայությունների տարածքային կենտրոն, ինչը ենթադրում է այդ ծառայությունների որակի կտրուկ բարձրացում և համապատասխանեցում զարգացած երկրների ստանդարտներին, դրանց արտահանման ծավալների կտրուկ ընդլայնում, ինչպես նաև գնային մրցունակության պահպանում: Այդ նպատակին հասնելու համար կառավարությունը 2008-2009 թթ. ընթացքում համապատասխան երկարաժամկետ ծրագրեր կմշակի և կսկսի իրականացնել՝ 2009 թ. սկսած:

241. Ինչ վերաբերում է արտահանման խրախուսմանը, ապա ինչպես արդյունաբերական զարգացման քաղաքականությունը, այն բաղկացած կլինի ընդհանուր, ինչպես նաև հատուկ քաղաքականության: Պետք է նշել, որ արտահանման խրախուսումը, հատկապես Հայաստանի նման փոքր երկրներում ուղղակիորեն կապված է արդյունաբերության, ինչպես նաև գյուղատնտեսության զարգացման հետ: Այդուհանդերձ, Կառավարությունը 2008-2009 թթ. ընթացքում կմշակի և կսկսի ներդնել արտահանման խրախուսման համալիր երկարաժամկետ ծրագիր, որը այլ միջոցառումների հետ մեկտեղ, մասնավորապես, կպարունակի՝

- § արտահանման ֆինանսավորումը (վարկավորման ապահովագրման և երաշխավորման գործիքների կիրառմամբ) իրականացնող մասնագիտական կառույցների ստեղծումը.
- § առևտրի տեխնիկական արգելքների հնարավորինս առավելագույն վերացումը.
- § ազատ առևտրի պայմանագրերի կնքումը (մասնավորապես ԵՄ և ԵՄ անդամ երկրների հետ).
- § արտահանողներին օժանդակումը՝ այլ երկրներում իրենց արտադրանքի սերտիֆիկացման, այդ թվում՝ ICO սերտիֆիկատներ ստանալու հարցերում.
- § միջոցառումների շարք, որը ուղղված պետք է լինի արտահանման անվանացանկի և աշխարհագրության ընդլայնմանը, ինչպես նաև բարձր տեխնոլոգիաների ճյուղերի արտահանման տեսակարար կշռի աճին.
- § տրանսպորտային ծախսերի կրճատմանը ուղղված միջոցառումները, ներառյալ պետական ռեսուրսների ներդրումը, ինչպես նաև ռեսուրսների հատկացումը պետական-մասնավոր գործընկերության սկզբունքներով:

5.6. Դրամավարկային քաղաքականությունը և ֆինանսական միջնորդության խորացումը

242. Վերջին տարիների ընթացքում տնտեսական աճի արագացման հետ մեկտեղ և վերականգնողական աճից՝ ներդրումների վրա հիմնված աճին անցնելու, ինչպես նաև դրամի անրապնդման գործընթացին զուգահեռ, սկսեց նշանակալիորեն աճել տնտեսության

փողայնացման (մոնետիզացիայի) աստիճանը, որը արտահայտվում է ինչպես փողի բազայի և փողի զանգվածի առաջանցիկ աճով և դրանց՝ ՀՆԱ նկատմամբ հարաբերակցության ավելացմամբ, այնպես էլ տնտեսության ստվերայնության/ դոլարայնացման մակարդակի աստիճանական կրճատմամբ: Այդ զարգացումները պայմանավորված են եղել ներքին և արտաքին բնույթի մի շարք գործոնների ազդեցությամբ:

243. Հիմնական ներքին գործոններից են ՀՀ Կառավարության և ՀՀ ԿԲ վարած կոշտ հարկաբյուջետային և դրամավարկային քաղաքականությունը, որն ուղղված է եղել բյուջեի պակասուրդի և գնաճի զսպմանը՝ համապատասխանաբար 1.5 3 տոկոսի (ՀՆԱ նկատմամբ) և 3-5 տոկոսի սահմաններում: Արտաքին գործոններից հիմնականներն են արտարժույթի զգալիորեն ավելացած ներհոսքը ոչ պաշտոնական տրանսֆերտների տեսքով և ներմուծվող վառելիքի, սննդամթերքի ու մետաղների գների շարունակվող աճը, որի հիմնական պատճառները ինչպես շարունակ աճող համաշխարհային պահանջարկն է, այնպես էլ ԱՄՆ վերջին տարիների ընդլայնողական դրամավարկային քաղաքականությունը:


Աղյուսակ 5.14. Հայաստանի արժույթային քաղաքականությունը բնութագրող հիմնական ցուցանիշների դինամիկան 2001-2007թթ.

Ցուցանիշներ	2001	2002	2003	2004	2005	2006	2007
Համախառն միջազգային պահուստներ, մլն ԱՄՆ դոլար	331.2	432.3	505.8	550	676.4	1072	1659.2
% ՀՆԱ նկատմամբ	15.6	18.2	18.0	15.4	13.8	16.8	18.0
Ներմուծման ծածկույթ, ամիս	4.5	5.3	4.7	4.9	4.5	5.9	6.1
Փողի բազա, մլրդ դրամ	80.4	111.3	118.6	132.1	200.6	283.0	427.1
% ՀՆԱ նկատմամբ	6.8	8.2	7.3	6.9	8.9	10.6	13.6
Փողի զանգված, մլրդ դրամ	158.2	203.1	233.8	285.9	365.6	485.7	691.3
% ՀՆԱ նկատմամբ	13.4	14.9	14.4	15.0	16.3	18.2	22.0

Աղբյուրը՝ ՀՀ ԱՎԾ, ՀՀ ԿԲ:

244. Գրամավարկային քաղաքականությունը բնութագրող ցուցանիշների հիմնական աճը տեղի է ունեցել 2004 թ. սկսած, որը համընկնում է դրամի արժևորման գործընթացի, ԱՄՆ ընդլայնողական դրամավարկային քաղաքականության, ոչ պաշտոնական տրանսֆերտների ծավալների և վառելիքի ու այլ բնական ծագում ունեցող ապրանքատեսակների գների կտրուկ աճի սկզբի հետ (տե՛ս Աղյուսակ 5.14, Գծանկար 5.5): Այդ պայմաններում դրամի ինչպես անվանական, այնպես էլ իրական արժևորում, ինչին, ՀՀ կենտրոնական բանկի կողմից որդեգրած փոխարժեքի լողացող ռեժիմի պարագայում, նպաստել է արտարժույթի այն ավելցուկը, որ ՀՀ կենտրոնական բանկը չի ստերիզացրել՝ իր գլխավոր խնդրի՝ գների ցածր և կայուն մակարդակի ապահովման առաջնահերթությունից ելնելով:

Գծանկար 5.5. Համախառն միջազգային պահուստները, փողի բազան, փողի զանգվածը և անվանական ՀՆԱ-ն 2002-2007թթ. (ինդեքս՝ 2001 թ. = 100)



245. Այդուհանդերձ, ինչպես վկայում է Գծանկար 5.5-ը, 2005 թ. սկսած, նույնիսկ արտարժույթի մուտքի մասնակի չեզոքացման դեպքում, որը տեղի էր ունենում երկրի առևտրային հաշվեկշռի վատթարացման պայմաններում⁹⁵, երկրի համախառն միջազգային պահուստները, փողի բազան և փողի զանգվածը 2005-2007 թթ. համապատասխանաբար աճել են (միջին տարեկան) 44.4, 47.9 և 34.2 տոկոսով, անվանական ՀՆԱ 18.1 տոկոս աճի պարագայում, մինչդեռ այդ ցուցանիշների աճի տեմպերը 2002-2004թթ. համապատասխանում էին ՀՆԱ աճի տեմպերին:

246. 2005-2007 թթ. դրամի արժևորման գործընթացը, 2006-2007 թթ. դրամավարկային պայմանների խստացման պարագայում, նպաստել են դրամով կատարվող գործարքների տեսակարար կշռի առաջանցիկ աճին՝ ի հաշիվ արտարժույթով կատարվող գործարքների, որը դրամի շրջանառությունը կարգավորելուն ուղղված մի շարք միջոցառումների հետ մեկտեղ, նկատելիորեն ավելացրել է տնտեսության դրամայնացման (մոնետիզացիայի) աստիճանը՝ համապատասխանաբար կրճատելով տնտեսության դոլարայնացման և ստվերայնության մակարդակները:

247. Մյուս կողմից, դրամի արժևորման գործընթացները 2005-2007թ. ընթացքում մոտ 2 անգամ ավելացրել են Հայաստանում արտարժույթով չափվող կյանքի արժեքը, իսկ անվանական աշխատավարձերը դոլարային արտահայտությամբ 2001-2007թթ. աճել են 5.13 անգամ՝ դրամային անվանական արժեքով 3.16 անգամի համեմատ⁹⁶, որը ուղղակիորեն ազդել է երկրի մրցունակության վրա՝ արագ վերացնելով ցածր աշխատավարձերի ժամանակավոր մրցակցային առավելությունը: Դրամի արժևորումը բացասական ազդեցություն ունի նաև արտահանման վրա⁹⁷: Այսպես, դրամական արտահայտությամբ

⁹⁵ 2007թ. առևտրային հաշվեկշռի պակասուրդը կազմել էր ՀՆԱ նկատմամբ 23.2 տոկոս՝ 2004թ. 17.6 տոկոսի փոխարեն:


⁹⁶ 2001թ. միջին ամսական անվանական աշխատավարձը Հայաստանում կազմել է 24.5 հազար դրամ կամ 44.1 ԱՄՆ դոլար, 2007թ.՝ 77.5 հազար դրամ կամ 226.5 ԱՄՆ դոլար: Անփոփոխ փոխարժեքի դեպքում այն 2007թ. կկազմեր 139.6 ԱՄՆ դոլար կամ 62.3 տոկոսով ավելի ցածր կլիներ:

⁹⁷ Պայմանով, որ այն ավելի արագ է արժեքավորվում, քան հիմնական առևտրային գործընկերների ազգային արժույթը, որը և տեղի է ունենում Եվրոմիության, Ռ-ուսաստանի, ինչպես նաև Հայաստանի համարյա բոլոր խոշոր առևտրային գործընկերների հետ:

Հայաստանի արտահանման ծավալները 2007թ. մնացել են 2003թ. մակարդակին՝ դոլարային արտահայտությամբ աճելով 68 տոկոսով:

248. Այդուհանդերձ, Կառավարությունը և Կենտրոնական բանկը կարծում են, որ դրամավարկային պայմանների խստացման և փոխարժեքի լողացող ռեժիմի առավելությունները՝ գնաճի արդյունավետ և ինքնուրույն սահմանափակումը, տնտեսության դրամայնացման աճի, դոլարայնացման և ստվերայնության կրճատման համար ընձեռած հնարավորությունները, և՛ ներկայումս, և՛ ԿԶԻ-ի գործողության ժամանակահատվածում ավելի կարևոր են, քան արտաքին պատճառներով պայմանավորվող դրամի արժևորման բացասական հետևանքները, ինչպիսիքն են՝ արտաբերության արտահայտությամբ գների աճը և ժամանակավոր մրցակցային առավելությունների վրա հիմնված արտահանման կրճատման միտումը⁹⁸:

Գծանկար 5.6. Փողի զանգված/ՀՆԱ հարաբերակցություն՝ միջազգային համեմատականներ, % (2003 թ., եթե այլ նշում չկա)



249. Չնայած վերջին երեք տարիների տնտեսության դրամայնացման (մոնետիզացիայի) էական աճին, այդ ցուցանիշով⁹⁹ Հայաստանը ներկայումս գիջում է աշխարհի երկրների մեծամասնությանը, իսկ ԱՊՀ երկրների մեջ գրավում է վերջին տեղերից մեկը՝ գերազանցելով միայն Հարավային Կովկասի իր հարևաններին՝ Ադրբեջանին և Վրաստանին (տե՛ս Գծանկար 5.6): Ելնելով դրանից, ինչպես նաև տնտեսության դրամայնացման աստիճանի բարձրացման անհրաժեշտությունից, որը դոլարայնացման և ստվերային դրամաշրջանառության ծավալների անընդհատ կրճատումը պայմանավորող հիմնական գործոնն է, այն, գնաճի ցածր մակարդակներ ապահովելու հետ մեկտեղ, կհանդիսանա ԿԶԾ-ի դրամավարկային քաղաքականության հիմնական գերակայությունը:

⁹⁸ Ելնելով համաշխարհային փորձից՝ հարաբերականորեն էժան աշխատուժի օգտագործման վրա հիմնված և հարաբերականորեն ավելի քիչ ներդրումներ պահանջող արտադրության և արտահանման հնարավորությունները աստիճանաբար կրճատվում են երկրի տնտեսական զարգացմանը զուգահեռ, և փոխարինվում են բարձր արտադրողականության, որակի և տեխնոլոգիաների վրա հիմնված արտադրությամբ և արտահանմամբ: Ներկայումս Հայաստանը գտնվում է զարգացման առաջին մոդելից՝ երկրորդը, կամ վերականգնողական աճից՝ ներդրումների վրա հիմնված աճին անցնելու ժամանակահատվածում, որտեղ որոշիչ դեր պետք է խաղա ոչ թե աշխատուժի գինը, այլ որակավորումը և արտադրողականության աճը՝ ներդրումների ներգրավման և խրախուսման շնորհիվ:

⁹⁹ Փողի զանգված/ՀՆԱ հարաբերակցություն:

250. Տնտեսության դրամայնացման աճին և դոլարայնացման կրճատմանը, դրամի արժուրդի հետ մեկտեղ, նպաստել է նաև ՀՀ կենտրոնական բանկի դրամաշրջանառության կարգավորման քաղաքականությունը, մասնավորապես՝ արտարժույթով ներքին առևտրի արգելումը և արտարժույթի ներքին շրջանառության այլ սահմանափակումները: Տնտեսության դրամայնացման աստիճանի ավելացմանը ուղղված հետագա քայլերը կայարունակեն, մասնավորապես, միջոցառումներ, որոնք ուղղված կլինեն կանխիկ դրամաշրջանառության սահմանափակմանը և անկանխիկ՝ բանկային համակարգի, ինչպես նաև էլեկտրոնային վճարային համակարգերի միջոցով դրամաշրջանառության ծավալների կտրուկ ավելացմանը:

251. Դրամավարկային քաղաքականության ազդեցատների վերաբերյալ ԿԶԾ-ի կանխատեսումները հիմնված են հետևյալ հիմնական ենթադրությունների վրա.

- 12-ամսյա գնաճի (չափված՝ ՄԳԻ-ով) թիրախը ծրագրային ողջ ժամանակահատվածում լինելու է 3 (+/-1.5) տոկոս մակարդակը, բացառությամբ՝ 2009-2010 թթ., երբ 12-ամսյա գնաճի թիրախ է հանդիսանալու 4 (+/- 1.5) տոկոս մակարդակը¹⁰⁰.
- կանխատեսվում է մասնավոր ոչ պաշտոնական տրանսֆերտների աճի տեմպի որոշակի դանդաղում՝ կապված ինչպես Հայաստանում նախատեսվող տնտեսական աճի և դրանով պայմանավորված կենսամակարդակի աճի, այնպես էլ համաշխարհային տնտեսության (ներառյալ՝ Ռուսաստանի Դաշնության, որը հանդիսանում է դեպի Հայաստան ուղղված ոչ պաշտոնական տրանսֆերտների հիմնական աղբյուրը) զարգացման տեմպերի սպասվելիք նվազման հետ.
- կանխատեսվում է ԱՄՆ դրամավարկային պայմանների խստացում 2009 թ. սկսած, որը որոշակիորեն կսահմանափակի արտարժույթի առաջարկը և կհակազդի վառելիքի և այլ բնական ծագում ունեցող ապրանքների գների աճին.
- կանխատեսվում է արտահանման առաջանցիկ աճի շնորհիվ առևտրային բացասական հաշվեկշիռ/ՀՆԱ հարաբերակցության աստիճանական բարելավում, որը որոշակիորեն կսահմանափակի արտարժույթի ներքին պահանջարկը՝ ներմուծում իրականացնելու համար.

252. Այդ ենթադրությունների վրա հիմնված՝ համախառն միջազգային պահուստների և փողի զանգվածի կանխատեսումները ներկայացված են Աղյուսակ 5.15-ում: Նախատեսվում է, որ 2008-2021 թթ. համախառն միջազգային պահուստները անվանական արտահայտությամբ կաճեն միջին տարեկան 10.9 տոկոսով՝ ընթացիկ դոլարային արտահայտությամբ ՀՆԱ նախատեսված միջին տարեկան 11.6 տոկոս աճի պարագայում: Ընդ որում, 2008-2012 թթ. համախառն միջազգային պահուստները կաճեն ավելի դանդաղ, քան ՀՆԱ-ն (համապատասխանաբար՝ 9.4 տոկոս և 15.4 տոկոս¹⁰¹), իսկ 2013-2021 թթ.՝ ավելի արագ (համապատասխանաբար՝ 11.8 տոկոս և 9.3 տոկոս): Համեմատության համար նշենք, որ 2001-2007 թթ. համախառն միջազգային պահուստները միջին տարեկան կտրվածքով աճել են 30.8 տոկոսով՝ դոլարային արտահայտությամբ ՀՆԱ-ի 27.7 տոկոս միջին տարեկան անվանական աճի պայմաններում:

¹⁰⁰ Մասնավորապես, հաշվի է առնելով 2008-2010 թթ. վառելիքի (ներառյալ՝ բնական գազի) ներմուծման և ներքին գների սպասվող աճը:

¹⁰¹ Արտահայտում է վառելիքի ներմուծման գների ենթադրվող աճի ազդեցությունը միջազգային պահուստների վարքագծի վրա:

Աղյուսակ 5.15. Համախառն միջազգային պահուստների և փողի զանգվածի կանխատեսումները 2010-2021թթ. (ընթացիկ գնեքով)

Ցուցանիշներ	2007	2010	2012	2015	2018	2021
	Փաստ.	Կանխատեսումներ				
Համախառն միջազգային պահուստներ, մլն ԱՄՆ դոլար	1659.2	2321.1	2591.8	3384.8	4824.3	7055.8
տոկոս՝ ՀՆԱ-ի նկատմամբ	18.0	15.՝	13.5	13.2	14.4	16.4
Ներմուծման ծածկույթ, ամիս	5.5	4.3	3.6	3.2	3.2	3.4
Փողի զանգված, մլրդ դրամ	691.3	1209.2	1736.3	2910.5	4672.1	7463.8
տոկոս՝ ՀՆԱ-ի նկատմամբ	22.0	25.7	29.6	37.1	45.7	56.9

253. Ինչ վերաբերում է փողի զանգվածի աճին, ապա նախատեսված են ՀՆԱ-ի աճից նկատելիորեն ավելի բարձր տեմպեր: 2008-2021 թթ. ընթացքում փողի զանգվածը միջին տարեկան կտրվածքով կաճի 18.6 տոկոսով (անվանական ՀՆԱ-ի միջին տարեկան 10.8 տոկոս աճի պարագայում): Ընդ որում, 2008-2012թթ. ընթացքում փողի զանգվածը կաճի միջին տարեկան 20.3 տոկոսով (անվանական ՀՆԱ-ն՝ միջին տարեկան 13.3, իսկ 2013-2021թթ.՝ 17.6 տոկոսով կամ գրեթե երկու անգամ ավելի արագ, քան անվանական ՀՆԱ-ն): Նշված աճի ապահովման հիմնական գործոնը կհանդիսանա տնտեսության ֆինանսական հատվածի, հատկապես բանկային համակարգի առաջանցիկ զարգացումը և ֆինանսական միջնորդության աստիճանաբար խորացմանը ուղղված Կառավարության և Կենտրոնական բանկի քաղաքականությունը, ինչպես նաև ազգային դրամի շրջանառության և վճարման էլեկտրոնային համակարգերի օգտագործման էական ընդլայնմանն ու կանխիկի և արտարժույթի ներքին շրջանառության սահմանափակմանը ուղղված քաղաքականությունը:

254. Ֆինանսական համակարգը Հայաստանում սկսել է ձևավորվել անկախությունից անմիջապես հետո և ներկայումս բնութագրվում է ֆինանսական համակարգի այլ կառույցների նկատմամբ բանկային համակարգի ճնշող գերակայությամբ (տե՛ս Աղյուսակ 5.16): 2007թ. բանկային համակարգի տեսակարար կշիռը ֆինանսական ամբողջ համակարգի կառուցվածքում կազմել է 93.7%՝ 2001 թ. 96.6%-ի փոխարեն կամ, ըստ էության, չի փոխվել: Ֆինանսական համակարգի միակ այլ զարգացող հատվածը վարկային կազմակերպություններն են, որոնք սկսել են գործել 2003 թ. և 4 տարվա ընթացքում դրանց ակտիվները աճել են մոտ 19 անգամ: Ինչ վերաբերում է ապահովագրությանը, ապա ֆինանսական հատվածի այդ կարևոր համակարգը 2001-2007 թթ., ըստ էության, չի զարգացել, իսկ կորպորատիվ արժեթղթերի շուկան գտնվում է սաղմնային վիճակում՝ թեև առկա են դրա զարգացման համար անհրաժեշտ իրավական փաստաթղթերը և ինստիտուցիոնալ կառույցները: Հայաստանում ներկայումս բացակայում են ֆինանսական համակարգի այնպիսի կարևոր տարրեր, ինչպիսիք են ներդրումային բանկերը և հիմնադրամները, ինչպես նաև մասնավոր կենսաթոշակային հիմնադրամները:

255. Հիմնվելով միջազգային փորձի վրա, համաձայն որի՝ ֆինանսական համակարգի դերակատարությունը և հարաբերական չափերը (ՀՆԱ նկատմամբ) կտրուկ աճում են տնտեսական զարգացմանը զուգընթաց, և հաշվի առնելով ԿԶԾ-ի շրջանակներում նախատեսվող անցումը ներդրումների վրա հիմնված տնտեսական աճի, որի դեպքում կտրուկ ավելանում է ֆինանսական միջնորդության դերը՝ որպես ներքին ներդրումների ապահովման հիմնական աղբյուր, փոխառու միջոցների մատչելիության աստիճանի էական աճի ապահովումը հանդիսանում է ԿԶԾ-ի տնտեսական քաղաքականության հիմնական գերակայություններից մեկը: Այդ աճը նախատեսվում է ապահովել ֆինանսական միջնորդության խորացումը, ֆինանսական համակարգի հարաբերական չափերի և բազմազանության առաջանցիկ աճը ապահովող քաղաքականության միջոցով:

Աղյուսակ 5.16. Հայաստանի ֆինանսական համակարգի ակտիվները 2001-2007 թթ. (մլրդ դրամ՝ ընթացիկ գներով)

Ցուցանիշներ	2001	2002	2003	2004	2005	2006	2007
Բանկային համակարգի ակտիվներ	188.7	228.6	282.1	363.6	440.7	524.5	764.4
<i>տոկոս՝ ՀՆԱ-ի նկատմամբ</i>	<i>16.1</i>	<i>16.8</i>	<i>17.4</i>	<i>19.1</i>	<i>19.6</i>	<i>19.7</i>	<i>24.3</i>
Ֆինանսական կազմակերպությունների ակտիվներ				2.3	7.9	20.6	43.4
<i>տոկոս՝ ՀՆԱ-ի նկատմամբ</i>				<i>0.1</i>	<i>0.4</i>	<i>0.8</i>	<i>1.4</i>
Ապահովագրման հատվածի ակտիվներ	3.7	4.0	4.2	6.4	9.9	8.5	8.4
<i>տոկոս՝ ՀՆԱ-ի նկատմամբ</i>	<i>0.32</i>	<i>0.29</i>	<i>0.26</i>	<i>0.33</i>	<i>0.44</i>	<i>0.32</i>	<i>0.27</i>
Արժեթղթերի շուկայի կապիտալացում	2.8	5.9	15.9		13.9		
<i>տոկոս՝ ՀՆԱ-ի նկատմամբ</i>	<i>0.2</i>	<i>0.4</i>	<i>1.0</i>		<i>0.6</i>		
Ընդամենը ակտիվներ	195.3	238.4	302.3	372.2	472.4	553.6	816.1
<i>տոկոս՝ ՀՆԱ-ի նկատմամբ</i>	<i>16.6</i>	<i>17.5</i>	<i>18.6</i>	<i>19.5</i>	<i>21.1</i>	<i>20.8</i>	<i>26.0</i>

256. Կայուն զարգացման ծրագիրը նախատեսում է, որ բանկային համակարգը կանխատեսելի ապագայում կշարունակի հանդիսանալ Հայաստանի ֆինանսական համակարգի հիմքը, և դրա զարգացումը խթանիչ դեր կկատարի ֆինանսական համակարգի այլ տարրերի զարգացման համար:

Աղյուսակ 5.17. Վարկային ներդրումների կառուցվածքը 2001-2007 թթ., մլրդ դրամ

Ցուցանիշներ	2001	2002	2003	2004	2005	2006	2007
Ընդամենը վարկային ներդրումներ	86.6	90.5	110.0	159.3	215.3	276.9	464.9
այդ թվում՝ բանկեր	86.6	90.5	107.6	155.7	208.1	259.3	426.2
ֆինանսական կազմակերպություններ	0.0	0.0	2.4	3.6	7.2	17.6	38.7
Դրամով	14.7	19.7	31.3	42.7	77.7	132.0	281.6
Արտարժույթով	71.9	70.8	78.7	116.6	137.6	145.0	183.2
Իրավաբանական անձանց	68.2	64.9	74.0	102.3	138.8	156.4	216.9
Բնակչությանը	18.4	25.7	36.0	57.0	76.5	120.5	248.0
որից՝ սպառողական վարկեր		12.8	23.4	39.3	52.4	71.4	123.6
հիփոթեկային վարկեր					11.8	25.4	53.4

257. Ինչպես վկայում է Աղյուսակ 5.17-ը, տնտեսության վարկավորման ծավալները 2001-2007 թթ. անվանական արտահայտությամբ աճել են նկատելիորեն ավելի արագ, քան ՀՆԱ-ն: Այդ ժամանակահատվածում վարկավորման ծավալների ավելացման միջին տարեկան ցուցանիշը կազմել է 32.3 տոկոս՝ անվանական ՀՆԱ-ի միջին տարեկան 17.8 տոկոս աճի պարագայում: Ընդ որում, վարկավորման ծավալների կուտակային աճի 60.7 տոկոսը ապահովվել է բնակչությանը տրամադրվող վարկերի հաշվին, որի արդյունքում դրանց տեսակարար կշիռը ընդհանուր վարկավորման ծավալներում 2007թ. կազմել է 53.3 տոկոս՝ 2001թ. 21.3 տոկոսի փոխարեն: Հատկանշական է նաև դրամով տրամադրվող վարկերի առաջանցիկ աճը, որը միջին տարեկան կտրվածքով կազմել է 63.6 տոկոս՝ ի տարբերություն արտարժույթով տրամադրվող վարկերի ծավալների միջին տարեկան 16.9 տոկոս աճի: Այդ զարգացումների արդյունքում, դրամով տրամադրվող վարկերի տեսակարար կշիռը վարկավորման ընդհանուր ծավալների կառուցվածքում 2007 թ. կազմել է 60.6 տոկոս՝ 2001 թ. 17 տոկոսի փոխարեն: Չնայած վերջին 4 տարիների ընթացքում տեղի ունեցած վարկավորման ծավալների աննախադեպ աճին, երբ վարկավորման ծավալները գրեթե եռապատկվել են, Հայաստանի բանկային համակարգը¹⁰² դեռ նկատելիորեն ավելի փոքր է,

¹⁰² Արտահայտված՝ տնտեսության վարկավորման ծավալներ/ՀՆԱ հարաբերակցությամբ:

քան պետք է լիներ՝ ելնելով ներքին վարկավորում/ՀՆԱ միջազգային օրինաչափություններից¹⁰³:

Աղյուսակ 5.18. Ներքին վարկավորում/ՀՆԱ հարաբերակցության փաստացի և հաշվարկային արժեքները 2001-2007 թթ.

Ցուցանիշներ	2001	2002	2003	2004	2005	2006	2007
Ներքին վարկավորում /ՀՆԱ, % (փաստացի)	7.31	5.59	6.27	7.33	8.40	9.13	13.48
Ներքին վարկավորում /ՀՆԱ, % (հաշվարկային՝ ԵԿԱ երկրների 1-ին հավասարումով հաշվարկված)	14.13	14.48	15.00	15.79	16.88	17.87	19.28
Ներքին վարկավորում /ՀՆԱ, % (հաշվարկային՝ բոլոր երկրների համար 2-րդ հավասարումով հաշվարկված)	16.37	16.88	17.65	18.83	20.50	22.02	24.25
Փաստացիի շեղումը հաշվարկայինից (ըստ 1-ին հավասարման)	-6.82	-8.88	-8.73	-8.46	-8.48	-8.73	-5.80
Փաստացիի շեղումը հաշվարկայինից (ըստ 2-րդ հավասարման)	-9.05	-11.28	-11.38	-11.51	-12.09	-12.88	-10.77

258. Ինչպես ցույց է տալիս Աղյուսակ 5.18-ը, չնայած բանկային համակարգի վերջին տարիների արագ զարգացմանը և համապատասխան շեղումների որոշակի կրճատմանը, դրա չափերը 2007 թ. մոտ 40 տոկոսով ավելի փոքր էին, քան ԵԿԱ երկրների համար հաշվարկված, և մոտ 80 տոկոսով ավելի փոքր, քան աշխարհի բոլոր երկրների համար հաշվարկված ներքին վարկավորում/ՀՆԱ կապի գործելու դեպքում:

259. Ելնելով նշվածից և հաշվի առնելով բանկային ոլորտի զարգացման ներկայիս ներուժը, ինչպես նաև ՀՆԱ-ի աճի ծրագրվող սցենարը՝ ԿԶԾ-ն նախատեսում է ներքին վարկավորում/ՀՆԱ հարաբերակցությունը 2012թ. հասցնել 25.3%¹⁰⁴, իսկ 2021թ.՝ 50%¹⁰⁵: Այդ

¹⁰³

-2006» և Հայաստանի 2001-2007 թթ. ներքին վարկավորման և ՀՆԱ փաստացի տվյալների հիման վրա հաշվարկվել է երկու ռեգրեսիոն հավասարում. առաջինը՝ Եվրոպայի և Կենտրոնական Ասիայի երկրների տվյալների, իսկ երկրորդը՝ աշխարհի բոլոր երկրների տվյալների հիման վրա: Եվրոպայի և Կենտրոնական Ասիայի երկրների խումբը ընտրված է հաշվի առնելով այն հանգամանքը, որ անցումային երկրներում, որոնք ընդգրկված են երկրների այդ խմբում (ներառյալ՝ Հայաստանը) բանկային համակարգի չափերը նկատելիորեն ավելի փոքր են, քան այլ երկրներում:

Առաջին հավասարումը (ԵԿԱ երկրների համար) ունի հետևյալ տեսքը՝

$$- \\ (0.59) \quad (0.06)$$

Երկրորդ հավասարումը (աշխարհի բոլոր երկրների համար) ունի հետևյալ տեսքը՝

$$- \\ (0.32) \quad (0.03)$$

որտեղ՝ DC՝ ներքին վարկավորման ծավալներն են՝ ընթացիկ մլն ԱՄՆ դոլարով,

GDP՝ ՀՆԱ-ն՝ ընթացիկ մլն ԱՄՆ դոլարով,

R(2) - դետերմինացման գործակիցը, SE՝ հավասարման ստանդարտ շեղումը,

F՝ Ֆիշերի F - դիտարկումների քանակը:

Փակագծերում գնահատականների ստանդարտ շեղումներն են:

¹⁰⁴ Համապատասխանում է ԵԿԱ երկրների համար 1-ին հավասարմամբ Հայաստանի 2012թ. կանխատեսվող ՀՆԱ-ի համար հաշվարկված հարաբերակցությանը:

ցուցանիշների մեծությունները կանխատեսվող ժամանակաշրջանի համար և դրանց հասնելու համար անհրաժեշտ աճի տեմպերը ներկայացված են

Աղյուսակ 5.19. Ներքին վարկավորում/ՀՆԱ հարաբերակցության կանխատեսվող հենանիշերը 2007-2021 թթ.

Ցուցանիշներ	2007	2010	2012	2015	2018	2021
Ներքին վարկավորում, մլրդ դրամ՝ ընթացիկ գներով	423.2	994	1485	2561	4129	6631
Ներքին վարկավորում /ՀՆԱ, %	13.5	21.2	25.3	32.7	40.4	50.6
Ներքին վարկավորման անվանական աճի միջին տարեկան տեմպ, %*	30.4	32.9	22.2	19.9	17.3	17.1
Հուշագրային հոդված						
Անվանական ՀՆԱ միջին տարեկան աճի տեմպ, %*	17.8	14.3	11.7	10.1	9.3	8.6

* Աճի միջին տարեկան տեմպերը հաշվարկված են՝ 2007թ. համար ներառելով 2001-2007թթ. ժամանակահատվածը, 2010թ. համար՝ 2008-2010թթ. ժամանակահատվածը և այլն:

260. Աղյուսակում ներկայացված հենանիշերի նախատեսվող արժեքներին հասնելու համար ներքին վարկավորման ծավալներ/ՀՆԱ աճի հարաբերակցությունը պետք է մոտավորապես պահպանվի 2001-2007թ. մակարդակի վրա կամ ներքին վարկավորման աճի տեմպերը պետք մոտ 1.7-2.0 անգամ ավելի արագ լինեն, քան ՀՆԱ անվանական աճի տեմպերը, բացառությամբ՝ 2010-2012թթ. ժամանակահատվածի, երբ դրանք պետք է գերազանցեն ՀՆԱ աճի տեմպերը մոտ 2.3-2.4 անգամ:

261. Նշված հենանիշերին հասնելու քաղաքականությունը, ԿԶԾ-ի գործարար և ներդրումային միջավայրերին նվիրված բաժիններում նկարագրված փոխառու միջոցների մատչելիությունը ավելացնելու քաղաքականության միջոցառումների հետ մեկտեղ, պետք է պարունակի հետևյալ հիմնական տարրերը՝

- բանկային համակարգում մրցակցության աստիճանի կտրուկ բարձրացում, մասնավորապես՝ նոր միջազգային առաջնակարգ բանկերի մուտքը Հայաստան խրախուսելու միջոցով (ներկայումս Հայաստանում գործում է միայն մեկ առաջնակարգ միջազգային բանկային հաստատություն՝ «Էյչ-Էս-Բի-Սի բանկ Հայաստան»).
- բանկային գործունեության արդյունավետության աճը և ծախսերի կրճատումն ապահովելուն ուղղված քաղաքականությունը, մասնավորապես՝ ժամանակակից տեխնիկական միջոցների, ծրագրային ապահովման համակարգերի և բանկային նոր գործիքների և տեխնոլոգիաների ներդրման խրախուսումը, ներառյալ գրավադրման ենթակա միջոցների կազմի էական ընդլայնումը.
- համակարգի որոշակի ապակարգավորումը և որոշակի չափազանց խիստ նորմատիվների մեղմումը, որը հնարավորություն կտա ավելի արդյունավետ օգտագործելու բանկի ակտիվները.
- կորպորատիվ կառավարման ժամանակակից սկզբունքների հետևողական ներդրումը, բանկային համակարգի հնարավորինս թափանցիկության ապահովումը և դրանց իրական բաժնետիրացման խրախուսումը.
- հաշվի առնելով բնակչությանը տրամադրվող, այդ թվում՝ սպառողական վարկերի ներկայիս և ԿԶԾ-ի շրջանակներում կանխատեսվող ապագա առաջանցիկ աճը,

¹⁰⁵ Համապատասխանում է աշխարհի բոլոր երկրների համար 2-րդ հավասարմամբ Հայաստանի 2021թ. կանխատեսվող ՀՆԱ-ի համար հաշվարկված հարաբերակցությանը:

վարկառու ֆիզիկական անձանց շահերի պաշտպանության ինստիտուցիոնալ կառույցների ձևավորումը (ֆինանսական օմբուդսմեն՝ Միացյալ Թագավորության օրինակով)։

- հիփոթեքային արժեթղթերի ձևավորման, շրջանառության և երաշխավորման մեխանիզմների ստեղծումը, որը հնարավորություն կտա էականորեն ընդլայնել հիփոթեքից օգտվող տնային տնտեսությունների քանակը և կօժանդակի ներկայումս շատ արագ զարգացող վարկավորման այդ ձևի հետագա կայուն աճը և կսահմանափակի հիփոթեքային վարկավորման ռիսկերը։

262. Նշված և այլ միջոցառումների հետևողական կիրառման արդյունքում, ԿԶԾ-ով նախատեսում է ոչ միայն ապահովել Ադյուսակ 5.19-ում սահմանված հենանիշերին հասնելը, այլ նաև, մի կողմից՝ էականորեն էժանացնել փոխառու միջոցների արժեքը վարկառուների համար, կրճատելով վարկավորման ռիսկերը և համապատասխանաբար իջեցնելով վարկային ներդրումների և ավանդների տոկոսադրույքների տարբերությունը (տոկոսային սպրեդը), իսկ մյուս կողմից՝ էականորեն իջեցնելով վարկավորման ռիսկերը, կրճատել ներկայումս բանկային համակարգում գոյություն ունեցող ավելորդ իրացվելիությունը, որը արտահայտվում է կապիտալ/ակտիվներ չափազանց բարձր հարաբերակցությամբ։

263. Հայաստանում չափազանց բարձր են ինչպես տոկոսային սպրեդը (տե՛ս Ադյուսակ 5.20), որը բնութագրում է և՛ մրցակցության պակասը, և՛ վարկավորման դեռ բարձր ռիսկայնությունը, այնպես նաև կապիտալ/ակտիվներ հարաբերակցությունը¹⁰⁶, որը բնութագրում է և՛ չափազանց խիստ կարգավորման նորմատիվների առկայությունը, և՛ եղած ռեսուրսների թերի օգտագործումը ներքին վարկավորման նպատակների համար։ Բանկային սպրեդի և կապիտալ/ակտիվներ հարաբերակցության հաշվարկային արժեքները ստացվել են համապատասխան ռեգրեսիոն հավասարումներից, որոնց համար տվյալները վերցվել են -2006» վիճակագրական ժողովածուից¹⁰⁷։ Ադյուսակից երևում է, որ և՛ սպրեդի, և՛, հատկապես՝ կապիտալ/ակտիվներ

¹⁰⁶ 2004թ. տվյալներով՝ բանկային կապիտալ/բանկային ակտիվներ հարաբերակցությունը Հայաստանում ամենաբարձրն էր այն 88 երկրների մեջ, որոնց վերաբերյալ կար համապատասխան տեղեկատվություն (տե՛ս Համաշխարհային բանկի «W -2006»)։

¹⁰⁷ Նշված և Հայաստանի 2001-2007 թթ. բանկային սպրեդի, բանկային կապիտալ/ակտիվներ և ներքին վարկավորման փաստացի տվյալների հիման վրա հաշվարկվել է երկու ռեգրեսիոն հավասարում. առաջինը՝ սպրեդի, իսկ երկրորդը՝ կապիտալ/ակտիվներ կախյալ փոփոխականների համար։

Առաջին հավասարումը (սպրեդի համար) ունի հետևյալ տեսքը՝

$$(0.17) \quad (0.05)$$

Երկրորդ հավասարումը (կապիտալ/ակտիվներ հարաբերակցության համար) ունի հետևյալ տեսքը՝

$$(0.15) \quad (0.03)$$

որտեղ՝ DC ներքին վարկավորում/ՀՆԱ, տոկոս,

SP տոկոսադրույքների սպրեդը, տոկոս,

CA - բանկային կապիտալ/ բանկային ակտիվներ հարաբերակցությունը, տոկոս,

R(2) - դետերմինացման գործակիցը, SE հավասարման ստանդարտ շեղումը,

F Ֆիշերի F վիճակագրի արժեք - դիտարկումների քանակը։

Փակագծերում գնահատականների ստանդարտ շեղումներն են։

հարաբերակցության արժեքները Հայաստանում էականապես ավելի բարձր են, քան համապատասխան ցուցանիշների համաշխարհային միտումները:

Աղյուսակ 5.20. Բանկային սպրեդի և բանկային կապիտալ/բանկային ակտիվներ հարաբերակցության փաստացի և հաշվարկային արժեքները 2001-2007 թթ.

Ցուցանիշներ	2001	2002	2003	2004	2005	2006	2007
Բանկային սպրեդ (փաստացի), %	13.83	18.18	14.85	14.60	12.17	12.54	10.77
Բանկային սպրեդ (հաշվարկային), %	11.03	11.99	11.57	11.02	10.56	10.29	9.11
Փաստացի սպրեդի շեղումը հաշվարկայինից, %	2.80	6.19	3.27	3.57	1.61	2.25	1.66
Բանկային կապիտալ/բանկային ակտիվներ հարաբերակցություն (փաստացի), %	21.65	18.41	17.76	17.78	21.50	22.91	22.48
Բանկային կապիտալ/բանկային ակտիվներ հարաբերակցություն (հաշվարկային), %	13.75	14.67	14.27	13.74	13.29	13.02	11.85
Փաստացի հարաբերակցության շեղումը հաշվարկայինից, %	7.90	3.74	3.49	4.04	8.21	9.89	10.63

264. Ելնելով այդ երկու ցուցանիշների կարևորությունից՝ վարկային ռեսուրսների գները իջեցնելու և, հետևաբար, դրանց մատչելիությունը ավելացնելու, ինչպես նաև բանկային համակարգի ռեսուրսները ավելի արդյունավետ օգտագործելու համար, ԿԶԾ-ն օգտագործում է դրանք, որպես կարևոր միջանկյալ հենանիշեր՝ ներքին վարկավորման նախանշված ծավալներին հասնելու համար: Այդ հենանիշերի կանխատեսվող արժեքները ներկայացված են Աղյուսակ 5.21-ում:

265. Ինչպես ցույց է տալիս Աղյուսակ 5.21-ը, վերը նշված քաղաքականությունների արդյունքում նախատեսվում է ԿԶԾ-ի գործողության ընթացքում ներքին վարկավորման ծավալներ/ՀՆԱ հարաբերակցության աճին համահունչ կրճատել նաև տոկոսադրույքների սպրեդը՝ այն հասցնելով 6.7 տոկոսի՝ 2007 թ. 10.8 տոկոսի փոխարեն: Ծրագրվում է նաև բանկային կապիտալ/բանկային ակտիվներ հարաբերակցության 2008-2010թթ. ընթացքում կտրուկ իջեցումը (երկու անգամից ավելի)՝ հիմնականում ապակարգավորման և որոշ նորմատիվների մեղմացման, ինչպես նաև բանկային ոլորտում մրցակցության ուժեղացման քաղաքականության կիրառման արդյունքում:

Աղյուսակ 5.21. ՀՀ բանկային տոկոսադրույքների սպրեդի և բանկային կապիտալ/բանկային ակտիվներ հարաբերակցության կանխատեսվող հենանիշերը 2007-2021թթ.

Ցուցանիշներ	2007	2010	2012	2015	2018	2021
Ներքին վարկավորում/ՀՆԱ, %	13.5	21.2	25.3	32.7	40.4	50.6
Տոկոսադրույքների սպրեդ, %	10.8	8.4	7.8	7.4	7.1	6.7
Բանկային կապիտալ/բանկային ակտիվներ հարաբերակցություն, %	22.5	11.1	10.5	10.1	9.7	9.3

266. Հայաստանը արժեթղթերի շուկայի կապիտալացման ցուցանիշով զրավում է աշխարհում վերջին տեղերից մեկը, մասնավորապես, զիջելով Եվրոպայի և Կենտրոնական Ասիայի, ներառյալ՝ ԱՊՀ բոլոր երկրներին, որոնց մասին համապատասխան տեղեկատվություն է հրապարակված¹⁰⁸: Չնայած բավարար օրենսդրական հիմքերի, ինստիտուցիոնալ կառույցների (ներառյալ՝ Հայաստանի ֆոնդային բորսան և Կենտրոնա-

108

կան դեպոզիտարիան), ինչպես նաև կարգավորիչ մարմնի՝ ՀՀ կենտրոնական բանկի¹⁰⁹ առկայությանը, Հայաստանում տնտեսության ֆինանսավորման և ներդրումների ներգրավման այդ կարևոր համակարգի գործնականում բացակայությունը¹¹⁰ պայմանավորված է, ըստ էության, ինչպես առաջարկի, այնպես էլ պահանջարկի բացակայությամբ:

267. Առաջարկի բացակայությունը պայմանավորող գործոնները հիմնականում պայմանավորված են գործարարության կազմակերպման ձևով (գերակայում են մեկ կամ մի քանի սեփականատեր ունեցող ընկերությունները, որոնք, որպես կանոն, չեն ցանկանում ընդլայնել սեփականատերերի ցանկը՝ միևնույնիսար բաժնետերերի հաշվին), ինչպես նաև ընկերության մասին տեղեկատվության բացահայտման խիստ պահանջներով: Բացառությամբ բանկային համակարգի և մի քանի խոշոր ենթակառուցվածքային և օտարերկրյա մասնակցությամբ ընկերությունների, ներկայիս բաց բաժնետիրական ընկերությունների ձևով գործող ձեռնարկությունների կառավարման համակարգերը և հասարակությանը տրամադրվող տեղեկատվությունը չեն համապատասխանում ժամանակակից կորպորատիվ կառավարման և իրական բաժնետիրացման ստանդարտներին:

268. Պոտենցիալ միևնույնիսար ներդրողների կողմից պահանջարկի բացակայությունը հիմնականում պայմանավորված է վստահելի տեղեկատվության բացակայությամբ և ընկերության կառավարման մարմինների ընդունված որոշումների վրա արդյունավետ ներազդելու հնարավորությունների խիստ սահմանափակ լինելով: Այդ պարագայում վերջին տարիներին ազատ ֆինանսական ռեսուրսները, ինչպես շատ այլ երկրներում, ուղղվում են անշարժ գույքի շուկաներ:

269. Այդուհանդերձ, միջազգային, այդ թվում՝ ԵՄ նորանդամ և անդամության թեկնածու երկրների ժամանակակից փորձը վկայում է, որ բանկային համակարգի զարգացումը ծառայում է որպես խթան՝ ֆինանսական ոլորտի այլ, ներառյալ կորպորատիվ արժեթղթերի շուկան, արագ զարգացման համար: Ելնելով դրանից՝ ԿԶԾ-ն սահմանում է արժեթղթերի շուկայի զարգացման հետևյալ հենանիշերը (տե՛ս Աղյուսակ 5.22)¹¹¹:

¹⁰⁹ Արժեթղթերի շուկայի կարգավորման գործառույթները փոխանցվել են ՀՀ կենտրոնական բանկին 2005թ.: Մինչ այդ, այդ գործառույթները իրականացնում էր ՀՀ արժեթղթերի հանձնաժողովը, որը լուծարվել է կարգավորման գործընթացները ՀՀ կենտրոնական բանկին փոխանցելուց հետո:

¹¹⁰ Կորպորատիվ արժեթղթերի շուկան շատ թույլ զարգացած է նաև ԱՊՀ մի շարք երկրներում, բացառությամբ՝ Ռուսաստանի և, մասամբ, Ուկրաինայի, որը հիմնականում պայմանավորված է այդ երկրների իրական հատվածի առանձնահատկություններով (վառելիք արտահանող մեծ ընկերությունները Ռուսաստանում և մետալուրգիական գործարանները՝ Ուկրաինայում):

¹¹¹ Հենանիշերը հաշվարկված են -2006» վիճակագրական ժողովածուում հրատարակված՝ ԵԿԱ երկրների արժեթղթերի շուկայի կապիտալացմանը վերաբերող տեղեկատվության հիման վրա: Ռեգրեսիոն հավասարումը ունի հետևյալ տեսքը՝

$$-1.53 + 1.31 L \\ (0.16) \quad (0.05)$$

որտեղ՝ MC - արժեթղթերի շուկայի կապիտալացում, մլն ԱՄՆ դոլար,
DC - ներքին վարկավորում, մլն ԱՄՆ դոլար,
R(2) - դետերմինացման գործակիցը, SE - հավասարման ստանդարտ շեղումը,
F - Ֆիշերի F - դիտարկումների քանակը:
Փակագծերում գնահատականների ստանդարտ շեղումներն են:

Աղյուսակ 5.22. Արժեթղթերի շուկայի ծավալները (ընթացիկ գներով) և կապիտալացումը բնութագրող հենանիշերը 2010-2021թթ.

Ցուցանիշներ	2010	2012	2015	2018	2021
Ներքին վարկավորում, մլրդ դրամ	994	1485	2561	4129	6631
Արժեթղթերի շուկայի կապիտալացում, մլրդ դրամ	237.3	419.1	725.7	1256.8	2176.5
Արժեթղթերի շուկայի կապիտալացում, %՝ ՀՆԱ-ի նկատմամբ	5.0	7.1	9.3	12.3	16.6
Արժեթղթերի շուկայի կապիտալացում, աճի միջին տարեկան տեմպերը, %*		32.9	20.1	20.1	20.1
<i>Հուշագրային հոդված</i>					
Անվանական ՀՆԱ միջին տարեկան աճի տեմպ, %*	14.3	11.7	10.1	9.3	8.6

* Աճի միջին տարեկան տեմպերը հաշվարկված են՝ 2012թ. համար ներառելով 2010-2012թթ. ժամանակահատվածը, 2015թ. համար՝ 2012-2015թթ. ժամանակահատվածը և այլն: Մինչև 2010թ. աճի տեմպերը հաշվարկված չեն՝ հաշվի առնելով արժեթղթերի շուկայի ներկայիս չափազանց փոքր չափերը:

270. Արժեթղթերի շուկայի փաստորեն ստեղծմանն ուղղված քաղաքականությունը բաղկացած կլինի ինտեգրացիոն, տեխնիկական և բաժնետոմսերի բորսային շրջանառությունը խրախուսող քաղաքականության կիրառման, ինչպես նաև կորպորատիվ կառավարման ժամանակակից ստանդարտների ներդրման քաղաքականության: Ինտեգրացիոն քաղաքականասը պետք է հնարավորություն ընձեռի գնանշելու հայկական ընկերությունները և վաճառելու դրանց կորպորատիվ արժեթղթերը միջազգային բորսայական հարթակներում և ընդհակառակը՝ իրացնել այդ հարթակներում շրջանառվող արժեթղթերը հայկական բորսայական հարթակում¹¹²: Տեխնիկական լուծումները ենթադրում են բորսայական առևտրային համակարգերի արդիականացումը, որը պետք է հնարավորություն ընձեռի կապելու Հայկական ֆոնդային բորսան OMX այլ հարթակների հետ և իրականացվելու է OMX ընկերության կողմից:

271. Բաժնետոմսերի բորսայական շրջանառության խրախուսմանը ուղղված քաղաքականությունը ենթադրում է կարգավորիչ մարմնի օժանդակությունը շահագրգիռ հայրենական ընկերությունների արժեթղթերի սկզբնական առաջարկը (IPO) իրականացնելու գործում, ներառյալ՝ այդ ընկերությունների ընտրությունը, IPO փաթեթի

Ապահովագրական շուկան Հայաստանում վերջին տարիներին համարյա չի զարգանում, որը հիմնականում պայմանավորված է պարտադիր ապահովագրման համակարգերի բացակայությամբ: 2007 թ. դրությամբ ապահովագրական վճարների ընդհանուր գումարը կազմել է ընդամենը 4.8 մլրդ դրամ կամ ՀՆԱ-ի նկատմամբ 0.15 տոկոս: Փորձագիտական գնահատումներով՝ 2010 թ. ապահովագրական շուկան Հայաստանում որոշակիորեն կընդլայնվի՝ կապված 2009 թ. նախատեսված՝ երրորդ անձանց պատճառված վնասի դիմաց ավտոտրանսպորտային միջոցների պարտադիր ապահովագրման հետ, և կանխատեսվում է, որ ծավալը կկազմի առավելագույնը 30 մլրդ դրամ կամ ՀՆԱ-ի նկատմամբ 0.65 տոկոս¹¹³: Սկսած 2010 թվականից՝ նախատեսվում է բժշկական կամավոր ապահովագրական ժամանակակից համակարգի ստեղծումը, որից հետո Կառավարությունը կքննարկի այն պարտադիր դարձնելը պետական ծառայողների և պետական բյուջեից ֆինանսավորվող աշխատողների որոշ խմբերի (մասնավորապես՝ ուսուցիչների) համար: 2015 թ. համար նախատեսվում է ապահովագրական վճարների ընդհանուր գումարը հասցնել նվազագույնը մինչև ՀՆԱ-ի նկատմամբ 1.25 տոկոսի, իսկ 2021 թ.՝ մինչև ՀՆԱ-ի նկատմամբ 2.5 տոկոսի:

¹¹² 2008թ. հունվարին Հայկական ֆոնդային բորսան և Կենտրոնական դեպոզիտարիան վաճառվել են շվեդական OMX բորսային, որին պատկանում է ֆոնդային բորսաների լայն ցանց, այդ թվում՝ անցումային երկրներում, և որը 2007թ. ձեռք է բերվել ԱՄՆ մեծությամբ երկրորդ՝ NASDAQ բորսայի կողմից:

¹¹³ Հավաքված ապահովագրական վճարների գումարով չափված:

5.7. Հարկային քաղաքականություն և վարչարարություն

272. ԱՀՌԾ-ի հաստատումից ի վեր, Հայաստանի տնտեսական զարգացումները և հարկային համակարգում տեղի ունեցած փոփոխությունները ձևավորել են նոր իրողություններ: Վերջին տարիներին տնտեսությունն աճում է երկնիշ տեմպերով, սակայն, ինչպես արձանագրում են նաև հարկեր/ՀՆԱ հարաբերակցության բարձրացման ծրագրով սահմանվող նպատակադրումները, հարկման բազան դեռևս շարունակական բարելավումների կարիք ունի: Ընդհանուր առմամբ, հարկային օրենսդրությունում կատարված փոփոխությունները, որոնք հիմնականում պարզեցնող, հստակեցնող, հարկումից խուսափելու հնարավորությունները սահմանափակող բնույթ ունեն, կոչված էին շատ ավելի նպաստավոր պայմաններ ստեղծել ներդրումների և տնտեսական ակտիվության համար, քան առկա էր մինչ այդ: Առաջիկայում նույնպես, անհրաժեշտ կլինի հարկային օրենսդրությունը վերանայել այնպես, որ այն երաշխավորի հետագա տնտեսական զարգացումների համար հարկային օրենսդրության դրական ազդեցությունը և ապահովի հարկային եկամուտների անհրաժեշտ մակարդակը:

273. Աղքատության հաղթահարման ծրագրի շրջանակում առաջադրված խնդիրների լուծման տեսանկյունից՝ 2007 թվականին սկիզբ դրվեց միասնական սկզբունքներով Հարկային օրենսգրքի մշակմանը: 2008 թվականին պետք է ավարտվի Հարկային օրենսգրքի հատուկ մասի մշակումը, իսկ միջնաժամկետ հատվածում օրենսգրքի գործողության մեջ դնելը իր հիմքում կունենա հարկային քաղաքականության հետևյալ գերակայությունները.

հարկային բեռի հավասարաչափ բաշխման միտումով հարկման բազայի ընդլայնումը, ինչը պետք է իրականացվի հարկման դրույքաչափերի բարձրացումից հնարավորինս խուսափելու, գործող արտոնությունների հնարավորինս կրճատման և նոր արտոնությունների սահմանումը բացառելու եղանակով.

գործունեության առանձին տեսակների համար սահմանված հարկման այլընտրանքային համակարգերի փոխարինումը հարկման ընդհանուր կարգով՝ դրանով իսկ ամբողջությամբ անցում կատարելով տնտեսական գործունեության արդյունքներից կախված հարկման եղանակներին.

հարկման մեխանիզմների կատարելագործումը՝ հնարավորինս բացառելով հարկումից խուսափելու օրենսդրական հնարավորությունները, ինչպես նաև պարզեցնելով, հստակեցնելով օրենսդրական դրույթները:

274. Հարկեր/ՀՆԱ հարաբերակցության անհրաժեշտ մակարդակի ապահովման հիմնական գործիքը պետք է շարունակի մնալ հարկային վարչարարության բարելավումը՝ ուղղված ստվերային շրջանառությունների ծավալների կրճատմանը: Այս ուղղությամբ, նախ և առաջ, կարևորվում է 2008 թվականին ՀՀ Կառավարության կողմից հաստատված՝ «Հայաստանի Հանրապետության հարկային վարչարարության ռազմավարության 2008-2011 թվականների ծրագրով» նախատեսված միջոցառումների հետևողական իրագործումը: Ծրագրով, մասնավորապես առանձին նպատակների տեսքով սահմանված են դրույթներ ինչպես հարկային պարտավորությունների կամավոր կատարման (ինքնագնահատման) սկզբունքի ամբողջական ներդրման, այնպես էլ հարկային ստուգումների նոր քաղաքականության կիրառման վերաբերյալ՝ հստակ սահմանված չափորոշիչներով և կատարման կոնկրետ ժամկետներով: Հարկային պարտավորությունները պատշաճ չկատարելու դեպքերի համար պատասխանատվության խստացումը ևս դիտվում է որպես հարկատուների կարգապահության բարձրացման կարևոր միջոց:

275. Հարկային ինքնագնահատման արդյունավետ համակարգի ներդրումը ենթադրում է երկարաժամկետ համապարփակ ծրագրի իրագործում, որը պետք է ներառի հարկային (այդ թվում՝ հաշվետվական) ընթացակարգերի պարզեցումը, կատարելագործումը, տարբեր պետական մարմիններում հարկ վճարողների հաշվառման ընթացակարգերի միասնա-

կանացումը, հարկ վճարողների սպասարկման ծառայությունների բարելավումը, ինչպես նաև հարկային մարմնի կառուցվածքում գանգատարկման համակարգի գործունեության բարելավումները: Ինքնագնահատման համակարգի ներդրումը պետք է նվազագույնի հասցնի հարկ վճարողների և հարկային մարմինների միջև դեռևս առկա զգալի շփումները:

276. Հարկային վերահսկողության մեխանիզմների արդյունավետության բարձրացման տեսանկյունից՝ կարևոր է ռիսկի վրա հիմնված ստուգումների համակարգի ներդրումը, որը կուժեղացնի ստուգումների գործառույթը՝ բարձրացնելով դրանց նպատակայնությունը: Դա կպահանջի հարկ վճարողների վերաբերյալ տեղեկատվության հավաքագրում և վերլուծություն՝ ռիսկային ընտրությունների կատարման համար: Նման համակարգի ներդրումը հնարավորություն կընձեռնի վարչարարական ավելի քիչ ծախսեր կատարել պատշաճ հարկ վճարողների նկատմամբ՝ փոխարենը մեծացնելով ռիսկային հարկ վճարողների կողմից հարկումից խուսափելու երևույթները հայտնաբերելու գծով ծախսերը:

277. Մաքսային ոլորտում շարունակվելու է մաքսային օրենսդրության և մաքսային ընթացակարգերի պարզեցումը, մաքսային օրենսդրության պահանջների կատարման նկատմամբ հսկողության ընդլայնումը, մաքսային համակարգում ինքնահայտարարագրման մեխանիզմի կիրառման ընդլայնումը և, դրա հետ կապված՝ մաքսային հսկողության իրականացման միջոցների կատարելագործումը:

278. Ծարունակաբար բարելավվելու են հարկային և մաքսային մարմինների տեխնիկական ապահովվածության մակարդակը, ինչպես նաև այդ մարմինների միջև տեղեկատվության փոխանակման մեխանիզմները՝ ստեղծելով տնտեսավարող սուբյեկտների նկատմամբ արդյունավետ հսկողության իրականացման գործունե տեղեկատվական համակարգ:

5.8. Երկրի ինստիտուցիոնալ արդիականացումը

279. Երկրի ինստիտուցիոնալ արդիականացումը ԵՄ ստանդարտներին համապատասխան, որն իր արդյունավետությունը ցույց տվեց ԵՄ նորանդամ 10 նախկին սոցիալիստական երկրներում (ԵՄ-10), 1999-2006թթ. ընթացքում հանդիսացավ այդ երկրներում «երկրորդ սերնդի» բարեփոխումների հաջող իրականացման հիմնական գրավականը: Ելնելով ԵՄ-10-ի փորձից՝ երկրի ինստիտուցիոնալ արդիականացման հիմն

համապատասխան օրենսդրությանը¹¹⁴

հանրային և այլ ինստիտուտների ձևավորումը կամ վերափոխումը ԵՄ ստանդարտներին և պահանջներին համապատասխան, որոնք անհրաժեշտ են ԵՄ համապատասխան

ավելացումը, որը նպատակ ունի մոտեցնել նոր ստեղծված կամ վերափոխված ինստիտուտների կարողությունները՝ ԵՄ երկրների համապատասխան ինստիտուտների կարողություններին:

280. Երկրի ինստիտուցիոնալ արդիականացումը հանդիսանում է Կառավարության քաղաքականության հիմնական գերակայություններից մեկը և պետք է իրականացվի Եվրոպական հարևանության քաղաքականության (ԵՀՔ) շրջանակներում, որի անդամն է հանդիսանում Հայաստանը 2003 թ. սկսած: Կառավարությունը մտադիր է էականորեն արագացնել ինստիտուցիոնալ արդիականացման վերը նշված գործընթացները:

114

այն մասերի մոտարկումը, որը վերաբերում է ԵՄ անդամ կամ թեկնածու երկրների ներքին օրենսդրությանը ներկայացվող պահանջներին, բայց չի վերաբերում ԵՄ անդամությունից ելնող հարաբերությունների կարգավորմանը:

281. Մասնավորապես, ԵՄ օրենսդրությանը մոտարկման գործում նախատեսվում է մոտարկել համապատասխան օրենսդրության 30 տոկոսը՝ 2010 թ., 60 տոկոսը՝ 2015 թ. և օրենսդրությունը ամբողջությամբ՝ 2018 թ.: Օրենսդրության, ինստիտուցիոնալ մոտարկման, ինչպես նաև ինստիտուցիոնալ կարողությունների ավելացման միջոցառումների կոնկրետ դաշտերը, հաջորդականությունը, ելնելով երկրի պատրաստվածության աստիճանից և մոտարկման նպատակահարմարությունից, տվյալ ժամանակահատվածում կորոշվի երկրի ինստիտուցիոնալ արդիականացման ազգային ծրագրով, որը կմշակվի 2008-2009 թթ.¹¹⁵ և պետք է հիմնված լինի Հայաստանի ԵՀԶ գործողությունների հաստատված պլանի վրա:

282. Ինչ վերաբերում է ինստիտուցիոնալ մոտարկմանը, ապա համապատասխան օրենսդրության ընդունման պահին դրանք արդեն պետք է գործարկված լինեն, այսինքն՝ 2018 թ. նախատեսվում է իրականացնել լրիվ ինստիտուցիոնալ մոտարկումը:

283. Ինստիտուցիոնալ կարողությունների ավելացմանը ուղղված միջոցառումները պետք է այնպիսին լինեն, որ ապահովեն ԵՄ-10 երկրների մակարդակին համապատասխան իրավիճակը մինչև 2021թ.:

¹¹⁵ Առաջին այդպիսի ծրագիրը՝ ԵՄ և Հայաստանի միջև Գործընկերության և համագործակցության համաձայնագրի իրականացման ազգային ծրագիրը, որը հաստատվել է ՀՀ Կառավարության կողմից 2006թ., արդեն հնացել է և էական վերափոխման կարիք ունի:

6. Զբաղվածություն, գործազրկություն, աշխատանքի արտադրողականություն, բնակչության եկամուտներ և աղքատության կրճատում

6.1. Զբաղվածության և աղքատության փոխադարձ կապը

284. Աղքատության հիմնավոր հաղթահարման հեռանկարը տնտեսական զարգացման ճանապարհով «արժանավայել զբաղվածության»¹¹⁶ ընդլայնումն է: Արժանավայել զբաղվածությունը, նախ և առաջ, ենթադրում է աշխատանքի վարձատրության այնպիսի նվազագույն մակարդակ, որը աշխատողին և նրա ընտանիքի անդամներին հնարավորություն է տալիս խուսափելու աղքատությունից: Այս առումով, չնայած վերջին տարիներին արձանագրված զգալի դրական տեղաշարժերին, 2005 թվականին զբաղվածների շուրջ 24 տոկոսը և նրանց ընտանիքների անդամները աղքատ էին համարվում¹¹⁷: Իհարկե, երկրում աղքատության ընդհանուր մակարդակի հետ այս ցուցանիշի համեմատությունը վկայում է, որ զբաղվածությունը զգալիորեն նվազեցնում է աղքատության ռիսկը (2005 թվականին շուրջ 10 տոկոսային կետով): Դա հատկապես ակնառու կլինի, եթե համեմատվեն գործազուրկների և զբաղվածների աղքատության մակարդակները: Այնուհանդերձ, զբաղված աղքատների նշանակալի առկայությունը (որը հաճախ աշխատանքի արտադրողականության ցածր մակարդակի հետևանք է) ինքնին պահանջում է, որ հիմնախնդրի լուծումը առաջիկայում դառնա աղքատության հաղթահարման ռազմավարական ծրագրի գերակա առաջնահերթություններից մեկը:

285. Զբաղվածության ընդլայնմանը և գործազրկության մակարդակի կրճատմանը զուգընթաց, ծրագրի հեռանկարային նպատակներից է լինելու նաև զբաղվածների՝ աղքատ լինելու ռիսկի նվազեցումը այն հաշվով, որ 2015 թվականին զբաղված աղքատների մասնաբաժինը հասցվի 5 տոկոսից ոչ ավելի մակարդակի: Ակնկալվում է նաև, որ 2021 թվականին հիմնախնդիրը հիմնովին լուծված կլինի, քանի որ լրիվ զբաղվածություն ունեցող ընտանիքի մեկ անդամի նվազագույն վաստակը կհավասարվի միջին չափի ընտանիքի հաշվով աղքատության բերված գծին:

286. Արժանավայել զբաղվածությունը չի ենթադրում միայն աշխատանքի վարձատրության բավարար մակարդակ. կարևոր բաղադրիչներից են նաև աշխատանքի պայմանները, ֆորմալության աստիճանը և սոցիալական ապահովության, հատկապես՝ կենսաթոշակային ապահովության նվազագույն երաշխիքների առկայությունը: Այս առումով կարևորվում է ֆորմալ զբաղվածության ընդլայնման խնդիրը, հատկապես, երբ խոսքը վերաբերում է ոչ գյուղատնտեսական զբաղվածությանը: Ծրագրով նախատեսվում է, որ ոչ գյուղատնտեսական զբաղվածների ֆորմալության աստիճանը տարեկան կաճի 2-3 տոկոսով՝ 2021 թվականին հասնելով 85 տոկոսի:

6.2. Բնակչության տնտեսական ակտիվությունը


287. Վերջին տարիներին շարունակվել է բնակչության տնտեսական ակտիվության մակարդակի նվազման՝ 1990 թվականից դրսևորվող վարքագիծը, որը բնորոշ է եղել նախկին սոցիալիստական ճամբարի գրեթե բոլոր երկրներին, ներառյալ Արևելյան և Կենտրոնական Եվրոպայի բոլոր երկրները: Ըստ աշխատուժի ընտրանքային հետազոտությունների արդյունքների, 2002-2006 թվականներին տնտեսական ակտիվության մակարդակը

¹¹⁶ Այս հասկացությունը վերջին տարիներին շրջանառության մեջ է դրվել ԱՄԿ կողմից:

¹¹⁷ 1999 թվականին այս ցուցանիշը կազմել է շուրջ 49 տոկոս:


Հայաստանում նվազել է շուրջ 4 տոկոսային կետով: Ընդ որում, առավել նկատելի է կանանց տնտեսական ակտիվության նվազումը, որը 2006 թ. կազմել է 48.8 տոկոս՝ 2002 թ. 53.5 տոկոսի համեմատ նվազելով 4.7 տոկոսային կետով: Ընդհանուր առմամբ, տնտեսական ակտիվության մակարդակը նվազել է բոլոր տարիքային խմբերում, բացառություն են կազմել 30-34 տարեկանները, որոնց տնտեսական ակտիվության մակարդակը նույնիսկ մի փոքր ավելացել է:

Գծանկար 6.1. Տնտեսական ակտիվության մակարդակը ըստ տարիքային խմբերի 2002 և 2006 թթ., տոկոս՝ համապատասխան խմբի բնակչության նկատմամբ



288. Տնտեսական ակտիվության ներկայիս մակարդակը (63.1 տոկոս՝ 15-64 տարիքային խմբում) թեև զիջում է զարգացած երկրների համապատասխան ցուցանիշների մակարդակը (հատկապես՝ կանանց տնտեսական ակտիվության առումով), այնուհանդերձ համեմատելի է Կենտրոնական և Արևելյան Եվրոպայի երկրների ցուցանիշների հետ: Չնայած հնարավոր տատանումներին, առավել հավանական է, որ առաջիկա 10-15 տարիներին բնակչության տնտեսական ակտիվության ներկայիս մակարդակը, որոշակի կառուցվածքային փոփոխություններով հանդերձ, կպահպանվի՝ պայմանավորված հատկապես բարձրագույն կրթության ոլորտում ընդգրկվածության աստիճանի աճով և կանանց ակտիվության մակարդակի ավելացմամբ: Միաժամանակ, տնտեսական ակտիվության հաստատուն մակարդակի դեպքում, ինչպես վկայում են ժողովրդագրական կանխատեսումները, աշխատանքի առաջարկը մինչև 2015 թ. կունենա աճի միտում, որից հետո կսկսի նվազել՝ պայմանավորված 15-64 տարիքային խմբի կանխատեսվող վարքագծով:

Քժանկար 6.2. Տնտեսապես ակտիվ բնակչության թվաքանակի կանխատեսումը հաստատուն (65 տոկոս) ակտիվության մակարդակի պայմաններում



6.3. Չբաղվածության ընդհանուր մակարդակը


289. Ըստ պաշտոնական վիճակագրության՝ Հայաստանում զբաղվածության բացարձակ, ինչպես նաև հարաբերական մակարդակը և դրա դինամիկան միանշանակ չեն գնահատվում: Կազմակերպություններից և գյուղացիական տնտեսություններից ստացվող պաշտոնական վիճակագրության տվյալների համաձայն՝ զբաղվածների բացարձակ թվաքանակը 2006 թվականին կազմել է 1,092 հազար աշխատող (2002 թվականի համեմատ արձանագրվել է զբաղվածների աննշան՝ 1.27 տոկոսով անկում): Այդուհանդերձ, ըստ աշխատուժի ընտրանքային հետազոտությունների արդյունքների, զբաղվածության հարաբերական մակարդակը՝ զբաղվածների մասնաբաժինը համապատասխան տարիքի բնակչության (15-70 տարեկան) նկատմամբ, նույն ժամանակահատվածում ավելացել է շուրջ 2 տոկոսային կետով՝ 2006 թվականին կազմելով 43.8 տոկոս: Հաշվի առնելով, որ նույն ժամանակահատվածում ավելացել է նաև համապատասխան տարիքային խմբի բնակչության թվաքանակը՝ կարելի է եզրահանգել, որ 2002-2006 թվականներին արձանագրվել է զբաղվածության ընդլայնում: Մոտավոր գնահատումներով՝ զբաղվածների թվաքանակը այդ ժամանակահատվածում ավելացել է 120-150 հազար մարդով կամ շուրջ 15 տոկոսով: Այդպիսով, ըստ աշխատուժի ընտրանքային հետազոտությունների, 2002-2006 թվականներին, հետխորհրդային ժամանակահատվածում առաջին անգամ, տնտեսական աճը հանգեցրել է զբաղվածության ընդլայնման: Ըստ գնահատումների՝ 2002-2006 թվականներին տնտեսական աճի նկատմամբ զբաղվածության առաձգականությունը կազմել է 0.2, այսինքն՝ մեկ տոկոս տնտեսական աճը ընդլայնել է զբաղվածությունը 0.2 տոկոսով¹¹⁸:

¹¹⁸ Համաձայն ԱՀՌԾ-ի կանխատեսումների՝ զբաղվածության առաձգականությունը միջին ժամկետ հեռանկարում գնահատվում էր 0.17, իսկ 2002-2015 թվականների համար՝ միջինը 0.2: Այդպիսով կարելի է արձանագրել, որ փաստացի ցուցանիշները գրեթե չեն շեղվել ԱՀՌԾ-ի կանխատեսումներից: Միաժամանակ, պետք է նշել նաև, որ այս բնագավառում վիճակագրությունը զգալի բարելավման կարիք ունի, և ներկայացվող արդյունքներին պետք է վերաբերվել որոշակի վերապահումներով: Այսպես. 2002-2006թթ. զբաղվածների թվաքանակի ավելացումը, ըստ ԱԸՀ-ի, գրեթե ամբողջովին տեղի է ունեցել 2002-2003թթ., որից հետո, փաստորեն, զբաղվածների թվաքանակի աճ չի արձանագրվել: Նկատի ունենալով, որ այս տարիներին տնտեսության զարգացումները զգալիորեն չեն տարբերվել, մեկ տարվա ցուցանիշների զգալի տատանումը հավանաբար պայմանավորված է վիճակագրական շեղումներով:

290. Այսպիսով, ընդհանուր առմամբ, չնայած զբաղվածության գնահատականների տարբերություններին, վերջին 5 տարիներին հիմնական դրական արդյունքը եղել է այն, որ տնտեսական աճը չի ուղեկցվել զբաղվածության կրճատմամբ, ինչպես դա շարունակաբար տեղի էր ունենում մինչև 1998-1999թթ.: Ավելին, ըստ աշխատուժի ընտրանքային հետազոտությունների, տեղի է ունեցել զբաղվածության աճ, որը միաժամանակ ուղեկցվել է աշխատանքի արտադրողականության աճի բարձր տեմպերով:

291. Տնտեսական աճի աննախադեպ տեմպերը, զբաղվածության կայունության պայմաններում, հանգեցրել են բնակչության եկամուտների կառուցվածքի զգալի փոփոխության՝ հոգուտ զբաղվածությունից ստացվող եկամուտների: Վերջին 5 տարիներին զբաղվածությունից եկամուտները բնակչության դրամական եկամուտների կառուցվածքում ավելացել են շուրջ 11 տոկոսային կետով, իսկ 1999 թվականի համեմատ դրանք գրեթե կրկնապատկվել են:

Գծանկար 6.3. Բնակչության եկամուտների կառուցվածքը 1999-2006 թթ., տոկոս՝ ընդամենը եկամուտների նկատմամբ



6.4. Գործազրկության մակարդակը և կառուցվածքը


292. Աշխատանքի շուկայի մյուս կարևոր բնութագրիչները, որոնք նաև առանձնակի նշանակություն ունեն աղքատության հաղթահարմանը նպատակադրված զբաղվածության քաղաքականության մշակման տեսանկյունից, վերաբերում են գործազրկության մակարդակին ու կառուցվածքին: Գործազուրկ լինելու հանգամանքը, ըստ տնային տնտեսությունների հետազոտության արդյունքների, շարունակում է զգալիորեն ավելացնել աղքատության ռիսկը: Այսպես, 2005 թ. գործազուրկ լինելու հանգամանքը շուրջ 60 տոկոսով ավելացնում էր աղքատության ռիսկը:

293. Գործազրկության մակարդակը հանրապետությունում ներկայումս գնահատվում է երկու տարբեր եղանակներով: Առաջինը՝ պաշտոնական գործազրկությունն է, որը վերաբերում է զբաղվածության ծառայություններում գրանցված գործազուրկներին: Երկրորդը՝ իրական գործազրկությունն է, որը որոշվում է աշխատուժի ընտրանքային հետազոտությունների ճանապարհով և հիմնականում համապատասխանում է ԱՄԿ չափանիշներին: Այս երկու եղանակով ձևավորվող գործազրկության մակարդակները թեև էականորեն՝ շուրջ 20 տոկոսային կետով տարբերվում են միմյանցից, այդուհանդերձ վերջին

5 տարիներին հստակ դրսևորվել է ինչպես գրանցված, այնպես էլ իրական գործազրկության մակարդակի նվազման միտումը (տես Գծանկար 6.4):


294. Չնայած էական կրճատմանը, գործազրկության մակարդակը մնում է շատ բարձր՝ ցանկացած միջազգային համեմատականներով: Պաշտոնական (գրանցված) գործազրկության մակարդակը 2006 թվականին կազմել է 7 տոկոս (4 տոկոսային կետով պակաս 2002 թվականի ցուցանիշից), իսկ իրական գործազրկության մակարդակը, համաձայն աշխատուժի ընտրանքային հետազոտությունների, կազմել է 27 տոկոս (2002 թվականի համեմատ կրճատվել է 7 տոկոսային կետով):

Գծանկար 6.4. Գրանցված և իրական գործազրկության մակարդակների դինամիկան 2002-2006թթ., տոկոս՝ տնտեսապես ակտիվ բնակչության նկատմամբ



295. Գործազրկության սեռատարիքային առանձնահատկությունները ԱՀՌԾ-ի ժամանակահատվածում չեն փոխվել: Ըստ աշխատուժի ընտրանքային հետազոտությունների, կանանց գործազրկության մակարդակը շարունակում է գերազանցել տղամարդկանց գործազրկության մակարդակը: Իրական գործազրկության մակարդակը շարունակում է հատկապես բարձր մնալ երիտասարդության շրջանում՝ գերազանցելով դրա միջին մակարդակը շուրջ 2.5 անգամ:

Քժանկար 6.5. Իրական գործազրկության մակարդակը՝ ըստ տարիքային խմբերի 2002-2006 թթ., տոկոս



296. Վերջին տարիներին որոշակի դրական տեղաշարժեր են նկատվել նաև երկարատև գործազրկության ցուցանիշի դինամիկայում: Այսպես, ըստ աշխատուժի ընտրանքային հետազոտությունների, 12 ամիս և ավելի ժամանակահատվածում աշխատանք փնտրող գործազուրկների տեսակարար կշիռը նվազել է՝ 2006 թ. կազմելով 39.7 տոկոս՝ 2002 թ. 51.3 տոկոսի փոխարեն: Այդուհանդերձ, նկատի ունենալով գործազրկության բարձր մակարդակը, գործազուրկների մեծ մասի չգրանցված լինելու հանգամանքը և գործազրկության նպաստի դեռևս շատ ցածր մակարդակը, մեկ տարուց ավելի աշխատանք փնտրող գործազուրկների թվաքանակի կրճատման խնդիրը առաջնային նշանակություն է ունենալու աղքատության ռիսկի կրճատման առումով:

297. Ընդհանուր առմամբ, աղքատության հաղթահարման առումով, ինչպես և նախորդ ծրագրում, առանձնակի կարևորվելու են իրական գործազրկության, հատկապես՝ երկարատև կառուցվածքային գործազրկության և երիտասարդների շրջանում գործազրկության մակարդակի կրճատումը, ինչպես նաև գործազուրկներին տրամադրվող աջակցության ծավալների և արդյունավետության ավելացումը: Կայուն զարգացման ծրագրի՝ իրական գործազրկության մակարդակի (որի հաշվարկման աղբյուրը լինելու են աշխատուժի ընտրանքային հետազոտությունները) միջին ժամկետ թիրախը լինելու է 15 տոկոս՝ մինչև 2015թ., իսկ հեռանկարային թիրախը՝ ոչ ավելի, քան 10 տոկոս: Ինչ վերաբերում է գրանցված գործազուրկների ցուցանիշին, ապա այն չի համարվելու ծրագրի թիրախ, և դրա տատանումները, ինչպես նաև գրանցված գործազրկության մակարդակի հնարավոր ավելացման երևույթը չեն դիտարկվելու որպես ծրագրից շեղումներ:

298. Գործազրկության ազդեցությունը աղքատության վրա մեղմելու առումով հեռանկարում մեծ դեր է ունենալու գործազրկության նպաստների համակարգը: Ներկայումս գործազրկության նպաստները շարունակում են շատ ցածր մնալ՝ գործազրկության նպաստի մեծությունը 2006 թ. չէր գերազանցում աղքատության գծի 50 տոկոսը:¹¹⁹ Նկատի ունենալով,

¹¹⁹ 2006 թ. դեկտեմբերին գործազրկության նպաստ են ստացել 10,000 անձինք (գրանցված գործազուրկների՝ 11.8 տոկոսը), և գործազրկության նպաստի գումարը կազմել է ամսական 9,000 դրամ (մոտ 20 ԱՄՆ դոլար): Նպաստի գումարը կազմել է նվազագույն աշխատավարձի 60 տոկոսը և միջին աշխատավարձի՝ 14 տոկոսը: Շահառուների փոքր թվաքանակը հիմնականում բացատրվում է այն փաստով, որ գործազուրկներից շատերն օգտագործել և կորցրել են գործազրկության նպաստ ստանալու իրենց իրավունքը: 2006 թ. գրանցված գործազուրկների ավելի քան 73 տոկոսն աշխատանք չի ունեցել նախորդ 12 ամիսների ընթացքում, ևս 13

որ գործազրկության նպաստ են ստանում սահմանափակ թվով գործազուրկներ, գործազրկության նպաստների ավելացումը թվում է, թե զգալի դեր չի կարող խաղալ ընդհանուր առմամբ գործազուրկների շրջանում աղքատության ռիսկերի կրճատման առումով, սակայն պետք է հաշվի առնել նաև, որ գործազուրկների չգրանցման պատճառներից մեկը հենց գործազրկության նպաստների ցածր մակարդակն է: Այսպիսով, հեռանկարային առումով չափից ավելի համեստ գործազրկության նպաստների համակարգը շարունակաբար նպաստելու է իրական և գրանցված գործազուրկների մակարդակների զգալի տարբերության ձևավորմանը: Միաժամանակ, այս հանգամանքը որոշակիորեն հակազդում է նաև ֆորմալ զբաղվածության ավելացմանը՝ ոչ ֆորմալ զբաղվածների մոտ համապատասխան խթանների բացակայության առումով, որն իր հերթին բերում է փակ շրջանի, քանի որ ոչ ֆորմալ զբաղվածները գործազրկության նպաստներ ստանալու հավակնություն չեն կարող ունենալ:

6.5. Գյուղատնտեսական զբաղվածություն

299. Գյուղական բնակավայրերում աղքատության մակարդակը, ի տարբերություն քաղաքային բնակավայրերի, ավելի շատ պայմանավորված է զբաղվածությունից ստացվող եկամուտների ցածր մակարդակով, քան գործազրկության բարձր մակարդակով: Ըստ տարբեր գնահատականների, գյուղական բնակավայրերում գործազրկության մակարդակը զգալիորեն՝ 3-5 անգամ ցածր է քաղաքային գործազրկության մակարդակից: Ըստ պաշտոնական վիճակագրության՝ տարբերությունը ավելի զգալի է. 2006 թվականին գրանցված գործազուրկների միայն 7 տոկոսն էր գյուղաբնակ:

300. Միաժամանակ, գյուղաբնակ բնակչության զբաղվածության գերակշիռ մասը ապահովող ճյուղում՝ գյուղատնտեսությունում, աշխատանքի արտադրողականության ցածր մակարդակի հետ մեկտեղ, զբաղվածությունից եկամուտների բաշխման անհավասարության գործակիցը նույնպես զգալի ցածր է, ինչի հետևանքով գյուղաբնակ բնակչության ընդհանուր աղքատության մակարդակը և գյուղատնտեսությունում ինքնազբաղվածների աղքատության մակարդակը իրարից գրեթե չեն տարբերվում կամ, այլ խոսքերով, գյուղատնտեսությունում ինքնազբաղվածությունը չի նվազեցնում գյուղաբնակ բնակչության աղքատության ռիսկը¹²⁰:

301. Գյուղաբնակ բնակչության զբաղվածության, մասնավորապես՝ գյուղատնտեսությունում զբաղվածության հարցերը հանգամանալից ներկայացված են ծրագրի գյուղատնտեսության բաժնում:

6.6. Ոչ գյուղատնտեսական զբաղվածության իրավիճակը և հեռանկարը

302. Ըստ զբաղվածության հաշվառման երկու հիմնական եղանակների՝ աշխատուժի ընտրանքային հետազոտության և կազմակերպություններից վարձու աշխատողների, գրանցված ինքնազբաղվածների, ինչպես նաև գյուղացիական տնտեսությունների աշխատունակ անդամների վերաբերյալ հավաքագրվող տեղեկատվության, ոչ գյուղատնտեսական զբաղվածության մասնաբաժինը ընդհանուր զբաղվածությունում 2006թ. համապատասխանաբար կազմել է 76 և 54 տոկոս: Այսպիսի զգալի տարբերության հիմնական պատճառը գյուղատնտեսական զբաղվածության՝ ըստ տարբեր մեթոդաբանությունների ստացվող արդյունքների տարբերությունն է:

տոկոսը՝ 6-12 ամսվա ընթացքում: Բոլոր այդ անձինք կորցրել էին նպաստ ստանալու իրենց իրավունքը, որը տրվում է առավելագույնը տասներկու ամիս (ՀՀ ԱՎԾ, 2006 թ.):

¹²⁰ Համաձայն 2005 թ. ՏՏԿԱՀ (տնային տնտեսությունների կենսամակարդակի ամբողջացված հետազոտություն)՝ գյուղական բնակչության ընդհանուր աղքատության մակարդակը կազմել է 28.3 տոկոս, իսկ գյուղատնտեսությունում ինքնազբաղվածներինը՝ 27.2 տոկոս:

303. Ըստ պարբերաբար անցկացվող՝ աշխատուժի ընտրանքային հետազոտությունների, 2002-2006 թթ. ոչ գյուղատնտեսական զբաղվածության կառուցվածքում դրսևորվել են մի շարք միտումներ, որոնք հիմնականում արտացոլում են տնտեսությունում տեղի ունեցող տեղաշարժերը:


§ Ջգալիորեն նվազել է պետական կառավարման և սոցիալական ծառայությունների ոլորտներում զբաղվածների մասնաբաժինը, ինչը հիմնականում պայմանավորվել է շարունակվող կառուցվածքային բարեփոխումների: Ընդհանուր առմամբ, 2002-2006 թվականներին նշված ոլորտներում զբաղվածների մասնաբաժինը զբաղվածության կառուցվածքում նվազել է շուրջ 10 տոկոսային կետով: Հատկանշական է, որ դրան զուգահեռ, զգալիորեն ավելացել է այդ ոլորտներում աշխատողների աշխատանքի վարձատրությունը: Մասնավորապես դա վերաբերում է պետական ծառայության, կրթության և առողջապահության ոլորտներին, որտեղ աշխատավարձերի ավելացման տեմպերը գերազանցել են հանրապետությունում միջին աշխատավարձի աճի տեմպերը:

§ Ջբաղվածության կառուցվածքում առևտրային (ոչ սոցիալական) ծառայությունների մասնաբաժնի շարունակական ավելացման պայմաններում, 2006 թվականին, 2002 թվականի համեմատ, արձանագրվել է ցուցանիշի մակարդակի 4 տոկոսային կետով աճ՝ 2006 թ. կազմելով ոչ գյուղատնտեսական զբաղվածության շուրջ 38 տոկոսը:

§ Ի տարբերություն մինչև 2002 թվականը արդյունաբերության ճյուղում շարունակաբար արձանագրվող զբաղվածության անկմանը, 2002-2006 թթ. ճյուղի մասնաբաժինը զբաղվածության կառուցվածքում կայունացել է 19 տոկոսի շրջակայքում:

§ Եվ վերջապես, 2002-2006 թթ. արձանագրվել է շինարարության ճյուղի զբաղվածության մասնաբաժնի զգալի աճ (շուրջ 70 տոկոս)՝ չնայած, հիմնականում, ի հաշիվ ոչ ֆորմալ զբաղվածության:

Գծանկար 6.6. Ոչ գյուղատնտեսական զբաղվածության ճյուղային կառուցվածքի միտումները 2002-2006 թթ.



304. Ակնկալվում է, որ առաջիկա 10-15 տարիներին ոչ գյուղատնտեսական զբաղվածության տեսակարար կշիռը ընդհանուր զբաղվածության մեջ շարունակաբար կաճի՝ 2021 թվականին հասնելով 80 տոկոսի (ըստ ԱՄԿ մեթոդաբանության): Դա կպայմանավորվի ընդհանուր զբաղվածության ընդլայնման պարագայում գյուղատնտեսական զբաղվածության կանխատեսվող կայուն մակարդակով: Ընդ որում, սպասվում է, որ բացի շինարարությունից, որի մասնաբաժինը միջին ժամկետում մնալով


կայուն, հեռանկարում որոշակիորեն կնվազի՝ հասնելով 7-9 տոկոսի, մնացած ոլորտներում 2002-2006 թթ. միտումները կպահպանվեն, որի արդյունքում առևտրային ծառայությունների ոլորտում զբաղվածների մասնաբաժինը 2021 թվականին կհասնի 50 տոկոսի, սոցիալական ծառայությունների և պետական կառավարման բնագավառներում՝ կնվազի մինչև 25 տոկոսի սահմանագիծը, իսկ արդյունաբերության ճյուղում զբաղվածության մասնաբաժինը, հիմնականում կապիտալատարության ավելացման պատճառով, կմնա 20 տոկոսի շրջակայքում: Այս գնահատումների հիմքում Հայաստանի տնտեսության հեռանկարային զարգացման ճյուղային կանխատեսումներն են և զբաղվածության առաձգականության գնահատականները, որոնք հիմնված են տնտեսական աճի և աշխատանքի արտադրողականության գնահատումների վրա, իսկ սոցիալական ծառայությունների և պետական կառավարման ոլորտների համար՝ բնակչության և ընդգրկվածության աստիճանի ու ոլորտների արդյունավետության կանխատեսվող ցուցանիշների վրա:

305. Ոչ գյուղատնտեսական զբաղվածության կառուցվածքում ակնկալվող տեղաշարժերը իրենց դրական ազդեցությունն են ունենալու զբաղվածության ֆորմալացման, ինչպես նաև, աշխատանքի արտադրողականությամբ պայմանավորված, զբաղվածությունից եկամուտների ավելացման առումով:

6.7. Ֆորմալ և ոչ ֆորմալ զբաղվածություն

306. Ոչ ֆորմալ զբաղվածության մակարդակը Հայաստանում շարունակում է մնալ բարձր՝ 2006 թ. կազմելով ոչ գյուղատնտեսական զբաղվածների 25 տոկոսը: Ըստ ԱԸՀ-ների արդյունքների՝ թաքնված զբաղվածների մասնաբաժինը ընդհանուր զբաղվածների թվաքանակում 2002-2006 թթ. նվազել է շուրջ 2 տոկոսային կետով՝ հիմնականում ի հաշիվ չգրանցված ինքնազբաղվածների մասնաբաժնի նվազման: Ոչ ֆորմալ զբաղվածության մակարդակը էլ ավելի անհանգստացնող է, եթե հաշվի առնենք նաև այն փաստը, որ Հայաստանում գյուղատնտեսական ոլորտի զբաղվածների գերակշիռ մասը չի համապատասխանում ֆորմալ զբաղվածության հիմնական հայտանիշներին և, այդպիսով, որոշակի վերապահումներով կարող է դասվել ոչ ֆորմալ զբաղվածների շարքը: Նման եղանակով վերահաշվարկված ոչ ֆորմալ զբաղվածության մասնաբաժինը ընդհանուր զբաղվածությունում գնահատվում է 45-50 տոկոսի շրջանակներում:

Գծանկար 6.7. Ոչ ֆորմալ զբաղվածության ցուցանիշներ (տոկոս՝ զբաղվածության կառուցվածքում)




307. Վերջին տարիներին ֆորմալ զբաղվածության ընդլայնման մասին է վկայում այն փաստը, որ 2002-2006 թթ. ոչ ֆորմալ զբաղվածության գրեթե անփոփոխ մակարդակի պայմաններում շուրջ 110 հազարով ավելացել է սոցիալական ապահովագրության

պարտադիր վճարումներ կատարողների թվաքանակը՝ 360 հազարից հասնելով 470 հազարի: Նկատի ունենալով, որ նույն ժամանակահատվածում տեղի է ունեցել ֆորմալության բարձր աստիճան ունեցող պետական հատվածի և սոցիալական ծառայությունների ճյուղերում զբաղվածության մասնաբաժնի կրճատում՝ հոգուտ շինարարության և առևտրային ծառայությունների, որտեղ ավանդաբար ոչ ֆորմալության բարձր աստիճան է արձանագրվում, ապա դրական տեղաշարժերը բավականին խոստումնալից են: Այդուհանդերձ, նույնիսկ զգալի դրական տեղաշարժի պայմաններում, 2006 թ. ընդհանուր զբաղվածների միայն 45 տոկոսն է կատարել սոցիալական ապահովագրության պարտադիր վճարներ: Նման իրավիճակը, անկասկած, այն հիմնական պատճառներից է, որը թույլ չի տվել գործող կենսաթոշակային համակարգի պայմաններում ապահովել կենսաթոշակների՝ ԱՀՌԾ-ով նախատեսված մակարդակները:

308. Ակնկալվում է, որ առաջիկա տարիներին պահպանվելու են զբաղվածության ֆորմալության աստիճանի ավելացման միտումները: Դրան նպաստելու են զբաղվածության ճյուղային կառուցվածքի փոփոխությունները՝ հոգուտ ոչ գյուղատնտեսական ճյուղերի, աշխատանքի հարկման ներկայիս ցածր մակարդակի պահպանումը և հարկային վարչարարության բարելավմանն ուղղված միջոցառումները, ինչպես նաև մասնավոր հատվածում կորպորատիվ կառավարման ավանդույթների հետզհետե տարածումը: Առավել պահպանողական սցենարով ակնկալվում է, որ յուրաքանչյուր հինգ տարին մեկ ֆորմալության աստիճանը կավելանա 15 տոկոսով:

Գծանկար 6.8. Սոցիալական ապահովագրության վճարներ կատարողների թվաքանակը՝ ֆորմալության աստիճանի ակնկալվող սցենարի դեպքում, 2002-2021թթ.¹²¹




¹²¹ Պետք է նշել, որ «սոցապ վճարողների թվաքանակը» պայմանական անվանում է և ապագայում հնարավոր է, որ նման կատեգորիան անօգտագործելի լինի՝ ֆորմալության աստիճանի գնահատման նպատակներով: Այնուհանդերձ, աշխատավարձից հարկ վճարողների կամ ֆորմալ աշխատավարձ ստացողների թվաքանակը կարող է լիովին փոխարինել այս կատեգորիան:

6.8. Աշխատանքի արտադրողականության աճը՝ որպես 2002-2006 թվականներին Հայաստանում տնտեսական աճի հիմնական շարժիչ ուժ

309. Աշխատանքի արտադրողականությունը, հատկապես ոչ գյուղատնտեսական ճյուղերում, վերջին տարիներին եղել է զբաղվածությունից եկամուտների ավելացման և աղքատության նվազեցման հիմնական աղբյուրներից մեկը: Աշխատանքի արտադրողականության աճը Հայաստանում 2002-2006թթ. կազմել է շուրջ 60 տոկոս՝ զգալիորեն գերազանցելով Կենտրոնական ու Արևելյան Եվրոպայի և ԱՊՀ երկրների միջին ցուցանիշը: Միաժամանակ, Հայաստանում աշխատանքի արտադրողականության մակարդակը դեռևս հետ է մնում նշված երկրների մակարդակից՝ կազմելով դրանց միջին ցուցանիշի 80 տոկոսը: Էլ ավելի մեծ ճեղքվածք կա Հայաստանի և Եվրոմիությանը նոր¹²² անդամակցած 8 երկրների միջև՝ շուրջ 4 անգամ, իսկ հաշվի առնելով գնողունակության համարժեքությամբ ճշգրտված ցուցանիշները՝ շուրջ 2.7 անգամ:¹²³

Գծանկար 6.9. Աշխատանքի արտադրողականությունը 2002-2006թթ., 2000 թ. համադրելի ԱՄՆ ԳՈՒՀ դոլար




310. Միջին ժամկետ և երկարաժամկետ հեռանկարում աշխատանքի արտադրողականության աճի տեմպերը մեծապես պայմանավորված են լինելու երկու հիմնական գործոններով: Մի կողմից, դա աշխատանքի առաջարկի որակի և համապատասխանության ավելացումն է: Այս տեսանկյունից առաջնային դեր են խաղալու կրթության, հատկապես՝ միջին մասնագիտական և բարձրագույն կրթության ընդգրկվածության ավելացումը և որակի բարձրացումը, ինչպես նաև զբաղվածության ակտիվ քաղաքականությունների իրականացումը: Մյուս կողմից, աշխատանքի արտադրողականության հետագա աճը պահանջելու է տնտեսությունում ներդրումների զգալի ավելացում և ճյուղային վերաբաշխում՝ հոգուտ արտադրողականության տեսանկյունից ավելի բարձր մակարդակ ապահովող ճյուղերի պահանջարկի հարաբերական և բացարձակ ավելացման: Այդ նպատակով՝ ծրագրով նախատեսվում է հանրապետությունում ձեռնարկատիրական և ներդրումային միջավայրի բարելավման, ֆինանսական միջնորդության հասանելիության և դրա մակարդակի ավելացման, ինչպես

¹²² Խոսքը վերաբերում է հետևյալ երկրներին՝ Լեհաստան, Հունգարիա, Չեխիա, Սլովակիա, Սլովենիա, Լիտվա, Լատվիա և Էստոնիա:

¹²³ Հաշվարկների հիմքում դրվել են եվրոյով հաշվարկված ցուցանիշները՝ օգտագործելով Եվրոստատի տվյալների բազան 2005 թվականի համար:

նաև պետական կառավարման և սոցիալական ծառայությունների արդյունավետության բարձրացման հետևողական և կտրուկ քայլեր ձեռնարկել:

Գծանկար 6.10. Աշխատանքի արտադրողականության ինդեքսը (2002 թ. =100)




* Հաշվարկների հիմքում ընկած են 2000 թ. համադրելի ԱՄՆ ԳՈՒՀ դոլարով արտահայտված ցուցանիշները:

6.9. Արտագաղթը և այն պայմանավորող գործոնները

311. Վերջին տարիներին միգրացիոն միտումները որոշակի առումով արձագանքել են աշխատանքի շուկայում տեղի ունեցող դրական տեղաշարժերին՝ աշխատանքի նկատմամբ պահանջարկի և աշխատավարձերի ավելացմանը: Պաշտոնական միգրացիայի՝ մշտական բնակության վայրը փոխողների բացասական հաշվեկշռի նվազման հետ միասին, 2002-2006թթ. արձանագրվել է ոչ պաշտոնական միգրացիայի դրական հաշվեկշիռ:

Գծանկար 6.11. Միգրացիայի հաշվեկշիռը Հայաստանում 2000-2006 թթ.



312. Արտերկրից ստացվող տրանսֆերտների, ներառյալ աշխատանքային միգրանտներից ստացվող տրանսֆերտների մասնաբաժինը բնակչության դրամական եկամուտներում 2002-2006 թթ. նվազել է շուրջ 6 տոկոսային կետով կամ 70 տոկոսով՝ 2006թ. կազմելով 9 տոկոս՝ 2002թ. 15 տոկոսի փոխարեն: Պետք է նշել, որ արտերկրից ստացվող տրանսֆերտները,

ինչպես և նախկինում, զգալիորեն նվազեցրել են աղքատության ռիսկը: Միաժամանակ, տրանսֆերտների զգալի ծավալները որոշակի ճնշում են գործադրում աշխատանքի շուկայի վրա, ինչն արտահայտվում է տնտեսական ակտիվության նվազմամբ և աշխատուժի գնի ավելացմամբ:


313. Արտագաղթի հիմնական պատճառներից եղել և շարունակում է մնալ Հայաստանի և Ռուսաստանի 'Դաշնության' աշխատանքային միգրանտների հիմնական ընդունող երկրի, աշխատանքի շուկայում պահանջարկի պայմանների զգալի տարբերությունը: Աշխատանքային միգրացիան երկակի դեր է խաղում միգրանտների և դրանց ընտանիքի անդամների աղքատության ռիսկերի տեսանկյունից: Կարճաժամկետ առումով այն զգալի դերակատարում ունի աղքատության կրճատման հարցում՝ նկատի ունենալով Հայաստանում դեռևս գոյություն ունեցող գործազրկության բարձր մակարդակը: Այնուհանդերձ, երկարաժամկետ առումով, հատկապես ոչ ֆորմալ միգրացիան միգրանտների համար զգալի ռիսկեր է պարունակում, որոնք հիմնականում պայմանավորված են ոչ կայուն զբաղվածությամբ և սոցիալական պաշտպանության նվազագույն տարրերի բացակայությամբ: Վերջին տարիներին զգալի ջանքեր են գործադրվում միգրացիայի, ներառյալ՝ աշխատանքային միգրացիայի անցանկալի դրսևորումների մեղմացման, արտագաղթողներին և վերջին տարիներին ավելացող ներգաղթողներին տեղեկատվական և խորհրդատվական աջակցության տրամադրման հարցերում: Ապագայում նման աշխատանքները շարունակվելու են ինչպես արտագնա աշխատանքի մեկնողներին իրազեկելու և կողմնորոշելու առումով, այնպես էլ ներգաղթի խրախուսման նպատակով իրականացվող աջակցման ծրագրերի շրջանակներում:

6.10. Աշխատաշուկայի ինստիտուտները և քաղաքականությունները

314. Ինչպես ցույց է տալիս միջազգային փորձը, տնտեսական աճի, աշխատանքի արտադրողականության ավելացման և զբաղվածության ընդլայնման տեսանկյունից կարող են կարևոր դերակատարում ունենալ աշխատաշուկայի կարգավորման հետևյալ ինստիտուտները՝ հարկման համակարգը և մակարդակը, արհմիություններում ներգրավվածության մակարդակը, նվազագույն աշխատավարձի քաղաքականությունը, գործազրկության նպաստների համակարգը և մակարդակը, զբաղվածության պաշտպանության կարծրության մակարդակը, ինչպես նաև աշխատաշուկայի ակտիվ քաղաքականությունների ձևերն ու մակարդակը:

315. Աշխատանքի հարկման մակարդակը և դինամիկան թերևս ամենակարևոր ցուցանիշներից են, որոնք ազդում են տնտեսական աճի և զբաղվածության՝ հատկապես ֆորմալ զբաղվածության ընդլայնման ներուժի վրա: Հայաստանում աշխատանքի հարկման օրենսդրությունը վերջին տարիներին էական փոփոխությունների չի ենթարկվել, և դրա մակարդակը ներկայումս համարվում է ոչ բարձր:

Գծանկար 6.12. Աշխատանքի հարկունը Հայաստանում և ՏՀԶԿ անդամ երկրներում



* Հայաստան՝ 2006 թ., ՏՀԶԿ անդամ երկրներ՝ 2004թ.:


316. Այնուհանդերձ, նկատի ունենալով Հայաստանի տնտեսական զարգացման մակարդակը, որը զգալիորեն զիջում է զարգացած երկրների մակարդակին, աշխատանքի հարկման բեռի ավելացումը կարող է լրջորեն խոչընդոտել տնտեսական աճի բարձր տեմպերին և զբաղվածության ընդլայնմանը: Ավելին, նկատի ունենալով զբաղվածության ֆորմալության ցածր մակարդակը, հարկային բեռի ցանկացած ավելացում կհանգեցնի ավելի անհավասար մրցակցության և չի կարող նպաստել ֆորմալ զբաղվածության ընդլայնմանը: Միաժամանակ, նկատի ունենալով Հայաստանի ֆիսկալ իրավիճակը, հարկային բեռի նվազեցման հեռանկարը նույնպես չի կարող հիմնավոր լինել, քանի դեռ հարկային եկամուտների հավաքագրման աստիճանը զգալիորեն չի ավելանա: Այդպիսով, այս բնագավառում ԿԶԾ-ի հիմնական քաղաքականությունը լինելու է աշխատանքի հարկման ներկայիս պոտենցիալ մակարդակի պահպանումը և զուգահեռաբար դրա արդյունավետ մակարդակի ավելացումը՝ ի հաշիվ զբաղվածության ֆորմալացման:¹²⁴

317. Զբաղվածության պաշտպանության նպատակով կիրառվող օրենսդրական սահմանափակումները, որոնցից հիմնականը վերաբերում է աշխատանքից ազատման պայմաններին, կարող են դրական ազդեցություն ունենալ ոչ միայն աշխատողների իրավունքների պաշտպանության տեսանկյունից, այլ նաև անուղղակի ձևով կնպաստեն աշխատանքային փորձի և ունակությունների կուտակմանը: Սակայն, ձեռնարկատիրական միջավայրի տեսանկյունից դրանց կարծրությունը համարվում է զգալի խոչընդոտ՝ հատկապես փոքր և միջին ձեռնարկությունների և դրանցում ֆորմալ զբաղվածության ընդլայնման առումով: Կարծր պայմանները հատկապես երիտասարդների գործազրկության մակարդակի նվազեցման էական խոչընդոտ են: ՀԲ կողմից կիրառվող առավել տարածված զբաղվածության կարծրության ինդեքսով 2005թ. Հայաստանում զբաղվածության կարծրության ինդեքսը՝ 49, զգալիորեն բարձր էր, քան բարձր եկամտով երկրների միջինը՝ 38,

¹²⁴ Միաժամանակ, նախատեսվում են հարկային օրենսդրության պարամետրիկ բարեփոխումներ, որոնց հիմնական նպատակն է լինելու պարզեցնել և միասնականացնել աշխատուժի հարկման ռեժիմը /տես համապատասխան բաժինը/:

ինչպես նաև ցածր և միջին եկամուտ ունեցող Եվրոպայի և Կենտրոնական Ասիայի երկրների միջինը՝ 44:

Գծանկար 6.13. Զբաղվածության կարծրության ինդեքսը Հայաստանում և Եվրոմիության անդամ մի շարք Արևելյան Եվրոպայի երկրներում, 2005թ.



Աղբյուրը՝ Համաշխարհային բանկ:


318. Անկախությունից ի վեր իրականացվող՝ նվազագույն աշխատավարձի քաղաքականությունը Հայաստանում նպատակ է հետապնդել չխոչընդոտել ձեռնարկատիրության զարգացմանը և միաժամանակ նպաստել ֆորմալ զբաղվածության ընդլայնմանը: Այս տեսանկյունից Հայաստանը ներկայումս դասվում է առավել ազատական աշխատանքային շուկա ունեցող երկրների շարքը: Այնուհանդերձ, ինչպես ցույց է տալիս նախկին տարիների փորձը, նվազագույն աշխատավարձի քաղաքականության մնացած զուսպ մոտեցումը չի հանգեցրել ցանկալի արդյունքների: Հաշվի առնելով անցած տարիների փորձը՝ ԱՀՌԾ-ում առաջադրվեցին նվազագույն աշխատավարձի քաղաքականության նոր մոտեցումներ, որոնցից հիմնականը նվազագույն աշխատավարձի և աղքատության սահմանագծի փոխհարաբերության սահմանումն էր: Առաջիկայում նվազագույն աշխատավարձի քաղաքականությունը լինելու է ավելի հավասարակշռված: Միջին ժամկետում նվազագույն աշխատավարձն ավելի արագ տեմպերով է աճելու՝ ապահովելու համար նախ աղքատության սահմանագիծը՝ 2008 թվականին և այնուհետև, մինչև 2010թ., միջին աշխատավարձի 32-33 տոկոսը, որից հետո հիմնականում հետևելու է միջին աշխատավարձի աճի տեմպերին:

319. Նվազագույն աշխատավարձի հավասարակշռված քաղաքականությունը իր ազդեցությունն է թողնելու նաև գործազրկության նպաստների մակարդակի վրա՝ նկատի ունենալով, որ ներկայիս օրենսդրությունը գործազրկության նպաստի չափը կախվածության մեջ է դրել նվազագույն աշխատավարձից: Պետք է նշել, որ ընդհանրապես նվազագույն աշխատավարձի հաճախակի օգտագործումը տարբեր տեսակի սոցիալական օժանդակության ծրագրերի և առավել ևս վարչական պատժամիջոցների չափերի կամ աշխատանքային շուկային չվերաբերող այլ նպատակներով չի խրախուսվելու և հետզհետե վերանայվելու են բոլոր նմանատիպ օրենսդրական դրույթները:

320. Զբաղվածության ակտիվ քաղաքականության միջազգային փորձը ցույց է տալիս, որ անգամ ամենաբարենպաստ սցենարների դեպքում աշխատանքի շուկայի ակտիվ ծրագրերի արդյունքները բավականին համեստ են, թեպետ կարող են օգտակար լինել որոշակի խմբերի համար: Անգամ ԵՄ երկրներում, որտեղ ակտիվ ծրագրերի բյուջեները բավականին մեծ են, և

համապատասխան ծրագրերի իրականացման՝ տարիների փորձ է կուտակված, այդ ծրագրերից օգտվողների շրջանում դեռևս բարձր է գործազրկության և անգործունեության մակարդակը: Այս երևույթը հաշվի առնելով՝ կարելի է եզրահանգել, որ նախ պետք է բացահայտվեն աշխատանք փնտրողների կարիքները և ապա՝ զբաղվածության ակտիվ ծրագրերը համապատասխանեցվեն այդ կարիքներին:

Քժանկար 6.14. Նվազագույն աշխատավարձը 2002-2021 թթ.



321. Հաշվի առնելով ՏՀԶԿ-ի փորձը՝ Հայաստանը պետք է իր բոլոր ջանքերը վերաուղղորդի ակտիվացման քաղաքականության իրականացմանը:¹²⁵ Հաջողված

մասնագիտական հմտությունների ու կարողությունների բարելավումը, աջակցությունը ամապատասխանեցված ԱՇԱԲ-ին մասնակցելու եղանակները՝ հաշվի առնելով անձի տարիքը, փորձը, կարիքներն ու առաջնահերթու-

աշխատանքի շուկայի ծառայությունների, սոցիալական ծառայությունների, առողջապահական ծառայությունների, բնակարանաշինական հատվածի և համայնքների

պլանավորման, ձևավորման և իրագործման հարցերում: Դրա համար անհրաժեշտ է Զբաղվածության պետական ծառայության հզորությունների զարգացում, որը ներկայումս ունի անբավարար անձնակազմ, թերի նյութատեխնիկական բազա և թույլ մոտիվացիա: Աշխատանքի շուկայի ակտիվ այլ ծրագրերի առումով, մեծ ուշադրություն է դարձվելու դրանց ընդլայնման հնարավորություններին՝ առաջնայնությունը տալով առավել ծախսասարդյունավետ ծրագրերին:

322. Խրախուսվելու է սոցիալական գործընկերների ներգրավումը աշխատաշուկայի կարգավորման և պետական միջամտության եղանակների վերաբերյալ որոշումների ընդունմանը: Սոցիալական գործընկերները՝ արհեստակցական միություններն ու գործատուները, պետք է ավելի մեծ դերակատարում ունենան աշխատանքային հարաբերություններում: ՀՀ զբաղվածության ծառայության տարածքային կենտրոնների համար հատկապես կարևորվում է արդեն իսկ հաջողված գործելաձև շարունակելը՝ պետական և մասնավոր կառույցների հետ գործընկերային հարաբերությունների հաստատումը՝ աշխատատեղերի ստեղծման տեղական ռազմավարությունների մշակման և

¹²⁵ Ակտիվացման քաղաքականությունը որոշ գործազուրկների խրախուսում է ավելի ակտիվորեն աշխատանք փնտրել և հետագայում մասնակցել տարբեր ծրագրերի: Ի վերջո, ակտիվացման սկզբունքով նպաստների ստացումը պայմանավորվում է ծրագրերում մասնակցությամբ՝ գործազուրկի իրավունքների ու պարտականությունների հավասարակշռության տեղաշարժի գործընթացում:

իրականացման նպատակով: Սոցիալական գործընկերների ներգրավումը կապահովի լայն մասնակցություն օրենսդրության մշակման, ուսուցման բովանդակության ձևավորման հարցերում, ինչպես նաև «Զբաղվածության պետական ծառայություն» գործակալության և մասնագիտական կրթության հաստատությունների գործունեության մոնիթորինգի աշխատանքներում՝ որպեսզի վերջիններս կարողանան ավելի ճկուն կերպով արձագանքել շուկայի զարգացումներին:

323. Գործատուները պետք է մասնակցեն մասնագիտական կրթությանը վերաբերող խնդիրների լուծմանը: 2005 թ. հուլիսին, «Մասնագիտական կրթության բարեփոխումների ռազմավարության» հիման վրա, ընդունվեց «Նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության մասին» ՀՀ օրենքը, որը բարելավում է սոցիալական գործընկերների դիրքերը: Նրանք այժմ համարվում են մասնագիտական կրթության համակարգի լիարժեք գործընկերներ: Գործատուների կազմակերպությունների մասնակցությունը աշխատանքի շուկայում հմտությունների անհամապատասխանությունը նվազեցնելու կարևոր միջոց է: Աշխատանքային ստանդարտները կամ աշխատանքի բնութագրերը պետք է սահմանվեն գործատուների կողմից ներկայացված պահանջներին համապատասխան՝ հետևելով բոլոր շահագրգիռ կողմերի հետ համաձայնեցված ընթացակարգերին: Ուսուցման ստանդարտները կամ բնութագրերը պետք է օգտագործվեն ուսումնական հաստատություններում կրթական ծրագրերի կազմման նպատակով:¹²⁶

324. Կայուն զարգացման ծրագիրը կարևորելու է սոցիալական ձեռնարկությունների ինստիտուտի ներդրումը՝ հաշվի առնելով ԵՄ երկրների փորձը: Սոցիալական ձեռնարկությունների (աշխատողների առնվազն 50%-ը հաշմանդամներ են) ստեղծման նպատակը հաշմանդամների աշխատանքի տեղավորման ճանապարհով նրանց՝ հասարակությանն ինտեգրումն է: Այս գործընթացը մաս կկազմի «Հայաստանի Հանրապետությունում հաշմանդամների սոցիալական պաշտպանության մասին» ՀՀ օրենքով սահմանված հաշմանդամների վերականգնման համալիր միջոցառումների և ուղղված կլինի, մի կողմից, հաշմանդամ անձանց սոցիալական խնդիրների լուծմանն ու նրանց համար հնարավորինս հավասար պայմանների ապահովմանը, մյուս կողմից՝ նրանց աշխատանքային ներուժը հասարակությանը ի շահ ներդնելուն:

325. Աղքատության հաղթահարման վրա էական ազդեցություն կունենա նաև տարբեր կենսական նշանակության ծառայությունների (առողջապահական, կրթական, սոցիալական) հասանելիությունը և մատչելիության ապահովումը մարզերում: Այդ առումով, մասնավորապես, կարևորվելու է աշխատուժի ներքին տեղաշարժի կարգավորմանն ուղղված ծրագրերի իրականացումը՝ ուղղված աշխատաշուկաների անհամամասնական զարգացման հաղթահարմանը:

¹²⁶ Զբաղվածության բնագավառում պետական միջամտության եղանակների և դրանց արդյունավետության մասին ավելի մանրամասն ներկայացված է «ՀՀ աշխատանքի շուկայի դինամիկան» Համաշխարհային բանկի երկրատորանի զեկույցում, որում առաջադրված քաղաքականության ուղղությունները հիմնականում ներառվել են ԿԶԾ-ում:

7. Գյուղատնտեսությունը և գյուղական զարգացումը

326. Գյուղատնտեսությունը Հայաստանի տնտեսության հիմնական ոլորտներից մեկն է և գյուղական վայրերի բնակչության հիմնական զբաղմունքը: Ինչպես վկայում են Աղյուսակ 7.1-ի տվյալները, գյուղատնտեսության տեսակարար կշիռը ՀՆԱ-ում 11 տարվա ընթացքում կրճատվել է գրեթե երկու անգամ, ինչը պայմանավորված է տնտեսության ընդհանուր աճի տեմպերի համեմատ գյուղատնտեսության ավելի դանդաղ աճի տեմպերով: ՀՆԱ-ն 1995 - 2006 թթ. ժամանակահատվածում աճել է 2.59 անգամ, ավելացված արժեքը գյուղատնտեսությունում՝ մոտ 1.7 անգամ, իսկ տնտեսության ոչ գյուղատնտեսական հատվածում արտադրված ավելացված արժեքը՝ 2.93 անգամ¹²⁷:

Աղյուսակ 7.1. Գյուղատնտեսության զարգացման հիմնական ցուցանիշները 1996-2006թթ.

Ցուցանիշներ	1996	1997	1998	1999	2000	2001	2002	2003	2004	2005	2006
Գյուղատնտեսության տեսակարար կշիռը ՀՆԱ-ում, %	34.80	29.41	30.85	26.96	23.21	25.54	23.40	21.49	22.58	19.05	18.65
Գյուղատնտեսական զբաղվածության տեսակարար կշիռը, %	40.82	41.29	42.46	43.32	44.35	45.06	45.26	45.95	46.87	46.23	46.16
Աշխատանքային եկամուտները գյուղատնտեսությունում, % ոչ գյուղատնտեսական ոլորտի աշխատավարձերի նկատմամբ	74.70	59.83	42.97	50.43	51.17	54.93	53.62	58.54	55.44	52.39	61.10
Աշխատանքի արտադրողականությունը գյուղատնտեսությունում, % ոչ գյուղատնտեսական ոլորտի արտադրողականության նկատմամբ	77.37	59.25	60.45	48.29	37.93	41.81	36.93	32.21	33.00	26.82	25.60
Միավոր աշխատանքի արժեքը գյուղատնտեսությունում, %	28.94	39.03	41.62	51.10	64.50	55.77	51.51	60.83	61.44	75.40	78.82
Միավոր աշխատանքի արժեքը ոչ գյուղատնտեսական ոլորտում, %	24.97	27.72	33.20	31.43	31.23	29.26	24.08	24.20	25.63	25.93	24.59

Աղբյուրը՝ ՀՀ ԱՎԾ:

327. Սակայն ելնելով Հայաստանում 1995-2006թթ. տնտեսության ոչ գյուղատնտեսական հատվածում տնտեսական աճի հիմնական առանձնահատկությունից՝ այն, որ աճը առավելապես տեղի է ունեցել աշխատանքի արտադրողականության աճի հաշվին, և նոր ստեղծվող ֆորմալ աշխատատեղերի քանակը զիջել է վերացվող աշխատատեղերի քանակին, գյուղատնտեսությունից ոչ գյուղատնտեսական ոլորտ աշխատուժի արտահոսք տեղի չի ունեցել, ընդհակառակը, 2001-2006թթ. ընթացքում կայունացել է՝ կազմելով ընդհանուր զբաղվածության 45-46 տոկոսը¹²⁸:

328. Գյուղատնտեսությունում կայուն և չպակասող զբաղվածության մակարդակի պահպանման արդյունքում էականորեն մեծացավ խզումը գյուղատնտեսական և ոչ գյուղատնտեսական ոլորտների արտադրողականության միջև. եթե աշխատանքի արտադրողականությունը գյուղատնտեսությունում 1996թ. կազմել էր ոչ գյուղատնտեսական ոլորտի մոտ երեք քառորդը, ապա 2006թ. համարյա չորս անգամ ավելի ցածր էր: Այնուամենայնիվ, գյուղատնտեսության աճի և համեմատաբար կայուն զբաղվածության պայմաններում աշխատանքի արտադրողականությունը գյուղատնտեսությունում 2006թ.,


¹²⁷ Ինչպես տնտեսության ընդհանուր, այնպես էլ գյուղատնտեսության զարգացման տեմպերը կտրուկ արագացել են 2001թ. սկսած: Այսպես՝ 1996-2000թթ. տնտեսական աճը կազմել էր միջին տարեկան 5.1%, որից գյուղատնտեսությունում՝ 1.9%, իսկ ոչ գյուղատնտեսական ոլորտում՝ 6.3%: Նույն ցուցանիշները 2001-2006թթ. կազմել են համապատասխանաբար 12.4, 7.5 և 13.7 տոկոս:

¹²⁸

-2005, ILO, 2005), սակայն Հայաստանում այն առավել ցայտուն է արտահայտվում:

1996թ. համեմատ, աճել է 92.6 տոկոսով կամ միջին տարեկան 6.8%-ով, իսկ ոչ գյուղատնտեսական ոլորտի արտադրողականությունը՝ 3.94 անգամ կամ միջին տարեկան 14.7%:

Գծանկար 7.1. ՀՆԱ, գյուղատնտեսական և ոչ գյուղատնտեսական ոլորտների ավելացված արժեքի շարժընթացը 1996-2006 թթ. (ինդեքս, 1995=100)



329. Մյուս կողմից՝ վերջին տարիներին գյուղատնտեսական ապրանքների գների նկատելի աճը¹²⁹, որը պայմանավորված էր ինչպես սննդամթերքի միջազգային գների աճով, այնպես էլ ներքին պահանջարկի արագ ընդլայնման արդյունքում բնակչության եկամուտների առաջանցիկ աճով, էականորեն բարելավեց գյուղատնտեսական գործունեության իրականացման պայմանները և հնարավորություն տվեց բարձրացնելու գյուղատնտեսությունում զբաղվածների աշխատավարձի եկամուտները, որոնք 2006թ. կազմել են ոչ գյուղատնտեսական ոլորտի միջին աշխատավարձի 61.1 %-ը (1996թ.՝ 74.7%)՝ 1996-2006թթ. ընթացքում անվանական արտահայտությամբ աճելով մոտ 5.9 անգամ (ոչ գյուղատնտեսական ոլորտում միջին աշխատավարձը նույն ժամանակահատվածում անվանական արտահայտությամբ աճել էր մոտ 7.2 անգամ):

330. Նշված հանգամանքը, հաշվի առնելով աշխատանքի արտադրողականության նկատելիորեն ավելի ցածր տեմպերը, միավոր աշխատանքի արժեքի աճի (աշխատավարձի և աշխատանքի արտադրողականության հարաբերակցություն) պատճառ հանդիսացավ: Եթե 1996թ. միավոր աշխատանքի արժեքը գյուղատնտեսությունում և ոչ գյուղատնտեսական ոլորտում համարյա նույնն էր, ապա 2006թ. այն ավելի քան 3 անգամ բարձր էր: Դա նշանակում է, որ գյուղատնտեսության աճի ֆինանսավորման և գործունեության պայմանների բարելավման հնարավորությունները ներքին ռեսուրսների հաշվին նկատելիորեն ավելի ցածր են, քան ոչ գյուղատնտեսական ոլորտում:

¹²⁹ 2006թ. գյուղմթերքների արտադրողների իրացման գների ինդեքսը 2001թ. նկատմամբ աճել էր 23.9 տոկոսով, մինչև նույն ժամանակ, սպառողական գների ինդեքսի աճը նույն ժամանակահատվածում կազմել էր 18.6 տոկոս: Սննդամթերքի միջազգային գների աճը պայմանավորված է ինչպես զարգացող աշխարհի՝ սննդամթերքի նկատմամբ պահանջարկի առաջանցիկ աճով, այնպես էլ ֆերմերային տնտեսություններին հատկացվող սուբսիդիաների աստիճանական կրճատմամբ ԱՄՆ-ում և ԵՄ անդամ երկրներում:

331. Այդ հանգամանքը, նկատի ունենալով ոչ գյուղատնտեսական ոլորտի հետ համեմատելի աշխատանքային եկամուտների մակարդակ պահպանելու անհրաժեշտությունը, ինչպես նաև գյուղատնտեսությունում ավելցուկային աշխատուժի ԿԶԾ-ի գործողության ժամկետի ընթացքում արագ կրճատման և ոչ գյուղատնտեսական ոլորտ տեղափոխման բարդությունները, ենթադրում է՝

- § ԿԶԾ-ի ծրագրային ժամանակահատվածում ագրարային ոլորտը՝ պետական ծախսային գերակայությունների շարքում դիտարկում,
- § պետական ռեսուրսների լայն օգտագործում գյուղատնտեսական ենթակառուցվածքների պահպանման և նորացման համար,¹³⁰
- § փոխառու ֆինանսական միջոցների մատչելիության ավելացում և գյուղացիական տնտեսությունների բանկային և այլ տիպի ֆինանսավորման հնարավորությունների ընդլայնում,¹³¹
- § գյուղացիական տնտեսությունների սուբսիդավորման արդյունավետ համակարգի ստեղծում, որը պետք է հաշվի առնի գյուղատնտեսական գործունեության բնական պայմանները և կարողանա ապահովել արդյունավետ գյուղատնտեսական արտադրությունը անբարենպաստ պայմաններում,
- § գյուղատնտեսության հիմնական ճյուղերում՝ բուսաբուծությունում և անասնապահությունում արդյունավետ տեխնոլոգիաների ներդրման, գոտիական մասնագիտացման և արտադրության արդյունավետ տեղաբաշխման քաղաքականության իրականացում,
- § գյուղատնտեսության արտադրական և սպասարկող ենթակառուցվածքների զարգացման համար բարենպաստ պայմանների ստեղծում,
- § գյուղատնտեսական մթերքների վերամշակող ոլորտի զարգացում, վերամշակող կազմակերպությունների արդյունավետ տեղաբաշխման, առաջավոր տեխնոլոգիաների ներդրման, արտադրանքի մրցունակության բարձրացման, մարքեթինգային աջակցության և հումք արտադրողների հետ պայմանագրային հարաբերությունների, գյուղական բնակավայրերում բնագավառի փոքր և միջին ձեռնարկությունների ստեղծման ու ընդլայնման խթանում, ինչպես նաև միջազգային չափանիշներին համապատասխան սանիտարական և բուսասանիտարական միջոցառումների պարտադիր կատարում,
- § գյուղացիական տնտեսությունների համար պետական միջոցների մասնակցությամբ և պետական-մասնավոր համագործակցության սկզբունքների կիրառմամբ ռիսկերից ապահովագրման արդյունավետ համակարգի ստեղծում¹³²:

¹³⁰ Ներկայումս այդ նպատակների (ռոռզման համակարգի նորացման և գյուղական ճանապարհների վերականգնման) համար օգտագործվում են ԱՄՆ կառավարության Հագարամյակի մարտահրավերների կորպորացիայի կողմից տրամադրված դրամաշնորհը, ինչպես նաև Հայաստանի պետական բյուջեից տրամադրվող միջոցները:

¹³¹ 2006թ. վերջին բանկերի վարկային ներդրումները գյուղատնտեսությունում կազմել են 14,196 մլրդ դրամ կամ ընդհանուր վարկային ներդրումների 5.5 և գյուղատնտեսական ավելացված արժեքի 3 տոկոսը: Վարկավորման ծավալները արդյունաբերության համար 2006թ. վերջին կազմել են 39,263 մլրդ դրամ կամ ընդհանուր վարկային ներդրումների 15.1 և արդյունաբերության ավելացված արժեքի 9.8 տոկոսը:

¹³² Այդպիսի համակարգի ստեղծումը նախատեսված էր նաև ԱՀՌԾ - ով, սակայն դեռևս գործարկված չէ:

Աղյուսակ 7.2. Գյուղատնտեսական ապրանքների արտահանումը և ներմուծումը 1996-2006 թթ.

Ցուցանիշներ	1996	1997	1998	1999	2000	2001	2002	2003	2004	2005	2006
Գյուղատնտեսական ապրանքների արտահանում, մլն ԱՄՆ դոլար	1.18	3.53	1.45	2.06	2.41	2.56	4.43	8.99	13.72	17.23	26.79
Տեսակարար կշիռը ընդհանուր արտահանման մեջ, %	0.41	1.52	0.66	0.88	0.80	0.75	0.88	1.31	1.90	1.77	2.67
Տեսակարար կշիռը գյուղատնտեսական ավելացված արժեքի մեջ, %	0.21	0.73	0.25	0.41	0.54	0.47	0.80	1.49	1.70	1.87	2.32
Գյուղատնտեսական ապրանքների ներմուծում, մլն ԱՄՆ դոլար	184.11	135.67	149.91	135.52	120.47	130.50	170.01	170.03	179.33	170.03	179.33
Տեսակարար կշիռը ընդհանուր ներմուծման մեջ, %	21.51	15.20	16.61	16.90	13.62	14.87	17.22	13.29	13.28	9.44	8.17
Տեսակարար կշիռը գյուղատնտեսական ավելացված արժեքի մեջ, %	33.07	28.11	25.66	27.22	27.15	24.12	30.57	28.18	22.18	18.50	15.52

Աղբյուրը՝ ՀՀ ԱՎԾ:

332. Ինչպես ցույց են տալիս Աղյուսակ 7.2-ի տվյալները, համաշխարհային տնտեսությանը երկրի գյուղատնտեսության ինտեգրման աստիճանը չնայած դեռ խիստ անբավարար է, սակայն և՛ բացարձակ առումով, և՛ տեսակարար կշռով էականորեն աճել է: Գյուղատնտեսական ապրանքների արտահանումը ընթացիկ դոլարային արտահայտությամբ 1996-2006թթ. ընթացքում ավելացել է 22.7 անգամ, իսկ տեսակարար կշիռը գյուղատնտեսական ավելացված արժեքի մեջ՝ 11 անգամ: Հատկանշական է, որ արտահանման աճի գերակշիռ մասը տեղի է ունեցել 2002-2006թթ. ընթացքում, երբ այն աճել է մոտ 10.5 անգամ, իսկ արտահանման հավելաճը այդ ժամանակահատվածում կազմել է արտահանման ամբողջ հավելաճի 94.6 տոկոսը:

333. Գյուղատնտեսական ապրանքների արտահանման առաջանցիկ աճի խրախուսումը և դրանց տեսակարար կշռի ավելացման ապահովումը այս ոլորտում Կառավարության տնտեսական քաղաքականության հիմնական գերակայություններից են: Նշված քաղաքականությունը կիրականացվի ինչպես արտաքին առևտրի խրախուսման, մաքսային վարչարարության բարելավման, տրանսպորտային ծախսերի կրճատման և առևտրի տեխնիկական արգելքների վերացման ընդհանուր ռազմավարության սահմաններում, այնպես էլ հաշվի առնելով գյուղատնտեսական արտադրանքի առանձնահատկությունները՝ խրախուսելով համապատասխան մասնավոր ինտեգրացման և գյուղմթերքների առաջնային մշակմամբ զբաղվող կառույցների ստեղծումը և ապահովելով փոխառու ֆինանսական ռեսուրսների մատչելիությունը դրանց համար:

334. Աղյուսակ 7.2-ի տվյալները նաև վկայում են երկրի՝ սեփական արտադրության գյուղմթերքներով ապահովման աստիճանի էական աճի մասին: Այսպես՝ 1996-2006թթ. ընթացքում երկուսից ավելի անգամ կրճատվել է ներմուծված գյուղմթերքի տեսակարար կշիռը գյուղատնտեսության ավելացված արժեքի մեջ և 2.3 անգամ՝ ընդհանուր ապրանքային ներմուծման մեջ: Սեփական արտադրության գյուղմթերքներով երկրի ապահովման աստիճանի հետագա աճը Կառավարության ազրարային քաղաքականության հիմնական գերակայություններից է: Այդ գերակայությունը ԿԶԾ-ի գործունեության ժամանակահատվածում կիրականացվի գյուղատնտեսության նախատեսված աճի տեմպերի ապահովման, տնտեսությունների ապրանքայնության աճի և ապրանքային արտադրության կառուցվածքի փոփոխման խրախուսման՝ բարձր ապրանքայնություն և ավելացված արժեք ունեցող գյուղմթերքների արտադրության առաջանցիկ աճի խրախուսմանը ուղղված քաղաքականության միջոցով:

Աղյուսակ 7.3. Գյուղացիական տնտեսությունների գործունեությունը բնութագրող հիմնական ցուցանիշները 1996-2006թթ.

Ցուցանիշներ	1996	1997	1998	1999	2000	2001	2002	2003	2004	2005	2006
Գյուղացիական տնտեսությունների քանակը, հազ.	319.5	321.1	333.8	335.1	332.6	334.8	334.7	337.9	338.5	339.2	339.2
Գյուղացիական տնտեսությունների արտադրանքի տեսակարար կշիռը գյուղատնտեսության արտադրանքի մեջ, %	98.9	99.2	99.2	98.5	97.5	96.9	96.8	96.2	96.2	97.2	97.6
Ջրադրվածների միջին քանակը մեկ գյուղացիական տնտեսությունում, մարդ	1.83	1.72	1.67	1.64	1.66	1.65	1.47	1.49	1.48	1.48	1.48
Ավելացված արժեքը մեկ գյուղացիական տնտեսությունում, հազ. դրամ	712.1	730.8	875.8	782.5	701.8	865.7	922.0	994.1	1222.6	1205.0	1376.3
Ապրանքայնության աստիճանը, %					45.1	49.9	54.1	58.9	55.7	55.8	54.2
Վաճառքը, հազ. դրամ					316.5	432.0	498.8	585.5	681.0	672.4	808.2
Ներքին սպառումը, հազ. դրամ					385.3	433.7	423.2	408.6	541.6	532.6	568.0

Աղբյուրը՝ ՀՀ ԱՎԾ:

335. Գյուղատնտեսական մթերքների հիմնական մասը արտադրվում է գյուղացիական տնտեսությունների կողմից, որոնց տեսակարար կշիռը 2003-2006թթ. նույնիսկ ավելացել է, իսկ առևտրային գյուղատնտեսական ձեռնարկությունների մասնակցությունը գյուղմթերքների արտադրությանը տատանվել է 0.8-3.8 տոկոսի միջակայքում:

336. Այսպիսով, գյուղատնտեսական արտադրության հիմնական մասը ապահովել են գյուղացիական տնտեսությունները, և ԱՀՌԾ-ով նախատեսված տնտեսությունների խոշորացում տեղի չի ունեցել, ընդհակառակը, գյուղացիական տնտեսությունների քանակի որոշակի աճի պայմաններում կրճատվել է նրանցում զբաղվածների և տնօրինվող հողատեսքերի քանակը: Այնուամենայնիվ, բավականին աճել է տնտեսությունների ապրանքայնության աստիճանը՝ գերազանցելով ԱՀՌԾ-ի կանխատեսումները¹³³: Ապրանքայնության աստիճանի աճը պայմանավորված էր հետևյալ հիմնական գործոնների ազդեցությամբ, որոնք կշարունակեն գործել նաև միջնա- և երկարաժամկետ հեռանկարում՝

- § գյուղմթերքների նկատմամբ ներքին պահանջարկի արագ աճով և գյուղմթերքների ներմուծման ծավալների բացարձակ և հարաբերական կրճատմամբ,
- § գյուղմթերքների գների աճով և գյուղատնտեսական արտադրության համար համեմատաբար ավելի նպաստավոր պայմանների ձևավորմամբ,
- § ոռոգման համակարգի բարեփոխումներով և ոռոգման ջրի մատակարարման պայմանների բարելավմամբ,
- § որպես բոլոր այդ գործոնների ազդեցության արդյունք՝ արտադրության ապրանքայնություն ունեցող գյուղմթերքների արտադրության ծավալների առաջանցիկ աճի և ցածր ապրանքայնություն ունեցող գյուղմթերքների արտադրության ծավալների հարաբերական կրճատման միջոցով:

337. Այդ բոլոր գործոնները ազդել են նաև մեկ գյուղացիական տնտեսության կողմից արտադրվող ավելացված արժեքի ծավալների ավելացման վրա. անվանական

¹³³ ԱՀՌԾ-ով նախատեսվում էր գյուղացիական տնտեսությունների ապրանքայնության աստիճանը 2005թ. հասցնել 48%-ի, իսկ 2006թ.՝ 51%-ի: Ապրանքայնության փաստացի աստիճանը 2005թ. կազմել է 55.8% և 2006թ.՝ 54.2%:

արտահայտությամբ այն 2000-2006թթ. աճել է համարյա 2 անգամ, իսկ վաճառքի ծավալները¹³⁴ 2.55 անգամ: Այնուամենայնիվ գյուղացիական տնտեսությունները դեռևս պահպանում են տնտեսավարման բնաիրային բնույթը, որը տնտեսությունների չափագանց փոքր չափերի, զարգացման համար ներքին ռեսուրսների անբավարարության և գործունեության ցածր դրամական արդյունքների հետևանք է:

338. ԿԶԾ-ի գյուղատնտեսության զարգացման հիմնական ցուցանիշները ներկայացված են Աղյուսակ 7.4-ում: Գյուղատնտեսական զարգացման կանխատեսումները հիմնված են քաղաքականությունների հետևյալ շրջանակի վրա՝

- § գյուղատնտեսության էքստենսիվ, ներքին ռեսուրսների և երկրի ներքին ավտոնոմ սպառման արագ ընդլայնման վրա հիմնված աճի՝ դեռևս գոյություն ունեցող ներուժի ազդեցությունը ԿԶԾ-ի գործունեության ժամկետում աստիճանաբար պակասելու է. այդ պատճառով միջնաժամկետ հեռանկարում անցում է կատարվելու ինտենսիվ զարգացմանը, որը պետք է հիմնված լինի առևտրայինության, արդյունավետության և արտահանման ներուժի աճի վրա.
- § այնուամենայնիվ, փոքր գյուղացիական տնտեսությունները մնալու են գյուղատնտեսական արտադրության հիմքը, և ագրարային քաղաքականության հիմնական գերակայություններ կշարունակեն հանդիսանալ տնտեսությունների ապրանքայինության և արտադրողականության աճը, ինչպես նաև փոխառու ֆինանսական միջոցների մատչելիության ապահովումը.
- § միևնույն ժամանակ, քաղաքականությունը ուղղված կլինի նաև խոշոր առևտրային ձեռնարկությունների ձևավորման խրախուսմանը.
- § գյուղատնտեսության ընդհանուր արդյունավետության աճը կապահովվի այն սպասարկող ոլորտների, մասնավորապես՝ ինտեգրացնող կառույցների, առաջնային վերամշակման ձեռնարկությունների, մատակարարող և իրացնող կոոպերատիվների ցանցի առաջանցիկ զարգացման խրախուսման միջոցով.
- § արդյունավետության աճը ապահովող կարևոր գործոն կհանդիսանան պետական մեծածավալ ներդրումները գյուղատնտեսական ենթակառուցվածքի, մասնավորապես՝ ոռոգման (որոնք իրականացվում և շարանակելու են իրականացվել ոռոգման համակարգի նոր ինստիտուցիոնալ կառուցվածքի կայացմանն ու ամրապնդմանը զուգընթաց) և գյուղական ճանապարհների, ինչպես նաև այլ (հողերի բարելավում, մշակաբույսերի սելեկցիա և սերմնաբուծություն, առաջավոր տեխնոլոգիաների ներդրման խրախուսում, խորհրդատվական համակարգի զարգացում և այլն) ոլորտներում.
- § գյուղատնտեսական գործունեության հետ կապված բնական ռիսկերը կնվազեցվեն համապատասխան ենթակառուցվածքների (հակակարկտային կայաններ, հակահեղեղային միջոցառումներ և այլն) զարգացման և ապահովագրական համակարգի մշակման և ներդրման միջոցով.
- § գյուղատնտեսական արտադրության սուբսիդավորման արդյունավետ համակարգի մշակումը և ներդրումը կնպաստեն գյուղատնտեսական արտադրության՝ օբյեկտիվորեն գոյություն ունեցող տարածքային տարբերությունների մեղմմանը և գործունեության համար հնարավորինս հավասար պայմանների ստեղծմանը, ինչպես նաև ազդեցություն կունենա

սելով բարձր ապրանքայինության աստիճան և բարձր ավելացված արժեք ունեցող գյուղմթերքների արտադրությունը.

¹³⁴ Վաճառք դրամով, ապրանքափոխանակություն և բնաիրային տեսքով վճարումներ՝ ծառայությունների համար:

Տ գյուղական բնակավայրերում աշխատուժի առավել արդյունավետ օգտագործման, աշխատանքի արտադրողականության բարձրացման նպատակով օժանդակություն կցուցաբերվի գյուղական բնակավայրերում ագրարային ոլորտի փոքր և միջին ձեռնարկությունների ստեղծմանը, օրգանական գյուղատնտեսության հնարավորությունների ընդլայնմանը, ագրոտուրիզմի և գյուղական բնակավայրերում զբաղվածությունն ապահովող այլ ոլորտների զարգացմանը:

339. Այնուամենայնիվ, զարգացման ինտենսիվ ուղուն անցնելու անհրաժեշտությունից ելնելով, որը պահանջելու է էական կառուցվածքային փոփոխությունների իրականացում, ԿԶԾ-ն նախատեսում է գյուղատնտեսության ոլորտի աճի ավելի ցածր տեմպեր, քան 1996-2006թթ., և ավելի ցածր տեմպեր, քան ոչ գյուղատնտեսական ոլորտում, որի արդյունքում 2007-2015թթ. կխորանա գյուղատնտեսության և ոչ գյուղատնտեսական ոլորտի հիմնական ցուցանիշների միջև խզումը, իսկ 2015թ. հետո կսկսի մեղմվել:

340. Կայուն զարգացման ծրագիրը, ելնելով ինչպես գյուղատնտեսությունում, այնպես էլ տնտեսության ոչ գյուղատնտեսական ոլորտում 1996-2006թ. զբաղվածության միտումներից, որոնք ցույց են տալիս, որ աշխատուժի արտահոսք գյուղատնտեսությունից տեղի չի ունեցել¹³⁵, և զբաղվածության մակարդակը ոլորտում, ըստ էության, եղել է անփոփոխ, նախատեսում է, որ ներկայիս զբաղվածության մակարդակները կպահպանվեն նաև 2008-2021թթ.: Այնուամենայնիվ, անհրաժեշտ է նշել, որ իրական զբաղվածությունը գյուղատնտեսությունում (լրիվ զբաղվածության վերահաշվարկով), ըստ տնային տնտեսություններում աշխատուժի ընտրանքային հետազոտությունների արդյունքների,¹³⁶ մոտ 2 անգամ ավելի ցածր է պաշտոնական վիճակագրության հրապարակած թվերից: Մասնավորապես՝ 2006թ. ընտրանքային հետազոտությունների արդյունքներով զբաղվածությունը գյուղատնտեսությունում կազմել է ընդհանուր զբաղվածության 24.3%-ը կամ մոտ 240 հազար մարդ (ըստ պաշտոնական վիճակագրության՝ 46.16% և 504.3 հազար մարդ):

341. Այսպիսով, ծրագիրը նախատեսում է, որ ներկայիս թերզբաղվածության աստիճանը գյուղատնտեսությունում, որը 2006թ. կազմել էր 47.5% (մեկ զբաղվածի միջին աշխատաժամանակը տոկոսներով՝ լրիվ զբաղվածության մակարդակի նկատմամբ), չի ավելանա, այլ ընդհակառակը, որոշակիորեն կպակասի, որը պայմանավորված կլինի գյուղական վայրերում ոչ գյուղատնտեսական զբաղվածության մոտ 50 տոկոս աճով 2006-2021թթ.:

Աղյուսակ 7.4. Գյուղատնտեսության զարգացման հիմնական ցուցանիշները 2006-2021թթ.

Ցուցանիշներ	2006	2010	2015	2021
Ընդհանուր				

¹³⁵ Գյուղատնտեսական զբաղվածության կրճատումը 2002թ. (500.8 հազար մարդ), 2001թ. համեմատ (570 հազար մարդ), պայմանավորված է 2001թ. մարդահամարի արդյունքներով տնտեսությունում զբաղվածության մակարդակների գնահատականների նվազեցմամբ: Մյուս կողմից՝ գյուղատնտեսությունում զբաղվածության կայուն և անփոփոխ բնույթը պայմանավորված է հաշվարկի մեթոդաբանությամբ. զբաղված են համարվում գյուղացիական տնտեսության բոլոր չափահաս և տնտեսապես ակտիվ անդամները: Այնուամենայնիվ, գյուղատնտեսությունից տնտեսության ոչ գյուղատնտեսական ոլորտ աշխատուժի արտահոսքի բացակայությունը պայմանավորվում է այն հանգամանքով, որ այդտեղ զբաղվածությունը ոչ միայն չի ավելացել, այլ ընդհակառակը՝ նվազել է 1990-2006թթ. ամբողջ ժամանակահատվածում:

¹³⁶ Տե՛ս Աշխատուժի Հայաստանի Հանրապետությունում 2001- 2006. Երևան, ՀՀ ԱՎԾ, 2007 թ.:

Ավելացված արժեքը, մլրդ դրամ՝ ընթացիկ գներով	495	697	982	1379
%՝ ՀՆԱ նկատմամբ	18.7	14.8	12.5	10.5
Ինդեքս (իրական արտահայտությամբ), 2006 թ. = 100	100	125	148	173
Իրական աճի միջին տարեկան տեմպերը, %		5.74	3.44	2.64
Միջին տարեկան գնաճը գյուղատնտեսությունում, %	11.9	3.4	3.0	3.0
Զբաղվածությունը, աշխատանքի արտադրողականությունը և եկամուտները				
Զբաղվածների քանակը	504.3	504.3	504.3	504.3
Աշխատանքի արտադրողականությունը, հազ. դրամ՝ ընթացիկ գներով	948.4	1383.1	1946.0	2734.3
Աշխատանքի արտադրողականության աճի միջին տարեկան տեմպերը, %		5.74	3.44	2.64
%՝ ոչ գյուղատնտեսական ոլորտի արտադրողականության նկատմամբ	30	25	23	23
Միավոր աշխատանքի արժեքը, %	78.82	70	65	60
Ամսական աշխատանքային եկամուտ գյուղատնտեսական գործունեությունից, հազ. դրամ՝ ընթացիկ գներով	46.39	80.7	105.4	164.1
%՝ ոչ գյուղատնտեսական ոլորտի ամսական միջին աշխատավարձի նկատմամբ	61.1	57.1	52.2	52.2
Արտահանումը և ներմուծումը				
Գյուղատնտեսական ապրանքների արտահանում, մլն ԱՄՆ դոլար	26.8	56.8	177.3	498.5
Տեսակարար կշիռը ընդհանուր արտահանման մեջ, %	2.67	3.5	4.1	4.8
Տեսակարար կշիռը գյուղատնտեսական ավելացված արժեքի մեջ, %	2.32	2.6	5.9	11.8
Գյուղատնտեսական ապրանքների ներմուծում, մլն ԱՄՆ դոլար	179.3	386.1	506.1	542.5
Տեսակարար կշիռը ընդհանուր ներմուծման մեջ, %	8.17	7.5	5.2	3.0
Տեսակարար կշիռը գյուղատնտեսական ավելացված արժեքի մեջ, %	15.5	16.8.	15.7	12.0
Գյուղացիական տնտեսություններ				
Տնտեսությունների քանակը, հազ.	339.2	330.8	320.4	307.9
Տեսակարար կշիռը գյուղատնտեսության արտադրանքի մեջ, %	97.6	95.2	92.2	88.6
Մեկ տնտեսության միջին ավելացված արժեքը, հազ. դրամ՝ ընթացիկ գներով	1376.3	2000.6	2825.8	3968.1
Ապրանքայնության աստիճանը, %	58.7	63.0	70.0	75.0
Վաճառքը, հազ. դրամ	808.2	1167.9	1824.3	2575.5
Ներքին սպառումը, հազ. դրամ	568.0	685.9	781.8	858.5
Վարկավորման ցուցանիշներ				
Վարկեր գյուղատնտեսությանը, %՝ գյուղատնտեսական ավելացված արժեքի նկատմամբ	2.97	6	11	18
Վարկեր գյուղատնտեսությանը, մլրդ դրամ՝ ընթացիկ գներով	14.2	41.8	108.1	248.2

342. Այնուամենայնիվ, Կայուն զարգացման ծրագիրը նախատեսում է, որ խոշոր ապրանքային տնտեսությունների ստեղծմանը նպաստող ագրարային քաղաքականության արդյունքում քայլ առ քայլ կավելանա դրանց տեսակարար կշիռը գյուղատնտեսության ավելացված արժեքում՝ 2006թ. 2.4%-ից մինչև 11.4%՝ 2021թ.: Համապատասխանաբար, մոտ 10%-ով կկրճատվի գյուղացիական տնտեսությունների քանակը, և տեղի կունենա աշխատուժի տեղաշարժ գյուղացիական տնտեսություններից դեպի խոշոր առևտրային տնտեսություններ:

343. Այդ անցումը ապահովող քաղաքականության հիմնական բաղկացուցիչներն են գործարար և ներդրումային միջավայրերի բարելավումը, գյուղատնտեսական հողերի գրավադրման արդյունավետ մեխանիզմների կիրառումը, հողի շուկայի ակտիվացումը և հողի վաճառքի ստվերային գործարքների ծավալների էական կրճատումը:

344. Գյուղատնտեսության զարգացման և արտադրության ինտենսիվացման հիմնական շարժիչ ուժերը 2008-2021թթ. կհանդիսանան գյուղմթերքների արտահանման առաջանցիկ աճը և պարենային ինքնապահովման մակարդակի կտրուկ ավելացումը: Նախատեսվում է մինչև 2021թ. գյուղմթերքների արտահանման ծավալները անվանական դոլարային

արտահայտությամբ ավելացնել մոտ 12.6 անգամ՝ 2021թ. արտահանման տեսակարար կշիռը գյուղատնտեսության ավելացված արժեքում հասցնելով 11.8 տոկոսի՝ 2006թ. 2.32%-ի փոխարեն: Ինչ վերաբերում է պարենային ինքնապահովման մակարդակի աճին, ապա այն կիրականացվի ներմուծման փոխարինման տեսքով. նախատեսվում է կրճատել ներմուծվող գյուղմթերքների տեսակարար կշիռը գյուղատնտեսական ավելացված արժեքի նկատմամբ՝ 2006թ. 15.5 տոկոսից 2021թ. հասցնելով մինչև 12 տոկոսի:

345. Ինչ վերաբերում է ներքին շուկայի ավտոնոմ ընդլայնմանը, որը գյուղատնտեսության զարգացման հիմնական շարժիչ ուժն էր 1996-2006թթ., ապա դրա դերը ԿԶԾ-ի գործողության ժամկետում նվազելու է՝ ելնելով այն հանգամանքից, որ զարգացման արդյունքում գյուղմթերքների պահանջարկը կաճի ավելի դանդաղ տեմպերով, քան ոչ գյուղատնտեսական ապրանքների և ծառայությունների նկատմամբ պահանջարկը:

346. Գյուղմթերքների արտահանման առաջանցիկ աճը և երկրի պարենային ինքնապահովման մակարդակի ավելացումը կապահովվի ինչպես գործարար և ներդրումային միջավայրի բարելավման ու առևտրի հետագա ազատականացման, տեխնիկական արգելքների վերացման և տրանսպորտային ծախսերի կրճատման ընդհանուր քաղաքականության շրջանակներում, այնպես էլ ԿԶԾ-ի ագրարային քաղաքականության արդյունքում:

347. Այստեղ որոշիչ դեր կխաղան գյուղատնտեսությունում ֆինանսական միջնորդության ծավալների նախատեսվող կտրուկ աճը (2021թ. նախատեսվում է վարկավորման ծավալները հասցնել գյուղատնտեսական ավելացված արժեքի 18%-ի՝ 2006թ. 3%-ի փոխարեն) և գյուղատնտեսությանը սպասարկող արդյունավետ կառույցների ձևավորումը (մատակարարող և սպասարկող կոոպերատիվների համակարգ, ինտեգրման կառույցներ, առաջնային վերամշակման ձեռնարկություններ):

Աղյուսակ 7.5. Գյուղական զարգացման նպատակային ցուցանիշները 2005-2021թթ.

Ցուցանիշներ	2005	2006	2010	2015	2021
ՀՆԱ*, մլրդ դրամ	560.3	638.9	1,005.5	1,498.3	2,252.5
Գյուղատնտեսության ավելացված արժեք	411.1	469.3	684.4	963.0	1,353.1
Ոչ գյուղատնտեսական ոլորտի ավելացված արժեք	149.3	169.5	321.1	535.3	899.4
Գյուղատնտեսության ավելացված արժեք, %՝ ՀՆԱ նկատմամբ	73.4	73.5	68.1	64.3	60.1
Ոչ գյուղատնտեսական ոլորտի ավելացված արժեք, %՝ ՀՆԱ նկատմամբ	26.6	26.5	31.9	35.7	39.9
Զբաղվածությունը, հազ. մարդ	601.1	606.7	623.6	637.8	653.6
Գյուղատնտեսությունում	500.7	500.7	500.7	500.7	500.7
Ոչ գյուղատնտեսական ոլորտում	100.4	106.0	122.9	137.2	152.9
Զբաղվածությունը գյուղատնտեսությունում, %՝ ընդհանուրի նկատմամբ	83.3	82.5	80.3	78.5	76.6
Զբաղվածությունը ոչ գյուղատնտեսական ոլորտում, %՝ ընդհանուրի նկատմամբ	16.7	17.5	19.7	21.5	23.4
ՀՆԱ մեկ շնչին, հազ. դրամ	484.4	551.4	855.9	1,247.3	1,847.0
Գյուղատնտեսության ավելացված արժեք	355.3	405.1	582.6	801.7	1,109.5
Ոչ գյուղատնտեսական ոլորտի ավելացված արժեք	129.0	146.3	273.3	445.6	737.5
ՀՆԱ մեկ շնչին, ԱՄՆ դոլար	1,058.2	1,325.4	2,802.5	4,084.1	6,047.7
Գյուղատնտեսության ավելացված արժեք	776.3	973.7	1,907.7	2,624.9	3,632.9
Ոչ գյուղատնտեսական ոլորտի ավելացված արժեք	281.9	351.7	894.9	1,459.1	2,414.7

* Գյուղական բնակավայրերում ստեղծված ավելացված արժեքի հաշվարկային գնահատական:

348. Գյուղական զարգացման ներկայիս հիմնահարցերը պայմանավորված են գյուղական բնակավայրերում գյուղատնտեսության բացարձակ գերակա դերով: Ինչպես վկայում են Աղյուսակ 7.5-ի տվյալները, 2005թ. գյուղատնտեսական գործունեության արդյունքում ստեղծվել էր գյուղական բնակավայրերի ՀՆԱ-ի 74%-ը, իսկ գյուղատնտեսությունում

զբաղվածությունը կազմել էր ընդհանուր գյուղական զբաղվածության 83.3%-ը: Այդպիսի իրավիճակը գյուղական վայրերի բնակչության բարեկեցությունը անցանկալի կախվածության մեջ է դնում գյուղատնտեսության զարգացման մակարդակից և աճի տեմպերից: Հաշվի առնելով ԿԶԾ-ով նախատեսվող գյուղատնտեսական զարգացման ավելի ցածր տեմպերը՝ կենսամակարդակի խզումը գյուղական բնակավայրերի ու երկրի այլ քաղաքների և հատկապես Երևանի միջև անխուսափելիորեն կավելանա:

Աղյուսակ 7.6. Գյուղական զարգացման նպատակային ցուցանիշները 2006-2021թթ. (2005 թ. =100)

Ցուցանիշներ	2006	2010	2015	2021
ՀՆԱ*	108.9	144.3	181.0	226.1
Գյուղատնտեսության ավելացված արժեք	109.1	133.9	158.7	185.2
Ոչ գյուղատնտեսական ոլորտի ավելացված արժեք	108.5	172.9	242.8	338.9
Զբաղվածությունը	100.9	103.7	106.1	108.7
Գյուղատնտեսությունում	100.0	100.0	100.0	100.0
Ոչ գյուղատնտեսական ոլորտում	105.6	122.4	136.6	152.3
Մեկ շնչի հաշվով ՀՆԱ	108.8	142.1	174.4	214.5
Գյուղատնտեսության ավելացված արժեք	109.0	131.9	152.8	175.7
Ոչ գյուղատնտեսական ոլորտի ավելացված արժեք	108.4	170.3	233.9	321.5

* Գյուղական բնակավայրերում ստեղծված ավելացված արժեքի հաշվարկային գնահատական:

349. Այդ խզման խորացումը կանխելու և հետագայում Երևանի, երկրի այլ քաղաքների ու գյուղական բնակավայրերի կենսամակարդակների տարբերությունները կրճատելու նպատակով Հայաստանում 2008թ. ընթացքում կմշակվի տարածքային զարգացման համապարփակ ազգային ծրագիր, որի բաղկացուցիչ մաս կհանդիսանա գյուղական զարգացման ծրագիրը: Վերջինիս հիմնական հեմանիշերը ներկայացված են աղյուսակներ 7.5-ում և 7.6-ում:

350. Այդ ծրագրի հիմնական նպատակները կլինեն գյուղական բնակավայրերի բնակչության զբաղմունքների բազմազանեցումը, ոչ գյուղական ոլորտի ճյուղերի առաջանցիկ զարգացման խրախուսումը և ոչ գյուղատնտեսական աշխատատեղերի ստեղծումը՝ պետական և մասնավոր ֆինանսական ռեսուրսների արդյունավետ օգտագործման մեխանիզմների ու ուղղությունների մշակման և կիրարկման միջոցով:

351. Պետք է նշել, որ ներկայումս գյուղաբնակ բնակչության շրջանում զբաղվածության քաղաքականության միջոցառումների (մասնավորապես, ակտիվ քաղաքականության) իրականացումը նշանակալիորեն խոչընդոտվում է գյուղական բնակչության զբաղվածության կարգավիճակի սահմանման բացերով: Այս առումով, գյուղաբնակ բնակչության շրջանում զբաղվածության քաղաքականության միջոցառումների տարածվածության ընդլայնման ու արդյունավետության բարձրացման նպատակով առաջնահերթ խնդիրներից է համարվելու գյուղական բնակչության զբաղվածության կարգավիճակի սահմանման վերանայումն ու հստակեցումը՝ ելնելով ներկա իրավիճակից, ձևավորված իրողություններից և համապատասխան միջազգային փորձից:

8. Ենթակառուցվածքների զարգացում

352. Արտադրական ենթակառուցվածքների՝ տրանսպորտի, էներգետիկայի, ջրային տնտեսության և հեռահաղորդակցության բնագավառներում վերջին տարիներին որոշակի դրական տեղաշարժեր են արձանագրվել: Ավելացել են բնակչությանը և տնտեսության տարբեր ճյուղերին մատուցվող ծառայությունների ծավալները և հասանելիությունը, բարելավվել է ծառայություն մատուցող ընկերությունների ֆինանսական հուսալիության մակարդակը, էականորեն նվազել են համակարգին հատկացվող ուղղակի և անուղղակի սուբսիդիաները, զգալիորեն աճել է ենթակառուցվածքներում պետական և մասնավոր ներդրումների մակարդակը, խորացել է պետության և մասնավոր հատվածի համագործակցությունը համակարգի կառավարման գործառնություններում:

353. Չնայած ձեռքբերումներին, ընդհանուր առմամբ, արտադրական ենթակառուցվածքներում շուկայական տնտեսությանը համապատասխանող կառուցվածքային և կառավարման բարեփոխումների աստիճանով Հայաստանը դեռևս զգալիորեն զիջում է Արևելյան և Կենտրոնական Եվրոպայի առաջատար երկրներին¹³⁷: Հեռանկարային առումով նման իրավիճակը կարող է խոչընդոտել տնտեսական աճի բարձր տեմպերի ապահովմանը: Բարեփոխումների հետաձգումը հղի է նաև զգալի ֆիսկալ ռիսկերով և կարող է էապես սահմանափակել պետական ծախսերի հնարավորությունները և խաթարել բաշխողական արդյունավետությունը:

354. Արտադրական ենթակառուցվածքների հիմնական կապիտալի ֆիզիկական մաշվածության աստիճանը շարունակում է մնալ երկրի հեռանկարային կայուն զարգացման և աղքատության հիմնարար հաղթահարման հիմնական մարտահրավերներից: ԿԶԾ-ի գերակա խնդիրներից է լինելու արտադրական ենթակառուցվածքների հիմնական ակտիվների արդիականացման և վերականգնման նպատակով պետական ներդրումների ավելացումը՝ զուգահեռաբար նպաստելով մասնավոր ներդրումների մասնաբաժնի ավելացմանը: Ընդհանուր առմամբ, առանց հեռահաղորդակցության ոլորտի, ենթակառուցվածքներում ներդրումների տարեկան պահանջը գնահատվում է ՀՆԱ 3-5 տոկոսի շրջանակներում: ԿԶԾ-ի պետական ներդրումների շրջանակում նախատեսվում են տարեկան ներդրումներ ՀՆԱ 4.6-5 տոկոսի սահմաններում, որոնց շուրջ 50-60 տոկոսը նպատակուղղվելու է արտադրական ենթակառուցվածքներին:

8.1. Խմելու ջուր

355. Վերջին տարիներին հանրապետությունում, ընդհանուր առմամբ, զգալի դրական տեղաշարժեր են արձանագրվել խմելու ջրի հասանելիության, ջրամատակարարման շարունակականության և անվտանգության աստիճանի ավելացման առումով: Հանրապետության ամբողջ տարածքում ջրամատակարարման շարունակականությունը 2006 թ. միջինը կազմել է 12.1 ժամ/օր, որը շուրջ 4 ժամով գերազանցել է 1998 թ. համապատասխան ցուցանիշի մակարդակը: Միաժամանակ, զգալիորեն ավելացել է կենտրոնացված ջրամատակարարման սպասարկման ընդգրկվածությունը գյուղական բնակավայրերում՝ 64.7 տոկոսից հասնելով 78 տոկոսի: Կարևորագույն ձեռքբերումներից է եղել նաև հանրապետությունում կենտրոնացված ջրամատակարարման համակարգից օգտվողների թվաքանակում օրական 1 ժամից պակաս ջրամատակարարում ունեցողների մասնաբաժնի կտրուկ նվազումը՝ 1998 թ. 16.3 տոկոսից՝ մինչև 0.5 տոկոս՝ 2006թ. (տես Աղյուսակ 8.1):


137

Աղյուսակ 8.1. Հայաստան. խմելու ջրի մատչելիությունը տնային տնտեսությունների համար՝ 1998/99, 2004 և 2006 թթ. համեմատականը (տոկոս՝ բնակչության թվաքանակի նկատմամբ)

Ջրի հիմնական աղբյուրը	Ընդամենը հանրապետությունում			Քաղաքային բնակավայրեր			Գյուղական բնակավայրեր		
	1998/99	2004	2006	1998/99	2004	2006	1998/99	2004	2006
Կենտրոնացված ջրամատակարարում	83.7	88.9	91.3	96.2	96.5	98.1	64.7	74.0	78.0
մինչև 1 ժամ	16.3	1.6	0.5	4.1	1.6	0.6	35.0	1.6	0.1
1-5 ժամ	43.2	39.5	35.9	56.4	40.9	37.2	23.1	36.0	32.8
6-12 ժամ	15.8	21.5	25.9	19.6	22.5	25.9	9.9	19.0	25.9
13-23 ժամ	4.1	4.5	4.3	4.9	5.2	4.9	2.8	2.8	2.9
24 ժամ	20.6	32.9	33.4	15.0	29.8	31.4	29.2	40.6	38.3
Ջրհոր, աղբյուր	5.9	3.8	3.9	1.2	0.9	1.4	13.0	9.4	8.9
Ջրամատակարարման սեփական աղբյուր	2.0	2.6	3.3	0.4	0.2	0.1	4.4	7.3	9.5
Բերովի ջուր	8.3	4.5	1.4	2.1	2.3	0.3	17.8	9.0	3.6
Այլ աղբյուրներ	0.1	0.2	0.1	0.1	0.1	0.1	0.1	0.3	0.0

Աղբյուրը՝ ՀՀ ԱՎԾ՝ ՏՏԿԱՀ 1998/99, 2004 և 2006 թթ.:

Գծանկար 8.1. Ջրամատակարարման տևողության դինամիկան 2004-2007 թթ.




* Դիտարկվել է «Հայջրմուղկոյուղի» ընկերության (ՀԶԿԸ) սպասարկման տարածքը՝ ներառելով ՀՀ շուրջ 300 գյուղական համայնքներ և ՀՀ բոլոր քաղաքները, բացառությամբ՝ Երևանի, Գյումրու, Վանաձորի, Արմավիրի, Մարալիկի և Սեփակի:

Աղբյուրը՝ ՀՀ տարածքային կառավարման նախարարության ջրային տնտեսության պետական կոմիտե:

356. Այդուհանդերձ, ջրամատակարարման տևողությունը ներկայումս շարունակում է մնալ ցածր մակարդակի վրա և բնութագրվում է տարածքային զգալի անհամաչափություններով: Այսպես, հանրապետության քաղաքային բնակավայրերի շուրջ կեսի ջրամատակարարման տևողությունը ներկայումս ցածր է օրական 12 ժամից, իսկ 6 քաղաքներում չի գերազանցում 4 ժամը (տե՛ս Գծանկար 8.2): Չնայած գյուղական բնակավայրերի ջրամատակարարման շարունակականությունը միջինում նույնիսկ գերազանցում է քաղաքային բնակավայրերինը, այնուհանդերձ, անհամաչափությունները ավելի զգալի են՝ նկատի ունենալով կենտրոնացված ջրամատակարարման ավելի ցածր ընդգրկվածության աստիճանը և որոշ

գյուղերում բերովի ջրից կախվածությունը: Լուրջ հիմնախնդիր է նաև գյուղական բնակավայրերում ջրամատակարարման վերաբերյալ ամբողջական և համակարգված տեղեկատվության հավաքագրումը՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ հանրապետության շուրջ 560 գյուղ չեն սպասարկվում մասնագիտական կազմակերպությունների կողմից:

Գծանկար 8.2. Ջրամատակարարման միջին օրական տևողությունը ՀՀ քաղաքներում 2007թ.



Աղբյուրը՝ ՀՀ տարածքային կառավարման նախարարության ջրային տնտեսության պետական կոմիտե:


357. Խմելու ջրի համակարգի հեռանկարային զարգացման հիմնախնդիրներից է մնում ջրամատակարարման ծառայությունների ինքնաձախսաձածակման մակարդակը: Ներկայումս, խմելու ջրի և ջրահեռացման սակագները լրիվ ինքնաձախսաձածակվող չեն, իսկ բացի Երևանից՝ չեն ապահովում ծառայությունների մատուցման նույնիսկ ընթացիկ ձախսաձակումը: Նման իրավիճակը զգալի խոչընդոտ է համակարգի կառավարման բարեփոխումների հետագա խորացման ճանապարհին և գործնականում բացառում է մասնավոր ներդրումների ներգրավումը: Գրանով հանդերձ, ընդհանուր առմամբ, խմելու ջրի մատակարարման համակարգի հեռանկարային զարգացումը ամբողջովին կախման մեջ է դնում պետական բյուջեի հնարավորություններից և պետական ծախսերի արդյունավետությունից, որը, ինչպես ցույց է տալիս միջազգային փորձը, շատ հազվադեպ է հանգեցնում ծառայությունների մատուցման որակի և արդյունավետության ցուցանիշների բարելավմանը:

358. Անկասկած, ինքնաձախսաձակվող սակագներին չանցնելու հիմնական դրոշմապատճառը մնում է խմելու ջրի մատչելիությունը, որը, չնայած վերջին տարիներին արձանագրված որոշակի դրական տեղաշարժերին, դեռևս շարունակում է մնալ ցածր, հատկապես առավել ցածր եկամուտներ ունեցող ընտանիքների համար՝ նույնիսկ ներկայիս ձևավորված սակագների պայմաններում:

359. Խմելու ջրի մատչելիության աստիճանի գնահատման հիմնական ցուցանիշը սպառողական ծախսերում խմելու ջրի հաշվարկային նվազագույն ծախսերի տեսակարար կշիռն է: Ընդ որում, խմելու ջրի հաշվարկային նվազագույն ծախսերի հաշվարկման՝ միջազգայնորեն ճանաչված միասնական ստանդարտների բացակայության պայմաններում, առավել հաճախ օգտագործում են ԱՀԿ կողմից առաջարկվող ջրամատակարարման

նվազագույն ստանդարտները, որոնք ներկայումս սահմանված են մեկ շնչի հաշվով օրական 50 լիտր¹³⁸: Ընդունված է, որ մատչելի սակագների դեպքում մեկ շնչի կամ մեկ տնային տնտեսության հաշվով խմելու ջրի հաշվարկային նվազագույն ծախսերը չպետք է գերազանցեն սպառողական ծախսերի կամ տնօրինվող եկամտի 3%-ը¹³⁹: Հիմք ընդունելով այս սահմանաչափերը, 2006 թվականի համար կատարված հաշվարկների համաձայն, միջին հանրապետական մատչելի սակագինը միջին սպառման պայմաններում կազմում է ամսական 465 դրամ/խմ, որը զգալիորեն գերազանցում է գործող 140 դրամ/խմ միջին հանրապետական սակագինը: Միաժամանակ, նույն հաշվարկով՝ սպառման առաջին դեցիլի համար խմելու ջրի մատչելի սակագինը կազմում է 146 դրամ/խմ, որը գրեթե հավասար է գործող միջին սակագինին: Ներկայացված են մատչելի սակագների մակարդակի կանխատեսումները՝ հիմք ընդունելով սպառման դեցիլների ԿԶԾ-ի կանխատեսումները, որոնք վկայում են, որ միջին ժամկետում հնարավոր է լինելու զգալիորեն ավելացնել ջրամատակարարման ինքնաձախսաձածկման մակարդակը՝ առանց վտանգելու խմելու ջրի մատչելիությունը առավել անապահով ընտանիքների համար:

Գծանկար 8.3. Խմելու ջրի մատչելի և ծախսաձածկող սակագների կանխատեսումը 2007-2021թթ.




360. Ինչ վերաբերում է Երևանին, ապա սկսած 2006 թ., 10 տարով սակագները սահմանվել են՝ համաձայն վարձակալական պայմանագրի, ըստ որի՝ առաջիկայում մայրաքաղաքում ջրի սակագների մատչելիությունը հետզհետե բարելավվելու է՝ պայմանավորված ինչպես բնակչության եկամուտների սպասվող աճով, այնպես էլ սակագների նվազմամբ:

¹³⁸ Նման մոտեցում է որդեգրված համաձայն ՄԱԿ-ի, Տնտեսական և սոցիալական խորհրդի Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների հանձնաժողովի կողմից ջրի իրավունքի վերաբերյալ ընդունված : Պետք է նշել, որ ներկայումս հանրապետությունում ջրաչափ տեղադրած բաժանորդների միջին սպառումը մեկ շնչի հաշվով օրական կազմում է 90-100 լիտր՝ շուրջօրյա ջրամատակարարման պայմաններում, որը կազմում է նախկինում ՀՀ-ում կիրառվող նորմատիվային ջրամատակարարման շուրջ կեսը:

¹³⁹

Պժանկար 8.4. Երևան քաղաքում խմելու ջրի մատչելիության աստիճանի կանխատեսվող մակարդակները՝ ըստ միջին սպառման և սպառման 1-ին և 2-րդ դեցիլների



361. Նկատի ունենալով, որ առնվազն միջին ժամկետ հեռանկարում ջրի մատչելի սակագները չեն փոխհատուցելու համակարգի պահանջվող կապիտալ ծախսերը, բնագավառը կմնա պետական ներդրումային գերակայությունների շարքում ԿԶԾ-ի իրականացման ողջ ժամանակաշրջանում: Նախատեսվում է, որ պետական ներդրումները միջին ժամկետ հեռանկարում հիմնականում կֆինանսավորվեն երկկողմ և բազմակողմ դոնորական աջակցության շրջանակներում երկրին տրամադրվող արտոնյալ վարկերի և շնորհների հաշվին: Ընդհանուր առմամբ, պետական ներդրումների մակարդակը նախատեսվում է հասցնել և պահպանել ՀՆԱ-ի 0.3 տոկոսի շրջանակներում:

362. Միաժամանակ, նկատի ունենալով բնագավառի պահանջների համեմատ պետական միջոցների սահմանափակությունը, ինչպես նաև այն հանգամանքը, որ աստիճանաբար նվազելու են Հայաստանին տրամադրվող արտոնյալ վարկերի ծավալները, անհրաժեշտ է լինելու տեսանելի ապագայում ապահովել ոլորտի գրավչությունը մասնավոր ներդրողների համար: Այս նպատակով Կառավարությունը կշարունակի և կխորացնի բնագավառում իրականացվող կառավարման բարեփոխումները՝ համակարգի կառավարման ապապետականացման գործընթացների շարունակման և ընդլայնման ճանապարհով:

363. Խմելու ջրի համակարգերի հետագա բարեփոխումները նպատակ են հետապնդելու բարձրացնելու այդ համակարգերի շահագործման հուսալիությունը և արդյունավետությունը, ինչպես նաև կրճատելու ջրի կորուստները և բարելավելու ջրամատակարարման ու ջրահեռացման ծառայությունների որակը:

364. Կարևորելով Հայաստանի ամբողջ տարածքում անվտանգ խմելու ջրի մատակարարման հասանելիության ապահովումը՝ կնշակվի բնակավայրերի ջրամատակարարման ներդրումային ծրագիր, և պետական ներդրումները առաջնահերթ կողովվեն ծրագրով նախանշված խնդիրների լուծմանը:

365. Ծրագրի՝ խմելու ջրի համակարգի հիմնական արդյունքային ցուցանիշները և պետական ներդրումների ծրագրվող մակարդակները ներկայացված են Աղյուսակ 8.2-ում:

Աղյուսակ 8.2. Խմելու ջրի համակարգի հիմնական նպատակային ցուցանիշները

		Բազային	2012	2015	2018	2021
Բարեփոխումների ինդեքսը	ՎՋԵԲ-ի կողմից հրապարակվող ցուցանիշներ (2.33 (2007)	2.67	3.33	3.67	4.00
Ջրամատակարարման շարունակականության միջին հանրապետական ցուցանիշ	Ժամ/օր	12 (2006)	16	20	22	22
Պետական ներդրումների մակարդակ, տոկոս՝ ՀՆԱ-ի նկատմամբ	Տարեկան միջին՝ նախորդ երեք տարիների համար	0.25% (2007)	0.4%	0.4%	0.3%	0.3%

8.2. Ոռոգման ջուր

366. Հայաստանի գյուղատնտեսական արտադրանքի գերակշիռ բաժինը շարունակում է արտադրվել գերփոքր և փոքր 300 հազարից ավելի գյուղացիական տնտեսությունների կողմից, որոնցից շուրջ կեսի եկամուտների մակարդակը մեծապես պայմանավորված է ոռոգման ջրի առկայությամբ, հուսալիությամբ և մատչելիությամբ: Ոռոգման համակարգերի կառուցվածքային և կառավարման բարեփոխումները, մասնակցային կառավարման ներդրումը և հզորացումը վերջին տարիներին զգալիորեն նպաստել են ոռոգման ջրի մատակարարման ցուցանիշների բարելավմանը: Ինչպես վկայում են վերջին ուսումնասիրությունները, էապես նվազել է ոռոգման ջրի բացակայության պատճառով չոռոգվող տարածքների մասնաբաժինը, կրճատվել է այն գյուղացիական տնտեսությունների մասնաբաժինը, որոնց կարծիքով ոռոգման ջրի մատակարարման հուսալիության խնդիրն է հիմնական խոչընդոտը:

367. Այդուհանդերձ, ոռոգման համակարգերի ֆիզիկական մաշվածության, ոռոգման ջրի մատակարարման բարձր էներգատարության և կառավարման ցածր արդյունավետության պայմաններում ներկայումս ոռոգվում է ոռոգման համար պիտանի հողերի միայն 70 տոկոսը: Մեծամասամբ նույն պատճառներով, ինչպես նաև ցածր եկամտաբերությամբ մշակաբույսերի դեռևս զգալի մասնաբաժնի պարագայում, ոռոգման ծախսաձածկվող սակագների կիրառումը գյուղացիական շատ տնտեսությունների համար գյուղատնտեսությամբ զբաղվելը կարող է դարձնել ոչ եկամտաբեր:

368. Նկատի ունենալով ոռոգման ջրի մատչելիության ուղղակի կախվածությունը գյուղական բնակչության աղքատության մակարդակից՝ 2006-2007 թթ. վերանայվել են ԱՀՌԾ-ով նախատեսվող ոռոգման ջրի ծախսաձածկման մակարդակը սպահովող սակագներին անցման ժամանակացույցը և դրան համապատասխան՝ սուբսիդավորման ծավալները: Ծախսաձածկման մակարդակի հետզհետե ավելացման նոր ժամանակացույցը համահունչ է նաև ՀՄԾ թիրախային ցուցանիշներին և նախատեսում է 2011թ. հասնել լրիվ ընթացիկ ծախսաձածկման 72 տոկոսին: Միաժամանակ, նպատակ ունենալով աջակցել ՋՕԸ-ների կայացմանը և բարձրացնել պետական ծախսերի արդյունավետությունը՝ սուբսիդավորման ծախսային մոտեցումից անցում է կատարվել արդյունքի հիման վրա պետական դրամաշնորհային համակարգի: Նոր համակարգը ՋՕԸ-ներին խրախուսում է նաև ավելի բարձր սակագներ սահմանել, ինչպես նաև կիրառել բազմաստիճան սակագների համակարգ:

369. Ոռոգման համակարգի հետագա բարեփոխումները նպատկաուղղված են լինելու ձևավորված մասնակցային կառավարման խորացմանը, ընդհուպ մինչև ամբողջ համակարգի ապապետականացումը, որը կկատարվի ՋՕԸ-ների կարողությունների ուժեղացմանը, դրանց կողմից համապատասխան ֆեդերացիաների ստեղծմանը և ծախսաձեռնարկային մակարդակի ավելացմանը զուգահեռ: Միաժամանակ, ընթացիկ պակասուրդի փակման նպատակով պետական աջակցությունը կշարունակվի մինչև 2018 թվականը և կտրամադրվի պետական դրամաշնորհների հաստատված ընթացակարգով: Դրամաշնորհային ծրագրի ծավալները կհաստատվեն ՄԺԾԾ շրջանակներում՝ ելնելով ԿԶԾ-ով սահմանված ծախսաձեռնարկային ավելացման արդյունքային ցուցանիշներից:

370. Ոռոգման համակարգերի վերականգնման և արդիականացման նպատակով պետական ներդրումները, ներառյալ ՀՄԾ նախանշված ներդրումները, ԿԶԾ-ի ամբողջ ժամանակահատվածում կկազմեն տարեկան ՀՆԱ-ի 0.2 տոկոսը, իսկ պետական բյուջեի սեփական միջոցներից ֆինանսավորվող ներդրումային ծրագրերի ընտրությունը կկատարվի՝ ելնելով ներդրումների տնտեսական արդյունավետությունից:

371. Ծրագրի՝ ոռոգման համակարգի հիմնական արդյունքային ցուցանիշները և պետական ներդրումների ծրագրվող մակարդակները ներկայացված են Աղյուսակ 8.3-ում:

Աղյուսակ 8.3. Ոռոգման համակարգի հիմնական նպատակային ցուցանիշները

		Բազային	2012	2015	2018	2021
Բարեփոխումների ինդեքսը	ՎԶԵԲ-ի կողմից հրապարակվող ցուցանիշներ (2.33 (2007)	2.67	3.00	3.33	4.00
Ոռոգելի հողատարածքներ	հազ. հա	123 (2006)	160	180	180	180
Ընթացիկ ծախսաձեռնարկային մակարդակը	տոկոս	40% (2006)	75%	85%	100%	120%
Պետական ներդրումների մակարդակ, տոկոս՝ ՀՆԱ-ի նկատմամբ	Տարեկան միջին՝ նախորդ տարիների համար	0.05% (2007)	0.2%	0.2%	0.2%	0.2%

8.3. Տրանսպորտ

372. Տրանսպորտային համակարգի զարգացումը և արդյունավետության բարձրացումը դիտվում է որպես տնտեսական աճի բարձր տեմպերի ապահովման, սոցիալական ծառայությունների հասանելիության աստիճանի և արդյունավետության ավելացման, աշխատուժի շարժունության աստիճանի մեծացման, ինչպես նաև տարածքային անհամաչափությունների նվազեցման նախապայման:

373. Մի շարք օբյեկտիվ պատճառներով տրանսպորտային ծառայությունների կառուցվածքը վերջին տարիներին նկատելիորեն փոփոխվել է՝ հոգուտ ավտոմոբիլային տրանսպորտի: Ներկայումս տրանսպորտի այս տեսակին բաժին է ընկնում բեռնափոխադրումների շուրջ 59 տոկոսը և ուղևորափոխադրումների շուրջ 90 տոկոսը: Նման պայմաններում հանրապետության ճանապարհային ցանցի վիճակը զգալիորեն կանխորոշում է տրանսպորտային ծախսերի մակարդակը, ընդհանուր առմամբ, ամբողջ տնտեսության համար: Այդ առումով, ԿԶԾ-ի շրջանակներում նախատեսվում են մեծածավալ ներդրումներ՝ ուղղված հանրապետության ճանապարհային ցանցի բարելավմանը՝

առաջնահերթությունը տալով ճանապարհային ցանցի առավել ինտենսիվ հատվածներում կատարվելիք ներդրումներին:

374. Միաժամանակ, կարևորելով ներհանրապետական ավտոմոբիլային հաղորդակցությունների դերը սոցիալական ծառայությունների հասանելիության, գյուղատնտեսության և զբոսաշրջության զարգացման, աշխատուժի շարժունակության ավելացման, ինչպես նաև տնտեսական ու սոցիալական տարածքային անհամաչափությունների մեղմման գործում, նախատեսվում է էականորեն ավելացնել տեղական նշանակության ճանապարհներին ուղղվող պետական աջակցության ծավալները: Ներդրումային գերակայություն են համարվելու հանրապետության բոլոր բնակավայրերը մարզկենտրոններին առնվազն մեկ բավարար ճանապարհային երթուղով միացնող ճանապարհային հատվածները և տրանսպորտային օբյեկտները, ինչպես նաև զբոսաշրջության համար գրավիչ երթուղիները, որոնց անվանական ցանկը և ժամանակային գերակայությունները կհաստատվեն ներհանրապետական ավտոմոբիլային ճանապարհների հեռանկարային զարգացման ծրագրով:

375. Նպատակ ունենալով կանխել ճանապարհային ցանցի արագացված մաշվածությունը և ապահովել տրանսպորտային փոխադրումների ավելի անվտանգ, արագ և դյուրին իրականացումը՝ կրնդայնվեն ավտոմոբիլային ճանապարհների ընթացիկ պահպանմանը և շահագործմանը ուղղվող պետական միջոցների ծավալները և կբարձրացվի դրանց ծախսման արդյունավետությունը:

376. Տրանսպորտային համակարգի համաչափ և երկրի կայուն զարգացման համար առավել օպտիմալ տրանսպորտային փոխադրումների կառուցվածքի ձևավորման նպատակով նախատեսվում է շարունակել և խորացնել կառավարման բարեփոխումները երկաթուղային և օդային տրանսպորտի բնագավառներում:

377. Ծրագրի՝ տրանսպորտի համակարգի հիմնական արդյունքային ցուցանիշները և պետական ծախսերի ծրագրվող մակարդակները ներկայացված են Աղյուսակ 8.4-ում:

Աղյուսակ 8.4. Տրանսպորտի համակարգի հիմնական նպատակային ցուցանիշները

Ցուցանիշներ		Բազային	2012	2015	2018	2021
Ճանապարհային տնտեսություն						
Բարեփոխումների ինդեքսը	ՎՋԵԲ-ի կողմից հրապարակվող ցուցանիշներ	2.33 (2007)	3.00	3.33	4.00	4.00
Մարզկենտրոնների հետ առնվազն մեկ՝ բավարար գնահատված ճանապարհ ունեցող բնակավայրերի մասնաբաժինը բնակավայրերի ընդհանուր թվում	տոկոս	3%	20%	40%	60%	80%
Բավարար պահպանության մակարդակով ճանապարհների երկարության հարաբերությունը այդ կարգի ճանապարհների ողջ երկարությանը	Միջպետական	90%	90%	90%	90%	90%
	Հանրապետական	40%	80%	90%	90%	90%
	Տեղական	10%	30%	50%	70%	90%
Պետական ներդրումների մակարդակ, տոկոս՝ ՀՆԱ-ի նկատմամբ	Տարեկան միջին՝ նախորդ երեք տարիների համար	0.8% (2007)	1.0%	1.2%	1.5%	1.5%

8.4. Էներգետիկա

378. Անցած տարիների ընթացքում Հայաստանի էներգետիկան բարեփոխումների շատ դժվարին ճանապարհ է անցել: Ներկայումս էներգահամակարգը ամբողջովին բավարարում է էլեկտրաէներգետիկայի ներքին շուկայի պահանջարկը և պահպանում է էլեկտրաէներգիայի արտահանման որոշակի ներուժ:

379. Էլեկտրաէներգիայի բաշխումը և վաճառքն իրականացվում է մասնավոր ընկերության կողմից, իսկ արտադրությունը՝ 5 ինքնուրույն խոշոր արտադրողների, մեկ հողմաէլեկտրակայանի և բազմաթիվ մասնավոր փոքր ՀԷԿ-երի կողմից: 2007 թ. էլեկտրաէներգիայի արտադրանքը կազմել է 5.897 մլրդ կՎտժ, որից 31.4%-ը արտադրվել է ՀԷԿ-երի, 25.3%-ը՝ ՋԷԿ-երի, իսկ 43.3%-ը՝ ՀԱԷԿ-ի կողմից:

380. Գազամատակարարման համակարգով 2007թ-ին Ռուսաստանի Դաշնությունից Հայաստան է ներկրվել 2055,0 մլն խմ ծավալով բնական գազ: Բաժանորդների թիվը տարվա վերջին կազմել է 519 650, որից բնակչությունը՝ 514 200:

381. Համակարգի հիմնական միջոցների վերագնահատման ընթացքում կատարված աշխատանքների արդյունքում բացահայտվել է, որ ժամանակի հրատապ պահանջ են դարձել արտադրող հզորությունների սերնդափոխության և արդիականացման հետ կապված հարցերը: Սարքավորումների սերնդափոխության և արդիականացման անհրաժեշտություն կա էլեկտրաէներգիայի ու բնական գազի հաղորդման և բաշխման ցանցերում, ինչպես նաև բնական գազի ստորգետնյա պահեստարանում: ՀՀ էներգետիկայի բնագավառի հետ կապված բարդություններից կարելի է նշել նաև արդյունաբերական նշանակություն ունեցող տեղական հանածո վառելիքային պաշարների բացակայությունը, Հայաստանում էներգետիկ հզորության զգալի մասի կախվածությունը մեկ երկրից կատարվող մատակարարումներից և տրանսպորտային ներկա համակարգի սահմանափակ հնարավորություններից:

382. Կառավարությունն արդեն իսկ որոշակի քայլեր է իրականացրել այս իրավիճակը բարելավելու ուղղությամբ.

§ Վերջին տարիներին էներգետիկայի բնագավառում շարունակվել և խորացվել են կառուցվածքային բարեփոխումները: Մասնավորեցվել են գազամատակարարման համակարգը և բաշխիչ էլեկտրացանցը, ՀԷԿ-երի Սևան-Հրազդանյան կասկադը, բոլոր փոքր ՀԷԿ-երը, Հրազդանի ՋԷԿ-ը («գույք՝ պարտքի դիմաց» սկզբունքով հանձնվել է Ռուսաստանի Դաշնությանը): Ստեղծվել են էլեկտրաէներգետիկական շուկայի սպասարկման կառույցները՝ «Էլեկտրաէներգետիկական համակարգի օպերատոր» և «Հաշվարկային կենտրոն» ընկերությունները, ներդրվել է շուկայի հետագա ազատականացմանը նպաստող՝ էլեկտրաէներգիայի մեծածախ առուվաճառքի արտադրող-բաշխող ուղիղ պայմանագրերի համակարգը: Ատոմային էներգետիկայի հեռանկարային զարգացման նպատակներով «Էներգետիկայի մասին» ՀՀ օրենքում կատարվել է փոփոխություն, համաձայն որի՝ վերացվել է ատոմային էներգետիկայի նկատմամբ պետական մենաշնորհը:

§ Կառուցվածքային բարեփոխումների արդյունքում առավելագույնի է հասել բաժանորդներից վարձավճարների գանձման մակարդակը. սպառողներն այժմ ամբողջությամբ կատարում են սպառած էլեկտրաէներգիայի և բնական գազի դիմաց վճարումները: ՀՀ էներգահամակարգի պետական ընկերությունների ֆինանսական հոսքերի ընթացիկ հաշվեկշիռը, սկսած 2003 թվականից, եղել է դրական:

§ Ավարտվել են 220 կՎ լարման հաղորդող ցանցի ենթակայանների գերակշռող մասի արդիականացման աշխատանքները՝ գերմանական KfW բանկի և

Համաշխարհային բանկի տրամադրած վարկային միջոցներով: Կառուցվել է Իրան-Հայաստան էլեկտրահաղորդման երկրորդ գիծը: ԱՄՆ միջազգային զարգացման գործակալության տրամադրած տեխնիկական աջակցությամբ ներդրվել է էլեկտրաէներգիայի հաշվառման և հսկման ավտոմատացված համակարգը:

- § Եվրոպական Միության Ինոգեյթ ծրագրի միջոցներով կառուցվել է Կողբի գազաչափիչ հանգույցը և որոշ սարքավորումների արդիականացման աշխատանքներ են իրականացվել Աբովյանի ստորգետնյա գազապահեստարանում:
- § Դոնորների տեխնիկական և ֆինանսական աջակցությամբ իրականացվել են ՀԱԷԿ-ի անվտանգության բարձրացմանն ուղղված՝ շուրջ 90 մլն ԱՄՆ դոլար արժողությամբ միջոցառումներ, և հետագայում նման միջոցառումները շարունակվելու են:
- § ՀՀ և Ճապոնիայի կառավարությունների միջև 2005 թ. ստորագրված վարկային պայմանագրի համաձայն՝ Երևանի ՋԷԿ-ի տարածքում սկսվել են համակցված ցիկլով 242 ՄՎտ հզորությամբ էներգաբլոկի կառուցման աշխատանքները:
- § Ավարտվել է Իրան-Հայաստան գազամուղի առաջին փուլի՝ Մեղրի-Քաջարան հատվածի շինարարությունը, և շարունակվում են Քաջարան-Արարատ հատվածի շինարարական աշխատանքները:
- § Սկսվել են «Վերականգնվող էներգետիկայի և էներգախնայողության հիմնադրամի» և գերմանական KfW բանկի դրամաշնորհի հաշվին փոքր ՀԷԿ-երի վերականգնման աշխատանքները: Վերջին հինգ տարիներին կրկնապատկվել է մասնավոր փոքր ՀԷԿ-երի արտադրանքը, որոնց ներկայիս գումարային հզորությունը կազմում է շուրջ 58 ՄՎտ: Իրանի Իսլամական Հանրապետության տրամադրած դրամաշնորհի հաշվին Պուշկինի լեռնանցքում կառուցվել է 2.6 ՄՎտ հզորությամբ առաջին հողմաէլեկտրակայանը:

383. Համակարգի հեռանկարային զարգացման, էլեկտրաէներգիայի աճող ներքին պահանջարկի բավարարման, Հայաստանի էներգետիկ անվտանգության և անկախության անհրաժեշտ մակարդակի ապահովման խնդրում կարևորվում են էներգետիկայի բնագավառի զարգացման ռազմավարության հետևյալ ուղղությունները.

- § Սեփական աղբյուրների, վերականգնվող էներգառեսուրսների առավելագույն օգտագործում.
- § Ատոմային էներգետիկայի հետագա զարգացում.
- § Էներգառեսուրսների մատակարարման տարատեսակացում և տարածաշրջանային ինտեգրում.
- § Էներգաարդյունավետության խթանում և խրախուսում՝ էներգետիկ ռեսուրսներ օգտագործող բոլոր բնագավառներում:

384. Գեկավարվելով էներգետիկ անվտանգության ապահովման միջազգայնորեն ընդունված սկզբունքներով և հիմնվելով «Հայաստանի էլեկտրաէներգետիկական համակարգի նվազագույն ծախսերով զարգացման 2006 թ. ծրագրի» եզրակացությունների վրա, պետական քաղաքականությունը նպատակուղղված է լինելու պետական և մասնավոր ներդրումների համակցմամբ էլեկտրաէներգիայի արտադրական կարողությունների արդիականացմանը՝ առաջնահերթություն տալով.

§ Էլեկտրաէներգիայի արտադրության՝ սեփական վերականգնվող էներգիայի աղբյուրների ներուժի (հիդրո, հողմային, երկրաջերմային և արևային) հնարավոր առավելագույնն օգտագործմանը,

§ ԱԷԿ-ի նոր էներգաբլոկի կառուցմանը¹⁴⁰,

§ ներքին և արտաքին պահանջարկի մնացած մասի ապահովումը ջերմային, այդ թվում՝ համակցված պարբերաշրջանով աշխատող բլոկներով էլեկտրակայանների միջոցով:

385. Էներգառեսուրսների մատակարարման տարատեսակացման, էլեկտրաէներգետիկական համակարգի ընդհանուր հուսալիության ամրապնդման և տարածաշրջանային համագործակցության ուղղությամբ նախատեսվում է.

Իրան-Հայաստան գազատարի Քաջարան-Արարատ հատվածի կառուցման ավարտ, որը Հայաստանի համար կապահովի բնական գազի անհրաժեշտ ծրագրված քանակությունների ներմուծում:

Ստորգետնյա գազապահեստարանների ընդլայնում:

Սահմանային Արաքս գետի հիդրոպոտենցիալի յուրացման նպատակով հիդրոէլեկտրակայանի կառուցում:


Փոխանցող ցանցերում բարելավումների իրականացում, որը հանգուցային նշանակություն ունի էլեկտրաէներգետիկական համակարգի ընդհանուր հուսալիության ամրապնդման և տարածաշրջանային համագործակցության խթանման համար: Հայաստան-Իրան էլեկտրահաղորդման միջհամակարգային կապերի ուժեղացում՝ 400 կՎ լարման երրորդ օղային գծի կառուցմամբ, միջհամակարգային կապեր հանդիսացող՝ 400 կՎ լարման Հայաստան-Վրաստան նոր օղային գծի կառուցում և 220 կՎ լարման՝ Ղարս օղային գծի վերականգնում, ինչպես նաև նոր միջհամակարգային օղային գծերի կառուցման հնարավորությունների հետազոտում՝ տարածաշրջանային էլեկտրաէներգետիկական համակարգերի հետ ինտեգրումն ապահովելու համար:


Սիջազգային էներգամիավորումների հետ համատեղ աշխատանքի իրականացում (Անկախ պետությունների համագործակցություն, Սևծովյան տնտեսական համագործակցություն և այլն):

Էլեկտրաէներգիայի տարածաշրջանային շուկայի կազմակերպում:

386. Հայաստանի էներգետիկ անկախության, տնտեսության մրցունակության և բնակչության կենսամակարդակի բարձրացման տեսանկյունից հեռանկարային առումով գերակա ուղղություններից է լինելու էներգետիկ ռեսուրսներ օգտագործող բոլոր բնագավառներում էներգաարդյունավետության և էներգախնայողության մակարդակի նշանակալից ավելացումը¹⁴¹: Այդ նպատակով Կառավարությունը հետևողական

¹⁴⁰ ԱՄՆ միջազգային զարգացման գործակալության տեխնիկական օժանդակությամբ արդեն սկսվել են նոր առումային էներգաբլոկի կառուցման տեխնիկատնտեսական հիմնավորման և շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման մշակման աշխատանքները:

¹⁴¹ 



կիրականացնի 2007 թ. հաստատված Հայաստանի Հանրապետության
 Էներգախնայողության և վերականգնվող էներգետիկայի ազգային ծրագրով նախատեսված
 քաղաքականությունը:

387. Ծրագրի՝ էներգետիկայի համակարգի հիմնական արդյունքային ցուցանիշները և
 պետական ներդրումների ծրագրվող մակարդակները ներկայացված են Աղյուսակ 8.5-ում:

Աղյուսակ 8.5. Էներգետիկայի համակարգի հիմնական նպատակային ցուցանիշները

Ցուցանիշներ		Բազային	2012	2015	2018	2021
Բարեփոխումների ինդեքս	ՎՋԵԲ-ի կողմից հրապարակվող ցուցանիշներ (3.33 (2007)	4.00	4.00	4.00	4.33
Պետական ներդրումների մակարդակ, տոկոս՝ ՀՆԱ-ի նկատմամբ	Տարեկան միջին՝ նախորդ երեք տարիների համար	0.5% (2007)	0.3%	0.2%	0.2%	0.2%

Ստորագրված է 2012 թ. մարտի 14-ին Երևանում կայացված ՀՀ Կառավարության 2012 թ. ապրիլի 2-ին հաստատված «Երևանի էներգետիկայի համակարգի հիմնական նպատակային ցուցանիշները» կապակցությամբ:

9. Տարածքային զարգացում

388. Տարածքային զարգացման անհամաչափությունները Հայաստանում սկսել են խորանալ տնտեսական աճի արագացմանը զուգընթաց՝ 2000 թ-ից, և հիմնականում արտահայտվում են մայրաքաղաք Երևանի տնտեսական դերի և նշանակության աճով, որի արդյունքում կենսամակարդակի տարբերությունը Երևանի և Հայաստանի մարզերի միջև անընդհատ աճել է՝ վերջին տարիներին հասնելով մտահոգիչ չափերի:

389. Ինչպես ներկայացվել է սույն ծրագրի՝ նյութական աղքատության վերլուծությանը նվիրված բաժնում, տնտեսական զարգացման անհամաչափությունների խորացման հետ մեկտեղ, աղքատության մակարդակների տարածքային տարբերությունները 1999-2005 թթ. անընդհատ կրճատվել են¹⁴²: Այդուհանդերձ, տնտեսական զարգացման անհամաչափությունների հետագա չվերահսկվող աճը¹⁴³ խիստ անցանկալի է մի շարք պատճառներով: Մասնավորապես, անհամաչափ տարածքային զարգացումը խնդիրներ է առաջ բերում ինչպես երկրի ներքին կայունության առումով, այնպես էլ նպաստում է տնտեսապես թույլ զարգացած տարածաշրջաններից բնակչության անցանկալի արտահոսքին ու մայրաքաղաքում անվերահսկելի կենտրոնացմանը¹⁴⁴:

390. Աղյուսակ 9.1-ը վկայում է Երևանի շարունակաբար աճող և մարզերի աստիճանաբար նվազող տնտեսական դերի մասին: Երևանի տեսակարար կշիռը Հայաստանի ՀՆԱ-ում 1999 թ. 42.1 տոկոսից աճել է մինչև 58.4 տոկոս՝ 2006 թ.,¹⁴⁵ այն դեպքում, երբ Երևանի բնակչության տեսակարար կշիռը երկրի ընդհանուր բնակչության թվաքանակում, ըստ էության, մնացել է անփոփոխ՝ 34 տոկոսի սահմաններում:

¹⁴² Այդ միտումները, համաձայն ՏՏԿԱՀ վերջին հրապարակված տվյալների, շարունակվել են նաև 2006թ. (տե՛ս «Հայաստանի սոցիալական պատկերը և աղքատությունը», ՀՀ ԱՎԾ, Երևան, 2007 թ.):

¹⁴³ Մայրաքաղաքի և երկրի մյուս տարածաշրջանների միջև կենսամակարդակների էական և շարունակաբար աճող տարբերությունը բնորոշ է համարյա բոլոր անցումային և զարգացող երկրներին: Այդուհանդերձ, Հայաստանում այդ տարբերությունը ներկայումս ամենաբարձրերից մեկն է:

¹⁴⁴ Բնակչության անվերահսկելի կենտրոնացումը մայրաքաղաքներում ներկայումս հանդիսանում է զարգացող երկրների, հատկապես փոքր երկրների սոցիալական և տնտեսական զարգացման հիմնահարցերից մեկը:


¹⁴⁵ ՀՀ ԱՎԾ-ի կողմից տարածքային կտրվածքով ՀՆԱ-ի ցուցանիշներ չեն հաշվարկվում: ԿԶԾ-ի այս և մյուս բաժիններում ներկայացված տարածքային կտրվածքով ավելացված արժեքի և ՀՆԱ-ի գնահատականները ստացվել են փորձագետների կողմից («Ավագ Սոլյուշն» ընկերություն)՝ հիմք ընդունելով ՀՀ ԱՎԾ-ի կողմից հրապարակվող արդյունաբերության, գյուղատնտեսության, շինարարության, տրանսպորտի և կապի, առևտրի և ծառայությունների արտադրանքի տարածքային բաշխումը (Երևանի և մարզերի միջև) բնութագրող տվյալները: Ինչ վերաբերում է ՀՆԱ-ի խոշորացված բաժանմանը Երևանի, հանրապետության այլ քաղաքների և գյուղական բնակավայրերի միջև, ապա դրանք նույնպես փորձագիտական գնահատականներ են, որոնք հաշվարկվել են՝ ըստ մարզերի ՀՆԱ-ի գնահատականների հիման վրա: Հաշվարկի ժամանակ արվել են հետևյալ ենթադրությունները. մարզային արդյունաբերական արտադրությունը ամբողջապես կենտրոնացված է քաղաքային բնակավայրերում, գյուղատնտեսական արտադրության ծավալները հանրապետության այլ քաղաքներում հաշվարկվում են՝ ելնելով Երևանում մեկ շնչի հաշվով հաշվարկվող գյուղատնտեսական արտադրության ծավալներից, շինարարության, առևտրի, ծառայությունների (ներառյալ՝ առողջապահական ծառայությունները), տրանսպորտի և կապի մարզային ծավալները քաղաքային և գյուղական բնակավայրերի միջև բաժանվում են ըստ քաղաքային և գյուղական բնակչության հարաբերակցության, մասնագիտական և արտադրողական կրթության ծառայությունները տրամադրվում են հիմնականում քաղաքային բնակավայրերում, իսկ կրթական այլ ծառայությունները բաժանվում են ըստ բնակչության թվաքանակի, և վերջապես՝ անուղղակի հարկերի ծավալները բաղադրվել են ոչ գյուղատնտեսական ավելացված արժեքի ծավալների հարաբերակցությանը համապատասխան:

Աղյուսակ 9.1. Համախառն ներքին արդյունքը Հայաստանում՝ տարածքային կտրվածքով, 1999-2006թթ. (մլրդ դրամ՝ ընթացիկ գներով)

Ցուցանիշներ	1999	2000	2001	2002	2003	2004	2005	2006
Հայաստան	987.4	1031.3	1175.9	1362.5	1624.6	1907.9	2242.9	2656.2
Երևան	416.0	477.2	537.4	648.2	820.2	979.7	1249.8	1550.8
Արագածոտն	41.6	28.5	34.2	44.5	46.6	50.5	53.4	68.0
Արարատ	72.7	73.0	70.4	93.5	101.0	116.2	119.9	132.4
Արմավիր	97.0	87.8	81.2	94.6	94.3	114.6	122.7	126.7
Գեղարքունիք	58.1	57.0	66.9	74.8	92.9	101.3	99.8	114.0
Կոտայք	86.6	87.8	108.9	105.1	127.6	125.9	144.0	149.2
Լոռի	62.8	64.0	72.3	79.7	90.7	108.2	110.3	139.1
Շիրակ	64.2	63.6	67.9	84.0	93.4	90.4	90.3	100.4
Սյունիք	45.7	53.7	75.4	73.3	90.7	142.8	172.7	186.6
Տավուշ	26.7	23.6	31.7	39.9	38.7	45.1	45.3	51.5
Վայոց ձոր	15.5	14.5	29.5	23.6	27.5	33.3	34.4	37.7
Ընդամենը (առանց Երևանի)	571.5	554.2	638.5	714.3	804.4	928.2	993.1	1105.4
Այլ քաղաքներ	230.5	240.8	253.1	289.2	335.3	383.7	432.8	469.1
Գյուղական բնակավայրեր	341.0	313.4	385.5	425.1	469.1	544.5	560.3	636.2

Աղբյուրը՝ ՀՀ ԱՎԾ և փորձագիտական գնահատականներ:

Գծանկար 9.1. Երևանի մասնաբաժինը Հայաստանի ՀՆԱ-ում 1999-2006 թթ. (տոկոս՝ ընդամենի նկատմամբ)




Աղբյուրը՝ ՀՀ ԱՎԾ և փորձագիտական գնահատումներ:

391. Դրա հիմնական պատճառներն են՝ վերջին տարիներին ամենաարագ աճող ճյուղի՝ շինարարության ծավալների շարունակական կենտրոնացումը Երևանում՝ դրանք 2006թ. կազմել են շինարարության ծավալների 82.5%-ը՝ 1999թ. 47.5%-ի փոխարեն: Երկրորդ ամենաարագ աճը ունեցող ճյուղի՝ առևտրի կենտրոնացումը Երևանում նույնպես ավելացել է՝ 2006 թ. կազմելով 86%՝ 1999թ. 80%-ի փոխարեն: Աճել է նաև այլ ճյուղերի տեսակարար կշիռը՝ 2006 թ. հասնելով 64.8%-ի՝ 1999 թ. 51.7%-ի փոխարեն: Այդ և մի շարք այլ գործոնների ազդեցության արդյունքում, տնտեսական աճի միջին արագությունը Երևանում 2000-2006թթ. զգալիորեն ավելի բարձր է եղել, քան միջինը Հայաստանում՝ այլ մարզերի միջինացված ցուցանիշը գերազանցելով գրեթե երեք անգամ: Այսպես, 2000-2006 թթ. տնտեսական աճի միջին տարեկան տեմպը Երևանում կազմել է 16.8%՝ նույն ժամանակահատվածում երկրում արձանագրված միջին տարեկան 11.5% տնտեսական աճի պարագայում: Միևնույն ժամանակ, Երևանից դուրս տնտեսական զարգացման միջին տեմպը 2000-2006 թթ. կազմել է 6.3%, այդ թվում՝ հանրապետության այլ քաղաքներում՝ 7.6%, իսկ գյուղական բնակավայրերում՝ 5.4%: Ինչ վերաբերում է մարզային աճի տեմպերին, ապա միակ մարզը, որտեղ աճի տեմպերը գերազանցել են միջին հանրապետական ցուցանիշները՝


Մյունիքի մարզն է (միջին տարեկան 18.3% աճ)՝ հիմնականում պայմանավորված հանքաարդյունաբերության արագ զարգացմամբ:

Գծանկար 9.2. Տնտեսական աճի միջին տարեկան տեմպերը Հայաստանում 1999-2006 թթ.՝ ըստ տարածքների



Աղբյուրը՝ ՀՀ ԱՎԾ և փորձագիտական գնահատումներ:

Գծանկար 9.3. Երևանի մասնաբաժինը հանրապետությունում ստեղծված ավելացված արժեքի կառուցվածքում 1999-2006 թթ., տոկոս



Աղբյուրը՝ ՀՀ ԱՎԾ և փորձագիտական գնահատումներ:

Աղյուսակ 9.2. Մեկ շնչի հաշվով ՀՆԱ-ն Երևանում, Հայաստանի մարզերում, գյուղական և քաղաքային բնակավայրերում 1999-2006թթ.

Ցուցանիշներ	1999	2000	2001	2002	2003	2004	2005	2006
	<i>հազար դրամ՝ ընթացիկ գներով</i>							
Երևան	376.7	432.1	486.6	587.5	744.3	889.1	1,134.1	1,404.9
	<i>տոկոս՝ Երևանի ցուցանիշի նկատմամբ</i>							
Ընդամենը Հայաստան	81.6	74.3	75.2	72.2	68.0	66.8	61.5	58.7
Ընդամենը՝ առանց Երևանի	72.0	60.8	62.2	57.7	51.3	49.4	41.4	37.1
<i>Այլ քաղաքներ</i>	<i>63.0</i>	<i>57.3</i>	<i>53.5</i>	<i>51.2</i>	<i>46.9</i>	<i>45.0</i>	<i>39.8</i>	<i>34.8</i>
<i>Գյուղական բնակավայրեր</i>	<i>79.6</i>	<i>63.8</i>	<i>69.7</i>	<i>63.2</i>	<i>54.9</i>	<i>53.1</i>	<i>42.7</i>	<i>39.3</i>
Արագածոտն	79.8	47.6	50.7	54.7	45.1	40.8	33.8	34.7
Արարատ	71.0	62.2	53.2	58.5	49.8	47.8	38.6	34.3
Արմավիր	93.2	73.5	60.4	58.1	45.7	46.3	38.7	32.2
Գեղարքունիք	64.9	55.5	57.8	53.5	52.3	47.7	36.8	33.8
Լոռի	58.2	51.8	51.9	47.6	42.9	42.9	34.3	34.9
Նոտայք	84.3	74.6	82.1	65.7	62.8	51.6	46.1	38.5
Շիրակ	60.2	52.0	49.3	50.6	44.5	36.1	28.3	25.4
Սյունիք	79.5	81.5	101.4	81.7	79.6	104.9	99.5	86.7
Վայոց ձոր	73.3	60.1	108.3	71.9	66.1	67.0	54.3	48.1
Տավուշ	54.3	41.9	49.4	52.3	40.2	38.0	29.8	27.1

Աղբյուրը՝ ՀՀ ԱՎԾ և փորձագիտական գնահատումներ:


392. Նշված զարգացումների անմիջական արդյունք է հանդիսացել Երևանի և երկրի մարզերի, ինչպես նաև գյուղական բնակավայրերի և այլ քաղաքների միջև մեկ շնչի հաշվով ՀՆԱ-ի ցուցանիշներով չափվող կենսամակարդակների աստիճանաբար աճող խզումը: Եթե 1999 թ. մեկ շնչի հաշվով ՀՆԱ-ն գյուղական բնակավայրերում և այլ քաղաքներում կազմում էին Երևանում մեկ շնչի հաշվով ՀՆԱ-ի համապատասխանաբար 79.6 և 63 տոկոսը, ապա 2006 թ. այդ հարաբերակցությունները կազմել են համապատասխանաբար 39.3 և 34.8 տոկոս (տե՛ս Աղյուսակ 9.2): Ըստ մարզերի մեկ շնչի հաշվով ՀՆԱ-ի ցուցանիշների վերլուծությունները վկայում են, որ տնտեսական զարգացման մակարդակների տարբերության խորացման միտումը Երևանի և մարզերի միջև բնորոշ է եղել բոլոր մարզերին, բացառությամբ՝ Սյունիքի մարզի, որի զարգացման տեմպերը 1999-2006 թթ. գերազանցել են Երևանի համապատասխան ցուցանիշները: Ինչ վերաբերում է մնացած մարզերին, ապա այդ խզումը աստիճանաբար աճել է, իսկ երկու ամենաաղքատ՝ Շիրակի և Տավուշի մարզերի պարագայում խզումը 2006 թ. կազմել է համապատասխանաբար մոտ 4 և 3.7 անգամ, այն դեպքում, երբ 1999 թ. Շիրակի մարզում մեկ շնչի հաշվով ՀՆԱ-ն կազմել է Երևանի համապատասխան ցուցանիշի 60.2 տոկոսը, իսկ Տավուշում՝ 54.3 տոկոսը:

393. 1999-2006 թթ. ձևավորված տարածքային զարգացման միտումների՝ ԿԶԾ-ի գործողության ժամկետում շարունակության դեպքում (բազային սցենար) խզումը Երևանի և մարզերի, ինչպես նաև Երևանի և այլ քաղաքների ու գյուղական բնակավայրերի միջև էլ ավելի կխորանա՝ հանգեցնելով խիստ անցանկալի հետևանքների, էլ ավելի վտանգելով երկրի կայունությունը և խորացնելով անջրպետը մայրաքաղաքի և մնացած երկրի միջև (տե՛ս Գժանկար 9.4)¹⁴⁶: Համաձայն բազային սցենարի՝ տնտեսական կյանքի կենտրոնացումը Երևանում կշարունակվի ԿԶԾ-ի գործողության ողջ ժամկետում՝ 2012 թ. հասնելով ՀՆԱ 67, 2015 թ.՝ ՀՆԱ 69.6, 2018 թ.՝ ՀՆԱ 71.8 և 2021 թ.՝ ՀՆԱ 73.8 տոկոսի: Համապատասխանաբար կշարունակվի աճել մեկ շնչի հաշվով ՀՆԱ-ի ցուցանիշներով չափվող կենսամակարդակների

¹⁴⁶ Տարածքային զարգացման բազային սցենարը կառուցված է այն ենթադրության վրա, որ 2008-2021 թթ. Երևանի և Հայաստանի մարզերի տնտեսական աճի տեմպերի հարաբերակցությունը կպահպանվի 2000-2006 թթ. միջին մակարդակի վրա, այսինքն՝ միջին տարեկան կտրվածքով Երևանում մեկ տոկոս տնտեսական աճը զուգակցվում է Երևանից դուրս 0.551 տոկոս տնտեսական աճով:

տարբերությունը Երևանի և Հայաստանի այլ մարզերի միջև՝ 2012 թ. կազմելով մոտ 3.9, 2015 թ.՝ մոտ 4.4, 2018թ.՝ մոտ 4.9, իսկ 2021թ.՝ մոտ 5.4 անգամ:

Գծանկար 9.4. Հայաստանի տարածքային զարգացման բազային և ԿԶԾ-ի սցենարները 2006-2021 թթ.



394. Ի տարբերություն բազային սցենարի, ԿԶԾ-ի տարածքային զարգացման սցենարը նախատեսում է նպատակային տարածքային քաղաքականության իրականացում, որը բացակայում է բազային սցենարում, և որը ուղղված կլինի Երևանից դուրս տնտեսական աճի արագացման խրախուսմանը: Այդ քաղաքականության կիրառման արդյունքում 2008-2014թթ. ընթացքում նախատեսվում է մոտեցնել մարզերի զարգացման տեմպերը Երևանի զարգացման տեմպերին, իսկ 2015թ. ապահովել այնպիսի իրավիճակ, որի արդյունքում մարզային զարգացման տեմպերը Երևանի զարգացման տեմպերից ավելի բարձր կլինեն: Երևանի տեսակարար կշիռը երկրի ՀՆԱ-ում կշարունակի աճել մինչև 2014թ.՝ կազմելով 62%, իսկ 2015 թ. և հետագա տարիներին կսկսվի դանդաղ կրճատվել՝ 2018 թ. կազմելով 61.1%, 2021 թ.՝ 60.8%: Համապատասխանաբար կկայունանա և 2015 թ. կսկսի քայլ առ քայլ կրճատվել կենսամակարդակների տարբերությունը՝ 2014 թ. 3.12 անգամից մինչև 2.98 անգամ՝ 2021 թ.:

395. Վերջին տարիներին տնտեսական կյանքի՝ Երևանում կենտրոնացման հիմնական պատճառը ներդրումների շարունակական կենտրոնացումն է¹⁴⁷: 2001-2006 թթ. ներդրումների ծավալը Հայաստանում անվանական արտահայտությամբ աճել է միջին տարեկան 30.7 տոկոսով, Երևանում՝ 46.2 տոկոսով, Երևանից դուրս՝ 12.1 տոկոսով (կամ Երևանում մոտ 4 անգամ ավելի արագ, քան Երևանից դուրս), որի արդյունքում Երևանի տեսակարար կշիռը ընդհանուր պետական և մասնավոր ներդրումների մեջ աճել է 41.6 տոկոսից մինչև 72.8

¹⁴⁷ Ներկայումս Հայաստանի պաշտոնական վիճակագրությունը չի հրապարակում պետական և մասնավոր ներդրումների տարածքային բաշխմանը վերաբերող տեղեկատվություն: ԿԶԾ-ի նպատակների համար ներդրումների տարածքային բաշխման գնահատականները մշակվել են, հիմնվելով այն ենթադրության վրա, որ ներդրումների արդյունավետությունը տվյալ տարում միևնույն է Հայաստանի ամբողջ տարածքում, և դրանց տարածքային բաժանումը կատարվում է՝ ելնելով տվյալ տարածքի ՀՆԱ տարեկան հավելածի՝ ՀՆԱ ընդհանուր տարեկան հավելածի նկատմամբ հարաբերակցությունից:

տոկոս՝ իսկ մնացած Հայաստանի տեսակարար կշիռը համապատասխանաբար նվազել է 58.4 տոկոսից՝ 27.2 տոկոսի (տե՛ս Աղյուսակ 9.3):

Աղյուսակ 9.3. Ներդրումների բաշխումը Հայաստանում 2001-2006թթ.՝ ըստ տարածքների

Ցուցանիշներ	2001	2002	2003	2004	2005	2006
<i>մյոլդ դրամ՝ ընթացիկ գներով</i>						
Հայաստան՝ ընդամենը, որից՝	232.3	295.2	394.1	464.6	666.1	886.2
Երևան	96.7	175.3	258.6	261.6	537.4	645.5
ՀՀ մարզեր (առանց Երևանի), այդ թվում՝	135.6	119.9	135.5	203.0	128.7	240.7
Այլ քաղաքներ	19.7	57.2	69.3	79.3	97.3	78.0
Գյուղական բնակավայրեր	115.9	62.7	66.2	123.7	31.4	162.7
<i>տոկոս՝ ընդամենը ներդրումների նկատմամբ</i>						
Երևան	41.6	59.4	65.6	56.3	80.7	72.8
ՀՀ մարզեր (առանց Երևանի), այդ թվում՝	58.4	40.6	34.4	43.7	19.3	27.2
Այլ քաղաքներ	8.5	19.4	17.6	17.1	14.6	8.8
Գյուղական բնակավայրեր	49.9	21.2	16.8	26.6	4.7	18.4

396. Կայուն զարգացման ծրագրի տարածքային զարգացման սցենարը իրականացնելու համար անհրաժեշտ կլինի էականորեն արագացնել մարզերի տնտեսական զարգացման տեմպերը, դրանք մոտեցնելով Երևանի զարգացման տեմպերին, իսկ 2015թ. սկսած՝ ապահովել դրանց գերազանցումը: Ծրագրով նախատեսվող զարգացման տեմպերը ապահովելու նպատակով (տե՛ս Աղյուսակ 9.4) անհրաժեշտ կլինի իրականացնել մի շարք հիմնարար միջոցառումներ, որոնց մեջ էական դեր կխաղա ինչպես պետական, այնպես էլ, հատկապես մասնավոր ներդրումների վերաուղղումը Երևանից դեպի այլ քաղաքներ և գյուղական բնակավայրեր, ինչպես նաև դրանց միջմարզային բաշխման հավասարեցման խրախուսումը:

397. ԿԶԾ-ի տարածքային զարգացման սցենարով նախատեսվող տնտեսական զարգացման տեմպերը ներկայացված են Աղյուսակ 9.4-ում:

Աղյուսակ 9.4. Ծրագրվող տարածքային զարգացման (ՀՆԱ-ի աճի) միջին տարեկան տեմպերը 2008-2021 թթ.

Ցուցանիշներ	1999-2006	2007-2010	2011-2012	2013-2015	2016-2018	2019-2021
Հայաստան՝ ընդամենը, որից՝	10.4	10.5	7.7	6.6	5.9	5.4
Երևան	16.8	12.1	8.0	6.5	5.8	5.4
ՀՀ մարզեր (առանց Երևանի), այդ թվում՝	6.3	8.1	7.2	6.7	6.1	5.5
Այլ քաղաքներ	7.6	9.1	9.6	9.4	8.2	6.7
Գյուղական բնակավայրեր	5.4	7.4	5.2	4.3	3.9	3.6

398. Ծրագրվում է 2008-2014 թթ. մարզային զարգացման տեմպերը մոտեցնել Երևանի զարգացման տեմպերին, իսկ 2015 թ. սկսած՝ ՀՀ մարզերում տնտեսական զարգացման տեմպերը գերազանցելու են Երևանի տնտեսական աճի տեմպերին: Բացի դրանից, նախատեսվում է մարզերի զարգացման տեմպերի մոտեցում, որի արդյունքում կմեղմվեն նաև կենսամակարդակի միջմարզային տարբերությունները:

399. Հաշվի առնելով գյուղական վայրերի տնտեսական զարգացման ներկա առանձնահատկությունները (մասնավորապես՝ գյուղատնտեսությունը որպես հիմնական զբաղմունք և եկամտի աղբյուր և այլ, ոչ գյուղատնտեսական գործունեություն իրականացնելու և եկամուտը տարբերակելու հնարավորությունների սահմանափակումների

առկայությունը՝ գյուղական վայրերի զարգացման տեմպերը նախատեսվում են ավելի ցածր, քան Երևանի և այլ քաղաքների զարգացման տեմպերը: ԿԶԾ-ն նախատեսում է մեղմել այդ սահմանափակումները գյուղական զարգացման ծրագրերի մշակման և ներդրման միջոցով, այնուամենայնիվ դրանք դեռ էական կլինեն, և գյուղական վայրերի զարգացման տեմպերը դեռ էականորեն կապված կմնան գյուղատնտեսության զարգացման տեմպերի հետ, որոնք նախատեսվում են ավելի ցածր, քան այլ ոլորտների զարգացման տեմպերը: Գյուղական բնակչության թվաքանակը և գյուղատնտեսության տեսակարար կշիռները նաև կհանդիսանան այն հիմնական գործոնները, որոնք կպայմանավորեն միջմարզային զարգացման տեմպերի տարբերությունները ԿԶԾ-ի գործողության ընթացքում:

400. Ի տարբերություն գյուղական վայրերի, հանրապետության այլ քաղաքների զարգացման տեմպերը, 2010 թ. սկսած, պետք է ավելի բարձր լինեն, քան միջին հանրապետական և Երևանի զարգացման տեմպերը: Այսպիսով, տարածքային զարգացման անհամաչափությունների մեղմմանը ուղղված քաղաքականության հիմնական թիրախը կհանդիսանան հանրապետության այլ քաղաքները, որոնց ճնշող մեծամասնությունը թե՛ տնտեսական զարգացման մակարդակով և թե՛ կենսամակարդակով ներկայումս էականորեն զիջում է ինչպես Երևանին, այնպես էլ, միջին հաշվով, գյուղական բնակավայրերին՝ բնութագրվելով նաև աղքատության և ծայրահեղ աղքատության նկատելիորեն ավելի բարձր մակարդակներով:

401. Հայաստանում դեռևս մշակված չէ տարածքային զարգացման խրախուսմանը ուղղված՝ համալիր բնույթ կրող քաղաքականություն, գործում և ներդրված են միայն դրա առանձին տարրերը, մասնավորապես, ձևավորվել է տարածքային կառավարման նախարարությունը, գործում է Հայաստանի փոքր և միջին ձեռնարկատիրության զարգացման ազգային կենտրոնը, որի հիմնական նպատակներից է փոքր և միջին ձեռնարկատիրության զարգացման խրախուսումը Երևանից դուրս, ինչպես նաև մշակվել են առանձին մարզերի զարգացման ծրագրեր (մասնավորապես՝ Տավուշի և Գեղարքունիքի մարզերի համար):

402. Կայուն զարգացման ծրագիրը նախատեսում է 2008-2009 թթ. ընթացքում մշակել և ներդնել տարածքային զարգացման անհամաչափությունների մեղմմանը և մարզերի զարգացման արագացմանը ուղղված պետական քաղաքականության ամբողջ համալիրը¹⁴⁸, մասնավորապես՝

§ պետական ներդրումային ծրագրերի գերազանցապես ուղղումը Երևանից դուրս արտադրական և սոցիալական ենթակառուցվածքների «նեղ տեղերի» վերացմանը, որոնք ներկայումս կամ մոտ ապագայում կարող են խոչընդոտել սոցիալ-տնտեսական զարգացումը համապատասխան մարզերում կամ միջմարզային մակարդակով.

§ ձեռնարկատիրական և ներդրումային միջավայրերի, ինչպես նաև պետական կառավարման և տեղական ինքնակառավարման որակի շեղումների պարբերական հետազոտությունը միկրոմակարդակներում (հիմնականում, հանրապետության այլ քաղաքներում) և դրանց համապատասխանեցումը

¹⁴⁸ Այդ քաղաքականության անհրաժեշտությունը հիմնավորվում է միջազգային, հատկապես Եվրոպական Միության փորձով, որը տարբեր կառուցվածքային հիմնադրամների տեսքով էական միջոցներ է տրամադրում անդամ երկրների տնտեսական զարգացման մակարդակների հավասարեցման, այդ երկրների հետ մնացող տարածքների զարգացման արագացման, ինչպես նաև անդամակցող երկրների ամդամակցության նախապատրաստմանը աջակցելու նպատակով: Այդ մոտեցումը տեսականորեն հիմնված է այն փաստի վրա, որ չկարգավորվող տնտեսական աճը, որպես կանոն, միտում ունի խորացնելու տարածքային տարբերությունները, քանի որ հիմնականում տեղի է ունենում, այսպես կոչված՝ «զարգացման բևեռացում», որը և տեղի է ունենում ներկայումս Հայաստանում:

հանրապետական լավագույն ստանդարտներին՝ տեղերում ձեռնարկատիրական և ներդրումային միջավայրերի, ինչպես նաև պետական և տեղական ինքնակառավարման որակի կտրուկ բարձրացման նպատակով.

§ տարածքային զարգացման պետական ֆինանսավորման համակարգի մշակումը և ներդրումը, որը պետք է բաղկացած լինի հետևյալ հիմնական տարրերից՝ մարզային և միջմարզային արտադրական և սոցիալական ենթակառուցվածքների զարգացմանն ու հանրային ծառայությունների աստիճանի բարձրացմանը ուղղված պետական ներդրումային ծրագրերի համար հատկացվող պետական միջոցներ, գյուղական վայրերի զարգացման խրախուսմանը, ինչպես նաև գյուղատնտեսության սուբսիդավորմանը ուղղված պետական ֆինանսական միջոցներ, Երևանից դուրս փոքր և միջին ձեռնարկատիրության խրախուսման համար հատկացվող պետական միջոցներ,¹⁴⁹ հանրապետության այլ քաղաքների զարգացումը արագացնելուն ուղղված կառուցվածքային հիմնադրամների համակարգ:

403. Ելնելով ԵՄ տարածքային քաղաքականության փորձից՝ կառուցվածքային հիմնադրամների համակարգը հանդիսանում է տարածքային քաղաքականության հիմնական ֆինանսական գործիքը և նախատեսված է տվյալ քաղաքում ավելացված արժեքի ծավալներն ընդլայնելու համար անհրաժեշտ լրացուցիչ մասնավոր ներդրումներ ներգրավելու գործընթացը ապահովելու համար: Այդ ընդլայնումը, որպես կանոն, իրականացվում է այդ քաղաքում հիմնադրամի միջոցների օգնությամբ ներդրումների ներհոսքի համար անհրաժեշտ հիմքեր ստեղծելու ճանապարհով¹⁵⁰: Նախատեսվում է կառուցվածքային հիմնադրամների համակարգը գործողության մեջ դնել 2010 թվականից, իսկ 2008-2009 թթ. կորոշվեն այդ հիմնադրամների կազմակերպչական ձևը, գործառնությունները և այն քաղաքների ցանկը, որտեղ այդ հիմնադրամները պետք է սկսեն իրենց գործունեությունը: ԿԶԾ-ն նախատեսում է կառուցվածքային հիմնադրամների միջոցով հանրապետության այլ քաղաքների զարգացումը արագացնելու և այնտեղ ուղղվող մասնավոր ներդրումների ծավալները ընդլայնելու նպատակով ֆինանսական միջոցներ հատկացնել՝ 2009-2014 թթ.՝ ՀՆԱ 0.1 տոկոսի, իսկ 2015-2021թթ.՝ ՀՆԱ 0.15 տոկոսի սահմաններում:

404. Տարածքային զարգացման ծրագրվող տեմպերը (տե՛ս Աղյուսակ 9.4) ապահովելու նպատակով անհրաժեշտ կլինի էականորեն վերաբաշխել ներդրումների ծավալները Երևանի, այլ քաղաքների և գյուղական վայրերի միջև (Աղյուսակ 9.5): Նախատեսվում է ներդրումների մեջ Երևանի տեսակարար կշռի էական անկում՝ հիմնականում այլ քաղաքներում ներդրումների աննախադեպ աճի հաշվին (2021 թվականին, 2006 թվականի համեմատ, դրանց մակարդակն անվանական արտահայտությամբ աճելու է շուրջ 10 անգամ, և այդ զարգացումներում կարևոր դերակատարում են ունենալու կառուցվածքային հիմնադրամները):

¹⁴⁹ Ներառյալ՝ փոքր և միջին ձեռնարկությունների կողմից ստացվող վարկերի դիմաց երաշխիքներ տրամադրելու համար հատկացվելիք միջոցները:

¹⁵⁰ Ելնելով ԵՄ և այլ երկրների կառուցվածքային հիմնադրամների օգտագործման միջոցով տարածքային զարգացման արագացման փորձից՝ առանձին քաղաքների մակարդակով, նախ ուսումնասիրվում է տվյալ տարածքը (քաղաքը և դրան տնտեսապես հարող տարածքները), բացահայտվում են տնտեսական զարգացմանը խոչընդոտող հիմնական գործոնները, որոշվում է տվյալ խոչընդոտների մեղմմանը կամ վերացմանը ուղղված գործողությունների ծրագիրը, որոշվում են տարածքի պոտենցիալ մրցակցային թուլությունները և առավելությունները, որոշվում են տարածքի տնտեսության զարգացման ներուժ ունեցող հատվածները, ապա կազմվում է այդ հատվածների զարգացման ծրագիրը: Կառուցվածքային հիմնադրամների միջոցները, որպես կանոն, օգտագործվում են որպես գործընթացը սկսելու համար անհ

տարածքների արագ զարգացումը:

Աղյուսակ 9.5. ԿԶԾ-ի շրջանակներում ծրագրվող ներդրումների տարածքային բաշխումը

Ցուցանիշներ	2006	2010	2012	2015	2018	2021
<i>տոկոս՝ ընդամենի նկատմամբ</i>						
Ընդամենը	100.0	100.0	100.0	100.0	100.0	100.0
Երևան	72.8	67.2	63.4	58.4	60.5	58.5
ՀՀ մարզեր (առանց Երևանի), այդ թվում՝	27.2	32.8	36.6	41.6	39.5	41.5
Այլ քաղաքներ	8.8	17.7	18.3	24.1	25.4	26.4
որից՝ կառուցվածքային հիմնադրամների հաշվին*	0.0	1.9	1.9	2.3	2.3	2.4
Գլուղական բնակավայրեր	18.4	15.1	18.2	17.6	14.1	15.1

* Տոկոս՝ այլ քաղաքներում իրականացվելիք ներդրումների նկատմամբ:

405. Տարածքային զարգացման տարբերությունների մեղմմանը ուղղված քաղաքականության իրականացման արդյունքում ծրագրվում է ապահովել տարածքային կտրվածքով բնակչության կենսամակարդակը բնութագրող հետևյալ ցուցանիշները (տե՛ս Աղյուսակ 9.6): Մասնավորապես, ակնկալվում է, որ բնակչության կենսամակարդակի միջև տարածքային կտրվածքով տարբերությունների աճի առկա միտումները մինչև 2014 թ. էապես մեղմվելու են, իսկ 2015 թվականից սկսած՝ շրջադարձվելու ու փոխարինվելու են կրճատման միտումով, որի արդյունքում Երևանում և Հայաստանի մարզերում բնակչության կենսամակարդակների տարբերությունը սկսելու է աստիճանաբար կրճատվել:

Աղյուսակ 9.6. Մեկ շնչի հաշվով ՀՆԱ-ի ցուցանիշները՝ տարածքային կտրվածքով

Ցուցանիշներ	2006	2010	2012	2015	2018	2021
Երևան, հազար դրամ	1405	2596	3229	4244	5469	6987
Երևան, հազար ԱՄՆ դոլար*	3.4	8.5	10.6	13.9	17.9	22.9
<i>տոկոս՝ Երևանի ցուցանիշի նկատմամբ</i>						
Հայաստան՝ ընդամենը, որից՝	58.7	55.4	55.1	55.2	55.4	55.3
ՀՀ մարզեր (առանց Երևանի), այդ թվում՝	37.1	32.2	31.7	31.9	32.2	32.0
Այլ քաղաքներ	34.8	31.3	32.2	35.0	37.4	38.7
Գլուղական բնակավայրեր	39.3	33.0	31.3	29.4	27.8	26.4

*2010-2021 թթ. մեկ շնչի հաշվով ՀՆԱ-ի՝ ԱՄՆ դոլարով արտահայտված ցուցանիշները հաշվարկվել են 1 ԱՄՆ դոլար=305 ՀՀ դրամ փոխարժեքով:

10. Հանրային կառավարման և դատաիրավական համակարգի բարեփոխումներ

406. Հանրային կառավարման և դատաիրավական համակարգի արդյունավետությունը, համապատասխան ծառայությունների մատուցման որակը և մատչելիությունը, թափանցիկությունը, հաշվետվողականությունը և վերահսկելիությունը աղքատության հաղթահարման ռազմավարության կարևորագույն նախապայմաններից են: Ինչպես ցույց են տալիս միջազգային վերլուծությունները, հանրային կառավարման և դատաիրավական համակարգի բարեփոխումները կարող են որոշիչ դեր ունենալ երկարաժամկետ հեռանկարում աղքատության հաղթահարման գործընթացում: Այսպես, Համաշխարհային բանկի փորձագետների կարծիքով, հանրային կառավարման ցուցանիշների՝ մեկ ստանդարտ կետով բարելավումը կարող է երկարաժամկետ ժամանակահատվածում հանգեցնել մեկ շնչին բաժին ընկնող եկամուտների աճի՝ երկուսից երեք անգամ¹⁵¹:

10.1. Պետական կառավարման համակարգի բարեփոխումներ

407. Պետական կառավարումն ունի տարաբնույթ դրսևորումներ և այդ համակարգը գնահատող տարբեր հայտանիշեր: Հետևաբար գոյություն չունի հանրային կառավարումը գնահատող՝ համընդհանուր օգտագործման մեկ ինտեգրացված համաթիվ: Այդ պատճառով Կայուն զարգացման ծրագրում օգտագործվում է Համաշխարհային բանկի կողմից մշակված և միջազգային համեմատականներում առավել ընդունված՝ հանրային կառավարումը գնահատող վեց տիպի ցուցանիշների համախումբը¹⁵²: Ներքոնշյալ ցուցանիշները, որոնք գնահատում են կառավարման քաղաքական, տնտեսական և ինստիտուցիոնալ ասպեկտները, ունեն տոկոսային գնահատական, և որքան բարձր է այդ գնահատականը, այնքան ավելի բարձր է գնահատվում հանրային կառավարումը բնութագրող համապատասխան ոլորտը: Այդ ցուցանիշներն են.

Քաղաքացիական հասարակայնության մասնակցությունը իշխանությունների ձևավորման գործընթացում, խոսքի և մամուլի ազատությունը: Այս ցուցանիշը բնութագրում է տվյալ երկրի քաղաքացիների՝ իրենց իշխանությունները ընտրելու իրական կարողությունը, ինչպես նաև բազմակարծության, խոսքի և մամուլի ազատության աստիճանը:

Քաղաքական կայունության ցուցանիշը տվյալ համատեքստում գնահատում է իշխանություններին ոչ սահմանադրական եղանակով հեռացնելու հնարավորությունը, իշխանության բռնազավթումը:

Կառավարության արդյունավետությունը բնութագրում է հանրային ծառայությունների որակը, քաղծառայության որակը, դրա անկախության աստիճանը քաղաքական ճնշումներից, քաղաքականության մշակման և դրա իրագործման՝ կառավարության կարողությունը:

Կառավարության կարգավորման գործառույթի որակը: Այս ցուցանիշը գնահատում է կառավարության կարողությունը մասնավոր հատվածի աջակցությանն ու զարգացմանն ուղղված քաղաքականության մշակման և իրագործման գործում:

151

¹⁵² Տե՛ս օրինակ՝ WGI 1996-

Օրենքի գերիշխանությունը ցույց է տալիս, թե որքանով է հասարակությունը առաջնորդվում իր իսկ կողմից ընդունված օրենքներով: Մասնավորապես կարևորվում է դատաիրավական համակարգի գործունեության որակը:

Կոռուպցիայի վերահսկելիությունը բնութագրում է կառավարության կոռուպցիայի դեմ պայքարի աստիճանը կամ, այլ խոսքով, որքանով է այն իր գործունեության ընթացքում առաջնորդվում մասնավոր և էլիտար շահերով:

408. Վերոնշյալ ցուցանիշները հաշվարկվում են սկսած 1996 թվականից, շուրջ 200 երկրների համար, 25 միջազգային կազմակերպությունների կողմից՝ օգտագործելով 31 տարբեր տիպի տվյալների աղբյուրներ: Ստորև բերված աղյուսակում ներկայացված է ՀՀ կառավարման համակարգը գնահատող ցուցանիշների դինամիկան 1998-2006թթ.: Ինչպես երևում է աղյուսակից, հիմնական առաջընթացը վերջին տարիներին նկատվում է քաղաքական կայունությունը և կառավարման արդյունավետությունը բնութագրող ցուցանիշներում (2-4): Միևնույն ժամանակ, կոռուպցիայի վերահսկելիությունը և օրենքի գերիշխանությունը բնութագրող ցուցանիշների առումով, 2003-2006թթ. որևէ շոշափելի առաջընթաց չկա, իսկ ընտրությունները, խոսքի և մամուլի ազատությունը գնահատող ցուցանիշների առումով, 1998-2000թթ. համեմատ, նկատվում է որոշակի անկման միտում:

Աղյուսակ 10.1. ՀՀ կառավարման համակարգի ցուցանիշները (տոկոսային գնահատական, 0-100, 1998-2006թթ.)

Ցուցանիշներ	1998	2000	2002	2003	2004	2005	2006	2007
1.Քաղաքացիական հասարակայնության մասնակցությունը իշխանությունների ձևավորման գործընթացում, խոսքի և մամուլի ազատություն	35.3	37.2	34.8	33.3	30.0	30.4	26.9	30.0
2.Քաղաքական կայունություն	22.6	17.9	23.6	28.3	31.6	38.2	35.1	42.3
3.Կառավարության արդյունավետություն	29.7	18.7	45.5	45.5	44.5	49.3	51.2	46.4
4.Կառավարության կարգավորման գործառույթի որակ	26.6	28.1	56.7	57.1	53.2	56.9	59.0	60.2
5.Օրենքի գերիշխանություն	38.0	36.1	35.6	39.4	38.0	41.5	38.1	40.5
6.Կոռուպցիայի վերահսկելիություն	21.6	23.0	32.4	33.8	28.9	33.5	35.0	30.0

409. Համաշխարհային բանկի գնահատմամբ՝ Հայաստանի կառավարման համակարգը բնութագրող ցուցանիշները, ԱՊՀ երկրների համեմատ, ընդհանուր առմամբ ավելի բարենպաստ դիրք ունեն, մինչդեռ դրանք էապես զիջում են Արևելյան Եվրոպայի և Մերձբալթյան երկրների կառավարման համապատասխան ցուցանիշներին (տե՛ս Աղյուսակ 10.2):

410. Հայաստանում պետական կառավարման համակարգի բարեփոխումները սկսվեցին հիմնական մակրոտնտեսական բարեփոխումներից ավելի ուշ (1990-ականների վերջից): Այդ բարեփոխումների առաջնահերթ նպատակն էր արդյունավետ կառավարման հաստատությունների զարգացումը, հանրային (պետական) ծառայությունների մատուցման, կառավարման մոդելների և մեխանիզմների բարելավումը, կառավարման ապակենտրոնացման, ապահամակենտրոնացման խորացումը, քաղաքացիական ծառայության պատասխանատվության, թափանցիկության, հաշվետվողականության զարգացումը, քաղաքականության մշակման գործընթացին քաղաքացիական հասարակության մասնակցության ապահովումը:

Աղյուսակ 10.2. ԱՊՀ և Արևելյան Եվրոպայի երկրների կառավարման համակարգի ցուցանիշները 2007թ. (տոկոսային գնահատական, 0-100)

Երկրներ	Քաղաքացիական հասարակայնության մասնակցությունը իշխանությունների ձևավորման գործընթացում, խոսքի և մամուլի ազատություն	Քաղաքական կայունություն	Կառավարության արդյունավետություն	Կառավարության կարգավորման գործառույթի որակ	Օրենքի գերիշխանություն	Կոռուպցիայի վերահսկելիություն
Հայաստան	30.0	42.3	46.4	60.2	40.5	30.0
Վրաստան	42.3	23.6	52.1	58.7	42.9	48.3
Ադրբեջան	14.9	24.0	28.0	31.1	23.3	11.1
Մոլդովա	36.5	36.1	19.4	42.7	29.5	29.5
Բելառուս	4.3	52.9	9.0	5.3	12.4	19.3
Տաջիկստան	10.6	19.2	14.2	15.5	10.5	20.3
Ղազախստան	17.8	57.7	32.7	34.5	23.8	17.4
Գրդգստան	28.4	15.4	24.2	37.4	9.0	7.7
ԱՊՀ միջինը	21.2	32.8	27.4	30.4	21.4	20.6
Չեխիա	77.9	77.4	80.1	80.1	73.8	64.7
Սլովակիա	77.4	80.3	76.8	81.1	60.5	65.2
Լեհաստան	71.6	66.8	67.3	72.3	61.4	61.4
Էստոնիա	82.3	69.7	84.8	92.2	83.8	80.7
Լատվիա	73.6	70.7	71.1	81.0	65.7	66.2
Սլովենիա	84.1	84.1	83.4	74.8	75.2	78.3
Ռումինիա	61.1	51.4	53.1	66.0	50.5	55.6
Բուլղարիա	66.3	61.1	59.2	69.9	51.4	53.1
Արևելյան Եվրոպայի և Մերձբալթյան երկրների միջինը	64.0	55.1	62.0	68.1	54.4	56.9

411. Պետական կառավարման համակարգի բարեփոխումները իրականացվում են երեք առանցքային ուղղություններով.

- § պետական կառավարման համակարգի կառուցվածքային և գործառութային վերափոխումներ,
- § քաղաքացիական ծառայության ներդրում և զարգացում,
- § ֆինանսական կառավարման համակարգի բարեփոխումներ:

10.1.1. Պետական կառավարման համակարգի կառուցվածքային և գործառութային վերափոխումներ

412. ՀՀ կառավարման համակարգի հիմնական բարեփոխումները իրականացվել են 2000-2006թթ., երբ ՀՀ Կառավարությանը և նախարարություններին առընթեր գերատեսչությունները գործակալությունների, տեսչությունների, պետական ոչ առևտրային կազմակերպությունների կարգավիճակով ներառվեցին համապատասխան նախարարությունների կառավարման համակարգերում, հստակեցվեցին պետական կառավարման մարմինների գործառութները և այլն:

413. ՀՀ պետական կառավարման համակարգի բարեփոխումների իրականացումն ապահովեց հետևյալ կարևոր արդյունքները՝

- § պետական կառավարման մարմիններում իրականացվեց գործառույթային վերլուծություն, բացահայտվեցին կրկնվող, ավելորդ, տվյալ մարմինն ոչ բնորոշ գործառույթները,
- § պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմիններում ստեղծվեցին համապատասխան կառավարչական հիմնարկներ, որոնց ղեկավարի գործառույթները տարանջատվեցին պետական մարմնի ղեկավարի գործառույթներից,
- § նախարարություններում ձևավորվեցին առանձնացված ստորաբաժանման կարգավիճակով գործակալություններ և տեսչություններ, որոնք մասնագիտացած են ծառայությունների մատուցման, կանոնակարգման և վերահսկողական ու տեսչական գործառույթների իրականացման ոլորտում,
- § նախարարներին կից հիմնվեցին տարբեր խորհրդակցական հանձնաժողովներ և խորհուրդներ, որոնք փոխարինեցին նախկին «կոլեգիալ» կառավարման մարմիններին,
- § Կառավարությանն առընթեր գերատեսչությունների 21 մարմիններ ընդգրկվեցին համապատասխան նախարարությունների կազմում կամ կառուցվածքում՝ որպես գործակալություն կամ տեսչություն, կամ էլ կառուցվածքային ստորաբաժանում,
- § նախարարությունների, Կառավարությանն առընթեր մարմինների համակարգում գործող բազմաթիվ հիմնարկներ վերակազմավորվեցին պետական ոչ առևտրային կազմակերպությունների, դրանցից տարանջատվեցին կառավարչական գործառույթները,
- § նախարարությունների կառավարման կառուցվածքը միասնականացվեց՝ դրանցում ձևավորվեցին քարտուղարություններ, վարչություններ և բաժիններ,
- § հաստատվեցին նախարարությունների նոր կանոնադրությունները, որոնք ամբողջովին համապատասխանեցվեցին օրենքներով և այլ օրենսդրական ակտերով վերապահված ռազմավարական խնդիրներին և գործառույթներին:

414. Պետական կառավարման վերոնշյալ բարեփոխումների արդյունքներով կրճատվեցին ավելի քան 750 պետական ապարատի աշխատողներ, իսկ նախարարությունների քանակը նվազեց՝ 21-ից հասնելով 16-ի: Միաժամանակ անհրաժեշտ է նշել, որ թեև առաջընթաց է գրանցվել վարչական կառույցների բարեփոխման բնագավառում, սակայն կառավարման կարողությունները դեռևս կարիք ունեն կայացման: Նախարարությունները դեռևս չունեն բավարար կարողություններ՝ արդյունավետ քաղաքականության ձևավորման համար, և լուրջ հիմնախնդիր է մնում ընդունված քաղաքականության և օրենսդրության ժամանակին և արդյունավետ իրականացումը: Խոսքը վերաբերում է, մասնավորապես, քաղաքական կամ հայեցողական պաշտոնյաների կողմից ռազմավարական պլանավորման մտածելակերպի արմատավորմանը, իսկ վարչական մասնագիտական անձնակազմի համար՝ ռազմավարական խնդիրների իրականացման ուղիների և մեթոդների, մարտավարական լուծումների առաջադրմանը: Պետական կառավարման մարմիններում քաղաքական և վարչական մասնագիտացված ծառայությունների հստակ տարանջատումը պետական ծառայության զարգացման քաղաքականության կարևորագույն բաղադրիչն է: Այստեղ հատկապես կարևորվում է աշխատակազմի ղեկավարների ինստիտուտի զարգացումն ու կատարելագործումը նախարարություններում և պետական կառավարման մյուս մարմիններում: Վերջինս հնարավորություն կտա բարելավելու ռազմավարական պլանավորումը և հստակեցնելու որոշումների կայացման գործում հայեցողական և քաղաքական պաշտոնյաների դերը: Աշխատակազմի ղեկավարների դերի և գործունեության վերաբերյալ նոր հայեցակարգի մշակումը կօգնի Կառավարությանը բարելավելու համակարգի հետագա զարգացումը: Պետական կառավարման մարմիններում քաղաքական և վարչական ծառայությունների հստակ տարանջատումը խնդիր է դնում ուժեղացնելու

աշխատակազմի ղեկավարների կառավարման ունակությունները: Վերջինս դեռևս դիտվում է որպես տնտեսական-կազմակերպչական հարցեր լուծող օղակ: Բացի այդ, ներկայիս աշխատակազմի ղեկավարները, համարվելով կառավարչական հիմնարկի ղեկավար, օժտված չեն այդ հաստատության ղեկավարման հարցերի տնօրինմամբ, մասնավորապես՝ իրավասություն չունեն իրենց անմիջական ենթակա պաշտոնյաներին նշանակումներ կատարելու: Նրանք նաև օժտված չեն անձնակազմի պլանավորման, ռեսուրսների ռացիոնալ տեղաբաշխման և օգտագործման անհրաժեշտ իրավասություններով: Նույն իրավիճակն է նաև աշխատակազմի ֆինանսական, նյութական միջոցների, գնումների իրականացման հարցերում: Այս հանգամանքը թուլացնում է արհեստավարժ կառավարման սկզբունքների արմատավորումը պետական կառավարման մարմիններում:

415. Նախարարությունների միջև համագործակցության համակարգը համարժեք չի գործում, այն շատ դեպքերում հանգեցնում է որոշումների կայացման համակարգում արգելակումների: Էլեկտրոնային կառավարման, էլեկտրոնային փաստաթղթաշրջանառության, տվյալների միասնական բազաների ու փոխանակման հնարավորությունների ստեղծումը կթեթևացնի ծանրաբեռնված թղթատարությունը, կհանգեցնի պետական ծառայողների թվաքանակի օպտիմալացմանը, ինչպես նաև նրանց որակավորման բարձրացմանը:

416. Չնայած Հայաստանում տեղեկատվական հասարակության ձևավորման վերաբերյալ առկա պատկերացումներին, էլ-կառավարման առաջընթացը դեռևս մեծ չէ: Հայաստանի պետական մարմինները որոշակի քայլեր ձեռնարկել են էլ-կառավարման համակարգերի ներդրման ուղղությամբ, մասնավորապես ստեղծելով իրենց ինտերնետ կայքերը, սակայն

մշակված միասնական մոտեցում: Հիմք ընդունելով ԵՄ կողմից կիրառվող էլ-կառավարման առցանց ծառայությունների բարդության (գարգացվածության) հնգաստիճան դասակարգման համակարգը, կարելի է փաստել որ Հայաստանը հիմնականում գտնվում է ստորին երկու մակարդակներում, այսինքն՝ պետական կառավարման մարմինները սահմանափակվում են տեղեկատվություն տրամադրելով կամ լավագույն դեպքում հնարավորություն են տալիս բեռնավորել անհրաժեշտ փաստաթղթեր և ձևաչափեր¹⁵³:

417. Էլ-կառավարման զարգացման ուղղությամբ Հայաստանի Կառավարությունը սկսել է իրականացնել մի շարք միջոցառումներ: Մասնավորապես՝ Կառավարության որոշումների ընդունման և կատարման, ինչպես նաև պետական կառավարման ոլորտի արդյունավետության բարձրացման նպատակով Համաշխարհային բանկի վարկային ծրագրի շրջանակներում ՀՀ Կառավարության կողմից իրականացվում է Պետական հատվածի արդիականացման ծրագիր, որով նախատեսվում է ՀՀ պետական մարմիններում էլեկտրոնային փաստաթղթաշրջանառությունն ապահովող նոր համակարգի ներդրում: Ծրագիրը ընդգրկում է հինգ բաղադրիչ:

§ Առաջինը նպատակ ունի ուժեղացնելու պետական ծառայության կառավարումը: Դրա փորձնական հատվածը կիրականացվի ՀՀ Կառավարության

153

2007թ. պատրաստված «Առցանց ծառայությունների մատուցման բենչմարկինգ Եվրոպայում» 7-րդ գեկույցի գոյություն ունի առցանց ծառայությունների մատուցման բարդության հինգ աստիճան՝ 1. Առցանց տրամադրվում է միայն տեղեկատվություն, 2. Ցանցից հնարավոր է բեռնավորել ձևաչափեր, սակայն դրանք հնարավոր է վերադարձնել միայն թղթային տարբերակով, 3. Ցանցի միջոցով հնարավոր է իրականացնել առանձին գործարք՝ հնարավոր է լրացնել առցանց ձևաչափեր և կատարել պատվերներ և վճարել դրանց համար, 4. Հնարավոր է իրականացնել բազմակի գործարքներ, ծառայությունները փոխկապակցված են, գործարքները կառավարման մարմնի և ձեռնարկությունների ու անհատների միջև ամբողջությամբ ավտոմատացված, և 5. առցանց ծառայությունները անձնավորված են և ամբողջությամբ հարմարեցված

աշխատակազմում, ՀՀ ֆինանսների և ՀՀ էկոնոմիկայի նախարարություններում: Նախատեսվում է, որ փորձարկման արդյունքում կկազմվի փաստաթուղթ, որտեղ կնշվեն այն բոլոր բացթողումներն ու խնդիրները, որոնք կբացահայտվեն այդ պիլոտային համակարգի ներդրման և կիրարկման արդյունքում: Նշված ուսումնասիրության արդյունքում միայն հնարավոր կլինի որոշել հետագայում այլ պետական մարմիններում նման համակարգերի նպատակային ներդրման տարբերակներն ու ձևաչափը:

- § Երկրորդ բաղադրիչի նպատակն է պետական գնումների էլեկտրոնային համակարգի ներդրումը թե՛ կենտրոնական և թե՛ մարզային ու Երևան քաղաքի մակարդակներում:
- § Երրորդ բաղադրիչի ներքո նախատեսվում է աուդիտորական ստանդարտների և մեթոդոլոգիաների մշակման և էլեկտրոնային կառավարման կարողությունների զարգացման միջոցով վերահսկիչ պալատի հզորացումը:
- § Չորրորդ բաղադրիչի նպատակն է քաղաքականության մշակման և իրականացման բարելավման առումով կարողությունների զարգացումը, որը նաև ներառում է էլ-փաստաթղթաշարժի համակարգի ներդրումը:
- § Վերջին բաղադրիչը նախատեսում է ծառայությունների տրամադրման էլեկտրոնային համակարգերի ներդրման միջոցով զարգացնել տեղական ինքնակառավարման մարմինների կարողությունները:

418. Էլ-կառավարման հետագա զարգացումը մեծապես պահանջում է ռազմավարական մոտեցում և համակարգման բարձր աստիճան: Էլ-կառավարման ներդրման նկատմամբ ներկայումս ձևավորված մոտեցումը արդյունավետ չի համակարգվում և կարող է ծախսատար և կրկնակի ներդրումների պատճառ դառնալ, իսկ գործընթացի բարելավումը պահանջում է պետական մարմինների դերի հստակեցում: Այստեղ ներկայացված մոտեցումները համահունչ են ՀՀ էկոնոմիկայի նախարարության կողմից մշակված տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտի զարգացման հայեցակարգում արժարժված խնդիրներին և ներկայացնում են էլ-կառավարմանը վերաբերող մի շարք ընդհանուր ուղղություններ:

419. Էլ-կառավարման զարգացման գործում կարևոր դեր են ունենալու հետևյալ երկու գործոնները. **հեռահաղորդակցության հիմնաց**
համատեղելիության շրջանակի մշակումը: Անհրաժեշտ հիմնացանցի կառուցման խնդիրները սկզբունքորեն կարող է ունենալ լուծման երկու տարբերակ.

- § Էլ-կառավարման ցանցային ենթակառուցվածքը կարող է հիմնված լինել հատուկ այդ նպատակով մշակված էլեկտրոնային կառավարական հիմնացանցի վրա, որին միացած կլինեն միայն պետական կառավարման մարմինները¹⁵⁴, կամ
- § մշակվում է ազգային հեռահաղորդակցման հիմնացանց, որի սահմաններում Կառավարությունը ձեռք է բերում որոշակի կարողությունների ծավալ իր էլեկտրոնային ծառայությունները մատուցելու և միջկառավարական կապը ապահովելու նպատակով:

420. Առաջին մոտեցումը կարող է ապահովել ցանցի առավել բարձր հուսալիություն և անկախություն, մինչդեռ երկրորդ մոտեցման դեպքում հնարավոր է ներգրավել մասնավոր հատվածի ներկայացուցիչներին: Պետական ռեսուրսների սահմանափակության պայմաններում տեղական տեղեկատվական տեխնոլոգիաների (SS) մասնավոր հատվածի

¹⁵⁴ Օրինակ, Հունգարիայում գործում է համանման համակարգ 2004 թվականից, որին միացած են 2007)

մասնակցությունը էլ-կառավարման ծառայությունների մշակման և մատուցման գործընթացին կարող է դիտարկվել որպես շահավետ տարբերակ: Այս առումով էլ-կառավարման զարգացման նպատակով անհրաժեշտ է նաև մշակել պետական և մասնավոր հատվածի համագործակցության իրավական, ինստիտուցիոնալ և կարգավորիչ շրջանակը:

421. Հաջորդ կարևոր խնդիրը համատեղելիության շրջանակի մշակումն է, որը պետք է հիմք հանդիսանա բարձր մակարդակի առցանց ծառայությունների մատուցման համար և առանց որի միասնական համակարգի մշակումը և դրա հետագա զարգացումը դառնում է անհնար: Համատեղելիության շրջանակը իրենից ներկայացնում է ստանդարտների և ուղեցույցների համակարգ, որը պայմանավորում է կազմակերպությունների միջև փոխադարձ կապի իրականացման ձևերը: ՀՀ համատեղելիության շրջանակի մշակման ժամանակ անպայման պետք է հաշվի առնվեն Համաեվրոպական համատեղելիության ծրագրի միջոցով սահմանված ստանդարտներն ու մոտեցումները:

422. Համաձայն համաեվրոպական շրջանակի կարևորվում են համատեղելիության երեք հիմնական կողմերը՝

§ Կազմակերպական համատեղելիություն: Այս առումով համատեղելիությունը նշանակում է բիզնես նպատակների սահմանում, բիզնես գործընթացների մոդելավորում և տարբեր ներքին կառուցվածքներ և գործընթացներ ունեցող և տեղեկատվական հոսքերի փոխանկմանը ձգտող վարչական միավորների համագործակցություն:

§ Իմաստային համատեղելիություն: Համատեղելիության այս կողմը նպատակ է հետապնդում ապահովել փոխանցվող տեղեկատվության իմաստային ճիշտ ընկալումը ցանկացած այլ ծրագրի կողմից, որը ի սկզբանե մշակված չի եղել նման տեղեկատվություն ստանալու համար:

§ Տեխնիկական համատեղելիություն: Այս առումով էլ-կառավարման համակարգերը պետք է տեխնիկապես հնարավորություն ունենան իրար միանալու և փոխազդելու միմիանց հետ: Համատեղելիության այս կողմը ներառում է փոխազդեցության միջավայրը, ծառայությունների փոխկապակցվածությունը, տեղեկատվության ներկայացումը և փոխանակումը, հասանելիությունը և անվտանգությունը:

423. ՀՀ համար համատեղելիության շրջանակի մշակումը միանշանակ պահանջում է ամուր և արդյունավետ ինստիտուցիոնալ հիմքերի առկայություն: Այսպես, օրինակ

էլ.կառավարության ծրագրերի և ծառայությունների համակարգված մշակման նպատակով, կարող է կարևոր դեր խաղալ աշխատանքների ճիշտ կազմակերպման գործում: Բացի նման միավորի ստեղծումից, որը իր վրա կվերցնի էլ-կառավարման համակարգի զարգացման տեխնիկական կողմի համակարգումը, կարևոր է նաև ոչ պակաս ուշադրություն դարձնել Հայաստանում էլ-կառավարման միասնական և բոլորի կողմից ընդունելի քաղաքականության և ռազմավարության մշակման հիմնախնդրին:

424. Հանրային կառավարման ոլորտի բարեփոխումների համատեքստում էլ-կառավարման հետագա զարգացումը պետք է խթանի խնայողությունները, քանի որ ծառայությունների մատուցման նոր համակարգը փոխում է ոչ միայն ծառայությունների մատուցման ձևը, այլև դրա բովանդակությունը կազմող գործընթացները և էլ-կառավարման համակարգի մեջ ընդգրկվող միավորները պետք է իրականացնեն գործող բիզնես գործընթացների ռեինժինիրինգ: Միասնական տեղեկատվական կենտրոնների և տեխնոլոգիական հարթակները պետք է անպայմանորեն հանգեցնեն կրկնակի ներդրումների բացառմանը և ծրագրային մշակումների օգտագործմանը կառավարության տարբեր հատվածների կողմից առավել արդյունավետ կերպով: Միևնույն ժամանակ Հայաստանում

ներկայումս բավարար մակարդակի վրա չեն նույնիսկ էլ-կառավարման համակարգի հիմնական տեխնիկական ենթակառուցվածքները՝ կառավարական հեռահաղորդակցության համացանցը, կառավարության միասնական պորտալը և օգտագործողների նույնականացման կետը (կառավարության էլեկտրոնային ծառայություններից օգտվող այցելուների մուտքի կետ), և նշված խնդիրները պետք է ստանան առաջնային լուծումներ:

425. ՀՀ էլ-կառավարման զարգացման սկզբնական նպատակային խմբում կարելի է ընդգրկել ԵՄ անդամ պետությունների և մի շարք այլ երկրների կողմից ազգային մակարդակներում բենչմարկինգի ենթարկվող թվով 20 հանրային ծառայություններ: Բենչմարկինգի էությունը կայանում է նրանում, որ սահմանվում է տվյալ առցանց ծառայության բարդության (զարգացվածության) աստիճանը ըստ վերևում նշված 5 մակարդակների: Այդ 20 ծառայությունները կազմում են քաղաքացիների «կյանքի դեպքերը» և բիզնեսների «բիզնես դրվագները», որոնց համար մատուցվում են էլ-կառավարման ծառայություններ:

426. Կայուն զարգացման ծրագրի շրջանակներում ակնկալվում է, որ արդեն 2012 թվականին Հայաստանը կհասնի ԵՄ միջին ցուցանիշներին բիզնես հատվածին մատուցված էլ-կառավարման ծառայությունների զարգացվածության աստիճանի առումով, իսկ քաղաքացիների առումով այդ գործընթացը կունենա ավելի երկար տևողություն: Ակնկալվում է, որ ՀՀ Կառավարությունը մինչև 2010 թվականի ավարտը կմշակի էլ-կառավարման ծառայությունների նշված մակարդակը ապահովելուն ուղղված համալիր ծրագիր, որը կներառի մանրամասն գործողությունների պլան, անհրաժեշտ ներդրումների գնահատականներ և վերահսկողության համապատասխան շրջանակ: Միևնույն ժամանակ, էլ-կառավարման պահպանման և զարգացման ծախսերը պետք է ներառվեն բյուջետային շրջանակում և իրենց համապատասխան արտացոլումը գտնեն 2010-2012թթ. միջնաժամկետ ծախսերի ծրագրում: Բացի այդ, անհրաժեշտ է իրականացնել նշված յուրաքանչյուր ծառայության գծով նախանշված նպատակին հասնելու եկամուտների և ծախսերի ամբողջական վերլուծություն, ինչը թույլ կտա սահմանել ռեսուրսների բաշխման նախապատվության ծրագիր:

427. Կարևոր է ընգծել, որ էլ-կառավարման ծառայությունների ընդլայնումը և դրանց որակական զարգացումը չպետք է լինի ինքնանպատակ: Մասնավորապես անհրաժեշտ է գնահատել քաղաքացիների և/կամ գործարար միջավայրի կողմից այս կամ այն էլ-կառավարման առցանց ծառայության նկատմամբ պահանջարկի աստիճանը, մանավանդ հաշվի առնելով բնակչության որոշ խմբերի խնդիրները համակարգչի և ինտերնետի հասանելիության առումով (օրինակ՝ սոցիալական ապահովության ծառայություններից հիմնականում պետք է օգտվեն սոցիալապես անապահով խավի ներկայացուցիչները): Ենթադրվում է, որ ՀՀ կառավարությունը շարունակելու է իր ջանքերը միտված ինտերնետի հասանելիության ապահովման և բնակչության համակարգչային գրագիտության բարձրացման ուղղությամբ: Միևնույն ժամանակ էլ-կառավարման ծառայությունների ընդլայնումը իր հերթին կարող է համակարգիչներից և ինտերնետից օգտվելու խթան հանդիսանալ:

428. Եվ վերջապես, էլ-կառավարման ծառայությունների ընդլայնումը կարող է դառնալ պետական կառավարման համակարգի գործունեության թափանցիկության ապահովման հուսալի գործիք և նվազեցնել կոռուպցիոն ռիսկերը: Նոր ԵՄ անդամ երկրների փորձը վկայում է, որ էլեկտրոնային համակարգերի ներդրումը և պետական ծառայողների և մասնավոր հատվածի միջև ուղղակի՝ անձնավորված, շփումների նվազումը դրական ազդեցություն է ունենում կոռուպցիայի դեմ պայքարի գործում:

Աղյուսակ 10.3. ԵՄ կողմից բենչմարկինգի ենթարկվող հանրային էլեկտրոնային ծառայությունները և դրանց ապահովումը ՀՀ-ում մինչև 2021 թվականը

	Հանրային ծառայության տեսակը ¹⁵⁵	Ծառայության բարդության առավելագույն աստիճանը	ԵՄ միջին ցուցանիշը 2007 թ. ¹⁵⁶ (% առավելագույն աստիճանի նկատմամբ)	Հայաստան				
				2008	2012	2015	2018	2021
Քաղաքացիների համար*								
1	Եկամտահարկ	5	90	1	3	4	4	5
2	Աշխատանքի որոնման ծառայություններ	4	97	1	3	4	4	4
3	Սոց. ապահովություն	5	72	1	3	4	4	5
4	Անձնական փաստաթղթեր (անձնագիր/վարորդական վկայական)	5	47	-	2	3	4	5
5	Ավտոմեքենայի գրանցում	4	70	-	2	3	4	4
6	Կառուցման թույլտվություն	4	50	1	3	4	4	4
7	Հայտարարություն ուստիկանություն	3	77	-	1	2	3	3
8	Հանրային գրադարաններ	5	76	1	3	4	5	5
9	Հավատարմագրեր	4	63	1	3	4	4	4
10	ԲՈՒՀ ընդունվելը	4	75	1	3	3	4	4
11	Հասցեյի փոփոխության հայտարարություն	4	62	-	3	4	4	4
12	Առողջապահական ծառայություններ	4	45	-	2	3	4	4
Բիզնեսի համար								
13	Աշխատակիցների սոց. վճարների իրականացում	4	95	1	4	4	4	4
14	Շահութահարկ	4	94	2	4	4	4	4
15	Ավելացված արժեքի հարկ	4	96	2	4	4	4	4
16	Նոր ընկերության գրանցում	4	79	1	4	4	4	4
17	Տվյալների հանձնումը վիճ. ծառայություն	5	85	1	4	5	5	5
18	Մաքսային հայտարարագրում	4	95	2	4	4	4	4
19	Շրջակա միջավայրին վերաբերվող թույլտվություններ	5	50	1	2	3	4	4
20	Պետական գնումներ	4	82	1	4	4	4	4

* Քաղաքացիների համար մատուցվող էլ-կառավարման ծառայությունների ՀՀ համար ներկայացված նպատակները և ժամանակացույցը կարող են ենթարկվել փոփոխության՝ ելնելով հետագայում մշակվող ծրագրերի շրջանակներում իրականացվելիք մանրամասն վերլուծությունների արդյունքներից:

429. ՀՀ Նախագահի 03.07.2007թ. NՆԿ-113-Ա կարգադրությամբ՝ Տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացման նոր հայեցակարգ մշակելու նպատակով ն.թ. սեպտեմբերին ստեղծվել է միջգերատեսչական աշխատանքային խումբ՝ ՀՀ առևտրի և տնտեսական զարգացման նախարարի ղեկավարությամբ, որի կողմից մինչև տարեվերջ հաստատման կներկայացվի Տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտի զարգացման նոր ալիեցակարգ, որը ներառելու է նաև Հայաստանում էլեկտրոնային կառավարման համակարգի ներդրումը:

430. Ներկայումս այս ուղղությամբ նախաձեռնվել են նաև մի շարք պիլոտային ծրագրեր, մասնավորապես՝ որոշ մարզերում ինտերնետ կապի ցանցերի նախագծում և կառուցում, այդ

¹⁵⁵ Նշված ծառայությունների մանրամասն նկարագրությանը կարելի է ծանոթանալ հետևյալ

¹⁵⁶ Բացի ԵՄ 27 պետություններից միջին ցուցանիշը ընդգրգում է նաև Թուրքայի, Նորվեգիայի, Իսլանդիայի և Շվեյցարիայի համապատասխան ցուցանիշները:

ցանցերի միջոցով հեռավոր (սահմանամերձ) գյուղերի երեխաների համար, մայրաքաղաքի կամ մարզկենտրոնների դպրոցների մասնագետների օգնությամբ, հեռահար ուսուցման ծրագրերի իրականացում, բժշկական խորհրդատվությունների և ծառայությունների մատուցում:

431. 2001 թվականից ՀՀ 10 մարզերում, իսկ 2003 թվականից նաև 12 քաղաքներում, ՄԱԶԾ-ի «Աջակցություն տեղեկատվական հասարակության և ժողովրդավարական կառավարման զարգացմանը» ծրագրի շրջանակներում ներդրվել են էլեկտրոնային կառավարման տարրեր, մարզպետարաններում ստեղծվել են ինտերնետ կենտրոններ և տարածքային կառավարման համակարգ (_____), որոնց օգնությամբ զգալիորեն մեծացել է համապատասխան տեղեկատվության փոխանակման, տարածման և մատչելիության դյուրինությունը: 2009 թ. ընթացքում նախատեսվում է համայնքային կառավարման տեղեկատվական համակարգեր ներդնել հանրապետության շուրջ 217 համայնքներում: Բացի այդ, 2009 թ. ծրագրվում է նաև լոկալ ցանցեր ստեղծել տեղական ինքնակառավարման 84 մարմիններում և քաղաքացիական կացության ակտերի գրանցման 52 տարածքային բաժիններում: Ծրագրվում է միջոցառումներ իրականացնել համայնքների միասնական տեղեկատվական համակարգի ստեղծման, ինչպես նաև համապատասխան կարողությունների հզորացման ուղղությամբ (ներառյալ՝ աշխատակիցների ուսուցումն ու վերապատրաստումը):

432. Առաջիկա տարիներին կուժեղացվի կապը Կառավարության աշխատակազմի և նախարարությունների միջև՝ գործառույթների առավել հստակ կոորդինացման և համակարգման նպատակով: Մասնավորապես, կիստակեցվի կապը ԿԶԾ-ի և ՀՀ Կառավարության մյուս ռազմավարությունների միջև, Կառավարության աշխատակազմի գործառույթների և նախարարությունների գործողությունների միջև՝ այդ մարմիններում կիրառելով քաղաքականության մշակման և քաղաքականության գնահատման ստանդարտ մոտեցում: Կուժեղացվի ՀՀ Կառավարության կողմից ռազմավարական ծրագրերի վերահսկողությունը՝ Կառավարությունում ստեղծելով ծրագրերի կառավարման/կատարողականի վերահսկողության/ստորաբաժանում, որը հաշվետու կլինի վարչապետին, հաշվետվություն կներկայացնի սահմանված նպատակների իրականացման առաջընթացի վերաբերյալ և կառավարման մարմիններում կիետևի կատարողականի բարելավման գործընթացին: Այս գործառույթների մի մասը ներկայումս իրականացնում են ՀՀ պետական կառավարման համակարգի բարեփոխումների հանձնաժողովը, ԱՀՌԾ-ի քարտուղարությունը և ՀՀ ֆինանսների ու ՀՀ էկոնոմիկայի նախարարությունները: Այս գործառույթները պետք է փոխանցվեն Կառավարության աշխատակազմի համապատասխան ստորաբաժանմանը: Կառավարության կենտրոնական օղակում այդպիսի վերահսկողության առկայությունը անհրաժեշտ կլինի հանրային կառավարման ոլորտում շարունակական և կայուն բարեփոխումներ իրականացնելու համար: Նախարարություններում և գերատեսչություններում կներդրվեն ծառայությունների մատուցման գործընթացի գնահատման և ծառայությունների մատուցման որակի բարձրացման չափորոշիչներ: Նախարարներից կպահանջվի ներկայացնել տարեկան հաշվետվություն՝ իրականացված գնահատումների և բարելավման ուղղությամբ ձեռնարկված միջոցառումների վերաբերյալ:

433. Պետական կառավարման մարմինների գործունեության հրապարակայնության և թափանցիկության ընդլայնումը, որոշումների ընդունման գործընթացներին քաղաքացիական հասարակայնության մասնակցության ապահովումը: Պետական կառավարման տարրեր մակարդակներում կառավարման արդյունավետության բարձրացման, թափանցիկության և հաշվետվողականության համակարգերի զարգացումը ամրագրվել է «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի ընդունմամբ: Կառավարության քաղաքականությունը 2004-2006թթ. ուղղվել է տեղեկատվության ազատության մասին նոր օրենքի հիմնական դրույթների ներդրմանը և գերատեսչական

մարմիններում տեղեկատվության մշակումն ու տարածումը ապահովող կառուցվածքային ստորաբաժանումների ստեղծմանն ու կարողությունների զարգացմանը: Վերջին մի քանի տարիներին Հայաստանում դրական տեղաշարժեր են արձանագրվել հանրային մասնակցության զարգացման ուղղությամբ: Հանրային կառավարման գործընթացին հանրության մասնակցությանը նպաստում է կառավարման տարբեր մարմիններին կից մասնագիտական, խորհրդատվական խորհուրդների ստեղծումը, որտեղ ներգրավված են քաղաքացիական հասարակության, մասնավորապես՝ հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչներ: Այս կապակցությամբ, ներկայիս մարտահրավերն է՝ ԱՀՌԾ-ի (ԿԶԾ-ի), հակակոռուպցիոն ծրագրի մշակման գործընթացների արդյունքում կուտակված փորձը տեղայնացնել նախարարությունների, տարածքային կառավարման մարմինների և ՏԻՄ-երի մակարդակներում: Հանրային մասնակցության գործընթացի հաջողության ապահովմանն է ուղղված նաև ՀԿ-ների հզորացումը, ինչպես նաև քաղաքացիական հասարակության և պետական կառավարման մարմինների միջև համագործակցության խթանումը: Գրական նախադեպ է նաև ՀՀ Նախագահի 2005 թվականի մայիսի 13-ի «ՀՀ պետական բյուջեից հատկացվող միջոցները հասարակական կազմակերպություններին որպես դրամաշնորհներ հատկացնելու կարգը հաստատելու մասին» հրամանագիրը, որով հնարավորություններ են ստեղծվում ձևավորելու մասնակցային գործընթացի մշակույթ:

434. ՀՀ պետական կառավարման մարմինների աշխատակազմերում կհիմնադրվեն ծրագրերի կառավարման կառուցվածքային միավորներ, որոնք ռազմավարական ծրագրերի պլանավորման և մոնիթորինգի ինստիտուցիոնալացման շրջանակներում կիրականացնեն նաև ԿԶԾ-ի մոնիթորինգը և գնահատումը՝ ապահովելով մասնակցային մոնիթորինգի հնարավորությունները, որի արդյունքում առավել ամբողջապես կիրագործվեն Կառավարության գործունեության հաշվետվողականության, թափանցիկության և հրապարակայնության սկզբունքները:

435. Տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման ուղղությամբ բարեփոխումները իրականացնելիս հիմք են ընդունվել ապակենտրոնացման և ապահամակենտրոնացման, տեղական ինքնակառավարման ամրապնդման, մարզերի զարգացման բնորոշ առանձնահատկությունները համապետական ռազմավարական ծրագրերում առավել ամբողջապես ընդգրկելու կարևորագույն սկզբունքները:

436. 2002-2006թթ. միջազգային կազմակերպությունների օժանդակությամբ կազմվեցին ՀՀ մի շարք մարզերի տարածքային զարգացման հեռանկարային ծրագրեր (Տավուշ, Գեղարքունիք, Արարատ, Վայոց ձոր, Սյունիք): Ի տարբերություն մյուսների, այս ծրագրերի առանձնահատկություններից է այն, որ դոնոր կազմակերպությունները ապահովեցին նաև ծրագրային դրույթների իրականացումը՝ դրա համար նախատեսելով համապատասխան ֆինանսական ներարկումներ ՀՀ պետական բյուջե: Գեղարքունիքի և Տավուշի մարզային զարգացման համալիր ծրագրերը կազմվեցին՝ հիմք ընդունելով ԱՀՌԾ գերակայությունները, սկզբունքները և կառուցվածքը, հաշվի առնելով մարզերին բնորոշ առանձնահատկությունները: Ծրագրերի կազմման և իրագործման ընթացքում լայնորեն կիրառվեց մասնակցային գործընթացը /հասարակական կազմակերպություններ, համայնքների ներկայացուցիչներ, անկախ փորձագետներ և այլն/, որը տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման զարգացման կարևոր գերակայություններից է: Վերոնշյալ մարզերում ներդրվեց նաև մոնիթորինգի և գնահատման գործընթացը /այդ թվում՝ մասնակցային մոնիթորինգի/, որը ծրագրային կառավարման հիմնարար սկզբունքներից է: Հաշվի առնելով Գեղարքունիքի և Տավուշի մարզերի զարգացման ծրագրերի մշակման և իրականացման արդեն եռամյա փորձը, Կառավարությունը միջոցներ կձեռնարկի այնտեղ ձևավորված ինստիտուցիոնալ համակարգը այլ մարզերում տարածելու համար: Մարզային զարգացման համապարփակ ծրագրերի շրջանակներում մարզերի հասարակության, տեղական ինքնակառավարման

մարմինների, մարզային իշխանությունների և Տարածքային կառավարման նախարարության միջոցով ՀՀ Կառավարության համագործակցությունը հնարավորություն կտա առավել լիարժեք սահմանելու ոլորտային գերակայությունները, ծրագրին համապատասխան ներգրավելու լրացուցիչ ֆինանսական, տեխնիկական և մասնագիտական ռեսուրսներ՝ ինչպես պետական բյուջեից, այնպես էլ միջազգային և դոնոր կազմակերպություններից, ապահովելու իրականացվող միջոցառումների և ծախսվող միջոցների թափանցիկությունը, գնահատելու դրանք մոնիթորինգի համակարգի միջոցով, ինչպես նաև մարզերի հասարակության լայն շրջանակներ ներգրավելու պլանավորման ու իրականացման աշխատանքներում: Ծրագրերի մասնակցային և թափանցիկ բնույթը կապահովվի ինստիտուցիոնալ համակարգի շրջանակներում ձևավորված կառույցների՝ Մարզային խորհուրդների կազմում գործող մարզային զարգացման հանձնաժողովների, ոլորտային աշխատանքային խմբերի և մարզային զարգացման պլանավորման գործընթացներում քաղաքացիական հասարակության մասնակցության կանոնակարգված ու հստակ չափանիշներով օժտված համակարգի (մարզի հասարակական կազմակերպությունների ցանցեր, նրանց ներկայացուցիչների լիազորում մարզային զարգացման հանձնաժողովների և ոլորտային աշխատանքային խմբերի կազմում բնակչության ձայնը և տեսակետները ներկայացնելու ու պաշտպանելու համար) միջոցով, ընդ որում՝ նշյալ կառույցներում ապահովելով մարզային իշխանությունների և քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների հավասարաչափ անդամակցությունը:

437. Հաշվի առնելով մարզերի միջնաժամկետ համալիր զարգացման ծրագրերի փորձը, ինչպես նաև առաջնորդվելով կառավարման ապակենտրոնացման և մարզերի համաչափ զարգացման սկզբունքներով՝ Կառավարությունը մշակել և հաստատել է Տարածքային զարգացման հայեցակարգը, որը ներառում է հետևյալ հիմնարար դրույթները.

Մարզերի զարգացման հիմնական գերակայությունները և ուղղությունները պետք է արտացոլվեն մարզերի զարգացման միջնաժամկետ համալիր ծրագրերում, որոնք կկազմվեն մարզպետարանների և կհաստատվեն ՀՀ Կառավարության կողմից:

Մարզային զարգացման ծրագրերի (ՄՁԾ) հիմնական նպատակը Կառավարության ռազմավարական ծրագրերով նախանշված գերակա զարգացման ուղղությունների ապահովումն է՝ հաշվի առնելով մարզերին բնորոշ առանձնահատկությունները:

ՄՁԾ-ների կազմումը և իրագործումը պետք է ընթանա քաղաքացիական հասարակայնության ակտիվ մասնակցությամբ:

ՄՁԾ-ները պարբերաբար կվերանայվեն՝ կապված, նախ և առաջ, ԿՁԾ-ի և Կառավարության այլ ռազմավարական ծրագրերի վերանայման և ընդունման հետ, ինչպես նաև հիմք ընդունելով ՄՁԾ-ների իրականացման ընթացքում ի հայտ եկած տարբեր հանգամանքները, որոնք կցուցահանվեն մոնիթորինգի և գնահատման գործառույթով:

ՄՁԾ-ների կազմման և իրագործման ընթացքում կբարձրացվի մարզային խորհուրդների դերը, իսկ մարզպետարաններում կստեղծվեն անհրաժեշտ կարողություններ՝ այդ ողջ գործընթացը համակարգելու և կառավարելու համար:

Միասնական մեթոդաբանությամբ կազմված ՄՁԾ ների հիման վրա կհստակեցվեն և կկանխորոշվեն Կառավարության տարածքային քաղաքականության գերակայությունները, որոնք նախ և առաջ ուղղված կլինեն մարդկային և եկամտային աղքատության հաղթահարմանը և մարզերի զարգացման անհամասնությունների նվազեցմանը:

Սոցիալական ենթակառուցվածքներում Կառավարության կողմից իրականացվող կապիտալ ծախսերի տարածքային կառուցվածքը կնպաստակադրվի առաջին հերթին նվազեցնելու մարդկային աղքատության մակարդակը՝ գերակայությունը տալով այս առումով առավել աղքատ մարզերին¹⁵⁷:

Եկամտային աղքատությունը նվազեցնելու և մարզերի տնտեսական զարգացման անհամամասնությունները մեղմելու նպատակով Կառավարությունը.

- § միջոցներ կհատկացնի՝ ուսումնասիրելու համար յուրաքանչյուր մարզի տնտեսական ներուժը,
- § ըստ ամենայնի կնպաստի մարզերում գերակա ոլորտների զարգացման ծրագրերի կազմմանը և այդ ծրագրերի ներքին և արտաքին ներդրողներին և գործարարներին ներկայացմանը,
- § որոշակի ներդրումներ կկատարի մարզային ենթակառուցվածքներում (այդ թվում՝ համագործակցելով մասնավոր հատվածի հետ)՝ նպատակ ունենալով էապես բարելավելու գործարարության զարգացման համար անհրաժեշտ պայմանները,
- § առանձին դեպքերում կիրականացնի ուղղակի և անուղղակի ֆինանսական աջակցություն գործարարներին՝ առավել աղքատ մարզերում և տարածաշրջաններում (մասնավորապես՝ բարձրլեռնային և սահմանամերձ) գործունեություն ծավալելու նպատակով:

438. Վերոնշյալ գերակայությունները և միջոցառումները որոշիչ դեր կունենան միջնաժամկետ ծախսերի ծրագրերի մշակման բարձրագույն խորհրդի կողմից բյուջետային ռեսուրսների փաթեթի հավելաճի բաշխման միջճյուղային և հատկապես տարածքային համամասնությունների որոշման ժամանակ: Ընդհանուր առմամբ, առաջիկա տարիներին մարզերի կողմից միասնական մեթոդաբանությամբ կազմված ծրագրերն ու գերակայությունները, ինչպես նաև Կառավարության տարածքային քաղաքականությունը ավելի էական դեր կունենան հանրապետության զարգացման ռազմավարական ծրագրերի մշակման գործընթացում:

439. Տեղական ինքնակառավարման մարմինների կարողությունների հզորացումը հանրային կառավարման համակարգի կարևորագույն խնդիրներից է: «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ նոր օրենքը բարելավեց և ավելացրեց տեղական իշխանությունների գործառնություններն ու իրավասությունները: Սակայն համայնքներում վարչական կարողությունների ցածր մակարդակն ու վարչական մասնատումը նվազեցնում են տեղական իշխանությունների գործունեության արդյունավետությանը՝ պարտադիր և պատվիրակված նոր լիազորությունները կիրառելիս: Այս առումով կարևորվում է համայնքների խոշորացումը և միջհամայնքային միավորումների ստեղծումը, խոշոր գյուղական համայնքների կառավարման կարողությունների զարգացումը, աշխատատեղերի վերազինումը ժամանակակից համակարգչային տեխնիկայով և կապի միջոցներով:

440. Տեղական ինքնակառավարման ոլորտում անհրաժեշտ բարեփոխումների ուղղություններից են նաև.

¹⁵⁷ Մարդկային աղքատության մակարդակը կզնահատվի ՄՁԾ-ներում միասնական մեթոդաբանությամբ հաշվարկված՝ մարդկային աղքատության ինտեգրացված համաթվի հիման վրա:

Համայնքների պարտադիր լիազորությունների իրականացման վերաբերյալ օրենսդրական ակտերի ընդունումը, որոնցով՝

- § կսահմանվեն պարտադիր լիազորությունների իրականացման կարգերը, նորմատիվները և չափորոշիչները,
- § պարտադիր լիազորությունների իրականացման կարգի և նորմատիվների հիման վրա կհստակեցվեն և կորոշվեն պարտադիր լիազորությունների կատարման համար անհրաժեշտ նվազագույն ֆինանսական միջոցների ծավալները,
- § չափորոշիչների հիման վրա հնարավոր կդառնա պարտադիր լիազորությունների կատարման նկատմամբ ներքին (համայնքի ավագանի, համայնքի բնակչություն) և արտաքին վերահսկողության իրականացումը:

Համայնքներին պետության կողմից պատվիրակված լիազորությունների իրականացման կարգի և ֆինանսավորման մեխանիզմների սահմանումը, որոնք կհստակեցնեն պատվիրակված լիազորությունների իրականացման գործառույթները և պատվիրակված լիազորությունների կատարման համար անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալները: Պարտադիր լիազորությունների իրականացման կարգը սահմանող օրենսդրության ընդունումից հետո հնարավոր կդառնա ՀՀ «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 67-րդ հոդվածի ուժի մեջ մտնելը¹⁵⁸, ինչը «Տեղական ինքնակառավարման Եվրոպական Խարտիայի» հիմնարար դրույթներից է:

441. Կառավարությունը նպատակադրվում է նաև կատարելագործել ֆինանսական համահարթեցման գործող համակարգը այն հաշվով, որ հաշվի առնվի ոչ միայն համայնքի մեկ շնչին բաժին ընկնող եկամտային ունակությունը, այլև ծախսային կարիքները: Արդյունքում ավելի նպատակային կբաշխվեն համահարթեցման գումարները, և ֆինանսական հոսքերն առավելապես կուղղվեն աղքատ համայնքներին:

442. Վերոնշյալ բարեփոխումների արդյունքում ՏԻՄ -երի կողմից կսկսվեն իրականացվել բազմաթիվ՝ ներկայումս չիրականացվող լիազորություններ, զգալիորեն կնվազեն վարչական ծախսերը, կբարձրանան տեղական ինքնակառավարման համակարգի արդյունավետությունը և մատուցվող ծառայությունների մատչելիությունն ու որակը, ինչպես նաև լրացուցիչ նախապայմաններ կստեղծվեն ավագանու ու հասարակության կողմից իրականացվող վերահսկողության համար, կմեծանա իրականացվող լիազորությունների և ֆինանսական միջոցների օգտագործման արդյունավետությունը:

10.1.2. Քաղաքացիական ծառայության ներդրում և զարգացում

443. 2001 թվականից նախարարություններում, տարածքային կառավարման մարմիններում, ինչպես նաև տեղական ինքնակառավարման մարմիններում ներդրվեց քաղաքացիական ծառայությունը, ինչպես նաև համապատասխան մասնագիտական ծառայությունները, որը հնարավորություն տվեց տարանջատելու քաղաքական, հայեցողական և սպասարկող պաշտոնները քաղաքացիական՝ մասնագիտական ծառայողներից, որպես բարձրագույն քաղաքացիական ծառայող ճանաչելով աշխատակազմի ղեկավարներին: «Քաղաքացիական ծառայության մասին» ՀՀ օրենքի

¹⁵⁸ Հոդված 67.

ծա

պահանջներին համապատասխան՝ դասակարգվեցին և նկարագրվեցին քաղաքացիական ծառայության բոլոր պաշտոնները:

444. Քաղաքացիական ծառայության մասին օրենքի և հարակից ենթաօրենսդրական ակտերի ընդունումը դեռևս առաջին քայլերն են մասնագիտական քաղաքացիական ծառայության կայացման ճանապարհին: Մարդկային ռեսուրսների կառավարման տեղեկատվական համակարգը դեռևս չի ձևավորվել և նախարարություններում աշխատակազմերի կառավարման կարողությունները մնում են թույլ: Սա սահմանափակում է քաղաքացիական ծառայության խորհրդին՝ արդյունավետ կիրառելու քաղաքացիական ծառայության մասին օրենքը և խոչընդոտում է մասնագիտական արժանիքների վրա հիմնված քաղաքացիական ծառայության ձևավորմանը: ՀՀ ում քաղաքացիական ծառայության համակարգը վերջին հինգ տարիներին անցնում է զարգացման ակտիվ գործընթաց, կայացման և ներդրման փորձաշրջան: Քաղաքացիական ծառայողների մասնագիտական ունակությունների և գիտելիքների աճին զուգընթաց, իրականացվում է առաջխաղացում՝ համապատասխան ատեստավորման համակարգի միջոցով, ինչպես նաև թափուր տեղերի համար հայտարարվող բաց մրցույթների միջոցով: Այն ենթադրում է վերապատրաստման պարտադիր համակարգ՝ երեք տարին մեկ անգամ: Ըստ պաշտոնների խմբերի և ենթախմբերի՝ ձևավորված է վարձատրության սանդղակ, որը կախվածության մեջ է դրված մասնագիտական ունակություններից և աշխատանքային ստաժից: Այս բոլորի հետ մեկտեղ, դեռևս ամբողջականացված չեն քաղաքացիական ծառայողների սոցիալական պաշտպանվածության՝ կենսաթոշակային, կյանքի և բժշկական ապահովագրության, սոցիալական ապահովության մյուս խնդիրները:

445. Քաղաքացիական ծառայության արդյունավետության բարելավման պետական քաղաքականությունը նպատակաուղղված է նորաստեղծ քաղաքացիական ծառայության հիմնական դրույթների կայացմանը: Մասնավորապես, որպես սկզբնական փուլ է նախանշված քաղաքացիական ծառայության օրենսդրական դաշտի բարելավումը, մրցութային հիմունքներով թափուր պաշտոնների զբաղեցումը, կառավարման մարմիններում անձնակազմի կառավարման ստորաբաժանումների կայացումը: Ծառայության մյուս տեսակների համար համապատասխան օրենսդրության ստեղծումը և այդ համակարգերի կայացումը խնդիր է առաջադրում վերանայելու քաղաքացիական և ընդհանրապես հանրային ծառայության հայեցակարգը: Ներկայումս անհրաժեշտ է ապահովել այդ ծառայությունների միջև ներդաշնակեցումը, ձևավորել կապ՝ ծառայության մեկ տեսակից մյուսին անցնելու համար: Այս իրավիճակը պահանջում է հանրային ծառայության մասին օրենսդրության ստեղծում՝ ապահովելով հանրային ծառայության միասնական սկզբունքներ: Այս ենթատեքստում անհրաժեշտ է ունենալ նաև պետական ծառայության համակարգի ամբողջական նկարագիրը, որտեղ նաև պետք է սահմանվեն քաղաքական և հայեցողական պաշտոնյաներին ներկայացվող պահանջները:

446. Դրա հետ կապված՝ նախատեսվում է ընդունել «Հանրային /պետական/ ծառայությունների մասին» ՀՀ օրենքը, որն այս ոլորտում կամբողջականացնի իրավական դաշտը: Այս կարգավորումը հնարավորություն կտա նաև ունենալու հստակ դասակարգված պաշտոնյաների ցանկ՝ ըստ ծառայության տեսակների և խմբերի, համապատասխան պաշտոնների անվանումներով: Մասնագիտական պաշտոնները կկապվեն կատարվող աշխատանքի բովանդակության հետ, իսկ նրանց անվանումը կհամապատասխանեցվի կատարվող աշխատանքի բնույթին: Վարչական պաշտոնները կտարանջատվեն մասնագիտականից, որը հնարավորություն կտա մշակելու անձնակազմի կառավարման տարբերակված քաղաքականություն:

447. Պետական կառավարման համակարգի բարեփոխումների արդյունավետության, ինչպես նաև հակակոռուպցիոն ռազմավարության հաջող իրագործման համատեքստում կարևորագույն դեր ունի պետական ծառայողների վարձատրության և խրախուսման

համակարգը: Ներկայումս քաղաքացիական ծառայողների աշխատավարձը մասնավոր հատվածի համեմատ անմրցունակ է, որը հանգեցնում է բարձր որակավորման մասնագետների արտահոսքին դեպի մասնավոր ոլորտ: Քաղաքացիական ծառայողների աշխատավարձի համակարգն ու մակարդակը չեն նպաստում որակյալ աշխատակազմի պահպանմանը, չնայած աշխատավարձերի մակարդակի որոշակի բարձրացմանը: Հաշվի առնելով այս հանգամանքը՝ Կայուն զարգացման ծրագրի ողջ ժամանակահատվածում պետական ծառայողների պաշտոնական դրույքաչափերը կբարձրացվեն տնտեսության միջին աշխատավարձի աճի համեմատ ավելի առաջանցիկ տեմպերով (տե՛ս Աղյուսակ 10.4):

Աղյուսակ 10.4. Պետական կառավարման համակարգի աշխատողների միջին ամսական աշխատավարձերը 2007-2021թթ. (հազ. դրամ)

Ցուցանիշներ	2007	2008	2009	2010	2011	2012	2015	2018	2021
Պետական կառավարման մարմինների աշխատողներ, այդ թվում՝	114.9	127.5	144.0	162.8	184.0	207.8	300.0	432.8	624.5
Քաղաքացիական ծառայողներ	104.9	127.9	144.5	163.3	184.5	208.5	300.1	434.1	626.5

448. Դրա հետ մեկտեղ, կարևոր նշանակություն ունի նաև պետական ծառայողների համար որոշակի սոցիալական երաշխիքների ապահովումը: Այդ նպատակով առաջիկա տարիներին կմշակվեն և կներդրվեն պետական ծառայողների բժշկական և կենսաբոլորակային ապահովագրության մասին համապատասխան օրենքները:

449. Քաղաքացիական ծառայության արդյունավետության բարելավման մյուս կարևոր ուղղությունը քաղաքացիական ծառայողների էթիկայի կանոնների ներդրումն է: Ներկայումս քաղաքացիական խորհրդի կողմից հաստատված քաղաքացիական ծառայողների էթիկայի կանոնները կկատարելագործվեն և կհամապատասխանեցվեն Եվրոպական Միության պետական ծառայության էթիկայի միասնականացված կանոններին:

450. Քաղաքացիական ծառայության համակարգի կայացման մյուս ուղղությունը քաղաքացիական ծառայողների վերապատրաստման համակարգի ստեղծումն է: Չնայած քաղաքացիական ծառայողների վերապատրաստման նոր ծրագրերի ու ներուժի առկայությանը՝ դեռևս իրականացվում է վերապատրաստման պասիվ քաղաքականություն: Վերապատրաստման նոր հայեցակարգի ընդունումը, վերապատրաստման ազատականացումը, վարչական կանոնակարգումներից ձերբազատումը հնարավորություն կընձեռեն քաղաքացիական ծառայությունը հագեցնելու բանիմաց կադրերով և շահագրգռելու անձնակազմերին՝ ստանալու մասնագիտական վերապատրաստման հնարավորություն:

451. Քաղաքացիական ծառայության համակարգում ատեստավորման համակարգը, ինչպես նշվեց, ոչնչով չի տարբերվում համակարգ մուտք գործելու գործընթացից: Մա չի խրախուսում քաղաքացիական ծառայողներին՝ մոբիլիզացնելու ուժերը տրված հանձնարարականների կատարման համար: Բացակայում է ուղղակի կապը քաղաքացիական ծառայողների աշխատանքային պարտականությունների, պաշտոնի անձնագրերի և նյութական ու բարոյական խրախուսման միջև: Այս հանգամանքը ուղղակիորեն պայմանավորված է աշխատանքի կատարողականի գնահատման համակարգի բացակայությամբ, որի ներդրումը հնարավորություն կտա աշխատանքի արդյունքները կապելու վարձատրության և խրախուսման համակարգերի հետ:

452. Ընդհանուր առմամբ, վերը նշված խնդիրները հավասարապես վերաբերում են նաև պետական ծառայության մյուս տեսակներին /հարկային, մաքսային, դիվանագիտական, ոստիկանական, համայնքային ծառայություն և այլն/, քանի որ դրանք իրենց գործունեությունը կանոնակարգում են քաղաքացիական ծառայության հիմնական սկզբունքներով:

10.1.3. Ֆինանսական կառավարման համակարգի բարեփոխումներ

453. ՀՀ Կառավարության կողմից 2002-2006 թթ. էական բարեփոխումներ իրականացվեցին պետական ֆինանսների կառավարման համակարգում: Դրանցից ամենանշանակալիցը անցումն էր պետական ծախսերի միջնաժամկետ ծրագրմանը: Սկսած 2003թ.՝ միջնաժամկետ ծախսերի ծրագիրը /ՄԺԾԾ/ օրենսդրորեն ամրագրվեց որպես բյուջետային գործընթացի անբաժանելի մաս: Դա հնարավորություն ընձեռեց ավելի կանխատեսելի և իրատեսական դարձնելու Կառավարության միջնաժամկետ ռազմավարական ծրագրերը՝ դրանց ամրագրելով կոնկրետ ֆինանսական ռեսուրսներ: Մեծացան նաև ճյուղային նախարարությունների և գերատեսչությունների կարողությունները և ինքնուրույնությունը՝ միջին ժամկետ ժամանակահատվածում ռազմավարական ծրագրեր կազմելու և իրագործելու առումով: ՄԺԾԾ-ն, արտացոլելով ԱՀՌԾ հիմնական սկզբունքներն ու գերակայությունները, հանդիսացավ դրա իրականացման ֆինանսական ապահովման հիմնական աղբյուրը՝ մի կողմից էապես բարձրացնելով ԱՀՌԾ իրագործման իրատեսականությունը, իսկ մյուս կողմից՝ ապահովելով Կառավարության երկարաժամկետ և միջնաժամկետ ռազմավարական ծրագրերի համապատասխանությունը:

454. Պետական ֆինանսների կառավարման համակարգի բարեփոխումների մյուս կարևոր ուղղությունն առնչվում է ըստ արդյունքների կամ ծրագրային բյուջետավորման համակարգի ներդրման գործընթացին: Այս ուղղությամբ 2004-2006թթ. իրականացվեցին առաջին քայլերը, որոնք հանգեցրին հետևյալ արդյունքներին.

- § առաջին չորս ընտրված նախարարությունների (Կրթության և գիտության, Առողջապահության, Աշխատանքի և սոցիալական հարցերի, Մշակույթի) բյուջեները, ինչպես նաև միջնաժամկետ ծախսերի ծրագրի հայտերը ներկայացվում են նոր, ծրագրային բյուջետավորման ձևաչափով,
- § նշված նախարարությունների ներքին և արտաքին հաշվետվությունները նույնպես ներկայացվում են նոր ձևաչափով, որը մասնավորապես համադրում է նրանց գործունեության արդյունքների ֆինանսական և ոչ ֆինանսական ցուցանիշները,
- § այս նախարարություններում արմատավորվեցին ծրագրային բյուջետավորման սկզբունքներով բյուջեների կազմման և կատարման անհրաժեշտ կարողություններ,
- § վերոնշյալ գործընթացը 2007թ. ընդգրկեց նաև լրացուցիչ տասը նախարարություններ և գերատեսչություններ, իսկ 2008 թ.՝ ներառեց բոլոր մնացած նախարարություններն և գերատեսչությունները,
- § ՀՀ Կառավարությունը կավարտի ամբողջական անցումը ծրագրային բյուջետավորման սկզբունքներով ՀՀ պետական բյուջեի կազմմանը և կատարմանը 2010-2011թթ., որը հնարավորություն կտա առավել նպատակային և հասցեագրված դարձնելու բյուջետային հատկացումները, բարձրացնելու ֆինանսական միջոցների ծախսման արդյունավետությունը՝ մասնավորապես ավելացնելով նաև ճյուղային նախարարությունների ինքնուրույնությունն ու ճկունությունը՝ օրենքով իրենց վերապահված բյուջեի կատարման ընթացքում: Այդ նպատակին հասնելու համար առաջիկա տարիներին առանձնահատուկ ուշադրություն կդարձվի ծրագրերի արդյունքային ցուցանիշների համակարգի ներդրմանը, ինչպես նաև նախարարություններում և գերատեսչություններում մոնիթորինգի, գնահատման և ներքին աուդիտի գործառնությունների արմատավորմանը: Բյուջետավորման առաջավոր մեթոդները կներդրվեն նաև համայնքային մակարդակում (ծրագրային բյուջետավորում կամ բյուջետավորում ըստ արդյունքների):

455. 2005թ. ընդունված Սահմանադրությամբ էլ ավելի բարձրացվեց ՀՀ Վերահսկիչ պալատի՝ որպես աուդիտ և վերահսկողություն իրականացնող մարմնի ինքնուրույնությունը և

անկախությունը: Դրա հետ կապված անհրաժեշտ փոփոխություններ են ամրագրվել ՀՀ Վերահսկիչ պալատի մասին նոր օրենքում: Այս առումով, լրացուցիչ կհստակեցվի նաև ներքին և արտաքին աուդիտի, մասնավորապես՝ ՀՀ Վերահսկիչ պալատի, ՀՀ նախագահի և ՀՀ վարչապետի վերահսկողական ծառայությունների գործառույթների տարանջատումը:

456. 2007 թվականի ընթացքում ՀՀ Կառավարությունը, Համաշխարհային բանկի աջակցությամբ, մշակել է «Ներքին աուդիտի մասին» ՀՀ օրենքի նախագիծը, որը նախատեսվում է ՀՀ ԱԺ-ում քննարկել և հաստատել 2008 թվականի ընթացքում: Օրենքը ուժի մեջ կմտնի 2009 թվականի հունվարից, իսկ մինչ այդ ՀՀ Կառավարությունը, Համաշխարհային բանկի աջակցությամբ, իրականացնելու է հետևյալ միջոցառումները՝

§ **Ներքին աուդիտի չափորոշիչների (ստանդարտների) մշակում:** Հանրային հատվածի ներքին աուդիտի ստանդարտների/չափորոշիչների հստակեցում և մշակում՝ ներառյալ համակողմանի մասնագիտական գործունեության շրջանակը, վարքագծի կանոնները, որոնք կհիմնվեն համապատասխան միջազգային ստանդարտների վրա:

§ **Ներքին աուդիտի ձեռնարկի մշակում՝** ներառյալ գործընթացի համար անհրաժեշտ օրինակելի փաստաթղթերը (աուդիտի պլան, նմուշ-օրինակ աշխատանքային փաստաթղթեր, զեկույցների ձևաչափերի նմուշ-օրինակներ և այլն):

§ **Ներքին աուդիտորների վերապատրաստման, ուսուցման և սերտիֆիկացման (հավաստագրման) ծրագրերի մշակում,** ինչպես նաև սերտիֆիկացման քննաթերթիկների պատրաստում: Ձեռնարկը պետք է մշակվի՝ հիմք ընդունելով Համաշխարհային բանկի աջակցությամբ մշակված «Հանրային ֆինանսների կառավարման համակարգի մասնագետների ուսուցման, շարունակական վերապատրաստման և որակավորման համակարգի ներդրման ռազմավարությունը», որը ՀՀ Կառավարության կողմից կհաստատվի 2008 թվականին:

457. ՀՀ զանձապետական համակարգում 2003-2006թթ. սկսվեցին երկրորդ սերնդի բարեփոխումները, որոնց կարևորագույն նպատակն է հանրային հատվածում դեռևս խորհրդային ժամանակներից գործող հաշվապահական հաշվառման համակարգը վերափոխել հանրային հատվածի հաշվապահական հաշվառման միջազգային չափանիշներին համապատասխանող համակարգի, որը պետք է համահունչ և համադրելի լինի Արժույթի միջազգային հիմնադրամի կողմից հաստատված՝ Պետական ֆինանսների վիճակագրության (GFS-2001) և ՀՀ մասնավոր հատվածում ներդրված հաշվապահական հաշվառման ստանդարտներին: Այս տարիներին Կառավարության կողմից հաստատվել է ՀՀ հանրային հատվածի հաշվապահական հաշվառման համակարգի և զանձապետական համակարգի երկրորդ սերնդի բարեփոխումների ծրագիրը (2003թ.), մշակվել և հաստատվել են ՀՀ բյուջետային և հաշվապահական հաշվառման նոր դասակարգումները և դրանց կիրառման ցուցումները, ֆինանսական հաշվետվությունների ստանդարտների ներդրման գործողությունների ծրագիրը, ինչպես նաև բացահայտվել են ՀՀ համախմբված հաշվետվություններում ներառման ենթակա՝ ՀՀ Կառավարության միավորները (ներառյալ պետական ոչ առևտրային կազմակերպությունները և պետական մասնակցությամբ կազմակերպությունները): Կազմակերպվել և իրականացվել են բազմաթիվ ուսումնական ծրագրեր, որոնց արդյունքում պետական բյուջետային հիմնարկներում և համայնքներում ստեղծվել են անհրաժեշտ կարողություններ՝ կազմելու և կատարելու 2008թ. իրենց բյուջեները նոր դասակարգումներին համապատասխան:

458. «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքի ընդունումից հետո, սոցիալական ոլորտի հիմնարկների մի ստվար զանգված վերակազմակերպվեց

պետական ոչ առևտրային կազմակերպությունների: Նշված կազմակերպությունները ներկայումս հանդիսանում են սոցիալական ոլորտում հիմնական ծառայություններ մատուցողները, և վերջիններիս կողմից մատուցվող ծառայությունների որակն էապես ազդում է երկրում աղքատության հաղթահարմանն ուղղված միջոցառումների արդյունավետության վրա: Հաշվի առնելով նշված հանգամանքը՝ ՀՀ Կառավարությունը կարևորում է պետական ոչ առևտրային կազմակերպությունների գործունեության կառավարման արդյունավետության բարձրացումը և, որպես այդ կազմակերպությունների հիմնադիր և հանրային ակտիվների սեփականատեր, անհրաժեշտ քայլեր կձեռնարկի նշված կազմակերպությունների գործունեության հաշվետվողականության բարձրացման և մոնիթորինգի համակարգի ներդրման ուղղությամբ: Բարեփոխումների հիմքում որպես հիմնական գերակայություններ կպահպանվեն պետական ոչ առևտրային կազմակերպությունների ինքնուրույնության և այդ ոլորտներում ազատ մրցակցության ապահովման սկզբունքները:

459. Համաշխարհային բանկի օժանդակությամբ ՀՀ Կառավարությունը սկսել է նաև հաշվեգրման սկզբունքով հանրային հատվածի հաշվապահական հաշվառման միջազգային նորմերի (IPSAS) ընդունման համար համապատասխան իրավական և ինստիտուցիոնալ շրջանակների ստեղծման, ինչպես նաև Կառավարության ֆինանսական կառավարման տեղեկատվական համակարգի նախագծման աշխատանքների իրագործումը: Վերոնշյալ առաջնային ուղղություններով աշխատանքները կավարտվեն 2009-2010թթ.:

460. Չնայած վերջին տարիներին պետական ֆինանսական համակարգում իրականացվող արդյունավետ բարեփոխումներին, այսուհանդերձ որոշ ուղղություններով այդ բարեփոխումներն ընդանում են ավելի արագ տեմպերով քան մնացած ենթաոլորտներում: Այլ խոսքով, այս ոլորտում իրագործվող բարեփոխումների համամասնականության և համակարգվածության բարձրացումը առաջիկա հրատապ և գերակա խնդիրներից է: Նաև այս խնդրի լուծման նպատակով Կառավարությունը մեկ տարվա ընթացքում կմշակի պետական ֆինանսների կառավարման համապարփակ ռազմավարություն և դրա իրագործման համար անհրաժեշտ միջոցառումների համապատասխան ծրագիր:

461. Հարկեր/ՀՆԱ հարաբերակցության բարձրացում: ԱՀՌԾ- ով նախատեսված էր ՀՆԱ-ի նկատմամբ հարկերի և տուրքերի հավաքագրման աճ՝ տարեկան շուրջ 0.5 տոկոսային կետով: Չնայած հարկային և մաքսային վարչարարության զարգացմանն ուղղված մի շարք միջոցառումներին, հարկեր/ՀՆԱ հարաբերակցությունը 2003-2006 թթ. մնաց գրեթե անփոփոխ: Հաշվի առնելով այդ հանգամանքը, ինչպես նաև կարևորելով հարկերի և տուրքերի հավաքագրման աճը, որպես բյուջետային ծախսերի, հետևաբար նաև ԿԶԾ-ի միջոցառումների ֆինանսավորման հիմնական աղբյուր՝ առաջիկա տարիներին Կառավարությունը նպատակադրվել է էապես բարելավել վերոնշյալ ցուցանիշը: Այսպես, արդեն 2008թ. նախատեսվում է հարկեր/ՀՆԱ հարաբերակցությունը բարձրացնել ՀՆԱ-ի նկատմամբ 1.6 տոկոսային կետով, իսկ այնուհետև՝ տարեկան միջին հաշվով 0.3-0.4 տոկոսային կետով՝ ծրագրվող ժամանակահատվածի ողջ ընթացքում:

462. Այդ նպատակին հասնելու համար Կառավարությունը նախատեսում է առաջիկա տարիներին իրականացնել հետևյալ հիմնական բարեփոխումները և միջոցառումները¹⁵⁹.

Խոշոր բիզնեսի ճիշտ, լիարժեք և ժամանակին հարկման ապահովում.

Փոքր բիզնեսի համար արդյունավետ հարկային բեռի սահմանում՝ «փափուկ» հարկային վարչարարության կիրառմամբ.

¹⁵⁹ Տե՛ս ՀՀ Կառավարության «Հայաստանի Հանրապետության հարկային վարչարարության ռազմավարության 2008-2011 թվականների ծրագիրը հաստատելու մասին» 07.08.2008 թ. թիվ 941-Ն որոշում:

Հարկային պարտավորությունների կամավոր կատարման (ինքնագնահատման) համակարգի ներդրում և զարգացում.

Հարկային ստուգումների նոր քաղաքականության որդեգրում.

Հարկային վարչարարությանը վերաբերող օրենսդրության կատարելագործում, այդ թվում՝ հարկային օրենսդրության դրույթների պարզեցում, հստակեցում և միասնական հարկային համակարգի ապահովում.

Գյուղատնտեսության ոլորտը ԱԱՀ-ով հարկելու մեխանիզմների մշակում և ներդրում:

463. Հարկեր/ՀՆԱ հարաբերակցության աճի ապահովման և հարկային վարչարարության զարգացման գործընթացում Կառավարությունը կշարունակի նաև հարկային և մաքսային մարմինների արդիականացումը ու կարողությունների հզորացումը հետևյալ հիմնական ուղղություններով.

- § հարկային և մաքսային մարմինների կառուցվածքային բարեփոխումներ և կառավարման արդյունավետության բարձրացում,
- § գույքային և շենքային պայմանների բարելավում,
- § ժամանակակից տեղեկատվական տեխնոլոգիաների համակարգերի ներդրում,
- § մարդկային ռեսուրսների կառավարման արդի ռազմավարության կիրառում,
- § հարկային և մաքսային մարմիններում կոռուպցիայի դրսևորումների հաղթահարում:

10.1.4. ՀՀ կառավարման համակարգի զարգացման նպատակային ցուցանիշները

464. Հաշվի առնելով կառավարման համակարգի ծրագրվող զարգացումները, ինչպես նաև դատական համակարգի բարեփոխումները և հակակոռուպցիոն ռազմավարությունը՝ Կառավարությունը նպատակադրում է ՀՀ կառավարման համակարգը բնութագրող ցուցանիշները՝ 2012 թվականին արդեն իսկ գերազանցել Արևելյան Եվրոպայի և Մերձբալթյան երկրների 2006թ. մակարդակը, իսկ 2021թ.՝ հասնել Արևմտյան Եվրոպայի երկրների կառավարման մակարդակը բնութագրող 2006թ. ցուցանիշներին /տե՛ս Աղյուսակ 10.5/: Ընդ որում, առաջնային նշանակություն կտրվի հատկապես կառավարման գործընթացի հետագա ժողովրդավարացմանը, օրենքի գերիշխանության ապահովմանը և հակակոռուպցիոն միջոցառումներին: Անհրաժեշտ է նշել նաև, որ կառավարման համակարգի բարեփոխումների վերոնշյալ քաղաքականությունը լիովին համահունչ է ՀՀ եվրոինտեգրման գործընթացի հիմնական սկզբունքներին:

Աղյուսակ 10.5. ՀՀ կառավարման համակարգի ծրագրվող ցուցանիշները (տոկոսային գնահատական, 0-100, 2006 - 2021թթ.)

Ցուցանիշներ	2006 (փաստ.)	2007 (փաստ.)	2010	2012	2015	2018	2021
1.Քաղաքացիական հասարակայնության մասնակցությունը իշխանությունների ձևավորման գործընթացում, խոսքի և մամուլի ազատություն	26.9	30.0	50.0	65.3	72.0	80.1	90.6
2.Քաղաքական կայունություն	35.1	42.3	51.2	56.6	62.0	69.0	76.4
3.Կառավարության արդյունավետություն	51.2	46.4	58.1	63.1	71.5	81.6	90.0
4.Կառավարության կարգավորման գործառույթի որակ	59.0	60.2	67.8	71.7	77.0	81.4	89.6
5.Օրենքի գերիշխանություն	38.1	40.5	45.1	51.3	63.4	78.7	90.0
6.Կոռուպցիայի վերահսկելիություն	35.0	30.0	47.1	55.3	68.9	79.3	90.2

10.2. Դատաիրավական համակարգի բարեփոխումներ

465. 2003-2006 թթ. շարունակվեցին ԱՀՌԾ-ով նախանշված առավել արդյունավետ և մատչելի դատական համակարգի ձևավորմանն ուղղված բարեփոխումները, որոնց հիմնական նպատակն էր արդարադատության համակարգի իրավական և սոցիալական երաշխիքների ապահովումը, արդարադատության մատչելիությունը և այդ ոլորտում մարդու իրավունքների ու հիմնարար ազատությունների պաշտպանության, ինչպես նաև իրավակիրառական պրակտիկայի արդյունավետության բարձրացումը:

466. Եվրոպայի Խորհրդին Հայաստանի Հանրապետության անդամակցության պահանջների բաղկացուցիչն էր սահմանադրական բարեփոխումների անցկացումը, որոնք, ի թիվս այլոց, կոչված էին ապահովելու անկախ և արդյունավետ գործող դատական համակարգի առկայությունը երկրում: 2005թ. հանրաքվեով ընդունված սահմանադրական բարեփոխումները ամրագրեցին դատավորների ընդհանուր ժողովի՝ որպես դատական իշխանության ինքնակառավարման բարձրագույն մարմնի ստեղծումը, ինչպես նաև արդարադատության խորհրդի կազմավորման նոր ընթացակարգերը, որոնք բացառեցին դրանում գործադիր իշխանության նեկայացուցչությունը և զգալիորեն նվազեցրին ազդեցությունը դատական պաշտոններում նշանակումներ կատարելիս և կարգապահական պատասխանատվության վարույթներ հարուցելիս:

467. Հստակեցվեց նաև Վճռաբեկ դատարանի կարգավիճակը, որը հռչակվեց որպես

կիրառությունը:

468. Այս զարգացումներին հետամուտ լինելով՝ ՀՀ Կառավարությունը ձեռնամուխ եղավ դատաիրավական բարեփոխումների երկրորդ փուլին, որի հայեցակարգը հիմնված է դատական իշխանության անկախության բարձրացման, դատական իշխանության ինքնավարության և ինքնակառավարման սկզբունքների ներդրման, դատական իշխանության ֆինանսական անկախության, բուն դատական գործունեության և դատարանների կառավարման /վարչարարության/ գործառույթների տարանջատման սկզբունքների վրա: Դատաիրավական բարեփոխումների նման հայեցակարգը բխում էր նաև ԵՄ-Հայաստան ԵՀԶ գործողությունների ծրագրի պահանջներից:

469. 2006թ. հուլիսին Ազգային ժողովը ընդունեց դատաիրավական բարեփոխումների 2-րդ փուլի օրենսդրական նախաձեռնությունների առաջին փաթեթը: Այն մասնավորապես ընդգրկում էր «Դատական ծառայության մասին» ՀՀ օրենքը, որը նախատեսում էր ամբողջ համակարգի կառավարման և վարչարարության գործառույթների փոխանցում նոր ստեղծվող դատական դեպարտամենտին:

470. Դատական համակարգի բարեփոխումներն ամբողջացնող համալիր ակտը ԱԺ կողմից 2007թ. փետրվարի 22-ին ընդունված ՀՀ դատական օրենսգիրքն է, որն արտացոլում է վերոհիշյալ հայեցակարգային դրույթները, ոլորտին վերաբերող բազմաթիվ միջազգային համաձայնագրերի պահանջները, սահմանում է դատական իշխանության ինքնակառավարման մարմինները, հստակեցնում է արդարադատության խորհրդի լիազորությունների շրջանակը, նախատեսում է առանձին վարչական դատարանների, առաջին ատյանի մասնագիտացված քրեական և քաղաքացիական դատարանների, դատական կարգադրիչների ծառայության ստեղծումը, կարգավորում է դատական մարմինների կադրային քաղաքականության հարցերը, ամրագրում է դատավորի վարքագծի հիմնական կանոնները, դատավորներին կարգապահական պատասխանատվության ենթարկելու ընթացակարգերը: Նախատեսում է նաև ստեղծել դատական դպրոց՝ դատական

համակարգը որակյալ մասնագետներով համալրելու և դատավորների շարունակական վերապատրաստման գործառույթները իրականացնելու համար:

471. 2007 թվականի փետրվարի 22-ին ընդունված Դատական օրենսգիրքը նախատեսում է առաջին ատյանի դատարանների նոր համակարգ, որը, բացի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարաններից, ընդգրկում է առաջին ատյանի մասնագիտացված դատարանները, այն է՝ վարչական, քաղաքացիական և քրեական դատարանները, որոնք արդեն իսկ ստեղծվել են 2007թ. ընթացքում: Վարչական դատարանի հիմնադրման անհրաժեշտությունը բխում էր նաև ԵՄ - Հայաստան Եվրոպական հարևանության քաղաքականության գործողությունների ծրագրից (Առաջնային ոլորտ 1, կետ 8):

472. Հայաստանի Հանրապետության բարեփոխված Սահմանադրության, Դատական օրենսգրքի, «Դատախազության մասին» օրենքի դրույթների պահանջներին համապատասխան մշակվեցին քրեական դատավարության, քաղաքացիական դատավարության և վարչական դատավարության նոր օրենսգրքերը:

473. Դեռևս սահմանադրական բարեփոխումների շրջանակում իրականացվեց նաև Սահմանադրական դատարանի հետ կապված սահմանադրական դրույթների վերանայում, Սահմանադրական դատարան դիմելու իրավունք ունեցող անձանց և Սահմանադրական դատարանի կողմից լուծվող վեճերի շրջանակի արմատական ընդլայնում: Սահմանադրական դրույթների հետագա մանրամասնեցման նպատակով մշակվեց և 2006-ին ՀՀ ԱԺ կողմից ընդունվեց «Սահմանադրական դատարանի մասին»

ՀՀ օրենքը:

474. Դատական համակարգի բարեփոխումների շրջանակներում մշակված հաջորդ կարևոր իրավական ակտը «Դատախազության մասին» ՀՀ օրենքն էր, որը Ազգային ժողովի կողմից ընդունվեց 2007թ. փետրվարի 22-ին: Օրենքը, միջազգային մի շարք փաստաթղթերի պահանջներին և զարգացած երկրներում դատախազության կազմակերպման և գործունեության արդի մոտեցումներին համապատասխան, ներդրեց նոր հայեցակարգ, որով վերացվեց դատախազության համակարգում կենտրոնացվածությունը, արգելվեց դատախազության կողմից գործով քննության իրականացումը՝ դատախազությանը վերապահելով միայն հետաքննության և նախաքննության օրինականության նկատմամբ հսկողությունը, ներդրվեց սկզբունք, համաձայն որի՝ միևնույն դատախազն է պատասխանատու լինելու քրեական գործով վարույթի համար՝ դրա հարուցման սկզբից մինչև դատաքննության ավարտը: Օրենքի կարևոր ձեռքբերում էր նաև այն, որ սահմանվեց համամասնություն՝ դատախազի և դատավորի աշխատավարձի պաշտոնային դրույքաչափի միջև: Միաժամանակ, սահմանվեցին մի շարք դրույթներ, որոնք բացառեցին դատախազության որևէ միջամտությունը մասնավոր հատվածին, առանց ահազանգերի ծրագրված ստուգումներ կատարելը և այլն: Բացի այդ, կոռուպցիոն դրսևորումները նվազագույնի հասցնելու նպատակով ամրագրվեցին դատախազների գործունեության որոշակի սահմանափակումներ, ներդրվեց նշանակումների մրցութային կարգ և պաշտոնային առաջխաղացման առավել երաշխավորված համակարգ:

475. ուն ստանալու սահմանադրական իրավունքի երաշխավորման նպատակով մշակվեց և 2004 թվականի դեկտեմբերի 14-ին ԱԺ կողմից ընդունվեց «Փաստաբանության մասին» օրենքը, որով նախատեսվեց պետության կողմից և

տրամադրելու նպատակով՝ օրենքով ներդրվեց հանրային պաշտպանի ինստիտուտը: Նշված պաշտպանների գործունեությունը խրախուսելու և անհրաժեշտ մասնագետներով համալրելու նպատակով վերջիններիս վարձատրությունը հավասարեցվել է դատախազների վարձատրությանը:

476. Հայաստանի Հանրապետության դատական օրենսգրքի շրջանակներում իրագործվեց դատական ակտերի հրապարակման պահանջը՝ սահմանելով, որ դատական իշխանությունն ունի պաշտոնական ինտերնետային կայք, իսկ Վճռաբեկ դատարանի կարևորագույն դատական ակտերի համար նախատեսվեց պարտադիր հրապարակում ինչպես «Հայաստանի Հանրապետության պաշտոնական տեղեկագրում», այնպես էլ Հայաստանի Հանրապետության դատական իշխանության պաշտոնական ինտերնետային կայքում: Միևնույն ժամանակ, այլ ատյանների դատական ակտերի՝ Հայաստանի Հանրապետության դատական իշխանության պաշտոնական ինտերնետային կայքում հրապարակման կարգը սահմանելու է Դատարանների նախագահների խորհուրդը:

477. Արդարադատության առավել արդյունավետ իրականացման նպատակով մշակվեցին -ին ԱԺ կողմից ընդունվեցին «Քաղաքացիական դատավարության օրենսգրքում փոփոխություն կատարելու մասին», «Փաստաբանության մասին ՀՀ օրենքում փոփոխություն կատարելու մասին», «Դատարանակազմության մասին ՀՀ օրենքում փոփոխություն կատարելու մասին» օրենքները, որոնցով վերացվեց հատուկ արտոնագիր ունեցող փաստաբանների ինստիտուտը՝ օրինական ուժի մեջ մտած դատական ակտի՝ վճռաբեկության կարգով բողոքարկման համար:

478. -ին ընդունվեցին «Քրեական դատավարության օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին», «Քաղաքացիական դատավարության օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքները, որոնցով սահմանվեցին վճռաբեկ բողոքարկման ժամկետները, դատարանի կողմից բողոքը վարույթ ընդունելու հիմքերը, դատական ակտերի վերանայման արդյունքում Վճռաբեկ դատարանի կողմից կայացվող որոշումները, սահմանվեց, որ Վճռաբեկ դատարանի որոշումը պետք է լինի պատճառաբանված, ապահովի

479. Արդարադատության առավել արդյունավետ իրականացմանը նպաստելու համար 2007թ. փետրվարի 22-ին Ազգային ժողովի կողմից ընդունվեց նաև «Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքը, որով կարգավորվեցին կրկին դատապարտման և պատժի անթույլատրելիության, առանձին հանցատեսակներով կասկածյալի /մեղադրյալի/ կամ ամբաստանյալի հետ տուժողի հաշտվելու դեպքում գործի վարույթի կարճման, դատական քննության արագացված կարգ կիրառելու հետ կապված հարցերը:

480. 2005թ. ընթացքում դատարաններում դատական նիստի արձանագրության վարման համակարգչային եղանակների ներդրման հետ կապված՝ մշակվեցին և ԱԺ կողմից ընդունվեցին «Քաղաքացիական դատավարության օրենսգրքում փոփոխություն կատարելու մասին» և «Քրեական դատավարության օրենսգրքում փոփոխություններ կատարելու

համակարգի շահագործման, տվյալների արխիվացման և համակարգի պահպանության կարգը:

481. Դատական վարչարարության ժամանակակից համակարգ ներդնելու նպատակով

ընկերության կողմից իրականացվող խորհրդատվական ծրագիրը՝ Երևան քաղաքի երեք դատարաններում դատական գործերի հոսքերի և դատական վարչարարության բարելավման համար: 2005թ. երկրորդ կիսամյակից սկսվել են դատական համակարգի կառավարման, գործերի հոսքերի ավտոմատացման նպատակով համակարգչային ծրագրի մշակման աշխատանքները:

482. Անձի դատական պաշտպանության արդյունավետության բարձրացման շրջանակներում ԱՀՌԾ-ով կարևորվել է փորձագիտական կենտրոնների նյութատեխնիկական ու կադրային պատշաճ մակարդակի, նրանց սոցիալական ապահովության վիճակի բարելավման և ծառայությունների մատչելիության ապահովումը: Այս միջոցառումները չեն իրականացվել ֆինանսական միջոցների բացակայության պատճառով:

483. Միջազգային չափանիշներին համապատասխանող վեճերի այլընտրանքային լուծման մեխանիզմներ ներդնելու համար մշակվել է «Առևտրային արբիտրաժի մասին» ՀՀ օրենքը, որն ընդունվել է Ազգային ժողովի կողմից 2006 թվականի դեկտեմբերի 25-ին: Օրենքը բխում է նաև ԵՄ-Հայաստան ԵՀԶ գործողությունների ծրագրի Առաջնային ոլորտ 5-ի պահանջներից և հիմնվում է ՄԱԿ-ի ՅՈՒՆԻՍԲԱՄԻ մոդելային օրենքի դրույթների և սկզբունքների վրա:

484. դթահարման համար
ԱՀՌԾ-

փորձաքննության գործընթաց (անկախ Կառավարության լիազորած մարմնից), որի արդյունքում փորձաքննության կենթարկվեն թե՛ գործող և թե՛ ընդունվելիք իրավական ակտերը: Հարցը կարգավորված է «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքով, որի 31-րդ հոդվածի 8-րդ կետը նախատեսում է համապատասխան նախագիծն իրավական ակտերին

ֆիզիկական անձանց կողմից եզրակացություններ տալու (այդ թվում՝ նաև փորձագիտական) հնարավորություն՝ անկախ իրավական ակտերի նախագծերի պետական իրավական փորձաքննությունից:

485. Աղքատության հաղթահարման գերակայությունների շրջանակում կարևորվում է որոշումների կայացման գործընթացներում **մեծացումը՝** ընդգծելով բնակչության իրազեկման և տեղեկացվածության նշանակությունը,

օրենսդրական ակտերի իրավական փորձաքննության, ինչպես նաև օրենքների նախագծերի մշակման ընթացքում:

486. ՀՀ գործադիր իշխանության մարմինների նկատմամբ հասարակական վերահսկողության ընթացակարգերի զարգացման, հասարակության լայն խավերի հետ արդյունավետ համագործակցության ապահովման նպատակով՝ ժամանակակից տեղեկատվական տեխնոլոգիաների, մասնավորապես՝ էլեկտրոնային կառավարման համակարգերի օգտագործմամբ բնակչության հետ համագործակցության ընդլայնման աշխատանքներ են կատարվում «Դատաիրավական բարեփոխումներ» վարկային ծրագրի շրջանակներում: Մասնավորապես, 2005թ. դեկտեմբերից շահագործման է հանձնվել ՀՀ օրենսդրական բազայի տեղեկատվական որոնողական «Արլիս» համակարգը _____ հասցեներով և ծրագրային լազերային սկավառակներ թողարկելու եղանակով, ինչպես նաև ՀՀ արդարադատության նախարարության ինտերնետային կայքը (_____ հասցեով):

487. Հանրության շրջանում օրենսդրական ակտերի և նախագծերի մատչելիության բարձրացման, դրանց վերաբերյալ առաջարկությունների ստացման համար հետադարձ կապի ապահովման նպատակով՝ 2005 թվականից առավել կարևոր օրինագծերը հանրային քննարկման են դրվում արդարադատության նախարարության ինտերնետային կայք էջում: Ստացված բոլոր կարծիքները քննարկվում և նույնպես տեղադրվում են կայքում: Շարունակվում են այս միջոցառումների շրջանակը ընդլայնելու աշխատանքները՝ ՀՀ գործադիր իշխանության մարմինների և հասարակության լայն խավերի հետ արդյունավետ

համագործակցության ապահովման նպատակով: Բնակչության իրավական իրազեկման և տեղեկացվածության մեծացման նպատակով 2005-2006թթ. ընթացքում պատվիրվել են «Իմ իրավունքը» հաղորդաշարի հեռուստահաղորդումները և այդ հաղորդումները հեռարձակվել են ՀՀ հանրային հեռուստատեսությամբ:

10.2.1. Դատաիրավական համակարգի ռազմավարական բարեփոխումների իրականացման հիմնական ուղղությունները

488. **Անվճար իրավաբանական օգնության կառուցակարգերի հետագա ընդլայնում:** 2006 թվականին Հայաստանի Հանրապետությունում սկսեց գործել հանրային պաշտպանի ինստիտուտը, ընդ որում՝ կատարված օրենսդրական փոփոխությունների արդյունքում անվճար իրավաբանական օգնություն տրամադրվում է ինչպես քրեական գործերով, այնպես էլ որոշակի կատեգորիայի քաղաքացիական գործերով, մասնավորապես՝ ալիմենտի

վերաբերյալ գործերով: Պետության կողմից ֆինանսավորվող անկախ փաստաբանների կողմից անվճար իրավաբանական օգնության տրամադրման տիրույթը նախատեսվում է ընդլայնել՝ հաշվի առնելով բնակչության՝ սոցիալապես խոցելի խավերի կարիքները: Այսպիսով, եթե առաջին փուլում անվճար իրավաբանական օգնությունը նախատեսվեց որոշակի կատեգորիայի քաղաքացիական գործերով, ապա երկրորդ փուլում նախատեսվում է դրա ընդլայնումը որոշակի կատեգորիայի սուբյեկտների համար: Նախատեսվում է հնարավորինս պարզեցնել անվճար իրավաբանական օգնություն ստանալու իրավունք ձեռք բերելու համար անհրաժեշտ փաստաթղթային հիմքերի շրջանակը: Անվճար իրավաբանական օգնության կառուցակարգերի բարելավման խնդիրը որպես առաջնայնություն է դիտվում նաև ԵՄ - Հայաստան Եվրոպական հարևանության քաղաքականության գործողությունների ծրագրում (Առաջնային ոլորտ 1, կետ 7), որտեղ մասնավորապես շեշտվում է, որ անհրաժեշտ է բարելավել իրավական և, մասնավորապես, անվճար իրավական օգնության համակարգը՝ կատարելագործելով և ամրապնդելով փաստաբանների համակարգը: 2008 թվականին կմեկնարկի Եվրոպական Հանձնաժողովի կողմից ֆինանսավորվող՝ «Արդարադատության մատչելիությունը» համապատասխան ծրագիրը, որի շրջանակներում օժանդակություն կցուցաբերվի «Փաստաբանների միությանը» և «Դատական դպրոցին»:

489. **Դատավորների աշխատավարձերի էական բարձրացում:** Ոլորտին վերաբերող միջազգային փաստաթղթերում անվերապահորեն տեղ է գտել այն մտտեցումը, որ դատական իշխանությանը հատկացվող վարձատրության չափերը պետք է համապատասխանեն դատավորի առաքելությանը: Այսինքն՝ հասարակությունը, մի կողմից, կիրառելով աշխատավարձի բարձրացումը՝ որպես կոռուպցիոն ռիսկի նվազեցման եղանակ, մյուս կողմից, և առաջին հերթին, ցույց է տալիս իր վերաբերմունքը դատավորի պաշտոնի նկատմամբ: Հայտնի է, որ ցանկացած հասարակության մեջ պաշտոնի գնահատականը տալիս է հենց աշխատավարձը: Բարձր աշխատավարձը վկայում է այն մասին, որ հասարակությունը բարձր է գնահատում դատավորի նշանակությունը, և դա հնարավորություն է տալիս դատավորին իրեն ավելի անկախ զգալու տարբեր ճնշումներից:

490. ԵՄ-Հայաստան Եվրոպական հարևանության քաղաքականության գործողությունների ծրագրում նախատեսվում են կոռուպցիայի դեմ պայքարի բազում միջոցներ, որոնց մի մասը (օրինակ՝ դատավորների էթիկայի կանոնների մշակումը և դրանց իրականացման նկատմամբ վերահսկողության կառուցակարգերի ապահովումը) արդեն իսկ կյանքի են կոչվել Դատական օրենսգրքով: Այս փուլում առանձնահատուկ կարևորություն է ներկայացնում ծրագրի 4.1.1. «Կոռուպցիայի դեմ պայքար» բաժնի կետ 7-ով նախատեսված գործողությունը, այն է՝ կոռուպցիան նվազեցնելու համար բարձրացնել դատավորների աշխատավարձը այնպիսի մակարդակի, որը կապահովի արժանապատիվ աշխատանք:

491. Միևնույն ժամանակ, անհրաժեշտ է նշել, որ 2004-2006թթ. դատավորների աշխատանքի վարձատրությանն ուղղված միջոցները շուրջ երկու անգամ զիջում են ԱՀՌԾ-ով նախանշված համապատասխան ցուցանիշներին, իսկ դատական համակարգի ֆինանսավորում /ՀՆԱ ցուցանիշը կատարվել է ընդամենը 60 տոկոսով: Դա հիմնականում բացատրվում է բյուջետային ռեսուրսների փաթեթի՝ ծրագրվածի համեմատ ավելի ցածր հավելաճով, որը գերազանցապես պայմանավորված է հարկային եկամուտներ/ՀՆԱ ցուցանիշի թերակատարմամբ:

492. Հայաստանում բավականին ցածր է նաև պետական բյուջեում դատական համակարգի ընդհանուր ծախսերի տեսակարար կշիռը. 2002-2004թթ. այն չի գերազանցել ընդհանուր ծախսերի 0.5 տոկոսը: Չնայած հետագա տարիներին այս ցուցանիշի հարաբերական բարելավմանը (2007 թվականին այն կազմում է 0.9 տոկոս), այդուհանդերձ, այս կարևոր բնութագրիչով Հայաստանը դեռևս հետ է մնում ԱՊՀ և Արևելյան Եվրոպայի մի շարք երկրներից (տե՛ս Աղյուսակ 10.6):

493. Հայաստանում դատական համակարգի բյուջեի մակարդակը բավականին ցածր է նույն տնտեսական աճի տեմպեր հայտարարագրող և գրեթե նույնատիպ դատական համակարգեր ունեցող մի շարք երկրների դատական բյուջեների մակարդակից: Մասնավորապես, հիշյալ երկրների պետական բյուջեում դատական համակարգի ընդհանուր ծախսերի մակարդակը զգալիորեն գերազանցում է Հայաստանի նույն ցուցանիշը¹⁶⁰:

Աղյուսակ 10.6. Պետական բյուջեում դատական համակարգի ընդհանուր ծախսերի տեսակարար կշիռը ՀՀ-ում և մի շարք այլ պետություններում (2002թ.)

	Երկիր	Պետական բյուջեում դատական համակարգի ընդհանուր ծախսերի տեսակարար կշիռը (%)
1.	Հայաստան	0.4
2.	Բուլղարիա	0.7
3.	Ռուսաստան	0.9
4.	Ռումինիա	1.7
5.	Լիտվա	1.3
6.	Սլովակիա	1.2

494. Հայաստանի դատական համակարգի ընդհանուր ծախսերի ցածր մակարդակի մասին է վկայում նաև մեկ այլ ցուցանիշ՝ մեկ անձին բաժին ընկնող դատական ծախսումների մակարդակը: Ակնհայտ է, որ Հայաստանի ցուցանիշը զգալիորեն զիջում է նմանատիպ երկրների միջին ցուցանիշին: Հատկանշական է, որ այս երկրները դեռ ոչ վաղ անցյալում թե՛ կոռուպցիայի առկայության և թե՛ դատական համակարգի կայացման առումով գտնվում էին գրեթե նույն իրավիճակում, ինչ Հայաստանը ներկայումս: Հիշյալ երկրներում հակակոռուպցիոն ծրագրերի և բարեփոխումների իրագործման հիմքում դրվեց դատական համակարգերի բավարար ֆինանսավորման գաղափարը, որի արդյունքում այս երկրներում դատական համակարգի կայացման փուլը ներկայումս կայուն հիմքերի վրա է:

Աղյուսակ 10.7. Մեկ շնչի հաշվով դատական համակարգի ծախսերը ՀՀ-ում, ԱՊՀ և Արևելյան Եվրոպայի մի շարք պետություններում (2004 թ.)

	Երկիր	Մեկ շնչի հաշվով դատական ծախսումների մակարդակի հարաբերակցությունը 1 շնչի հաշվով ՀՆԱ-ի նկատմամբ
1.	Բուլղարիա	0.0025
2.	Էստոնիա	0.0023
3.	Լատվիա	0.0019

¹⁶⁰ Տե՛ս «Արդարադատության եվրոպական համակարգեր»: Արդարադատության արդյունավետության եվրոպական հանձնաժողով, 2004 թ.:

4.	Լիտվա	0.0021
5.	Ռումինիա	0.0019
6.	Ռուսաստանի Դաշնություն	0.0033
7.	Սլովակիա	0.0024
8.	Չեխիա	0.0028
9.	Հայաստան	0.0008

495. Վերոգրյալ վերլուծությունը ցույց է տալիս, որ Հայաստանի Հանրապետությունում դատավորները վարձատրվում են շատ ավելի քիչ, քան մյուս համանման պետություններում: Դա առավել ակնհայտ է դարձնում դատավորների աշխատավարձի էական բարձրացման անհրաժեշտությունը: Ստորև բերված աղյուսակում ներկայացված է դատաիրավական համակարգի աշխատողների միջին ամսական աշխատավարձերի աճի սցենարը՝ ԿՁԾ-ի ժամանակահատվածում: 2021թ., 2007 թվականի համեմատ, դատական համակարգի միջին ամսական աշխատավարձը կավելանա 5.13, իսկ դատախազության համակարգինը՝ 10 անգամ (տե՛ս Աղյուսակ 10.8): Դատախազության աշխատավարձերի առաջանցիկ աճի տեմպերը պայմանավորված են «Դատախազության մասին» ՀՀ օրենքի՝ դատախազների աշխատավարձը դատավորների աշխատավարձի մակարդակին մոտեցնելու պահանջով, ինչպես նաև այն հանգամանքով, որ դատախազների թվի տեսակարար կշիռը դատախազական համակարգում մոտ 4.3 անգամ ավելի բարձր է, քան դատավորների թվի տեսակարար կշիռը դատական համակարգի աշխատողների ընդհանուր թվում:

Աղյուսակ 10.8. Դատաիրավական համակարգի միջին ամսական աշխատավարձերը 2008-2021 թթ. (հազ. դրամ)¹⁶¹

Ցուցանիշներ	2007	2008	2009	2010	2011	2012	2015	2018	2021
Դատական համակարգ	107.8	114.0	127.7	144.3	163.0	184.2	265.8	383.5	553.4
Դատախազություն	119.9	245.7	277.0	313.2	353.9	400.0	577.0	832.6	1201.4

496. **Ոչ պետական հարկադիր կատարման ծառայության ստեղծում:** Դատական ակտերի հարկադիր կատարման արդյունավետության ապահովման խնդիրը ներկա փուլում լուծվում է ԴԱՀԿ ծառայությանն առնչվող իրավական ակտերը կատարելագործելու, ԴԱՀԿ-ը տեխնիկապես վերազինելու ճանապարհով: Այնուամենայնիվ, տվյալ խնդրի ռազմավարական լուծումը անկախ, պետության կողմից լիցենզավորվող հարկադիր կատարման ծառայությունների ստեղծումն է: Այս մոտեցումն արդեն իսկ ընդունել են մի շարք եվրոպական երկրներ: Անկախ հարկադիր կատարման էությունն այն է, որ մասնավոր սուբյեկտը, լիցենզավորվելով պետության կողմից, օժտվում է դատական ակտի կատարում պահանջելու լիազորություններով: Այս ուղղությամբ պետք է իրականացվեն անկախ լիցենզավորվող հարկադիր կատարման ծառայությունների վերաբերյալ անհրաժեշտ օրենսդրության մշակման և ինստիտուցիոնալ ձևավորման խթանման աշխատանքներ: Միաժամանակ, նշված ինստիտուտի ներդրումն ուղեկցվելու է այդ բնագավառում մարդկանց համար անհարկի նոր ծախսերը բացառելու սկզբունքով: Հարկ է նշել, որ դատական ակտերի հարկադիր կատարման այլընտրանքային ծառայություններ ստեղծելը դատական ակտերի կատարման արդյունավետության բարձրացման կարևոր երաշխիք է դիտարկվում նաև ԵՄ - Հայաստան Եվրոպական հարևանության քաղաքականության գործողությունների ծրագրում (Բաժին 4.1.1, Դատաիրավական համակարգի բարեփոխումներ, կետ 8):

497. **Քրեական, քաղաքացիական և վարչական դատավարություններում փորձագետի կարգավիճակի հստակեցում:** Փորձագետի եզրակացությունը՝ որպես սպաջույց, այսօր նախատեսված է թե՛ քրեական և թե՛ քաղաքացիական դատավարության օրենսգրքերում: Այնուամենայնիվ, փորձագետ ընտրելու, նրան փորձաքննություն հանձնարարելու,

¹⁶¹ Դատավորների միջին ամսական աշխատավարձը գերեզանցում է դատական համակարգի միջին ամսական աշխատավարձը շուրջ 2.7 անգամ, իսկ դատախազներինը՝ դատախազության միջին ամսական աշխատավարձերը գերազանցում է մոտ 1.2 անգամ:

փորձագետի եզրակացությունը որպես ապացույց ներկայացնելու հարցում կողմերին հավասար իրավունքներ վերապահված չեն: Սա հատկապես ցայտուն է դրսևորվում քրեական դատավարությունում: Առաջիկայում նախատեսվում է փորձագետներին առնչվող օրենսդրական կարգավորումների հստակեցում, որն ուղղված կլինի դատավարության երկու կողմերի համար փորձաքննության հավասար հնարավորությունների ապահովմանը: Լուծման ենթակա են մասնավորապես այն հարցերը, թե անհրաժեշտ է արդյոք դատական փորձաքննությանը վերաբերող առանձին օրենքի ընդունումը, քննարկվող դրույթները պե՞տք է արդյոք արտացոլվեն դատավարական օրենսգրքերի՝ ապացույցներին վերաբերող հատվածներում, ինչպիսի՞ իրավունքներ պետք է ունենան կողմերը փորձաքննություն նշանակելիս մինչդատական վարությամբ և դատական քննության փուլում, ինչպե՞ս է ստուգվելու դատական փորձագետի ձեռնահասությունը (կոմպետենտությունը) և այլն:

498. **Քրեական դատավարությունում վկաների ու տուժողների պաշտպանության ինստիտուտի հետագա բարելավում:** 2006թ. մայիսի 5-ին ընդունված «Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով նախատեսվեցին էական նորամուծություններ՝ կապված հիշյալ ոլորտի բարելավման հետ: Մասնավորապես, սահմանվեցին հստակ դատավարական և արտադատավարական միջոցառումներ՝ ուղղված դատավարության մասնակիցների պաշտպանվածությանը: Սակայն այդ խնդիրը դեռևս ամբողջությամբ չի լուծվել, քանի որ օրենսդրությամբ կանոնակարգված չեն հիշյալ միջոցառումների իրականացման ընթացակարգերը վարչաիրավական հարաբերություններում: Նախատեսվում է հիշյալ հարցերի կանոնակարգմանը վերաբերող օրենքի ընդունում:

499. **Քրեական դատավարությունում արագացված դատաքննության ինստիտուտի կատարելագործում:** Քրեական դատավարությունում արագացված դատաքննության հետագա զարգացումը նախատեսվում է տանել այն ուղղությամբ, որ բացառվեն անհարկի քաշքշուկները, դատավարական ժամկետների ձգձգումների միջոցով մարդկանց իրավունքների սահմանափակման ռիսկերը: Բացի այդ, նախատեսվում է գործարքի ինստիտուտ, ինչը նկատելի դատավարական արտոնություններ կնախատեսի այն կասկածյալների համար, որոնք կաջակցեն մինչդատական վարույթ իրականացնող մարմիններին՝ հանցագործությունների բացահայտման գործում:

500. **Առևտրային արբիտրաժի և մեդիացիայի ինստիտուտների զարգացում:** 2006 թվականի դեկտեմբերի 25-ին ընդունվեց «Առևտրային արբիտրաժի մասին» ՀՀ օրենքը, որը միջազգային չափանիշներին համապատասխանող օրենսդրական հենք ձևավորեց Հայաստանում արբիտրաժային գործընթացի իրականացման համար: Այնուամենայնիվ, առաջնահերթ խնդիր է արբիտրաժի ինստիտուտի զարգացումը: Խնդիրները մեծապես կապված են այն հանգամանքի հետ, որ մինչ այժմ Հայաստանի Հանրապետությունում արբիտրաժի ինստիտուտը չի գործել, և առկա է թե՛ որակյալ արբիտր մասնագետների և թե՛ դատարանների կողմից արբիտրաժային որոշումների հարկադիր կատարման, չեղյալ ճանաչման, արբիտրների նշանակման և դատարանների կողմից արբիտրաժի նկատմամբ վերահսկողության այլ ոլորտներում ձևավորված փորձի պակաս: Այս խնդիրների լուծման համար հաջորդ փուլում նախատեսվում է մի շարք միջոցառումների իրականացում, այն է՝ արբիտրների ուսուցում, դատավորների համար թեմատիկ դասընթացների ներառում, ինչպես նաև ճանաչված միջազգային արբիտրների մասնակցությամբ օրինակելի արբիտրաժների իրականացում: Ինչ վերաբերում է մեդիացիային, ապա կարևոր խնդիր է ընդհանրապես մեդիացիայի և մասնավորապես՝ դատարանին կից մեդիացիայի մասին միջազգային չափորոշիչներին համապատասխանող օրենսդրության մշակումը և կիրարկումը:

501. **Դատարաններում գործերի բաշխման ժամանակակից կառուցակարգերի ներդրում:** Դատարանի նախագահի կողմից գործի քննություն որևէ դատավորի հանձնարարելիս կամայականությունն ու շահագրգիռ լինելը բացառելու և կոռուպցիայի դեմ պայքարի գործուն միջոց է գործերի բաշխման այնպիսի մեխանիզմի կիրառումը, որը հնարավորություն

կտա գործերի բաշխումը իրականացնելու ավտոմատ կարգով՝ առանց բաշխման յուրաքանչյուր դեպքի մասին որոշում կայացնելու: Այսօր տարբեր պետություններում ընդունված են գործերի բաշխման վերաբերյալ տարբեր մոտեցումներ, հարցն ունի լուծման բազում եղանակներ, որոնք, սակայն, ծառայում են մեկ նպատակի՝ բաշխումն իրականացնել օբյեկտիվ չափանիշի հիման վրա: Այս նպատակին պետք է ծառայի նաև գործերի բաշխման այն տարբերակը, որը պետք է առաջիկայում ընտրի և կիրառի Հայաստանի Հանրապետությունը: Հայաստանի Հանրապետության Կառավարության հակակոռուպցիոն ծրագրով նախատեսված է գործերի բաշխման համակարգչային եղանակի ներդրում:

502. Դատական ակտերի հրապարակման արդյունավետ համակարգի ստեղծում: ԵՄ - Հայաստան Եվրոպական հարևանության քաղաքականության գործողությունների ծրագրով նախատեսվում է բարձրացնել դատական ակտերի կանխատեսելիության և թափանցիկության մակարդակը, մասնավորապես՝ դատական ակտերի հրապարակման արդյունավետ համակարգի ստեղծման միջոցով (Բաժին 4.1.1, Դատախրավական համակարգի բարեփոխումներ, կետ 4): Դատական օրենսգրքով նախատեսվեց բոլոր դատարանների ակտերի պարտադիր հրապարակում դատական իշխանության պաշտոնական ինտերնետային կայքում: Ներկայումս սկիզբ են առել կայքի ստեղծման և համալրման աշխատանքները: Առաջիկայում նախատեսվում է դատական ակտերի միասնական բազայի ձևավորում, նախադեպի վկայակոչումը առավել մատչելի դարձնելու նպատակով՝ դատական ակտերի դասակարգիչների համակարգի մշակում և ներդրում: Ռեզոլուցիայի նախատեսված նշանակություն ունի նշված բազայի մատչելիության ապահովումը հասարակության համար:

503. Դատավորների վերապատրաստման առաջնային ոլորտների նախանշում (մասնավորապես՝ նախադեպի կիրառման, դատարաններում ներդրվող համակարգչային ծրագրերի վերաբերյալ դասընթացներ): Դատական օրենսգրքով նախատեսված է դատավորների պարտադիր վերապատրաստման պահանջ. դատավորները պետք է անցնեն տարեկան ոչ պակաս, քան 80 և ոչ ավելի, քան 120 ակադեմիական ժամ վերապատրաստում: Այս դրույթի լիարժեք կենսագործման համար կմշակվեն ինչպես համապիտանի, այնպես էլ ժամանակային՝ տվյալ փուլում դատավորների համար առավել մեծ արդիականություն ունեցող դասընթացներ: Դրանց թվում կարելի է հատկապես վկայակոչել նախադեպային նշանակություն ունեցող դատական ակտերի կիրառման առանձնահատկությունները, դատական ակտերի դասակարգիչներ մշակելու դեպքում՝ այդ դասակարգիչները, ինչպես նաև դատավորների կողմից կիրառման ենթակա համակարգչային տեխնոլոգիաները լուսաբանող դասընթացները:

504. Միևնույն ժամանակ, հաշվի առնելով այն գործառնությունները, որոնք Սահմանադրության հիման վրա ստանձնել է արդարադատության խորհուրդը, և դրանց իրականացման ընթացակարգերը, որոնք սահմանված են Դատական օրենսգրքով, մեծ նշանակություն ունի արդարադատության խորհրդի անդամ դատավորների՝ հատկապես արդարադատության խորհրդի անդամի լիազորությունները պատճառ իրականացնելու նպատակով վերապատրաստման կազմակերպումը, որը կնպաստի արդարադատության խորհրդի այնպիսի գործառնությունների պատշաճ իրականացմանը, ինչպիսիք են դատական համակարգում կադրային քաղաքականությունը, դատավորի վարքագծի կանոնների մեկնաբանման փորձ ձևավորելը և դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելը:

505. Դատական ծառայողների ուսուցում և վերապատրաստում: 2006 թվականին Հայաստանի Հանրապետությունում ներդրվեց դատական ծառայության ինստիտուտը: 2006-2007 թվականների օրենսդրական փոփոխությունների արդյունքում դատական ծառայողները ստանձնեցին բազում գործառնություններ՝ կապված դատարանների բնականոն գործունեության ապահովման հետ: Այս առումով կարևոր նշանակություն է ձեռք բերում դատական ծառայողների վերապատրաստման ծրագրերի մշակումը դատարանների բյուջետային հայտերի նախապատրաստման, վիճակագրության և գործնական արդյունքների

ամփոփման, մարդկային ռեսուրսների կառավարման, համակարգչային տեխնոլոգիաների ներդրման և կիրառման, այլ հարցերի կապակցությամբ:

506. Առաջին ատյանի, վերաքննիչ և Վճարելի դատարանների, Սահմանադրական դատարանի տեխնիկական վերազինման և տեխնիկական օժանդակության աշխատանքների շարունակում: Այս ոլորտում կատարվելիք գործողությունների շարքում պետք է նշել դատարանների արխիվների վարման և պահպանման ժամանակակից մոտեցումների և տեխնոլոգիաների ներդրումը, նշված դատարանների աշխատակազմերի՝ համակարգչային ծրագրերով վերազինումը և տեխնիկական օժանդակությունը՝ կապված դրանց ստանձնած նոր գործառույթների իրականացման հետ:

507. Իրավական ակտերի վերաբերյալ քնակչության իրազեկության բարձրացում: Առաջիկա ժամանակահատվածում կարևոր նշանակություն ունի իրավական ակտերի հրապարակման ոլորտում առկա ձեռքբերումների պահպանումը և հետագա զարգացումը: Ռազմավարական առումով կարևոր լուծում պետք է համարել, մասնավորապես իրավական ակտերի նախագծերի քննարկումները հրապարակային դարձնելը: Ինչպես արդեն նշվել է, ներկայումս արդարադատության նախարարության կողմից նախապատրաստվող օրինագծերը հրապարակվում և հանրային քննարկման են դրվում արդարադատության նախարարության կայքում: Հետագայում անհրաժեշտ է օրենսդրությամբ նմանատիպ կառուցակարգեր նախատեսել նաև պետական այլ մարմինների կողմից մշակվող օրինագծերի համար, ինչը օրենքների մշակման փուլում քաղաքացիական հասարակության իրազեկության և ակտիվ մասնակցության կարևոր երաշխիք կհանդիսանա:

10.2.2. Հասարակական կարգի պահպանման, հասարակական անվտանգության ապահովման և հանցավորության դեմ պայքարի արդյունավետության բարձրացում

508. Հասարակական կարգի պահպանման, հասարակական անվտանգության ապահովման և հանցավորության դեմ պայքարի արդյունավետությունը, գործունեության թափանցիկությունը, ոստիկանության կողմից բնակչությանը մատուցվող համապատասխան ծառայությունների որակն ու մատչելիությունը աղքատության հաղթահարման ռազմավարության կարևորագույն նախապայմաններից են:

509. Հայաստանի Հանրապետության ոստիկանությունը՝ որպես պետական կառավարման մարմին և դատաիրավական համակարգի կարևոր բաղադրիչ 2001-2007 թթ. իրականացրել է նկատելի բարեփոխումներ հետևյալ առանցքային ուղղություններով.

§ Եվրախորհրդի առջև Հայաստանի Հանրապետության ստանձնած պարտավորությունների շրջանակում առանցքային տեղ են գրավում ոստիկանության համակարգի կառուցվածքային և գործառութային բարեփոխումները: Մասնավորապես, 2002 թվականին ՀՀ ներքին գործերի նախարարությունից քրեակատարողական հիմնարկները տեղափոխվեցին ՀՀ արդարադատության նախարարության համակարգ, իսկ Հրդեհային պահպանության վարչությունը տեղափոխվեց արտակարգ իրավիճակների կառավարման ոլորտ, որը ներկայումս համակարգվում է ՀՀ տարածքային կառավարման նախարարության կողմից: Ի դեպ, 2006-2007թթ. ընթացքում մի քանի փուլով ՀՀ ոստիկանությունից ՀՀ արդարադատության նախարարությանը հանձնվեց նաև քրեակատարողական հիմնարկների պահպանության գործառույթը: Համակարգի կառուցվածքային բարեփոխումներից առանցքայինը, թերևս, 2003 թվականին ՀՀ ներքին գործերի նախարարության վերակազմավորումն էր ՀՀ ոստիկանության, ինչը անշրջելի դարձրեց համակարգի ապաքաղաքականացման գործընթացը: Վերջինիս իրագործման երաշխիքը սահմանվել է «Ոստիկանությունում ծառայության մասին» օրենքով,

որի համաձայն՝ ոստիկանության պետը քաղաքական պաշտոն չէ, և դրանում կարող է նշանակվել բացառապես ոստիկանության ծառայողը: Բացի այդ, ոստիկանությունը՝ որպես հատուկ ծառայություն, համարվում է բացառապես միայն մասնագիտական սկզբունքով, չկան քաղաքական կամ հայեցողական պաշտոններ:

§ Դատաիրավական բարեփոխումների առաջին փուլում՝ 2001թ., ընդունվեց «Ոստիկանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքը, որով առաջին անգամ ամրագրվեցին ոստիկանության խնդիրները, գործունեության իրավական հիմքերն ու սկզբունքները, պարտականություններն ու իրավունքները, կառուցվածքը, իրավական ու սոցիալական պետական երաշխիքները, ինչպես նաև ոստիկանության ֆինանսավորման, նյութատեխնիկական ապահովման ու գործունեության վերահսկողության սկզբունքները: «Ոստիկանության մասին» օրենքը դարձավ այն առանցքը, որի շուրջ ձևավորվեց ոստիկանական օրենսդրությունը (8 օրենքներ, նորմատիվային բնույթ կրող ՀՀ կառավարության շուրջ 80 որոշումներ, ՀՀ ոստիկանության պետի 35 հրամաններ և այլն): Այս ամենով հանդերձ, ոստիկանության համակարգում կշարունակվի հետևողական և համակարգված աշխատանքը ոստիկանական օրենսդրությունը միջազգային չափանիշներին համապատասխանեցնելու, դրանում մարդու իրավունքների գերակայության սկզբունքն ընդգծելու, ոստիկանության կողմից հնարավոր կամայականության դեպքերի բացառմանն ուղղված օրենսդրական փոփոխություններ մշակելու ուղղությամբ:

§ Պետական ծառայություններից առաջինը ՀՀ ոստիկանությունն էր, որը 2002 թ. «Ոստիկանությունում ծառայության մասին» ՀՀ օրենքով ամրագրեց ոստիկանությունում ծառայության հիմնական սկզբունքները, ծառայության անցնելու կարգը և ծառայության պայմանները, ծառայության հետ կապված ծառայողների իրավունքները, պարտականությունները, պատասխանատվությունը, պաշտոններն ու կոչումները և այլն: Օրենքը նախատեսել է մի շարք մեխանիզմներ, որոնք նպատակաուղղված են ծառայության ողջ ընթացքում ղեկավարների կողմից սուբյեկտիվ մոտեցման դրսևորման նվազագույնի հասցմանը (ոստիկանություն նոր ընդունվողների համար գիտելիքների գնահատման հստակ չափորոշիչներ, փորձաշրջան, վերապատրաստում, ձևավորված ատեստացիոն համակարգ և այլն): Կարգապահական պրակտիկայի կիրառման օբյեկտիվությունն ապահովելու հարցում խիստ կարևորվում է «Հայաստանի Հանրապետության ոստիկանության կարգապահական կանոնագիրքը», որն ընդունվեց 2005թ.: Նշված օրենքով կանոնակարգվեցին ոստիկանության ծառայողական կարգապահության կանոնները, ծառայողական քննություն նշանակելու, անցկացնելու, կարգապահական տույժեր կիրառելու կարգն ու պայմանները, ոստիկանության ծառայողի էթիկայի կանոնները: Նշված օրենքների, դրանցից բխող տասնյակ ենթաօրենսդրական ակտերի կատարելագործման հիմքում դրվել է ոստիկանության ծառայողների նկատմամբ ղեկավար կազմի կամայական մոտեցումների բացառման սկզբունքը: Բացի այդ, զգալի աշխատանք կատարելու «Քաղաքացիական հատուկ ծառայության մասին» ՀՀ օրենքի (ուժի մեջ է մտել 2008թ. հունվարի 1-ից) պահանջներին համապատասխան՝ ոստիկանության համակարգում քաղաքացիական հատուկ ծառայության համակարգի ներդրման, վերջինս ոստիկանության ծառայության հետ ներդաշնակեցնելու, անհրաժեշտ ենթաօրենսդրական ակտերը մշակելու և ներդնելու ուղղությամբ:

§ Ոստիկանությանը վերապահված նոր գործառույթներից առանձնակիորեն պետք է առանձնացնել ՀՀ ոստիկանության կողմից բնակչության պետական ռեզիստրի վարումը, ինչը նախատեսված է «Բնակչության պետական ռեզիստրի մասին» ՀՀ օրենքով: Նշված ռեզիստրը, կազմավորվելով բնակչության վերաբերյալ տարբեր գերատեսչությունների տրամադրության տակ գտնվող տվյալների շտեմարաններից, կոչված է իրավասու մարմիններին օրենքով սահմանված դեպքերում և կարգով ապահովելու անհրաժեշտ տեղեկատվությամբ: Մասնավորապես, նշված ռեզիստրից ձևավորվում է Ընտրողների ռեզիստրը, որից էլ, իրենց հերթին, ձևավորում են ընտրացուցակները: Հենց այս պատճառով էլ Բնակչության պետական ռեզիստրում կուտակվող և մշակվող տեղեկատվության ճշգրտությունից են կախված պետական կարևոր նշանակություն ունեցող մի շարք միջոցառումների հաջող անցկացումը: Այս առումով առաջիկա տարիներին կկատարելագործվի տեղեկատվության կուտակման մեխանիզմն այն նպատակով, որպեսզի ռեզիստրում կուտակվող տեղեկատվությունը ցանկացած պահի լինի առավել ճշգրիտ և թարմ: Բացի այդ, կսահմանվի ռեզիստրում կուտակված տեղեկատվության օգտագործման օրինականության նկատմամբ խիստ հսկողություն, քաղաքացուն ընձեռելով հնարավորություն ցանկացած պահի ստանալու տեղեկատվություն իր վերաբերյալ կուտակված տեղեկատվության օգտագործման վերաբերյալ: Այդ նպատակով հարկ կլինի ընդունել մի շարք իրավական ակտեր, ձեռնարկել ծավալուն կազմակերպչական միջոցառումներ: Նշված քայլերի իրագործումով Բնակչության պետական ռեզիստրը կարող է դառնալ տեղեկատվական հասարակության ձևավորման առանցքը, նպաստել էլեկտրոնային կառավարման համակարգի լիարժեք ներդրմանը և բարելավել քաղաքացիներին մատուցվող էլեկտրոնային ծառայությունների որակը:

§ Ոստիկանության գործունեության հրապարակայնության և թափանցիկության ապահովման ուղղությամբ ձեռնարկվել են զգալի քայլեր: Մասնավորապես, սկսած 2005 թվականից, հաստատված ժամանակացույցի համաձայն՝ ՀՀ ոստիկանության ղեկավարությունը, առանցքային ստորաբաժանումների ղեկավարները ասուլիսների, բրիֆինգների միջոցով պարբերաբար հանրությանն են ներկայացնում ոլորտում տիրող իրավիճակը, վեր են հանում գործունեությունում առկա թերություններն ու բացթողումները, պարզաբանում են հասարակությանը հուզող հարցերը, պատասխանում դրանց: Բացի այդ, հանրությունը կարող է իրազեկվել ՀՀ ոստիկանության գործունեության մասին

ոստիկանության գործունեությունը կանոնակարգող օրենսդրությունը, հանցագործությունների վերաբերյալ օրվա ամփոփագիրը, վիճակագրական և վերլուծական տեղեկատվություն և այլն: Քաղաքացիները կարող են իրենց հետաքրքրող հարցերն ուղղել ոստիկանության ղեկավարներին և ստանալ սպառիչ պատասխաններ:

§ Ինչպես նշվեց, դատաիրավական բարեփոխումների արդյունքում նախաքննության գործառույթը դատախազությունից փոխանցվեց նախաքննության մարմիններին: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ դատախազության վարությամբ գտնվող գործերի մոտ 90 տոկոսը փոխանցվելու էր ՀՀ ոստիկանության քննչական գլխավոր վարչության (ԶԳՎ) վարույթ, նախապես իրականացվեցին մի շարք կազմակերպչական միջոցառումներ, կապված ԶԳՎ կառուցվածքային փոփոխությունների, քննիչների վերապատրաստման հետ եւ այլն: Դատաիրավական բարեփոխումների ներկայիս փուլին անդրադառնալով նշենք, որ հանրապետության դատարանները, դատախազական, նախաքննության և հետաքննության

մարմինները մեծ սպասելիքներ ունեն հատկապես մշակվող Քրեական դատավարության նոր օրենսգրքից, որը սկզբունքային լուծում կտա նախկինում գործնական աշխատողների առջև ծառայած մի շարք խնդիրներին: Հանցագործությունների և իրավախախտումների նախականիման աշխատանքներում իրավապահ մարմինների աշխատակիցներն ակնկալում են արմատական բեկում նաև «Հանցագործությունների կանխարգելման պետական ծրագրից», որը կստեղծի իրական նախադրյալներ նշված ոլորտում պետական միասնական քաղաքականության իրականացման համար, կբարձրացնի Հայաստանում հանցագործությունների սոցիալական կանխարգելման համակարգի արդյունավետությունը:

§ Ոստիկանության համակարգում ներկայումս ընթացող ինստիտուցիոնալ բարեփոխումներից հարկ է առանձնացնել ճանապարհային երթևեկության անվտանգության բարձրացմանն ուղղված ծրագիրը, որի առաջին փուլում ՀՀ ոստիկանության պետավտոտեսչության ծառայությունը վերափոխվեց Ճանապարհային ոստիկանության, հիմնովին փոխվեց ծառայության կազմակերպման սկզբունքը: Մասնավորապես, բոլոր վերակարգերն անցան պարեկային ծառայության տարբերակին, իրավասություն ստանալով տեղում տուգանելու իրավախախտ վարորդներին: Այս բարեփոխումներով պայմանավորված՝ համակարգում կատարվեցին լուրջ կառուցվածքային փոփոխություններ՝ պետավտոտեսչության նախկին ծառայությունները ոստիկանության տարածքային մարմինների ենթակայությունից Ճանապարհային ոստիկանության կենտրոնաձիգ ղեկավարման հանձնելով: Բացի այդ, ոստիկանությունում լուծարվեց Շինմոնտաժային վարչությունը, որը զբաղվում էր ճանապարհային երթևեկության կարգավորման տեխնիկական համակարգերի ներդրմամբ և շահագործմամբ: Նշված գործառույթը փոխանցվեց քաղաքային համայնքներին: Ներկայումս մասնավոր ընկերությունների է փոխանցվում նաև տեխնոլոգիաների անցկացման գործառույթը: Ճանապարհային ոստիկանության բարեփոխումների ծրագրով նախատեսվում է մոտ սպազայում հիմնովին վերազինել ծառայությունը, բարձրացնել ծառայություն կատարող վերակարգերի գործունեության արդյունավետությունը, ինչպես նաև հանրապետության խոշոր քաղաքների խաչմերուկներում և մայրուղիներում տեղադրել տեսադիտման և արագաչափ ավտոմատ սարքեր, որոնք հնարավորություն կտան արձանագրելու իրավախախտումները: Ձեռնարկվելիք միջոցառումների արդյունքում նախատեսվում է կտրուկ կերպով բարձրացնել ճանապարհային երթևեկության մասնակիցների կարգապահությունը, ապահովել պատասխանատվության անխուսափելիության սկզբունքի լիարժեք կիրառումը, ինչպես նաև Ճանապարհային ոստիկանության գործունեությունում նվազագույնի հասցնել կոռուպցիոն ռիսկերը: Այս վերջին խնդրի իրագործման կարևոր քայլերից պետք է նշել Ճանապարհային ոստիկանության համար արտաբյուջետային հաշվի բացումը, ինչը հնարավորություն է ընձեռում վարչական իրավախախտումների գանձումից ստացվող գումարների 70 տոկոսը ուղղել ծառայության տեխնիկական վերազինմանը, իսկ 30% տոկոսը՝ հավելավճարի տեսքով տրամադրել իրավախախտումն հայտնաբերող ոստիկանության ծառայողին:

§ Նախատեսվող կառուցվածքային փոփոխություններից պետք է առանձնացնել ՀՀ ոստիկանության համակարգում քաղաքացիության և միգրացիայի դեպարտամենտի ստեղծումը, որով ակնկալվում է հասնել նշված ոլորտի առավել արդյունավետ համակարգման: 2009 թվականից նախատեսվում է նաև ներդնել միջազգային չափանիշներին համապատասխանող ՀՀ քաղաքացու անձնագրեր ու ID քարտեր: Կենսաչափական տվյալներ պարունակող անձնագրերը

նախատեսված են Հայաստանի Հանրապետության սահմաններից դուրս գործածման համար, իսկ ID քարտերը՝ միայն հանրապետության ներսում: Այս աշխատանքների իրականացման համար կմշակվի օրենսդրական փոփոխությունների փաթեթ, որից հետո կիրականացվեն համապատասխան կազմակերպչական միջոցառումներ:

510. Հայաստանի Հանրապետության ոստիկանության համակարգում իրականացվող բարեփոխումների արդյունավետության, ինչպես նաև հակակոռուպցիոն ռազմավարության հաջող իրագործման համատեքստում կարևորագույն դեր ունի ոստիկանության ծառայողների վարձատրության և սոցիալական ապահովության համակարգը: 2007թ. ոստիկանության ծառայողների միջին աշխատավարձը (63 հազ. դրամ) անմրցունակ է ոչ միայն մասնավոր հատվածի համեմատ, այլև զգալիորեն ցածր է դատական համակարգի, դատախազության և պետական կառավարման մարմինների աշխատակիցների միջին աշխատավարձից: Այն նկատելիորեն զիջում է նաև եվրոպական և ԱՊՀ երկրների ոստիկանության ծառայողների միջին ամսական աշխատավարձին (տե՛ս Աղյուսակ 10.9):

Աղյուսակ 10.9. Ոստիկանության ծառայողների միջին ամսական աշխատավարձերը ՀՀ-ում, Եվրոմիության և ԱՊՀ մի շարք պետություններում (2007թ.)

	Երկիր	Միջին ամսական աշխատավարձը (ԱՄԵ դոլար)
1.	Էստոնիա	1,630
2.	Լեհաստան	1,100
3.	Լիտվա	1,050
4.	Բուլղարիա	450
5.	Ռուսաստան	600
6.	Ուկրաինա	700
7.	Վրաստան	500
8.	Հայաստան	200

511. Հակակոռուպցիոն քաղաքականության հիմքում պետք է դնել ոչ միայն դատավորների և դատախազների, այլև մյուս իրավապահ մարմինների ծառայողների դրամական բավարարման բարելավման և սոցիալական երաշխիքների ապահովման սկզբունքը: Հակառակ պարագայում՝ աշխատավարձերի մակարդակների զգալի տարբերությունը ինքնին կարող է հանդիսանալ իրավապահ մյուս մարմիններում կոռուպցիան խթանող գործոն, ինչպես նաև նպաստել բարձր որակավորում ունեցող կադրերի հոսունության աճին: Այսպես, վերջին 5 տարիների ընթացքում համակարգից ազատված սպա ծառայողների յուրաքանչյուր 4 պաշտոններից համալրվել է միայն մեկը: Դա, հիմնականում, ծանր ու պատասխանատու աշխատանքի և ոչ համարժեք ֆինանսական բավարարման համադրության արդյունք է: Հաշվի առնելով այս հանգամանքը, Կայուն զարգացման ծրագրի ողջ ժամանակահատվածում ոստիկանության ծառայողների պաշտոնական դրույքաչափերը բարձրացվելու են առաջանցիկ տեմպերով՝ դրանք հասցնելով քաղաքացիական ծառայողների միջին աշխատավարձերին (տե՛ս Աղյուսակ 10.10):

Աղյուսակ 10.10. ՀՀ ոստիկանության ծառայողների միջին ամսական աշխատավարձերը 2008-2021 թթ.

	2008	2009	2010	2011	2012	2015	2018	2021
ՀՀ ոստիկանության ծառայողների միջին ամսական աշխատավարձը, հազ. դրամ	83.7	110.5	145.8	184.5	210.0	306.0	447.8	654.5

10.3. Հակակոռուպցիոն քաղաքականություն

512. Քաղաքացիների հարցումները ցույց են տալիս, որ կոռուպցիան Հայաստանում առավելապես պորբլեմային է առևտրային գործունեության, լիցենզիաների, արտոնությունների տրամադրման, հարկերի հավաքագրման, մաքսային ծառայությունների բնագավառներում: «Տրանսպերենսի Ինտերնեյշնլ» կազմակերպության կողմից հաշվարկվող՝ Կոռուպցիայի ընկալման համաթիվը Հայաստանի համար վերջին 3 տարիներին մնում է նույն մակարդակում (3.0՝ 2003թ., 3.1՝ 2004թ., 2.9՝ 2005թ.): Հայաստանը 159 երկրների շարքում զբաղեցնում է 88-րդ տեղը: Կոռուպցիայի դեմ պայքարի ռազմավարության ծրագիրը գործում է 2003թ-ից: Մինչ այդ, նշված հարցադրումների առնչությամբ ընդունվել են մի շարք օրենսդրական ակտեր և իրականացվել են կազմակերպական միջոցառումներ (օրինակ՝ «Քաղաքացիական ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքն ընդունվել է 2001թ. դեկտեմբերի 4-ին):

513. ՀՀ կոռուպցիայի դեմ պայքարի ռազմավարական ծրագիրը իր առաքելությունը 2003-2007թթ. իրականացրեց մասնավորապես կոռուպցիայի կանխարգելման ուղղությամբ բազմաթիվ օրենսդրական փաստաթղթերի ընդունմամբ (50-ից ավելի օրենքներ և ենթօրենսդրական փաստաթղթեր), ինստիտուցիոնալ նոր կառույցների ստեղծմամբ, հակակոռուպցիոն պայքարի միջազգային հեղինակավոր կազմակերպություններին (ԵՄ ԳՐԵԿՈ-ի և ՏԶՀԿ անցումային տնտեսության երկրների հակակոռուպցիոն պայքարի ցանց) անդամակցությամբ, ինչպես նաև միջազգային համաձայնագրերի ընդունմամբ ու վավերացմամբ (ԵՄ կոռուպցիայի դեմ պայքարի քաղաքացիական և քրեական կոնվենցիաներ, ՄԱԿ-ի կոռուպցիայի դեմ պայքարի կոնվենցիա) և այլն: Այս փաստաթղթերով ստանձնած երաշխավորությունների կատարումը մեր երկրի առջև ծառայած մարտահրավերներից է:

514. ՀՀ կոռուպցիայի դեմ պայքարի ռազմավարական ծրագիրը պայմանավորեց կոռուպցիայի դեմ պայքարում նոր ինստիտուցիոնալ մարմինների ձևավորումը և նրանց գործունեության կանոնակարգումը: Մասնավորապես, այդ նպատակով ՀՀ նախագահի հրամանագրով, ՀՀ վարչապետի գլխավորությամբ ստեղծվեց կոռուպցիայի դեմ պայքարի խորհուրդ և նրան կից՝ ՀՀ հակակոռուպցիոն ռազմավարության մոնիթորինգի հանձնաժողով: ՀՀ գլխավոր դատախազության կազմում հիմնվեց կոռուպցիայի դեմ պայքարի բաժին, որն այնուհետև վերակազմավորվեց վարչության: Համանման ստորաբաժանումներ ունեն ՀՀ ոստիկանությունը և ՀՀ ազգային անվտանգության ծառայությունը:

515. Կոռուպցիայի դեմ պայքարի միջազգային կոնվենցիաների ընդունումը, անցումային տնտեսության երկրների հակակոռուպցիոն ցանցին և ԳՐԵԿՈ-ին անդամակցության երաշխավորություններ-հանձնարարականների կատարումը հիմք են ծառայում ՀՀ հակակոռուպցիոն նոր ռազմավարության մշակման և պայքարի նոր ուղղությունների նախանշման համար: Ռազմավարական խնդիրների շարքում առաջնահերթ պետք է դիտարկել հակակոռուպցիոն քաղաքականության մշակումն ու կոռուպցիայի դեմ պայքարի ինստիտուցիոնալ կառույցի ձևավորումը: Անցած ժամանակահատվածում Հայաստանը բավականին մեծ հաջողությունների է հասել կոռուպցիայի դեմ պայքարի խորհրդի և հակակոռուպցիոն ռազմավարության ծրագրի մոնիթորինգի հանձնաժողովի գործունեության ապահովման գործում: Այնուհանդերձ, եթե կոռուպցիայի դեմ պայքարի խորհուրդը կարելի է կայացած համարել, ապա մոնիթորինգի հանձնաժողովի գործունեությունը կարիք ունի վերանայման: Վերջինս, չունենալով սպասարկող մասնագիտական կառույցներ և մեծ մասամբ ձևավորվելով քաղաքական կուսակցությունների ներկայացուցիչներից և նրանց կողմից առաջադրվող հասարակական կազմակերպություններից՝ բավարար չափով կենսունակ չէ, քանի որ դրա կազմում ներկայացված հասարակական կազմակերպությունները դեռևս անհրաժեշտ շահագրգռվածություն չեն դրսևորում կոռուպցիայի դեմ համատեղ պայքարի գործընթացում: Կոռուպցիայի դեմ պայքարի նոր ռազմավարության ընդունման ժամանակ անհրաժեշտ է նկատի ունենալ վերոնշյալ մարմինների գործունեության արդյունքները՝ վերանայել ինստիտուցիոնալ այս կառույցների

ձևավորման կարգը և դրանց ներկայացվող պահանջները: Քննարկման առարկա պետք է դառնա մասնագիտացված կառույցի ստեղծումը, որն իր վրա կվերցնի կոռուպցիայի դեմ պայքարի ռազմավարության և քաղաքականության իրականացումն ու կոռուպցիայի դեմ պայքարի՝ իրավապահ մարմինների մասնագիտացված կառույցների գործունեության համակարգումը: Այսօր այդ աշխատանքները մասնակիորեն իրականացնում է ՀՀ գլխավոր դատախազությունը: Այս նոր կառույցը միաժամանակ հնարավորություն կունենա ապահովելու կոռուպցիայի դեմ պայքարի իրազեկման աշխատանքները: Համագործակցությունը քաղաքացիական հասարակության հետ հնարավորություն կտա կոռուպցիայի դեմ պայքարում իրականացնելու համատեղ նախաձեռնություններ:

516. Կոռուպցիայի մակարդակի, դրա դեմ պայքարի գնահատման ու մոնիթորինգի համակարգի զարգացումը ռազմավարական խնդիրների շարքում լրացնում է ինստիտուցիոնալ կառույցի գործառնությունները: Մինչև 2007թ. հանրապետությունում հաստատված է եղել 59 կոռուպցիոն քրեական դեպքերի վիճակագրության վարման մեթոդաբանությունը, որի հիման վրա ՀՀ ոստիկանությունը ամփոփում էր իրավապահ մարմինների կողմից տրամադրված տվյալները և փոխանցում ՀՀ վիճակագրության ազգային ծառայությանը: Սակայն, հաշվի առնելով միջազգային փորձը և ղեկավարվելով այն առանցքային դրույթով, որ կոռուպցիոն կարող են համարվել բացառապես պաշտոնեական չարաշահումներին առնչվող իրավախախտումները, կոռուպցիոն բնույթի հանցագործությունների թվաքանակը հասցվել է 22-ի, ինչը առավել համարժեքորեն է արտացոլում կոռուպցիայի դեմ պայքարը և բացառում է տնտեսական հանցագործությունները ևս որպես կոռուպցիոն դիտարկելը: Միաժամանակ, վերոնշյալ հանցագործությունների թիվը անհրաժեշտ է համալրել մի քանի հանցատեսակներով, որոնք, «Կոռուպցիայի դեմ» ՄԱԿ-ի կոնվենցիայի դրույթներին համապատասխան, կրում են կոռուպցիոն բնույթ և ենթակա են հատուկ հաշվառման /օրինակ՝ կաշառքի կամ առևտրային կաշառքի դրդելը, սուտ ցուցմունք, կեղծ եզրակացություն տալու կամ սխալ թարգմանության համար կաշառելը և այլն/: Կոռուպցիայի դեմ պայքարի ամբողջական պատկերը ստանալու և մոնիթորինգ իրականացնելու համար անհրաժեշտ է ձևավորել և ամբողջականացնել կոռուպցիայի դեմ պայքարի մոնիթորինգի և գնահատման ցուցանիշների համակարգը: Վերջինս հնարավորություն կտա ամփոփելու և ստանալու կոռուպցիայի մոնիթորինգի ցուցանիշների համակարգը՝ ըստ բոլոր բնագավառների՝ քաղաքացիական ծառայության, ոստիկանության, դատախազության, դատական համակարգի և այլ ոլորտներում:

517. ՀՀ կոռուպցիայի դեմ պայքարի ռազմավարական ծրագրի մյուս կարևոր առաքելությունը քաղաքացիական հասարակության ներգրավումն է կոռուպցիայի դեմ պայքարում: Քարոզարշավների, մամուլի, հեռուստատեսության, հասարակական կազմակերպությունների ակտիվացումը կոռուպցիայի դեմ պայքարում նոր ազդակներ

-ի՝ կոռուպցիայի ընկալման ցուցանիշի կայուն մակարդակի պատճառներից մեկն էլ կոռուպցիա երևույթի ընկալման հարցում ՀՀ քաղաքացիների և բնակչության անտեղյակությունն է կամ սեփական ոչ ճշգրիտ մեկնաբանություններն ու պատկերացումները: Այս տեսանկյունից խիստ կարևորվում են բնակչության հետ տարվող կրթական և տեղեկատվական աշխատանքները: Այլ խոսքով՝ կոռուպցիայի դեմ պայքարի մյուս կարևոր բաղադրիչը պետք է դառնա կրթալուսավորչական քաղաքականության իրականացումը: Հատկապես արդյունավետ են հասարակական կազմակերպությունների կամ քաղաքացիական հասարակության միավորումների կողմից կազմակերպվող քարոզչալուսավորչական ակցիաները, կոռուպցիա երևույթի պատճառների, հետևանքների էության վերաբերյալ թեմաների ընդգրկումը կրթության պետական ծրագրերում, պետական ծառայողների և մասնավոր հատվածի աշխատակիցների համար վերապատրաստման դասընթացների ձևավորումը՝ կոռուպցիայի դեմ պայքարի ուղիների և մեխանիզմների վերաբերյալ թեմայով:

518. Կոռուպցիա երևույթի տարատեսակ դրսևորումների՝ որպես քրեական հանցագործություն որակումների հստակեցումը կոռուպցիայի դեմ պայքարի բաղկացուցիչ մասերից է: Միայն քաղաքացիական հասարակության կրթման, նրա տեղեկացվածության բարձրացման հաշվին կոռուպցիայի կրճատման միտումները բավարար լինել չեն կարող: Անհրաժեշտ է օրենսդրության մեջ կոռուպցիոն իրավախախտումների սահմանումների և բովանդակության համապատասխանեցումը միջազգային ստանդարտներին, մասնավորապես՝ Եվրոպայի խորհրդի՝ կոռուպցիայի համար քրեական պատասխանատվության մասին կոնվենցիայի պահանջներին: Վերջինս ենթադրում է բարդ և տարանջատված դրույթների փոխարինումը ավելի քիչ թվով դրույթներով, որոնք ընդգրկում են ակտիվ և պասիվ կոռուպցիայի բոլոր դեպքերը: Կոռուպցիոն հանցագործությունների համար անհրաժեշտ է քրեական պատասխանատվություն սահմանել նաև իրավաբանական անձանց համար:

519. Կոռուպցիայի դեմ պայքարի գործում մեծ դերակատարում ունի և Հայաստանի համար հրատապ է պետական միասնական ծառայության համակարգի ձևավորումը, պետական ծառայողների համար միասնական եվրոպական էթիկայի կանոնների կիրառումը, որոշ մասնագիտական ծառայությունների համար էթիկայի առանձին կանոնակարգերի ընդունումը: Անհրաժեշտ է ներդնել պետական ծառայողների էթիկայի կանոնների խախտումների դեպքում կիրառվող խիստ կարգապահական պատիժներ, ինչպես նաև պետական կառավարման մարմիններում ձևավորել պետական ծառայողների էթիկայի կանոնների, շահերի բախման, ֆինանսական հաշվետվությունները վերահսկող առանձնացված ստորաբաժանումներ:

520. Պետական ծառայության գործում դեռևս լուծում չեն ստացել պետական պաշտոնյաների և ծառայողների կողմից նվերների ստացման և շահերի բախումներից խուսափելու հետ կապված հարցերը, ինչպես նաև նվիրատվությամբ պայմանավորված՝ կանոնների խախտման համար պատժամիջոցները: Դրանք ունեն ինչպես օրենսդրական, այնպես էլ գործնական կիրառման խնդիր: Հատկապես արդիական է դարձել պետական ծառայողների սեփականության նկատմամբ հսկողության մեխանիզմների սահմանումը և պետական պաշտոնյաների ունեցվածքի հայտարարագրերի հավաստիության ուսումնասիրումը, այդ թվում՝ Հարկային պետական ծառայության կողմից անցկացվող ճշտումների և խաչաձև ստուգումների միջոցով: Այս առումով կբարձրացվի անձնական եկամուտների և գույքի հայտարարագրման հարցում պետական ծառայողների պատասխանատվությունը:

521. Կարևոր խնդիր է նաև իրավաբանական անձանց՝ քրեական պատասխանատվության սուբյեկտ ճանաչելու հարցադրումը: Առայժմ քրեական օրենսգիրքը պատասխանատվության սուբյեկտներ է ճանաչում միայն ֆիզիկական անձանց, ինչը որոշակի սողանք է թողնում իրավաբանական անձանց համար՝ անպատիժ մասնակցելու կոռուպցիոն բնույթի հանցագործություններին. ներկայումս գործում է միայն վարչական պատասխանատվության ինստիտուտը: Վերը նշված խնդրի օրենսդրական կարգավորման նպատակով համապատասխան օրենսդրական փաթեթը կներկայացվի ՀՀ ԱԺ:

522. ՀՀ կենտրոնական բանկում ձևավորվել է ֆինանսական հսկողության կենտրոն, որն իրականացնում է 2004թ. ընդունված՝ Հայաստանի Հանրապետությունում փողերի լվացման օրենսդրությունը: Չնայած ձեռք բերված առաջընթացին՝ դեռևս այդ օրենսդրությունը կարիք ունի բարելավման, մասնավորապես այն պետք է համապատասխանեցնել միջազգային օրենսդրության պահանջներին: Բացի այդ, այդ կենտրոնի գործունեության արդյունքները դեռևս շոշափելի չեն, մինչ այժմ ՀՀ գլխավոր դատախազություն են ներկայացվել մի քանի զեկույցներ կասկածելի գործարքների վերաբերյալ, սակայն այդ դեպքերը ամբողջությամբ չեն հետաքննվել:

523. Քաղաքացիական հասարակության տեղեկացվածության, պետական պաշտոնյա և քաղաքացի հարաբերություններում տեղեկատվության մատչելիությունը դեռևս մնում է

չհաղթահարված: ՀՀ օրենսդրությունը նախատեսում է համապատասխան վարչական պատժամիջոցներ՝ տեղեկատվության չտրամադրման և այլ դեպքերի համար, իսկ քրեական օրենսգիրքը նախատեսում է տույժեր՝ տեղեկատվության ոչ ճշգրիտ և ժամկետանց տրամադրման համար: Սակայն քաղաքացիական հասարակության շրջանում և գործարար աշխարհում դեռևս գերիշխում է լուրջ անհանգստություն՝ ժամանակին և լիարժեք տեղեկատվություն ստանալու հարցում:

524. Կոռուպցիայի դեմ պայքարում կարևոր ինստիտուտ է ֆինանսական հսկողության/ աուդիտի կազմակերպությունների կայացվածությունը, նրանց համագործակցության և գործունեության նպատակաուղղվածությունը: ՀՀ ֆինանսների նախարարության և մյուս բոլոր պետական կառավարման մարմիններում ձևավորվել են ներքին աուդիտի ստորաբաժանումներ: Բարեփոխումներն այս ուղղությամբ որոշակի առաջընթաց են գրանցել: Արտաքին աուդիտը իրականացնում է ՀՀ ԱԺ-ի վերահսկիչ պալատը, որի մասին նոր օրենքը կանոնակարգում է այս սահմանադրական կառույցի գործունեությունը: Այն պետք է դառնա կոռուպցիայի դեմ պայքարի կարևոր օղակ Հայաստանում:

525. ՀՀ հակակոռուպցիոն նոր ռազմավարության համար որպես արդյունքային ցուցանիշներ կդիտարկվեն «Տրանսպերենսի Ինտերնեյշնլ»-ի Կոռուպցիայի ընկալման ինդեքսը՝ 2006թ. 2.9-ից 2009թ. կհասցվի 3.3-ի, իսկ 2011թ.՝ 4.0-ի, «Ֆրիդոմ Հաուզ»-ի Տրանզիտ կոռուպցիայի գործակիցը՝ 2006թ. 5.75-ից 2009թ. կհասցվի 5.4-ի, իսկ 2011թ.՝ 4.25-ի և Համաշխարհային բանկի Ինստիտուցիոնալ կառավարման ցուցանիշներից՝ Կոռուպցիայի հսկողության ցուցանիշը՝ 2006թ. 33.5-ից 2009թ. կհասցվի 40.5-ի, իսկ 2011թ.՝ 55-ի¹⁶²:

¹⁶² Որպես նպատակային ցուցանիշներ 2011թ. համար ընտրվել են այս ոլորտում Եվրոմիության անդամակցության «նվազագույն շեմն» անցած Բուլղարիայի և Ռումինիայի կողմից արդեն իսկ գերակատարված համապատասխան ցուցանիշները:

11. Սոցիալական պաշտպանության համակարգը

526. Սոցիալական պաշտպանությունն ըստ միջազգայնորեն ընդունված սահմանման, պետական ու ոչ պետական մարմինների այն գործողությունների ամբողջությունն է, որն ուղղված է տնային տնտեսությունների ու անհատների՝ որոշակի ռիսկերին դիմագրավելու կամ կարիքներ հոգալու հնարավորությունների ընդլայնմանը¹⁶³: Սոցիալական պաշտպանության պետական քաղաքականության նպատակը պետության կողմից այդ ռիսկերի կառավարումն է՝ դրանց կարգավորման ու նվազեցման նպատակով: Ըստ որում, այն բոլոր ռիսկերը կամ կարիքները, որոնք սոցիալական պաշտպանության առարկա են, ըստ միջազգայնորեն ընդունված մեթոդաբանության, դասակարգվում են հետևյալ խմբերի մեջ՝

1. **Վատառողջություն**, որն ընդգրկում է հիվանդության/ժամանակավոր անաշխատունակության հետ կապված դրամական օժանդակությունը՝ բացի հաշմանդամությունից:
2. **Հաշմանդամություն**, որն ընդգրկում է դրամական ու ոչ դրամական ոչ առողջապահական օժանդակությունը՝ կապված հաշմանդամների՝ տնտեսական ու սոցիալական կյանքում ներգրավվելու դժվարությունների հաղթահարման հետ:
3. **Ծերություն**, որն ընդգրկում է դրամական ու ոչ դրամական ոչ առողջապահական օժանդակությունը՝ կապված ծերության հետ:
4. **Վերապրում/Հարազատին կորցրածներ**, որն ընդգրկում է դրամական ու ոչ դրամական օժանդակությունը՝ կապված ընտանիքի անդամի մահվան հետ:
5. **Ընտանիք/Երեխաներ**, որն ընդգրկում է դրամական ու ոչ դրամական, ոչ առողջապահական օժանդակությունը՝ կապված հղիության, ծննդաբերության, որդեգրման, երեխաներին մեծացնելու և ընտանիքների ու երեխաների սոցիալական օժանդակության ու պաշտպանության հետ:
6. **Գործազրկություն**, որն ընդգրկում է դրամական ու ոչ դրամական օժանդակությունը՝ կապված գործազրկության հետ:
7. **Բնակարանային ապահովություն**, որն ընդգրկում է պետական հոգածության տարբեր մեխանիզմներ՝ ուղղված տնային տնտեսությունների կամ անհատների կաղմից բնակարանային խնդիրների լուծման օժանդակությանը:
8. **Սոցիալական մեկուսացվածության այլ տեսակներ**, որն ընդգրկում է դրամական ու ոչ դրամական օժանդակությունը՝ կապված սոցիալական մեկուսացվածության վերը չնշված այլ դեպքերի ու տեսակների հետ:

527. Սոցիալական պաշտպանության պետական համակարգի գործառույթները նշված յուրաքանչյուր խմբի համար հստակորեն սահմանվում են: Ըստ էության, նշված խմբերի մեջ դասվող ռիսկերը Հայաստանում պետականորեն կարգավորվում են սոցիալական պաշտպանության համակարգի՝ խոցելի բնակչությանն ուղղված հետևյալ ծրագրերի միջոցով.

- § պետական սոցիալական աջակցության ծրագրեր, ներառյալ՝ ընտանեկան նպաստները, երեխայի ծնվելու հետ կապված միանվագ նպաստները, երեխային խնամելու նպաստները, ինչպես նաև այլ դրամական և ոչ դրամական սոցիալական ծառայությունները,
- § սոցիալական ապահովության ծրագրեր հաշմանդամների, վետերանների և երեխաների համար, մասնավորապես՝ հաշմանդամների վերականգնման ծրագրեր՝ ելնելով հաշմանդամների վերականգնողական անհատական ծրագրերի

տվյալներից, հաշմանդամների, վետերանների և երեխաների տնային պայմաններում և համապատասխան հիմնարկներում սպասարկելու սոցիալական ծրագրեր,

§ պետական սոցիալական ապահովագրության ծրագրեր, որոնք բաղկացած են տարիքային և հաշմանդամության կենսաթոշակներից, ինչպես նաև ժամանակավոր անաշխատունակության և հղիության հետ կապված նպաստներից.

§ զբաղվածության ծրագրեր՝ ներառյալ գործազրկության նպաստները, գործազուրկների վերապատրաստման, ինչպես նաև հասարակական աշխատանքների ծրագրերը,

§ բնակչության առանձին նպատակային խմբերի համար արտոնությունների համակարգ:

528. Ելնելով ԿԶԾ-ի գերակայություններից, սոցիալական պաշտպանության քաղաքականության նպատակներից, ինչպես նաև այն սկզբունքից, որ սոցիալական պաշտպանության համակարգը չպետք է թուլացնի տնտեսական աճին հասարակության բոլոր խավերի ակտիվ մասնակցության տնտեսական մոտիվացիան՝ առավելագույնս արդյունավետ ու նպատակային ուղղելով պետական սահմանափակ ռեսուրսները առավել խոցելի խավերին, ԿԶԾ-ն նպատակադրում է ավելացնել այս ոլորտին ուղղված պետական ծախսերը: 2010թ. սոցիալական պաշտպանությանն ուղղված պետական ծախսերը 2007 թ. համեմատ ավելանալու են շուրջ 2, 2015 թ.՝ 4.1, իսկ 2021 թ.՝ ավելի քան 6.7 անգամ: Կաճի նաև այս ոլորտին ուղղված պետական ծախսերի հարաբերակցությունը ՀՆԱ նկատմամբ՝ 2021 թ. կազմելով 7.6 տոկոս՝ 2007 թ. ՀՆԱ նկատմամբ 4.7 տոկոսի համեմատ:

Աղյուսակ 11.1. Սոցիալական պաշտպանության համակարգի ֆինանսավորման հիմնական ցուցանիշների կանխատեսումները 2008-2021 թթ.

Ցուցանիշներ	2008	2009	2010	2011	2012	2015	2018	2021
Սոցիալական պաշտպանության պետական ծախսեր, մլրդ դրամ*	219.2	253.6	303.1	345.5	438.6	611.5	856.5	1,000.5
ՀՆԱ նկատմամբ, %	6.0	6.1	6.4	6.5	7.5	7.8	8.4	7.6
Ինդեքս, 2007 թ. =100	148.1	171.3	204.8	233.4	296.3	413.0	578.5	675.8
Այդ թվում՝								
Կենսաթոշակային ապահովում, մլրդ դրամ	158.4	182.5	225.2	261.5	330.7	469.6	681.1	814.4
ՀՆԱ նկատմամբ, %	4.3	4.4	4.8	5.0	5.6	6.0	6.7	6.2
Սոցիալական պաշտպանության ծախսերի նկատմամբ, %	72.3	71.9	74.3	75.7	75.4	76.8	79.5	81.4
Ինդեքս, 2007 թ. =100	173.5	199.8	246.6	286.4	362.1	514.3	745.9	891.9
Սոցիալական պաշտպանության այլ ծրագրեր, մլրդ դրամ	60.8	71.2	78.0	84.1	107.9	141.8	175.4	186.1
ՀՆԱ նկատմամբ, %	1.7	1.7	1.7	1.6	1.8	1.8	1.7	1.4
Սոցիալական պաշտպանության ծախսերի նկատմամբ, %	27.7	28.1	25.7	24.3	24.6	23.2	20.5	18.6

* 2010 թվականից՝ ներառյալ կուտակային կենսաթոշակային համակարգի ներդրման ծախսերը:

529. Սոցիալական պաշտպանության պետական ծախսերի գերակշիռ մասն ուղղված է կենսաթոշակային ապահովմանը: Ծրագրային ժամանակահատվածում, ելնելով ԿԶԾ-ի ընդհանուր գերակայություններից ու նպատակադրումներից, կենսաթոշակային ապահովմանն ուղղված միջոցների մասնաբաժինը սոցիալական պաշտպանության ընդհանուր ծախսերում աճելու է՝ 2021 թ. հասնելով շուրջ 80 տոկոսի: Համակարգի մնացած բոլոր ծրագրերի մասնաբաժինն ամբողջությամբ, համապատասխանաբար կրճատվելու է:

11.1. Սոցիալական աջակցության համակարգը

530. Սոցիալական աջակցության ոլորտի զարգացման հիմքում հասարակության բոլոր կողմերի՝ պետության, հասարակության, մասնավոր սեկտորի և, վերջապես, մարդու համագործակցությունն է, այդ կողմերի հավասար իրավունքների և համարժեք պարտականությունների դրսևորումը:

531. Սոցիալական աջակցության բնագավառի զարգացումներն ուղղված են դրամական օգնության համակարգի նպատակայնության և արդյունավետության բարձրացմանը, հիմնական ծրագրերի՝ պետական նպաստների, այդ թվում ընտանեկան նպաստի և սոցիալական այլ նպաստների միջոցով:

532. Սոցիալական աջակցության մյուս ուղղությունը սոցիալական ծառայությունների տրամադրումն է ինչպես առանձին, այնպես էլ փաթեթի տեսքով՝ ուղղված սոցիալապես խոցելի առանձին խմբերի անձանց սոցիալական կարիքների բավարարմանը՝ համապատասխան հիմքերի առկայության պայմաններում:

533. Սոցիալական աջակցության քաղաքականության ոլորտում առաջնահերթ է գերակայությունների տեղաշարժը՝ զուտ դրամական և զուտ ոչ դրամական օժանդակությունից դեպի սոցիալական ծառայությունների համալիր (փաթեթով կամ լրակազմով) տրամադրում: Սոցիալական ծառայությունների փաթեթները մշակվելու են հաճախորդի պահանջումներին համարժեք սոցիալական ծառայությունների տեսքով՝ նրա կարիքների գնահատման արդյունքում (հաշմանդամների համար՝ էլեկտրոն մշակված վերականգնողական անհատական ծրագրերի տվյալներից):

534. Աստիճանաբար ավելանալու է այլընտրանքային ծառայությունների տեսականին և դրանք տրամադրող կազմակերպությունների թիվը (պետական և ոչ պետական): Պետական նպաստները, սոցիալական ծառայությունների ոչ դրամական տեսակները կներառվեն տվյալ հաճախորդին պետության կողմից առաջարկվող սոցիալական լրակազմում կամ փաթեթում՝ որպես վերջինիս բաղկացուցիչ մասեր:

535. Ելնելով ԿԶԾ-ի ընդհանուր գերակայություններից, սոցիալական աջակցության բնագավառի առաջնահերթությունները ծրագրային ժամանակահատվածում լինելու են ընտանեկան նպաստի, երեխաների ծննդյան կապակցությամբ տրվող միանվագ նպաստի, մինչև 2 տարեկան երեխայի խնամքի նպաստի ու առաջին խմբի հաշմանդամ և «հաշմանդամ երեխա» խնամող ընտանիքի նպաստի ծրագրերը: Ըստ ԿԶԾ-ի աղքատության կրճատման հիմնական նպատակային ցուցանիշների (տե՛ս Աղյուսակ 3.2)՝ աղքատության կրճատման համեմատաբար ցածր տեմպերը արձանագրվում են 0-5 տարեկան, 5-16 տարեկան երեխաներ, հաշմանդամներ, առավելապես՝ «հաշմանդամ երեխաներ» ունեցող ընտանիքներում: Ուստի, դրամական օգնության քաղաքականությունն ուղղվելու է նշված սոցիալական խոցելի խմբերին՝ զուգակցելով սոցիալական պաշտպանության հիմնական ծրագրերով իրականացվող միջոցառումները (նպաստներ և կենսաթոշակներ):

536. Սոցիալական աջակցության համակարգի առաջնահերթ ծրագրերի ֆինանսական ցուցանիշների կանխատեսումները բերված են ստորև:

Աղյուսակ 11.2. Սոցիալական աջակցության համակարգի ֆինանսավորման հիմնական ցուցանիշների կանխատեսումները 2008-2021թթ.¹⁶⁴

Ցուցանիշներ	2008	2009	2010	2011	2012	2015	2018	2021
Սոցիալական աջակցության, զբաղվածության և սոցիալական այլ ծրագրեր, մյրդ դրամ, որից՝	60.8	71.2	78.0	84.1	107.9	141.8	175.4	186.1
Ընտանեկան նպաստներ, մյրդ դրամ	29.8	32.8	37.0	40.9	47.0	62.7	81.8	85.2
Մասնաբաժինը սոցիալական աջակցության, զբաղվածության և սոցիալական այլ ծրագրերում, %	49.0	46.0	47.4	48.7	43.5	44.2	46.7	45.8
Երեխայի ծննդյան միանվագ նպաստ, մյրդ դրամ	1.3	4.1	4.7	5.1	8.2	9.1	8.6	8.0
Մասնաբաժինը սոցիալական աջակցության, զբաղվածության և սոցիալական այլ ծրագրերում, %	2.2	5.8	6.1	6.1	7.6	6.5	4.9	4.3
Մինչև 2 տարեկան երեխայի խնամքի նպաստ, մյրդ դրամ	0.2	1.3	1.6	1.8	3.0	4.0	5.0	6.4
Մասնաբաժինը սոցիալական աջակցության, զբաղվածության և սոցիալական այլ ծրագրերում, %	0.4	1.8	2.1	2.2	2.8	2.8	2.8	3.5
Առաջին խմբի հաշմանդամ և հաշմանդամ երեխա խնամող ընտանիքի նպաստ, մյրդ դրամ	-	-	-	-	4.6	5.9	7.3	10.0
Մասնաբաժինը սոցիալական աջակցության, զբաղվածության և սոցիալական այլ ծրագրերում, %	-	-	-	-	4.3	4.1	4.2	5.4
Այլ ծրագրեր, մյրդ դրամ	29.5	33.0	34.7	36.2	45.2	60.2	72.6	76.4
Մասնաբաժինը սոցիալական աջակցության, զբաղվածության և սոցիալական այլ ծրագրերում, %	48.5	46.3	44.5	43.1	41.9	42.4	41.4	41.1


11.1.1. Ընտանեկան նպաստներ

11.1.1.1 Ներկա իրավիճակը և ընտանեկան նպաստների ազդեցության գնահատականը

537. Ընտանեկան նպաստների համակարգը (այսուհետ՝ ԸՆՀ, կազմավորվել է 1999թ-ին) նպատակաուղղված է երկրում ծայրահեղ աղքատության ու անհավասարության նվազեցմանը և դրա նշանակալի գործոն է: Համաձայն 2005թ. ՏՏԿԱՀ արդյունքների՝ ԸՆՀ-ի գործունեությունը նպաստում է, որպեսզի երկրում աղքատության մակարդակը նվազի 1.8 տոկոսայի կետով, այդ թվում՝ շատ աղքատության մակարդակը՝ 2.5 տոկոսային կետով: Այսինքն, համակարգն առավելապես մեծ ազդեցություն ունի երկրում շատ աղքատության նվազեցման վրա, ինչպես որ նպատակադրված է: Ըստ որում, ԸՆՀ-ի ազդեցությունն այս տեսանկյունից հատկապես մեծ է ՀՀ փոքր և միջին քաղաքներում և գյուղական բնակավայրերում, որտեղ աղքատության մակարդակն առավել բարձր է:

¹⁶⁴ Հաշվարկները հիմնված են երեխաների ծնունդների թվի, ինչպես նաև ընտանիքում 3-րդ և հաջորդ երեխաների ծննդյան ժողովրդագրական կանխատեսումների միջին սցենարի վրա: Տվյալ սցենարից փաստացի շեղումների դեպքում ֆիսկալ ռիսկերը կփակվեն ոլորտի այլ ծրագրերի հաշվին:

Գծանկար 11.1. Նախանպաստային «զուտ» աղքատության և ԸՆՀ ազդեցությամբ ձևավորված իրական աղքատության բնութագրիչները 2005թ. համար՝ Երևան, քաղաք, գյուղ կտրվածքով



Աղբյուրը՝ ՀՀ ԱՎԾ 2005թ., «Տնային տնտեսությունների կենսամակարդակի ամբողջացված հետազոտություն»:

538. ԸՆՀ-ն հիմնված է ինքնանույնականացման սկզբունքով դրանում հաշվառված ընտանիքների անապահովության գնահատման վրա: Ելնելով ընտանիքի անապահովության գնահատված միավորից՝ որոշվում է համակարգում հաշվառված ընտանիքի՝ նպաստ ստանալու իրավունքը և նպաստի չափը: 1999-2007թթ. ժամանակահատվածում ԸՆՀ-ում հաշվառված ընտանիքների քանակը նվազել է շուրջ 3 անգամ: 2007 թ-ին ԸՆՀ-ում հաշվառված է եղել ՀՀ ընտանիքների 22.1 տոկոսը՝ 1999 թ. 67.7 տոկոսի փոխարեն: 1999-2007թթ. նպաստառու ընտանիքների քանակը ևս նվազել է, սակայն ավելի փոքր չափով՝ 1.7 անգամ: Մինևույն ժամանակ, հաշվառված ընտանիքների թվում նպաստառուների մասնաբաժինն անընդհատ ավելացել է՝ 2007 թ. կազմելով հաշվառվածների շուրջ 72 տոկոսը (տե՛ս Աղյուսակ 11.3): ԸՆՀ-ում հաշվառվող և, հետևաբար, մասնաբաժինը ընտանիքների թվի նվազումը հիմնականում բացատրվում է երկրում աղքատության և հատկապես՝ շատ աղքատության կրճատմամբ:

Աղյուսակ 11.3. ԸՆՀ-ում հաշվառված և նպաստառու ընտանիքների քանակի դինամիկան 1999-2007թթ.

Ցուցանիշներ	1999	2000	2001	2002	2003	2004	2005	2006	2007
ԸՆՀ-ում հաշվառված ընտանիքների քանակը	520,009	394,773	319,587	272,696	216,550	210,053	208,910	181,907	172,484
ԸՆՀ-ում հաշվառված ընտանիքներ, տոկոս՝ ՀՀ ընտանիքների թվում	67.7	52.8	44.0	38.6	28.4	27.0	25.4	23.7	22.1
Ընտանեկան նպաստ ստացող ընտանիքների քանակը	211,555	199,456	174,800	149,603	141,218	134,224	127,167	130,190	124,689
Ընտանեկան նպաստ ստացող ընտանիքների մասնաբաժինը հաշվառված ընտանիքների թվում, %	40.7	50.5	54.7	54.9	65.2	63.9	60.9	71.5	72.3
Ընտանեկան նպաստ ստացող ընտանիքներ, տոկոս՝ ՀՀ ընտանիքների թվում	27.5	26.7	24.1	21.2	19.2	17.2	16.5	16.9	16.2

Աղբյուրը՝ ՀՀ ԱՎԾ, «ՀՀ սոցիալական պատկերը և աղքատությունը», 2005թ., 2006թ. և ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն:

539. Պայմանավորված երկրում աղքատության կրճատմամբ՝ 2000-2007թթ. ընտանեկան նպաստներին ուղղված բյուջետային միջոցները ՀՆԱ նկատմամբ կրճատվել են շուրջ 2 անգամ՝ 2007թ-ին կազմելով ՀՆԱ 0.83 տոկոսը: Սակայն անվանական արտահայտությամբ դրանք ավելացել են շուրջ 1.5 անգամ, ինչը, զուգակցվելով համակարգում հաշվառված ընտանիքների թվի նվազման հետ, հնարավորություն է տվել ավելի քան կրկնակի

բարձրացնելու նպաստառու ընտանիքի ամսական նպաստի միջին չափը: Նպաստ ստացող ընտանիքի մեկ անդամի հաշվով վճարվող ամսական միջին նպաստի չափը 2000-2006թթ. և աճել է՝ 2006թ. դրությամբ հնարավորություն տալով ծածկելու աղքատության պարենային շեմի 38 տոկոսը¹⁶⁵:

Աղյուսակ 11.4. Ընտանեկան նպաստներին ուղղված պետական ծախսերի դինամիկան 2000-2007թթ.

Ցուցանիշներ	2000	2001	2002	2003	2004	2005	2006	2007
Ընտանեկան նպաստների ընդհանուր գումարը, մլն դրամ	17,720	16,850	14,850	12,350	16,093	19,557	24,208	26,183
տոկոս՝ ՀՆԱ-ի նկատմամբ	1.72	1.43	1.09	0.76	0.84	0.87	0.91	0.83
տոկոս՝ պետական բյուջեի ծախսերի նկատմամբ	6.8	6.1	5.0	3.4	4.1	4.0	4.2	4.3
Մեկ ընտանիքին վճարվող ամսական միջին նպաստի չափը, դրամ	7,196	7,712	6,554	7,099	8,254	12,200	15,495	17,499
Նպաստ ստացող ընտանիքի մեկ անդամի հաշվով վճարվող ամսական միջին նպաստի չափը, դրամ	2,148	2,255	1,841	1,983	2,520	2,954	3,751	4,375
Նպաստ ստացող ընտանիքի մեկ անդամի հաշվով ամսական միջին նպաստի չափը աղքատության պարենային շեմի նկատմամբ, %	29.9	30.6	24.5	25.6	28.1	35.6	38.0	41.5*

* Կանխատեսում:

Աղբյուրը՝ ՀՀ ԱՎԾ, «ՀՀ սոցիալական պատկերը և աղքատությունը», 2005թ., 2006թ. և ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն:

540. Ըստ 2005թ. ՏՏԿԱՀ արդյունքների՝ նախանպաստային «զուտ» շատ աղքատ բնակչության կեսից ավելին, իսկ «զուտ» աղքատ բնակչության շուրջ 25 տոկոսը նպաստառու է: ԸՆՀ-ի շնորհիվ նախանպաստային «զուտ» շատ աղքատ բնակչության 35.9 տոկոսը դուրս է եկել շատ (պարենային) աղքատությունից, սակայն չի հաղթահարել աղքատության ընդհանուր շեմը: Իսկ նրանց ևս 0.1 տոկոսը նույնիսկ աղքատության շեմն է հաղթահարել՝ դուրս գալով աղքատությունից: ԸՆՀ-ի ազդեցությունը արդյունավետ է եղել երկրի «զուտ» շատ աղքատ ամբողջ բնակչության 36 տոկոսի համար՝ դուրս բերելով նրանց պարենային աղքատությունից: ԸՆՀ-ի ազդեցությունը արդյունավետ է եղել ընդհանուր առմամբ ՀՀ նախանպաստային «զուտ» աղքատ բնակչության 5.8 տոկոսի համար՝ դուրս բերելով նրանց աղքատությունից: Այսպիսով, ԸՆՀ-ն առավել մեծ ազդեցություն է ունեցել ՀՀ հատկապես շատ աղքատ բնակչության վրա՝ դուրս բերելով նրանց առավել քան մեկ երրորդին պարենային աղքատությունից:

¹⁶⁵ 2000-2004թթ. համար հարաբերակցությունը հաշվարկված է՝ օգտագործելով աղքատության պարենային գիծը մեկ շնչի հաշվով, որոնք հրապարակվել են ՀՀ ԱՎԾ-ի կողմից՝ ՀԲ պարզեցված մեթոդաբանության կիրառման արդյունքում (աղբյուրը՝ ՀՀ սոցիալական պատկերը և աղքատությունը: Վիճակագրական գեկույց, ՀՀ ԱՎԾ, 2005թ.): 2005-2006թթ. պարագայում աղքատության պարենային շեմը արտահայտվում է մեկ չափահաս անձի հաշվով: Համապատասխան հաշվարկներից հետո, բերելով մեկ չափահաս անձի հաշվով ծայրահեղ աղքատության պարենային շեմը մեկ շնչի հաշվով շեմի, 2006թ-ի համար գնահատվել է, որ ամսական ընտանեկան նպաստի շնչային մեծությունը հնարավորություն է տվել ծածկելու աղքատության պարենային շեմի 38 տոկոսը: 2007 թ. համար օգտագործվել են մեկ շնչի հաշվով աղքատության պարենային շեմի կանխատեսումները:

Աղյուսակ 11.5. ԸՆՀ-ի ազդեցության գնահատականները

Ցուցանիշներ	Նախանպաստային «զուտ» աղքատ բնակչություն	
	«Չուտ» աղքատներ	«Չուտ» շատ աղքատներ
Ընդամենը, %	100.0	100.0
Նրանցից՝ նպաստառու, %	25.3	50.7
Դուրս են եկել աղքատությունից (հաղթահարել են աղքատության ընդհանուր շեմը) ընտանեկան նպաստի շնորհիվ, %՝ նպաստառուների թվից	23.0	0.1
Դուրս են եկել ծայրահեղ աղքատությունից (հաղթահարել են աղքատության պարենային շեմը) նպաստների շնորհիվ, %՝ նպաստառուների թվից		70.9
Դուրս են եկել աղքատությունից (հաղթահարել են աղքատության ընդհանուր շեմը) ընտանեկան նպաստների շնորհիվ, %՝ ՀՀ բնակչության տվյալ խմբում	5.8	0.1
Դուրս են եկել ծայրահեղ աղքատությունից (հաղթահարել են աղքատության պարենային շեմը)՝ նպաստների շնորհիվ, %՝ ՀՀ բնակչության տվյալ խմբում		35.9

Աղբյուրը՝ ՀՀ ԱՎԾ, 2005թ. «Տնային տնտեսությունների կենսամակարդակի ամբողջացված հետազոտություն»:

541. Աղքատության խմբերի առումով, ԸՆՀ-ի հասցեականությունը շուրջ 60 տոկոս է: Ընտանեկան նպաստների միջոցով բնակչությանը տրամադրված միջոցների հասցեականությունն այս տեսանկյունից ևս կազմում է շուրջ 61 տոկոս:

Աղյուսակ 11.6. Ընտանեկան նպաստ ստացող բնակչության բաշխումն ըստ նախանպաստային կենսամակարդակի խմբերի, %

Ցուցանիշներ	Մասնաբաժինը՝ ընտանեկան նպաստ ստացող բնակչության թվում, %	Վճարված նպաստների մասնաբաժինը նպաստների ընդհանուր գումարի մեջ, %
Ընտանեկան նպաստ ստացող բնակչություն, %	100.0	100.0
որից՝ նախանպաստային «զուտ» աղքատներ, %	59.5	60.6
այդ թվում՝ «զուտ» շատ աղքատներ, %	26.9	29.0
ոչ աղքատներ	40.4	39.4

Աղբյուրը՝ ՀՀ ԱՎԾ, 2005թ., «Տնային տնտեսությունների կենսամակարդակի ամբողջացված հետազոտություն»:

542. Ընտանիքների անապահովության մակարդակի գնահատման կիրառվող մեխանիզմի սխալանքի չափը կարելի է որոշել ԸՆՀ-ում հաշվառված և նպաստ ստացող բնակչության համադրման միջոցով: ԸՆՀ-ում հաշվառված նախանպաստային «զուտ» շատ աղքատ ընտանիքների 92 տոկոսը նպաստ է ստանում¹⁶⁶: Այսինքն՝ համակարգի սխալը «զուտ» շատ աղքատ հաշվառված ընտանիքների նկատմամբ կազմում է 8 տոկոս և անապահովության գնահատման բանաձևը, ըստ էության, թույլ է տալիս նպաստառուների թվից դուրս չհանել շատ աղքատներին: Ընդհանուր առմամբ, հաշվառված «զուտ» աղքատ ընտանիքների 80 տոկոսն է նպաստ ստանում: Այս պարագայում համակարգի սխալանքի չափը ավելի քան 3 անգամ ավելին է՝ աղքատների համեմատ: Ուստի, համակարգի հասցեականության ու արդյունավետության բարձրացումը հիմնականում կապված է ոչ աղքատ ընտանիքների ընդգրկման սխալի պակասեցման հետ:

¹⁶⁶ Հաշվարկված է 2005թ. ՏՏԿԱՀ տվյալների հիման վրա:

543. Սակայն պետք է հաշվի առնել, որ ԸՆՀ-ի՝ ընտանիքների անապահովության գնահատումը հիմնված է փոքր-ինչ այլ, ավելի ընդգրկուն մեխանիզմի վրա, քան բնակչության տարանջատումն է սուկ ըստ աղքատության խմբերի¹⁶⁷. այն հաշվի է առնում նաև բնակչության խոցելիությունը (կամ աղքատության ռիսկը): Այդ իսկ պատճառով, ԸՆՀ ազդեցությունն ուղղված է բնակչության առավել աղքատ խավերին, և ավելի հիմնավորված է համակարգի հասցեականության գնահատումն իրականացնել բնակչության առավել աղքատ խավերի նկատմամբ:

544. Բնակչության առավել աղքատ 50 տոկոսի նկատմամբ ԸՆՀ-ի հասցեականությունը շուրջ 80 տոկոս է, և նրանց ուղղվում է ԸՆՀ-ի միջոցների 78 տոկոսը: Այսպիսի գնահատման դեպքում ԸՆՀ-ի՝ ոչ աղքատ խավերի ընդգրկման սխալանքը 20 տոկոս է: Ըստ որում, բնակչության ամենաաղքատ 10 տոկոսին ուղղվում են նպաստների համակարգով տրամադրվող դրամական միջոցների շուրջ 35 տոկոսը, իսկ այդ դեցիլի բնակչության շուրջ 45 տոկոսը նպաստառուներ են: 1-3 դեցիլներին, որոնք փաստորեն կազմում են «զուտ» շատ աղքատ ու աղքատ բնակչությունը, ուղղվում է նպաստների ընդհանուր գումարների 60 տոկոսը: Մյուս կողմից, բնակչության նույնիսկ ամենաաղքատ 10 տոկոսի կեսից ավելին (շուրջ 55 տոկոսը) ընտանեկան նպաստ ստացողների շարքում չէ: Սակայն այս երևույթը մեծապես պայմանավորված է համակարգում հաշվառվող բնակչության կազմով:

545. Աղքատ բնակչության մի զգալի մասն ընդհանրապես չի հաշվառվում ԸՆՀ-ում: 2005թ. ՏՏԿԱՀ արդյունքները վկայում են, որ ԸՆՀ-ում հաշվառված ընտանիքների կեսից ավելին՝ 55.9 տոկոսը, նախանպաստային «զուտ» ոչ աղքատ ընտանիքներն են եղել: «Չուտ» աղքատները կազմել են համակարգում հաշվառված ընտանիքների 44.1 տոկոսը, այդ թվում՝ «զուտ» շատ աղքատները՝ ընդամենը 14.9 տոկոսը: Այսինքն՝ համակարգում հաշվառված են եղել զգալի թվով համեմատաբար բարեկեցիկ ընտանիքներ: ԸՆՀ-ում հաշվառված են եղել «զուտ» աղքատ ընտանիքների 39.1 տոկոսը, այդ թվում՝ «զուտ» շատ աղքատների 60.7 տոկոսը և ոչ աղքատների՝ 12.6 տոկոսը: Այսինքն՝ «զուտ» աղքատ ընտանիքների շուրջ 60, իսկ շատ աղքատ ընտանիքների 40 տոկոսն ընդհանրապես չի փաստագրվում համակարգում: 2005թ-ին բնակչության ամենաաղքատ 10 տոկոսի շուրջ 50 տոկոսն է հաշվառված եղել ԸՆՀ-ում: Ուստի համակարգի հասցեականության ու արդյունավետության բարձրացումը պետք է կապել նաև աղքատ խավերի՝ համակարգին դիմելու ցուցանիշի բարձրացման հետ:

¹⁶⁷ Իրականում, կենսամակարդակի հետազոտությունների արդյունքում ստացված աղքատության խմբերը բավական զգայուն են աղքատության գծի նկատմամբ: Այսպես, աղքատության պարենային գծի ավելացումը շուրջ 660 դրամով, առաջ է բերում շատ աղքատ բնակչության աճ 30 տոկոսով, իսկ աղքատության ընդհանուր գծի ավելացումը շուրջ 1000 դրամով՝ աղքատության աճ՝ 8 տոկոսով: Սա նշանակում է, որ աղքատ ու շատ աղքատ բնակչության մի զգալի մասի ամսական սպառման մեծությունը կենտրոնացած է աղքատության պարենային ու ընդհանուր գծերի շուրջը: Ուստի ճիշտ չէ միանշանակ պնդելը, որ նպաստառու բնակչության շուրջ 40 տոկոսը իսկապես սոցիալական օժանդակության կարիք չունի և միջոցների 40 տոկոսը անարդյունավետ է ծախսվում:

Աղյուսակ 11.7. Նախանպաստային սպառման դեցիլներում ընտանեկան նպաստ ստացող բնակչությունն ու նպաստներին ուղղված գումարները

Նախանպաստային սպառման դեցիլային խմբեր	Նպաստառու բնակչության մասնաբաժինը դեցիլի բնակչության թվում, %	Նպաստառու բնակչության մասնաբաժինը ընդամենը նպաստառու բնակչության թվում, %	Ընտանեկան նպաստների տեսքով տրամադրվող ամսական ռեսուրսների մասնաբաժինը, %	Նպաստառու/հաշվառված բնակչություն հարաբերակցությունը
Ամենաաղքատ 10%	44.6	33.4	35.3	0.9
2-րդ դեցիլ	19.0	14.1	14.0	0.6
3-րդ դեցիլ	15.5	11.6	10.7	0.6
4-րդ դեցիլ	13.6	10.1	9.4	0.6
5-րդ դեցիլ	11.3	8.4	8.7	0.7
6-րդ դեցիլ	9.0	6.7	6.4	0.5
7-րդ դեցիլ	7.2	5.4	4.5	0.5
8-րդ դեցիլ	6.5	4.8	4.7	0.5
9-րդ դեցիլ	4.5	3.3	3.7	0.5
Ամենահարուստ 10%	3.0	2.2	2.6	0.4
Ընդամենը	13.4	100.0	100.0	0.7

Աղբյուրը՝ ՀՀ ԱՎԾ, 2005թ., «Տնային տնտեսությունների կենսամակարդակի ամբողջացված հետազոտություն»:

546. Բնակչության աղքատ խավերի՝ համակարգում չփաստագրվելու հիմնական պատճառը անվստահությունն է համակարգի նկատմամբ: Ըստ 2005թ. ՏՏԿԱՀ արդյունքների՝ ԸՆՀ-ում չհաշվառված «գուտ» աղքատ և շատ աղքատ ընտանիքների կեսից ավելին չի հավատում, որ ԸՆՀ դիմելուց հետո նպաստ կստանա: Ըստ «գուտ» աղքատության խմբերի վերլուծությունը վկայում է, որ համակարգին չդիմած «գուտ» շատ աղքատ ընտանիքների 2.1 տոկոսը տեղյակ չի եղել համակարգի մասին, 6.7 տոկոսը փաստաթղթերի հետ կապված դժվարություններ է ունեցել, 53.5 տոկոսը չի հավատում, որ նպաստ կստանա, ևս շուրջ 18 տոկոսը իրեն ապահովված է համարել: Ըստ որում, «գուտ» աղքատների ու շատ աղքատների շրջանում փաստաթղթերի ձեռքբերման հետ կապված դժվարությունները, որպես համակարգ չդիմելու պատճառ, ավելի հաճախ են նշվում, այսինքն՝ համակարգում չընդգրկված «գուտ» աղքատ ու շատ աղքատ ընտանիքների համար, ոչ աղքատների համեմատ, համապատասխան փաստաթղթերի ձեռքբերումը ավելի դժվար է:


547. Աղքատության խմբերի սահմանումը, ըստ միջազգայնորեն ընդունված մոտեցման, հիմնված է բնակչության սպառման բնութագրիչների վրա: Այս մոտեցումը հաշվի է առնում անցումային տնտեսություններում բնակչության եկամուտների լիակատար ֆորմալացման ու փաստագրման անիրատեսականությունը: Սպառման բնութագրիչները սովորաբար գերազանցում են հայտարարվող եկամուտները, այդ իսկ պատճառով դրանք ավելի ճշգրիտ են ներկայացնում բնակչության իրական կենսամակարդակի ու աղքատության պատկերը¹⁶⁸: Եթե ԸՆՀ-ի հասցեականությունը դիտարկելու լինեինք բնակչության եկամուտների տեսանկյունից, ապա կստացվեր, որ համակարգի հասցեականությունը 2005թ-ին կազմել է շուրջ 90 տոկոս: Պարզ է, որ եկամուտների հայտարարման ներկայիս պայմաններում ընտանիքների անապահովության գնահատումը չի կարող հենվել միայն դրանց եկամուտների չափի վրա:

¹⁶⁸ Այսպես, եթե որպես աղքատության չափանիշ վերցվեին հայտարարվող ամսական եկամուտների մեծությունները, ապա 2005թ. ՏՏԿԱՀ-ի արդյունքներով՝ երկրում շատ աղքատ կլինեին բնակչության 28.4 և աղքատ՝ 53.4 տոկոսը: Մինչդեռ, ըստ հայտարարված սպառման, երկրում 2005թ-ին շատ աղքատ է եղել բնակչության 4.6 և աղքատ՝ 29.8 տոկոսը: Ակնհայտ է հայտարարվող եկամուտների և սպառման բազմակի տարբերություն, որն ուռճացնում է երկրում ծայրահեղ աղքատության մեջ գտնվող բնակչության ներկայացվածությունը 5.7, իսկ ընդհանուր առմամբ աղքատ բնակչության ներկայացվածությունը՝ 1.7 անգամ:

548. Ընտանեկան նպաստների համակարգի, որպես սոցիալական օժանդակության ոլորտի բաղկացուցիչներից մեկի նկատմամբ ԿԶԾ-ի գերակայությունը համակարգի առավել հասցեական ու արդյունավետ օգտագործումն է՝ բնակչության աղքատ խավերի կենսամակարդակի բարձրացման և այդպիսով՝ երկրում աղքատության ու անհավասարության հաղթահարման նպատակով:

549. Հաշվի առնելով, որ ա) վերջին տարիներին երկրում տնտեսական աճի տեմպերը շուրջ կրկնակի գերազանցել են ԱՀՌԾ-ի կանխատեսումները, ինչը հանգեցրել է պետության ֆինանսական ներուժի կտրուկ ավելացմանը, բ) ծայրահեղ աղքատության՝ ԱՀՌԾ-ով կանխատեսվածից ավելի արագ տեմպերով կրճատումը և գ) երկրում աղքատության հաղթահարման նպատակադրումը, Կայուն զարգացման ծրագրի շրջանակներում, ի տարբերություն ԱՀՌԾ-ի, ընտանեկան նպաստների քաղաքականությունը ուղղված է լինելու ոչ միայն ծայրահեղ աղքատներին, այլ տնտեսական կյանքում ինքնուրույն ներգրավվելու միջոցով սահմանափակ հնարավորություններ ունեցող խոցելի սոցիալական խմբերին աղքատությունից դուրս բերելուն:

Գծանկար 11.2. Աղքատության ընդհանուր շեմի ու ՆՍԶ-ի նկատմամբ աղքատ և նպաստառու բնակչությունը 2008-2021 թթ.



550. Ըստ Կայուն զարգացման ծրագրի նպատակադրումների՝ 2009-2012 թթ. ընթացքում իրականացվելիք քաղաքականությունը ուղղված է լինելու նպաստառու ընտանիքների թվաքանակի համապատասխանեցմանը աղքատ ընտանիքների քանակին¹⁶⁹ այնպես, որ 2012 թ. նպաստառու ընտանիքներ/աղքատ ընտանիքներ հարաբերակցությունը հասնի 1-ի (ներկայումս նպաստառու ընտանիքների հարաբերակցությունը աղքատ ընտանիքների նկատմամբ 0.7 է): 2013-2021 թթ. ընթացքում նշված հարաբերակցությունը շարունակելու է աճել՝ 2021 թ. հասնելով 1.7-ի և այդպիսով ապահովելով միջոցների ուղղորդումը նվազագույն սպառողական զամբյուղից¹⁷⁰ ցածր սպառում ունեցող ընտանիքների բարեկեցության

¹⁶⁹ Աղքատ ընտանիքների քանակը՝ որոշված որպես ՀԲ մեթոդաբանությամբ սահմանվող աղքատության ընդհանուր շեմից ցածր սպառում ունեցող ընտանիքներ:

¹⁷⁰ Կայուն զարգացման ծրագրի սույն փաստաթղթում «նվազագույն սպառողական զամբյուղ» (հաշվարկվում է ՀՀ ԱՎԾ-ի կողմից՝ ըստ ՀՀ առողջապահության մախարարության կողմից մշակված սննդամթերքի կազմի, կառուցվածքի և էներգետիկայի) և «կենսաապահովման նվազագույն բյուջեի չափ/արժեք» արտահայտությունները փոխադարձորեն համարժեք են, նկատի ունենալով, որ կենսաապահովման նվազագույն բյուջեի չափը օրենսդրորեն քանակապես դեռևս սահմանված չէ: Հետագայում, վերջինիս քանակային ցուցանիշների սահմանումից հետո, փաստաթղթի «նվազագույն սպառողական զամբյուղ» արտահայտությունը, անհրաժեշտության դեպքում, պետք է նույնացվի «կենսաապահովման նվազագույն բյուջեի չափ/արժեք» արտահայտության հետ:

բարձրացմանը: Նման մոտեցումը, ըստ կանխատեսումների, հնարավորություն կտա նպաստառու ընտանիքների քանակ/ՆՍԶ-ի նկատմամբ աղքատ ընտանիքների քանակ հարաբերակցությունն անընդմեջ մեծացնել՝ 2021 թ. հասցնելով 1-ի:

551. Ըստ ԿԶԾ-ի կանխատեսումների, ՀԲ մեթոդաբանությամբ աղքատ ընտանիքների քանակն անընդհատ պակասելու է, իսկ նպաստառու ընտանիքների թիվը նվազելու է 2019 թվականից հետո, նպատակ ունենալով ապահովել նպաստառու ընտանիքների այնպիսի քանակ, որն աստիճանաբար, մինչև 2021 թ. համապատասխանեցվի ՆՍԶ-ից ցածր սպառում ունեցող ընտանիքների քանակին: Այսպիսի մոտեցմամբ՝ 2021 թ. ընտանեկան նպաստների համակարգում ընդգրկված կլինի շուրջ 97 հազար ընտանիք:

552. Միաժամանակ, ընտանեկան նպաստներին ուղղված պետական հատկացումների գումարը, 2007 թ. նկատմամբ, 2012 թ. աճելու է 1.8 անգամ, իսկ 2021 թ.՝ շուրջ 3 անգամ: Վերջինիս՝ ՀՆԱ նկատմամբ հարաբերակցությունը 2008-2018 թթ. մնալու է միևնույն՝ 0.8 տոկոսի սահմաններում, այնուհետև, սկսելու է նվազել՝ 2021 թ. հասնելով 0.65 տոկոսի:

Աղյուսակ 11.8. Ընտանեկան նպաստներն ու աղքատությունը 2008-2021թթ.

Ցուցանիշներ	2008	2009	2010	2011	2012	2015	2018	2021
Ընտանեկան նպաստներին ուղղված պետական ծախսերը, մլն դրամ	29,761	32,757	36,963	40,927	46,967	62,702	81,827	85,245
% ՀՆԱ նկատմամբ	0.81	0.79	0.79	0.78	0.80	0.80	0.80	0.65
Նպաստառու ընտանիքների քանակ	116,204	114,000	114,000	114,000	114,000	114,000	114,000	97,666
Աղքատ ընտանիքների քանակ՝ ըստ ՀԲ մեթոդաբանության	159,631	148,743	138,232	126,496	114,702	83,785	70,859	57,469
Նպաստառու ընտանիքներ/ ՀԲ մեթոդաբանությամբ աղքատ ընտանիքներ հարաբերակցություն	0.7	0.8	0.8	0.9	1.0	1.4	1.6	1.7
Աղքատ ընտանիքների քանակ՝ ըստ ՆՍԶ-ի (ՆՍԶ-ից ցածր սպառում ունեցող ընտանիքներ)	291,712	274,790	246,262	225,789	205,216	161,960	130,162	97,392
Նպաստառու ընտանիքներ/ ՆՍԶ-ի նկատմամբ աղքատ ընտանիքներ հարաբերակցություն	0.4	0.4	0.5	0.5	0.6	0.7	0.9	1.0

553. Դա հնարավորություն կտա 2007-2012թթ. ընթացքում մեծացնել մեկ ընտանիքին վճարվող ընտանեկան նպաստի միջին ամսական գումարը շուրջ 2 անգամ, իսկ 2021 թ., 2007 թ. համեմատ, գրեթե քառապատկել այն՝ հասցնելով շուրջ 72 հազար դրամի: Ընտանեկան նպաստի մեծության այսպիսի աճը շահառու ընտանիքների համար 2020-2021 թթ. կապահովի միջին ընտանիքի հաշվով աղքատության պարենային շեմի¹⁷¹ ծածկումը շուրջ 103 տոկոսով, ինչպես նաև աղքատության ընդհանուր շեմի շուրջ 70 տոկոսի և ՆՍԶ-ի շուրջ 30 տոկոսի ծածկումը նպաստով:

Աղյուսակ 11.9. Նպաստառու ընտանիքի հաշվով միջին ամսական նպաստի մեծությունն ու ընտանեկան նպաստի մեծության հարաբերակցությունը միջին ընտանիքի հաշվով աղքատության շեմերի ու ՆՍԶ նկատմամբ 2008-2021թթ.

Ցուցանիշներ	2008	2009	2010	2011	2012	2015	2018	2021
-------------	------	------	------	------	------	------	------	------

¹⁷¹ Որպես միջին ընտանիք ընդունվել է 4 անդամից (երկու չափահաս, երկու երեխա) բաղկացած ընտանիքը: Մեկ միջին ընտանիքի հաշվով աղքատության պարենային և ընդհանուր շեմերն ու դրանց կանխատեսումները հաշվարկվել են՝ հիմք ընդունելով մեկ չափահաս անձի հաշվով աղքատության պարենային և ընդհանուր շեմերն ու դրանց կանխատեսումները՝ վերահաշվարկելով դրանք երկու երեխա, երկու չափահասից կազմված ընտանիքի համար: Վերահաշվարկի համար հիմք է ծառայել մեկ չափահաս անձին համարժեք սպառման գնահատման ՀՀ ԱՎԾ-ի մեթոդաբանությունը:

Մեկ ընտանիքին վճարվող ամսական միջին նպաստի չափը, դրամ	21,090	23,658	26,695	29,558	33,921	45,285	59,097	71,862
Ինդեքս, 2007թ.=100	120.5	135.2	152.6	168.9	193.8	258.8	337.7	410.7
Նպաստի միջին չափ/մեկ միջին ընտանիքի հաշվով ծայրահեղ աղքատության շեմ հարաբերակցություն, %	46.0	48.7	52.9	56.7	63.2	77.2	92.1	102.6
Նպաստի միջին չափ/մեկ միջին ընտանիքի հաշվով աղքատության ընդհանուր շեմ հարաբերակցություն, %	30.5	32.3	35.1	37.6	41.9	51.2	61.1	68.0
Նպաստի միջին չափ/մեկ միջին ընտանիքի հաշվով ՆԱԶ հարաբերակցություն, %	14.5	15.4	16.7	17.9	19.9	24.3	29.1	32.3


554. Ընտանեկան նպաստների չափի մեծացումը, սակայն, չպետք է հանգեցնի շահառուների՝ տնտեսական ակտիվության ու աշխատանքային շուկայում ներգրավման խթանների նվազման: Այդ իսկ պատճառով՝ նպաստների չափերը կմեծացվեն այնպես, որ ծրագրային ամբողջ ժամանակահատվածում, նվազագույն ու միջին աշխատավարձերի անընդհատ աճին զուգընթաց, մեկ շնչի հաշվով ամսական ընտանեկան նպաստը կտատանվի նվազագույն աշխատավարձի՝ միջինում 18-20 տոկոսի, իսկ միջին աշխատավարձի՝ միջինում 6-7 տոկոսի շրջակայքում:

Աղյուսակ 11.10. Ընտանեկան նպաստների հարաբերակցությունը նվազագույն և միջին աշխատավարձերի նկատմամբ 2008-2021թթ.

Ցուցանիշներ	2008	2009	2010	2011	2012	2015	2018	2021
Նպաստի միջին ամսական մեծությունը մեկ շնչի հաշվով, դրամ	5,272	5,914	6,674	7,390	8,480	11,321	14,774	17,966
Նվազագույն ամսական աշխատավարձ, դրամ	25,000	30,000	37,370	41,560	45,400	57,300	72,000	88,300
Միջին ամսական աշխատավարձ, դրամ	90,967	103,313	115,665	128,692	139,792	176,338	218,115	267,534
Մեկ շնչի հաշվով նպաստ/նվազագույն աշխատավարձ հարաբերակցություն, %	21.1	19.7	17.9	17.8	18.7	19.8	20.5	20.3
Մեկ շնչի հաշվով նպաստ/ միջին աշխատավարձ հարաբերակցություն, %	5.8	5.7	5.8	5.7	6.1	6.4	6.8	6.7

555. Ըստ կանխատեսումների՝ այսպիսի քաղաքականությունը հնարավորություն կտա միայն ընտանեկան նպաստների ազդեցությամբ կրճատելու աղքատության ընդհանուր գծից պակաս սպառում ունեցող բնակչության ներկայացվածությունը երկրում. 2008 թ.՝ 4.8 տոկոսային կետով, իսկ 2012-2015 թթ.՝ միջինում 5 տոկոսային կետով՝ 2005թ 1.8 տոկոսային կետի փոխարեն:

Գծանկար 11.3. ԸՆՀ-ի ազդեցության գնահատականները աղքատության (ըստ աղքատության ընդհանուր շեմի) նվազեցման վրա 2005-2015թթ.



556. Ծրագրված քաղաքականությունը, ըստ կանխատեսումների, հնարավորություն կտա ՆՍԶ-ի նկատմամբ աղքատ բնակչության քանակը 2015թ-ին, 2007թ-ի համեմատ, կրճատելու շուրջ 2 անգամ, իսկ 2021թ-ին՝ ավելի քան 3 անգամ:

557. Չնայած ԸՆՀ-ի հիմքում անապահովության գնահատման տարածքային տարբերակվածություն ուղղակիորեն ընկած չէ, այն կշարունակի առավել արդյունավետ մնալ փոքր ու միջին քաղաքների ու հատկապես՝ գյուղական բնակչության համար: Ըստ կանխատեսումների, միջնաժամկետ հեռանկարում (2008-2015թթ.) համակարգի ազդեցությամբ ՀՀ փոքր ու միջին քաղաքներում նախանպաստային «զուտ» աղքատության մակարդակը կնվազի միջինում 3.5 տոկոսային կետով, իսկ գյուղական բնակավայրերում՝ շուրջ 10 տոկոսային կետով: Դա կնպաստի երկրի բնակչության կենսամակարդակի տարածքային անհամաչափությունների մեղմացմանը:

558. Հաշվի առնելով, որ նպաստառու ընտանիքների անապահովության գնահատման ուղղակի՝ միայն ընտանիքի եկամտի մեծության վրա հիմնված մեթոդին անցումը եկամուտների հայտարարման ներկայիս պայմաններում անիրատեսական է, նախատեսվում է աշխատել գործող անուղղակի մեթոդի բարելավման ուղղությամբ՝ այն աղքատության կոռելյանտներին առավելագույնս համապատասխանեցնելու և ոչ աղքատ խավերի ընդգրկման սխալը հնարավորին չափ փոքրացնելու համար: Միևնույն ժամանակ, ուղղակի մեթոդին անցումը հնարավոր կլինի սկսել այն ժամանակ, երբ տնային տնտեսությունների եկամուտների հայտարարվող մակարդակը հնարավորություն կտա մոտարկելու երկրի տնօրինվող եկամտի ընդհանուր գումարի առնվազն 80 տոկոսը:

559. Ընտանեկան նպաստների համակարգի և սոցիալական օժանդակության այլ ծրագրերի գույակցումը (կրթական, առողջապահական ծառայություններ, սակագների ու վարկերի տոկոսների արտոնյալ պայմանների տրամադրում և այլն) նախատեսվում է իրականացնել այն հիմքի վրա, որ ա) սոցիալական օժանդակության ծրագրերն իրականացվեն ոչ միայն և ոչ թե գերազանցապես նպաստառու ընտանիքների հենքի վրա, այլ ամեն որոշակի դեպքում գտնվեն տվյալ ծրագրի տեսանկյունից ամենախոցելի խավերը, կամ որ նույնն է՝ ամենաարդյունավետ շահառուները, բ) գնահատվեն նպաստառու ընտանիքներին տրամադրվող այլ սոցիալական օժանդակության փաթեթներն ու դրանց ազդեցությունը:

560. Վերը բերված նպատակների իրագործումը, ինչպես նաև աղքատ ու նպաստառու ընտանիքների քանակի կրճատումը ենթադրում են, որ գույակեռաբար պետք է բարձրանան ԸՆՀ-ի հասցեականությունն ու արդյունավետությունը: Համակարգի գործունեության

հասցեականությունն ու արդյունավետությունը մեծացնելու նպատակով ծրագիրը նախանշում է հետևյալ առաջնահերթությունները՝

- § **համակարգում հաշվառված ընտանիքների անապահովության գնահատման կիրառվող անուղղակի (բալային) մեխանիզմի կատարելագործում**՝ ուղղված ոչ աղքատ խավերի ընդգրկման սխալանքի իջեցմանը առավելագույնը մինչև 10 տոկոսի՝ առնվազն 2015թ-ին և այդպիսով՝ համակարգի հասցեականության բարձրացմանը՝ մինչև 90 տոկոսի,
- § **համակարգում փաստագրված ծայրահեղ աղքատ և աղքատ բնակչության բարձր ներկայացվածության ապահովում, համակարգում փաստագրված ամենաաղքատ 10 տոկոս բնակչության ներկայացվածությունը հասցնելով առնվազն 80 տոկոսի՝ բնակչության և հատկապես աղքատների իրազեկման ու հայտնաբերման ակտիվ մեթոդների կիրառման, աղքատ ընտանիքների համար փաստաթղթերի հավաքագրման պարզ ու հասանելի սխեմաների ապահովման միջոցով,**
- § **համակարգի հասցեականության, արդյունքների ու ազդեցության գնահատման պարբերական մոնիթորինգի ճկուն համակարգի ներդրում, ի լրումն ՏՏԿԱՀ-երի արդյունքների վերլուծության և այդ նպատակով օգտագործման:**

11.1.2. Երեխայի ծննդյան միանվագ նպաստ

561. Երեխայի ծննդյան միանվագ նպաստի չափը 2003 թվականի հոկտեմբերից բարձրացել է՝ հավասարվելով 35 հազար դրամի և պահպանվելով այդ մակարդակի վրա: Այն նպաստել է հանրապետությունում ծնունդների չգրանցման դեպքերի կրճատմանը: Ստորև ներկայացվում է ըստ տարիների երեխայի ծննդյան կապակցությամբ նպաստ ստացած անձանց թիվը:

Աղյուսակ 11.11. Երեխայի ծննդյան կապակցությամբ միանվագ նպաստ ստացած անձանց թիվը 2001-2007 թթ.

Ցուցանիշներ	2001	2002	2003	2004	2005	2006	2007
Ծնունդներ	32,065	32,229	35,793	37,520	37,499	37,639	40,142
Նպաստառուներ	25,674	25,707	28,884	30,283	25,237	29,201	38,801
Նպաստառուների թիվ/ ծնված-ներ հարաբերակցություն, %	80.1	79.8	80.7	80.7	67.3	77.6	96.6

562. Հաշվի առնելով ընտանիքի կողմից ծննդյան կապակցությամբ արվող լրացուցիչ ծախսերը և դրանց մեծացումը, նպաստի չափը բարձրացվելու է և տարբերակվելու՝ պայմանավորված ընտանիքում ծնված երեխայի հաջորդականությամբ:

563. Նպաստի չափի տարբերակման անհրաժեշտությունը պայմանավորված է այն հանգամանքով, որ մինչ այժմ ծնելիության խթանմանն առնչվող ծրագրերն իրականացվել են ընտանեկան նպաստի համակարգի միջոցով, սակայն այդ համակարգում հաշվառված ընտանիքների թիվը բավականին սահմանափակ է, իսկ երկրի ժողովրդագրական ցուցանիշները հիմնախնդրային են: Ըստ ՀՀ ԱՎԾ-ի իրականացրած Հայաստանի ժողովրդագրության և առողջության հարցերի հետազոտության տվյալների՝ Հայաստանում ծնելիության գումարային ցուցանիշը 2005 թվականի համար կազմել է 1.7՝ մեկ կնոջ հաշվով: Ընդ որում հարկ է նշել, որ նշված ցուցանիշը նույնն է եղել 2000 թվականին և վերջին 5 տարիների ընթացքում որևէ փոփոխություն չի կրել: Բնական վերարտադրություն ապահովելու համար անհրաժեշտ է, որ այս ցուցանիշը քիչ բարձր լինի 2.0-ից: Մինչդեռ ՀՀ-ում, երեխաների ծնունդների ընդհանուր թվի աճի պարագայում, գրանցվում է երրորդ և դրանից հետո ծնված երեխաների թվի կրճատում: Ծնելիության գործակիցը 2-ից բարձր մեծության հասնելու համար երեք երեխա ունեցող ընտանիքների թիվը պետք է աճի: Այդ իսկ

պատճառով, անհրաժեշտ է 3-րդ և հաջորդ երեխայի ծնվելու փաստի նկատմամբ հատուկ պետական հոգաձուլություն դրսևորել:

564. Ծրագրային ժամանակահատվածում երեխայի ծննդյան միանվագ նպաստների չափը նախատեսվում է կապել նվազագույն սպառողական զամբյուղի մեծության հետ: Ընդ որում, առաջին և երկրորդ երեխայի ծննդյան դեպքում այս նպաստի մեծությունը միջնաժամկետ հատվածում նախատեսվում է սահմանել 50, 56 և 58 հազար դրամ՝ համապատասխանաբար՝ 2009, 2010 և 2011 թվականների համար, իսկ այնուհետև, այն հաշվարկել՝ նվազագույն սպառողական զամբյուղի ամսական արժեքը¹⁷² բազմապատկելով 2012 թ. 1.5, իսկ 2012 թ. հետո՝ 1.75 գործակցով: 2009 թ. երրորդ և հաջորդ երեխայի ծննդյան միանվագ նպաստի մեծությունը նախատեսվում է սահմանել 430 հազար դրամ, 2010-2011թթ. այն համապատասխանեցվելու է ՆՍԶ տարեկան արժեքին (կամ ՆՍԶ ամսական արժեքի 12 պատիկ մեծությանը), իսկ սկսած 2012 թ.-ից՝ ՆՍԶ արժեքի կրկնապատիկին (կամ ՆՍԶ ամսական արժեքի 24 պատիկ մեծությանը)՝ պահպանելով այդ մակարդակը մինչև ծրագրային ժամանակահատվածի վերջը: Միաժամանակ, նախատեսվում է ընտանիքում ծնված երրորդ և հաջորդ երեխաների համար տրվող նպաստի մի մասը վճարել միանվագ, իսկ մնացած մասը՝ օրենսդրությամբ սահմանված նպատակային նշանակության և ժամկետներում (օրինակ՝ երեխայի երեք տարեկան դառնալու դեպքում և այլն): Ընդ որում, ծրագրում չեն ընդգրկվի առավել բարձր եկամուտներ ունեցող (հարկային օրենսդրությամբ սահմանված՝ եկամուտների հայտարարագիր ներկայացնող) ընտանիքները:

565. Այսպիսի մոտեցումը հնարավորություն կտա առաջին և երկրորդ երեխայի ծննդյան միանվագ նպաստը 2012 թ. հասցնել 64 հազար, 2015 թ.՝ 81 հազար, իսկ 2021 թ.՝ 97 հազար դրամի: Այսպիսով՝ առաջին և երկրորդ երեխայի ծննդյան միանվագ նպաստի մեծությունը 2012 թ., 2008 թ. համեմատ, կաճի 1.8 անգամ, 2015 թ.՝ 2.3, իսկ 2021 թ.՝ 2.8 անգամ:

Աղյուսակ 11.12. Երեխայի ծննդյան կապակցությամբ տրվող միանվագ նպաստի չափի կանխատեսումները 2008-2021թթ.

Ցուցանիշներ	2008	2009	2010	2011	2012	2015	2018	2021
Առաջին և երկրորդ երեխայի ծննդյան միանվագ նպաստի մեծությունը, դրամ*	35,000	50,000	56,000	58,000	64,000	81,000	89,000	97,000
Ինդեքս, 2008=100	100.0	142.9	160.0	165.7	182.9	231.4	254.3	277.1
Նվազագույն սպառողական զամբյուղ, ամսական, դրամ	36,316	38,499	39,977	41,325	42,566	46,509	50,829	55,537
Նպաստի չափ/ՆՍԶ հարաբերակցություն, %	96.4	129.9	140.1	140.4	150.4	174.2	175.1	174.7
Երրորդ և հաջորդ երեխայի ծննդյան միանվագ նպաստի մեծությունը, հազար դրամ*		430	480	496	1,000	1,000	1,000	1,000
Երեխայի ծննդյան միանվագ նպաստի գծով պետական ծախսեր, մլրդ դրամ		4.1	4.7	5.1	8.2	9.1	8.6	8.0

* Վարչարարության դյուրինության նպատակով գումարները կլորացված են մինչև հազարները:

566. Ծրագրով նախատեսվում է երրորդ և հաջորդ երեխայի ծննդյան միանվագ նպաստի տարբերակում սահմանել սկսած 2009 թվականից: 2009-2012թթ. ընթացքում այս նպաստի մեծությունը շարունակաբար աճելու է՝ 2012 թ. կազմելով 1 միլիոն դրամ, որից հետո պահպանելու է այդ մակարդակը մինչև 2021թվականը:

¹⁷² Հաշվարկվում է որպես նախորդ տարվա երրորդ եռամսյակի սպառողական զամբյուղի ամսական արժեքի և տվյալ տարվա կանխատեսվող գնաճի մեծության արտադրյալ:

11.1.3. Մինչև երկու տարեկան երեխայի խնամքի նպաստ

567. Ներկայումս մինչև 2 տարեկան երեխայի խնամքի նպաստի իրավունք ունի աշխատող ծնողն իր երեխայի խնամքի արձակուրտում գտնվելու ժամանակահատվածում՝ մինչև երեխայի երկու տարեկան լրանալը: Ստորև ներկայացվում է նպաստառուների թիվը սկսած 1999 թվականից:

Աղյուսակ 11.13. Մինչև երկու տարեկան երեխայի խնամքի նպաստառուների թիվը 1999-2006 թթ.

	1999	2000	2001	2002	2003	2004	2005	2006
Նպաստառու	10450	10091	8780	7326	7721	7330	6320	5404

568. Մինչև 2007 թվականը նպաստի ամսական չափը կազմել է ընդամենը 2300 դրամ, իսկ 2007 թվականի համար նպաստի չափը սահմանվել է 3000 դրամ, որը բարձրացվել է նպաստառուների թվի կրճատման հաշվին՝ ՀՀ պետական բյուջեում այդ նպատակի համար հատկացված միջոցների շրջանակում: Հաշվի առնելով, որ երեխայի խնամքի նպաստի նպատակը խնամքի հետ կապված լրացուցիչ ծախսերի մասնակի հատուցումն է, ապա նպաստի առաջարկվող չափը պետք է պայմանավորել մինչև երկու տարեկան երեխայի խնամքի համար անհրաժեշտ տարբեր պարագաների ձեռք բերման համար նախատեսվող հնարավոր ծախսերով:

569. Ելնելով այն հանգամանքից, որ աղքատության կրճատմանը զուգահեռ ավելացել են աշխատատեղերը, ինչպես նաև խնամքի նպաստի չափի հնարավոր բարձրացումը բերելու է խնամքի նպաստի համար դիմող անձանց թվի աճ, կանխատեսվում է նպաստառուների թվի աճ: Միջին ժամկետ կտրվածքով (2009-2011թթ.) նախատեսվում է սահմանել նպաստառուների թիվը 6000 մարդ, որից հետո աճեցնել այն, 2021 թ. հասցնելով 10 հազարի: Միևնույն ժամանակ, նպատակադրվում է ամսական նպաստի մեծությունը կապել նվազագույն աշխատավարձի մեծության հետ՝ 2009 թ-ից սկսած համապատասխանեցնելով այն նվազագույն ամսական աշխատավարձի 60 տոկոսին: Այսպիսի մոտեցումը կօժանդակի ինչպես երիտասարդ ընտանիքների, այնպես էլ աշխատող կանանց ու նրանց երեխաների սոցիալական հիմնահարցերի լուծմանը:

Աղյուսակ 11.14. Մինչև երկու տարեկան երեխայի խնամքի նպաստի կանխատեսումներ 2008-2021թթ.

	2007	2008	2009	2010	2011	2012	2015	2018	2021
Նպաստառու	4,262	4,500	6,000	6,000	6,000	9,000	9,500	9,500	10,000
Նպաստի չափ, դրամ/ամիս	3,000	3,000	18,000	22,422	24,936	27,240	34,380	43,200	52,980
Մինչև երկու տարեկան երեխայի խնամքի նպաստի գծով պետական ծախսեր, մլրդ դրամ	0.2	0.2	1.3	1.6	1.8	3.0	4.0	5.0	6.4

11.1.4. Առաջին խմբի հաշմանդամ և «հաշմանդամ երեխա» խնամող ընտանիքի նպաստ

570. Հաշմանդամներից առավելապես աջակցության կարիք ունեն առաջին խմբի հաշմանդամները, ինչպես նաև մինչև 18 տարեկան հաշմանդամները՝ «հաշմանդամ երեխա» կարգավիճակ ունեցող անձինք: Միաժամանակ, ընտանիքում մման հաշմանդամ ունենալու պարագայում, նրանց խնամքի կազմակերպման համար ընտանիքի չափահաս անդամներից մեկը կամ այլ անձ (հաշմանդամի օգնական կամ սոցիալական պատրոն) պետք է զբաղվի նրա խնամքի հարցերով:

571. ՀՀ Կառավարության 2003 թվականի հունիսի 13-ի «Բժշկասոցիալական փորձաքննության ժամանակ օգտագործվող դասակարգիչները և հաշմանդամության խմբերի

սահմանման չափանիշները հաստատելու մասին» N 780-Ն որոշմամբ սահմանվել է, որ հաշմանդամության 1-

հիվանդությունն

ապահովման 3-

անկարողությունն է և այլ անձանցից լիակատար կախվածությունը, տեղաշարժվելու 3-րդ

անձանցից լիակատար կախվածությունը, կողմնորոշվելու 3-

սահմանափակումն ընդհանրապես կողմնորոշման անկարողությունն է, հաղորդակցվելու 3-

-

սահմանափակումներից գոնե մեկի առկայությունն արդեն կողմնակի անձից լիովին կախվածություն է առաջացնում տվյալ հաշմանդամի համար՝ կամ իր կենսագործունեությունն ապահովելու (կամ դրա համար հատուկ պայմաններ ստեղծելու նպատակով) կամ նրա խնամքը կազմակերպելու համար:

572. Այսպիսով, որևէ պարագայում առաջին խմբի հաշմանդամ խնամող ընտանիքին անհրաժեշտ են, այլ հավասար պայմաններում, լրացուցիչ ֆինանսական միջոցներ, որի ապահովման նպատակն է հետապնդում սկսած 2012 թվականից ներդրվելիք սույն նպաստի տեսակը, որի չափը նույնպես համապատասխանեցվելու է նվազագույն սպառողական զամբյուղի արժեքին՝ որոշակի գործակցով: ԿԶԾ-ով նախատեսվում է 2012 թ. այս նպաստի չափը սահմանել նվազագույն սպառողական զամբյուղի 60 տոկոսի չափով՝ հետագա ժամանակահատվածում աճեցնելով այս հարաբերակցությունը և 2018 թ. հասցնելով 80, իսկ 2021 թ.՝ 100 տոկոսի: Այսպիսով, 2012-2021 թթ. ընթացքում այս նպաստի մեծությունը կաճի գրեթե երկու անգամ:

Աղյուսակ 11.15. Առաջին խմբի հաշմանդամ և հաշմանդամ երեխա խնամող ընտանիքի նպաստի չափի կանխատեսումները 2010-2021թթ.

Ցուցանիշներ	2012	2015	2018	2021
Նպաստի մեծությունը, ամսական, դրամ*	25,500	32,600	40,700	55,500
Նվազագույն սպառողական զամբյուղ, ամսական, դրամ	42,566	46,509	50,829	55,537
Նպաստի չափ/ՆՍԶ հարաբերակցություն, %	60.0	70.0	80.0	100.0
Առաջին խմբի հաշմանդամ և հաշմանդամ երեխա խնամող ընտանիքի նպաստի գծով պետական ծախսեր, մլրդ դրամ	4.6	5.9	7.3	10.0

* Վարչարարության դյուրինության համար գումարները կլորացված են մինչև հազարները:

11.1.5. Սոցիալական աջակցության այլ ծրագրեր

573. Կյանքի դժվարին իրավիճակում գտնվող երեխաների հիմնահարցերին ուղղված քաղաքականությունը շարունակելու է մնալ գերակա ուղղություն: Առաջիկա տարիներին այն պետք է ուղղված լինի երեխաների խնամքի և պաշտպանության համակարգի հզորացմանը, երեխայի խնամք և պաշտպանություն իրականացնող հաստատություններում երեխաների թվի նվազեցմանը և այդ հաստատություններում երեխաների հոսքի կանխարգելմանը, երեխաների խնամքի և պաշտպանության հաստատությունների բարելավմանը և նրանցում խնամվող երեխաների՝ հասարակությունում ինտեգրմանը, հաշմանդամ երեխաների խնամքի այլընտրանքային ծառայությունների ստեղծմանը: Շարունակվելու է մինչև 2 տարեկան

երեխայի խնամքի նպաստի ծրագիրը՝ ուղղված աշխատող ծնողի կողմից երեխայի խնամքին օժանդակությանը՝ արձակուրդում գտնվելու ժամանակահատվածում:

574. ՀՀ-ում ստեղծվել է երեխաների պաշտպանության նոր եռաստիճան համակարգ՝ ազգային, մարզային և համայնքային մակարդակներով, որի նպատակն է պետական կառավարման մակարդակում ապահովել երեխաների պաշտպանության միասնական և համակարգված քաղաքականություն, իսկ մարզերում՝ քաղաքականության իրականացումը մասնագիտացված համակարգի միջոցով: Միասնական համակարգի ստեղծումը կապահովի՝ դժվարին իրավիճակներում գտնվող երեխայի հետագա կյանքի մասին որոշումների կայացումը իրականացնել մասնագիտական գնահատման արդյունքների հիման վրա, երեխաների հարցերով զբաղվող կառույցների համակարգված աշխատանքը և դժվարին իրավիճակներում հայտնված երեխաների ընդհանուր տվյալների բազայի ստեղծումը:

575. Ներկայումս ՀՀ-ում գործում են 8 պետական և 4 բարեգործական մանկատներ, որոնցում համապատասխանաբար խնամվում են 935 և 250 երեխաներ: Ուսումնասիրությունները փաստում են, որ երեխաները այնտեղ հայտնվում են հիմնականում սոցիալական պատճառներով, որը պայմանավորված է ազգաբնակչության ցածր կենսամակարդակի, դեղերի և բուժժառայությունների բարձր գների, ծնողների հմտությունների պակասի, երեխաների խնամքի ծառայությունների բացակայության համալիր ազդեցությամբ: Մանկատներում երեխաների թվի կրճատման և մուտքի կանխարգելման նպատակով շարունակվելու են բեռնաթափման՝ երեխաների կենսաբանական ընտանիք վերադարձնելու և խնամատար ընտանիք տեղավորելու ծրագրերը, ինչպես նաև երեխաների ցերեկային խնամքի կենտրոնների և երեխաների խնամքի և պաշտպանության գիշերօթիկ հաստատությունների ցանցի ընդլայնումը, որոնք կհանդիսանան այլընտրանք՝ մանկատներում և հատուկ հանրակրթական ուսումնական հաստատություններում խնամվող երեխաների համար:

576. Առանց ծնողական խնամքի մնացած երեխաների սոցիալական պաշտպանության և հասարակությունում նրանց ինտեգրման նպատակով շարունակվելու են մանկատան չափահաս դարձած սաներին ուղղված նպատակային ծրագրերը և կապահովվի «Առանց ծնողական խնամքի մնացած երեխաների սոցիալական պաշտպանության մասին» ՀՀ օրենքով սահմանված երաշխիքների տրամադրումը:

577. Հանրապետությունում հաշմանդամ երեխաների համար գործում են 2 պետական և 1 բարեգործական մասնագիտացված մանկատներ, որտեղ համապատասխանաբար խնամվում են 370 և 60 երեխաներ: Այդ հաստատությունների բարեփոխումը՝ երեխաների խնամքի, բուժման, դաստիարակության, սոցիալ-հոգեբանական վերականգնման, զարգացման համար նպաստավոր պայմանների ստեղծումը ժամանակի հրամայականն է: Կարևոր նշանակություն և օպտիմալ լուծում պահանջող խնդիր է հանդիսանում նաև ընտանիքներում գտնվող հաշմանդամ երեխաների բժշկասոցիալական սպասարկման այլընտրանքային ծառայությունների կազմակերպման հարցը, ինչը կնպաստի հաստատություններում երեխաների թվի կրճատմանը:

578. Հաշմանդամություն ունեցող անձանց՝ հասարակություն ինտեգրմանն ուղղված քաղաքականությունը բխում է 2006թ. դեկտեմբերին ՄԱԿ-ի կողմից ընդունված և 2007թ. մարտի 30-ին Հայաստանի Հանրապետության կողմից ստորագրված «Հաշմանդամների իրավունքների մասին կոնվենցիայի» սկզբունքներից և դրույթներից: Առաջիկա տարիներին կատարվելու են համապատասխան օրենսդրական փոփոխություններ և իրականացվելու են միջոցառումներ՝ ուղղված հաշմանդամություն ունեցող անձանց՝ հասարակություն ինտեգրմանը, նրանց համար հավասար պայմանների ապահովմանը, մատչելի միջավայրի, տրանսպորտային միջոցների, շենքերի և շինությունների, ինչպես նաև տեղեկատվության մատչելիության ապահովմանը: Վերանայվելու է անձին հաշմանդամ ճանաչելու մոդելը:

Նախատեսվում է ՀՀ-ում գործող՝ հաշմանդամության սահմանման մոդելից 2011 թվականից անցում կատարել Եվրամիությունում ընդունված՝ աշխատունակության կորստի աստիճանի սահմանման մոդելին:

579. Շարունակում են գերակա ուղղություններ մնալ հաշմանդամ երեխաների որակյալ, այդ թվում՝ ներառական կրթության ապահովման, հաշմանդամներին տրամադրվող բժշկական և սոցիալական վերականգնման բնույթի ծրագրերի ընդլայնման, դրանց հասցեականության բարձրացման, ինչպես նաև հաշմանդամություն ունեցող անձանց համար ինտեգրացված համայնքային վերականգնողական կենտրոնների ստեղծման խնդիրները:

580. Գործելու են նաև սոցիալապես անապահով ընտանիքներին՝ միայնակ տարեցներին և հաշմանդամներին, ինչպես նաև այլ սոցիալական խմբերին պատկանող անձանց ինտեգրացված կացարանով ապահովելու ծրագրեր, որտեղ գործելու է ինքնօգնության և նրանց՝ հասարակություն ինտեգրման սկզբունքը: Անօթևան մարդկանց սոցիալական հիմնախնդիրները լուծելու նպատակով ստեղծվելու են ժամանակավոր կացարաններ: Ստեղծվելու են տարեցների և հաշմանդամների խնամքի և սոցիալական ինտեգրման ցերեկային կենտրոններ՝ տարեցներին և հաշմանդամներին խնամքի և սոցիալական ապաստարկման ծառայությունների (առաջնային բուժօգնության, սոցիալ-հոգեբանական խորհրդատվության և այլն) տրամադրման միջոցով, ինչը կնպաստի նրանց հասարակական ակտիվության բարձրացմանը, որն էլ անուղղակիորեն կնպաստի սոցիալական այդ խմբի շրջանում աղքատության հաղթահարմանը:

581. Շարունակվելու է սոցիալական ծառայությունների տրամադրման լիազորության պատվիրակման գործընթացը՝ աջակցելով հասարակական կազմակերպություններին՝ նրանց կողմից ստեղծված՝ հաշմանդամների և տարեցների ցերեկային կենտրոնների պահպանմանը և ընդլայնմանը:

11.2. Կենսաթոշակային համակարգ

582. 2002-2006 թթ. տնտեսական աճի արդյունքներից թերևս ամենաքիչը օգտվել են կենսաթոշակառուները: Կենսաթոշակների բացարձակ ավելացումները, որոնք հիմնականում համընկել են ԱՀՌԾ-ի նպատակադրումներին, զգալիորեն հետ են մնացել հանրապետությունում միջին աշխատավարձի աճի տեմպերից, որոնք իրենց հերթին զգալիորեն գերազանցել են կանխատեսումները: Արդյունքում՝ ապահովագրական կենսաթոշակը միջին աշխատավարձի համեմատ նվազել է 2002 թ. արդեն իսկ շատ ցածր մակարդակից (21 տոկոս) և 2006թ. կազմել է միջին աշխատավարձի 17 տոկոսը¹⁷³:


583. 2006 թ. կենսաթոշակների միջին մեծությունը զիջում էր նույնիսկ պարենային աղքատության սահմանագծին: Ապահովագրական տարիքային կենսաթոշակը 2006 թ. տարեվերջի արդյունքներով ամսական կազմել է միջինում ընդամենը 12059 դրամ կամ 2005 թվականի համար գնահատվող ծայրահեղ աղքատության գծի միայն 90 տոկոսը: Շատ ավելի վատթար էր իրավիճակը կենսաթոշակառուների մնացած խմբերում՝ բացառությամբ սահմանափակ թվով կենսաթոշակառուների, դրանց մեծությունը տատանվում է ծայրահեղ աղքատության գծի 40-80 տոկոսի միջակայքում՝ սոցիալական թոշակառուների համար կազմելով 40 տոկոս: Նման իրավիճակի բարելավումը միջնաժամկետ հեռանկարում, առանց շրջադարձային քայլերի ձեռնարկման, ըստ էության, գրեթե անհնար էր, և 2008 թ., արդեն իսկ, ՀՀ Կառավարությունը այս ուղղությամբ լուրջ քայլեր է ձեռնարկել:

¹⁷³ Համեմատության համար. ԵՄ-25 միջին փոխհատուցման ցուցանիշը 2004թ. կազմել է 51, Էստոնիայում՝ 47, Լատվիայում՝ 60 և Լիտվայում 47 տոկոս (աղբյուրը՝ Եվրոստատ):

584. Միաժամանակ, ինչպես վկայում են ժողովրդագրական կանխատեսումները, երկարաժամկետ հեռանկարում հետզհետե ավելի զգալի է դառնալու կենսաթոշակային համակարգի ֆինանսական կայունության առումով բնակչության անբարենպաստ կառուցվածքի՝ բնակչության «ծերացման» ազդեցությունը: Միջազգային փորձը ցույց է տալիս, որ կենսաթոշակային համակարգի պարամետրիկ բարեփոխումները և կուտակային համակարգի ներդրումը կարող են զգալիորեն մեղմել բնակչության ծերացման հետևանքով ուժգնացող ֆիսկալ ճնշումները:

585. Պետք է նշել, որ չնայած 2012թ. սկսած, խնամառության ընդհանուր գործակիցը՝ աշխատանքային տարիքից բարձր բնակչության հարաբերակցությունը աշխատանքային տարիքի բնակչությանը, անընդհատ ավելանալու է՝ 2050 թվականին հասնելով շուրջ 0.40-ի (այսօրվա 0.18-ի փոխարեն), այդուհանդերձ, խնամառության արդյունավետ գործակիցը՝ աշխատանքային տարիքից բարձր բնակչության հարաբերությունը սոցիալական ապահովության վճարներ կատարողների թվաքանակից, հնարավոր է, որ առաջիկա 10-15 տարիներին զգալիորեն բարելավվի, եթե պահպանվեն զբաղվածության ֆորմալացման աստիճանի ավելացման վերջին հինգ տարիների միտումները (տե՛ս Գծանկար 11.4):

Գծանկար 11.4. Խնամառության ընդհանուր և արդյունավետ գործակիցների կանխատեսումը 2008-2050 թթ.¹⁷⁴



586. Հաշվի առնելով վերը նշված իրողությունները՝ առաջիկա տարիներին Կառավարությունը կենսաթոշակային համակարգի ֆինանսավորումը համարելու է ծախսային քաղաքականության հիմնական գերակայություններից մեկը, ոլորտում վարվող պետական քաղաքականության հիմնական նպատակը դիտարկելով կենսաթոշակառուների սոցիալական վիճակի շարունակական բարելավումը և կենսաթոշակային համակարգի երկարաժամկետ ֆինանսական կայունության ապահովելուն միտված՝ կենսաթոշակային համակարգի բարեփոխումների իրականացումը:

¹⁷⁴ Ենթադրվում է, որ զբաղվածության ֆորմալացման աստիճանը մինչև 2012թ. կաճի տարեկան 3 տոկոսով, իսկ 2012-2021թթ. ընթացքում՝ 2 տոկոսով: Զբաղվածության ֆորմալացման աստիճանը՝ սոցալ վճարողների թվաքանակի հարաբերությունը ոչ գյուղատնտեսական ոլորտում զբաղվածների թվաքանակին, 2006թ. 59 տոկոսից 2021 թվականին կհասնի 82 տոկոսի: Պետք է նշել, որ զբաղվածության ֆորմալացման աստիճանը 2002-2006թթ. ավելացել է շուրջ 10 տոկոսային կետով, ինչը հիմք է տալիս ներկայացված սցենարը համարել իրատեսական:

587. Ըստ այդմ՝ կառավարության գործունեությունը միտված է լինելու.

§ նախ՝ նվազագույնի հասցնել, ապա՝ բացառել աղքատությունը և աղքատության ռիսկը կենսաթոշակատուների շրջանում,

§ շարունակաբար նվազեցնել աշխատող բնակչության և կենսաթոշակատուների (ներառյալ՝ հաշմանդամների) կենսամակարդակների միջև առկա մեծ տարբերությունը՝ թույլ չտալով վերջինիս հետագա խորացումը:

588. Քաղաքացիների կենսաթոշակային ապահովության պետական քաղաքականության սկզբունքային ելակետերն են.

§ կենսաթոշակատուների շրջանում աղքատության դեմ պայքարի հիմնական գործիքը հիմնական կենսաթոշակն է, ինչը կենսաապահովման նվազագույն երաշխիք է և նպատակ ունի այդ անձանց շրջանում բացառել աղքատությունը,

§ կենսաթոշակային համակարգին մասնակցության խթանների ձևավորումը՝ սոցիալական և աշխատանքային (ապահովագրական) կենսաթոշակների չափերի, ինչպես նաև՝ աշխատանքային (ապահովագրական) ստաժով և պետական եկամուտների ձևավորմանը անձի ունեցած ներդրման չափով պայմանավորված՝ աշխատանքային (ապահովագրական) կենսաթոշակների չափերի հստակ տարբերակմամբ:

589. Կենսաթոշակային համակարգի բարեփոխումները զուգահեռաբար ընթանալու են ինչպես ներկայիս բաշխողական համակարգի պարամետրիկ բարեփոխումների, այնպես և նոր կուտակային համակարգի ներդրման ճանապարհով:

590. Առաջնային նպատակը լինելու է միջին ժամկետ հեռանկարում զգալիորեն նվազեցնել աղքատության ռիսկը կենսաթոշակատուների բոլոր խմբերի համար: Այդ նպատակին հասնելու համար Կայուն զարգացման ծրագիրը նախատեսում է հետևյալ թիրախները.

§ Ապահովագրական կենսաթոշակների ծրագրված միջին մակարդակը հասցնել՝

- առնվազն նվազագույն սպառողական զամբյուղի 100՝ սկսած 2012 թվականից,
- առնվազն նվազագույն սպառողական զամբյուղի 150 տոկոսին՝ սկսած 2018 թվականից:


§ Սկսած 2018 թվականից (կամ ՆՄՁ 150 տոկոսին հասնելուց հետո)՝ ապահովագրական կենսաթոշակների մակարդակը ինդեքսավորել՝ սպառողական գների ինդեքսի հիման վրա¹⁷⁵ (տե՛ս Գ-ժանկար 11.5):

§ Հիմնական կենսաթոշակը հասցնել՝

- առնվազն աղքատության գծին՝ սկսած 2015 թվականից,
- առնվազն նվազագույն սպառողական զամբյուղի **100** տոկոսին՝ սկսած **2018** թվականից:

¹⁷⁵ Կախված կենսաթոշակային համակարգի ֆինանսական կայունության ցուցանիշներից, կենսաթոշակների մակարդակը կինդեքսավորվի՝ կիրառելով աշխատավարձի և սպառողական գների համակցված ինդեքսը:

Գծանկար 11.5. Միջին ամսական ապահովագրական կենսաթոշակի համապատասխանության աստիճանի թիրախները (հարաբերությունը աղքատության գծին և ՆՍՁ-ին՝ աջ սանդակ, և միջին աշխատավարձին՝ ձախ սանդակ)




591. Ներկայացված թիրախները կպահանջեն զգալիորեն ավելացնել կենսաթոշակներին ուղղվող պետական ծախսերի մակարդակը, որոնք ՀՆԱ-ի 2007 թ. շուրջ 3 տոկոսից 2021 թվականին նախատեսվում է հասցնել 5.8 տոկոսի (առանց կուտակային կենսաթոշակային համակարգի ներդրմամբ պայմանավորված ծախսերի)^{176, 177}: Պահանջվող միջոցները կգերազանցեն ներկայումս կենսաթոշակների ֆինանսավորման հիմնական աղբյուր հանդիսացող սոցիալական ապահովության վճարների կանխատեսվող ծավալները: Ըստ կանխատեսումների՝ ԿԶԾ-ի ժամանակաշրջանում այդ ճեղքվածքը կկազմի միջինում ՀՆԱ-ի 1 տոկոսը՝ սկզբում ունենալով աճի, իսկ այնուհետև՝ նվազման միտում (տե՛ս Գծանկար 11.6): Այս առումով առավել կարևոր է, որ կենսաթոշակային ծախսերի ավելացումը նախատեսվում է իրականացնել երկրի ընդհանուր բյուջետային շրջանակի սահմաններում, որը հնարավորություն է տալիս իրականացնել միասնական պետական ծախսային քաղաքականություն՝ համաձայն նախանշված գերակայությունների, առանց վտանգելու մակրոտնտեսական կայունությունը: Ըստ ծրագրի բյուջետային շրջանակի կանխատեսումների՝ ներկայացված թիրախներին հնարավոր կլինի հասնել համախմբված բյուջեի պակասուրդը պահպանելով անվտանգ միջակայքում՝ ՀՆԱ-ի 2.5 տոկոսից ցածր մակարդակի վրա:

¹⁷⁶ Համեմատության համար նշենք, որ ԵՄ-25 միջին ցուցանիշը 2004թ. կազմում էր 12.3 տոկոս, բայց երկրների միջին ցուցանիշը՝ 6 տոկոս:

¹⁷⁷ Ընդ որում, 2018 թ. կենսաթոշակային ապահովման գծով ծախսերը (առանց կուտակային կենսաթոշակային համակարգի ներդրմամբ պայմանավորված ծախսերի) ՀՆԱ-ի նկատմամբ կազմելու են 6.3 տոկոս, որից հետո, թեև կենսաթոշակային ապահովման գծով ծախսերը անվանական արտահայտությամբ շարունակելու են աճել, այդուհանդերձ, ՀՆԱ-ի նկատմամբ այդ ծախսերի հարաբերությունը որոշ չափով կրճատվելու է՝ պայմանավորված 2018 թվականից կենսաթոշակների ինդեքսավորման որոշեցրվելիք քաղաքականությամբ:

Քժանկար 11.6. Ապահովագրական կենսաթոշակների ֆիսկալ ցուցանիշների կանխատեսումները



592. Ակնկալվում է, որ ծրագրով նախանշված կենսաթոշակների չափերը թույլ կտան զգալիորեն նվազեցնել թոշակատուների աղքատության մակարդակը (տե՛ս Աղյուսակ 11.16):

Աղյուսակ 11.16. Կենսաթոշակատուների աղքատության մակարդակի ծրագրային ցուցանիշները, տոկոս

Ցուցանիշներ	2005		2006		2012		2015		2021	
	Փաստ.				ԿԶԾ-ի կանխատեսումներ					
	Աղքատ	Շատ աղքատ	Աղքատ	Շատ աղքատ	Աղքատ	Շատ աղքատ	Աղքատ	Շատ աղքատ	Աղքատ	Շատ աղքատ
Կենսաթոշակատուներ	30.0	3.9	26.5	4.6	5.8	0.6	3.2	0.3	1.0	0.1
Սիայնակ կենսաթոշակատուներ	20.0	0.0	19.2	0.0	8.0	0.0	0.0	0.0	0.0	0.0
75 և ավելի տարիք ունեցող անձինք	30.5	5.2	29.5	4.9	3.6	0.4	2.9	0.2	0.5	0.1

593. Կենսաթոշակների կտրուկ բարձրացման հետ միաժամանակ նախատեսվում է իրականացնել գործող կենսաթոշակային համակարգի մի շարք այլ պարամետրիկ բնույթի բարեփոխումներ: Ընդհանուր առմամբ, դրանք նպատակաճանդված են լինելու գործող համակարգի ճկունության, հաշվառելիության և վարչարարության աստիճանի բարձրացմանը և իրականացվելու են համաձայն այդ նպատակով հաստատված կենսաթոշակային գործող համակարգի բարեփոխումների ծրագրի: Մինչև 2012 թվականը նախատեսվում է՝

§ խստացնել կենսաթոշակի իրավունք տվող պայմանները՝ բարձրացնելով աշխատանքային (ապահովագրական) կենսաթոշակի իրավունք տվող նվազագույն ստաժը՝ այն դարձնելով 10 տարի,

§ վերանայել անձին հաշմանդամ ճանաչելու մոդելը՝ ՀՀ-ում կիրառվող հաշմանդամության սահմանման մոդելից անցում կատարելով Եվրամիությունում ընդունված՝ աշխատունակության կորստի աստիճանի սահմանման մոդելին,

- § կատարելագործել անձի կենսաթոշակային իրավունքների հաշվառման գործընթացը, բովանդակային, ընթացակարգային և տեխնիկական բնույթի փոփոխությունների միջոցով բարելավելով կենսաթոշակային համակարգում անհատական հաշվառման և անձնավորված հաշվետվությունների գործընթացի արդյունավետությունը՝ նպատակ ունենալով անձնավորված հաշվառման տեղեկատվական բազան վերածել կենսաթոշակային համակարգը բնութագրող և կանխատեսումների իրականացման համար անհրաժեշտ հիմնական ցուցանիշների աղբյուրի (ըստ այդմ՝ ապահովելով կենսաթոշակային քաղաքականության և իրականացվող ծրագրերի իրատեսականությունը), ինչպես նաև՝ տեղեկատվական բազայում առկա տեղեկատվությունը օգտագործել քաղաքացիների կենսաթոշակային իրավունքների իրականացման համար՝ բացառելով ոչ արժանահավատ տեղեկատվության կիրառման հնարավորությունը,
- § տեղեկատվության ինքնաշխատ փոխանակման համակարգերի և կառավարման համակարգի կատարելագործման միջոցով ապահովել մատչելի, որակյալ և արդյունավետ սոցիալական ծառայությունների փաթեթով (լրակազմով) տրամադրումը,
- § բարեփոխել արտոնյալ պայմաններով կենսաթոշակների համակարգը՝ կենսաթոշակների այդ տեսակը վճարելով գործատուի միջոցներից,
- § ներդնել արտադրության վայրում դժբախտ դեպքերից և մասնագիտական հիվանդություններից պարտադիր ապահովագրության համակարգ, որի շրջանակներում կսկսեն վճարվել նաև արտադրության վայրում դժբախտ դեպքերի և մասնագիտական հիվանդությունների հետևանքով հաշմանդամության և կերակրողին կորցնելու դեպքում տրվող կենսաթոշակները:

594. Կենսաթոշակային գործող համակարգի բարեփոխումներին զուգահեռ, կներդրվի պարտադիր կուտակային կենսաթոշակային նոր համակարգ, որի հիմնական նպատակը կլինի երկարաժամկետ հեռանկարում ապահովել կենսաթոշակային համակարգի ֆինանսական կայունությունը և կենսաթոշակների մակարդակի համապատասխանության առավել հնարավոր բարձր մակարդակը: Կուտակային համակարգի ներդրումը նախատեսվում է 2010 թվականից: Կուտակային համակարգի ներդրման հետևանքով առաջացող լրացուցիչ ֆիսկալ բեռը գնահատվում է ՀՆԱ-ի 0.2-0.4 տոկոսի սահմաններում և նախատեսվում է ամբողջությամբ փոխհատուցել համաբխմբված բյուջեի ընդհանուր եկամուտների հաշվին: Կուտակային համակարգի ներդրումը աշխատանքի հարկման բեռի ավելացում չի նախատեսում:

12. Մարդկային զարգացում և մարդկային աղքատության կրճատում

12.1. Առողջապահություն

12.1.1. Ընդհանուր ակնարկ՝ 2003-2006 թթ. զարգացումները և ներկա իրավիճակը

595. «Աղքատության հաղթահարման ռազմավարական ծրագիրը», կարևորելով մարդկային կապիտալում ներդրումների առողջապահության ոլորտի դերը, հիմնական նպատակների շրջանակներում առանձնացնում է առողջապահական ծառայությունների մատչելիության և որակի բարձրացումը: ԱՀՌԾ-ի շրջանակներում գերակա է համարվել առաջնային բուժօգնության ոլորտը, իսկ ծրագրային մակարդակով՝ հատուկ կարևորվել են մոր և մանկան առողջության պահպանումը, ինչպես նաև վարակիչ հիվանդությունների կանխարգելման խնդիրները: Դրված նպատակների ապահովման հարցում մեծ դեր է վերագրվել առողջապահության ոլորտում պետական ծախսերի ավելացմանը, պետական ծախսերի ներդրության վերաբաշխմանը՝ ի օգուտ առաջնային բուժօգնության օղակի, ինչպես նաև համակարգի կառավարման բարեփոխումների արդյունքում ակնկալվող արդյունավետության բարձրացմանը:

596. Հայաստանը, բնակչության առողջական վիճակը բնութագրող ցուցանիշների առումով համանման եկամտի մակարդակ ունեցող երկրների համեմատ, հիմնականում գտնվում է ավելի լավ վիճակում: Այդուհանդերձ, զարգացած երկրների հետ համեմատականները վկայում են, որ շատ դեպքերում խզումը նշանակալի է, մասնավորապես այնպիսի ցուցանիշների գծով, ինչպիսիք են մանկական և մայրական մահացությունը (տե՛ս Աղյուսակ 12.1):

Աղյուսակ 12.1. Բնակչության առողջական վիճակի բնութագրիչներ՝ միջազգային համեմատական


Ցուցանիշներ	Հայաստան	ԵՄ	ԵՄ-15	ԵՄ-12	ԱՊՀ
	2006	2005			
Կյանքի սպասվող տևողություն՝ հաշվարկված ծննդից, տարի	73.3	78.5	79.7	74.0	67.0
Մանկական մահացություն (մինչև 1 տարեկան), 1000 կենդանի ծնվածի հաշվով	13.9	5.1	4.3	8.3	13.4
Մայրական մահացություն (եռամյա միջին), 100000 կենդանի ծնվածի հաշվով*	24.0	6.4	5.4	10.4	29.3
Մահացության աստիճանը (մահվան բոլոր պատճառներ), 100000 բնակչի հաշվով**	844.5	678.1	606.2	945.1	1,394.3
Արյան շրջանառության համակարգի հիվանդություններից մահացություն, 100000 բնակչի հաշվով**	421.8	272.7	213.8	493.1	799.8
Զարորակ նորագոյացություններից մահացություն, 100000 բնակչի հաշվով**	160.5	179.5	173.6	201.9	159.2
Շնչառական օրգանների հիվանդություններից մահացություն, 100000 բնակչի հաշվով**	62.3	47.5	47.9	46.1	63.4
Տուբերկուլյոզի նոր գրանցված դեպքեր, 100000 բնակչի հաշվով	49.0	17.1	10.0	44.1	91.1
ՄԻԱՎ՝ նոր արձանագրված դեպքեր, 100000 բնակչի հաշվով	2.05	5.48	6.89	2.21	18.73
ԶԻԱՀ՝ նոր արձանագրված դեպքեր, 100000 բնակչի հաշվով	1.43	1.68	1.96	0.63	1.85
Շաքարային դիաբետով հիվանդների մասնաբաժին, տոկոս՝ բնակչության թվաքանակի նկատմամբ	1.2			3.5	1.5

* Հայաստան՝ 2004-2006 թթ., ԵՄ, ԵՄ-15, ԵՄ-12 և ԱՊՀ երկրներ՝ 2002-2004 թթ.:

** ԵՄ, ԵՄ-15, ԵՄ-12 և ԱՊՀ երկրների պարագայում ներկայացված են ըստ պատճառի (պատճառների) մահացության ստանդարտացված գործակիցները (SDR).

Աղբյուրը՝ ՀՀ ազգային վիճակագրական ծառայություն, ՀՀ առողջապահության նախարարություն, (HFO), WHO/ , 2007:


Գծանկար 12.1. Երեխաների (մինչև 5 տարեկան) և մայրական մահացության 2006 թ. փաստացի ցուցանիշները և ԱՀՌ-Ծ-ի նպատակադրումները



Աղբյուրը՝ ԱՀՌ-Ծ-ի նպատակադրումներ և ՀՀ ազգային վիճակագրական ծառայություն:

597. Միևնույն ժամանակ, երեխաների (մինչև 5 տարեկան) և մայրական մահացության ցուցանիշների գծով 2006 թ. արձանագրվել են ԱՀՌ-Ծ-ի նպատակադրումները գերազանցող արժեքներ (տե՛ս Գծանկար 12.1),¹⁷⁸ և այս ոլորտում ուղղորդված քաղաքականության իրականացումը միայն հնարավորություն կընձեռի բարելավելու իրավիճակն ու նվազեցնելու տարբերությունները զարգացած երկրների համապատասխան ցուցանիշների համեմատ:

Գծանկար 12.2. Ամբուլատոր-պոլիկլինիկական և հիվանդանոցային բուժօգնության ծառայությունների օգտագործումը



Աղբյուրը՝ ՀՀ ազգային վիճակագրական ծա


598. 2003-2006 թթ. ընթացքում դրական միտումներ են արձանագրվել ինչպես ամբուլատոր-պոլիկլինիկական, այնպես էլ հիվանդանոցային հաստատությունների ծառայությունների օգտագործման ցուցանիշներում: Մասնավորապես, ամբուլատոր-պոլիկլինիկական հաստատություններ հաճախումների միջին տարեկան թիվը մեկ բնակչի հաշվով 2006 թ.

¹⁷⁸ Երեխաների մահացության ցուցանիշի համեմատաբար բարձր արժեքը մասամբ պայմանավորված է նաև ցուցանիշի հաշվառման ընթացակարգերում կատարված փոփոխություններով:

կազմել է 2.8՝ 2003 թ. 2.0-ի փոխարեն, իսկ հիվանդանոցներ ընդունված հիվանդների թիվը 100 բնակչի հաշվով համապատասխանաբար կազմել է 8.4 և 6.9: Այդուհանդերձ, առողջապահական ծառայությունների օգտագործման մակարդակը, ընդհանուր առմամբ, շարունակում է ցածր մնալ ինչպես ամբուլատոր-պոլիկլինիկական, այնպես էլ հիվանդանոցային բուժօգնության հաստատություններում, իսկ համապատասխան ցուցանիշները շուրջ 3 անգամ փոքր են, քան միջին հաշվով ԱՊՀ և ԵՄ նորանդամ երկրներում (տես Գծանկար 12.2):

599. Առողջապահական ծառայությունների օգտագործման համեմատաբար ցածր աստիճանի մասին են վկայում նաև տնային տնտեսությունների հետազոտության արդյունքները: Միևնույն ժամանակ, տնային տնտեսությունների հետազոտությունների արդյունքները բացահայտում են, ըստ կենսամակարդակի, բնակչության տարբեր խմբերի կողմից առողջապահական ծառայությունների սպառման նշանակալի տարբերությունները: Ըստ 2005 թ. ՀՀ ԱՎԾ տնային տնտեսությունների կենսամակարդակի ամբողջացված հետազոտության (SSԿԱՀ) արդյունքների, թեև ըստ սպառման բնակչության քվանտիլային խմբերում արձանագրվել է առողջության հետ կապված խնդիրների առկայության համանման պատկեր¹⁷⁹, այդուհանդերձ, ըստ քվանտիլային խմբերի առկա են առողջապահական ծառայությունների դիմելու հաճախականության մեծ տարբերություններ: Միջին հաշվով, առողջության հետ կապված խնդիրներ ունեցած բնակչության միայն շուրջ 30 տոկոսն է դիմել բժշկի, ընդ որում՝ առաջին (ամենաաղքատ) քվանտիլում հիվանդության դեպքում բժշկի դիմելու հաճախականությունը շուրջ 2.5 անգամ պակաս է եղել, քան հինգերորդ (ամենահարուստ) քվանտիլում (տես Գծանկար 12.3): Նման պատկերը վկայում է, որ առողջապահական ծառայությունների մատչելիությանը վերաբերող հարցերը, հատկապես՝ բնակչության անապահով խմբերի համար, շարունակում է մնալ օրակարգային, չնայած այն հանգամանքին, որ ծառայությունները (մասնավորապես՝ առաջնային բուժօգնության օղակի) ֆիզիկապես մատչելի են բոլորի համար:

Գծանկար 12.3. Առողջապահական հաստատություններ դիմելու հաճախականությունը՝ ըստ սպառման քվանտիլային խմբերի (տոկոս՝ խմբում առողջության հետ կապված խնդիրներ ունեցած բնակչության թվաքանակի նկատմամբ)




Աղբյուրը՝ ՀՀ ազգային վիճակագրական ծառայություն՝ «Տնային տնտեսությունների կենսամակարդակի ամբողջացված հետազոտություն» (2005 թ.):

600. 2005 թ. տնային տնտեսությունների կենսամակարդակի ամբողջացված հետազոտության արդյունքները վկայում են նաև, որ ըստ տիպերի ծառայություններ

¹⁷⁹ Հարցմանը նախորդող ամսվա ընթացքում սպառման առաջին (ամենաաղքատ) քվանտիլում առողջության հետ կապված խնդիրներ են ունեցել բնակչության 14.7 տոկոսը, իսկ հինգերորդ (ամենահարուստ) քվանտիլում՝ 20 տոկոսը:

մատուցողների ընտրությունը կենսամակարդակի տարբեր խմբեր ներկայացնող բնակչության կողմից էապես չի տարբերվում՝ ընդհանուր առմամբ, առողջապահական հաստատություններ դիմումների 48 տոկոսը բաժին է ընկել ամբուլատոր-պոլիկլինիկական օղակին, իսկ 33 տոկոսը՝ հիվանդանոցներին (տե՛ս Գ-ծանկար 12.4): Այս առումով, նկատելի տարբերություններ արձանագրվել են հինգերորդ (ամենահարուստ) քվանտիլում, որտեղ համեմատաբար ցածր է ամբուլատորիաների և պոլիկլինիկաների մասնաբաժինը (դիմումների շուրջ 40 տոկոս)՝ ավելի մեծ նախապատվություն տալով հիվանդանոցներին (շուրջ 38 տոկոս) և ախտորոշիչ կենտրոններին (դիմումների 13.3 տոկոս): 2005 թ. արձանագրված պատկերը համեմատելով 1998/1999 թթ. տնային տնտեսությունների հետազոտության համապատասխան ցուցանիշների հետ՝ կարելի է նկատել, որ նշանակալիորեն մեղմվել են ըստ կենսամակարդակի տարբեր խմբերում ընդգրկված բնակչության կողմից առողջապահական ծառայություն մատուցողների (ըստ տիպերի) ընտրության կառուցվածքում եղած տարբերությունները: 1998/1999 թթ. ըստ կենսամակարդակի առաջինից չորրորդ քվանտիլները ներկայացնող բնակչության 60-65 տոկոսը առողջապահական ծառայությունների համար դիմել են ամբուլատորիաներ և պոլիկլինիկաներ, մինչդեռ հիվանդանոցներ դիմումների մասնաբաժինը տատանվել է 20-28 տոկոս միջակայքում: 1998/1999 թթ. համեմատ տեղաշարժերը, մի կողմից, կարող են մեկնաբանվել բնակչության համեմատաբար անապահով խմբերի համար հիվանդանոցային ծառայությունների մատչելիության աստիճանի բարձրացմամբ, իսկ մյուս կողմից՝ համակարգում իրականացված կառուցվածքային փոփոխություններով, որոնց արդյունքում որոշ ծառայություններ ամբուլատոր-պոլիկլինիկական օղակից տեղափոխվել են հիվանդանոցային հաստատություններ:

Գ-ծանկար 12.4. Տարբեր կենսամակարդակի բնակչության խմբերի կողմից առողջապահական ծառայությունների օգտագործումը՝ ըստ ծառայություն մատուցողների (տոկոս)




Աղբյուրը՝ ՀՀ ազգային վիճակագրական ծառայություն՝ «Տնային տնտեսությունների կենսամակարդակի ամբողջացված հետազոտություն» (2005 թ.):

601. Ոլորտի զարգացումները պայմանավորող առանցքային գործոններից մեկը պետական ծախսերի մակարդակն է: 2003 2006 թթ. ընթացքում, նախորդ տարիների

համեմատ, վիճակը զգալիորեն բարելավվել է ինչպես առողջապահության ոլորտում պետական բյուջեի անվանական արտահայտությամբ ծախսերի վարքագծի, այնպես էլ ծախսերի կատարողականի աստիճանի բարելավման առումով: Մասնավորապես՝ պետական ծախսերը 2006 թ. կազմել են 39.4 մլրդ դրամ՝ շուրջ երկու անգամ գերազանցելով 2003 թ. համապատասխան ցուցանիշի մակարդակը, իսկ 2003-2006 թթ. հաստատված բյուջեները կատարվել են շուրջ 100 տոկոսով:

602. 2003-2006 թթ. փաստացի արդյունքների և ԱՀՌԾ-ի նպատակային ցուցանիշների համեմատականը վկայում է, որ առողջապահության ոլորտում պետական բյուջեի փաստացի ծախսերը անվանական արտահայտությամբ մոտ են եղել կամ գերազանցել են ԱՀՌԾ-ի համապատասխան նպատակային ցուցանիշների մակարդակը, այդուհանդերձ, առողջապահության ոլորտում փաստացի պետական ծախսերը՝ ՀՆԱ նկատմամբ հարաբերակցության տեսքով ավելի պակաս են եղել, քան ծրագրվել էր ԱՀՌԾ-ի շրջանակներում (տե՛ս Գծանկար 12.5):


Գծանկար 12.5. Պետական բյուջեի փաստացի ծախսերը առողջապահության ոլորտում 2003-2006 թթ. և ԱՀՌԾ-ի նպատակադրումները



Աղբյուրը՝ ԱՀՌԾ-ի նպատակադրումներ, ՀՀ ազգային վիճակագրական ծառայություն և ՀՀ ֆինանսների նախարարություն:

603. Թեև առողջապահության ոլորտում պետական ծախսերը (ՀՆԱ նկատմամբ հարաբերակցության տեսքով) ունեցել են աճի միտում, սակայն դրանց մակարդակը շարունակում է շատ ցածր մնալ (շուրջ 1.5 տոկոս): Միջազգային համեմատականները վկայում են, որ ցուցանիշի նման մակարդակը ամենացածրերից մեկն է աշխարհում՝ շուրջ չորս անգամ զիջելով ԵՄ և ՏՀԶԿ անդամ երկրների համապատասխան ցուցանիշների միջին մակարդակը և կազմելով ԱՊՀ անդամ երկրների միջինի շուրջ կեսը (տե՛ս Գծանկար 12.6): Միջազգային համեմատականները բացահայտում են մեկ առանձնահատկություն ևս. ըստ Առողջապահության համաշխարհային կազմակերպության գնահատականների, Հայաստանում առողջապահության ոլորտում կատարվող մասնավոր ծախսերի մակարդակը բավականին բարձր է (ՀՆԱ նկատմամբ շուրջ 4 տոկոս)՝ զարգացած երկրներից այս առումով զիջելով միայն ԱՄՆ-ին և Շվեյցարիային: Այդուհանդերձ, հաշվի առնելով առողջապահական ծառայությունների մատչելիության և որակի հետ կապված խնդիրները, ինչպես նաև ոչ ֆորմալ մասնավոր վճարումների տարածվածության բարձր աստիճանը, միջնաժամկետ ու երկարաժամկետ հատվածում առողջապահության ոլորտում պետական ծախսերի մակարդակի ավելացումը լինելու է պետական քաղաքականության առաջնահերթ խնդիրների շարքում:

Գծանկար 12.6. Առողջապահության ոլորտում ծախսերը Հայաստանում և ԱՊՀ, ԵՄ և ՏՀԶԿ անդամ երկրներում 2004 թ. (տոկոս՝ ՀՆԱ նկատմամբ)



12.1.2. Առողջապահության ոլորտի գերակայությունները

604. ԱՀՌԾ-ի իրականացման առաջընթացի վերլուծությունները, ինչպես նաև ԱՀՌԾ-ի վերանայման գործընթացի շրջանակներում կազմակերպված մասնագիտական և հանրային քննարկումները ցույց են տվել, որ ԿԶԾ-ի գերակայությունների շրջանակը, ԱՀՌԾ-ի համեմատ, հայեցակարգային առումով էական փոփոխությունների չի ենթարկվելու ու, առնվազն, միջնաժամկետ հատվածում ուղղորդելու է ոլորտում վարվելիք պետական քաղաքականությունը:

605. Կայուն զարգացման ծրագրի շրջանակներում պետական քաղաքականության գերակայություն են շարունակելու մնալ առողջապահական ծառայությունների հասանելիության և մատչելիության աստիճանի բարձրացումն ու որակի շարունակական բարելավումը՝ հատուկ շեշտադրելով տարածքային կտրվածքով առանցքային ծառայությունների հասանելիության աստիճանի բարձրացումն ու բնակչության՝ ըստ կենսասակարգակի տարբեր խմբերի կողմից առողջապահական ծառայությունների օգտագործման հաճախականությունների միջև առկա տարբերությունները: Առողջապահության ոլորտում վարվող քաղաքականության մշակումն ու իրականացումը հաշվի է առնելու նաև երկրում ձևավորված ժողովրդագրական իրավիճակն ու առկա միտումները՝ ուշադրություն դարձնելով, մասնավորապես, երեխաների, մայրերի և մեծահասակ (տարեց) բնակչության առողջապահական ծառայությունների կազմակերպման և մատչելիության բարձրացման խնդիրներին:

606. Հատուկ շեշտադրվելու են հանրային առողջության պահպանման խնդիրները՝ համահունչ լինելով Առողջապահության համաշխարհային կազմակերպության մոտեցումներին և նպատակ հետապնդելով բարելավել հանրության առողջությունը և բարեկեցությունը: Հանրության առողջության ապահովմանն ու բարելավմանն ուղղված միջոցառումների և ծառայությունների համախումբը, մասնավորապես, ներառելու է վարակիչ և ոչ վարակիչ հիվանդությունների կանխարգելումը և հսկողությունը, կենսագործունեության համար բարենպաստ պայմանների ապահովումը, հանրության առողջության

պաշտպանությունը տարբեր ռիսկերից և վտանգավոր գործոնների բացասական ազդեցությունից, ինչպես նաև դրանց վերաբերյալ հանրության իրազեկումը, բնակչության շրջանում առողջ վարքագծի և ապրելակերպի քարոզչությունը: Հանրային առողջության ապահովման միջոցառումները խնդիրները շոշափվում են սույն ծրագրի համապատասխան հատվածներում:

607. Բուժօգնության առաջնային օղակի հետագա զարգացումը, առնվազն միջնաժամկետում, շարունակելու է մնալ ոլորտում պետության գործողությունների հիմնական թիրախը: Միևնույն ժամանակ, տարածքային կտրվածքով, առանցքային առողջապահական ծառայությունների հասանելիության աստիճանի մեծացման ու որակի բարձրացման առումով հատուկ կարևորվում է մարզային հիվանդանոցային համակարգի արդիականացումը:

608. Ոլորտին պետական ֆինանսական հատկացումների ծավալների ընդլայնումը ու դրանց օգտագործման արդյունավետության բարձրացումը հանդիսանալու են առաջադրված գերակայությունների ուղղությամբ իրականացվելիք գործողությունների հիմնական լծակը: Միևնույն ժամանակ, պետությունը, առավելապես անուղղակի միջամտության գործիքների կիրառմամբ, քայլեր է ձեռնարկելու՝ ուղղված երկրի առողջապահական համակարգի օպտիմալացմանն ու արդյունավետության բարձրացմանը: Համակարգի գործունեության արդյունավետության բարձրացման առումով՝ հատուկ կարևորվում է առաջնային և հիվանդանոցային բուժօգնության օղակների միջև «դերերի» բաշխման հստակեցումն ու ծառայությունների կրկնօրինակման հնարավորին չափ նվազեցումը:

609. Գերակա են համարվելու նաև առողջապահական համակարգի թափանցիկության և հաշվետվողականության բարձրացմանը, ինչպես նաև ֆինանսավորման մեխանիզմների կատարելագործմանն ուղղված քայլերը՝ նպատակ հետապնդելով հնարավորինս նվազեցնել ոչ ֆորմալ վճարումների տարածվածության աստիճանը (մասնավորապես, հիվանդանոցային բուժօգնության օղակում):

12.1.3. Առողջապահության ոլորտի պետական ծախսերի ծրագրումը

610. Առողջապահության բնագավառի հետագա զարգացումը, մատուցվող ծառայությունների մատչելիության և որակի բարելավումն ու բնակչության առողջության վիճակը բնութագրող ցուցանիշների լավացումը մեծապես պայմանավորված են լինելու առողջապահության ոլորտում պետական ծախսերի վարքագծով:

611. Ծրագրային ամբողջ ժամանակահատվածում առողջապահությունը լինելու է պետական ծախսային քաղաքականության գերակա ուղղություններից մեկը: Հաշվի առնելով ոլորտին պետական հատկացումների ներկայիս համեմատաբար ցածր մակարդակը և գիտակցելով նման իրավիճակի հարատևության վտանգներն ու ռիսկերը (որոնք կարող են հեռանկարում լրջորեն խոչընդոտել երկրի բնակչության բարեկեցության լավացումը, երկրի մարդկային ներուժի ու սոցիալ-տնտեսական զարգացման հնարավորությունները)՝ Կառավարությունը տարեցտարի ավելացնելու է ոլորտի պետական ֆինանսավորման ծավալները: Ծրագրվում է 2010թ. առողջապահության ոլորտում պետական ծախսերի մակարդակը հասցնել ՀՆԱ-ի նկատմամբ 1.7, 2012 թ.՝ 2.2, 2015 թ.՝ 2.5 և 2021 թ.՝ 3.5 տոկոսի՝ 2006 թ. ՀՆԱ-ի նկատմամբ 1.5 տոկոս ցուցանիշի փոխարեն (տե՛ս Աղյուսակ 12.2): Առաջիկա տարիներին, առողջապահության ոլորտի ծախսեր-ՀՆԱ հարաբերակցության ցուցանիշը լինելու է ոլորտին պետական ծախսերի հատկացումների անվանական սահմանաքանակների սահմանման առանցքային որոշիչը:

612. Ծրագրային նման սցենարի իրականացման արդյունքում, 2012 թ. առողջապահության ոլորտում իրական արտահայտությամբ պետական ծախսերը 2.4 անգամ, 2015 թ.՝ շուրջ 3,

իսկ 2021 թ. մոտ 7 անգամ ավելի կլինեն, քան 2006 թ. համապատասխան ցուցանիշի մակարդակը: Նման զարգացման պարագայում, գրեթե նմանատիպ վարքագծով է բնորոշվելու նաև ոլորտում (իրական արտահայտությամբ) մեկ շնչի հաշվով պետական ծախսերի ցուցանիշը:

613. Առողջապահության ոլորտում պետական ծախսերի գերակայությունը ուղղակիորեն արտացոլվելու է նաև ընդհանուր պետական ծախսերի կառուցվածքում ոլորտին հատկացումների մասնաբաժնի ավելացմամբ, ինչը պայամանավորված է լինելու առողջապահության ոլորտում պետական ծախսերի, ընդհանուր համախմբված բյուջեի ծախսերի համեմատ, աճի ավելի արագ տեմպերով: Ծրագրվում է 2021 թ. առողջապահության ոլորտում պետական ծախսերի մասնաբաժինը համախմբված բյուջեի ընդհանուր ծախսերի կառուցվածքում հասցնել 12 տոկոսի՝ 2006 թ. 6.9 տոկոսի փոխարեն:

614. Ինչ վերաբերում է ծախսերի՝ ըստ տնտեսական նշանակության բաշխմանը, ապա մոտ հեռանկարում (առաջիկա 5 տարիներ) նախատեսվում է ոլորտում պետական ծախսերի 7-11 տոկոսը ուղղել կապիտալ նշանակության ծախսերի ֆինանսավորմանը, որոնց մասնաբաժինը ընդհանուր ոլորտային ծախսերի կառուցվածքում ժամանակի ընթացքում աստիճանական կրճատվելու է՝ ծրագրային ժամանակահատվածի վերջին տարիներին կայունանալով 5-6 տոկոսի շրջակայքում:

Աղյուսակ 12.2. Առողջապահության բնագավառում համախմբված բյուջեի ծախսերի ծրագրային ցուցանիշները

Ցուցանիշներ	2006	2007	2008	2009	2010	2011	2012	2015	2018	2021
	Փաստ.		Բյուջե	Ծրագիր						
Համախմբված բյուջեի ծախսերը առողջապահության բնագավառում, մլրդ դրամ	39.5	46.9	54.6	66.1	81.2	103.3	126.4	193.8	296.6	459.0
այդ թվում՝ կապիտալ ծախսեր՝ ընդամենի նկատմամբ, տոկոս*	11.4	8.5	14.8	(9-11)	(9-11)	(9-11)	(7-9)	(7-9)	(6-7)	(5-6)
ՀՆԱ նկատմամբ, տոկոս	1.5	1.5	1.5	1.6	1.7	2.0	2.2	2.5	2.9	3.5
Համախմբված բյուջեի ծախսերի նկատմամբ, տոկոս	6.9	6.2	6.3	6.6	7.1	7.9	8.5	9.2	10.3	12.0
Փոփոխությունը նախորդ տարվա նկատմամբ, տոկոս	26.8	18.8	16.4	21.1	22.9	27.2	22.3	15.3	16.6	15.0
Իրական արտահայտությամբ պետական ծախսեր (ինդեքս, 2006 թ. = 100)**	100	114	122	139	164	202	240	337	472	669
Մեկ շնչի հաշվով իրական արտահայտությամբ պետական ծախսեր (ինդեքս, 2006 թ. = 100)**	100	113	121	138	163	200	236	327	453	637

* Ծրագրվող կողմնորոշիչ միջակայք:

** Ծրագրվող գնաճով ճշգրտված:

12.1.4. Պետական քաղաքականության ներդրության առաջնահերթությունները առողջապահության բնագավառում

615. Ներդրության կտրվածքով՝ միջնաժամկետ հատվածում առողջապահության բնագավառում առաջնահերթությունը տրվելու է **առաջնային բուժօգնությանը**, որը «կլանելու» է ոլորտին պետական հատկացումների 40-45 տոկոսը: Այդուհանդերձ, սկսած 2015 թվականից, երբ ակնկալվում է առողջապահության ոլորտի պետական ծախսերի՝ ՀՆԱ-ի նկատմամբ 2.5 տոկոս մակարդակ, առողջապահության ոլորտին հատկացվող ֆինանսական միջոցների հետագա ավելացումները բաշխվելու են առաջնային և հիվանդանոցային բուժօգնության օղակների միջև 30:70 տոկոս հարաբերակցությամբ՝ ի օգուտ հիվանդանոցային բուժօգնության ծառայությունների:

616. Առաջնային բուժօգնության օղակում պետական քաղաքականությունը ուղղված է լինելու ընտանեկան բժշկության ինստիտուտի ներդրման ուղղությամբ ներկայումս իրականացվող վերափոխումների ավարտմանն ու ձևավորվող կառուցվածքների հետագա ամրապնդմանը:

617. Կառավարությունը, հաշվի առնելով առաջնային բուժօգնության օղակում անհատական և խմբային բժշկական ծառայությունների աստիճանական ներդրման ու զարգացման հանգամանքը, հստակեցնելու է առաջնային բուժօգնության ոլորտում ծառայություն մատուցողների հետ փոխհարաբերությունների շրջանակը, մասնավորապես՝ ճշգրտելով պետական ծախսերի և, հատկապես, կապիտալ ծախսերի մեխանիզմները:

618. Միջնաժամկետ հեռանկարում գյուղական բնակավայրերում առողջապահական ծառայությունների մատչելիության բարձրացմանը վերաբերող հարցերը դեռևս շարունակելու են մնալ պետական քաղաքականության օրակարգում, և այդ ուղղությամբ քայլերն ուղղված են լինելու գյուղական ամբուլատորիաների և բուժակ-մանկաբարձական կետերի ռեսուրսային (ինչպես մարդկային, այնպես էլ տեխնիկական) հենքի բարելավմանը: Միևնույն ժամանակ, շեշտադրվելու են քաղաքային բնակավայրերում (ներառյալ՝ Երևանը) առաջնային բուժօգնության ծառայությունների (պոլիկլինիկաների) արդիականացման հարցերը: Այդուհանդերձ, տվյալ դեպքում (և հատկապես՝ Երևանի պարագայում) պետական միջամտության լծակների կիրառումը (մասնավորապես՝ պետական կապիտալ ծախսերի տեսքով) մեծապես պայմանավորված է լինելու համակարգում ներկայումս իրականացվող բարեփոխումների արդյունքներով:

619. Գյուղական բնակավայրերում բուժօգնության մատչելիության և արդյունավետության ապահովման առումով, կարևորվում է նաև բժշկական շարժական և հեռահար ծառայությունների (ներառյալ՝ շտապ բժշկական օգնությունը) զարգացումը և դրանց կիրառման միջոցով բուժօգնության տրամադրումը՝ մասնավորապես, հեռավոր ու սահմանամերձ համայնքների բնակչությանը:

620. **Հիվանդանոցային բուժօգնության** ոլորտում համակարգի օպտիմալացմանն ուղղված քայլերին զուգընթաց, առաջիկա տարիներին պետական ծախսային քաղաքականության առանցքային ուղղություններից մեկը լինելու է մարզերում տեղակայված հիվանդանոցային հաստատությունների արդիականացումը: Դա, մասամբ, ապահովվելու է Համաշխարհային բանկի կողմից ֆինանսավորվող ծրագրի շրջանակներում, որը ներկայումս ընթացքի մեջ է¹⁸⁰: Կառավարությունը մտադիր է առաջիկա 7-8 տարիների ընթացքում հիմնականում ավարտել ՀՀ մարզերում տեղակայված հիվանդանոցների արդիականացումը, ինչը զգալիորեն կմեծացնի հիվանդանոցային ծառայությունների մատչելիությունը և որակը: Մարզերում տեղակայված հիվանդանոցների շենքային պայմանների և տեխնիկական հենքի բարելավմանը զուգընթաց, Կառավարությունը մտադիր է, անհրաժեշտության դեպքում, որոշակի լծակներ կիրառել նաև մարզային հիվանդանոցները որակյալ մասնագետներով համալրելու ուղղությամբ:

621. Միևնույն ժամանակ, հաշվի առնելով այն հանգամանքը, որ ներկայումս երկրի հիվանդանոցային համակարգը հիմնականում թերբեռնված է և մեծ է արդյունավետության բարձրացման ներուժը, պետական քաղաքականության առանցքային տարրերից է լինելու նաև այնպիսի գործողությունների ձեռնարկումը, որոնք հիվանդանոցային հաստատություններին կշահագրգռեն իրականացնելու արդյունավետության բարձրացմանն ուղղված միջոցառումներ:

622. Քայլեր են ձեռնարկվելու նաև հիվանդանոցային հաստատությունների կառավարման համակարգի բարեփոխումների խորացման ու կորպորատիվ կառավարման մեխանիզմների

¹⁸⁰ Այդ ծրագրի շրջանակներում նախատեսվում է արդիականացնել ՀՀ մարզերում տեղակայված տասը հիվանդանոցային հաստատություն:

ներդրման և զարգացման ուղղությամբ: Դա, մասնավորապես ենթադրում է խորհուրդների միջոցով կառավարում, հաստատությունների զարգացման եռամյա կամ հնգամյա ծրագրերի մշակում և խորհուրդների կողմից դրանց հաստատում: Ծրագրվում է, որ մինչև 2015 թ. բոլոր պետական հիվանդանոցները կունենան կառավարման խորհուրդներ:

623. Առողջապահական հաստատությունների, մասնավորապես հիվանդանոցների հաշվետվողականությունը բարձրացնելու նպատակով, հիվանդանոցային հաստատությունների (անկախ սեփականության ձևից) նկատմամբ կիրառվելու է ամենամյա անկախ ֆինանսական աուդիտի իրականացման և դրա արդյունքների հրապարակման պարտադիր պահանջը:

624. Գործոններից մեկը, որը էապես կանխորոշելու է հիվանդանոցային ծառայությունների ոլորտում պետական ծախսերի վարքագիծը, Կառավարության մտադրությունն է ժամանակի ընթացքում ծառայությունների դիմաց փոխհատուցման չափը մոտեցնել իրական ինքնարժեքին: Նման մոտեցումը կնպաստի մատուցվող ծառայությունների որակի բարձրացմանը, ինչպես նաև սոցիալապես անապահով տնային տնտեսությունների համար ֆինանսական բեռի նվազմանը (որը, որպես կանոն, ձևավորվում է ծառայությունների դիմաց ոչ ֆորմալ վճարումների արդյունքում)՝ դրանով իսկ մեծացնելով ծառայությունների մատչելիության աստիճանը: Փոխհատուցման չափի և ծառայության իրական ինքնարժեքի համապատասխանեցումը, նախ և առաջ, ապահովվելու է սոցիալական առումով առանցքային ծառայությունների համար (օրինակ՝ մանկաբարձա-գինեկոլոգիական բուժօգնություն), ապա աստիճանաբար այդ սկզբունքը տարածվելու է բոլոր ծառայությունների վրա, որոնք ֆինանսավորվում են պետական պատվերի շրջանակներում:

12.1.5. Առանձին ծրագրային շեշտադրումներ

12.1.5.1 Այդ և մանկան առողջության պահպանում

625. Կարևորելով մոր և մանկան առողջության պահպանումը և վերարտադրողական առողջության բարելավումը՝ այդ հարցերը շարունակվելու են հատուկ շեշտադրվել ոլորտում վարվող պետական քաղաքականության շրջանակներում: Իրականացվելիք գործողությունների արդյունքում (որոնք, մասնավորապես, ուղղված են լինելու բյուջետային համապատասխան վերաբաշխումների միջոցով հղիներին նախածննդյան և շուրջննդյան որակյալ բուժօգնության տրամադրմանը, երեխաների՝ բացառապես կրծքով կերակրման խրախուսմանը և միկրոէլեմենտների անբավարարության կանխմանը, կանանց համար մեծ ռիսկ ներկայացնող հիվանդությունների դեպքերի վաղ հայտնաբերմանն ու տարածման կանխարգելմանը, երեխաների՝ պատվաստումներով ընդգրկվածության մեծացմանն ու տարածքային կտրվածքով առկա տարբերությունների վերացմանը, վաղ հասակի երեխաների բժշկական ծառայությունների հասանելիության և մատչելիության բարձրացմանը) ակնկալվում է նշանակալիորեն կրճատել մանկական և մայրական մահացության աստիճանը, ինչը համահունչ է ՄԱԿ-ի կողմից հռչակված Հազարամյակի զարգացման նպատակներին: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ մանկական մահացության կառուցվածքում նեոնատալ մահացությունն ունի գերակշիռ մասնաբաժին և դիտարկելով վերջին տարիների միտումները՝ հատուկ շեշտադրվելու են ինտենսիվ նեոնատալ խնամքի խնդիրները: Բացի այդ, լրացուցիչ միջոցառումներ են իրականացվելու շահառուների շրջանում մանկական առողջության, սնուցման և խնամքի հարցերով իրազեկության աստիճանի բարձրացման ուղղությամբ:

Աղյուսակ 12.3. Մանկական և մայրական մահացության ցուցանիշների նպատակադրումը

Ցուցանիշներ	2006	2008	2009	2010	2012	2015	2018	2021
	Փաստ.	Ծրագրային ցուցանիշներ						
Մանկական մահացություն (մինչև 1 տարեկան), 1,000 կենդանի ծնվածի հաշվով	13.9	12.0	11.5	10.9	10.3	8.2	7.9	7.6

Մանկական մահացություն (մինչև 5 տարեկան), 1,000 կենդանի ծնվածի հաշվով	15.8	14.1	13.5	12.8	12.1	9.6	9.3	8.9
Մայրական մահացություն (եռամյա միջին), 100,000 կենդանի ծնվածի հաշվով	24.0	18.5	14.5	14.0	13.4	10.3	8.4	7.0

12.1.5.2 Սոցիալական հատուկ նշանակություն ունեցող հիվանդություններ

626. Առողջապահության ոլորտում պետական քաղաքականության ծրագրային առաջնահերթությունների շարքում են լինելու սոցիալական հատուկ նշանակություն ունեցող ինչպես վարակիչ, այնպես էլ ոչ վարակիչ առանձին հիվանդությունների տարածման կանխարգելմանը, դրանց վաղ հայտնաբերմանն ու բուժման արդյունավետության բարձրացմանն ուղղված հարցերը:

627. Ոչ վարակիչ հիվանդությունների, մասնավորապես սիրտ-անոթային, շաքարային դիաբետի, չարորակ նորագոյացություններ և քրոնիկական շնչառական հիվանդությունների, տարածվածությունը դրսևորում է աճի միտում, և, այս առումով, առավել ռիսկային խմբում են հայտնվում հատկապես բնակչության աղքատ և սոցիալապես անապահով խմբերը:

628. Հաշվի առնելով այն հանգամանքը, որ ոչ վարակիչ հիվանդությունների տարածումը շատ դեպքերում հնարավոր է կանխարգելել համապատասխան միջոցառումների արդյունավետ իրականացման արդյունքում, Կառավարությունը միջին ժամկետ և երկարաժամկետ հատվածներում մտադիր է հատուկ ջանքեր գործադնել այդ ուղղությամբ, մասնավորապես՝

- § մշակել և շարունակաբար բարելավել ոչ վարակիչ հիվանդությունների կանխարգելման և հսկողության ազգային քաղաքականությունը և պլանը,
- § ինտեգրել ոչ վարակիչ հիվանդությունների կանխարգելումը և հսկողությունը Կառավարության հարակից այլ ոլորտային քաղաքականություններում,
- § բյուջետային համապատասխան վերաբաշխումների օգնությամբ ընդլայնել համապատասխան ծրագրերի ֆինանսավորումը՝ դրանով իսկ բարելավելով այդ ծառայությունների մատչելիությունն ու որակը,
- § աջակցել ոչ վարակիչ հիվանդությունների ռիսկի գործոնները նվազացնող միջոցառումների իրականացմանը (ծխախոտի և ալկոհոլի օգտագործման դեմ պայքար, առողջ սնուցման քարոզում, ֆիզիկական ակտիվության խթանում),
- § նպատակաուղղված քայլեր ձեռնարկել ինչպես պետական, այնպես էլ մասնավոր հատվածներում համակարգի այնպիսի ենթակառուցվածքի ձևավորման ու զարգացման ուղղությամբ, որը կներառի քրոնիկական հիվանդությունների արդյունավետ վարման և բուժման համար անհրաժեշտ հետևյալ տարրերը՝
 - համապատասխան քաղաքականություն.
 - պատրաստված բուժանձնակազմ.
 - հիմնական դեղերի և տեխնոլոգիաների մատչելիություն.
 - ընդհանուր և մասնագիտացված բժշկական օգնության ուղեցույցներ.
 - արդյունավետ գործող ուղեգրումների մեխանիզմներ:
 - օժանդակել ոչ վարակիչ հիվանդությունների կանխարգելման և հսկողության նպատակով հետազոտությունների պարբերաբար անցկացմանն ու առաջընթացի մոնիթորինգի և գնահատման գործուն համակարգի ներդրմանը:

629. Աղքատության հաղթահարման ռազմավարության շրջանակներում նպատակ է հետապնդվելու նաև մեծացնել սոցիալական առումով հատուկ նշանակություն ունեցող և անապահով բնակչության համար մեծ ռիսկ ներկայացնող այնպիսի հիվանդությունների դեմ պայքարի արդյունավետությունը, ինչպիսիք են մալարիան, տուբերկուլյոզը և ՄԻԱՎ/ՉԻԱՀ-ը՝ կախարգելելով տուբերկուլյոզի և ՄԻԱՎ/ՉԻԱՀ-ի հետագա տարածումը և, հիմնականում, վերացնելով մալարիայից մահացության դեպքերը ու կտրուկ կրճատելով ՄԻԱՎ/ՉԻԱՀ-ից և տուբերկուլյոզից մահացությունը՝ դրանով իսկ վերահաստատելով ՀԶՆ համապատասխան թիրախի ապահովմանն ուղղված գործողությունների իրականացման պատրաստակամությունն ու նպատակաուղղվածությունը:

630. Այս համատեքստում, մասնավորապես մեծացվելու է ՄԻԱՎ/ՉԻԱՀ-ին վերաբերող հարցերին ներկայացվող ուշադրությունը: Թեև այս առումով Հայաստանում իրավիճակն անհամեմատ բարվոք է եվրոպական տարածաշրջանի մի շարք երկրների համեմատ, այդուհանդերձ, ինչպես վկայում է միջազգային փորձը, հատկապես գլոբալացման և բնակչության համեմատաբար բարձր մոբիլության պայմաններում, համապատասխան գործողությունների չիրականացումը կամ դրանց իրականացման հետաձգումը կարող են շեշտակիորեն փոխել իրավիճակը՝ խնդիրներ հարուցելով ինչպես սոցիալական, այնպես էլ երկարաժամկետ հատվածում տնտեսական զարգացման առումով: Այս ոլորտում հիմնական ուշադրությունը բևեռվելու է բնակչության շրջանում ՄԻԱՎ/ՉԻԱՀ-ի վերաբերյալ իրազեկվածության աստիճանի բարձրացմանը, վարակի տարածման կանխարգելմանն ու առկա դեպքերի բուժման արդյունավետության բարձրացմանը: Դիտարկվող խնդիրների լուծմանն ուղղված միջոցառումների իրականացման հարցում մեծ կարևորություն է տրվելու միջազգային և տարածաշրջանային համագործակցության խորացմանը, ինչպես նաև մասնագիտացված կազմակերպությունների կողմից հատկացվող տեխնիկական օժանդակության արդյունավետ օգտագործմանը:

12.1.5.3 Դեղերի մատչելիության բարձրացում

631. Բնակչության համար դեղերի ֆիզիկական և տնտեսական մատչելիության բարձրացումը առողջապահության բարեփոխումների կարևորագույն նպատակներից է: Չնայած դեղերի ֆիզիկական մատչելիությունը վերջին տարիների ընթացքում զգալի աճել է, սակայն տնտեսական մատչելիությունը դեռևս բավարար չէ՝ հիմնականում պայմանավորված բնակչության գնողունակության ցածր աստիճանով: Թեև գործում է պետության կողմից սոցիալապես անապահով խմբերի համար հաստատված փոխհատուցման համակարգ, այդուհանդերձ, այն կատարելագործման կարիք ունի:

632. Ներկա իրավիճակը անհրաժեշտություն է առաջացրել էականորեն բարելավել դեղերի շրջանառությունը կարգավորող օրենսդրությունը: Այդ առումով, առաջին քայլը «Դեղերի մասին» ՀՀ նոր օրենքի ընդունումն է: Օրենքի կիրարկման արդյունքում, մասնավորապես ակնկալվում է.

§ Դեղերի շրջանառության բոլոր օղակների գործունեության կանոնակարգում՝ դեղերի ստեղծումից մինչև օտագործում:

§ Լաբորատոր, կլինիկական, արտադրական, մատակարարման և դեղատնային գործունեություններին ներկայացվող պահանջների հաստատում և ներդրում, որոնց կատարումը կլինի մշտական պետական հսկողության ներքո: Մշտական հսկողությամբ կհավաստվի նաև ներմուծվող և արտադրվող դեղերի՝ երկրում ընդունված որակի չափանիշներին համապատասխանությունը: Նոր արտադրությունները կստեղծվեն արտադրական գործունեության՝ Հայաստանում ընդունված չափորոշիչներին համապատասխան, իսկ գործողները՝ կհամապատասխանեցվեն այդ չափորոշիչներին՝ մինչև 2010 թ.:

- § Դեղերի պետական գրանցման գործընթացի բարելավում, հերթական գրանցման գործընթացի պարզեցում:
- § Դեղերի ներկրման գործընթացի բարելավում, որակի և անվտանգության ապահովման նպատակով միայն դեղարտադրողներից և դրանց լիազոր ներկայացուցիչներից դեղերի ներկրման թույլտվության ամրագրում:
- § Դեղատնային գործունեության կանոնակարգում: Դեղատների և դեղատնային կրպակների գործունեության հստակեցում՝ կրպակներին ամրագրելով միայն առանց դեղատոմսի դեղերի և բժշկական նշանակության ապրանքների իրացման թույլտվություն, որը հնարավորություն կտա ավելի փոքր տարածքների վրա, հատկապես գյուղական վայրերում, ծավալել դեղատնային կրպակներ, որոնք կարող են առանց դեղատոմսի բաց թողնել առաջին անհրաժեշտության դեղեր և բժշկական նշանակության պարագաներ:

12.2. Կրթություն

12.2.1. Կրթական ծառայությունների մատչելիություն և աղքատություն. ընդհանուր սկները

633. Ներկայումս Հայաստանում կրթության ոլորտը կարևորվում է որպես երկրի կայուն զարգացման, ինչպես նաև մարդկային կապիտալի պահպանման ու վերարտադրության նախապայմաններից մեկը: Հավասարապես մատչելի որակյալ կրթության ապահովման և կրթության ոլորտի արդյունավետության բարձրացման նպատակով երկրում իրականացվում են բարեփոխումների ծրագրեր՝ կրթական բոլոր մակարդակներում: Ուստի այս ոլորտի զարգացումը ներկայումս երկրի զարգացման առաջնային գերակայություններից է: Ոլորտի զարգացման քաղաքականությունը պետք է համահունչ լինի ՄԱԿ-ի Եվրոպական տնտեսական հանձնաժողովի «Կրթություն՝ հանուն կայուն զարգացման» ռազմավարությանը և ուղղված լինի այն բանին, որ բարեփոխումների արդյունքները նշանակալի ազդեցություն ունենան երկրում տնտեսական աճի, աղքատության կրճատման, անհավասարության մեղմման, էկոլոգիական անվտանգության ապահովման և մարդկային զարգացման գործընթացների վրա ինչպես կարճաժամկետ, այնպես էլ երկարաժամկետ հեռանկարում:

Աղյուսակ 12.4. Կրթության ոլորտում պետական ծախսերի դինամիկան 2000-2006թթ., տոկոս՝ ՀՆԱ նկատմամբ

Ցուցանիշներ	2000	2001	2002	2003	2004	2005	2006	ԿԱԵ և ՆԽՄ երկրների միջինը 2004թ.	ՏՀՀԿ երկրների միջինը 2004թ.
Համախմբված բյուջեի կրթական ծախսերը, %՝ ՀՆԱ-ի նկատմամբ	2.9	2.5	2.2	2.2	2.3	2.7	2.8	4.1	5.4
որից՝									
Նախադպրոցական կրթություն	0.23	0.23	0.22	0.20	0.23	0.22	0.23	0.6	0.4
Տարրական, հիմնական և միջնակարգ ընդհանուր կրթություն	1.98	1.69	1.37	1.42	1.53	1.98	1.96	1.9	3.7
Հատուկ միջնակարգ կրթություն	0.13	0.14	0.14	0.12	0.13	0.15	0.16		
Մասնագիտական կրթական ծրագրեր ¹⁸¹	0.45	0.41	0.38	0.34	0.29	0.29	0.30	0.8	1.3
Համախմբված բյուջեի կրթական ծախսեր, մլն դրամ	29,545	29,931	29,746	35,241	43,067	61,675	73,075
Կրթության ոլորտի ծախսերը՝ համախմբված բյուջեի ընդհանուր ծախսերի նկատմամբ, %	11.3	11.8	9.9	9.7	10.9	12.6	12.7		13.4
Հուշագրային հոդվածներ									
Պետական բյուջեի կրթական ծախսեր, մլն դրամ	27,176	27,271	26,809	31,953	38,740	56,703	66,976
Պետական բյուջեի կրթական ծախսերը, %՝ ՀՆԱ-ի նկատմամբ	2.6	2.3	2.0	2.0	2.0	2.5	2.5
Պետական բյուջեի կրթական ծախսերը, %՝ պետբյուջեի ծախսերի նկատմամբ	10.2	10.2	11.6	13.6	13.9

¹⁸¹ Ըստ «Կրթության մասին» ՀՀ օրենքի՝ մասնագիտական ծրագրերը ներառում են նախնական ու միջին մասնագիտական ուսումնական հաստատություններն ու բուհական և հետբուհական կրթությունը:

634. Կրթության ոլորտում պետական ծախսերի դինամիկայի վերլուծությունը վկայում է, որ չնայած 2003թ. համեմատ կրթական ոլորտին ուղղված պետական ծախսերն իրենց անվանական մեծությամբ շուրջ կրկնակի աճել են (տե՛ս Աղյուսակ 12.4), այնուամենայնիվ, Հայաստանի՝ ՀՆԱ նկատմամբ կրթական ծախսերի մասնաբաժնի ցուցանիշը 2006թ-ին դեռևս 1.6 անգամ փոքր է եղել ԿԱԵ և ՆԽՄ երկրների 2005 թ. միջինից և երկու անգամ՝ ՏՁՀԿ երկրների 2004 թ. միջինից:

635. Կրթության ոլորտի պետական ծախսերի գերակշիռ մասը (շուրջ 71 տոկոսը) ուղղված է տարրական, հիմնական ու միջնակարգ ընդհանուր կրթությանը (իսկ շուրջ 77 տոկոսը՝ միջնակարգ և հատուկ միջնակարգ կրթությանը), նախնական ու միջին մասնագիտական կրթությանն ուղղված է դրանց 3.8, իսկ բարձրագույնին ու հետբուհականին՝ 7.2 տոկոսը: Հանրակրթության որակի ու մատչելիության բարձրացման նպատակով հանրակրթությանն ուղղված պետական ծախսերի մասնաբաժինը կրթությանն ուղղված ծախսերի մեջ 2003թ. համեմատ ավելացել է 5.8 տոկոսային կետով: Այսպիսի զարգացումների շնորհիվ մասնավորապես վերջին տարիներին մեծացել է ընդգրկվածությունն ավագ դպրոցում: Նույն ժամանակահատվածում մասնագիտական ծրագրերին ուղղված պետական ծախսերի մասնաբաժինը կրճատվել է 4.5 տոկոսային կետով: Մասնագիտական ծրագրերում նախատեսված պետական ծախսերի շուրջ 35 տոկոսն ուղղված է նախնական ու միջին մասնագիտական կրթությանը, իսկ 65 տոկոսը՝ բարձրագույն կրթությանը:

Աղյուսակ 12.5. Կրթության ոլորտում պետական ծախսերի կառուցվածքը 2000-2006թթ.

Ցուցանիշներ	2000	2001	2002	2003	2004	2005	2006	ՏՁՀԿ երկրների միջինը 2004թ.
Ընդամենը կրթության ոլորտի պետական ծախսեր, %	100.0	100.0	100.0	100.0	100.0	100.0	100.0	100.0
այդ թվում՝								
Նախադպրոցական կրթություն, %	8.0	8.9	9.9	9.3	10.0	8.1	8.3	8.0
Տարրական, հիմնական և միջնակարգ ընդհանուր կրթություն, %	68.9	66.3	62.8	65.3	67.9	72.0	71.1	68.4
Հատուկ ընդհանուր կրթություն	4.4	5.5	6.5	5.7	5.6	5.6	5.8	...
Ընդամենը մասնագիտական ծրագրեր, %, որից՝	15.8	16.3	17.3	15.5	12.7	10.4	11.0	23.1
Նախնական մասնագիտական (արհեստագործական) կրթություն, %	1.5	1.4	1.2	0.9	0.8	1.1	1.3	...
Միջին մասնագիտական կրթություն, %	3.8	3.6	3.8	3.3	2.8	2.3	2.5	...
Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթություն, %	10.5	11.2	12.2	11.4	9.0	7.0	7.2	...
Այլ ծախսեր	2.9	3.0	3.5	4.2	3.8	3.9	3.8	

636. Չնայած վերջին տարիների դրական միտումներին, հետխորհրդային ժամանակաշրջանի առաջին մի քանի տարիներին պետական ծախսերի կրճատումն այս ոլորտում առաջ է բերել կրթության որակի էական բացասական փոփոխություններ, որոնց ազդեցությամբ էլ մասամբ պայմանավորված է աղքատ խավերի համեմատաբար ցածր ընդգրկվածությունը ավագ դպրոցում և խիստ ցածր ընդգրկվածությունը մասնագիտական

կրթության մակարդակում: Վերջին հանգամանքը աղքատության վերարտադրության ռիսկեր է առաջացնում:

637. Միջնակարգ ընդհանուր կրթության երեք աստիճաններում՝ տարրական, միջին և ավագ դպրոցներում մեկ աշակերտի հաշվով տարեկան պետական ծախսերը 2003թ. հետո անընդհատ աճել են՝ 2006թ-ին 2.4 անգամ գերազանցելով 2003թ. մակարդակը: Մակայն, դրանք անհամեմատ (շուրջ 8 անգամ) փոքր են ՏՁՀԿ երկրների 2004թ. միջինից: Մեկ աշակերտի հաշվով տարեկան պետական ծախսերը 2006թ. կազմել են մեկ շնչին բաժին ընկնող ՀՆԱ-ի 13.5 տոկոսը՝ 2003թ. 9.1-ի դիմաց՝ 10.5 տոկոսային կետով զիջելով ՏՁՀԿ երկրների 2004թ. միջինին:

638. Մասնագիտական ծրագրերում, մասնավորապես՝ բարձրագույն կրթության համակարգում պետպատվերի շրջանակներում ընդգրկված մեկ ուսանողի հաշվով պետական ծախսերը 2003-2006թթ. ևս աճել են, սակայն շուրջ 1.5 անգամ ավելի դանդաղ: Դրա հաշվին 2003-2006թթ. ընթացքում շուրջ 2 անգամ նվազել է և միջազգային չափանիշներին է մոտեցել բուհի մեկ անվճար ուսուցմամբ սովորող ուսանողի հաշվով պետական ծախսերի հարաբերակցությունը մեկ շնչին բաժին ընկնող ՀՆԱ-ի նկատմամբ, այնպես էլ բուհի մեկ անվճար ուսուցմամբ սովորող ուսանողի և մեկ աշակերտի հաշվով պետական ծախսերի միջև եղած ճեղքվածքը: 2006թ-ին բուհի մեկ անվճար ուսուցմամբ սովորող ուսանողի հաշվով պետական ծախսերը գերազանցել են մեկ աշակերտի հաշվով պետական ծախսերը 2.2 անգամ (2003թ-ի 4.5 անգամի փոխարեն, իսկ ՏՁՀԿ երկրների համար այդ ցուցանիշը 2004թ-ին կազմել է 1.3): Վերջին հանգամանքը բացասաբար չի ազդել բուհում համախառն ընդգրկվածության ցուցանիշի վրա, որը 2003-2006թթ. ընթացքում աճել է 5.4 տոկոսային կետով և կազմել շուրջ 28 տոկոս (2005/2006 ուսումնական տարում բուհական համակարգում ընդգրկված է եղել 101.2 հազար ուսանող՝ 2002/2003 ուսումնական տարվա 80.4-ի փոխարեն): Բուհի մեկ ուսանողի հաշվով տարեկան պետական ծախսերը 2006թ. կազմել են մեկ շնչին բաժին ընկնող ՀՆԱ-ի շուրջ 30 տոկոսը՝ 2003թ. 41-ի փոխարեն՝ հասնելով ՏՁՀԿ երկրների 2004թ. միջինին:


639. Նախնական ու միջին մասնագիտական կրթական համակարգում և միջնակարգ դպրոցում առկա է մեկ սովորողի հաշվով պետական ծախսերի նշանակալի տարբերություն: Մասնագիտական դպրոցի այս մակարդակում պետպատվերի շրջանակներում սովորող մեկ ուսանողի հաշվով տարեկան պետական ծախսերը 2006թ-ին 3.5 անգամ գերազանցել են մեկ աշակերտի հաշվով ծախսերը, նույնիսկ այն դեպքում, երբ 2000-2006թթ. ընթացքում դրանք շուրջ 2 անգամ կրճատվել են: Դրանք 1.6 անգամ գերազանցում են նույնիսկ բուհի համապատասխան ցուցանիշը: Միևնույն ժամանակ, այս կրթական մակարդակում ընդգրկվածությունն ըստ աղքատության խմբերի բավական համասեռ է:

640. 2005թ. ՏՏԿԱՀ արդյունքների վերլուծությունը վկայում է, որ 6-16 տարեկանների ընդգրկվածությունը կրթահամակարգում (նախադպրոցական, ընդհանուր միջնակարգ դպրոցական և մասնագիտական) կայուն մնում է բավական բարձր՝ կազմելով միջինում 92 տոկոս: Համեմատաբար ցածր է 6 տարեկանների ընդգրկվածության ցուցանիշը՝ 50.3 տոկոս, ինչը վկայում է երեխաների՝ սահմանված ժամկետից ուշ դպրոց ընդունվելու և նախադպրոցում ցածր ընդգրկվածության մասին: Մյուս կողմից, սկսած 15 տարեկանից, կրթահամակարգում ընդգրկվածության ցուցանիշը սկսում է նվազել: Սա վկայում է այն մասին, որ նախ ավագ դպրոցում, իսկ հետո՝ շատ ավելի կտրուկ՝ նաև մասնագիտական ծրագրերում, տեղի է ունենում ընդգրկվածության նվազում: Եթե 7-14 տարեկանների՝ կրթահամակարգում ընդգրկվածության միջին ցուցանիշը 98.7 տոկոս է, ապա 15 տարեկանների 95.3, իսկ 16 տարեկանների 77.4 տոկոսն է ընդգրկված կրթահամակարգում: 17-21 տարեկանների համար այդ ցուցանիշը միջինում 40 տոկոս է:

Աղյուսակ 12.6. Մեկ աշակերտի և ուսանողի հաշվով տարեկան պետական կրթական ծախսերը 2000-2006թթ.

Տարեթիվ	Տարրական, միջին և ավագ դպրոցներում մեկ աշակերտի հաշվով տարեկան պետական միջին ծախսը, դրամ	Մեկ աշակերտի հաշվով տարեկան պետական միջին ծախսը, մեկ շնչին բաժին ընկնող ՀՆԱ-ի նկատմամբ, %	Բուրի պետսպավերի շրջանակում ընդգրկված մեկ ուսանողի հաշվով տարեկան պետական միջին ծախսը, դրամ	Բուրի պետսպավերի շրջանակում ընդգրկված մեկ ուսանողի հաշվով տարեկան պետական միջին ծախսը մեկ շնչին բաժին ընկնող ՀՆԱ-ի նկատմամբ, %	ՄՄՈՒՀ/ՆՄՈՒՀ-ների պետսպավերի շրջանակում ընդգրկված մեկ ուսանողի հաշվով տարեկան պետական միջին ծախսը, դրամ	ՄՄՈՒՀ/ՆՄՈՒՀ-ների պետսպավերի շրջանակում ընդգրկված մեկ ուսանողի հաշվով տարեկան պետական միջին ծախսը մեկ շնչին բաժին ընկնող ՀՆԱ-ի նկատմամբ, %	Պետսպավերի շրջանակում ընդգրկված մեկ ուսանողի հաշվով տարեկան պետական միջին ծախսի հարաբերակցությունը դպրոցի մեկ աշակերտի հաշվով տարեկան պետական միջին ծախսի նկատմամբ	
							ԲՈՒՀ	ՄՄՈՒՀ/ՆՄՈՒՀ
2000	36,629	...	178,242	...	220,013	...	4.9	6.0
2001	37,045	10.1	191,927	52.4	213,778	58.4	5.2	5.8
2002	35,730	8.4	194,055	45.7	243,057	57.3	5.4	6.8
2003	45,884	9.1	208,558	41.2	259,381	51.3	4.5	5.7
2004	59,870	10.1	197,275	33.2	253,738	42.7	3.3	4.2
2005	92,879	13.3	216,997	31.1	315,666	45.3	2.3	3.4
2006	111,667	13.5	245,303	29.8	388,331	47.1	2.2	3.5
ՏՀՁԿ միջինը 2004թ.*		24.0		31.0		16.0	1.3	0.7

Գծանկար 12.7. 3-29 տարեկանների ընդգրկվածությունը կրթահամակարգում՝ ըստ տարիքի, տոկոս




Աղբյուրը՝ 2005թ. ՏՏԿԱՀ տվյալներ:

641. Կրթական տարբեր մակարդակներում ընդգրկվածության ցուցանիշների վերլուծության ամփոփումը հետևյալն է.

§ Միջնակարգ ընդհանուր կրթությունում համախառն ընդգրկվածությունը մեր երկրում բավական բարձր է և կազմում է շուրջ 90 տոկոս: Ըստ միջնակարգ կրթության աստիճանների՝ կան որոշ տարբերություններ:

- § Հիմնական կրթության մակարդակում զուտ ընդգրկվածության ցուցանիշները նույնպես կայունորեն բավական բարձր են՝ շուրջ 96 տոկոս: Հիմնական դպրոցում թե՛ զուտ և թե՛ համախառն ընդգրկվածության ցուցանիշները տարածքային, սեռային ու աղքատության խմբերի առումներով բավական համասեռ են: Ընդհանուր առմամբ կարելի է պնդել, որ հիմնական կրթությունը հավասարապես մատչելի է բնակչության բոլոր խավերի համար:
- § 2002թ. հետո ընկած ժամանակահատվածում բարձրացել է համախառն ընդգրկվածության ցուցանիշը ավագ դպրոցում: 2002թ. 74 տոկոսի փոխարեն այն 2005/2006 ուսումնական տարում կազմել է շուրջ 80 տոկոս, սակայն մնում է բավական ցածր (համեմատության համար նշենք, որ ԿԱԵ և ՆԽՄ երկրների միջինը 2004թ. կազմել է 87 տոկոս): Ընդգրկվածության ցուցանիշը շեղված է բնութագրում միջնակարգ կրթությունը հիմնական դպրոցի մակարդակով ավարտելու փաստը՝ դպրոցում ուսումը սկսելու տարիքի ցրվածության պատճառով: Ըստ ՀՀ ԱՎԾ տվյալների՝ 2004/2005 ուստարում 8-րդ դասարանն ավարտածների ընդամենը շուրջ 6 տոկոսն է թողել դպրոցը: Այս ցուցանիշը 2003-2005թթ. ընթացքում անընդհատ բարելավվել է՝ 2003թ. կազմել է 10.4, 2004-ին՝ 9.3 տոկոս: Այնուամենայնիվ, հիմնական դպրոցն ավարտելուց հետո կրթահամակարգը թողնողները հիմնականում աղքատներն են:
- § ԿԱԵ և ՆԽՄ երկրների միջինների համեմատ, ցածր են մնում նախադպրոցական և մասնագիտական ծրագրերում համախառն ընդգրկվածության ցուցանիշները, չնայած 2003-2005թթ. նկատվում է այդ ընդգրկվածությունների աճ: Մասնավորապես, նախադպրոցական համակարգում 2005թ. համախառն ընդգրկվածությունը կազմել է 27.5 տոկոս (ԿԱԵ և ՆԽՄ երկրների միջինը՝ 50.1 տոկոս)՝ 2003թ-ի 26 տոկոսի փոխարեն, իսկ բուհական և հետբուհական կրթամակարդակում՝ շուրջ 28 տոկոս (ԿԱԵ և ՆԽՄ երկրների միջինը՝ 43 տոկոս)՝ 2003թ. 22.9-ի փոխարեն:
- § Չնայած մասնագիտական ծրագրերում և բուհում ընդգրկվածության ցուցանիշները 2001թ-ից հետո անընդհատ աճել են, սակայն դրանք մնում են բավական ցածր՝ ԿԱԵ և ՆԽՄ երկրների միջինի համեմատ և խիստ բևեռացված՝ կենսամակարդակի տարբեր խմբերի ու տարածքային առումներով (ի օգուտ ոչ աղքատների, քաղաքային բնակչության և հատկապես՝ Երևանի):
- § Նախադպրոցական համակարգում, ինչպես նաև ընդհանուր միջնակարգ դպրոցի 9-10 դասարաններում նկատվում է աղքատ և ոչ աղքատ խավերի ընդգրկվածությունների զգալի անհավասարություն, մինչդեռ հիմնական կրթությունում տարբեր խավերի ընդգրկվածությունները բավական բարձր են ու համասեռ (ամենահարուստ ու ամենաաղքատ քվանտիլների ընդգրկվածությունների հարաբերակցությունը կազմում է, համապատասխանաբար՝ 1.8, 1.3 և 1): Անհավասարությունն առավել սրվում է մասնագիտական ծրագրերի մակարդակում: Աղքատ խավերի երիտասարդների համար մասնագիտական կրթության մատչելիությունը անհամեմատ ցածր է:
- § Տարբեր կենսամակարդակ ունեցող համապատասխան տարիքի բնակչության համախառն ընդգրկվածությունը մասնագիտական ծրագրերում առավել անհավասար է բուհական համակարգում (որտեղ ամենահարուստ քվանտիլում համախառն ընդգրկվածության ցուցանիշը շուրջ 15 անգամ գերազանցում է ամենաաղքատ քվանտիլի նույն ցուցանիշը և 2.5 անգամ՝ ՀՀ միջինը), մինչդեռ միջին ու նախնական մասնագիտական կրթությունում այն բավական համասեռ է:

Գծանկար 12.8. Համախառն ընդգրկվածությունները կրթահամակարգի տարրեր օղակներում՝ ըստ սպառման քվանտիլների, %



Աղբյուրը՝ 2005թ. ՏՏԿԱՀ տվյալներ:


642. Շնորհիվ հանրակրթության ոլորտի բարեփոխումների, համակարգի արդյունավետությունը բնութագրող ցուցանիշները դրական միտումներ են դրսևորել: Աշակերտ/ուսուցչական դրույք հարաբերակցությունը 2006թ. կազմել է 13.7 (2003թ.՝ 10.6), իսկ աշակերտ/ուսուցիչ փաստացի հարաբերակցությունը՝ 10.9: Այսինքն՝ փաստացի աշակերտ/ուսուցիչ հարաբերակցությունը դեռևս բավական հետ է մնում միջազգային չափանիշներից, սակայն ուսուցչական դրույքների համեմատ այդ հարաբերակցությունը մոտ է ՏՁՀԿ միջինին (2005թ. ԿԱԵ և ՆԽՄ երկրներում աշակերտ/ուսուցիչ միջին հարաբերակցությունը կազմել է 13, իսկ ՏՁՀԿ երկրներում 2004 թ-ին՝ 15.1): Համապատասխանաբար աճել է դասարանների խտությունը՝ 2005թ-ին կազմելով միջինում 22 աշակերտ՝ 2003թ. 20-ի փոխարեն և հասնելով ՏՁՀԿ երկրների միջինին: Աշակերտ/ուսուցչական դրույք հարաբերակցությունը ևս աճել է՝ 2006թ. կազմելով 22.5 (2003թ.՝ 20.2): Մակայն ոչ ուսուցչական դրույքների թվաքանակի հարաբերակցությունը ուսուցչական դրույքների նկատմամբ հաստատուն է և տատանվում է 0.6-ի սահմաններում, ինչը վկայում է, որ հանրակրթության կառավարման համակարգին ուղղված բարեփոխումները (հաստատությունների ինքնակառավարման և պետական-հասարակական վերահսկողության հավասարակշռման քաղաքականությունը) դեռևս ցանկալի արդյունքներ չեն տվել: Նկատի ունենալով աշակերտական տարիքի բնակչության ժողովրդագրական կազմի կանխատեսվող նվազումը, այս ցուցանիշները առաջիկա տարիներին անընդհատ բարելավման կարիք են ունենալու, նույնիսկ եթե նկատի ունենանք եռամյա ավագ դպրոցի նախատեսվող կազմավորումը և 12-ամյա միջնակարգ կրթությանն անցնելը: Չնայած ուսուցչական դրույքի միջին ամսական աշխատավարձը 2003-2006թթ. աճել է շուրջ 3 անգամ՝ 2006թ. կազմելով մոտ 58 հազար դրամ և մոտենալով միջին աշխատավարձի ցուցանիշին, այն մնում է բավական ցածր: Ուսուցչական մեկ դրույքի միջին աշխատավարձի հարաբերակցությունը մեկ շնչին բաժին ընկնող ՀՆԱ-ի նկատմամբ 2006 թ-ին կազմել է 0.85՝ 2003 թ. 0.43-ի փոխարեն: Մինչդեռ ՏՁՀԿ երկրների նույն ցուցանիշը 2004թ-ին միջինում կազմել է 1.3 և տարբերակված է ոչ միայն ըստ աշխատանքային փորձի, այլև դասավանդման օղակի (տարրական, միջին և ավագ դպրոց): Բոլոր նշված ցուցանիշները վկայում են, որ հանրակրթության արդյունավետությունը որոշակիորեն բարձրացել է, սակայն դեռևս զգալի բարելավման կարիք ունի:

Ներդիր 1. Ընդգրկվածությունը կրթական տարրեր մակարդակներում

Նախադպրոցական կրթություն:

Համախառն ընդգրկվածությունը նախադպրոցում 2005թ. կազմել է 27.5 տոկոս, ըստ որում, քաղաքային բնակչության շրջանում այն կազմել է 38 տոկոս՝ գյուղականի 11 տոկոսի պարագայում: Նախադպրոցական կրթության մատչելիությունն առանձնապես կարևորվում է աղքատ բնակչության համար: Ըստ աղքատության խմբերի վերլուծությունը վկայում է, որ նախադպրոցում համախառն ընդգրկվածության ցուցանիշը էական տարբերություններ է դրսևորում: Այսպես, աղքատ բնակչության խմբում այն կազմում է 23.2 տոկոս՝ ոչ աղքատներինը՝ 30 տոկոս: Շատ աղքատ բնակչության շրջանում այս ցուցանիշն առավել փոքր է՝ 18.5 տոկոս: Սակայն, եթե 2004-2005թթ. ընթացքում նախադպրոցում համախառն ընդգրկվածության ազգային ցուցանիշը փոփոխություն չի կրել, ապա ոչ աղքատների շրջանում այն նվազել է 1.9, իսկ աղքատների շրջանում աճել է 3.6 տոկոսային կետով, այդ թվում՝ շատ աղքատների շրջանում՝ 4 տոկոսային կետով, ինչը վկայում է այս ոլորտում իրականացվող ծրագրերի՝ աղքատ խավերի համար համեմատաբար ավելի նպաստավոր լինելու մասին: Աղջիկ-տղա կտրվածքով նախադպրոցում թե՛ զուտ և թե՛ համախառն ընդգրկվածության ցուցանիշները էական տարբերություններ չեն դրսևորում:

Գծապատկեր Ն1. Համախառն ընդգրկվածությունը նախաառառում. %



Աղբյուրը՝ 2004 և 2005թ. ՏՏԿԱՀ տվյալներ:

Հիմնական դպրոց: Համախառն ընդգրկվածությունը հիմնական դպրոցում (տարրական ու միջին դպրոցներ), որն ապահովում է պարտադիր

նվազագույն կրթական մակարդակի ստացումը, ըստ ՏՏԿԱՀ արդյունքների, 2005թ. կազմել է 101.1 տոկոս, ինչը վկայում է, որ հիմնական դպրոցում ընդգրկվածությունը բավական բարձր է (ԿԱԵ և ՆԽՄ երկրների միջինը՝ 95.7 տոկոս): Սակայն շատ աղքատ խավերի համար ընդգրկվածության ցուցանիշը 5.4 տոկոսային կետով զիջում է ազգային միջինին՝ մնալով շուրջ 96 տոկոսի մակարդակում: Այնուամենայնիվ, տարրական և հիմնական դպրոցներից դուրս մնացողների մասնաբաժինը շատ փոքր է: Այսպես՝ 2005/2006 ուստարում 1 - 3-րդ դասարաններում եղել է ընդամենը 227 երկտարեց և 7-9 տարեկան աշակերտների մեջ՝ դպրոցից դուրս եկած 1,219 աշակերտ: 1 - 3-րդ դասարանների աշակերտների ընդհանուր թվում (121,502 մարդ) առաջինը կազմում է 0.19, իսկ երկրորդը՝ շուրջ 1 տոկոս (մինչև 4-րդ դասարան չգոյատևողներ): Այս ցուցանիշները նույնիսկ փոքր-ինչ զիջում են միջազգային ցուցանիշներին: 4-8-րդ դասարաններում չգոյատևողների մասնաբաժինը փոքր-ինչ ավելի է՝ 1.6 տոկոս: Այդուհանդերձ, լրացուցիչ ուսումնասիրությունները (մասնավորապես, ՄԱԿ-ի մանկական հիմնադրամի կողմից իրականացված) վկայում են վերջին տարիներին միտումների վատթարացման մասին:

Աղյուսակ Ն1. Համախառն և զուտ ընդգրկվածությունը հիմնական դպրոցում

	Համախառն ընդգրկվածությունը հիմնական դպրոցում, տոկոս	7-14 տարեկանների զուտ ընդգրկվածությունը հիմնական դպրոցում, տոկոս
Ընդամենը	101.1	96.1
Ոչ աղքատներ	100.5	95.5
Աղքատներ	102.5	97.3
Որից՝ շատ աղքատներ	95.7	90.6
Երևան	102.2	96.4
Քաղաք՝ առանց Երևանի	100.5	95.2
Գյուղ	100.9	96.4
Տղաներ	101.5	96.1
Աղջիկներ	100.8	96.0
ԿԱԵ և ՆԽՄ երկրների միջինը, 2004թ.*	95.7	...
ԱՄՆ և Արևմտյան Եվրոպա, միջինը 2004թ.*	107.6	...

Աղբյուրը՝ 2005թ. ՏՏԿԱՀ տվյալներ ,

Ավագ դպրոց: Ավագ դպրոցում՝ հիմնականի համեմատ, նկատվում է զուտ և համախառն ընդգրկվածության ցուցանիշների անկում: Ըստ ՀՀ ԱՎԾ տվյալների, համախառն ընդգրկվածությունը ավագ դպրոցում 2005թ. կազմել է շուրջ 80 տոկոս (ԿԱԵ և ՆԽՄ երկրների միջինը 2004թ. կազմել է 87 տոկոս): Ցուցանիշներն էական տարբերություններ են դրսևորում ըստ աղքատության խմբերի՝ մատնանշելով աղքատ խավերի ցածր ընդգրկվածությունը: Սակայն ընդգրկվածության ցուցանիշները շեղում են պատկերը՝ տարիքային վերին ու ներքին սահմանների անորոշության պատճառով: Իրականում, 2004/2005 ուստարում 8-րդ դասարանն ավարտածների ընդամենը շուրջ 6 տոկոսը չի շարունակել ուսումը ավագ դպրոցում: Սա հաստատվում է նաև


2005թ. ՏՏԿԱՀ տվյալներով՝ 18-19 տարեկանների (որոնք, հաշվի առնելով ուշ դպրոց գնալու փաստն ու հնարավոր երկտարեցությունը, պետք է որ ավարտած լինեն միջնակարգ դպրոցում իրենց ուսումնառությունը) 6.3 տոկոսն ունի ավարտված հիմնական ընդհանուր կրթություն՝ որպես իր ստացած ամենաբարձր կրթական մակարդակ: Հիմնական դպրոցն ավարտելուց հետո կրթահամակարգը թողնողները հիմնականում աղքատներն են:

Այսպես, հիմնական կրթությունը ոչ աղքատ 18-19 տարեկանների ընդամենը 2.8 տոկոսի համար է հանդիսանում իրենց ստացած ամենաբարձր կրթամակարդակը: Իսկ աղքատների շրջանում նույն տարիքի բնակչության 16 տոկոսը հիմնական դպրոցից հետո թողել է կրթահամակարգը: Շատ աղքատների շրջանում նրանք կազմել են 18-19 տարեկանների 35 տոկոսը:

Մասնագիտական կրթական ծրագրեր:
Համախառն ընդգրկվածությունը մասնագիտական ծրագրերում կազմել է 38.4 տոկոս, իսկ միայն բուհական համակարգում՝ շուրջ 28 տոկոս: Մասնագիտական կրթական ծրագրերում ընդգրկվածության ցուցանիշները խիստ տարբերություններ ունեն թե՛ տարածքային և թե՛ աղքատության խմբերի առումով: Եթե ՍՍՈՒՀ/ՆՍՈՒՀ-ներում ընդգրկվածության ցուցանիշներն ըստ աղքատության խմբերի բավական համասեռ են, ապա բարձրագույն կրթության օղակում պատկերը խիստ բևեռացված է:

Այստեղ աղքատների ընդգրկվածության ցուցանիշը 5.4, իսկ շատ աղքատներինը՝ շուրջ 8 անգամ ցածր է ոչ աղքատ բնակչության համապատասխան ցուցանիշից: Մասնագիտական ծրագրերում, ինչպես նաև բուհական մակարդակում ընդգրկվածության ցուցանիշներն ունեն ընդգծված տարածքային անհամասնություններ՝ ի օգուտ Երևանի: Այստեղ ընդգրկվածությունը մասնագիտական ծրագրերում 1.8 անգամ ավելին է, քան ՀՀ այլ քաղաքներում և 3 անգամ ավելին է, քան գյուղերում: Տարբերություններն ավելի սուր են հատկապես բուհական մակարդակում, որտեղ նշված համասնությունները կազմում են համապատասխանաբար՝ 2.1 անգամ և 4.3 անգամ: Արդյունքում՝ 25-34 տարեկան երիտասարդների 49.8 տոկոսն ունի որևէ մակարդակի մասնագիտական կրթություն, որից՝ 27.2 տոկոսը՝ միջին ու նախնական մասնագիտական, իսկ 22.6 տոկոսը՝ բարձրագույն: Այս ցուցանիշը մոտ է ՏՁՀԿ երկրների միջին ցուցանիշին, չնայած համախառն ընդգրկվածության ցուցանիշները ակնհայտորեն գիջում են ԿԱԵ և ՆԽՄ երկրների մի գգալի մասին: Միևնույն ժամանակ, ի տարբերություն ՏՁՀԿ երկրների, սերունդների միջև մասնագիտական ներուժի ներկայացվածության տարբերությունը փոքր է, վերջին 20-30 տարիների ընթացքում

Գծապատկեր Ն2. Համախառն ընդգրկվածությունն ավագ դպրոցում՝ ըստ աղքատության խմբերի, տոկոս




Աղբյուրը՝ ՏՏԿԱՀ, 2005թ.:

Աղյուսակ Ն2. Համախառն ընդգրկվածությունը մասնագիտական ծրագրերում և բարձրագույն ու հետբուհական կրթությունում, տոկոս

Ցուցանիշներ	Համախառն ընդգրկվածությունը մասնագիտական ծրագրերում, տոկոս	Այդ թվում՝ համախառն ընդգրկվածությունը միայն բարձրագույն և հետբուհական կրթությունում, տոկոս
Ընդամենը	38.4	28.5
Ոչ աղքատներ	48.8	37.3
Աղքատներ	12.9	6.9
Որից՝ շատ աղքատներ	6.2	4.8
Երևան	64.1	53.0
Քաղաք՝ առանց Երևանի	35.7	25.0
Գյուղ	20.4	12.2
Տղամեր	37.7	30.3
Աղջիկներ	38.9	27.2
ԿԱԵ և ՆԽՄ երկրների միջինը, 2004թ.*	...	43.0

Գծապատկեր Ն3. Բարձրագույն կրթություն ունեցողների տեսակարար կշիռը, տոկոս



Աղբյուրը՝ 2005թ. ՏՏԿԱՀ տվյալներ և UNESCO-UIS/OECD 2005

12.2.2. Գերակայություններ, նպատակադրումներ և առաջնահերթություններ

643. Կրթության ոլորտում ԿԶԾ-ի ծրագրային գերակայությունը հանրակրթությունն է: Նախատեսված բարեփոխումների շրջանակում լրիվ միջնակարգ կրթությունը, ներառյալ ներդրվող եռամյա ավագ դպրոցը, կոչված է ապահովելու շրջանավարտների՝ աշխատաշուկա մտնելու պատրաստվածությունը և իրենց հակումներին ու ընդունակություններին համապատասխան մասնագիտական կրթություն ստանալու հնարավորությունը:

644. Հանրակրթության ոլորտում ծրագիրը նպատակադրում է լրիվ միջնակարգ կրթության որակի բարձրացումը, դրա վերահսկողության և գիտելիքների գնահատման գործուն, եվրոպական չափանիշներին համադրելի միասնական համակարգի ձևավորումն ու ներդրումը, բնակչության բոլոր խավերի համար որակյալ լրիվ միջնակարգ կրթության հավասար մատչելիության ապահովումը միջնակարգ դպրոցի բոլոր, հատկապես՝ ավագ դպրոցի մակարդակներում և համակարգի արդյունավետության շարունակական բարձրացումը ու հաստատությունների կառավարման ինստիտուտների հետագա հզորացումը:

645. Ելնելով իրավիճակի վերը բերված նկարագրությունից, որպես առաջիկա տարիներին հանրակրթության ոլորտի առաջնահերթություն է գծագրվում տարրական, հիմնական ու հատկապես՝ ավագ դպրոցում բնակչության բոլոր խավերի հավասար ներգրավման և ավագ դպրոցում աղքատ խավերի ընդգրկվածության աճի ապահովումը: Վերջինը, ավագ դպրոցի ներկայումս նախատեսվող բարեփոխումների ենթատեքստում, էլ ավելի է կարևորվում: Եռամյա ավագ դպրոցի ձևավորումն ու անջատումը աղքատ խավերի ընդգրկվածության նվազման վտանգ է պարունակում, ինչը խոցելի է դարձնում աղքատ խավերի երիտասարդներին՝ բարձր վարձատրությամբ աշխատանքի տեղավորվելու ու բարձրագույն մասնագիտական կրթություն ստանալու համար բավարար հիմքերի ու մրցունակության ստեղծման տեսանկյունից: Այդ իսկ պատճառով, ինչպես նաև բարեփոխված ավագ դպրոցի առաքելությունից ելնելով, կարևորվում է նվազագույն կրթական մակարդակը օրենսդրորեն ավագ դպրոցը (հիմնականի փոխարեն, ձեռք բերված՝ դպրոցական կամ նախնական ու միջին մասնագիտական կրթահամակարգում) սահմանելու հիմնահարցը:

646. Առաջնահերթ է նաև ավագ դպրոցների գոտիականության որոշման հարցը՝ ելնելով այն սկզբունքից, որ համեմատաբար խոցելի համայնքների (որոնք հիմնականում փոքր, հեռավոր, բարձրլեռնային, սահմանամերձ ու մեկուսացված գյուղական համայնքներն են) բնակիչների համար ապահովվեն ավագ դպրոցում առանց բնակչության համար լրացուցիչ ծախսերի և հնարավորինս արդյունավետ սխեմայով ընդգրկվելու և որակյալ լրիվ միջնակարգ կրթություն ստանալու հավասար հնարավորություններ:

647. Քայլեր են ձեռնարկվելու հեռահար ուսուցման համակարգի ներդրման և դպրոցների էլեկտրոնային ցանցի ընդլայնման ուղղությամբ՝ նպատակ հետապնդելով 2012 թ. ապահովել բոլոր հանրակրթական դպրոցների ընդգրկվածությունը հեռահար ուսուցման համակարգում: Դ-ա, իր հերթին, ենթադրում է հեռահաղորդակցության ու տեղեկատվական տեխնոլոգիաների ներդրում և զարգացում:

648. Դպրոցի բարեփոխման պահանջներից ելնելով՝ ծրագրի շրջանակներում առաջնահերթ է նաև ուսուցիչների (հատկապես՝ ավագ դպրոցի) շարունակական վերապատրաստումը, նրանց որակավորման բարձրացման չափորոշիչների համապատասխանեցումը կրթական նոր ծրագրերին և աշխատավարձերի՝ մեկ շնչին բաժին

ընկնող ՀՆԱ-ի նկատմամբ հարաբերակցության բարձրացումը մինչև 1.5-ի և կայունացումն այդ մակարդակի վրա:

649. Հանրակրթության որակի բարձրացման և ավագ դպրոցի առաքելությունն ապահովելու համար առաջնահերթություններից է դպրոցների նյութատեխնիկական և ուսումնամեթոդական բազայի համալրումը, նորագույն տեխնոլոգիաների ներդրումը (լաբորատոր սարքավորումներ, համակարգչային տեխնիկա, ինտերնետ և այլն):

650. Հանրակրթության շեմին բոլոր խավերի երեխաների համար հավասար մեկնարկային հնարավորություններ ստեղծելու առումով առաջնայինը նախադպրոցական կրթության ծառայությունների որակի և մատչելիության բարելավումն է՝ պետական հոգածությունն ուղղելով հատկապես սոցիալապես անապահով ընտանիքների երեխաների ընդգրկման ավելացմանը նախադպրոցական կրթության մեջ:

651. Դպրոցահասակների և դեռահասների շրջանում առողջ ապրելակերպի սկզբունքների շարունակական ամրապնդման նպատակով, կարևորվում է կրթական հաստատություններում իրագործվող բժշկական և խորհրդատվական աշխատանքների բարելավումը՝ շարունակելով սովորողների առողջ ապրելակերպի, ինչպես նաև ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի և սեռավարակների, հոգեկան, սեռական և վերարտադրողական առողջության վերաբերյալ գիտելիքների ուսուցանումը: «Առողջ ապրելակերպ» դասընթացի հայեցակարգն ուղղված է հանրակրթության իրականացման ամբողջ ժամանակաշրջանում սովորողների առողջության, անվտանգության, ապահովության հետ կապված խնդիրների արձարծմանը, դրանց լուծման ուղիների կանոնակարգմանը: Դասընթացի նպատակը սովորողների մեջ սեփական և այլոց առողջությունը՝ որպես կարևորագույն արժեք գնահատելու որակ և այն պահպանելու վարքագիծ ձևավորելն է:

652. Հանրակրթությունում խոցելի խմբերի երեխաների համար հավասար հնարավորություններ ստեղծելու տեսանկյունից առաջնահերթ է նաև ներառական կրթության համակարգի ներդրումն ու զարգացումը:

653. Հանրակրթության ոլորտի ծրագրային նպատակների իրագործումը հիմք կհանդիսանա մասնագիտական կրթության բնագավառում իրականացվող բարեփոխումների արդյունավետ ընթացքի և ծրագրի՝ մասնագիտական կրթությանը վերաբերող երկրորդ մակարդակի նպատակադրումների իրականացման համար:

654. Մասնագիտական կրթության մակարդակում ծրագիրը նպատակադրում է բնակչության **բոլոր խավերի** ընդունակ երիտասարդների համար մասնագիտական մակարդակի կրթական հաստատություններում ուսանելու հավասար հնարավորությունների ապահովումը և մասնագիտական կրթության մատչելիությունը բարձրացնող ծրագրերի ներդրման հիման վրա՝ ընդգրկվածության աճն ու դրա առկա խտրը անհավասարության մեղմումը:

655. Միաժամանակ, կարևորվում է մասնագիտական կրթության որակի բարձրացմանը և աշխատաշուկայի պահանջներին, երկրի կրթական ու գիտական զարգացման ռազմավարական նպատակներին և միջազգային ստանդարտներին ու Բոլոնիայի համաձայնագրի դրույթներին դրա համապատասխանեցմանն ուղղված բարեփոխումների շարունակումը: Այս առումով, նպատակադրվում է մինչև 2015 թ. ունենալ միջազգային հավատարմագրում անցած առնվազն երկու ԲՈՒՀ:

656. Ծրագիրը առաջադրված նպատակներին հասնելու համար նախատեսում է ավելացնել պետական բյուջեից կրթության ոլորտին ուղղվող հատկացումները՝ հնարավորինս մոտեցնելով դրանք զարգացած երկրների ստանդարտներին: Միևնույն ժամանակ,

ենթադրվում է ներդրությանը բարեփոխումների շարունակական իրականացում՝ ուղղված համակարգի որակի ու արդյունավետության բարձրացմանը:

12.2.3. Կրթության ոլորտում պետական ծախսերի ծրագրային ցուցանիշները և սպասվող արդյունքները

657. Համախմբված բյուջեից կրթությանն ուղղվող ծախսերը ծրագրային ժամանակահատվածում անվանական արտահայտությամբ անընդհատ կավելանան: Դրանք 2010 թ-ին, 2006-ի համեմատ կկրկնապատկվեն, 2015-ին՝ կքառապատկվեն, իսկ 2021թ-ին՝ 7.5 անգամ կգերազանցեն 2006թ. մակարդակը:

658. 2007-2021թթ. ընթացքում համախմբված բյուջեից կրթությանն ուղղվող ծախսերը միջինում կաճեն տարեկան 14.5 տոկոսով: Ըստ որում, 2007-2009թթ. դրանց տարեկան աճի տեմպը շուրջ 1.6 անգամ կգերազանցի նշված միջինը՝ նկատի ունենալով եռամյա ավագ դպրոցի ձևավորման նախատեսվող գործընթացը: Այնուհետև, կրթությանն ուղղվող ծախսերի աճի տեմպը աստիճանաբար կնվազի և 2015թ. հետո կկայունանա 9-10 տոկոսի սահմաններում: Այս նվազումը պայմանավորված կլինի երկրի բնակչության ժողովրդագրական կանխատեսվող փոփոխություններով՝ շահառուների թվաքանակի նվազմամբ:

659. Վարվող քաղաքականությունը կապահովի նաև համախմբված բյուջեի՝ կրթությանն ուղղված ծախսերի մասնաբաժնի անընդմեջ աճ: Ծրագրային ամբողջ ժամանակահատվածում համախմբված բյուջեի կազմում կրթությանն ուղղված ծախսերի մասնաբաժինը կաճի 2.2 տոկոսային կետով՝ 2012թ-ից սկսած կայունորեն գերազանցելով 14 տոկոսը և 2021-ին գերազանցելով 15 տոկոսը: Ըստ որում, 2008-2012թթ. կրթությանն ուղղված ծախսերի մասնաբաժինը կաճի ավելի արագ տեմպերով, քան համախմբված բյուջեի ընդհանուր ծախսերը: Այսպիսի հարաբերակցությունը պայմանավորված է կրթության, մասնավորապես՝ ընդհանուր միջնակարգ կրթության բնագավառում բարեփոխումների հաջող իրականացման պահանջներով:

Աղյուսակ 12.7. Համախմբված բյուջեի ծախսերի ծրագրային ցուցանիշները կրթության ոլորտում

Ցուցանիշներ	2007	2008	2009	2010	2011	2012	2015	2018	2021
Համախմբված բյուջեի՝ կրթության ոլորտին ուղղված ծախսեր, մլրդ դրամ	95.4	110.9	135.1	156.0	179.1	211.4	313.5	419.4	590.2
Տոկոսային փոփոխությունը նախորդ տարվա նկատմամբ	30.5	16.3	21.9	15.4	14.8	18.0	15.4	11.7	10.9
Ինդեքս, 2007թ.=100	100.0	116.3	141.7	163.5	187.8	221.6	328.8	439.8	618.6
Կրթության ոլորտին ուղղված ծախսերը ՀՆԱ նկատմամբ, %	3.0	3.0	3.2	3.3	3.4	3.6	4.0	4.1	4.5
Կրթության ոլորտին ուղղված ծախսերը համախմբված բյուջեի ծախսերի նկատմամբ, %	13.2	12.6	13.5	13.6	13.7	14.3	14.9	14.6	15.4

660. Կրթության ոլորտին ուղղված ծախսերի աճի շնորհիվ ՀՆԱ նկատմամբ համախմբված բյուջեի կրթական ծախսերի մասնաբաժինն անընդմեջ կաճի՝ 2015թ-ին հասնելով ՀՆԱ 4, իսկ 2021թ-ին՝ ՀՆԱ 4.5 տոկոսի: Այսպիսով, 2006թ. համեմատ, այս ցուցանիշը 2021-ին կավելանա 1.7 տոկոսային կետով և կմոտենա ՏՀՀԿ երկրների 2004թ. միջինին: Սակայն, անվանական արտահայտությամբ այսպիսի աճը, 2006թ. համեմատ, մեկ շահառուի հաշվով կապահովի տարեկան պետական ծախսերի ավելացում շուրջ 7 անգամ:

661. Նկատի ունենալով հանրակրթության ոլորտի բարեփոխումները, 2007-2012թթ. կրթության ոլորտի պետական ծախսերի՝ ընդհանուր միջնակարգ կրթությանն ուղղված

մասնաբաժինը կտատանվի 75 տոկոսի սահմաններում (իսկ ընդհանուր միջնակարգ և հատուկ կրթությանը՝ 78 տոկոսի սահմաններում): 2012 թ-ից հետո այն կսկսի նվազել՝ ապահովելով մասնագիտական կրթական ծրագրերին ուղղվող ծախսերի մասնաբաժնի աճ և 2021թ. կկայունանա 70 տոկոսի սահմաններում՝ մոտենալով ՏԶՀԿ երկրների 2004թ. միջին ցուցանիշին (շուրջ 68 տոկոս):

662. Մասնագիտական կրթական ծրագրերին ուղղված ծախսերի մասնաբաժինը կրթական ընդհանուր ծախսերում ծրագրային ամբողջ ժամանակահատվածում կաճի 5 տոկոսային կետով՝ 2021թ-ին հասնելով 16 տոկոսի:

Աղյուսակ 12.8. Կրթությանն ուղղվող ծախսերի ներդրությանը կառուցվածքը*, տոկոս

Ցուցանիշներ	2007	2008	2009	2010	2011	2012	2015	2018	2021
Ընդամենը կրթության ոլորտին ուղղված պետական ծախսեր, %	100.0	100.0	100.0	100.0	100.0	100.0	100.0	100.0	100.0
այդ թվում՝									
Տարրական, հիմնական ու միջնակարգ ընդհանուր և հատուկ կրթության ոլորտ, %	81.9	76.6	78.4	78.4	78.2	78.0	75.0	73.0	73.0
Ոլորտին ուղղված ծախսերը ՀՆԱ նկատմամբ, %	2.5	2.3	2.5	2.6	2.7	2.8	3.0	3.0	3.3
Մասնագիտական ծրագրերի ոլորտ, %	9.6	13.0	11.3	11.3	11.6	11.7	14.1	15.8	16.0
Ոլորտին ուղղված ծախսերը ՀՆԱ նկատմամբ, տոկոս	0.29	0.39	0.37	0.37	0.39	0.42	0.56	0.65	0.72

* Համախմբված բյուջեի ծախսեր:

663. Պետական ծախսերի՝ այսպիսի համամասնություններով ավելացումը հնարավորություն կտա 2009 թ-ին կրկնապատկելու 2006 թ. մեկ աշակերտի հաշվով տարեկան պետական ծախսերի ցուցանիշը, իսկ 2021 թ-ին՝ շուրջ 7 անգամ գերազանցելու այն: Մյուս կողմից, աստիճանաբար կաճի նաև մեկ աշակերտի հաշվով տարեկան ծախսերի հարաբերությունը մեկ շնչին բաժին ընկնող ՀՆԱ-ի նկատմամբ՝ 2021թ. հասնելով վերջինիս շուրջ 20 տոկոսի¹⁸²: Այսպիսի քաղաքականությունը, ըստ կանխատեսումների, հնարավորություն կտա 2012թ-ին համախառն ընդգրկվածությունը ընդհանուր միջնակարգ կրթությունում հասցնելու շուրջ 96, իսկ 2021թ-ին՝ 98 տոկոսի՝ միաժամանակ մեծացնելով աղքատ խավերի ընդգրկվածությունը ավագ դպրոցում:

Աղյուսակ 12.9. Տարրական, միջին ու ավագ դպրոցների մեկ աշակերտի հաշվով տարեկան պետական կրթական ծախսերը

Տարեթիվ	Ինդեքս, 2006թ.=100	Տարրական, միջին և ավագ դպրոցներում մեկ աշակերտի հաշվով տարեկան պետական միջին ծախսերը, միջազգային (ԳՀ) դոլար	Տարրական, միջին և ավագ դպրոցներում մեկ աշակերտի հաշվով տարեկան պետական միջին ծախսերը՝ մեկ շնչին բաժին ընկնող ՀՆԱ-ի նկատմամբ, %	Աշակերտական տարիքի բնակչության թվաքանակի կանխատեսումներ, հազ. մարդ	Ինդեքս, 2006թ.=100
2007	149	1,284	17.1	432.7	94
2008	174	1,558	17.5	405.8	94
2009	205	1,744	18.2	430.0	106

¹⁸² Այսպիսի զարգացումները պայմանավորված են նաև բնակչության ժողովրդագրական կանխատեսումներով, ըստ որոնց՝ համապատասխան տարիքի բնակչության թվաքանակը նվազելու է: Նույնիսկ 2009 թ-ին, եռամյա ավագ դպրոցի ներդրման և աշակերտական տարիքի ընդլայնման պայմաններում, 2018 թ-ին միայն կայունորեն կվերականգնվի 2006թ-ի աշակերտական տարիքի բնակչության թվաքանակը:

2010	222	1,807	17.6	457.7	106
2011	265	2,064	19.0	443.4	97
2012	306	2,299	20.1	433.8	98
2015	430	2,922	21.8	432.5	102
2018	525	3,232	20.7	468.8	103
2021	660	3,683	20.4	524.1	104
ՏՁՀԿ երկրնե- րի միջինը 2004թ-ին		6,875	24.0	...	

664. Մասնագիտական կրթությանը հատկացված ծախսերը ուղղված կլինեն առանձին ծրագրերի մասնաբաժինների անընդմեջ աճին: Ըստ որում, 2007-2012թթ. նախնական ու միջին մասնագիտական կրթության մասնաբաժնի աճի տեմպը կզերազանցի բարձրագույն կրթության մասնաբաժնի աճը, իսկ 2012թ-ից հետո՝ կապահովվի բուհական կրթության մասնաբաժնի առաջանցիկ ավելացում՝ նկատի ունենալով Բոլոնիայի գործընթացի պահանջները: Այսպիսի մոտեցումը հնարավորություն կտա փոքրացնելու մեկ ուսանողի հաշվով պետական ծախսերի ճեղքվածքը՝ միջին մասնագիտական ու բուհական կրթության մակարդակներում: Միաժամանակ, հաշվի առնելով ընդհանուր միջնակարգ կրթությանն ուղղվող պետական ծախսերի աճը, հնարավոր կլինի պահպանել մեկ աշակերտի ու մեկ բուհական ուսանողի հաշվով տարեկան պետական ծախսերի միջինում 1:2 հարաբերակցություն:

Աղյուսակ 12.10. Մասնագիտական ծրագրերին ուղղվող պետական ծախսերի ներդրությանը կառուցվածքը, տոկոս

Ցուցանիշներ	2007	2008	2009	2010	2011	2012	2015	2018	2021
Ընդամենը մասնագիտական ծրագրերին ուղղված կրթական ծախսեր, %	9.6	13.0	11.3	11.3	11.6	11.7	14.1	15.8	16.0
որից՝									
Նախնական և միջին մասնագիտական կրթության մասնաբաժինը, %	3.7	6.8	4.6	4.4	4.2	4.2	4.5	4.9	5.0
Ինդեքս, 2006=100	96.9	179.9	121.1	115.8	110.5	110.5	118.4	128.9	131.6
Բարձրագույն և հետբարձրագույն կրթության մասնաբաժինը, %	5.9	6.2	6.7	6.9	7.4	7.5	9.6	10.9	11.0
Ինդեքս, 2006=100	81.7	85.7	93.1	95.8	102.8	104.2	133.3	151.4	152.8

665. Հանրակրթության ոլորտում պետական ծախսերն ընդհանուր առմամբ ուղղված են լինելու ընթացիկ ծախսերի մասնաբաժնի աճին: 2005-2006թթ. հանրակրթությանն ուղղված ծախսերի շուրջ 21.5 տոկոսն ուղղված է եղել կապիտալ ծախսերին, ինչը էապես մեծ է միջազգային ստանդարտների համեմատ: Նկատի ունենալով ավագ դպրոցի կազմավորման հետ կապված կապիտալ ծախսերի անհրաժեշտությունը՝ հանրակրթությանն ուղղված կապիտալ ծախսերի մասնաբաժինը 2008-2009թթ. կաճի ևս 3-4 տոկոսային կետով, որից հետո կսկսի նվազել՝ 2012թ-ին հասնելով 15 տոկոսի, իսկ 2017-ից հետո կկայունանա 8-9 տոկոսի սահմաններում:

Աղյուսակ 12.11. Հանրակրթությանն ուղղվող պետական ծախսերի կառուցվածքը, տոկոս

Ցուցանիշներ	2007	2008	2009	2010	2011	2012	2015	2018	2021
Հանրակրթությանն ուղղված պետական ծախսեր, %	100.0	100.0	100.0	100.0	100.0	100.0	100.0	100.0	100.0
Այդ թվում՝									
Ընթացիկ, %	74.7	74.5	75.0	80.0	85.0	85.0	90.0	91.0	92.0

Ինդեքս, 2006=100	95.2	94.8	95.6	101.9	108.3	108.3	114.7	116.0	117.2
Կապիտալ, %	25.3	25.6	25.0	20.0	15.0	15.0	10.0	9.0	8.0
Ինդեքս, 2006=100	117.5	119.0	116.1	92.9	69.7	69.7	46.5	41.8	37.2

666. Այսպիսի ֆինանսավորումը հնարավորություն կտա բարձրացնելու ուսուցիչների աշխատավարձերը՝ միաժամանակ շարունակելով նրանց վերապատրաստման գործընթացը և այդպիսով օժանդակելով հանրակրթության որակի բարձրացմանը: Քաղաքականությունն ուղղված է լինելու այն բանին, որ ուսուցիչների տարեկան միջին աշխատավարձը, որը 2007թ. հավասարվել է մեկ շնչին բաժին ընկնող ՀՆԱ-ի մակարդակին, այնուհետև շարունակաբար աճի՝ 2009-2011 թթ-ին բարձրացնելով մեկ շնչին բաժին ընկնող ՀՆԱ-ի նկատմամբ ուսուցիչների ածխատավարձի հարաբերակցությունը 1.1-ից մինչև 1.3-ի: 2012-2021թթ. ժամանակաշրջանում նախատեսվում է, որ ուսուցիչների աշխատավարձը կայունորեն կգերազանցի մեկ շնչին բաժին ընկնող ՀՆԱ-ի մակարդակը 50-60 տոկոսով: Նախատեսվում է ուսուցչական դրույքի միջին ամսական աշխատավարձը 2007թ. համեմատ անընդհատ ավելացնել, 2012թ-ին՝ 2.8, իսկ 2021-ին՝ շուրջ 6.5 անգամ գերազանցելով 2007թ. մակարդակը:

667. Այսպիսի զարգացումներ ապահովելու համար կշարունակվի հանրակրթության համակարգի արդյունավետության բարձրացումը: Մասնավորապես, աշակերտ/ուսուցիչ հարաբերակցությունը 2009-2012թ-ին նախատեսվում է պահել 14.55-14.56 սահմաններում, իսկ դրանից հետո հասցնել 14-ի և կայունորեն պահել այդ մակարդակի վրա: Աշակերտ/ուսուցիչ հարաբերակցությունը 2009-2011թթ. կկազմի համապատասխանաբար՝ 24.11, 24.12 և 24.14: Այնուհետև այն պետք է աստիճանաբար մեծանա, 2021-ին հասնելով շուրջ 26-ի: Վերջինս հնարավորություն կտա փոքրացնելու ոչ ուսուցչական դրույքների հարաբերակցությունը ուսուցչական դրույքների նկատմամբ՝ 2006թ. 60 տոկոսից:

668. Ծրագրի իրականացման առաջին փուլում՝ 2007-2012թթ., աշխատավարձերը կկազմեն հանրակրթության ընթացիկ ծախսերի միջինում 78 տոկոսը՝ հնարավորություն տալով իրականացնելու անհրաժեշտ այլ ընթացիկ ծախսերը:

669. Նախատեսվում է շարունակել գյուղական, սահմանամերձ ու լեռնային բնակավայրերի ուսուցչական կազմի վերապատրաստման ու որակյալ մասնագետներով համալրման հարցում պետական հատուկ հոգածությունը, ինչպես նաև տարրական դպրոցի աշակերտներին դասագրքերով ու գրականությամբ ապահովելու քաղաքականությունը:

670. Մասնագիտական կրթության մատչելիությունը ապահովելու և այս կրթամակարդակում տարբեր սոցիալական խավերի ընդգրկվածության անհավասարությունը մեղմելու նպատակով՝ այստեղ վարվող քաղաքականությունն ուղղված է լինելու մրցակցային կրթությանը, առավել բարձր կրթական նվաճումների խրախուսմանը և պետական ֆինանսավորման տրամադրման այնպիսի սխեմաների իրականացմանը, որոնք հիմնված կլինեն երիտասարդների ընդունակությունների ու առաջադիմության՝ միասնական չափորոշիչներով գնահատված արդյունքների վրա: Մասնավորապես՝ կմշակվեն ու կներդրվեն առավել ընդունակ և բարձր առաջադիմություն ցուցաբերած շրջանավարտներին ու ուսանողներին պետական սուբսիդիաների՝ կրթաթոշակների, ուսանողական վարկերի և դրամաշնորհների տրամադրման սխեմաներ (որպես համալրում՝ պետական պատվերի համակարգին), որոնք կնախատեսեն առավել մատչելի պայմաններ հատկապես անբարեկեցիկ խավերի ընդունակ երիտասարդների համար: Այսպիսի մոտեցումների կիրառումը պետք է ուղղված լինի աղքատ խավերի, ինչպես նաև մասնագիտական ուսումնական հաստատություններից հեռու բնակվող երիտասարդների՝ մասնագիտական կրթությունում ընդգրկվածության աճին և այս կրթամակարդակում տարբեր սոցիալական խավերի ընդգրկվածության անհավասարության մեղմմանը: Ակնկալվում է, որ իրականացվելիք քաղաքականության արդյունքում համախառն ընդգրկվածությունը բարձրագույն կրթությունում 2012թ-ին կհասնի շուրջ 33, իսկ 2021թ-ին՝ 42 տոկոսի:

Միաժամանակ սպասվում է, որ աղքատ խավերի ընդգրկվածության ճեղքվածքը՝ ոչ աղքատների նկատմամբ, կնվազի առնվազն երկու անգամ:

12.3. Աղքատության հաղթահարման մշակութային հայեցակետը

12.3.1. Ընդհանուր ակնարկ

671. Աղքատության հաղթահարման մշակութային հայեցակետը հիմնվում է հետևյալ սկզբունքների վրա.

ա) Չնայած աղքատության հիմքերը կապվում են հիմնականում տնտեսական, քաղաքական, սոցիալական փոփոխությունների հետ, այնուամենայնիվ, մշակութային քաղաքիչները (ազգային ինքնության գիտակցում, ավանդական ազգային արժեքների գերակայություն, պատմամշակութային ժառանգության արժեքային համակարգի գիտակցում, ազգային ուրույն աշխարհընկալում) որոշակի ազդեցություն ունեն աղքատության մակարդակի վրա:

բ) Մշակույթի ոլորտի նպատակները և խնդիրները բխում են հասարակական այն համոզմունքից, որ մշակութային գործունեությունը առաջինը միտված պետք է լինի ազգային ավանդական արժեհամակարգի պահպանմանը, ներկայացմանը, տարածմանը, նորանկախ պետության քաղաքացու և մշակութային միջավայրի ձևավորմանը, հասարակության սոցիալ-հոգեբանական մթնոլորտի առողջացմանը, պետության ազգային մշակութային անվտանգության ապահովմանը:

գ) Պետությունը հիմնական դերակատարություն ունի՝ ապահովելու քաղաքացիների մշակութային գործունեության իրականացումը, մշակութային ծառայություններից, կրթությունից և մշակութային բարիքներից օգտվելու իրավունքը և մատչելիությունը, հասարակության մշակութային ներուժի վերարտադրումն ու զարգացումը:

672. Սոցիալ-հասարակական և պատմական իրադարձությունների ժամանակ փոփոխություններ են կրում ազգային մտածողությունը, արժեհամակարգը (ինչի արտացոլումը երևան է գալիս առաջինը մշակույթում)՝ իրենց ազդեցությունը թողնելով երկրի հասարակական և սոցիալ-տնտեսական զարգացումներում: Անկախացումից հետո նոր գաղափարների որոնումը, ընդհուպ ավանդական արժեքների մերժումը, նախկինում ստեղծված նյութական և հոգևոր արժեքների անհիմն բացասումը, արտերկրից «մասսայական» մշակույթի ներմուծումը հանգեցրին այն բանին, որ հասարակական կյանքում նվազեց ազգային մշակույթի դերի ու նշանակության գիտակցումը: Դրան նպաստեցին նաև մշակութային ապակենտրոնացման չիմնավորված քաղաքականությունը, մշակութային ընդհանուր ռազմավարության բացակայությունը, տնտեսական պատճառներով՝ մշակութային կազմակերպությունների անգործությունը կամ փակումը, ստեղծագործական աշխատողներին և արվեստագետներին տրվող սոցիալ-ստեղծագործական պատվերների բացակայությունը և, վերոնշյալի արդյունքում, մշակույթի ոլորտի մասնագետների ոչ բարվոք սոցիալական վիճակը: Այդ ամենի հետևանքով արձանագրվեց մասնագետների արտահոսք դեպի արտերկիր, նվազեց մշակութային կրթության և ծառայությունների որակը, արվեստագետների մեծ մասը ստիպված էր անցնել գործունեության այլ ասպարեզ: Վիճակն առավել անմխիթար է հատկապես ՀՀ մարզերում, որտեղ մշակութային ենթակառուցվածքների կազմալուծումը հանգեցրեց ստեղծագործական աշխատողների հուսախաբության, աղքատության դրսևորման անխուսափելիության և հեռանկարի բացակայության: Մշակույթի տների և կենտրոնների (համայնքներում մշակութային կյանքը հիմնականում կազմակերպվում է այս հաստատություններում) զանգվածաբար փակման հետևանքով ոչ միայն գործազուրկ դարձան բազմաթիվ ստեղծագործական աշխատողներ, այլև համայնքային բնակչությունը զրկվեց մշակութային կյանքին մասնակցելու հնարավորությունից: Գործունեություն ծավալելու հնարավորությունից զրկվեցին նաև ժողովրդական արհեստագործները, ազգագրական համույթները, որոնք ազգային ոչ նյութական մշակութային ժառանգության կրողներն ու փոխանցողներն են: Անմխիթար վիճակում հայտնվեց նաև համայնքային գրադարանային համակարգը, որը բնակչության տեղեկատվության հիմնական աղբյուրներից մեկն է: Գեղարվեստական կրթական համակարգում

(երաժշտական, արվեստի և գեղարվեստի դպրոցներ, գեղագիտական կենտրոններ և արտադպրոցական այլ հաստատություններ) առաջացան կազմակերպական, կադրային, նյութատեխնիկական համալրման դժվարություններ: Մոցիալապես անապահով ընտանիքների երեխաների համար գեղարվեստական կրթություն ստանալը դարձավ անմատչելի, ինչի հետևանքով կտրուկ նվազեց աշակերտների թիվը վերոնշյալ դպրոցներում: Ուսուցիչների աշխատավարձը, մի շարք օբյեկտիվ և սուբյեկտիվ պատճառներով (օրենսդրական դաշտի անկատարություն, համայնքների տնտեսական ոչ բարվոք վիճակ, ուսուցիչների կարգավիճակի անորոշություն), ամենացածրն է հանրապետությունում (ուսուցիչների աշխատավարձը հավասար է եղել հանրապետությունում ընդունված նվազագույն աշխատավարձի մակարդակին), ինչի հետևանքով կտրուկ պակասեց կամ վերացավ մի շարք մասնագիտությունների ուսուցումը: Ավելի շատ տուժեց ազգային նվազարանների ուսուցումը: Այս հանգամանքը չէր կարող իր բացասական հետևանքը չունենալ մշակույթի ոլորտի կադրերի հետագա համալրման գործում: Առայսօր գործող համայնքային մշակութային կազմակերպություններում աշխատավարձերն ամենացածր մակարդակի վրա են, նյութատեխնիկական միջոցները խիստ մաշված և անբավարար են, շենքերը և շինությունները մեկ տասնամյակից ավելի չեն վերանորոգվել:

673. Վերը նշված հանգամանքների հետևանքով.

ա) Պետության՝ ստեղծագործական կյանքին չմիջամտելու սկզբունքը, ազատ շուկայական հարաբերությունների պայմաններում, մշակութային դաշտը իրական մշակութային արժեքների փոխարեն համալրեց «կեղծ» մշակույթով, որը հիմնականում ոչ միայն չի նպաստում սոցիալ-հոգեբանական իրավիճակի բարելավմանը, այլև հաճախ վտանգավոր է ազգային ինքնության պահպանության տեսանկյունից և քարոզում է հոգևոր արժեքներ, որոնք չեն նպաստում մեր երկրի՝ որպես անկախ և ազգային պետության կայացմանը՝ էլ ավելի խորացնելով հուսալքության և անելանելիության զգացումը սոցիալապես անապահով անձանց մոտ: Մշակութային շուկայի անկազմակերպությունը և անկատարությունը այն գործոններից են, որոնք ամբողջապես հնարավորություն չեն տալիս ներկայացնելու և հանրահռչակելու իրական ազգային մշակույթը: Այս իմաստով՝ կատարված ներդրումները հաճախ միտված են ներկայացնելու «էժանագին» արվեստ, որը կարող է այդ պահին ենթադրել որոշակի շահույթ, բայց մնայուն արժեքներ այդպես էլ չստեղծել: Սակայն «էժանագին» արվեստն էլ, իր հերթին, ստեղծում է մշակույթի կեղծ ընկալում և ըստ այդմ էլ ձևավորում նոր, սակայն ոչ գրագետ լսարան: Արվեստագետների կողմից իրական մշակութային արժեքների ստեղծումը պահանջում է լուրջ ներդրումներ, որոնք, սակայն, այսօր դեռ պահանջված չեն: Նման ներդրումներ կարող են արվել միայն պետության կողմից մշակված քաղաքականության շրջանակներում: Իրական մշակութային շուկայի ձևավորումը պետական մշակութային քաղաքականության գերակայություններից մեկն է, որը կարող է վճռական դեր խաղալ նաև աղքատության կրճատման ու հաղթահարման գործում:

բ) Վերջին ժամանակներս մշակութային կյանքն առավել կենտրոնացավ մայրաքաղաքում, որտեղ առավել պահպանվել էին մշակութային գործունեություն իրականացնելու հնարավորությունները, և որի հետևանքով մարզերից մասնագետների ներհոսք գրանցվեց դեպի մայրաքաղաք՝ առավել զգալի դարձնելով վերջիններիս պակասը մարզերում: Էականորեն նվազեցին նաև մշակութային փոխանակումները մայրաքաղաքի և մարզերի միջև:

գ) Մասնագիտական վերապատրաստման և վերաորակավորման համակարգի բացակայությունը շատ մասնագետների հնարավորություն չտվեց ինտեգրվելու նոր մշակութային փոխհարաբերություններին: Մյուս կողմից էլ՝ առկա և նոր մասնագիտությունների գծով ներկայիս պահանջարկը չի համալրվում համապատասխան կադրերի պակասի պատճառով:

դ) Աղքատության գնահատման չափանիշներում էական դեր ունեն ոչ միայն տնտեսական, քաղաքական, հասարակական, սոցիալական գործոնները, այլև մշակութայինը (մինչ այժմ ոչ պատշաճ է նկատի առնվել): Այն շատ դեպքերում ավելի վճռական դեր ունի աղքատության հաղթահարման գործում և հանդիսանում է այն հիմքը, որի վրա կարող են կառուցվել աղքատության հաղթահարմանը նպաստող գործողությունները:

674. Աղքատության հաղթահարման մշակութային հայեցակետում կարևորագույն ուղղություններից են համարվում մշակութային ժառանգության (այդ թվում՝ նյութական և ոչ նյութական) պահպանության և օգտագործման խնդիրները: Մեր երկրում առանձնահատուկ ամրագրված է այն համոզմունքը, որ Հայաստանը, համարվելով հին քաղաքակրթական երկիր, իր ուրույն մշակույթով մեծ ներդրում ունի համաշխարհային քաղաքակրթական զարգացումներում: Հայաստանի մշակութային ժառանգությունը համարվում է երկրի քաղաքակրթական իմիջի անկապտելի մասը: Մի կողմից, նորանկախ պետության առաջնային խնդիրներից էր պահպանել և օգտագործել մշակութային ժառանգությունը, ինչն էլ, իր հերթին, կնպաստի ազգային հպարտության ամրապնդմանը, ազգային-ավանդական կենսակերպի, սովորույթների վերականգնմանը: Ազգային հավատալիքների, սովորույթների, ընտանեկան նիստուկացի, բարոյական նորմերի, հասարակական վարքուբարքի, ազգային տոների վերականգնումը կարող է նպաստել հասարակական բարոյահոգեբանական մթնոլորտի առողջացմանը: Դա անուղղակի կերպով կարող է վերափոխել աղքատության նկատմամբ վերաբերմունքը հասարակական կյանքում, ստեղծել այն կրճատելու իրական հիմքեր: Մյուս կողմից, մշակութային ժառանգության օգտագործումը այլ ոլորտներում (օրինակ՝ զբոսաշրջության) կարող է ստեղծել աշխատատեղեր, նպաստել ստեղծագործական աշխատողների եկամուտների աճին: Նման ուղղություններից նախատեսվում է վերականգնել կամ զարգացնել ժողովրդական արհեստագործությունը, վերականգնված պատմամշակութային հուշարձանների ընդգրկումը զբոսաշրջային երթուղիներում, պատմամշակութային հուշարձանների համալիրներին կից ազգագրական կամ արհեստագործական կենտրոնների հիմնումը, ժողովրդական տոների և տոնակատարությունների վերականգնումը և այլն: Աղքատության իրական կրճատման գործում կարևորագույն ձեռնարկում կարող է հանդիսանալ վերոնշյալ գործընթացներում տեղական բնակչության ներգրավումը:

675. Աղքատության հաղթահարման մշակութային հայեցակետում ամրագրված դրույթների իրականացման գործում նախատեսվում է հասարակական կազմակերպությունների, զանգվածային լրատվամիջոցների, այլ ոլորտների գործուն մասնակցությունը:

676. Խնայողության, նախաձեռնության ու գործարարության, հանդուրժողականության ազգային արժեքներին ուղղված քարոզչությունը դափնարաբանության արմատավորմանը, որ այդ արժեքները եղել ու մնալու են ցանկացած արդար ու հարկության կառուցման հիմնաքարերը: Նպատակը լու եղանակներից են՝ համապատասխանող ղի- և հե հաղորդումները, յուններ ման կազմակերպումը, ինչպես մասպա ղուններ մանն աջակցությունը:

677. ՀՀ Կառավարության վարած մշակութային քաղաքականությունը միտված է ստեղծագործական աշխատողների սոցիալական վիճակի բարելավմանը, մշակութային ծառայությունների և մշակութային կրթության մատչելիության ապահովմանը, ընդհանուր մշակութային միջավայրի ձևավորմանը: Վերոնշյալ խնդիրները որոշակիորեն ներառված են «ՀՀ մարզերում մշակութային կյանքի զարգացման ծրագրի» նախագծում, «Ոչ նյութական մշակութային ժառանգության պահպանության, դրա կենսունակության պաշտպանության հայեցակարգի» միջոցառումների ցանկում, ինչպես նաև միջնաժամկետ և տարեկան ծախսային ծրագրերում:

12.3.2. Հիմնական խնդիրները

678. Աղքատության հաղթահարման ռազմավարության մշակութային հայեցակետում հիմնական խնդիրներն են.

- ա) Մշակույթի ոլորտի ստեղծագործական աշխատողների և արվեստագետների սոցիալական վիճակի բարելավումը.
- բ) Մշակութային կյանքին մասնակցությունը, մշակութային ծառայություններից օգտվելու մատչելիության ապահովումը և ընդհանուր մշակութային միջավայրի ձևավորումը.
- գ) Գեղարվեստական կրթության մատչելիության ապահովումը.
- դ) Հասարակության սոցիալ-հոգեբանական մթնոլորտի առողջացումը, պետության մշակութային ազգային անվտանգության ապահովումը.
- ե) ՀՀ մարզերում մշակութային կյանքի աշխուժացումը, մարզերում ստեղծագործող արվեստագետների ներգրավումը ընդհանուր մշակութային դաշտում:

12.3.3. Աղքատության հաղթահարման մշակութային հայեցակետի հիմնական ուղղությունները

12.3.3.1 Մշակութային ժառանգության պահպանություն

679. **Պատմամշակութային անշարժ հուշարձանների ուսումնասիրություն, պահպանություն, ամրակայում, նորոգում, բարեկարգում և օգտագործում:** Պատմամշակութային անշարժ հուշարձանների ուսումնասիրությունը, պահպանումը, ամրակայումը, նորոգումը, բարեկարգումը և օգտագործումը /հատկապես սահմանամերձ շրջաններում/, ինչպես նաև մարզերի հուշարձանների պահպանման և օգտագործման հավասարակշիռ քաղաքականության իրականացումը կնպաստեն ոչ միայն պատմամշակութային ժառանգության պահպանությանը և փոխանցմանը սերունդներին, այլև զբոսաշրջության զարգացմանը, տեղերում արհեստագործական կենտրոնների ստեղծմանը: Կապահովվեն տեղի բնակչության համար նպաստավոր պայմաններ՝ աշխատատեղերի ստեղծման ուղղությամբ: Նոր աշխատատեղերի ստեղծմանը կնպաստի նաև հուշարձանների պեղումներին տեղի բնակչության մասնակցությունը (այն աշխատանքներին, որոնք չեն պահանջում հատուկ մասնագիտական ունակություններ): Պատմամշակութային հուշարձանների ընդգրկումը զբոսաշրջության երթուղիներում, տարաբնույթ միջոցառումների կազմակերպումը և արհեստագործական կենտրոնների հիմնումը համարվում են այս ուղղության մեջ հիմնական խնդիրները:

680. Վերը առաջադրված հարցերի ապահովման համար նախատեսվում է ՀՀ հուշարձանների պետական ցուցակների ճշգրտում՝ դրանցում չընդգրկված հուշարձանների հայտնաբերում և ուսումնասիրություն (ՀՀ հուշարձանների պետական ցուցակում կընդգրկվեն տարեկան 5-ից 10 նորահայտ և այլ հուշարձաններ, ինչպես նաև 1 պահպանական միավոր): Նախատեսվում են նաև հուշարձանների և հնագիտական վայրերի տարածքների հնագիտական ուսումնասիրություններ (կիրականացվեն տարեկան 20-ից 30 հուշարձանների և հնագիտական վայրերի պեղումներ), հուշարձանների և հնագիտական վայրերի պահպանվածության աստիճանի, տեխնիկական վիճակի, օգտագործման պիտանելիության ու նպատակահարմարության, պահպանական գոտիների առկայության ու դրանց ճշտության ուսումնասիրություններ (մոնիթորինգ):

681. 2008-2013 թթ. ընթացքում կիրականացվի 1000-ից 1500 հուշարձանների և հնագիտական վայրերի մոնիթորինգ, որի արդյունքում կձևավորվեն առաջարկություններ հուշարձանների օգտագործման ձևի և կարգի վերաբերյալ, կկազմվի հուշարձանների վերականգնման

(ամրակայման, բարեկարգման) առաջնահերթության և ծավալների ծրագիր, կկազմվեն 400 - 600 հուշարձանների պահպանական գոտիների նոր նախագծեր, կրամշակվեն 200-ից 400 հուշարձանների՝ գոյություն ունեցող պահպանական գոտիների նախագծեր: Կիրականացվեն հուշարձանների վերականգնում (ամրակայում, բարեկարգում), կմշակվեն նախագծեր և կվերականգնվեն տարեկան 10-ից 15 հուշարձաններ: Տարեկան 15-ից 20 հուշարձաններ և հնագիտական վայրեր կընդգրկվեն զբոսաշրջության երթուղիներում: Կներդրվի պատմամշակութային հուշարձանների կադաստրի վարման կարգ:

682. **Մշակութային արժեքների պահպանության ուղղությամբ համալիր ծրագրի մշակում և իրականացում:** Մշակութային արժեքների պահպանության համալիր ծրագրի իրականացումը հնարավորություն կտա ոչ միայն պահպանելու մշակութային հարուստ ժառանգությունը, այլև հանրահռչակելով այն՝ մատչելի դարձնել հասարակության համար: Մշակութային արժեքների պահպանության համալիր ծրագիրը կապահովի հայկական մշակութային արժեքներին հաղորդակցվելու, մշակույթի ոլորտում մշակութային ծառայություններից ու բարիքներից օգտվելու մատչելիությունը, մշակույթի դերն ու նշանակությունը գիտակցող քաղաքացիական հասարակության ձևավորումը, ազգային մշակութային արժեքների պաշտպանությունը:

683. Վերոնշյալ խնդիրների լուծման համար նախատեսվում են մի շարք գործողություններ, որոնց հիմնական նպատակն է պահպանել և հետագայում օգտագործել թանգարանային, գրադարանային և արխիվային հավաքածուները: Մասնավորապես նախատեսվում է «Հայաստանի թանգարաններ և գրադարաններ» համալիր ծրագրի իրականացում, որի շրջանակում կիրականացվեն մշակութային արժեքների հավաքածուների ու արխիվային ֆոնդերի պահպանության պայմաններ ապահովող համակարգերի նախագծում, ձեռքբերում և տեղադրում, ՀՀ թանգարանային և գրադարանային հավաքածուների պահպանության պետական դիտանցման համակարգի ներդրում:

684. Մշակութային արժեքների պահպանության ուղղություններից է նաև «Ոչ նյութական մշակութային ժառանգության պահպանությունը»: Այդ իմաստով՝ անհրաժեշտ քայլերից առաջնային են համարվում՝

ա) Հայաստանի Հանրապետությունում հնարավորինս լայն զանգվածների շրջանում ավանդական ոչ նյութական մշակութային արժեքների հանդեպ հետաքրքրություն ձևավորելը և մշակութային տարբեր գործընթացներում հասարակությանը ներգրավելը:

բ) ոչ նյութական ժառանգության (բանահյուսական և ազգագրական ժառանգություն, ավանդական արհեստներ) պահպանության բնագավառում նախատեսված ծրագրերի իրականացումը:

685. Ոչ նյութական ժառանգության պահպանումը և զարգացումը իր նպաստը կրերի ոչ միայն ավանդական մշակույթի ներկայացմանը հանրությանը և կապահովի նրա փոխանցումը սերունդներին, այլև հնարավորություն կընձեռի նրա տարրերի ներդրմանը ժամանակակից արվեստում՝ նորովի լուսաբանելով ազգային ավանդական արժեքները: Ազգային ավանդական տոների, ծեսերի և ծիսակատարությունների, ազգային խաղերի կազմակերպմանը աջակցությունը նույնպես կնպաստի հայ ժողովրդի հոգևոր-մշակութային ինքնությանն ու բարոյական արժեքներին սպառնացող երևույթների կանխարգելմանը: Վերոնշյալ խնդիրների լուծման նպատակով կիրականացվի «Ոչ նյութական մշակութային արժեքների պահպանության ծրագիրը», այդ թվում՝

§ Ժողովրդական արվեստի և արհեստի մնուշների ստեղծման աջակցություն.

§ Հանրապետության սահմանամերձ մարզերում ժողովրդական արհեստների և տնայնագործական փոքր արհեստանոցների հիմնում, ինչպես նաև ժողովրդական

արհեստագործության հմտություններին վերաբերող ուսումնական, խորհրդատվական ձեռնարկների կազմում և հրատարակում.

- § ՀՀ-ում և արտերկրում առկա ոչ նյութական մշակութային ժառանգության ցուցակների ստեղծում ու այդ տեղեկատվության հրապարակում.
- § Ժողովրդական արհեստագործներին պետական աջակցության տրամադրում.
- § Ազգագրական երգի ու պարի վարպետության դասընթացների կազմակերպում.
- § Ազգագրական թատրոնների հիմնադրում.
- § Ոչ նյութական մշակութային ժառանգության վերաբերյալ ծեսերի և տոնակատարությունների կազմակերպում և ֆիլմերի ստեղծում:

686. Նախատեսվում են նաև ոչ նյութական մշակութային ժառանգության առարկաները հավաքող-ուսումնասիրող, հրատարակող և հանրահռչակող կազմակերպություններին (արշավախմբերին) պետական աջակցություն ցուցաբերելու ծրագրի մշակում և իրագործում, ինչպես նաև անտիպ նյութերի, գիտական ուսումնասիրությունների, ժողովածուների, դասագրքերի նախապատրաստում և տպագրում, արտերկրի հայկական ոչ նյութական մշակութային ժառանգության հավաքման ուսումնասիրման և պահպանման ծրագրի մշակում, ոչ նյութական մշակութային ժառանգության շտեմարանի ստեղծում:

687. Մշակութային ժառանգության հանրահռչակում և հասարակայնության համար մատչելիություն ապահովում: Մշակութային ժառանգության հանրահռչակման և հասարակայնության համար մատչելիություն ապահովման ուղղությունը համարվում է աղքատության հաղթահարման ռազմավարության մշակութային հայեցակետի կարևորագույն ուղղություններից մեկը: Հասարակության համար մշակութային ժառայություններից օգտվելու մատչելիության ապահովումը նախատեսում է մի շարք գործողություններ, որի արդյունքում ակնկալվում է ՀՀ տարածքում մշակութային կազմակերպությունների արդյունավետ և հավասարաչափ տեղաբաշխում, սոցիալապես անապահով ընտանիքների համար մատչելիության ապահովում:

688. Մշակութային կազմակերպությունների արդյունավետ տեղաբաշխման անհրաժեշտ չափորոշիչների (այդ թվում՝ բնակչության և կազմակերպությունների հարաբերակցության) սահմանումը, տեղաբաշխման ծրագրի կազմումը և իրականացումը նախատեսում են հետևյալ գործողությունները՝

- § Մշակութային կազմակերպությունների արդյունավետ տեղաբաշխման անհրաժեշտ չափորոշիչների (այդ թվում՝ բնակչության և կազմակերպությունների հարաբերակցության) սահմանում:
- § Մշակութային կազմակերպությունների արդյունավետ տեղաբաշխման սխեմաների ստեղծում, քարտեզագրում:
- § Վճարովի մշակութային ծառայություններից օգտվելու զեղչերի համակարգի մշակում և նոր սակագների ներդրում:
- § Տեղաբաշխման ծրագրի իրականացում:
- § Մշակութային կազմակերպությունների արդյունավետ տեղաբաշխման դիտանցումների կազմակերպում:

689. Մշակութային կազմակերպությունների հավասարաչափ տեղաբաշխումը ենթադրում է ոչ միայն արդյունավետ տեղաբաշխում, այլև գործունեության և մատուցվող ծառայությունների շրջանակի, ինչպես նաև անհրաժեշտ մասնագետների թվի սահմանում: Մշակութային կազմակերպությունների թվի և մարզերի բնակչության թվի հարաբերակցությունը խիստ անհամաչափ է: Կարևոր խնդիր է դարձել մշակութային կազմակերպությունների

անհրաժեշտ քանակի սահմանումը, որը հնարավորություն կտա ապահովելու մշակութային կազմակերպությունների ծառայություններից օգտվելու մատչելիությունը: Այս առումով իրավիճակը ավելի բարվոք է Արագածոտնի, Շիրակի, Վայոց ձորի, Սյունիքի և Տավուշի մարզերում, մինչդեռ մշակութային կազմակերպությունների պակասը զգացվում է Լոռու, Կոտայքի, Արարատի և Արմավիրի մարզերում:

690. Մարզային մշակութային կազմակերպությունների՝ մշակույթի տների վերականգնումը պետք է լինի առաջնային, քանի որ գյուղական համայնքներում նրանք ունեն բազմաբնույթ գործառույթներ. այնտեղ է տեղակայված գրադարանը, ժամանցի կենտրոնը, գործում են ազգագրական խմբերը, ժողովրդական վարպետները և, ընդհանրապես, դրանք մշակութային և հասարակական միջոցառումների կազմակերպման հիմնական վայր են: Առաջնային վերականգնման կարիք ունեն սահմանամերձ գյուղերի մշակույթի տները, քանի որ վերջիններս կնպաստեն մի շարք խնդիրների լուծմանը՝ նոր աշխատատեղերի ստեղծում, բնակչության արտահոսքի նվազում, երիտասարդության շրջանում ազգային-ավանդական մշակութային արժեքների քարոզչություն և այլն: Վերոհիշյալը մեծ կարևորություն ունի նաև ազգային անվտանգության խնդիրների լուծման տեսանկյունից:

691. Մշակութային ժառանգության հանրահռչակման նպատակով կմշակվի մշակութային ժառանգության հանրահռչակման ծրագիրը, որի շրջանակներում կիրականացվեն՝

- § Թանգարանային, գրադարանային և արխիվային նյութերի՝ տպագիր և էլեկտրոնային կրիչներով հրատարակումների հասանելիության ապահովում,
- § Թանգարանների ճանապարհային քարտեզի և ուղեցույցների հրատարակմամբ՝ բնակչության և զբոսաշրջիկների համար մշակութային ժառանգության մատչելիության ապահովում:

692. Բացի այդ, տարեկան կստեղծվեն հուշարձանների մասին 3-ից 5 վավերագրական կինոնկարներ ու հեռուստահաղորդումներ, կիրատարակվեն հուշարձանների մասին 2-ից 5 գիրք ու տեղեկատու:

693. Մշակութային ժառանգության մատչելիության նպատակով նախատեսվում է տեղեկատվական-հաղորդակցական նոր տեխնոլոգիաների և էլեկտրոնային կառավարման համակարգերի ներդրում մշակույթի բնագավառում, այդ թվում՝

- § Թանգարանների, գրադարանների և արխիվների ապահովում ինտերնետ կապով, դրանց էլեկտրոնային կայքերի պորտալի ստեղծում.
- § Գրադարանային և արխիվային հավաքածուների մուլտիմեդիա ծրագրերի ստեղծում .
- § Վիրտուալ թանգարանների և աուդիոգիդերի ստեղծում.
- § Հայաստանի գրադարանային, թանգարանային և արխիվային միասնական տեղեկատվական բանկի ստեղծման նախագծի մշակում.
- § Հայաստանի գրադարանային, թանգարանային և արխիվային միասնական տեղեկատվական բանկի ստեղծում.
- § Էլեկտրոնային կառավարման համակարգի ծրագրի մշակում.
- § Մշակութային կազմակերպությունների միջև էլեկտրոնային ներքին ցանցի ստեղծում.
- § Մշակութային կազմակերպությունների միջև կապուղու կենտրոնական հանգույցի ստեղծում.

§ Մշակութային կազմակերպությունների միջև կապուղիների փորձարկում և շահագործում:

§ ՀՀ սահմանամերձ, բարձրլեռնային և հեռավոր բնակավայրերի բնակչությանը տեղեկատվության հասանելիության ապահովում:

12.3.3.2 Ժամանակակից արվեստի և մշակութային ենթակառուցվածքների զարգացում և մշակութային գործընթացների խթանում

694. Ժամանակակից արվեստի և մշակութային ենթակառուցվածքների զարգացումը և մշակութային գործընթացների խթանումը նախատեսվում է իրականացնել դեբյուտային ծրագրերի աջակցմամբ, դրամաշնորհային ծրագրերի իրականացմամբ և արվեստի ճյուղերի զարգացման համար անհրաժեշտ պայմանների ապահովմամբ՝ ստեղծագործական գործընթացների խթանում, ազգային ոչ նյութական մշակութային արժեքների ներդրում ժամանակակից արվեստում, ժամանակակից մրցունակ արվեստի առկայության ապահովում:

695. Մշակութային և ստեղծագործական գործունեության ապահովման նպատակով նախատեսվում է մշակութային կազմակերպությունների կողմից առաջարկվող ծրագրերի պետական աջակցություն՝ մրցութային հիմունքով, ինչպես նաև մշակույթի ոլորտում սպառողներին պետական աջակցության համակարգի ներդրում: Պետական աջակցության համակարգի ներդրումը ենթադրում է առավել մատչելի դարձնել արվեստի ստեղծագործությունները հասարակության համար: Նոր սակագնային քաղաքականությունը և սոցիալապես անապահով խավերի համար զեղչերի սահմանումը նույնպես ուղղված է լինելու վերոնշյալ նպատակին:

696. Մշակութային գործընթացների խթանման առումով կարևորվում է մշակութային կազմակերպությունների կողմից առաջարկվող ծրագրերի՝ մրցութային հիմունքով պետական աջակցության տրամադրումը: Նույն նպատակին է ուղղված տաղանդավոր երիտասարդ ստեղծագործողների բացահայտումը «Դեբյուտ» դրամաշնորհային շարունակական ծրագրի իրականացման միջոցով:

697. Վերոնշյալ խնդիրների լուծման նպատակով նախատեսվում է «Թատերահամերգային կազմակերպություններին մրցութային հիմունքներով ստեղծագործական գործունեությանը աջակցություն, ստեղծագործական պատվերների իրականացում» ծրագիրը, որի շրջանակում կիրականացվի մշակութային կազմակերպությունների կողմից առաջարկվող ծրագրերի՝ մրցութային հիմունքով պետական աջակցության տրամադրում, պետական աջակցություն ստացող կազմակերպությունների համար առաջնահերթության սահմանում, մշակութային կազմակերպությունների ֆինանսավորման մեխանիզմների բարելավում:

698. Մշակույթի գործիչների սոցիալական վիճակի բարելավման և ստեղծագործական գործունեության համար բարենպաստ պայմանների ապահովման նպատակով կշարունակվի երաժշտարվեստի և թատերարվեստի աջակցումն ու խթանումը՝ ստեղծագործությունների գնման և սոցիալ-ստեղծագործական պատվերների գործընթացը (սկսվել է 2001թ.): Հիմնականում ենթադրվում է երկու նպատակ, առաջինը՝ համարել թատերահամերգային կազմակերպությունների խաղացանկը ժամանակակից արվեստագետների ստեղծագործություններով, երկրորդ՝ բարելավել աշխատողների սոցիալական վիճակը:

699. Ժամանակակից արվեստի ենթակառուցվածքների զարգացման համար նախատեսվում է մշակութային կազմակերպությունների շենքերի և շինությունների վերանորոգում և նյութատեխնիկական բազայի ապահովում, այդ թվում՝

§ Մշակութային կազմակերպությունների շենքերի և շինությունների վերանորոգում և նյութատեխնիկական բազայի ապահովման ծրագրի մշակում:

- § Մշակութային կազմակերպությունների գույքի, շենքերի ու շինությունների տարածքների կարիքների գնահատում:
- § Մշակութային կազմակերպությունների հաշվառում, դասակարգում՝ ըստ փոքր, միջին և խոշոր համայնքների:
- § Մշակութային կազմակերպությունները ժամանակակից սարքավորումներով հագեցնելու համալիր ծրագրի իրականացում:
- § Ժամանակակից արվեստի զարգացման նպատակով կշարունակվեն իրականացվել միջմարզային մշակութային փոխադարձ ճանաչողության ապահովման ծրագրերը, որի շրջանակում կկազմակերպվեն Երևանում և ՀՀ մարզերում երևանյան և մարզային թատերահամերգային կազմակերպությունների հյուրախաղերը, ինչպես նաև ներքին կինովարձույթի «Կինոթատրոններ անիվների վրա» և «Շարժական գրադարան /բիրլիոբուս/» ծրագրերը:

700. Արվեստի զարգացման և մշակութային գործընթացների խթանման ուղղությամբ հիմնական խնդիրներ են համարվում՝

- § Արվեստի բնագավառում պետական դրամաշնորհային ծրագրերի իրականացումը (երաժշտարվեստի, թատերարվեստի, կերպարվեստի, պարարվեստի, կինոարվեստի, կրկեսային արվեստի, գրականության և այլն):
- § Հեղինակային իրավունքի պահպանության մեխանիզմների ապահովումը:
- § Մշակութային կազմակերպություններին ձեռնարկատիրական գործունեության ավելի լայն հնարավորությունների ընձեռումը:
- § Արվեստի ստեղծագործությունների հանրահռչակման ավելի լայն հնարավորությունների ապահովումը, այդ թվում՝ զանգվածային լրատվամիջոցներով և ինտերնետով:
- § Արվեստի աջակցման պետական հիմնադրամի ստեղծումը:

12.3.3.3 Մշակույթի ոլորտի կադրային քաղաքականություն և մշակութային կրթություն

701. ՀՀ Կառավարության կողմից 2004 թ. նոյեմբերի 18-ի N47 արձանագրային որոշմամբ հավանության է արժանացել «Գեղարվեստական կրթության հայեցակարգը»: Ի կատարումն հայեցակարգից բխող ծրագրի՝ սոցիալապես անապահով խավերի երեխաների համար 2007 թ. իրականացվելու է երաժշտական և արվեստի դպրոցներում ուսումնական նպաստների տրամադրում՝ ազգային նվազարանների համար: Նախատեսվում է, համապատասխան ուսումնասիրություններից հետո, անհրաժեշտության դեպքում, 2008 թ. ուսումնական նպաստ տրամադրել նաև այլ մասնագիտությունների գծով: Մշակութային կրթության մատչելիության ապահովման նպատակով ՀՀ մարզերում կհիմնադրվեն նաև հենակետային դպրոցներ՝ մեթոդական կենտրոններով, որոնց միջոցով մարզերում հնարավորություն կստեղծվի ստանալ նաև խորացված մասնագիտական գեղարվեստական կրթություն, կապահովվի բարձր որակ և տարածքային մատչելիություն: Վերոնշյալ հայեցակարգի առաջնային միջոցառումներից է գեղարվեստական կրթական ծրագրեր իրականացնող դպրոցների նյութատեխնիկական բազայի համալրումը, նոր գործիքների և նյութերի ձեռքբերումը, շենքերի և շինությունների վերանորոգումը:

702. Մշակույթի ոլորտի կադրային քաղաքականությունը ուղղված է լինելու վերապատրաստման և վերաորակավորման համալիր ծրագրի կազմմանը և իրականացմանը, ՀՀ մարզերում մշակույթի ոլորտի կադրերի հետ կապված ուսումնասիրությունների և վերլուծությունների իրականացմանը, մասնագետների արդյունավետ տեղաբաշխման սխեմաների

ստեղծմանը, մշակույթի ոլորտի կադրերի պատրաստման պետպատվերի մեխանիզմի կատարելագործմանը, այդ թվում՝

- § Մշակույթի ոլորտում պահանջվող նոր մասնագիտությունների ներդրման նախապատրաստական աշխատանքների իրականացում.
- § Երաժշտական դպրոցներում անվճար ուսուցման ճկուն համակարգի ներդրում.
- § Միջին և բարձրագույն մասնագիտական կրթական հաստատություններում պետական անվճար տեղերի քանակի սահմանում.
- § Գեղագիտական կրթության մատչելիության ապահովում սոցիալապես անապահովների համար.
- § Մշակույթի ոլորտում պահանջվող նոր մասնագիտությունների գծով կադրերի պատրաստում:

703. 2008-2021 թթ. շարունակաբար կիրականացվի մշակույթի ոլորտում կառավարիչների ինստիտուտի ձևավորում, որի շրջանակում նախատեսվում են՝ մշակույթի ոլորտի կառավարիչների վերապատրաստում, պատրաստում Հայաստանում և արտերկրում, մշակույթի բնագավառում կադրերի կառավարման խնդիրների կանոնակարգում, կադրերին ներկայացվող մասնագիտական և ծառայողական պահանջների սահմանում, մշակութային կազմակերպությունների՝ մշակույթի ոլորտի կառավարիչներով համալրում, ՀՀ հեռավոր, սահմանամերձ, բարձրլեռնային համայնքների մշակութային կենտրոնների ապահովվածություն մասնագիտական կադրերով:

12.3.3.4 Մշակութային կապերի զարգացումը արտերկրի հետ

704. Արտերկրի հետ մշակութային կապերի զարգացումը աղքատության հաղթահարման ռազմավարության մշակութային հայեցակետում դիտարկվում է այն տեսանկյունից, որ մշակութային փոխանակումները, ներգրավումը միջազգային մասնագիտական կառույցներում, մշակութային երկխոսությունների ընդլայնումը, հայ մշակույթի հանրահռչակումը և սփյուռքի ակտիվ մասնակցությունը իրենց դրական ազդեցությունը կարող են ունենալ ՀՀ-ում մշակույթը զարգացնելու և ժամանակակից արվեստի մրցունակ համակարգ ստեղծելու համար: Այն իր ազդեցությունը կունենա նաև մշակութային շատ հիմնախնդիրների լուծման ուղղությամբ:

705. Նախատեսված գործողությունների արդյունքում ակնկալվում է հայ բնակչության՝ հայրենիքի հետ կապերի խորացում և հայկական մշակութային ժառանգության պահպանության համակարգված ծրագրերի իրականացում, համահայկական տեղեկատվական շտեմարանի ձևավորում, դրանց պահպանող և պաշտպանող երաշխիքների ապահովում, հայ բնակչության ազգային ինքնության պահպանում և հայրենիքի հետ կապերի ամրապնդում, Մփյուռքի պահպանում, ներգրավումը միջազգային տեղեկատվական դաշտին, Հայաստանի և հայության մասին տեղեկատվության արհեստավարժ ներկայացումը միջազգային հանրությանը, հակազդումը ապատեղեկատվությանն ու հակաքարոզչությանը:

12.3.4. Մշակույթի ոլորտի ծրագրերի իրականացման ֆինանսական ապահովվածությունը 2008-2021թթ.

706. Աղքատության հաղթահարման մշակութային հայեցակետում միջոցառումների իրականացման ընդհանուր ժամկետները սահմանվում են 2008-2021 թթ.: Միջոցառումները կիրականացվեն 2 փուլով. 1-ին փուլ՝ 2008-2013 թթ. և 2-րդ փուլ՝ 2013-2021 թթ.: Առաջին փուլի ավարտից հետո, ըստ անհրաժեշտության, կիրականացվի ծրագրերի գնահատում և վերանայում, նոր գերակա ուղղությունների սահմանում:

Աղյուսակ 12.12. ՀՀ պետական բյուջեից մշակույթի ոլորտի հիմնական ուղղությունների ֆինանսավորումը 2006-2021թթ.

Ծախսերի գործառնական դասակարգման ենթախմբերի անվանումները	2006	2007	2008	2009	2010	2011	2012	2015	2018	2021
	<i>Փաստ.</i>	<i>Փաստ.</i>	<i>կանխատեսումներ</i>							
Ընդամենը, մլրդ դրամ այդ թվում՝	8.7	10.1	9.2	10.4	10.8	11.3	12.4	16.5	220	29.2
Գրադարաններ	0.76	0.88	0.92	1.16	1.1	1.0	1.1	1.5	2.0	2.6
Թանգարաններ և ցուցահանդեսներ	1.88	1.40	1.26	1.51	1.42	1.42	1.56	2.06	2.7	3.5
Մշակույթի տներ, ակումբներ, կենտրոններ	0.77	0.026	0.023	0.034	0.035	0.035	0.034	0.051	0.07	0.092
Այլ մշակութային հիմնարկներ	0.61	0.57	0.57	0.668	0.58	0.59	0.653	0.88	1.2	1.56
Արվեստ	2.99	4.28	3.27	3.74	4.49	5.011	5.53	7.0	9.34	13.0
Կինեմատոգրաֆիա	0.48	0.58	0.6	0.7	0.62	0.62	0.686	0.88	1.20	1.51
Հուշարձանների և մշակութային արժեքների վերականգնում և պահպանում	0.77	0.055	0.056	0.074	0.76	0.76	0.84	1.12	1.54	1.97
Քաղաքական կուսակցություններ, հասարակական կազմակերպություններ, արհմիություններ	0.18	0.2	0.18	0.17	0.179	0.179	0.20	0.31	0.40	0.53
Մշակութային օբյեկտների հիմնանորոգում և հուշարձանների վերականգնում		2.1	2.3	2.3	2.3	2.3	2.5	3.13	4.5	5.1

707. Մշակութային ոլորտի ֆինանսավորումը 2008-2021թթ. կիրականացվի հիմնականում համախմբված բյուջեի միջոցներով, ինչպես նաև մասնավոր ոլորտի և այլ նվիրատուների ֆինանսական աջակցությամբ: Աղյուսակ 12.12-ում ներկայացված են մշակույթի ոլորտի ֆինանսավորման կանխատեսումները 2008-2021թթ. ՀՀ պետական բյուջեից: Երկարաժամկետ ժամանակահատվածում հիմնական գերակայությունները կտրվեն գրադարաններին, թանգարաններին և ցուցահանդեսներին՝ որպես մշակութային արժեքների համալրման և բնակչության լայն խավերի համար նրանց մատչելիության բարձրացման հիմնական ուղղություն: Ընթացիկ և կապիտալ ծախսերի տեսակարար կշիռը մշակույթի ոլորտի ընդհանուր ծախսերում ծրագրվող ժամանակահատվածում կպահպանվի կայուն՝ 20/80 հարաբերակցությամբ:

12.4. Երիտասարդությանը միտված պետական քաղաքականություն

12.4.1. Իրավիճակի նկարագրություն

708. Անցումային շրջանի բոլոր հասարակությունների նման, Հայաստանում ևս, հասարակական առանձին խմբերի, շերտերի ձևավորման բուռն գործընթացը հիմնականում ինքնակարգավորվող բնույթ ունեւորում է: Խորհրդային Միության փլուզումից հետո ստեղծված երիտասարդական կազմակերպությունները երիտասարդության փոքր մասն էին ընդգրկում և միմյանց գոյության մասին տեղեկություն անգամ չունեին: Երիտասարդական քաղաքականության իրականացման մի շարք գործառույթներ կազմակերպություններն իրենք էին տարերայնորեն հանձն առել՝ առանց պետական համակարգված, նպատակաուղղված աջակցության: Երիտասարդության վրա բարդվել էին ոչ միայն հասարակությանը, այլև հենց իրեն՝ երիտասարդությանը հատուկ սոցիալ-տնտեսական ու քաղաքական հիմնախնդիրներ:


709. ՀՀ-ում երիտասարդական պետական քաղաքականությունը, որպես համակարգված քաղաքականություն, իրականացվում է 1995 թվականից: 1995 թ. Հայաստանի Հանրապետության մշակույթի և երիտասարդության հարցերի նախարարության աշխատակազմում ստեղծվել էր երիտասարդության հարցերի (հետագայում՝ երիտասարդական քաղաքականության) վարչություն, ինչը երիտասարդական հասարակական դաշտի կարևորագույն ձեռքբերումներից է: 1998 թ. Հայաստանի Հանրապետության մշակույթի և երիտասարդության հարցերի նախարարությունում կատարված կառուցվածքային փոփոխությունների արդյունքում, որպես առանձին ուղղություն վերաձևավորվեց «երիտասարդության հարցերի» ոլորտը՝ 2002 թ. վերանվանվելով «երիտասարդական քաղաքականության» ոլորտ: 2007 թ. Հայաստանի Հանրապետությունում երիտասարդական պետական քաղաքականության մշակման և իրականացման պետական լիազոր մարմինը Հայաստանի Հանրապետության սպորտի և երիտասարդության հարցերի նախարարությունն է: ՀՀ երիտասարդական պետական քաղաքականության իրականացման գործում, կառուցվածքային փոփոխություններից բացի, ստեղծվել են նաև պետական նոր կառույցներ:

710. ՀՀ-ում իրականացվող պետական երիտասարդական քաղաքականությունը առաջնորդվում է ՀՀ Կառավարության 1998թ-ի դեկտեմբերի 14-ի թիվ 798 որոշմամբ հաստատված «Պետական երիտասարդական քաղաքականության» հայեցակարգում ամրագրված դրույթներով: Փաստաթուղթը սահմանում է երիտասարդական պետական քաղաքականության սուբյեկտներին, քաղաքականության սկզբունքները, իրականացման նպատակներն ու հիմնական ուղղությունները:

711. Սահմանափակ բնական պաշարներ ունեցող Հայաստանում կարևոր նշանակություն ունի ներդրումը մարդկային ռեսուրսների կառավարման ոլորտում: Երիտասարդները (16-30 տարեկաններ), որոնց թվաքանակը, համաձայն ՀՀ ազգային վիճակագրական ծառայության կողմից հրապարակված 2005թ.-ի Հայաստանի վիճակագրական տարեգրքի տվյալների, կազմել է 821,600 մարդ (ընդհանուր բնակչության 25.6 տոկոսը)՝ հասարակության կարևոր ներուժ են:

712. ՀՀ պետական բյուջեից երիտասարդական պետական քաղաքականությանն ուղղված ծրագրերի համար նախատեսված է ֆինանսավորում, որն արտահայտվում է առանձին տողով և որի չափը տարեցտարի ավելանում է՝ ելնելով նախատեսվող նպատակային ծրագրերից: Ստորև ներկայացվում է 2003-2007 թթ. երիտասարդական ծրագրերի ֆինանսավորման շարժը:

Գծանկար 12.9. Երիտասարդական ծրագրերի ֆինանսավորումը ՀՀ պետական բյուջեից 2003-2007 թթ., մլն դրամ



713. Այդուհանդերձ, հաշվի առնելով, որ ՀՀ պետական բյուջեով կրթության, առողջապահության, սոցիալական ապահովության, ֆիզիկական կուլտուրայի և սպորտի, ինչպես նաև այլ ոլորտներին տրամադրվող ֆինանսական միջոցների մի մասն ուղղորդվում է երիտասարդներին՝ կարելի է արձանագրել, որ հանրապետության երիտասարդությանն ուղղված պետական ֆինանսավորման չափը շատ ավելին է:

714. Բացի ՀՀ պետական բյուջեից երիտասարդական պետական քաղաքականությանն ուղղված ծրագրերի համար արվող հատկացումներից՝ հանրապետությունում երիտասարդական քաղաքականությանն ուղղորդվող ֆինանսական միջոցների այլընտրանքային աղբյուրների շարքում (տեղական և միջազգային հիմնադրամներ, հասարակական կազմակերպություններ, միջազգային կազմակերպություններ, համայնքային բյուջեներ, բարեգործական կազմակերպություններ և այլն) իր ներդրման չափերով առանձնանում է Համահայկական երիտասարդական հիմնադրամը:


715. 2003-2007 թվականների ընթացքում կազմակերպված և իրականացված երիտասարդական ծրագրերը և միջոցառումները ուղղված են եղել պետական երիտասարդական քաղաքականության հայեցակարգում ամրագրված հետևյալ նպատակներին՝

§ նպաստել երիտասարդության շրջանում հոգևոր-մշակութային և գիտական մակարդակի բարձրացմանը, ազատ ժամանցի ակտիվ և նպատակային կազմակերպմանը, ուսումնասիրել առկա սոցիալ-տնտեսական հիմնախնդիրները և իրականացնել դրանց լուծմանն ուղղված միջոցառումներ, հայտնաբերել և խրախուսել տաղանդավոր երիտասարդներին, բնապահպանական, առողջապահական, սպորտի, երիտասարդության զբաղվածության, մասնագիտական կողմնորոշման, պատրաստման ու վերապատրաստման և այլ հիմնախնդիրների լուծմանն ուղղված միջոցառումներում երիտասարդության ակտիվ մասնակցությունը,

§ իրականացնել ծրագրեր՝ ուղղված երիտասարդության շրջանում հայրենասիրական դաստիարակության, քաղաքացիական գիտակցության բարձրացմանը, ակտիվացնել, զարգացնել համագործակցությունը միջազգային երիտասարդական կառույցների հետ, ստեղծել պայմաններ երիտասարդությանը անհրաժեշտ տեղեկատվությամբ ապահովելու համար, ստեղծել մարզային երիտասարդական կենտրոններ, իրականացնել գյուղական

ըրջանների երիտասարդության զարգացմանն ուղղված միջոցառումներ, ստեղծել պայմաններ նրանց լիակատար ինքնադրսևորման համար (տե՛ս Գծանկար 12.10):

Գծանկար 12.10. Երիտասարդական ծրագրերի և միջոցառումների իրականացման դինամիկան 2003-2007 թթ.



716. Երիտասարդական պետական քաղաքականության իրականացման գործընթացում կարևոր տեղ է զբաղեցնում 2005 թ. սկզբին ՀՀ մշակույթի և երիտասարդության հարցերի նախարարության կողմից մշակված և ՀՀ Կառավարության կողմից 2006 թ. հավանության արժանացած «Հայաստանի Հանրապետության երիտասարդական պետական քաղաքականության 2006-2007 թվականների ռազմավարություն» փաստաթուղթը:

717. Ռազմավարությամբ հաստատվել և 2006 թ. իրականացվել է իր բնույթով և ծավալներով աննախադեպ ծրագիր. ՀՀ մարզերում, որպես «Երիտասարդական միջոցառումների կազմակերպման կենտրոն» ՊՈԱԿ-ի ներկայացուցչություններ, ստեղծվել և գործարկվել են «Մարզային երիտասարդական կենտրոններ»՝ տեղական ինքնակառավարման մարմինների, մարզային հասարակական և միջազգային կազմակերպությունների հետ համագործակցությամբ, որոնց նպատակն է՝ երիտասարդական պետական քաղաքականությունը հասանելի դարձնել մարզերի երիտասարդությանը, ծրագրերում առավել արդյունավետ կերպով ներգրավել նրանց, բարձրացնել մարզերի երիտասարդության իրազեկության մակարդակը երիտասարդական քաղաքականության վերաբերյալ: Մարզային երիտասարդական կենտրոնները դեկավարվելու են վերոնշյալ կազմակերպությունների ներկայացուցիչներից կազմված կառավարման խորհուրդների կողմից: Երիտասարդական կենտրոնները գործելու են որպես ռեսուրս-կենտրոններ, ուր երիտասարդները հնարավորություն կունենան օգտվել իրենց անհրաժեշտ բազմաբնույթ ծառայություններից (հրավաբանական և առողջապահական խորհրդատվություն, համակարգչային ծառայություններ, գրադարան, ընթերցասրահ), կազմակերպվող դասընթացների միջոցով ստանալ գիտելիքներ, մասնագիտական կողմնորոշում, արդյունավետ կազմակերպել իրենց ազատ ժամանակը:

718. Մարզային երիտասարդական կենտրոնները ակտիվ կերպով կհամագործակցեն Զբաղվածության պետական ծառայության տարածքային կենտրոնների հետ՝ մարզերում երիտասարդության զբաղվածությանն առնչվող հիմնախնդիրների լուծման ուղղությամբ:

719. Աշխատաշուկայում երիտասարդների մրցունակության բարձրացման և շուկայի պահանջարկին համապատասխան մասնագիտության ընտրության նպատակով ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության համակարգում ստեղծվել է «Երիտասարդների մասնագիտական կողմնորոշման կենտրոն» ՊՈԱԿ-ը: Այն 14-30 (35) տարեկան անձանց մատուցում է մասնագիտական կողմնորոշման տեղեկատվության և խորհրդատվության ծառայություններ: Ծառայությունները ներառում են շահառուների ախտորոշում, մասնագիտությունների և զբաղմունքների, կրթության հնարավորությունների, աշխատանքի շուկայի մասին տեղեկատվություն և խորհրդատվություն, նաև աշխատանքային միջավայրում երիտասարդներին հեշտ ինտեգրվելուն ուղղված ուսուցման (թրեյնինգ) ծրագրերի իրականացում:

720. 1990-ականների վերջերից բավականին աշխուժացել է երիտասարդական հասարակական կազմակերպությունների դերը Հայաստանի Հանրապետությունում քաղաքացիական հասարակության և ժողովրդավարական պետության կայացման գործում: Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարությունում գրանցված է մոտ 3000 հասարակական կազմակերպություն: Նրանց մոտավորապես 50 տոկոսը կա՛մ երիտասարդական են, կա՛մ զբաղվում են երիտասարդության խնդիրներով:

721. Երիտասարդական պետական քաղաքականության այս կարևոր ուղղության առաջիկա տարիների ռազմավարությունը նախատեսում է հասարակական նախաձեռնությունների և ծրագրերի խրախուսում, հասարակական, քաղաքական զարգացումներին հանրապետական և տեղական մակարդակներում երիտասարդների մասնակցության առավել բարձր աստիճան: Վերոնշյալ ռազմավարությամբ առանձնահատուկ կարևորություն է տրվել Հայաստանի երիտասարդության շրջանում բազմակողմանի և համապարփակ ուսումնասիրությունների իրականացմանը: 2006թ. վերջին ավարտին հասցվեցին Հայաստանի երիտասարդության ազգային զեկույցի պատրաստման աշխատանքները, որոնց իրենց փորձագիտական և տեխնիկական օժանդակությունն են ցուցաբերել Եվրոխորհուրդը և ՄԱԿ-ի զարգացման ծրագրերը: Հայաստանի երիտասարդության ազգային զեկույցը համալիր մի ուսումնասիրություն է, որը ներկայացնում է ՀՀ երիտասարդության ներկա վիճակը և հիմք կհանդիսանա երիտասարդական պետական քաղաքականության ոլորտում պետական երկարաժամկետ ռազմավարության մշակման և իրականացման համար:

12.4.2. Աղքատության հաղթահարման ռազմավարական ծրագրում երիտասարդական պետական քաղաքականության հիմնադրույթները և սկզբունքները

722. ՀՀ Կառավարությունը երիտասարդության հիմնահարցերի լուծումը համարում է իր քաղաքականության գերակայություններից մեկը: Երիտասարդական պետական քաղաքականության ոլորտում ՀՀ Կառավարության գործողությունները բխում են երիտասարդների իրական կարիքներից, հիմնախնդիրներից և շահերից: Երիտասարդներին պետք է ընձեռել լիիրավ և աշխույժ դերակատարություն և կենսական խնդիրների վերաբերյալ ազատորեն կարծիքներ արտահայտելու հնարավորություն: Կառավարման մարմիններում նրանց ձայնը պետք է լսելի լինի ուղղակիորեն կամ ներկայացուցչական մարմնի միջոցով:

723. ՀՀ կառավարությունը առաջիկա տարիներին կիրականացնի երիտասարդական պետական քաղաքականությունը՝

ամրապնդելով սոցիալական գործընկերությունը քաղաքացիական և երիտասարդական հասարակական կազմակերպությունների հետ,

խորացնելով միջգերատեսչական համագործակցությունը երիտասարդության հարցերի գծով,

զարգացնելով եվրոպական և միջազգային համագործակցությունը երիտասարդական քաղաքականության և դրան առնչվող ոլորտներում,

ստեղծելով միջազգային չափանիշների վրա հիմնված օրենսդրական դաշտ,

երիտասարդական քաղաքականության ռազմավարությունը և գործողությունների ծրագիրը պահելով դինամիկ վիճակում և արձագանքելով փոփոխվող միջավայրին:

724. Երիտասարդական պետական քաղաքականության ռազմավարությունը և երիտասարդության քաղաքականության ոլորտում Կառավարության գործողությունները պետք է հիմնվեն հետևյալ սկզբունքների վրա՝

պետական երիտասարդական քաղաքականության մշակման ու իրականացման գործընթացում պետության, հասարակության, քաղաքացիների և երիտասարդների օրինական շահերի, իրավունքների և պարտականությունների համադրումը,

պետական երիտասարդական քաղաքականության շահառու հանդիսացող սուբյեկտների իրավահավասարությունը,

հրապարակայնությունը,

պետական աջակցության կազմակերպման մատչելիությունը,

պետական երիտասարդական քաղաքականության իրականացման նկատմամբ ծրագրային մոտեցումը,

պետական երիտասարդական քաղաքականության մշակման և իրականացման գործընթացներին, երիտասարդների, երիտասարդական կազմակերպությունների մասնակցության հավասար հնարավորությունների ապահովումը:

12.4.3. Գործողությունների գերակայությունները

725. Աղքատության հաղթահարման ռազմավարական ծրագրում երիտասարդական պետական քաղաքականության ոլորտում նախատեսվում են համակարգված գործողություններ, որոնք ուղղված են լինելու երիտասարդության խնդիրների լուծմանը՝ կրթության, առողջության, հոգևոր-մշակութային և ֆիզիկական զարգացման, իրավական և սոցիալական պաշտպանվածության, զբաղվածության ոլորտներում:

726. Աղքատության հաղթահարման ռազմավարական ծրագրում երիտասարդական պետական քաղաքականության նպատակներն են՝ խթանել երիտասարդների մասնակցությունը որոշումներ կայացնելու գործընթացին (համայնքային, մարզային, հանրապետական մակարդակներում), զարգացնել երիտասարդների մարդկային և ինստիտուցիոնալ կարողությունները, նպաստել Հայաստանում աղքատության հաղթահարմանը և երիտասարդության շրջանում գործազրկության մակարդակի նվազեցմանը, ունենալ հոգեպես և ֆիզիկապես առողջ, կրթված և հայրենասեր երիտասարդություն:

727. Երիտասարդական պետական քաղաքականության գերակայություններն են՝

§ հասարակական կյանքին երիտասարդների ակտիվ մասնակցության խթանումը,

§ երիտասարդների զբաղվածության հնարավորությունների ընդլայնումը,

§ առողջ ապրելակերպի խթանումը,

§ երիտասարդական պետական քաղաքականության իրականացման համակարգվածության մակարդակի բարձրացումը և երիտասարդության շրջանում հոգևոր-մշակութային, հայրենասիրական դաստիարակության խթանումը:

728. **Գերակայություն 1. Հասարակական կյանքին երիտասարդների ակտիվ մասնակցության խթանում:** Երիտասարդները բավարար չափով ներգրավված չեն որոշումների կայացման գործընթացներում: Սակայն դա չի նշանակում, թե նրանք հետաքրքրված չեն իրենց վերաբերող հարցերով: Դա նաև չի նշանակում, թե երիտասարդները պատրաստ չեն գտնելու խնդիրների լուծումները: Որոշումների ընդունման գործընթացում երիտասարդների անբավարար ներգրավվածությունը հանգեցնում է նրանց՝ թերի իրազեկվածությանը: Նրանք որոշակիորեն անմասն են մնում հասարակական-քաղաքական կյանքից, որոշումների ընդունման գործընթացից: Երիտասարդները պետք է եռանդուն մասնակցեն հասարակական-քաղաքական, տնտեսական, մշակութային կյանքին: Պետությունը և հասարակությունը պետք է ապահովեն անհրաժեշտ լծակներ, որպեսզի այդ մասնակցությունը լինի արդյունավետ: Իրենց իրավունքները իրացնելու և պարտականությունները կատարելու համար երիտասարդներին պետք է մատչելի լինեն բավարար եկամուտները, իրենց կյանքի վրա ազդող որոշումների կայացմանը մասնակցությունը, տեղեկատվությունը, աշխատանքի շուկան, բնակարանային անհրաժեշտ պայմանները, առողջապահությունը, կրթությունը, չաղտոտված շրջակա միջավայրը, տեղաշարժման ազատությունը և ազատ ժամանցի կազմակերպման դյուրինությունը:

Սպասվող արդյունքներ

§ Պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինները կապահովեն երիտասարդների մասնակցությունը քաղաքականության մշակման և իրականացման գործընթացին:

§ Երիտասարդներին մատչելի կլինեն ազատ ժամանցի կազմակերպման, տեղեկատվության, հմտությունների և կարողությունների ձեռքբերման ավելի մեծ հնարավորություններ:

729. **Գերակայություն 2. Երիտասարդների զբաղվածության հնարավորությունների ընդլայնում:** Հայաստանում երիտասարդության շրջանում գործազրկության մակարդակը բավականին բարձր է: Կրթական համակարգը երիտասարդներին չի նախապատրաստում աշխատաշուկայի անընդհատ փոփոխվող պահանջներին: Պետությունը պետք է շտկի այս բացը՝ ապահովելով մասնագիտական ուսուցում, որն իրապես կգարգացնի անհրաժեշտ հմտություններ և կարողություններ: Պետք է նպաստավոր միջավայր ստեղծել գործարարության և զբաղվածության համար՝ երիտասարդներին մղելով ձեռնարկատիրական նախաձեռնությունների: Պետք է խորացնել արդյունավետ համագործակցությունը կրթական և ուսուցում կազմակերպող այլ հաստատությունների, զբաղվածության կենտրոնների, մասնավոր հատվածի և այլոց միջև, որոնք իրավասու են որոշումներ կայացնել հանրապետական և տեղական մակարդակներով: Երիտասարդներին հնարավորությունների ընձեռումը պետք է լինի մեր գործողությունների սկզբունքը՝ զբաղվածության ոլորտում:

Սպասվող արդյունքներ

§ Երիտասարդական կենտրոններում ստեղծված կլինի տեղեկատվական բազա և կմատուցվեն խորհրդատվական ծառայություններ, կտրամադրվեն մասնագիտական կողմնորոշման հնարավորություններ:

§ Երիտասարդներին մատչելի կլինեն փոքր և միջին ձեռներեցությանը վերաբերող տեղեկատվությունը, ուսուցումը և վարկային միջոցները:

§ Գյուղական երիտասարդությունը ձեռք բերած կլինի գյուղատնտեսական ոլորտի արդյունավետությունը բարձրացնող նորարարական գաղափարների կիրառման հմտություններ և կարողություններ:

730. **Գերակայություն 3. Առողջ ապրելակերպի խթանում:** Հայաստանի Հանրապետությունում վերջին տասնամյակում ի հայտ եկան հասարակության ֆիզիկական և հոգևոր առողջությանն առնչվող մի շարք նոր ռիսկեր, որոնք բացասական ներգործություն են ունենում նաև երիտասարդների վրա: Երիտասարդների ավելի մեծ մասն է վաղ տարիքում սկսում ծխել, օգտագործել ոգելից խմիչքներ, թմրամիջոցներ և առողջության համար վնասակար այլ նյութեր: Դպրոցում տրվող թերի գիտելիքները պատճառ են դառնում երիտասարդների ֆիզիկական և հոգևոր արատների, առողջության համար վնասակար սովորույթների տարածման, սեռական կյանքին անպատրաստվածության, չպաշտպանված սեռական հարաբերությունների, սեռավարակների (մասնավորապես՝ ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի) տարածման, ինչպես նաև անցանկալի հղիությունների: Աղքատությունը երիտասարդների՝ վերոնշյալ ռիսկերին ենթարկվելու ավելի նպաստավոր պայմաններ է ստեղծումը: Ուստի հարկ է բարձրացնել առողջ ապրելակերպի վերաբերյալ երիտասարդների իրազեկվածության մակարդակը, նրանց ապահովել բավարար տեղեկատվությամբ և տրամադրել համապատասխան ծառայություններ:

Սպասվող արդյունքներ

§ Երիտասարդներին մատչելի կլինեն առողջապահական համակարգի շրջանակներում ստեղծված համապատասխան ծառայությունները:

§ Երիտասարդները իրազեկված կլինեն առողջ ապրելակերպի մասին և հնարավորություն կունենան օգտվելու իրենց համար ստեղծված վերարտադրողական առողջությունը խթանող ծառայություններից:

§ Խոցելի խմբերի պատանիներին ու երիտասարդներին մատչելի կլինի ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի և նրա կանխարգելմանը վերաբերող տեղեկատվությունը:

731. **Գերակայություն 4. Երիտասարդական պետական քաղաքականության իրականացման համակարգվածության մակարդակի բարձրացումը և երիտասարդության շրջանում հոգևոր-մշակութային, հայրենասիրական դաստիարակության խթանում:** Կիրականացվեն համակարգված միջոցառումներ, որոնք կծառայեն երիտասարդների շահերին և կներգրավեն նրանց հասարակական, տնտեսական, քաղաքական և մշակութային կյանքի ձևավորման գործում: Պետք է երիտասարդական աշխատողների և կամավորական երիտասարդ առաջնորդների համար կազմակերպել ուսուցողական որակյալ դասընթացներ: Երիտասարդության ստեղծագործական գործունեության համար առավել մատչելի պայմանների ստեղծումը հասարակության ստեղծագործական և մտավոր ներուժի պահպանման ու զարգացման հիմնական գործոնն է: Այս նպատակով անհրաժեշտ է ստեղծել տաղանդավոր և շնորհալի երիտասարդների գործունեությանն աջակցելու և խրախուսելու գործուն համակարգ: Պետությունը երիտասարդության հոգևոր և ֆիզիկական զարգացումն ու քաղաքացիական, հայրենասիրական դաստիարակությունը դիտում է որպես ազգային զարգացման կարևոր նախապայման և հասարակական մեծ արժեք: Պետությունը կարևորում է հանրապետական, մարզային, տեղային ծրագրերի մշակման և ընդունման գործընթացում երիտասարդության (այդ թվում՝ ազգային փոքրամասնությունների) հոգևոր և ֆիզիկական զարգացմանն ուղղված խնդիրների ներառումը: Այս ուղղությամբ պետությունը երիտասարդությանը կրթելու և դաստիարակելու, ազգային և համամարդկային արժեքներին հաղորդակից դարձնելու նպատակով պետք է աջակցություն ցուցաբերի հասարակական նախաձեռնություններին և ծրագրերին:

Սպասվող արդյունքներ

- § Պետական կառավարման մարմինները կունենան անհրաժեշտ միջոցներ և տեղեկատվություն՝ նպաստելու համար երիտասարդների կարիքների բավարարմանը և իրավունքների իրացմանը:
- § Կսերտանա պետական կառավարման մարմինների, մասնավոր կառույցների և հասարակական երիտասարդական կազմակերպությունների համագործակցությունը:
- § Կբարձրանա երիտասարդական պետական քաղաքականության համակարգվածության մակարդակը:
- § Երիտասարդության շրջանում կբարձրանա հոգևոր-մշակութային կրթվածության, ազգային գիտակցության, հայրենասիրական դաստիարակության մակարդակը:
- § Կամրապնդվեն կապերն ու համագործակցությունը Հայաստանի և Սփյուռքի երիտասարդության միջև, ինչը կնպաստի հայ մշակույթի զարգացմանը, ազգային արժեքների պահպանմանն ու տարածմանը, հայրենասիրական ոգու խթանմանը:

12.4.4. Երիտասարդական պետական քաղաքականության հիմնական ուղղությունները

732. Աղքատության հաղթահարման ռազմավարական ծրագրում երիտասարդական պետական քաղաքականության 2008-2021 թթ. ռազմավարության հիմնական ուղղություններն են՝

երիտասարդական պետական քաղաքականության իրականացման համակարգվածության մակարդակի բարձրացում և ոլորտի իրավական դաշտի ապահովում՝ ոլորտի գործունեությունը կարգավորող օրենքների և այլ իրավական ակտերի ստեղծման միջոցով,

երիտասարդական կազմակերպությունների հետ համագործակցության զարգացում և նրանց գործունեության պետական աջակցություն,

երիտասարդության հոգևոր-մշակութային և գիտական մակարդակի բարձրացում, ազատ ժամանցի ակտիվ և նպատակային կազմակերպում,

սոցիալ-տնտեսական հիմնախնդիրների ուսումնասիրում և դրանց լուծմանն ուղղված միջոցառումների իրականացում,

երիտասարդության շրջանում հայրենասիրական դաստիարակության, քաղաքացիական գիտակցության բարձրացմանը ուղղված ծրագրերի իրականացում,

մարզերում երիտասարդական պետական քաղաքականության զարգացում (մարզային երիտասարդական կենտրոնների գործունեության ապահովում և համայնքային երիտասարդական կենտրոնների ստեղծում, գյուղական և սահմանամերձ շրջանների երիտասարդության զարգացմանն ուղղված միջոցառումների իրականացում),

երիտասարդների լիակատար ինքնադրսևորման համար պայմանների ստեղծում, շնորհալի և տաղանդավոր երիտասարդներին պետական աջակցություն,

երիտասարդությանը անհրաժեշտ տեղեկատվությամբ ապահովում,

միջազգային և համահայկական երիտասարդական համագործակցության զարգացում:

733. Վերջիններիս կենսագործման համար պետական երիտասարդական քաղաքականության բնագավառում ՀՀ Կառավարության լիազոր մարմինը նախատեսում է մի շարք միջոցառումներ, որոնց միջոցով ակնկալում է ապահովել բնագավառի զարգացումը:

12.4.5. Իրագործում, մոնիթորինգ, գնահատում և ֆինանսավորում

734. Պետական երիտասարդական քաղաքականության բնագավառում ՀՀ Կառավարության լիազոր մարմինը պետք է ապահովի երիտասարդական պետական քաղաքականության ռազմավարության ամենօրյա իրագործումը՝ ունենալով գործողությունների երկու ծրագիր: Առաջինը պետք է ներառի 2008-2012 թվականները, երկրորդը՝ մինչև 2021թ. ընկած ժամանակահատվածը: Տարբեր նախարարություններ ու պետական կառավարման այլ մարմիններ, մասնավորապես՝ կրթության և գիտության, մշակույթի, սպորտի և երիտասարդության հարցերի, առողջապահության, աշխատանքի և սոցիալական հարցերի, արտաքին գործերի, պաշտպանության նախարարությունները, ինչպես նաև տարածքային կառավարման պետական և տեղական ինքնակառավարման մարմինները պետք է իրենց ավանդը ներդնեն երիտասարդական պետական քաղաքականության ռազմավարության իրականացմանը՝ տրամադրելով տեղեկատվություն, ինչպես նաև համակարգելով ու համապատասխանեցնելով իրենց քայլերը:

Համակարգումը և մոնիթորինգը պետք է ապահովվեն նախարարների տեղակալների մակարդակով՝ միջգերատեսչական և աշխատանքային կանոնավոր հանդիպումների միջոցով: Պարբերական խորհրդակցություններ կանցկացվեն ռազմավարության իրականացման միջոցառումների մասին, որոնց ընթացքում կմշակվեն երիտասարդների և քաղաքացիական հասարակության աշխատանքները համատեղելու ծրագրերը:

12.5. Բնապահպանություն

735. Հայաստանի Հանրապետության 2003թ. ընդունված Աղքատության հաղթահարման ռազմավարական ծրագրում շրջակա միջավայրի և բնական ռեսուրսների պահպանության և կառավարման խնդիրները, որպես աղքատության նվազեցման քաղաքականության իրականացման երաշխիքներ, կարևորվել էին հետևյալ ուղղություններով.

անտառային ռեսուրսների արդյունավետ կառավարում,

հողերի դեգրադացիայի կանխում, անապատացմանը նպաստող անտրոպոգեն գործոնների նվազեցում,

() մարգագետինների բարելավում և արդյունավետ օգտագործում,

ջրային ռեսուրսների արդյունավետ կառավարում, օգտագործում և Սևանա լճի էկոլոգիական հավասարակշռության վերականգնում,

կենցաղային աղբի հեռացման և արդյունաբերական վնասակար թափոնների կառավարման խնդիրներ:

736. Հանրապետության տնտեսական աճի կայուն միտումների պայմաններում շրջակա միջավայրի պահպանության քաղաքականության խնդիրները ներկա փուլում պետք է դիտարկվեն նաև հետագա զարգացման համար բնական պաշարների մատչելիության, հավասարակշռված օգտագործման և շրջակա միջավայրի աղտոտման կանխման երաշխիքների տեսակետից: Հանրապետության ինտեգրումը տարածաշրջանային և միջազգային համագործակցության համակարգերում նոր պահանջներ է առաջադրում շրջակա միջավայրի կառավարմանը, ինչպես՝ անդրսահմանային ներգործության վերահսկման հստակ մեխանիզմների ստեղծումը, վտանգավոր և թունավոր թափոնների, գեներտիկական մոդիֆիկացված օրգանիզմների տեղափոխումը: Շրջակա միջավայրի կառավարման արդի ժամանակաշրջանի խնդիրները պահանջում են ոլորտի կառավարման մեխանիզմների, ինստիտուցիոնալ կառույցների, միջճյուղային համագործակցության, բնապահպանական իրավիճակի գնահատման և ռիսկի գործոնների կանխարգելման գործուն մեխանիզմների մշակում՝ տարածաշրջանային և միջազգային համագործակցության ամրապնդման ճանապարհով: ՀՀ բնապահպանության ոլորտում քաղաքականությունը և օրենսդրությունը հիմնականում ձևավորվել կամ կատարելագործվել են վերջին 15 տարիների ընթացքում, միջազգային համաձայնագրերի պահանջների ու Եվրոպական տարածաշրջանային գործընթացների շրջանակներում, նպատակ ունենալով՝

§ կանխարգելել կամ սահմանափակել մարդու առողջության և շրջակա միջավայրի վրա վնասակար ներգործությունը,

§ վերացնել մթնոլորտի գերնորմատիվային աղտոտվածությունը,

§ մեղմացնել կլիմայի գլոբալ փոփոխության բացասական հետևանքները,

§ պահպանել կենսաբազմազանությունը,

§ ապահովել վերականգնվող բնական ռեսուրսների վերարտադրության անհրաժեշտ ծավալները և բնական հավասարակշռվածությունն ապահովող պայմանները,

§ ապահովել չվերականգնվող բնական ռեսուրսների բանական և արդյունավետ օգտագործումը:


737. Եվրոպական հարևանության քաղաքականության ազգային ծրագրի (2006թ.) բնապահպանական ոլորտի խնդիրները ներառում են բնապահպանական ազգային օրենսդրական դաշտի համապատասխանեցումը, մասնավորապես՝ օրենսդրության

իրականացումը ապահովող բնապահպանական նորմատիվների, կարգերի, տեխնիկական կանոնակարգերի, ստանդարտների ու մեթոդաբանությունների մշակումը և ինստիտուցիոնալ բարեփոխումների իրականացումը:

738. Վերջին հինգ տարիների ընթացքում, օրենսդրական դաշտի բարելավման առումով, բավականին մեծ աշխատանք է կատարվել նշված նպատակների իրականացման համար. ընդունվել են ռազմավարական նշանակություն ունեցող մի շարք իրավական ակտեր և ծրագրեր: Դրանցից կարելի է առանձնացնել առավել նշանակալիները՝ ՀՀ նոր անտառային օրենսգիրքը (2005թ.) և Հայաստանի անտառների ազգային ծրագիրը (2005թ.), «Ջրի ազգային քաղաքականության հիմնադրույթների մասին» ՀՀ օրենքը (2005թ.), «Թափոնների մասին» ՀՀ օրենքը (2004թ.), «Բնության հատուկ պահպանվող տարածքների մասին» ՀՀ օրենքը (2006թ.), «Բնապահպանական վերահսկողության մասին» ՀՀ օրենքը (2005թ.), «Օգոնային շերտը քայքայող նյութերի մասին» ՀՀ օրենքը (2006թ.), «Հայաստանի Հանրապետության ջրի ազգային ծրագրի մասին» ՀՀ օրենքը (2006թ.) և «Որսի և որսորդական տնտեսության վարման մասին» ՀՀ օրենքը (2007թ.): Սակայն ենթաօրենսդրական և նորմատիվային դաշտի արդյունավետ կիրարկման համար գործուն մեխանիզմներ չեն ստեղծվել, և այդ ոլորտում մասնագիտական կառույցների կարողությունների սահմանափակվածությունը լուրջ խոչընդոտ է հանդիսանում:

739. Բնօգտագործման հաշվառվող ծավալների ավելացման և բնապահպանական տեսչական աշխատանքների արդյունավետության բարձրացման շնորհիվ բնապահպանական և բնօգտագործման վճարների գծով շարունակաբար ապահովվում է պետական բյուջեի մուտքերի զգալի աճ (1998 թ. համեմատ աճել են ավելի քան 15 անգամ), այդ թվում՝ բնապահպանական վճարների գծով, 2006 թ. համեմատ, աճել են 2 անգամ կամ 2463.3 մլն դրամով, ինչն իր հերթին հնարավորություններ է ընձեռում աստիճանաբար զգալիորեն ավելացնելու բնապահպանական համապատասխան միջոցառումների իրականացման համար պետական բյուջեից ոլորտին հատկացվող ֆինանսական միջոցների ծավալները (տե՛ս Աղյուսակ 12.11):

Գծանկար 12.11. Բնապահպանական և բնօգտագործման վճարների դինամիկան 2002-2007 թթ., մլն դրամ



740. Ֆինանսական ռեսուրսների հավաքագրման և նպատակային ծախսման մեխանիզմների կատարելագործման առումով նույնպես կարելի է արձանագրել որոշակի

առաջընթաց. «ՀՀ բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքում կատարվել է լրացում (09.11.2006թ. ՀՕ-174-Ն, ուժի մեջ է մտնելու 2011 թ.), որով ամրագրվել է, որ «Բնապահպանական ծրագրերի գծով յուրաքանչյուր տարվա պետական բյուջեով նախատեսվող ծախսերը չեն կարող պակաս լինել, քան այդ տարվան նախորդող, երկրորդ բյուջետային տարվա բնապահպանական և բնօգտագործման վճարների գծով փաստացի մուտքերի հանրագումարը», բացի այդ, ստեղծվել է Անտառների վերականգնման և զարգացման հիմնադրամ (2004թ. ՀՀ Կառավարության թիվ 891 որոշում), 2005թ. սկսվել է ընդերքօգտագործման արտոնագրված պայմանագրերի հիման վրա շրջակա միջավայրի պահպանության դրամագլխում երաշխիքային գումարների կուտակումը:

741. Սակայն առաջընթացը բավարար չի կարող գնահատվել, հաշվի առնելով, որ շրջակա միջավայրի պահպանության միջոցառումների վրա կատարվող ծախսեր / ՀՆԱ ցուցանիշով (ՀՆԱ-ի 0.2-0.3 տոկոս) Հայաստանը (աղբյուրը՝ ՏՀԶԿ, 2005 թ. տվյալներ) Արևելյան Եվրոպայի, Կովկասի և Կենտրոնական Ասիայի երկրների մեջ զբաղեցնում է ամենավերջին տեղերից մեկը:

742. Շրջակա միջավայրի պահպանության համար հավաքագրված ֆինանսական ռեսուրսների նպատակային (հասցեական) ծախսման նպատակով երկիրը՝

§ բնապահպանության ոլորտի վրա կատարվող (առանց արտերկրից ստացվող օժանդակության) ծախսերի՝ ՀՆԱ-ի նկատմամբ տեսակարար կշռի ցուցանիշը պետք է աստիճանաբար (կամ փուլ առ փուլ) մոտեցնի Եվրոպական երկրների մակարդակին (ՀՆԱ-ի 2.0 տոկոս)՝ այդ ծախսերը նպատակաուղղելով ազգային բնապահպանական գերակայությունների իրագործմանը,

§ պետական բնապահպանական ծախսերի կառավարման (ՊԲԾԿ) միջազգային փորձի լավագույն օրինակների հիման վրա Հայաստանում պետք է իրականացնի ՊԲԾԿ համակարգի կատարելագործում:

743. Բնապահպանական ոլորտի զարգացման միջնաժամկետ ծրագրում հաշվի է առնվել հանրապետության տնտեսական ակտիվության տարածքային զարգացման ներկա անհամաչափությունը, երբ հանրապետության բնակչության 1/3-ից ավելին բնակվում է Երևան քաղաքում: Այդ առումով, բնապահպանական կառավարման առաջնահերթությունները տարբեր են եղել Երևան քաղաքի և հանրապետության այլ բնակավայրերի համար. այդ մոտեցումները արդիական են մաս ԿԶԾ-ի շրջանակներում:

744. Աղքատության հաղթահարման տեսանկյունից՝ երկրի զարգացման ներկա փուլի բնապահպանական խնդիրները կարելի է դասակարգել հետևյալ հիմնական ուղղություններով.

745. **Բնապահպանական քաղաքականության իրականացման գործիքների կատարելագործում:** Հաշվի առնելով հանրապետության ՀՆԱ-ի աճի միտումները՝ կարելի է կանխատեսել տնտեսական գործունեության հետևանքով շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցության ավելացում և բնօգտագործման ծավալների աճ: Տնտեսական աճին զուգընթաց, անհրաժեշտ է բնապահպանական տնտեսական գործիքների կիրառման միջոցով խթանել լավագույն՝ բնապահպանական տեսակետից անվտանգ և ռեսուրսախնայող տեխնոլոգիաների ներդրումը՝ հեռանկարում ապահովելով վնասակար արտանետումներ ունեցող հին տեխնոլոգիաների դուրսմղումը: Բնապահպանական կառավարման բնագավառում կոռուպցիոն ռիսկերի նվազեցման համար պարզեցնել, հստակեցնել և ներդնել է-կառավարում: Վարչարարության կատարելագործմանը զուգընթաց, զարգացնել բնապահպանական գործունեության խրախուսման մեխանիզմները՝ ներդնելով հանրային մասնավոր գործընկերության սկզբունքները՝ ձեռնարկությունների

բնապահպանական վարկանշման մեխանիզմներ, այդ թվում՝ միջազգային ISO ստանդարտների մշակույթը:

746. Տնտեսության զարգացման համար նպաստավոր պայմանների ստեղծման անհրաժեշտությունից ելնելով՝ ներկա բնօգտագործման և բնապահպանական վճարները սահմանվել են բավականին ցածր, չեն համապատասխանում ռեսուրսի/վնասի իրական տնտեսական արժեքին և այդ պատճառով բավարար չափով չեն ազդում տնտեսավարող սուբյեկտների բնապահպանական և բնօգտագործման վարքագծի վրա: Չարգացման ներկա փուլում կիրականացվեն լուրջ տնտեսագիտական վերլուծություններ՝ բնապահպանական վնասի հաշվարկման համակարգի կատարելագործման և փուլային իրականացման ծրագրի մշակման համար:

747. Կարևոր է ձեռնարկությունների բնապահպանական կառավարման պլանների մշակման և ինքնամոնիթորինգի/ինքնահսկման համակարգի ներդրումը: Արտադրանքի բնապահպանական ստանդարտներին համապատասխանությունը կարևորվում է նաև արտահանմանը կողմնորոշված տնտեսական մոդելի կիրառման պարագայում:

748. Արդյունաբերության բնագավառում հանրապետությունում առաջնահերթ գերակայություն համարվող լեռնամետալուրգիայի զարգացման համար կընդլայնվեն երկրաբանական հետախուզության ծավալները: Մինչդեռ ներկայումս շրջակա միջավայրի աղտոտման հետևանքով պատճառվող վնասի իրական չափերի հաշվարկման համար դեռևս բացակայում է մշակված մեթոդաբանություն՝ համապատասխան մասնագետների և կառույցների, ինչպես նաև համապատասխան ֆինանսական միջոցների բացակայության պատճառներով: Միաժամանակ, տնտեսագիտորեն հիմնավորված՝ բնօգտագործման վճարների համակարգը պետք է ապահովի նոր հանքավայրերի խնայողաբար շահագործումը: Մասնավորապես, մինչև 2008 թվականի ավարտը կվերանայվեն բնօգտագործման վճարները, դրանք համապատասխանեցնելով հանքանյութերի միջազգային գների փոփոխման միտումներին: Կմշակվի նաև ընդերքի օգտագործման հայեցակարգը: Հրատապ խնդիր է պոչամբարների և տարբեր պատճառներով լքված և չշահագործվող հանքավայրերի ռեկուլտիվացիայի ծրագրերի իրականացումը, որը անհրաժեշտ է ջրային ռեսուրսների և հողերի հետագա աղտոտումը կանխարգելելու և բնական էկոհամակարգերը վերականգնելու համար: Շրջակա միջավայրի բարելավման համար մասնավոր հատվածի, միջազգային օգնության, այդ թվում՝ նաև Կիոտոյի արձանագրության Մաքուր զարգացման մեխանիզմների ներգրավման համար կստեղծվեն նպաստավոր պայմաններ և կմշակվեն նպատակային ծրագրեր:

Բնապահպանական վճարների դրույքաչափերի ավելացումները, նախ և առաջ, պետք է օգտագործվեն շրջակա միջավայրն աղտոտող ձեռնարկությունների մոտ աղտոտման ծավալների նվազման գծով վարքագծի փոփոխման խթանների ստեղծման համար և չպետք է օգտագործվեն որպես զուտ պետական բյուջեի եկամուտների ավելացման աղբյուր:

749. Շրջակա միջավայրի պահպանության քաղաքականության մշակման, ինչպես նաև հիմնավորված որոշումների ընդունման և համապատասխան ծրագրերի մշակման համար անհրաժեշտ է արմատապես վերանայել բնապահպանական տվյալների հավաքագրման և պետական դիտանցի /մոնիթորինգի/ համակարգը: 2006թ. ՀՀ Կառավարությունը հավանություն է տվել Հայաստանի Հանրապետությունում շրջակա միջավայրի պետական մոնիթորինգի հայեցակարգին, որի իրականացման համար բավականին լուրջ ինստիտուցիոնալ և օրենսդրական բարեփոխումներ պետք է իրականացվեն: Որպես բնապահպանական քաղաքականության իրականացման լավագույն գործիք կարող է ծառայել հասարակության մասնակցությունը բնապահպանական որոշումների կայացմանը, որը պետք է իրականացվի ըստ Օրհուսի կոնվենցիայի, որին Հայաստանը մասնակից է:

750. Տվյալների հավաքագրմանը զուգահեռ, պետք է ապահովել բնապահպանական եցումների, ինչպես նաև էկոլոգիական անբարենպաստ պայմանների և էկոլոգիական աղետների

751. Բնապահպանական կառավարման արդյունավետության համար կարևոր է կենտրոն-մարզեր կապերի ամրապնդումը, սակայն կառավարման ապակենտրոնացման համար դեռևս բավական միջոցներ և մասնագիտական ներուժ չի ձևավորվել մարզերում: Նախատեսվում է առանձնակի ուշադրություն դարձնել տարածքային բնապահպանական խնդիրների բացահայտմանը և աջակցել շրջակա միջավայրի պահպանմանն ուղղված գործողությունների տեղական ծրագրերի մշակմանը:

752. **Հողերի պահպանության խնդիրը.** երկարաժամկետ հետևանքների առումով, առավել վտանգավոր է՝ հաշվի առնելով հանրապետության հողային ռեսուրսների դեգրադացիայի ներկա ծավալները: Հայաստանի տարածքում հողօգտագործման ամենամեծ ծավալները բաժին են հասնում գյուղատնտեսությանը, սակայն հողօգտագործման ներկա պրակտիկան հանգեցնում է հողի բերրիության անկման, էռոզիայի, աղակալման և ակալիացման: Իսկ խոտհարքների, արոտավայրերի գերշահագործումը և անհավասարակշռված օգտագործումը հանգեցնում են ոչ միայն կերային պաշարի, այլ նաև կենսաբազմազանության անկման, որի հետևանքն է նաև հողերի դեգրադացիան այդ տարածքներում:

753. Հողերի դեգրադացիայի կանխարգելման բնապահպանական խնդիրը ոչ միայն գյուղատնտեսության կայուն զարգացման նախապայման է, այլ նաև գյուղական վայրերից բնակչության միգրացիայի կրճատման և աղքատության նվազեցման միջոց: Հողերի պահպանության համար կարևոր է մշակել հողերի որակի և բերրիության չափորոշիչներ և կազմակերպել որակյալ մոնիթորինգի, հողօգտագործման նորմավորման, հաշվառման և վերահսկողության համակարգ: Վնասված գյուղատնտեսական և բնական հողատարածքների վերականգնման համար անհրաժեշտ է մշակել խթանման տնտեսական մեխանիզմներ:

754. **Սևանա լճի հիմնախնդիրը** Հայաստանի բնապահպանական խնդիրների շարքում առանձնակի է կարևորվում: Լճի ջրային պաշարի պահպանության և համարման՝ վերջին տարիների ջանքերը և եղանակային բարենպաստ պայմանները ապահովել են ջրի մակարդակի բարձրացման կայուն միտումներ՝ 2001-2007 թթ. այն կազմել է 247 սմ: Լճի մակարդակի բարձրացմանն ուղղված գործողությունները մնում են արդիական նաև բնական հավասարակշռության վերականգնման առումով: Ջրի մակարդակի բարձրացումը միաժամանակ ավելի հրատապ է դարձրել ավիամերձ տարածքների կառավարման թերությունների վերացման անհրաժեշտությունը՝ ջրածածկման ենթակա տարածքներում բուսածածկի հեռացումը, Սևանա լճի շրջակայքում նոր անտառաշերտի հիմնումը, շինությունների և ապօրինի այլ կառույցների ապամոնտաժումը, ենթակառուցվածքների՝ հատկապես ավտոճանապարհի տեղափոխումը:

755. Սևանա լճի ձկնային պաշարների ներկա մակարդակը ահազանգոդ է: Դեռևս լիարժեք չի գնահատված, թե միջոցառումների ինչ համակարգ կարող է ապահովել ձկնային ֆաունայի վերարտադրության անհրաժեշտ պայմաններ, այսինքն՝ կենսաբազմազանության պահպանության հիմնախնդիրը պետք է դիտարկվի նաև որպես պարենային անվտանգության և մարզի աղքատությունը նվազեցնող գործոն: Անհրաժեշտ է վերանայել ներկայումս գործող արտոնագրային ձկնորսության համակարգը՝ ներդնելով հանրային-մասնավոր համագործակցության սկզբունքները:

756. Եվրոպական վերականգնման և զարգացման բանկի կողմից 2007թ. տրամադրված վարկային միջոցներով նախատեսվում է Սևանի ջրահավաք ավազանի 5 քաղաքների մաքրման կայանների կառուցում, սակայն Սևանա լճի և նրա մեջ թափվող գետերի ջրերի մաքրության լիարժեք ապահովման համար անհրաժեշտ է նաև ավազանի բոլոր բնակավայրերի և կազմակերպությունների կեղտաջրերի մաքրման (այդ թվում՝ լոկալ) կայանների կառուցում և գործարկում:

757. Ավազանի ջրերի աղտոտման վրա քիմիական պարարտանյութերի և անասնապահության թափոնների ազդեցությունը նվազեցնելու նպատակով նախատեսվում է խթանել օրգանական գյուղատնտեսությունը և այդ նպատակի համար օգտագործել կենսազագի կայաններում որպես կողմնարդյունք ստացվող բարձրորակ օրգանական պարարտանյութը:

758. **Անտառային ռեսուրսների և կենսաբազմազանության պահպանություն:** Էներգետիկ ճգնաժամի տարիներից սկսած և մինչ այժմ շարունակվող անտառահատումների մեծ ծավալները և անտառվերականգնման աշխատանքների ոչ բավարար ֆինանսավորումը հանգեցրել են հանրապետության անտառածածկ տարածքների մակերեսների և անտառների լրիվության նվազեցման: Անտառներում տեղի են ունեցել տեսակային կազմի և կառուցվածքային փոփոխություններ, ծառուտները կորցրել են իրենց բնական վերականգնման ունակությունը, իջել է դրանց արտադրողականությունը:

759. Սակայն պետք է արձանագրել նաև այս ոլորտի առողջացմանը միտված դրական տեղաշարժեր: Անտառային նոր օրենսգրքի և բնության հատուկ պահպանվող տարածքների մասին ՀՀ օրենքի պահանջներին համապատասխան՝ մշակվել են 7 անտառտնտեսությունների և 2 հատուկ պահպանվող տարածքների կառավարման պլաններ, ստեղծվել է ապօրինի անտառահատումների հսկողության համար միջգերատեսչական հանձնաժողով և Անտառային մոնիթորինգի կենտրոն, դեռևս 2004թ. ստեղծվել էր Անտառների վերականգնման և զարգացման հիմնադրամ: Ներկայումս մշակվում են համայնքային անտառկառավարման պլաններ, նախապատրաստվում են փորձնական ծրագրեր, որոնց հետագա գնահատումը հիմք կհանդիսանա համայնքային անտառկառավարման եղանակների և ծավալների սահմանման համար: Այս գործընթացը պետք է ընթանա տեղական ինքնակառավարման մարմինների, մասնավոր հատվածի և հասարակական կազմակերպությունների համագործակցության նորարարական մեխանիզմների կիրառման ճանապարհով: Կառավարությունը նպատակադրվում է խրախուսել համայնքային և մասնավոր անտառապատման նախագծերի իրականացումը՝ Կիոտոյի արձանագրության Մաքուր զարգացման մեխանիզմով, ինչպես նաև ապահովել անտառների վնասատուների դեմ պայքարի ծրագրերի մշակում՝ կլիմայի փոփոխության ադապտացիոն ֆոնդի շրջանակներում:

760. Սահմանվել է անտառների նպատակային նշանակության նոր կատեգորիա՝ արտադրական նշանակության անտառներ, որոնց հիմնման և կառավարման խնդիրները դեռևս լիարժեք մշակված չեն: Ամեն դեպքում, անտառտնտեսավարման միջոցառումները հստակորեն կրիսեն անտառային կենսաբազմազանության պահպանության բնապահպանական գերակայություններից, քանի որ ռեսուրսների հետագա դեգրադացիան կհանգեցնի անտառների ոչ միայն միջավայրապաշտպան, այլ նաև տնտեսական և սոցիալական նշանակության կորստի:

761. Մշակվել են «Սևան» և «Դիլիջան» ազգային պարկերի կառավարման պլանները, որոշակի աշխատանք է տարվել Խոսրովի և Շիկահողի արգելոցների, մի շարք արգելավայրերի կենսաբազմազանության գնահատման ուղղությամբ, առանձնացվել են նոր՝ բնության հատուկ պահպանվող տարածքներ, սակայն ԲՀՊՏ-ների կառավարման համակարգի բարելավման համար, բացի պետական բյուջեից հատկացումների

ավելացումից, պետք է մշակվեն այդ կառույցների ինքնաֆինանսավորումը ապահովող տնտեսական գործունեության ակտիվացման ծրագրեր, ինչպես նաև համայնքային և հավատարմագրային կառավարման մեխանիզմներ: ՀՀ միջազգային պարտավորությունների կատարման շրջանակներում պետք է շարունակել և ակտիվացնել կենսաբազմազանության պահպանության համար նպատակային հիմնադրամների հետ համագործակցությունը և արտաքին ֆինանսական ռեսուրսների ներգրավումը:

762. **Ջրային ռեսուրսների պահպանությունը:** Գյուղատնտեսության և հիդրոէներգետիկայի զարգացմանը զուգընթաց, նախատեսվում է ապահովել ջրային ռեսուրսների հավասարակշռված օգտագործումը: Հաշվի առնելով կլիմայի համամոլորակային փոփոխության հետևանքով հանրապետության ջրային ռեսուրսների խոցելիությունը՝ կմշակվեն ջրային ռեսուրսների պահպանության, գետային հոսքի կարգավորման, մատչելիության ու խնայողաբար օգտագործմանը նպաստող ծրագրեր՝ դրանով իսկ կանխարգելելով հնարավոր բախումները ջրօգտագործողների միջև և ապահովելով գետային հոսքի բնապահպանական անհրաժեշտ քանակները և ռեժիմները: Ջրային ռեսուրսների որակի ապահովման համար հրատապ է դարձել կեղտաջրերի մաքրման կայանների վերակառուցումը (նախկինում կառուցված 21 կայաններից գործում է միայն Երևանի մաքրման կայանը, այն էլ՝ միայն մեխանիկական մաքրման մասով): Ձեռնարկությունների կողմից նախնական մաքրման համակարգերի ստեղծումը էականորեն կնվազեցնի ջրային ավազանների վրա աղտոտման ճնշումը:

763. 2007թ. հանրապետությունում նախաձեռնվել է ջրավազանային կառավարման մարմինների ստեղծումը, որը կարելի է համարել բնապահպանական կառավարման ապակենտրոնացման առաջին փորձ: Սակայն, այդ մարմինների լիարժեք կայացման համար անհրաժեշտ է դրանց կազմում ավելի լիարժեքորեն ընդգրկել համապատասխան համայնքների և քաղաքացիական հասարակայնության ներկայացուցիչներին, ինչպես նաև մասնագիտական դասընթացներ իրականացնել՝ կապված ջրավազանային կառավարման հետ:

764. **Արդյունաբերական և կենցաղային թափոնների կառավարումը:** Ինչպես Երևանում, այնպես էլ հանրապետության այլ քաղաքներում արտադրական և կենցաղային թափոնների կառավարման՝ հավաքման, տեսակավորման և կազմակերպված վնասազերծման հրատապ խնդիրը կարևորվում է ինչպես անմիջական վնասի կանխարգելման, այնպես էլ հողերի ռեսուրսների և ջրային ավազանների աղտոտման հետևանքների վերացման համար հետագայում պահանջվող խոշոր ներդրումների անհրաժեշտությամբ: Գործնականում արդյունաբերական թափոնները և շինարարական աղբը կոշտ կենցաղային թափոնների հետ հեռացվում են քաղաքային և գյուղական աղբյուրներ: Համապատասխան նորմատիվամեթոդական փաստաթղթերի բացակայության պայմաններում աճում է կոշտ աղբի կուտակիչների և աղբավայրերի առկա վիճակի բացասական ազդեցության հավանականությունը բնակչության առողջության և շրջակա բնական միջավայրի, հատկապես՝ հողի վրա:

765. Ներկայումս Հայաստանում թափոնների հեռացման նպատակով կիրառվող եղանակները համարժեք չեն: Պետական և մասնավոր մի շարք ձեռնարկությունների միջոցով թաղապետարանների կողմից մատուցվող աղբահեռացման ապակենտրոնացված ծառայությունների որակի և կարողությունների միջև էական տարբերություններ կան: Աղբահավաքման եղանակները և կիրառվող ենթակառուցվածքը ստանդարտից ցածր են, որի արդյունքում տեղի են ունենում աղբի մեծ կուտակումներ, աղբը հազվադեպ է հեռացվում, առաջանում են սանիտարա-հիգիենիկ անբարենպաստ պայմաններ: Հայաստանում թափոնների հեռացման համակարգի կատարողականության բարելավման համար կմշակվի նշված համակարգի արդիականացման ռազմավարական ծրագիր, աստիճանաբար

կբարելավվեն ենթակառուցվածքներն ու գործելակերպերն այնպիսի եղանակներով, որոնք մատչելի են բնակչության համար:

766. Թեև որոշակի առաջընթաց կա հանրապետությունում թափոնների ըստ վտանգավորության դասերի հաշվառման և գույքագրման կարգավորման համակարգի մշակման ասպարեզում, այդուհանդերձ վնասազերծման և օգտահանման համար ծախսարդյունավետ տեխնոլոգիաների ներդրման խնդիրը դեռևս լուծման կարիք ունի:

767. Հայկական ատոմակայանում և այլ կազմակերպություններում առաջացող ռադիոակտիվ թափոնների վնասազերծման, անվտանգ պահպանության, օգտահանման և տեղադրման խնդիրը առաջիկա տարիներին հիմնարար լուծում կստանա՝ հատկապես հաշվի առնելով գործող ատոմակայանի փակման հետևանքով կանխատեսվող մեծ քանակությամբ հեղուկ և պինդ թափոնների առաջացման և նոր ատոմակայանի կառուցման հեռանկարը:

768. **Մարդու առողջության վրա բացասական ներգործության նվազեցում:** Մթնոլորտային օդի աղտոտվածության մոնիթորինգի արդյունքներով՝ հանրապետության առավել աղտոտված բնակավայրերն են՝ Ալավերդի քաղաքը՝ մետալուրգիական գործարանի ծծմբի երկօքսիդի արտանետումների, Արարատ և Հրազդան քաղաքները՝ ցեմենտի գործարանների փոշու արտանետումների և Երևան քաղաքը՝ հիմնականում ավտոտրանսպորտային արտանետումների հետևանքով: Տրանսպորտային հատվածի արտանետումները Երևան քաղաքում կազմում են ընդհանուր արտանետումների ավելի քան 90%-ը, և դրանց նվազեցման խնդիրը պահանջում է համալիր և հետևողական աշխատանք: 2004թ. հոկտեմբերի 14-ին N40 արձանագրային որոշմամբ ՀՀ Կառավարության կողմից հավանության է արժանացել «Ավտոտրանսպորտային միջոցներից վնասակար նյութերի արտանետումների նվազեցման հայեցակարգը»: ՀՀ Կառավարության 14.07.2005թ. N1033-Ն որոշմամբ ընդունվել է «Ավտոտրանսպորտային միջոցներից վնասակար նյութերի արտանետումների նվազեցման միջոցառումների ծրագիր», որը նախատեսված է 2005-2013թթ. համար: Երևան քաղաքի գլխավոր հատակագծով նախատեսված է հասարակական տրանսպորտի զարգացում, մեծ տեղատարողության ավտոբուսների մասնաբաժնի ավելացում՝ 2010թ.՝ 31.6%-ով, 2020թ.՝ 45%-ով և էլեկտրատրանսպորտի զարգացում: Այստեղ հատկապես կարևոր է մետրոպոլիտենի ցանցի շեշտակի զարգացումը և այն հասարակական տրանսպորտի զարգացման առանցք դարձնելը: Էթիլացված բենզինի օգտագործման արգելքը, որը գործում է 2001թ-ից, պայմաններ է ստեղծել արտանետումների չեզոքացուցիչների պարտադիր կիրառման համար: Որպես առաջին քայլ՝ արգելվել է առանց չեզոքացուցիչների ավտոմեքենաների ներմուծումը Հայաստան: Անհրաժեշտ է հետևողականորեն ավելացնել չեզոքացուցիչներ ունեցող ավտոմեքենաների մասնաբաժինը՝ ստեղծելով չեզոքացուցիչների ներդրման, սպասարկման և ռեգեներացիայի համակարգեր: Այս ասպարեզում մյուս կարևոր ուղղությունը բնապահպանական տեսակետից առավել մաքուր վառելիքների, մասնավորապես՝ բիոէթանոլի և սեղմված բնական գազի կիրառման խրախուսումն է:

769. Ստացիոնար աղբյուրներից արտանետումների կրճատման համար հեռանկարային լուծումը բնապահպանական տեսակետից նախընտրելի տեխնոլոգիաների ներդրման համար պետության կողմից նպաստավոր միջավայրի քաղաքականության մշակումն է: Մարդկանց առողջության և կյանքի որակի ապահովման համար կարևորվում է նաև քաղաքներում կանաչ տարածքների, ռեկրեացիոն գոտիների պահպանման և համաչափ զարգացման խնդիրը, որը առավել կարևորվում է ամառվա ամիսներին ջերմային սթրեսներին հարմարվելու համար:

770. Բնակչության առողջության վրա բացասական ազդեցություն կարող են ունենալ պոչամբարները (օրինակ՝ Ախթալայի, Ագարակի, Դաստակերտի և այլն): Անհրաժեշտ է

մշակել և իրագործել պոչամբարների տարածքների էկոլոգիական իրավճակի բարելավմանը նպատակաուղղված ծրագիր:

771. Բնապահպանական լիարժեք համակարգի կայացման համար էական է հասարակության ու մասնավոր հատվածի մասնակցությունը բնապահպանական խնդիրների լուծմանը և որոշումների կայացմանը, որի համար նախապայման է շրջակա միջավայրի

թափանցիկության ապահովումը:

12.6. Քաղաքաշինություն

12.6.1. Ընդհանուր ակնարկ

772. Քաղաքաշինությունը Հայաստանի Հանրապետության տնտեսության առավել դինամիկ զարգացում արձանագրող բնագավառն է, ընդ որում՝ շինարարության ծավալները 2001-2006 թթ. ընթացքում աճել են շուրջ 4.5 անգամ: Նման առաջանցիկ տեմպերով կայուն քաղաքաշինական զարգացման հարատևության ապահովման տեսանկյունից հատկապես կարևորվում է ոչ միայն ծավալային, այլև որակական չափանիշների հետևողական բարձրացումը:

773. Քաղաքաշինական համակարգերի որակական երաշխիքների ապահովման կարևորությունն ու արդիականությունը պայմանավորված է նաև ողջ աշխարհում քաղաքային բնակչության թվի աննախադեպ և շարունակական աճով՝ մեծապես ուրբանիզացնելով տարաբնույթ հիմնախնդիրների լուծման ուղղությունները¹⁸³:

774. Աղքատության մակարդակը Հայաստանի քաղաքներում (բացառությամբ՝ Երևանի) ամենաբարձրն է: Հանրապետության շուրջ 29 հազար անօթևան ընտանիքներից 19 հազարից ավելին՝ բնակարանային ապահովման տարրական պայմաններից զուրկ, ժամանակավոր տնակներում, հանրակացարաններում, հասարակական նշանակության օբյեկտներում ապրող քաղաքաբնակներ են:

775. Կայուն քաղաքաշինական զարգացման գերակա նպատակը՝ ներկա և գալիք սերունդների կենսագործունեության բարենպաստ միջավայրի ձևավորումն ու քաղաքաշինական միջոցներով բնակչության կյանքի որակի հետևողական բարելավումն է:

776. Նման համակողմանի ընդգրկումն անմիջականորեն առնչվում է պետության, հասարակության և անհատի կենսական կարևորություն ունեցող շահերին, ուստի ուրբանիզացման մարտահրավերներին համարժեք արձագանքելու անհրաժեշտությունը, ներկայանալով որպես հրամայական պահանջ, ներառում է գործողությունների սովոր համախումբ, նպատակաուղղված՝ երկրի տարաբնակեցման համակարգի հավասարակշռման և տարածական կազմակերպման, բնակավայրերի պատմական կառուցապատման քաղաքաշինական ռեաբիլիտացիայի, անվտանգ ու մատչելի կացարան ունենալու և կոմունալ ծառայություններ ստանալու հնարավորությունների ընձեռման, վտանգավոր երկրաբանական ու տեխնածին երևույթներից պաշտպանության, կառույցների սեյսմազիմվածության ու անվտանգ շահագործման, ինչպես նաև կապիտալ ներդրումների արդյունավետ, անվտանգ և երաշխավորված իրացման խնդիրների լուծմանը¹⁸⁴: Վերոնշյալ ուղղությունները սերտորեն շաղկապված են և, անհրաժեշտաբար, պետք է դիտարկվեն նոր աշխատատեղերի ստեղծման, բնակչության բոլոր խավերի համար սոցիալական, ինժեներական և այլ ենթակառուցվածքների մատչելիության, այսինքն՝ աղքատության հաղթահարմանն ուղղված ջանքերի արդյունավետության տեսանկյունից:

¹⁸³ Յուրատեսակ փուլանիշ էր 2007 թվականը, երբ երկրագնդի բնակչության կեսից ավելին կազմեցին քաղաքաբնակները, ընդ որում, Հայաստանն այդ ջրբաժանն անցել է դեռևս 1959 թվականին: Հայաստանի Հանրապետության քաղաքային ցանցը ներկայացված է մայրաքաղաք Երևանով և 48 քաղաքներով, որոնց բնակչությունը, 2006 թվականի տվյալներով, կազմում է մեր երկրի բնակչության ընդհանուր թվաքանակի 64,1 տոկոսը:

¹⁸⁴ Վերոգրյալը սերտորեն փոխշաղկապված է ՀՀ Նախագահի 2007 թվականի փետրվարի 7-ի ՆՀ-37-Ն հրամանագրով սահմանված՝ ազգային անվտանգության ռազմավարության դրույթներով նախատեսված, ինչպես նաև ՀՀ կառավարության 2007 թվականի հունիսի 21-ի N 695 - Ա որոշմամբ հաստատված և ՀՀ Ազգային ժողովի կողմից ընդունված Հայաստանի Հանրապետության կառավարության ծրագրի՝ քաղաքաշինությանն առնչվող հիմնախնդիրների հետ:

777. Հատկապես կարևորվում է քաղաքաշինական գործառույթների դերն ու նշանակությունը տարածաշրջանային զարգացման առկա անհամաձայնությունների հաղթահարման տեսանկյունից: Այս առումով՝ բազմակենտրոն տարածական զարգացման սկզբունքների հետևողական ներդրումը պայմանավորված է առավել հավասարակշռված տարաբնակեցման համակարգի ձևավորման, անկառավարելի ուրբանիզացման

հատկապես, մայրաքաղաքում՝ բնակչության խտության անցանկալի աճի կանխարգելմանն ուղղված միջոցառումների ձեռնարկման անհրաժեշտությամբ:

778. Վերը շարադրված նպատակներին հասնելու համար առանձնացվում են քաղաքաշինական զարգացման հետևյալ գերակա ուղղությունները՝

Տարածական զարգացում և պլանավորում.

Կառույցների սեյսմակայունության և հուսալիության ապահովում.

Վտանգավոր արտածին երկրաբանական պրոցեսների ազդեցության նվազեցում.

Բնակարանային պայմանների բարելավում:

12.6.2. Տարածական զարգացում և պլանավորում

779. Տարածական զարգացման և պլանավորման գործառույթների համակարգը, նպատակաուղղված լինելով եզակի ռազմավարական ռեսուրսի՝ երկրի տարածքի պատշաճ կազմակերպման հիմնահարցերի լուծմանը, միջազգային հանրության կողմից դիտարկվում է որպես կայուն մարդկային զարգացման տարածական վեկտոր¹⁸⁵: Հանրապետության, տարածաշրջանների և համայնքների տարածական զարգացման հեռանկարների պլանավորումը հիմնվում է սոցիալ-տնտեսական զարգացման ծրագրերի վրա, որոնց կոնկրետ իրագործումը, իր հերթին, անհնարին է առանց տարածական զարգացման համալիր խնդիրների հաշվառման և տարածքային առանձնահատկությունների հետ փոխկապակցման:

780. Խորհրդային ժամանակաշրջանում ընդունված տնտեսավարման եղանակը, ինչպես նաև բարդ աշխարհագրական և կլիմայական պայմանները հանգեցրել են Հայաստանի տարաբնակեցման կառուցվածքի ձևախեղման¹⁸⁶, որին բնորոշ է զարգացման միակենտրոնությունը: Ներկայումս էլ պահպանվում են այն վտանգավոր միտումները, որոնցով դինամիկ զարգացման գործընթացներում ներգրավված են հիմնականում՝ մայրաքաղաքը, մասամբ՝ խոշոր քաղաքները, իսկ փոքր և միջին քաղաքներն ու գյուղական բնակավայրերը, որոշ բացառություններով, մեկուսացված են այդ գործընթացներից, ընդ որում՝ նման իրավիճակը հավասարապես անցանկալի է թե՛ կենտրոնի և թե՛ ծայրամասի

¹⁸⁵ Նշված մոտեցումներն ամրագրված են Եվրոպայի Խորհրդի մի շարք փաստաթղթերով, այդ թվում՝ Անդամ պետությունների Նախարարների Կոմիտեի՝ համապատասխանաբար N Rec(2002)1 և N R(84)2 հանձնարարականներով ընդունված՝ «Եվրոպական մայրցամաքի կայուն տարածական զարգացման ուղենիշային սկզբունքները» և «Տարածական/ռեգիոնալ պլանավորման եվրոպական խարտիան», ինչպես նաև «Կայուն զարգացման տարածքային չափման մասին հռչակագիրը» (Լյուբլյանայի հռչակագիր) և այլն:

¹⁸⁶ Հայաստանի Հանրապետության ընդհանուր տարածքի մոտ 56 տոկոսն է պիտանի տարաբնակեցման համար: Մնացյալը՝ 2200 մ բացարձակ նիշից բարձր, բնակության համար ոչ պիտանի տարածքներ են: Բարձր լեռնային և լեռնային համայնքները կազմում են հանրապետության համայնքների շուրջ 40 տոկոսը (հանրապետության բնակչության շուրջ 16.5 տոկոսը) և ընդգրկված են թույլ յուրացված գոտիներում: Դրանք տեղաբաշխված են հիմնականում 1700-2200 մ լեռնալանջերի վրա, ունեն բավարար ռեզերվային տարածքներ, ռեսուրսային և էկոլոգիական մեծ պոտենցիալ, սակայն բնորոշվում են ինժեներական և տրանսպորտային ցանցի անկատար ապահովվածությամբ, բնակավայրային թույլ ցանցով, լքված բնակավայրերով, բնակչության ցածր խտությամբ:

համար: Նկատելի են դառնում նաև քաղաքային միջավայրերի էրոզիայի երևույթները. աստիճանաբար խտանում է կենտրոնական թաղամասերի կառուցապատումը, շերտավորումը՝ ըստ հարուստ և աղքատ, բարձր և ցածր վարկանիշեր ունեցող տարածքների և այլն:

781. Ներդաշնակ և անվտանգ կենսամիջավայրերի ստեղծման հենքը ձևավորվում է քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի միջոցով՝ դրանց մշակման գործընթացին հասարակության լայնածավալ մասնակցությամբ: Ուստի ազգային, տարածքային և տեղական մակարդակների պլանավորման փաստաթղթերի լիարժեք բազայի ձևավորումը, գնահատվելով որպես կառուցապատման ծրագրերի և կառավարման գործառնությունների իրականացման հիմք և երաշխավոր, անհրաժեշտ է պետության կայուն զարգացման առավելագույնս հիմնավորված, կոնկրետ պայմանների հետ փոխկապակցված և առկա նախադրյալներից բխող, հետևաբար նաև՝ արդյունավետ և շարունակական ընթացքն ապահովելու համար:

782. Տարածական պլանավորման գործառնությունների իրականացման շրջանակներում կարևորվում է ինտեգրացված լանդշաֆտային պլանավորման գործընթացը՝ ներառելով, մասնավորապես, քաղաքային մշակութային լանդշաֆտները, դեզրադացված լանդշաֆտները, բնապահպանական տեսանկյունից արժեքավոր և խոցելի տարածքները, ինչպես նաև քաղաքային և քաղաքամերձ տարածքների, գյուղական և քաղաքային բնակավայրերի ներդաշնակ փոխլրացնող զարգացման հիմնախնդիրները՝ բնական և մշակութային լանդշաֆտների փոփոխության պատճառ հանդիսացող հանգամանքների և ազդեցությունների հաշվառումով: Նշված խնդիրների հետևողական լուծման անհրաժեշտությունը ամրագրված է նաև Հայաստանի Հանրապետության կողմից 2004 թվականի մարտի 23-ին վավերացրած՝ Լանդշաֆտի Եվրոպական Կոնվենցիայով:

783. Տարածական զարգացման կարևոր բաղադրիչներից է ճարտարապետական ժառանգության ու քաղաքների պատմամշակութային միջավայրերի պահպանությունն ու վերականգնումը՝ որպես բնակավայրերի ինքնատիպության, գրավչության, ինչպես նաև մարդկանց բարեկեցության բարձրացմանն ու նոր աշխատատեղերի ստեղծմանը նպաստող ներծին զարգացման խթան: Հանրապետության բնակավայրերի պատմական կառուցապատման, քաղաքաշինական վերականգնման ծրագրերի իրականացման համար անհրաժեշտ է կիրառել պետական-մասնավոր գործընկերության գործիքները՝ միջազգային համանման փորձի ուսումնասիրության և տեղայնացման միջոցով:

784. Տարածական զարգացման և պլանավորման նպատակների իրականացման հիմնական միջոցառումների թվին են դասվում՝

ՀՀ տարածքային կազմակերպման գլխավոր նախագծի մշակումը (ՀՀ տարաբնակեցման գլխավոր նախագծի իրագործման վերլուծության հիման վրա).

ՀՀ տարածքային հատակագծման նախագծերի մշակումը.

ՀՀ համայնքների (բնակավայրերի) գլխավոր հատակագծերի և գոտիավորման նախագծերի մշակումը.

Մեկնա լճի ջրհավաք ավազանի տարածական պլանավորման փաստաթղթերի մշակումը.

ՀՀ միջպետական և հանրապետական նշանակության պետական ավտոմոբիլային ճանապարհներին հարող տարածքների կառուցապատման սխեմաների և տեղաբաշխման նախագծերի մշակումը.

Հայաստանի բնակավայրերի պատմական կառուցապատման, ճարտարապետական և բնական ժառանգության քաղաքաշինական վերականգնողական ծրագրերի մշակումը.

ՄԱԿ-ի «Հաբիթաթ» գործընթացի սկզբունքների և Լանդշաֆտի Եվրոպական Կոնվենցիայի իրագործումը Հայաստանում.

Պետական քաղաքաշինական կադաստրի ներդրման ծրագրի իրականացումը.

Քաղաքաշինության բնագավառի օրենսդրական բազայի կատարելագործումը և նորմատիվատեխնիկական փաստաթղթերի համակարգի բարեփոխումը¹⁸⁷:

12.6.3. Կառույցների սեյսմակայունության և հուսալիության ապահովում

785. 1988 թվականի Սպիտակի ավերիչ երկրաշարժից հետո վերանայվեցին ՀՀ ամբողջ տարածքի սեյսմիկ պայմանները, որի արդյունքում՝ երկրաշարժից սեյսմիկ ազդեցության գնահատականը բարձրացավ 1-2 բալով, և այդ կապակցությամբ ներկայումս հանրապետության տարածքի շուրջ 80 և ավելի տոկոսը հայտնվել է VIII և ավելի բալ ինտենսիվության գոտում: Խնդիրն առավել կարևորվում է՝ հաշվի առնելով, որ վերջին 15-20 տարիներին, հիմնականում ֆինանսական միջոցների բացակայության պատճառով, հանրապետությունում կառույցների անվտանգ շահագործումն ապահովելու ուղղությամբ չեն ցուցաբերվել անհրաժեշտ համակարգված մոտեցումներ և գրեթե չեն իրականացվել հիմնանորոգման աշխատանքներ, որի հետևանքով ֆիզիկական մաշվածությունից և զանազան այլ գործոնների ազդեցությունից դրանց զգալի մասը հայտնվել է անբավարար կամ վթարային տեխնիկական վիճակում: Այդ առումով առանձնակի կարևորվում են բազմաբնակարան բնակելի շենքերը, որոնցում բնակվում է հանրապետության բնակչության կեսից ավելին: Բազմաբնակարան բնակելի շենքերի շուրջ 89.4 տոկոսը կառուցվել են մինչև 1990 թվականը և հանրապետությունում սեյսմիկ պայմանների վերանայումից հետո դրանք արդեն իսկ չեն բավարարում ներկայիս գործող սեյսմիկ նորմերի պահանջներին: Իրավիճակը վատթարանում է բազմատեսակ կցակառույցների, վերնահարկերի նկուղային հարկերի կառուցման հետևանքով: Վթարային և անբավարար տեխնիկական վիճակում գտնվող բազմաբնակարան բնակելի շենքերը սեյսմակայունության առումով հուսալի չեն և չեն կարող ապահովել բնակչության անվտանգությունը երկրաշարժի ժամանակ: Դրանց թվում քիչ չեն նաև այնպիսիները, որոնցում առկա ընթացիկ վերանորոգում պահանջող թերությունների (ջրագծի կամ կոյուղագծի վնասվածքներ, տանիքի և ջրահեռացման համակարգի անբարեկարգ վիճակ, սալվածքի քայքայվածություն և այլն) ոչ ժամանակին վերացումը կարող է հանգեցնել շենքի անբավարար տեխնիկական վիճակի, իսկ հետագայում նաև վթարայնության առաջացմանը և, դրա հետ կապված, ազգային հարստություն հանդիսացող բնակֆոնդի անվերադարձ կորստի: Այս հանգամանքներով պայմանավորված՝ կարևորվում է քաղաքաշինական նորմերի պահպանման վերահսկողության ուժեղացումը և շենքերի ու կառուցվածքների սեյսմակայունությանը և հուսալիության ապահովմանն ուղղված միջոցառումների հետևողական իրականացումը:

786. Ստորև բերվում են տվյալներ հանրապետությունում բազմաբնակարան բնակելի ֆոնդի վերաբերյալ.

¹⁸⁷ Պետական քաղաքաշինական կադաստրի (քաղաքաշինական տեղեկատվական համակարգի) ներդրման, ինչպես նաև օրենսդրական բազայի և նորմատիվատեխնիկական փաստաթղթերի համակարգի կատարելագործման խնդիրներն առնչվում են քաղաքաշինության բնագավառի բոլոր գերակա ուղղություններին:

	Բնակելի ֆոնդը	Քանակը	Մասնաբաժինը ընդհանուրում (%)
1	Հանրապետությունում բնակ. ֆոնդի ընդհանուր մակերեսը (հազ. քառ.մ.)	76,173.3	-
2	Բազմաբնակարան շենքերում բնակ. ֆոնդի ընդհանուր մակերեսը այդ թվում՝ Երևան քաղաքում	26,554.1 13,979.5	34.9 52.6
3	Հանրապետությունում բազմաբնակարան շենքերի ընդհանուր քանակը	21,778	-
	- այդ թվում՝ Երևան քաղաքում	4,709	21.6
	- այդ թվում՝ մինչև 1990 թվականը կառուցված	19,235	89.0
	- այդ թվում՝ անբավարար և վթարային տեխ. վիճակում գտնվող (2003թ.)	581	2.7

787. Վերը շարադրվածից ելնելով, ինչպես նաև հաշվի առնելով հանրապետության տարածքի բարձր սեյսմակտիվությունը՝ բազմաբնակարան բնակելի շենքերի սեյսմակայունության և հուսալիության ապահովումը անհրաժեշտ է դիտարկել որպես քաղաքաշինության բնագավառի գերակա ուղղություններից մեկը: Այդ իսկ պատճառով՝ կարևորվում է այդ ուղղությամբ համակարգված ծրագրային մոտեցումները, ինչի արդյունավետությունը մեծապես կախված է շենքերի անձնագրավորման գործընթացի իրականացումից և, միաժամանակ, դրանց տեխնիկական վիճակի վերաբերյալ միասնական տվյալների բանկի ստեղծումից, ինչը հիմք կհանդիսանա տարբեր բնագավառներում, այդ թվում՝ նաև սոցիալական ապահովության բնագավառում, շենքերի վնասվածության գնահատականի հաշվառմամբ, մշակվող և իրականացվող ծրագրերի հիմնավորվածությունը և արդյունավետությունը բարձրացնելու համար:

788. Ինչ վերաբերում է այլ՝ մարդկանց զանգվածային գտնվելու վայր հանդիսացող օբյեկտների (առևտրի կենտրոններ, մարզադահլիճներ, տրանսպորտային կայարաններ և այլն) անվտանգ շահագործման խնդիրներին, ապա այդ ուղղությամբ վարվող պետական քաղաքականության հիմքում պետք է դրվի ՀՀ օրենսդրությամբ սահմանված ժամկետներում նշված օբյեկտների անձնագրավորման և դրանց արդյունքների հիման վրա անհրաժեշտ միջոցառումների ծրագրված իրականացման արդյունավետ վերահսկողության ապահովումը:

789. Բազմաբնակարան բնակելի շենքերի անձնագրավորումը անհրաժեշտ է իրականացնել նախապես մշակված ծրագրի և դրա իրականացման կարգի համաձայն՝ գործընթացում առաջնահերթությունը տալով վթարային և անբավարար տեխնիկական վիճակում գտնվող շենքերին:

12.6.4. Վտանգավոր արտածին երկրաբանական պրոցեսների ազդեցության նվազեցման խնդիրներ (սողանքային աղետի դեմ պայքար)

790. Աղքատության հաղթահարման ռազմավարական ծրագրում սողանքային աղետի դեմ պայքարը, որպես աղքատության նվազեցման քաղաքականության ուղղություն, պայմանավորված է սողանքների հետևանքով Տավուշի, Վայոց ձորի, Սյունիքի, Լոռու, Կոտայքի, Գեղարքունիքի, Արարատի մարզերի համայնքների տարածքներում ու Երևան քաղաքի առանձին տեղամասերում ստեղծված աղետալի իրավիճակով: Վտանգավոր արտածին երկրաբանական պրոցեսներից իրենց տարածվածությամբ ու ազդեցությամբ առավել աղետալի են սողանքները, որոնք հանդիսանում են անընդհատ զարգացող ու իրենց ծավալներով մշտական աճող վտանգի աղբյուր: Սողանքային երևույթները մեծ վնաս են հասցրել և շարունակում են հասցնել հանրապետության սողանքային տարածքների բնակելի տներին, ենթակառուցվածքներին, կենսաապահովման օբյեկտներին, արտադրական

կարողություններին, տարածքների էկոլոգիական իրավիճակին՝ սպառնալով սողանքային տարածքների բնակիչների կյանքին ու առողջությանը, հանրապետության, ինչպես նաև հարևան երկրների հետ հաղորդակցության ուղիների անխափան շահագործմանը: Դրանք պատճառ են դառնում հատկապես լեռնային և սահմանամերձ բնակավայրերի ամայացմանը, պատմամշակութային արժեքների ավերմանը, բնակչության աղքատացմանը, տարհանմանը, արտագաղթին, մի շարք սոցիալական հիմնահարցերի առաջացմանը և խոչընդոտում են համայնքներում տնտեսության զարգացմանն ու բնակչության աճին:

791. Հանրապետության տարածքում 2004 թվականին ճապոնական միջազգային համագործակցության գործակալության հետազոտական խմբի կողմից տիեզերքից ստացված լուսանկարների վերծանմամբ առանձնացվել է 2504 սողանք¹⁸⁸: Ստորև բերվում են տվյալներ՝ հանրապետությունում սողանքների տարածվածության, դրանց ազդեցության գոտում գտնվող բնակավայրերի և վնասված ենթակառուցվածքների վերաբերյալ.

ՀՀ-ում սողանքների քանակը	2,504
Սողանքների ընդհանուր մակերեսը	1,216 կմ ²
Սողանքային գոտիներում բնակավայրերի քանակը	233
Սողանքային գոտիներում սահմանամերձ բնակավայրերի քանակը	113
Սողանքներից վնասված ճանապարհների երկարությունը	238 կմ
Սողանքներից վնասված երկաթգծի երկարությունը	4.05 կմ
Սողանքային գոտիներում գյուղատնտեսական հողերը	10,819 հա
Պատմական արժեք ունեցող տարածքներում սողանքների քանակը	6

792. Ելնելով առկա իրավիճակի նկարագրությունից՝ սողանքային աղետի դեմ պայքարը հանդիսանում է քաղաքաշինության ոլորտի գերակա ուղղություններից մեկը: Սողանքային աղետի դեմ պայքարի կառավարման համակարգի ներդրմամբ համապատասխան ինժեներապաշտպան միջոցառումների հետևողական փուլերով իրականացումը կտրուկ կնվազեցնի սողանքներից տնտեսությանը հասցրած վնասը, ինչը կնպաստի տնտեսության զարգացմանը և նպաստավոր պայմաններ կստեղծի ներդրումային դաշտի բարելավման համար:

793. Քաղաքաշինության ոլորտում պետական քաղաքականության ծրագրային առաջնահերթությունների շարքում են լինելու առաջիկա տարիներին առավել ռիսկային սողանքային տարածքներում նախնական հետազոտությունների և ռեժիմային դիտարկումների (մոնիթորինգի) իրականացումը, ինչպես նաև վթարային տների բացահայտումը՝ վերաբնակեցման ենթակա բնակելի տների բնակիչների բնակարանային խնդիրները լուծելու նպատակով: Առանձին առավել վտանգավոր տեղամասերում կիրականացվեն նախագծահետազոտական աշխատանքներ և առաջնահերթ կանխարգելիչ միջոցառումներ, անհրաժեշտության դեպքում՝ նաև ավելի բարդ ինժեներապաշտպան միջոցառումներ¹⁸⁹:

¹⁸⁸ 2004 թվականի օգոստոսի դրությամբ 145 սողանքային տեղամասերի գույքագրման տվյալներով սողանքներից հասցված առկա վնասը գնահատվել է 21.3 մլրդ դրամ, իսկ պոտենցիալ վնասը կազմում է 26.8 մլրդ դրամ:

¹⁸⁹ Հանրապետությունում սողանքային աղետի դեմ պայքարի կառավարման համակարգի ներդրման և զարգացման ոլորտում պետական քաղաքականության ձևավորման և համապատասխան ծրագրերի մշակման համար 2007 թվականին ՀՀ Կառավարությունը հավանություն է տվել «Հայաստանի Հանրապետության սողանքային աղետի կառավարման հայեցակարգին», որի հիմնական նպատակներից է սողանքային պրոցեսների ուսումնասիրմամբ, կանխատեսմամբ և կանխարգելմամբ ապահովել տարածքների, շենքերի, շինությունների, ենթակառուցվածքների անվտանգ և անխափան շահագործումը, սողանքային երևույթներից

12.6.5. Բնակարանային պայմանների բարելավում

794. Բնակչության բնակարանային պայմանները՝ անվտանգ և մատչելի բնակելի տարածություն ունենալու հնարավորությունը, կենսաբանական պահանջների բարելավման կարևորագույն տարրերից է: Խնդիրը առանձնացվում է աղքատության կրճատման տեսանկյունից, քանի որ տնային տնտեսության անապահովության աստիճանի գնահատման պարագայում բնակարանային պայմանների գործոնը մեծ կշիռ ունեցող ցուցանիշներից մեկն է:

795. Հայաստանի անկախության հռչակման օրվանից սկսած, մի շարք այլ խնդիրների հետ մեկտեղ, կառավարության առջև ծառայան ինչպես բնական և տեխնաժին աղետների (երկրաշարժ, սողանք, ռազմական գործողություններ և այլն) հետևանքով անօթևան մնացած ընտանիքների բնակարանային ապահովման, այնպես էլ խորհրդային ժամանակաշրջանից ժառանգություն ստացած բազմաբնակարան բնակարանային ֆոնդի պահպանման ու կառավարման խնդիրները: Կարևորելով բնակարանային ոլորտում առկա խնդիրները՝ դրանք շեշտադրվելու են ոլորտում վարվող պետական քաղաքականության շրջանակներում:

796. Աղետների հետևանքով անօթևան մնացած ընտանիքների բնակարանային խնդիրների ուսումնասիրության արդյունքներով՝ Կառավարության կողմից ձևավորվեց դրանց լուծմանն ուղղված պետական աջակցության նպատակային ծրագրային մոտեցումը, և այդ ուղղությամբ ընդունված նպատակային ծրագրերի շրջանակներում 2000-2007 թթ. ընթացքում մոտ 16 հազար ընտանիքների հնարավորություն ընձեռվեց բարելավելու իրենց բնակարանային պայմանները: Չնայած իրականացված միջոցառումներին, հանրապետությունում դեռևս պահպանվում է բնակարանային պահանջարկի բարձր մակարդակ, ընդ որում՝ բնակարանային կարիք ունեցող ընտանիքների թիվը կազմում է շուրջ 43 հազար, որոնցից 26 հազար ընտանիքներ անօթևան են: Հարկ է նշել, որ ընդունված ծրագրերի շրջանակներում իր լուծումն է ստանում տեղի ունեցած աղետների հետևանքով անօթևան մնացած ընտանիքների բնակարանային խնդիրը, սակայն դեռևս լուծված չեն և կարգավորման կարիք ունեն տարբեր պատճառներով, այդ թվում սոցիալապես անապահով անօթևան ընտանիքների բնակարանային խնդիրները, որոնք բնակվելով ժամանակավոր կացարաններում, իրենց միջոցներով հնարավորություն չունեն ապահովելու բնակչության համար տարրական պայմաններ¹⁹⁰:

797. Ինչ վերաբերում է բազմաբնակարան բնակարանային ֆոնդի պահպանման և կառավարման հարցերին, ապա այս ոլորտում իրականացված բարեփոխումների արդյունքում ձևավորվել է ինտիտուցիոնալ նոր միջավայր՝ մասնավոր սեփականության գերակայությամբ (բնակարանային ֆոնդի շուրջ 95 տոկոսը ներկայումս մասնավոր սեփականություն է)¹⁹¹: Ձևավորված ինստիտուցիոնալ միջավայրը, ընդհանուր առմամբ,

բնակչության պաշտպանությունը, սողանքային տեղամասերի վերաբերյալ լիարժեք տեղեկատվության տրամադրումը:

¹⁹⁰ Աղքատության ընտանեկան նպաստի համակարգում ընդգրկված անօթևան ընտանիքների վերաբերյալ տվյալների ուսումնասիրության արդյունքների (ընտանիքների կարգավիճակի և նրանց բնակեցման պայմանների՝ հանրակացարան, տնակ՝ աղետի և ոչ աղետի հետևանքով) համաձայն՝ կանխատեսվում է, որ «Հազարամյակի զարգացման նպատակներով» (ՀՁՆ, 11 խնդիր) նպատակադրված ցուցանիշի իրագործման համար, մինչև 2015 թվականը, անհրաժեշտ կլինի բարելավել մոտ 16 հազար անօթևան ընտանիքների բնակարանային պայմանները:

¹⁹¹ ՀՀ քաղաքաշինության նախարարության կողմից հատուկ մշակված հարցաթերթերի միջոցով 2007 թվականին կատարված ՀՀ քաղաքների բազմաբնակարան շենքերի համալիր հետազոտության արդյունքները վկայում են, որ ՀՀ քաղաքների բազմաբնակարան շենքերի 65.6 տոկոսը (7,812 շենք) կառավարվում է համատիրությունների կողմից, իսկ 34.4 տոկոսը (4,098 շենք)՝ համայնքների: ՀՀ 48 քաղաքներից 31-ում կամ 65 տոկոսում համատիրություններ ընդհանրապես ձևավորված չեն և բազմաբնակարան շենքերի կառավարման

բարենպաստ է բնագավառի հետագա զարգացումն ապահովելու համար: Մասնավորապես, գործում է բնագավառը կարգավորող օրենսդրությունը, սահմանված է գործընթացին մասնակից կողմերի իրավունքների և պարտականությունների ընդհանուր շրջանակը, աստիճանաբար արմատավորվում են բազմաբնակարան բնակարանային ֆոնդի ընդհանուր բաժնային սեփականության մասնակցային կառավարման տարրերը: Այդուհանդերձ, ձևավորված նոր միջավայրում բազմաբնակարան ֆոնդի սպասարկման, պահպանման և արդիականացման գործառույթները լիովին չեն իրացվել, մի կողմից՝ պայմանավորված ֆինանսական ռեսուրսների սահմանափակությամբ, մյուս կողմից՝ առաջընթացի հնարավորությունները սահմանափակող ինստիտուցիոնալ միջավայրի բացերով ու խոչընդոտներով:

798. Վերջին 15 տարիների ընթացքում բազմաբնակարան շենքերի ընդհանուր բաժնային սեփականության պահպանման ուղղությամբ իրականացված ծախսերը եղել են հատվածային՝ ավելի շատ ուղղված լինելով ընթացիկ կամ վտանգ ներկայացնող անսարքությունների վերացմանը: Չեն իրականացվել նաև ՀՀ Կառավարության կողմից սահմանված՝ բազմաբնակարան շենքերի ընդհանուր բաժնային սեփականության պահպանման պարտադիր նորմերի շրջանակներում վերանորոգման ենթակա աշխատանքները: Դա հանգեցրել է բազմաբնակարան շենքերի հետաձգված մաշվածության կուտակմանը և զգալի ներդրումների պահանջի, որի ապահովումը միայն սեփականատերերի (բնակիչների) միջոցների հաշվին՝ իրատեսական չէ: Արդյունքում, կարելի է փաստել, որ բնագավառում առկա խնդիրների խորացման հավանականությունը, հատկապես՝ բազմաբնակարան շենքերի բաժնային սեփականության պատշաճ պահպանման և անվտանգ շահագործման ապահովման մասով, բավականին մեծ է՝ պայմանավորված ներկայիս ձևավորված սոցիալ-տնտեսական իրողություններով:

799. Բնակարանային ապահովման ուղղությամբ զարգացումները ուղղվելու են տարբեր պատճառներով անօթևան, այդ թվում՝ սոցիալապես անապահով ընտանիքների բնակարանային պայմանների բարելավման սահմանադրական իրավունքի իրականացմանն ուղղված հետագա քայլերի հստակեցմանը՝ բնակարանային պայմանների բարելավման սկզբունքների և երաշխիքների սահմանման միջոցով: Ընդ որում, որպես բնակարանային պայմանների բարելավման իրավունքի սահմանադրական նորմի իրականացման ձևերից մեկը կդիտարկվի սոցիալական բնակֆոնդի ինստիտուտի հիմնադրումը, որը կհանդիսանա համայնքում բնակչության ինտեգրման և հասարակական կյանքում ներգրավվածության հիմնական միջոց: Այդ ուղղությամբ նախատեսվում է ձևավորել սոցիալական բնակֆոնդի ներդրմանն ուղղված օրենսդրական դաշտը, մշակել բնակարանային պայմանների բարելավման ծրագիր և քայլեր ձեռնարկել դրա իրագործման ուղղությամբ:

800. Բնակարանային ապահովման քայլերին զուգընթաց, բնակարանային քաղաքականության ուղղություններից են լինելու նաև բազմաբնակարան բնակարանային ֆոնդի կառավարմանը, պահպանմանն ու շահագործմանը վերաբերող խնդիրները: Այդ ուղղությամբ առկա հիմնախնդիրները մեղմելու և ոլորտում բարեփոխումները խորացնելու առումով, մեծ կարևորություն է ստանում նախապես մշակված ծրագրի համաձայն պետական միջամտության շրջանակների ու մեխանիզմների ճշգրտումն ու հստակեցումը՝ միտված երկրի համար կարևոր ակտիվի՝ բազմաբնակարան բնակարանային ֆոնդի անվտանգ շահագործմանը: Ընդ որում, առաջնահերթ կարգով դիտարկվելու են այն համայնքները, որոնք ունեն խոցելիության (աղքատության ռիսկի) մեծ աստիճան:

801. Տարանջատվելու են պետական աջակցության երկու հիմնական ուղղություններ.

գործառույթն իրականացնում են համայնքները: Միևնույն ժամանակ, բացահայտվել են նաև բաժնային սեփականության առանձին տարրերի վերանորոգման կարիքները:

բազմաբնակարան շենքերի ենթակառուցվածքի պահպանմանն ու արդիականացմանն ուղղված աջակցություն,

ինստիտուցիոնալ միջավայրի բարելավում ու բազմաբնակարան շենքերի կառավարման մարմինների կարողությունների հզորացմանն ուղղված աջակցություն:

802. Աջակցության երկրորդ ուղղության շրջանակներում ֆինանսավորվելու են բազմաբնակարան բնակարանային ֆոնդի կառավարման, պահպանման գործառույթների իրականացման կայուն մեխանիզմների արմատավորմանը և սեփականատերերի ակտիվության ու մասնակցության աստիճանի ընդլայնմանը ուղղված միջոցառումները: Իրականացվելու են նաև միջոցառումներ՝ ուղղված ոլորտում տեղեկատվական (հաշվառման) համակարգի՝ բնակարանային ռեստորի ներդրմանը:

803. Բազմաբնակարան շենքերի կառավարման մարմիններին պետական աջակցությունը կառավարվելու է կենտրոնացված կարգով և համաֆինանսավորման սկզբունքով տրամադրվելու է առաջին փուլում՝ տեղական ինքնակառավարման մարմիններին, իսկ հետագայում՝ բազմաբնակարան շենքերի կառավարման մարմիններին: Ընդ որում, համայնքների ընդհանուր խոցելիության աստիճանը հանդիսանալու է պետական մասնակցության աստիճանը պայմանավորող առանցքային գործոններից մեկը:

804. 2009-2012 թվականներին քաղաքաշինության ոլորտի գերակայությունների մասով անհրաժեշտ պետական ֆինանսավորման ծավալների կողմնորոշիչ գնահատականները ներկայացվում են ստորև բերվող աղյուսակում:

Աղյուսակ 12.13. ԿԶԾ-ի շրջանակներում քաղաքաշինության բնագավառի պետական ֆինանսավորման կողմնորոշիչ գնահատականներ, 2009-2012 թթ. (մլն դրամ)

Քաղաքաշինության բնագավառ	2009-2012թթ.
ԸՆԴԱՄԵՆԸ	9,672
<i>այդ թվում՝ ըստ գերակայությունների</i>	
1. Տարածական զարգացում և պլանավորում, ընդամենը	1,802
<i>որից՝</i>	
1.1. Ազգային, տարածքային և տեղական մակարդակներով քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի մշակում	1,053
1.2. Քաղաքաշինական հատուկ կարգավորման օբյեկտների պլանավորում	209
1.3. Պատմական կառուցապատման, ճարտարապետական և բնական ժառանգության քաղաքաշինական վերականգնողական ծրագրերի մշակում	100
1.4. Պետական քաղաքաշինական կադաստրի ներդրման ծրագրի իրագործում	170
1.5. Քաղաքաշինական ոլորտի իրավական դաշտի կատարելագործում	270
2. Կառույցների սեյսմակայունության և հուսալիության ապահովում	1,065
<i>որից՝</i>	
2.1. Բազմաբնակարան բնակելի շենքերի անձնագրավորման ծրագրի մշակում	5
2.2. Հանրապետությունում բազմաբնակարան բնակելի շենքերի անձնագրավորման ծրագրի շրջանակներում թվով 10000 շենքերի անձնագրավորում *)	1,060
3. Վտանգավոր արտածին երկրաբանական պրոցեսների ազդեցության նվազեցում, ընդամենը	960
<i>որից՝</i>	
3.1. Նախնական հետազննություններ և մշտական ռեժիմային դիտարկումներ (մոնիթորինգ) առավել վտանգավոր սողանքային տեղամասերում	811
3.2. Բնակելի տների տեխնիկական վիճակի հետազննում	140
3.3. ՀՀ սողանքային աղետի կառավարման նպատակային համալիր ծրագրի մշակում (**)	9
4. Բնակարանային պայմանների բարելավում, ընդամենը	5,845
<i>որից՝</i>	
4.1. Անօթևան ընտանիքների բնակարանային ապահովման ծրագրի մշակում (***)	70
4.2. Բազմաբնակարան բնակարանային ֆոնդի կառավարման, պահպանման ու շահագործման ուղղությամբ ****)	5,775

Ծանոթություն՝

*) Ծրագրի իրականացումը կկրի շարունակական բնույթ, որի շրջանակներում 2013-2016թթ. կանձնագրավորվեն մնացած՝ թվով շուրջ 12 հազ. շենքեր:

**) Սողանքային աղետի կառավարման նպատակային համալիր ծրագրով նախատեսվող հակասողանքային միջոցառումները կիրականացվեն՝ սկսած 2013 թվականից:

***) Անօթևան ընտանիքների բնակարանային ապահովման ուղղությամբ պետական ֆինանսավորման ծավալները կհստակեցվեն համապատասխան ծրագրի մշակման արդյունքում:

****) Անհրաժեշտ միջոցներից 5,250 մլն դրամը ուղղվելու է բազմաբնակարան շենքերի ենթակառուցվածքի պահպանմանն ու արդիականացմանը, իսկ 525 մլն դրամը՝ ինստիտուցիոնալ միջավայրի բարելավմանն ու բազմաբնակարան շենքերի կառավարման մարմինների կարողությունների հզորացմանը:

13. Կայուն զարգացման ծրագրի բյուջետային շրջանակը

13.1. 2003-2007 թթ. հարկաբյուջետային հիմնական զարգացումները

805. 2003-2007 թվականներին, ԱՀՌԾ-ի ծրագրվածի համեմատ, մակրոտնտեսական ավելի նպաստավոր միջավայրը որոշակիորեն դրական անդրադարձ է ունեցել նաև համախմբված բյուջեի ցուցանիշների վրա: Այսպես, բյուջետային եկամուտների աճը անվանական արտահայտությամբ 2003-2007 թթ. կազմել է 399 մլրդ դրամ՝ շուրջ երկու անգամ ավելի, քան ծրագրվել էր ԱՀՌԾ-ի շրջանակներում (տե՛ս Աղյուսակ 13.1): Հիմնականում այս գործոնի հաշվին բյուջետային ռեսուրսների աճը 2003-2007 թթ. կազմել է 435 մլրդ դրամ՝ ավելի քան երկու անգամ գերազանցելով ԱՀՌԾ-ով նախատեսված համապատասխան ցուցանիշը: Միաժամանակ, անհրաժեշտ է նշել, որ 2003 - 2006 թթ. համախմբված բյուջեի պակասուրդը ընդհանուր առմամբ շուրջ 29 մլրդ դրամով պակաս է եղել ԱՀՌԾ-ով ծրագրված համապատասխան ցուցանիշից, որի արդյունքում այդ չափով կրճատվել են պետական ծախսեր կատարելու լրացուցիչ հնարավորությունները:

Աղյուսակ 13.1. Համախմբված բյուջեի շրջանակը 2002-2007 թթ.

Ցուցանիշներ	2002	2003		2004		2005		2006		2007
	Փաստ.	ԱՀՌԾ	Փաստ.	ԱՀՌԾ	Փաստ.	ԱՀՌԾ	Փաստ.	ԱՀՌԾ	Փաստ.	Փաստ.
<i>մլրդ դրամ</i>										
1. Ընդամենը եկամուտներ և շնորհներ	305.6	339.9	349.3	346.2	369.2	383	456.1	422.9	540.3	704.6
Ընդամենը եկամուտներ	258.1	279	297.6	312.9	355.5	349.6	444.5	390.7	525.7	680.1
Հարկային եկամուտներ	242.3	269.4	279.5	302.2	326.5	338.8	394.8	379.8	472.1	606.8
Ոչ հարկային և կապիտալ եկամուտներ	15.7	9.6	18.1	10.7	28.9	10.1	49.5	10.9	53.674	73.2
Շնորհներ	47.5	61	51.5	33.3	13.7	33.4	11.6	32.2	14.516	24.5
2. Պակասուրդի ֆինանսավորում (զուտ)	12.1	36.5	20.9	41.9	31.9	39.2	40.3	38.6	34.4	48.5
3. Ընդամենը տնօրինելի միջոցներ (1+2)	317.7	376.5	370.2	388.1	401.1	422.2	496.4	461.5	574.7	753.0
4. Ընդամենը ծախսեր և զուտ վարկավորում	317.7	376.5	370.2	388.1	401.1	422.2	496.4	461.5	574.7	753.0
Ընթացիկ ծախսեր	243.5	279	277.2	294	325.2	335.6	401.1	366.7	440.7	524.9
Կապիտալ ծախսեր	63.8	101	86.4	86.9	65.3	78.5	82.2	83.7	115.9	204.9
Զուտ վարկավորում	10.4	-3.5	6.6	7.2	10.5	8.2	13.1	11.1	17.9	23.3
<i>տոկոս՝ ՀՆԱ նկատմամբ</i>										
1. Ընդամենը եկամուտներ և շնորհներ	22.4	23.1	21.5	21.5	19.4	21.8	20.3	22.0	20.3	22.4
Ընդամենը եկամուտներ	18.9	18.9	18.3	19.4	18.6	19.9	19.8	20.4	19.8	21.6
Հարկային եկամուտներ	17.8	18.3	17.2	18.8	17.1	19.3	17.6	19.8	17.8	19.3
Ոչ հարկային և կապիտալ եկամուտներ	1.2	0.7	1.1	0.7	1.6	0.6	2.2	0.5	2.0	2.3
Շնորհներ	3.5	4.1	3.2	2.1	0.7	1.9	0.5	1.7	0.5	0.8
2. Պակասուրդի ֆինանսավորում (զուտ)	0.9	2.5	1.3	2.6	1.6	2.2	1.8	2	1.3	1.5
3. Ընդամենը տնօրինելի միջոցներ (1+2)	23.3	25.5	22.8	24.1	21	24	22.1	24.1	21.6	23.9
4. Ընդամենը ծախսեր և զուտ վարկավորում	23.3	25.5	22.8	24.1	21	24	22.1	24.1	21.6	23.9
Ընթացիկ ծախսեր	17.9	18.9	17.1	18.3	17	19.1	17.9	19.1	16.6	16.7
Կապիտալ ծախսեր	4.7	6.8	5.3	5.4	3.4	4.5	3.6	4.4	4.4	6.5
Զուտ վարկավորում	0.8	-0.2	0.4	0.4	0.6	0.5	0.6	0.5	0.7	0.7

Աղբյուրը՝ ՀՀ ԱՎԾ, ՀՀ ԱՍՀՆ, ՀՀ ֆինանսների նախարարություն, ԱՀՌԾ-ի կանխատեսումներ:

806. **Բյուջետային ռեսուրսների** հավելանքը 2003-2007 թթ. էապես ավելի մեծ կլիներ, եթե պահպանվեր ԱՀՌԾ-ի նախանշված հարկային եկամուտներ/ՀՆԱ հարաբերակցությունը: Իրականում, հարկային եկամուտներ/ՀՆԱ հարաբերակցության ցուցանիշի գծով 2002 թ.

համեմատ գրեթե առաջընթաց չի գրանցվել, այն դեպքում, երբ ԱՀՌԾ-ի շրջանակներում 2003-2007 թթ. ծրագրվել էր այդ ցուցանիշի տարեկան շուրջ 0.5 տոկոսային կետով բարելավում (տե՛ս Աղյուսակ 13.1): Եթե փորձենք գնահատականներ տալ այս գործոնի ազդեցության չափերին, ապա կարելի է փաստել, որ այս գործոնի պատճառով վերոնշյալ ժամանակահատվածում բյուջետային ռեսուրսների փաթեթը «թերհամալրվել» է շուրջ 170.0 մլրդ դրամով: Նման զարգացումների հիմնական պատճառներից մեկը հարկային և մաքսային վարչարարության ոչ բավարար մակարդակն է, որի բարելավմանն ուղղված միջոցառումները առաջիկա տարիներին ունենալու են առաջնահերթ գերակայություն:

807. 2003-2007 թթ. **ամախմբված բյուջեի ծախսերը** (ՀՆԱ նկատմամբ) նույնպես զիջում են ԱՀՌԾ-ով նախատեսված մակարդակները (տե՛ս Աղյուսակ 13.1): Պետական ծախսեր/ՀՆԱ հարաբերակցությունը 2003 և 2004 թվականներին 3 տոկոսային կետով, 2005 թ.՝ 2 տոկոսային կետով, իսկ 2006թ.՝ 2.8 տոկոսային կետով պակաս է եղել համապատասխան ծրագրային ցուցանիշներից:

808. **Կապիտալ ծախսերի** թրակատարման հիմնական պատճառը դրանց ֆինանսավորման նպատակով արտաքին աղբյուրներից նախատեսված դրամաշնորհների և վարկերի թերստացումն է /որը մասնակիորեն բացատրվում է նաև Կառավարության կողմից համապատասխան ծրագրերի թրակատարմամբ/: Այսպես, օրինակ՝ 2004-2005 թթ. ԱՀՌԾ-ի շրջանակներում ակնկալվող կապիտալ շնորհները չեն ստացվել, որի հետևանքով կապիտալ ծախսերի մասնաբաժինը համախմբված բյուջեի ընդհանուր ծախսերում 2002 թ. 18.7 տոկոսից նվազել է՝ 2005 թ. կազմելով 16.3 տոկոս:

809. Այդուհանդերձ, պետք է նշել, որ 2003-2007 թթ., ընդհանուր առմամբ, համախմբված **բյուջեի ծախսերի դինամիկան** համահունչ է եղել ԱՀՌԾ-ի ամրագրված գերակայություններին (տե՛ս Աղյուսակ 13.2): Այսպես, **սոցիալ-մշակութային ոլորտի** ծախսերի մասնաբաժինը համախմբված բյուջեի ծախսերում աճել է՝ 2002 թ. 36.4 տոկոսից մինչև 42.4 տոկոս՝ 2007 թվականին: Նման զարգացումները լիովին համահունչ են ԱՀՌԾ-ի այն դրույթին, համաձայն որի՝ բնակչությանը մատուցվող սոցիալական ծառայությունների մատչելիությունը և որակը բարձրացնելու նպատակով բյուջետային ռեսուրսների փաթեթում ծրագրվող ֆինանսական միջոցների հավելաճի էական մասը պետք է ուղղվի սոցիալ-մշակութային ոլորտին¹⁹²: Ընդ որում, կրթությանը հատկացված միջոցների տեսակարար կշիռը սոցիալ-մշակութային ծախսերի ընդհանուր ծավալում ունեցել է աճի առաջանցիկ միտում, որը հիմնականում բացատրվում է հանրակրթության ոլորտին հատկացումների նշանակալի աճով:

810. **Տնտեսության ճյուղերին** ուղղվող ֆինանսական միջոցների տեսակարար կշիռը համախմբված բյուջեի ընդհանուր ծախսերում 2003-2006 թթ. ունեցել է նվազման միտում՝ 2006 թ. արձանագրելով ԱՀՌԾ-ի համապատասխան ցուցանիշից շուրջ մեկ տոկոսային կետով պակաս ցուցանիշ: Դա հիմնականում բացատրվում է վերոնշյալ ժամանակահատվածում արտաքին աղբյուրներից ակնկալվող որոշակի ֆինանսական միջոցների թերստացմամբ: Այսպես, Լինսի հիմնադրամից, Համաշխարհային բանկից և այլ դոնորներից նախատեսվող միջոցների բացակայության կամ թերստացման պայմաններում էապես կրճատվել են ծրագրված կապիտալ ծախսերը, մասնավորապես՝ բնակարանային-կոմունալ ոլորտում և ճանապարհային տնտեսությունում:

811. **Ընդհանուր բնույթի պետական ծառայությունների** գծով մասհանումները 2003-2007 թթ. համախմբված բյուջեի ծախսերում ունեցած իրենց մասնաբաժնով գրեթե համապատասխանում են ԱՀՌԾ-ով նախանշված ցուցանիշներին: Սակայն բարեփոխումները, մասնավորապես պետական կառավարման ոլորտում, ծրագրվածից

¹⁹² Աղբյուրային հաղթահարման ռազմավարական ծրագիր, Երևան, 2003 թ., էջ 155-156:

ավելի դանդաղ են ընթացել: Այսպես, պետական կառավարման հատվածի աշխատողների աշխատավարձերը բարձրացվել են ծրագրվածից ավելի պակաս չափերով և շուրջ մեկ տարի ուշացումով:

812. Այսպիսով, 2003-2007 թթ., հիմնականում ի հաշիվ ԱՀՌԾ-ի շրջանակներում ծրագրվածի համեմատ տնտեսական աճի առաջանցիկ տեմպերի, բյուջետային ռեսուրսների փաթեթի հավելաճը անվանական արտահայտությամբ գերազանցել է ծրագրով նախատեսված ցուցանիշները (ավելի քան 200.0 մլրդ դրամով): Այդուհանդերձ, համախմբված բյուջեի եկամուտների և ծախսերի հարաբերակցությունը ՀՆԱ-ի նկատմամբ էապես հետ է մնացել ԱՀՌԾ-ի շրջանակներում ամրագրված համապատասխան ցուցանիշներից:

Աղյուսակ 13.2. ՀՀ 2003-2007 թթ. համախմբված բյուջեի ծախսերը գործառական դասակարգման խոշորացված խմբերով (տոկոս՝ ՀՆԱ նկատմամբ)

Ցուցանիշներ	2002	2003		2004		2005		2006		2007
	Փաստ.	ԱՀՌԾ	Փաստ.	ԱՀՌԾ	Փաստ.	ԱՀՌԾ	Փաստ.	ԱՀՌԾ	Փաստ.	Փաստ.
Ընդամենը ծախսեր	25	26.2	22.8	24.1	21	24	22.1	24.1	21.6	23.9
Սոցիալ-մշակութային ծախսեր, գիտություն	9.1	10	9	10.2	9	11	9.5	11.5	9.64	10.1
կրթություն	2.3	2.3	2.2	2.7	2.5	3	2.7	3.1	2.7	3.1
առողջապահություն	1.2	1.4	1.2	1.5	1.3	1.8	1.4	1.9	1.5	1.5
սոցիալական ապահովություն և սոցիալական ապահովագրություն	4.5	5	4.5	5.2	4.5	5.5	4.6	5.7	4.7	4.8
մշակույթ, տեղեկատվություն, սպորտ և կրոն	0.8	1.1	1.0	0.6	0.5	0.6	0.6	0.7	0.6	0.6
գիտություն	0.2	0.2	0.2	0.2	0.2	0.2	0.2	0.2	0.2	0.2
Ուժային ուղղություն	3.7	4.2	3.8	4.1	3.8	4.2	4.2	4.0	4.3	4.5
Տնտեսության ճյուղեր	5.2	7.4	5.8	5.4	3.6	4.4	3.4	4.2	3.6	5.0
բնակարանային-կոմունալ տնտեսություն	1.7	2.5	2.6	1.5	1	1.4	1.4	1.4	1.2	1.1
վառելիքային և էներգետիկ համակարգ	0.6	0.8	0.4	0.8	0.5	0.5	0.1	0.4	0.2	0.9
գյուղատնտեսություն, անտառային և ջրային տնտեսություն, ձկնաբուծություն	1.1	1.3	1.2	1.1	0.9	0.8	0.6	0.7	0.7	0.9
տրանսպորտ, ճանապարհային տնտեսություն և կապ	1.8	2.5	1.9	1.6	1.0	1.5	1.0	1.4	1.2	1.7
տնտեսության այլ ճյուղեր	0.1	0.3	-0.3	0.4	0.2	0.3	0.3	0.3	0.3	0.4
Ընդհանուր բնույթի պետական ծառայություններ	1.7	1.9	1.9	2.2	2.1	2.4	2.1	2.3	2.15	2.2
Պետական պարտքային պարտավորություններ	0.9	0.9	0.7	0.8	0.5	0.7	0.4	0.7	0.3	0.3
Այլ ուղղություններ	4.5	1.7	1	1.4	2.0	1.4	2.5	1.4	1.6	1.7

Աղբյուրը՝ ՀՀ ԱՎԾ, ՀՀ ԱՍՀՆ, ՀՀ ֆինանսների նախարարություն, ԱՀՌԾ-ի կանխատեսումներ:

13.2. 2008 - 2021 թթ. բյուջետային շրջանակի կանխատեսումներ

813. Համախմբված բյուջեի ցուցանիշների կանխատեսման հիմնական ուղեցույցը եղել է հարկային եկամուտների աճի ապահովումը (հիմնականում՝ ի հաշիվ հարկային վարչարարության արդյունավետության բարձրացման), պետական բյուջեի պակասուրդի աստիճանական կրճատումը և պարտքի կայունության ապահովումը: Բյուջեի հարկային եկամուտները (ՀՆԱ նկատմամբ) տարեկան կավելանան միջին հաշվով շուրջ 0.4 տոկոսային կետով, իսկ ոչ հարկային եկամուտների և շնորհների մասնաբաժինը համախմբված բյուջեի եկամուտների կառուցվածքում կունենա աստիճանական նվազման միտում: Ընդ որում, հարկային մուտքերի կառուցվածքում կլինեն որոշակի տեղաշարժեր. ուղղակի հարկատեսակներից մուտքերի կշիռը աստիճանաբար կաճի (ի հաշիվ անուղղակի հարկերի

կշռի նվազման)՝ արտացոլելով տնտեսության զարգացման արդյունքում բնակչության և տնտեսավարող սուբյեկտների եկամուտների աստիճանական աճի ազդեցությունը:

814. Հարկաբյուջետային քաղաքականությունը, համախմբված բյուջեի կանխատեսված սցենարը ըստ ֆիսկալ ազդակների ցուցանիշի¹⁹³ գնահատված է, որ միջնաժամկետում կլինի չեզոք¹⁹⁴: Ընդ որում, առաջիկա տարիներին, հաշվի առնելով նաև գնաճային ճնշումները, հարկաբյուջետային քաղաքականությունն ըստ ֆիսկալ ազդակների ցուցանիշի կլինի համեմատաբար զսպված, ինչը համահունչ է նաև 2009-2011թթ-ի ՄԺԾԾ-ով նախատեսված բյուջեի սցենարին:

815. Այս գնահատականների ներքո, հարկեր/ՀՆԱ ցուցանիշը 2021 թվականին կկազմի մոտ 25.6 տոկոս՝ 2007 թ. փաստացի 19.3 տոկոսի փոխարեն, իսկ ծախսեր/ՀՆԱ հարաբերակցությունը կաճի ավելի ցածր տեմպերով՝ 2021 թվականին կազմելով 29.2 տոկոս՝ 2007 թ. փաստացի 23.9 տոկոսի փոխարեն¹⁹⁵: Այս համապատկերում բյուջեի պակասուրդը (ՀՆԱ նկատմամբ) կտատանվի 1.5-2.5 տոկոսի շրջանակներում և չի վտանգի պետական պարտքի կայունության ցուցանիշները¹⁹⁶:

Աղյուսակ 13.3. 2008-2021 թթ. համախմբված բյուջեի հիմնական ցուցանիշների կանխատեսումը

Ցուցանիշներ	2006	2007	2008	2009	2010	2011	2015	2018	2021
	Փաստացի		կանխատեսում						
	տոկոս՝ ՀՆԱ նկատմամբ								
Ընդամենը եկամուտներ և շնորհներ	20.2	22.4	21.6	22.1	22.1	22.4	24.2	25.7	26.7
որից՝ հարկային եկամուտներ	17.7	19.3	20.1	20.8	21.2	21.6	23.5	24.6	25.6
շնորհներ	0.6	0.8	1.0	0.9	0.5	0.3	0.1	0.1	0.1
Ընդամենը ծախսեր	21.6	23.9	24.1	24.2	24.4	24.7	26.8	28.2	29.2
Ընթացիկ ծախսեր	16.7	16.7	17.9	18.1	18.6	19.0	21.5	23.0	24.2
Կապիտալ ծախսեր և գուտ վարկավորում	4.9	7.2	6.2	6.1	5.8	5.7	5.3	5.2	5.0
Հաշվեկշիռ	-1.4	-1.5	-2.4	-1.9	-2.3	-2.3	-2.4	-2.5	-2.5
Հուշագրային հոդված									
Հաշվեկշիռ՝ ըստ ՊՖՎ-ի 2001 թ. մեթոդաբանության	-0.7	-1.1	-1.7	-1.1	-1.5	-1.5	-1.7	-1.9	-2.0

816. Կանխատեսվում է նաև **ծախսերի կառուցվածքի** փոփոխություն՝ շեշտադրելով պետական ծախսերի սոցիալական ուղղվածությունը, մասնավորապես՝ կրթության, առողջապահության և սոցիալական պաշտպանության ծախսերի աճի ուղղությամբ: Պետական կապիտալ ներդրումների ծավալները ՀՆԱ-ի նկատմամբ, թեև դրսևորելու են որոշ նվազման միտում, այդուհանդերձ, ծրագրվող ժամանակահատվածում ունենալու են նշանակալի մակարդակ՝ 2014 թ. սկսած և մինչև ծրագրավորվող ժամանակաշրջանի ավարտը տարեկան կազմելով ՀՆԱ-ի նկատմամբ 4.6 տոկոս: Միևնույն ժամանակ, պետական ներդրումների արդյունավետության բարձրացման առումով, հատուկ շեշտադրվելու են պետական ներդրումների գնահատման և ծրագրման ոլորտում կարողությունների հզորացման հարցերը: Կարողությունների համապատասխանության

¹⁹³ Ֆիսկալ ազդակների մանրամասն նկարագրությունը տե՛ս ՀՀ ԿԲ 2000թ-ի հրապարակումներում:

¹⁹⁴ Հարկաբյուջետային ազդակի ցուցանիշը (որը ծախսերի և եկամուտների ազդակների հանրագումարն է) ցույց է տալիս հարկաբյուջետային քաղաքականության ամբողջական պահանջարկի վրա առաջին կարգի ազդեցությունը (ընդլայնող, չեզոք կամ զսպող): Քանի որ տնտեսության ցիկլայնության երկարաժամկետ գնահատումը հնարավոր չէ ՀՀ տնտեսության համար թվային շարքերի խիստ կարճ լինելու պատճառով, ուստի հնարավոր չէ գնահատել հարկաբյուջետային քաղաքականության հակացիկլիկ սցենար (տնտեսական վերելքի ժամանակ զսպող, իսկ անկման ժամանակ ընդլայնող հարկաբյուջետային քաղաքականություն):

¹⁹⁵ Ներառված են կենսաթոշակային համակարգի բարեփոխումների ծրագրի հետ կապված լրացուցիչ ծախսերը

¹⁹⁶ Նշենք, որ կանխատեսման ողջ ժամանակահատվածի ընթացքում պետական հատվածի ցուցանիշները (պակասուրդ/ՀՆԱ և արտաքին պարտք/ՀՆԱ), ինչպես նաև գնաճը գտնվելու են Մասստրիխտի չափանիշների շրջանակում:

պարագայում, պետությունը մտադիր է դիտարկել լրացուցիչ կապիտալ ծախսերի (տարեկան՝ ՀՆԱ-ի նկատմամբ 0.5-1 տոկոսի չափով) իրականացման նպատակահարմարությունը՝ ի հաշիվ լրացուցիչ փոխառու միջոցների ներգրավման:

817. Ստորև բերվող աղյուսակում ներկայացված է համախմբած բյուջեի ծրագրվող ռեսուրսային շրջանակի միջոցառումների բաշխումը՝ ըստ բյուջեի ծախսերի գործառնական դասակարգման խոշորացված խմբերի:

Աղյուսակ 13.4 Համախմբված բյուջեի ծախսերի բաշխումը՝ ըստ գործառնական դասակարգման խոշորացված խմբերի

	2009	2012	2015	2018	2021
	տոկոս՝ ՀՆԱ-ի նկատմամբ				
Ընդամենը ծախսեր	24.1%	25.2%	26.9%	28.2%	29.2%
Ա Ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ (ներառյալ՝ պետական պարտքի գծով գործառնությունները)	3.6%	3.5%	3.6%	3.3%	3.2%
Բ Պաշտպանություն, հասարակական կարգ, անվտանգություն և դատական գործունեություն	4.9%	5.0%	5.0%	5.0%	5.0%
Գ Տնտեսական ծառայություններ	2.6%	1.8%	2.0%	2.2%	2.6%
Գյուղատնտեսություն, անտառային տնտեսություն, ձկնորսություն և որսորդություն, բնապահպանություն	0.6%	0.6%	0.6%	0.7%	0.7%
Տրտամսպորտ, ճանապարհային տնտեսություն և կապ	1.2%	1.0%	1.1%	1.2%	1.5%
Այլ տնտեսական ծառայություններ	0.8%	0.1%	0.3%	0.3%	0.4%
Դ Բնակարանային շինարարություն և կոմունալ ծառայություններ	0.9%	0.6%	0.4%	0.4%	0.6%
Ե Սոցիալական ծառայություններ (ներառյալ գիտությունը)	11.6%	13.8%	14.9%	16.0%	16.1%
Սոցիալական պաշտպանություն***	6.1%	7.5%	7.8%	8.4%	7.6%
Առողջապահություն	1.6%	2.2%	2.5%	2.9%	3.5%
Կրթություն	3.2%	3.6%	4.0%	4.1%	4.5%
Այլ ծառայություններ	0.7%	0.6%	0.6%	0.6%	0.6%
Զ Հիմնական խմբերին չհասվող ծախսեր	0.5%	0.2%	0.2%	0.2%	0.2%
Է Չբաշխված ծախսեր	0.1%	0.3%	0.7%	1.1%	1.4%

* Ծախսերի մեջ ներառված են վարկավորման գործառնությունները:

** Ծախսերի մակարդակը ոչ ֆինանսական ակտիվների օտարումից մուտքերի չափով նվազեցված չէ:

*** Ներառված են մաս կենսաթոշակային կուտակային համակարգի գծով ծախսերը:

818. Համախմբված բյուջեի պակասուրդի ճշգրտված կանխատեսումները որոշ չափով բարձր են ԱՀՌԾ-ի ցուցանիշներից: Դա բացատրվում է նաև նրանով, որ ԿԶԾ-ի մակրոտնտեսական շրջանակում, ինչպես արդեն նշվել է, ներառվել է նաև կենսաթոշակային նոր համակարգի ներդրման սցենարը, ըստ որի, բյուջեի ծախսերի հաշվին կկատարվի անհատական կենսաթոշակային 5% վճարները: Նշված վճարները գնահատված է, որ կանխատեսվող ժամանակահատվածում միջինում կկազմեն ՀՆԱ 0.2-0.4%-ը, ինչը կֆինանսավորվի պետական արժեթղթերի թողարկման հաշվին¹⁹⁷: Մյուս կողմից, ՀՆԱ-ի փաստացի աճի ցուցանիշները, էսպես գերազանցելով ԱՀՌԾ-ով նախատեսված տեմպերը, նշանակալիորեն բարելավել են պետական պարտքի ցուցանիշները: Դա, իր հերթին, հնարավորություն է տալիս ներգրավվելիք ռեսուրսների հաշվին որոշ չափով ավելացնելու

¹⁹⁷ Նախնական ակնկալվում է, որ կենսաթոշակային նոր համակարգը կներդրվի 2010 թվականից: Ընդ որում, պետական ներքին պարտքի թողարկման հաշվին բյուջեից կատարվող 5% կենսաթոշակային վճարների ֆինանսավորման սցենարն ունի երկու բացատրություն. նախ կենսաթոշակային համակարգի ներդրումը հնարավորություն կտա ներքին ֆինանսական համակարգում զգալի դրամային միջոցներ կուտակել, որը կարող է ներդրվել պետական արժեթղթերում, երկրորդ՝ նշված սցենարի ներքո կարգաճանա նաև պետական ներքին պարտքի շուկան:

պետական ծախսերը՝ առանց էապես ծանրացնելու պետական պարտքի բեռը: Այդ մասին են վկայում արտաքին պարտքի մարման կայուն ցուցանիշները ծրագրավորվող ժամկետի ընթացքում (ՀՆԱ նկատմամբ 0.2 0.3 տոկոս):

Աղյուսակ 13.5. 2008-2021 թթ. համախմբված բյուջեի պակասուրդի և դրա ֆինանսավորման կանխատեսումներ (տոկոս՝ ՀՆԱ նկատմամբ)

Ցուցանիշներ	2006	2007	2008	2009	2010	2011	2015	2018	2021
	Փաստացի.		կանխատեսում						
Պակասուրդ*	-1.4	-1.5	-2.8	-1.9	-2.3	-2.3	-2.4	-2.5	-2.5
Ֆինանսավորում	1.4	1.5	2.8	1.9	2.3	2.3	2.4	2.5	2.5
Ներքին աղբյուրներ	0.4	-0.3	1.3	0.7	0.8	0.9	0.8	1.0	1.1
Արտաքին աղբյուրներ	1.0	1.8	1.5	1.2	1.5	1.4	1.6	1.5	1.4

* Ըստ ԱՄՀ-ի Պետական ֆինանսների վիճակագրության 1986 թ. մեթոդաբանության:

13.3. ՀՀ պետական պարտքը

819. Պետական պարտքի քաղաքականությունը ուրվագծվել է՝ ելնելով հետևյալ սկզբունքներից.

- § Ընդհանուր պետական պարտքը կգտնվի կառավարելի սահմաններում՝ հաշվի առնելով պարտքի ընթացիկ կայունության ցուցանիշը (վճարունակության պայման ¹⁹⁸:
- § Պետական պարտք/ՀՆԱ հարաբերակցություն ցուցանիշը գնահատված է փոքր-ինչ պահպանողական սցենարի ներքո՝ հաշվի առնելով երկրների համաշխարհային փորձը, երբ տնտեսությունում բարեփոխումների կատարման ժամանակ, սովորաբար, առաջանում են լրացուցիչ ծախսեր, որոնք պետությունը ստիպված է լինում կրել լրացուցիչ պարտք թողարկելու միջոցով՝ բարեփոխումներն ավարտին հասցնելու համար: Վերջիններս շատ երկրներում ավարտվում են պարտքի անկայուն մակարդակ ունենալով ¹⁹⁹: ՀՆԱ 1-2%-ի սահմաններում նմանատիպ ծախսերի ի հայտ գալու դեպքում պարտքի կայունությունը ՀՀ-ում չի վտանգվի:
- § Պետական պարտքի կառուցվածքում կավելանա ներքին պարտքի մասնաբաժինը, որն ավելի կառավարելի կդարձնի պարտքի արտարժույթային ռիսկը:
- § Հաշվի առնելով այն հանգամանքը, որ ՀՀ տնտեսությունը հետայսու համարվում է միջին եկամուտով երկիր, որի արդյունքում երկիրը լրացուցիչ արտաքին պարտք կարող է ներգրավել շուկայական պայմաններով, ուստի նախանշված սցենարից դուրս լրացուցիչ փոխառու միջոցներ կներգրավվեն, եթե առկա լինեն որոշակի գրավականներ, որոնց դեպքում միջնաժամկետ հատվածում պարտքի կայունությունը չի վտանգվի:

820. 2003-2007 թթ. ՀՀ պետական պարտքը դոլարային արտահայտությամբ աճել է՝ 2003 թ. 1,174 մլն ԱՄՆ դոլարից մինչև 1,672.5 մլն ԱՄՆ դոլար՝ 2007 թվականին: Այդուհանդերձ,

¹⁹⁸ Վճարունակության պայմանի ցուցանիշը հաշվարկված է Բլանչարդի կողմից զարգացված առաջնային կայունության պայման է հանդիսանում առաջնային պակասուրդի այնպիսի մակարդակը՝ տնտեսական աճի և տոկոսադրույքների որևէ վարքագծի պայմաններում, որն անհրաժեշտ է պարտք/ՀՆԱ ցուցանիշը կայունացնելու համար:

¹⁹⁹ Վերոնշյալի համար լավագույն օրինակ կարող է հանդիսանալ Լատինական Ամերիկայի երկրների կենսաթոշակային բարեփոխումները, երբ բյուջեի գնահատված ծախսերը ՀՆԱ 1-2%-ի չափով ավելի ցածր

դրամային արտահայտությամբ, պետական պարտքին բնորոշ է եղել անկման միտում՝ 2007 թ. 485.1 մլրդ դրամ՝ 2003 թ. 664.4 մլրդ դրամի փոխարեն, ինչը գերազանցապես բացատրվում է ՀՀ դրամի արժևորմամբ: Դրա հետ մեկտեղ, ծրագրվածի համեմատ ՀՆԱ աճի առաջանցիկ տեմպերը հանգեցրել են պետական պարտքի ցուցանիշների էական բարելավման (տե՛ս Աղյուսակ 13.6): Մասնավորապես, 2007 թվականի վերջի դրությամբ, 2002 թ. համապատասխան ժամանակահատվածի համեմատ, պետական պարտք-ՀՆԱ հարաբերակցությունը ավելի քան 2.5 անգամ նվազել է: Ընդ որում, արտաքին պարտքի տեսակարար կշիռը պետական պարտքի ընդհանուր կառուցվածքում էապես նվազել է՝ հիմնականում ՀՀ դրամի արժևորման պատճառով:

Աղյուսակ 13.6. ՀՀ պետական պարտքը 2002-2007 թթ. (տոկոս՝ ՀՆԱ նկատմամբ)

Ցուցանիշներ	2002		2003		2004		2005		2006		2007
	Փաստ	ԱՀՌԾ	Փաստ	ԱՀՌԾ	Փաստ	ԱՀՌԾ	Փաստ	ԱՀՌԾ	Փաստ	Փաստ	
ՀՀ պետական պարտքը	46.0	42.7	41.8	43.0	35.7	40.7	24.7	38.5	21.9	17.8	
Ներքին պարտք	2.7	2.7	2.7	2.6	2.7	2.6	2.3	2.6	3.0	2.0	
Արտաքին պարտք	43.3	40.0	39.1	40.4	33.1	38.1	22.4	35.9	18.9	15.8	

Աղբյուրը՝ ՀՀ ԱՎԾ, ՀՀ ֆինանսների նախարարություն, ԱՀՌԾ-ի կանխատեսումներ:

821. **Ներքին պետական պարտքի** ժամկետայնության երկարաձգման և էժանացման նպատակով 2004 թ. սեպտեմբերից թողարկվել են միջին ժամկետայնության արժեկտրոնային պարտատոմսեր և երկարաժամկետ արժեկտրոնային պարտատոմսեր: 2003-2006 թթ. նկատվել է ներքին պարտքի (ՆՊՊ) կառավարման արդյունավետության բարձրացում, որը բնորոշվում է դրա սպասարկման ծախսերի աստիճանական նվազմամբ և ներքին աղբյուրների հաշվին պետական բյուջեի պակասուրդի ֆինանսավորման հնարավորությունների ավելացմամբ (Աղյուսակ 13.7):

Աղյուսակ 13.7. Ներքին պետական պարտքի գծով գործառնությունները 2002-2006 թթ., մլն դրամ

Տարի	Պետական պարտատոմսերի տեղաբաշխում	Պարտատոմսերի տեղաբաշխումից հասույթ	Պարտատոմսերի մարում	ՆՊՊ-ի սպասարկում	Պակասուրդի ֆինանսավորում
2002	41,883.8	38,202.8	34,255.5	5,955.3	3,947.3
2003	43,300.0	40,267.0	37,963.7	5,587.3	2,303.3
2004	43,900.0	44,018.2	38,435.5	5,408.2	5,582.7
2005	46,800.0	45,701.6	39,333.4	5,066.4	6,368.1
2006	32,253.6	32,474.9	25,392.1	5,251.1	7,082.8

Աղբյուրը՝ ՀՀ ֆինանսների նախարարություն, «ՀՀ պետական պարտքը 2006 թ.: Տարեկան հաշվետվություն», Երևան, 2007 թ.:

822. Ներքին պարտքի կառավարման բարելավումը բնորոշող ցուցիչներից մեկն էլ այն է, որ 2004 - 2006 թվականներին նշանակալիորեն ավելացել է միջնաժամկետ և երկարաժամկետ պարտատոմսերի մասնաբաժինը պետական պարտատոմսերի ընդհանուր ծավալում: Առաջիկա տարիներին նախատեսվում է ավելացնել համախմբված բյուջեի պակասուրդի ֆինանսավորումը ներքին աղբյուրների հաշվին, որը բնականաբար կանդրադառնա նաև ներքին պետական պարտքը բնութագրող ցուցանիշների մակարդակի վրա: Այսպես, կառավարության ներքին պարտք/ՀՆԱ հարաբերակցությունը կաճի 2007 թ. 2.4 տոկոսից մինչև 4.2 տոկոս՝ 2011 թ., 4.4 տոկոս՝ 2015 թ. և 4.5 տոկոս՝ 2021 թվականին (տե՛ս Աղյուսակ 13.8):

823. **ՀՀ արտաքին պետական պարտքը** բնութագրող ցուցանիշների բարելավման միտումը շարունակվել է նաև 2003-2006 թթ. (տե՛ս Գծանկար 13.1): Ինչպես արդեն նշվեց, ՀՆԱ նկատմամբ արտաքին պետական պարտքի հարաբերակցության նվազումը ոչ միայն ՀՆԱ առաջանցիկ աճի և արտաքին պետական պարտքի նվազման, այլ նաև ԱՄՆ դոլարի նկատմամբ ՀՀ դրամի արժևորման արդյունք է: ՀՀ արտաքին պետական պարտքը 1999 թվականից ի վեր աճել է ի հաշիվ արտոնյալ վարկերի: Այդ միտումը շարունակվել է նաև

2003-2006 թթ., և 2006 թ. վերջին արտոնյալ վարկերի տեսակարար կշիռը արտաքին պարտքի ընդհանուր կառուցվածքում կազմել է շուրջ 98.9 տոկոս:

Աղյուսակ 13.8. ՀՀ պետական պարտքը բնութագրող ցուցանիշների կանխատեսումներ


Ցուցանիշներ	2005	2006	2007	2008	2009	2010	2011	2015	2018	2021
	Փաստ.	Փաստ.	Նախն.	կանխատեսում						
ՀՀ պետական պարտքը, տոկոս՝ ՀՆԱ նկատմամբ	24.7	21.9	17.8	16.0	15.9	16.4	17.0	19.8	21.9	23.9
Արտաքին պետական պարտքը, տոկոս՝ ՀՆԱ նկատմամբ	22.4	18.9	15.8	13.5	13.2	13.2	13.3	14.5	15.3	15.9
Ներքին պետական պարտքը, տոկոս՝ ՀՆԱ նկատմամբ	2.3	3.0	2.0	2.4	2.7	3.2	3.7	5.3	6.6	8.0
Արտաքին պարտքի սպասարկում / ապրանքների և ծառայությունների արտահանում, տոկոս	2.4	1.6	1.56	1.38	1.66	1.57	1.42	1.17	1.01	0.781
Պետական պարտքի տոկոսավճարներ / հարկային եկամուտներ, տոկոս	2.5	2.1	1.8	1.51	1.82	1.99	2.11	2.32	2.4	2.9
Պետական պարտքի տոկոսավճարներ / համախմբված բյուջեի ծախսեր, տոկոս	2.0	1.7	1.5	1.26	1.56	1.73	1.84	2.03	2.24	2.5

824. Արտաքին պարտքի սպասարկման ռիսկայնության գնահատման և կառավարման առումով կարևորվում է արտաքին պարտքը ձևավորող միջոցների արժուքային կազմը: Սկսած 2001 թվականից, ՀՀ արտաքին պարտքը կազմված է հետևյալ չորս արտարժույթներով տրամադրված վարկերից՝ ԱՄՆ դոլար, հատուկ փոխառության իրավունքներ (SDR), եվրո և ճապոնական իեն: Պետք է փաստել, որ վերջին տարիներին SDR-ի նկատմամբ ԱՄՆ դոլարի և ԱՄՆ դոլարի նկատմամբ ՀՀ դրամի որոշակի արժևորումը բավականին նպաստավոր են եղել արտաքին պարտքի սպասարկման առումով:

825. Առաջիկա տարիներին, կապված բյուջեի պակասուրդի ֆինանսավորման ներքին աղբյուրների հարաբերական աճի հետ, արտաքին պարտքի տեսակարար կշիռը ՀՆԱ-ում որոշ չափով կնվազի, մինչդեռ երկարաժամկետ հատվածում այն կունենա աստիճանական աճի միտում (տե՛ս Աղյուսակ 13.8): Արտաքին պարտքի զուտ ներկա արժեք-ՀՆԱ հարաբերակցությունը առաջիկա երկու տարիների ընթացքում դեռևս կնվազի, իսկ այնուհետև աստիճանաբար կաճի՝ պայմանավորված արտաքին պարտքի կառուցվածքում ոչ արտոնյալ վարկերի մասնաբաժնի ավելացմամբ, սակայն ծրագրվող ժամանակաշրջանի վերջում չի գերազանցի ՀՆԱ-ի 13 տոկոսը²⁰⁰:

²⁰⁰ Սույն կանխատեսումը արվել է՝ հաշվի առնելով նաև ԱՄՆ-ի և ՀԲ-ի կողմից կատարված ՀՀ պետական

Պատկեր 13.1. ՀՀ արտաքին պետական պարտքի ցուցանիշների դինամիկան 1999-2006 թթ.



Աղբյուրը՝ ՀՀ ֆինանսների նախարարություն:

826. Ընդհանուր առմամբ, ինչպես երևում է Աղյուսակ 13.8-ից, ՀՀ պետական պարտքը ունի աստիճանական աճի միտում: Այսպես, պետական պարտքի տոկոսավճարների հարաբերակցությունը համախմբված բյուջեի հարկային եկամուտների նկատմամբ և մասնաբաժինը պետական ծախսերի կառուցվածքում կապելանա և 2021թ. կկազմի համապատասխանաբար 2.94 և 2.54 տոկոս: Միևնույն ժամանակ, պետական պարտքի սպասարկման ծախսերի տեսակարար կշիռը սպրանքների և ծառայությունների արտահանման ծավալում կունենա նվազման միտում, որը բնութագրում է, մասնավորապես, արտաքին պարտքի սպասարկման համար անհրաժեշտ արտարժույթի ստացման առաջանցիկ տեմպերը դրանց նկատմամբ եղած պահանջարկի համեմատ:

827. Արդեն իսկ 2005 թվականից ՀՀ պետական պարտքի տեսակարար կշիռը ՀՆԱ-ում փոքր է 25 տոկոսից: 2008 թ. սկսած՝ ՀՀ պետական պարտք-ՀՆԱ հարաբերակցությունը կունենա աճի միտում՝ 2021 թ. կազմելով 23.9 տոկոս: Ցուցանիշի նման մակարդակը վկայում է, որ ծրագրվող ժամանակահատվածի ողջ ընթացքում Հայաստանը կշարունակի դասվել առավել ցածր պարտքային բեռ ունեցող երկրների շարքը²⁰¹:

828. Պետական պարտքի վերոնշյալ սցենարի իրագործման հետ կապված ռիսկերը առնչվում են հետևյալ հիմնական հանգամանքների հետ.

- § Միջազգային արժույթի (նախ և առաջ՝ ԱՄՆ դոլարի) նկատմամբ ՀՀ դրամի փոխարժեքի աննախադեպ արժեզրկում.
- § Միջազգային շուկայում վարկային ռեսուրսների էական թանկացում.
- § ԿԶԾ-ի մակրոտնտեսական և հարկաբյուջետային սցենարի խախտման հետևանքով համախմբված բյուջեի բացասական հաշվեկշռի զգալի մեծացում:

829. Նման ռիսկերից խուսափելու լավագույն երաշխիքներից մեկը ԿԶԾ-ում ներկայացված պետական ֆինանսական համակարգի բարեփոխումների շարունակական և արդյունավետ իրագործումն է:

²⁰¹ Այդպիսիք են համարվում այն երկրները, որոնց պետական պարտք/ՀՆԱ հարաբերակցությունը չի գերազանցում 25 տոկոսը:

14. Ծրագրի մոնիթորինգ, գնահատման համակարգ և վերանայում

830. Աղքատության հաղթահարման ռազմավարության իրականացման և վերջինիս՝ աղքատության վրա արդյունքային ազդեցության գնահատման համակարգի ներդրման նպատակով 2004թ. նոյեմբերին ՀՀ Կառավարության թիվ 1780-Ա որոշմամբ հավանություն տրվեց ԱՀՌԾ-ի մոնիթորինգի և գնահատման համակարգի հայեցակարգին: Այնուհետև հաստատվեցին նաև ՀՀ կառավարման պետական մարմինների կողմից ներկայացվելիք հաշվետվությունների ձևը և վերջիններիս ներկայացվող պահանջները: Հաստատված հայեցակարգը հնարավորություն է ընձեռում ծրագրի իրականացման ընթացքում իրատեսական գնահատականներ տալ գործընթացին, անհրաժեշտ բազա հանդիսանալ գերակա քաղաքականությունների և միջոցառումների ծրագրերում ճշգրտումներ և փոփոխություններ կատարելու համար:

831. ԱՀՌԾ-ի մոնիթորինգի ցուցանիշների գործող համակարգը ներառում է 177 ցուցանիշներ, որից 36-ը նպատակային են, իսկ 141-ը՝ գործոնային, որոնք համախմբված են հետևյալ վեց առանձին խմբերում՝ Աղքատության կրճատում և բարեկեցության աճ, Կրթություն, Առողջապահություն, Հիմնական հանրային ծառայություններ և բնակարանային պայմաններ, Քաղաքացիական մեկուսացվածություն և անհավասարություն, Բնապահպանական կայուն զարգացում:

832. ՀՀ պետական կառավարման մարմինների կողմից ներկայացված 2001-2004թթ. ցուցանիշների ամփոփման ընթացքում արդեն իսկ հանդիպել են որոշակի դժվարություններ, ինչը հնարավորություն չի տվել ամբողջությամբ հավաքագրելու ԱՀՌԾ-ի մոնիթորինգի ցուցանիշների 2001-2004թթ. վերաբերյալ տեղեկատվությունը, ինչպես նաև բոլոր ցուցանիշների գծով սահմանելու հաջորդող տարիների համար նպատակային արժեքները: ԱՀՌԾ-ի իրականացման հաշվետվությունում արձանագրվել է, որ 177 ցուցանիշներից մոտ 40 ցուցանիշների գծով տեղեկատվությունն ամբողջությամբ բացակայել է, իսկ 30-ից ավելի ցուցանիշների գծով տեղեկատվությունը որակյալ և ամբողջական չի եղել: Այսինքն՝ մոնիթորինգի համակարգը գործել է ցուցանիշների 60 տոկոսով, որոնց մի մասը ևս արժանահավատ չի եղել: Միաժամանակ, մոնիթորինգի կոնկրետ ցուցանիշների հավաքագրման, ամփոփման և վերլուծման համար պետական կառավարման մարմիններում ձևավորված չեն մասնագիտական առանձնացված միավորներ, ինչը կանոնավոր հավաքագրում չի ապահովել: Բացի այդ, մոնիթորինգի ցուցանիշների գնահատման միասնական մեթոդաբանության բացակայությունը դժվարացրել է համադրելի ցուցանիշների համակարգումը:

833. ԱՀՌԾ-ի իրականացման վերաբերյալ պետական կառավարման մարմինների կողմից ներկայացվող հաշվետվությունների ամփոփումը ցույց է տվել, որ հաշվետվություններն իրենց ձևաչափով բավականին տարբերվում են միմյանցից՝ միասնական պահանջների առկայության պարագայում: Դա դժվարացնում է ինչպես ԱՀՌԾ-ի իրականացման արդյունքների գնահատումը, այնպես էլ գործուն հիմք չի կարող հանդիսանալ ծրագրի վերանայումների համար՝ նպատակայնության բարձրացման առումով:

834. ԱՀՌԾ-ի վերանայմանը զուգահեռ, կարևորվել է նաև ծրագրի մոնիթորինգի և գնահատման համակարգի կատարելագործումը: Այն ենթադրում է ինչպես ինստիտուցիոնալ համակարգի կատարելագործում, այնպես էլ ցուցանիշների համակարգի վերանայում, որոնք պետք է զուգակցվեն կարողությունների հզորացման նպատակային ու հասցեական միջոցառումներով:

835. Ծրագրի մոնիթորինգի և գնահատման համակարգի կատարելագործման և ԿԶԾ-ի առանձնահատկությունների արտացոլման առումով կարևոր նշանակություն է ստանում ինչպես պետական, այնպես էլ ոչ պետական հատվածներում համապատասխան մաս-

նագիտական կարողությունների ձևավորման և զարգացման խնդիրը՝ ինչպես մեթոդական աջակցության, այնպես էլ գործնական վերապատրաստման դասընթացների կազմակերպման տեսքով: Այդ առումով, արդեն իսկ դոկոր հանրության առանձին ներկայացուցիչներ Կառավարությանն իրենց տեխնիկական աջակցության պատրաստակամությունն են հայտնել:

836. ԿԶԾ-ի մոնիթորինգի և գնահատման համակարգի ներդրումը և կատարելագործումը ենթադրում է որոշակի միջոցառումներ հետևյալ հիմնական ուղղություններով՝ ինստիտուցիոնալ համակարգի ձևավորում, ցուցանիշների գնահատման համակարգի կատարելագործում և համապատասխան կարողությունների հզորացում, ինչպես նաև ոչ պետական հատվածի մոնիթորինգի և գնահատման կարողությունների ձևավորում:

837. ԿԶԾ-ի մոնիթորինգի ինստիտուցիոնալ կառույցի ներդրումը պետք է ապահովի մոնիթորինգի համապատասխան միավորների ձևավորում պետական կառավարման մարմիններում, անհրաժեշտ տեղեկատվական հոսքերի կանոնակարգում, ինչպես նաև մոնիթորինգի միավորների համակարգման մեխանիզմների ձևավորում: Ներքին և արտաքին տեղեկատվական և հաշվետվական պարբերական հոսքերի կանոնակարգմամբ հնարավոր կլինի ձևավորել ԿԶԾ-ի իրականացման գնահատման, ինչպես նաև հաջորդող տարիների համար հիմնական նպատակադրումների առաջադրման ու վերջիններիս հնարավոր վերանայման համար անհրաժեշտ տեղեկատվական իրատեսական և որակյալ բազա:

838. ԿԶԾ-ի մոնիթորինգի և գնահատման գործընթացների կատարելագործման նպատակով Կառավարությունը նախատեսում է իրականացնել ԿԶԾ-ի մոնիթորինգի և գնահատման առավել արդյունավետ համակարգի ներդրում, որի համար անհրաժեշտ է ինստիտուցիոնալ կառույցի ձևավորմանը զուգընթաց կատարելագործել գնահատման ցուցանիշների համակարգը: ԿԶԾ-ի մոնիթորինգի և գնահատման համակարգի ներդրումը ենթադրում է ցուցանիշների վերանայված համակարգ, որը պետք է ուղեկցվի ցուցանիշների հավաքագրման, գնահատման և վերլուծության համապատասխան մեթոդաբանությամբ: Դա հնարավորություն կտա միասնականություն ապահովելու պետական կառավարման տարբեր մարմիններից ստացվող տեղեկատվության ներկայացման ձևաչափի և բովանդակության առումով: Միաժամանակ, այդ մեթոդաբանությունը կողմնորոշիչ կլինի մոնիթորինգի միավորների, կարողությունների հզորացման միջոցառումների համար:

839. ԿԶԾ-ի մոնիթորինգի և գնահատման արդյունավետ համակարգի կայացման համար անհրաժեշտ է պետական կառավարման մարմինների կողմից իրականացվող մոնիթորինգի և գնահատման մեխանիզմը համալրել այլընտրանքային հետադարձ կապի ապահովման տարրերով: Մասնավորապես, ոչ պետական հատվածին ոլորտային որակական գնահատումներ իրականացնելու պատվիրակմամբ՝ նախապես ձևավորելով համապատասխան մեթոդաբանություն և կարողություններ: Այս առումով ևս, դոկոր հանրության առանձին ներկայացուցիչներ Կառավարությանն իրենց տեխնիկական աջակցության պատրաստակամությունն են հայտնել:

840. ԿԶԾ-ի մոնիթորինգի և գնահատման համակարգը պետք է ապահովի ոչ միայն ծրագրի առաջընթացի գնահատում և համապատասխան միջոցառումների հետևանքների և տնտեսական զարգացման ու բնակչության բարեկեցության փոփոխության վրա ազդեցության չափում, այլ նաև պետք է ներառի ԿԶԾ-ի մասնակցային գործընթացում ընդգրկված շահառուների համար համապատասխան տեղեկատվության մատչելիության չափանիշներ՝ միաժամանակ ընդլայնելով մոնիթորինգի և գնահատման համակարգի տեղեկատվության օգտագործումն ինչպես վերլուծական նշանակությամբ, այնպես էլ ոլորտային կանխատեսումների և քաղաքականության մշակման աշխատանքներում:

841. Կառավարությունը, դոնոր հանրության օժանդակությամբ, մասնավորապես, հիմք ընդունելով ԱՀՌԾ-ի իրականացման հաշվետվություններում ներկայացված՝ մոնիթորինգի համակարգի թերություններն ու խնդիրները, ԿԶԾ-ի իրականացման մոնիթորինգի և գնահատման գործընթացի կատարելագործման նպատակով, ԱՀՌԾ մոնիթորինգի ցուցանիշների համակարգի հայեցակարգից անցում պետք է կատարի ԿԶԾ-ի մոնիթորինգի և գնահատման գործուն համակարգի ներդրմանը, որը սկզբում փորձնական կիրականացվի նախարարություններում և գերատեսչություններում, այնուհետև՝ երկու տարվա ընթացքում կներդրվի ամբողջ պետական կառավարման համակարգում:

842. ԿԶԾ-ի մոնիթորինգի և գնահատման միասնական համակարգը պետք է սահմանի և կանոնակարգի՝

ծրագրի մոնիթորինգի ցուցանիշների և նպատակադրումների համակարգը և վերանայման մեխանիզմները,

ցուցանիշների մոնիթորինգի և գնահատման անհրաժեշտ մեթոդաբանությունը,

ցուցանիշների հավաքագրման, ամփոփման և վերլուծության մեթոդաբանությունը՝ ապահովելով գեներային բաղադրիչը,

համապատասխան հաշվետվությունների ձևաչափերն ու վերջիններիս ներկայացող տեխնիկական պահանջները,

ծրագրի մոնիթորինգի համակարգում ներգրավված կողմերի հիմնական գործառույթներն ու վերջիններիս կարողությունների հզորացման միջոցառումները,

զարգացմանն աջակցող գործընկերների կողմից Հայաստանում իրականացվող՝ ԿԶԾ-ից բխող հիմնական ծրագրերի մոնիթորինգի և գնահատման մեխանիզմը,

ծրագրի իրականացման և մոնիթորինգի գործընթացում քաղաքացիական հասարակության մասնակցության և արդյունքների մասին հանրության իրազեկման մեխանիզմները:

843. ՀՀ Կառավարությունը կարևորում է ԿԶԾ-ի մոնիթորինգի և գնահատման գործընթացին քաղաքացիական հասարակության մասնակցությունը՝ մասնակցային ինստիտուտի ստեղծման միջոցով: Այն ապահովելու է քաղաքացիական հասարակության՝ ծրագրի իրականացման գործընթացի վերաբերյալ գնահատականների տրամադրումը ծրագրի իրականացման համար պատասխանատու կառույցներին՝ իրականացման հաշվետվության ժամանակ վերջիններիս ուսումնասիրության և արդյունքների հաշվետվության մեջ ներառման նպատակով:

844. Կայուն զարգացման ծրագրում սահմանված նպատակադրումները, ցուցանիշները, ինչպես նաև քաղաքականությունների գերակայություններն ու առաջնահերթությունները անփոփոխ չեն ռազմավարության ամբողջ ժամանակահատվածի համար: Դրանք ենթակա են փոփոխման ծրագրի վերանայմամբ՝ հիմք ընդունելով երկրում արձանագրված հիմնական զարգացումներն ու տեղաշարժերը, ծրագրի իրականացման առաջընթացի հաշվետվություններում ներկայացված մոտեցումները, ինչպես նաև շահագրգիռ կողմերի առաջարկություններն ու մոնիթորինգի արդյունքները: